Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

КОНСТАНТИН ФЕДИН

Города и годы

РОМАН

ПЕРЕВОД

ДОРЫ ЕСАЯН

ИЗДАТЕЛЬСТВО «СОВЕТАКАН ГРОХ» ЕРЕВАН — 1981

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՖԵԴԻՆ

Քաղաքներ եվ տարիներ

ՎԵՊ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԴՈՐԱ ԵՍԱՅԱՆԻ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ—1981

Ք 2 ինդեքս ԳՄԴ 84. Ռ 7
Ֆ 321

Ֆեդին Կ.

Ֆ 321 Քաղաքներ և տարիներ։ Վեպ/Ռուս. թարգմ. Դ. Եսայան.— Եր.։ Սովետ. գրող, 1981.— 472 էջ.

«Քաղաքներ և տարիներ» քաղաքացիական պատերազմի և հեղափոխության մասին առաջին վեպերից է։ Բազմապլան է նրա կոմպոզիցիան և բազմազան է թեմատիկան՝ հեղափոխական Պետրոգրադը և միլիտարիստական Գերմանիան, կապիտալիստական սպանդի անմարդկայնությունը և հեղափոխական պայքարի խոր հումանիզմը, հեղափոխական նոր Ռուսաստանը և հին աշխարհի սարսափելի քաղքենիական «պարապուտը»։

Այս ամենի մասին «Քաղաքներ և տարիներ» վեպում պատմված է արվեստի լեզվով։

Ֆ 4702010200 (85) / 705 (01) 81 — 81 «Տ»

Ք 2
ԳՄԴ 84. Ռ 7

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1981

Ամեն ինչ մեր առջևում էր,
Ոչինչ չկար մեր առջևում։

Զարլզ Դիկկենս

Ինչ վերաբերում է գինուն,
նա ջուր էր խմում։

Վիկտոր Հյուգո

ԳԼՈՒԽ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՅՆ ՏԱՐՈՒՆ, ՈՐՈՎ ԱՎԱՐՏՎՈՒՄ Է ՎԵՊԸ

Ծառ

— Թանկագին հարևաններ՝ ամենաբարի բնակիչներ՝ պատվարժան քաղաքացիներ։ Գլուխս պատուհանից դուրս եմ հանել կանխապես մտածված մի դիտավորությամբ. տխրում եմ, թանկագին հարևաններ, թախիծը կրծում է սիրտս, հարգելի քաղաքացիներ, սիրտս չորացել ու ոլորվել է խցանահանի նման, ինչպես կիտրոնի կեղևը արևից շիկացած սալարկին։

— Պատվելի բնակիչներ։ Ճիշտ է, որ դրսում արդեն հազար ինը հարյուր քսաներկու թվականն է։

— Իմ առջև է ութսունհինգ պատուհան, չհաշված ձեղնահարկի երկու պատուհանը, նկուղի մեկ պատուհանը և պատի վրայի այն պատուհանը, որ վարպետորեն նկարված է դեռ նախապատերազմյան ժամանակի ներկարարի ձեռքով, ինչպես նաև այն, որի մեջ բոլորդ կարող եք տեսնել անձիս վերին մասը։

— Ես չարող էի ձեզ պատմել այս պատուհաններից յուրաքանչյուրի մասին, բայց գիտեմ՝ ինձ չեք լսի։ Ուստի խնդրում եմ ձեր հայացքները դարձնեք միայն ահա այն ներքևի

պատուհանին, որտեղ փռվել է զոլավոր փետրաներքնակը, հենց այդ փետրաներքնակն էր առավոտյան հրացանի շամփուրով կատաղի թակում կարմիր ձեռքերով տանտիկինը։ Մեկ էլ ահա այն աջ կողմի պատուհանին, որտեղից առավոտից իրիկուն դոմրայի ծնգոց է լսվում, և մեկ էլ այն մյուսին՝ ամենավերևինը, ձեղնահարկի տակինը, որտեղից գրամոֆոնը շարունակ ռոմանսներ է խխում, ու ևս մի պատուհանի՝ վերջինը, որ ուղղակի իմ դիմացն է ու այնպես թարմ մածկած է՝ վաղն այն պետք է ներկեն։

— Պատվարժան քաղաքացինե՞ր։ Վերջ ի վերջո հանրապետությունը վատ բան չէ։ Հանրապետության մեջ կարելի է փետրաներքնակները թափ տալ, զցել արևի տակ օդափոխելու, առանց վախի, թե երեկոյան արդեն ստիպված պիտի լինես ընտանեկան անկողնիդ գցել միայն փետրաներքնակի ծածկոցով։ Հանրապետության մեջ կարելի է ունենալ երաժշտական լսողություն և սովորել դոմրա նվագել։ Միանգամայն ակնհայտ է, որ պետության կառավարման ձևը ոչ մի կերպ չի անդրադառնում գրամոֆոնի ձայնապնակների որակի վրա։ Եվ, վերջապես, հանրապետությունը համեմատաբար հեշտությամբ յուրացրեց, որ պատուհանի ներկած շրջանակները գեբազանց են դիմանում քամիներին և վատ եղանակին։

— Թանկագին հարևանե՞ր։ Արժե՞ արդյոք ասել, որ մեր ջրհորի ութսունհինգ պատուհաններից միայն իմ պատուհանն է, որ չի զարդարված պանրի և երշիկի փաթեթներով, թթվաների և մածնի ամաններով, կաթսայիկներով, կաթնամաններով, կարագի ամաններով, մուգ կանաչ սոխով և կարմիր բողկով։ Նույնիսկ ձեղնահարկի ամենածայրի պատուհանը, որ հազիվ մի օդանցքի չափ լինի, տվեց-անցավ իմ սարդոստայնով պատած դատարկ լուսամուտագոգից, որն անձեռնմխելի պահպանում է հարգելի տանտիրուհու Մատրոս կատվի թոդած ոչ այնքան քաղաքավարի հետքը։

Հիմա սպիտակ գիշերներ են, և մեր ջրհորում հանգստանում է օրվա ընթացքում քրտնած ամառը։ Ութսունհինգ պատուհան լայն բացված են։ Ես օգտվեցի դրանից, որպեսզի ձեզ համար իմ ճառն արտասանեմ՝ ձե՛զ համար, քաղաքացի գրամոֆոնատեր, և ձե՛զ համար, հարևանուհիս, որ ձեր փետրաներքնակը ցույց տվիք, և ձե՛զ համար, կաթսայիկներ, կարագամաններ, փաթեթներ և բողկի տերեր, բոլորիդ համար, ով գլուխը դուրս է հանել ու լսում է իմ առույգ ձայնը։

— Ո՛չ, ո՛չ, չվախենաք. ճառս չի երկարի։ Ուզում էի ձեզ մի հարց տալ, միայն մի հարց, ու ես կվերջացնեմ։

— Ամենաբարի բնակիչնե՞ր, պատվարժան քաղաքացինե՞ր։ Ճիշտ է, որ դրսում հիմա քսաներկու թվականն է։ Դա, ճիշտ է, որովհետև մենք թթվասեր ու մածուն ենք ուտում, սովորում ենք դոմրա նվագել և թափ ենք տալիս մեր փետրաներքնակները։ Ճիշտ է, որովհետև թվարկված զբաղմունքների դեմ, որքան էլ դրանք նվազ հեղափոխական լինեն, հանրապետությունը չի առարկում։ Եվ, պատվելի քաղաքացիներ, արդյոք չե՞ք կարծում...

Ճառի այս տեղում, իրար կպած քարե տների տուփի արանքում երերվող ձայնի մեջ մի ճիչ խրվեց.

— Անդրե՞յ։

Մարդը, որ կանգնել էր կուրծքը բաց, վերնաշապկի կոճակներն արձակած, դադարեց խոսելուց ու նայեց այն կողմը, որտեղից այդ ճիչը լսվեց։ Հետո հանկարծ ընկրկեց սենյակի խորքը, նորից մոտ վազեց պատուհանին, մինչև գոտկատեղը դուրս կախվեց, թուլացած ձայնով հարցրեց.

— Բնակարանի համարը ո՞րն է։

— Փողոցում կհանդիպենք.— ձայնն ընկավ հորի մեջ։

Անդրեյն, ինչպես որ կար, առանց կոճկվելու, զզզված դուրս վազեց սենյակից։

Տանտիրուհին նրա ետևից դուռը փակեց, դուրս նայեց դեպի ջրհորը, մի հայացքով ընդգրկեց բոլոր ութսունհինգ պատուհանն էլ, և դողացող շրթունքներով շշնջաց.

— Վաղուց էի կարծում, որ խելագարվել է։ Օ՜, սարսափելի է։

Ն ա մ ա կ

Սիրելիս։

Ահա նորից գրում եմ քեզ, ու նորից չգիտեմ, թե ինչ պետք է ասեմ։

Ամենից ավելի վախենում եմ, որ նամակս կպատռես, երբ ձեռագիրս ճանաչես։

Կամ ոչ։ Ամենից ավելի վախենում եմ, թե գրում եմ մահացածի։ Թե դու՝ մահացած ես։ Այնպես չասացի, թե դու արդեն մահացել ես, իսկ ես քեզ նամակ եմ գրում։

Մարի, փոքրիկս, ինձ համար մի բան է պարզ։ Հիշո՞ւմ ես, առաջ ինձ համար շատ բան էր պարզ։ Հիմա՝ միայն մի բան. ես պետք է նստեմ քո կողքին ու հերթով ամեն բան պատմեմ։ Կարծես չեմ կարողանում ամեն ինչ հերթականությամբ հիշել։ Մի բան պարզ է, որ եթե ինձ լսես, ես ամեն ինչ կհասկանամ, ու դու այլևս չես բղավի ինչպես այն ժամանակ, երկու տարի առաջ։ Ինչպե՞ս էիր այն ժամանակ բղավում, Մարի...

Ինչ-որ բան խառնում եմ։

Սպասիր, սենյակում մի քիչ կքայլեմ ու կմտածեմ, թե ինչպես ավելի հեշտ կլինի ասել ամենակարևորը, Մարի...

Այո։ Կարծում եմ՝ ինձ կհասկանաս, եթե պատմեմ... կամ ոչ, նախ ահա ինչ եմ ասում։

Այս ամբողջ շփոթը (կարծում եմ՝ ուժ կունենայի կանոնավոր նամակ գրելու, եթե դա չլիներ), այս ամբողջ շփոթը նրանից է, որ վճռել եմ... Մարի, չգիտեմ, թե ինձ հետ ինչ է կատարվում։ Գալիս եմ քեզ մոտ։ Այդպես եմ վճռել։ Այլևս չեմ կարող։ Միևնույն է։ Ականջներս կփակեմ ու կփախչեմ։ Թող վայնասուն բարձրացնեն, թող մեռնեն, միևնույն է։ Ես պետք է քեզ մոտ գամ։

Կուրտն իսկական մարդ է։ Այսօր հանդիպեցի նրան այստեղ, Պետերբուրգում, բոլորովին անսպասելի։ Նա հանձն է առնում ինձ տեղ հասցնել, այսինքն՝ օգնել։ Նա ձայնից ճանաչել էր ինձ, թեև դա մի քիչ տարօրինակ պայմաններում էր։ Ընդհանրապես ես այնքան էլ լավ չեմ։ Կուրտն անմիջապես ասաց, որ պետք է կլիման փոխեմ։ Ես, իհարկե, ոչ մի խոսք չասացի, թե ուզում եմ քեզ տեսնել։ Համաձայնեցի կլիմայի հարցում։ Մարի, ինձ համար մի քիչ ծիծաղելի է, երբ խոսում են կլիմայի մասին, ջղերի մասին։ Թեև շատ եմ հոգնել։ Իսկ Կուրտը չի հոգնում։

Բանն այն է, որ...

Սկիզբը վերընթերցեցի։ Ահա իմ պատմությունը։ Հիշեցի, ինչպես ձմռանը տեսա մի շնիկ, որ առջևի թաթերով ճանկռում էր փակ դուռը։ Չգիտես, շնիկի տերը քնա՞ծ էր, թե դուցե չէր ուզում դուռը բացել. բուք էր։ Մոտեցա դռանն ու տրորված ձյան վրա տեսա շնիկի թաթերի կարմիր հետքը։ Շնիկը դուռը ճանկռելիս թաթերն արնոտել էր։ Նա չէր կարողանում հասկանալ, որ այս աշխարհում ինքը բնավ պետք չէ։

Ես այդ հասկանում եմ։ Այսինքն՝ իմ մասին...

13 հունիսի, առավոտ։

Այսօր Կուրտն ինձ մոտ էր։ Վերջնականապես պայմանավորվեցինք։ Քեզ մոտ եմ գալիս, Մարի...

Նրա գնալուց հետո հանգիստ էի։ Նա լավ ձեռքեր, ուսեր, բերան ունի։ Նրա ներկայությամբ սենյակը մի տեսակ իմաստավորվում է։ Ինձ համար անմիջապես հաճելի և պետքական դարձան սեղանը, մահճակալը, պատուհանը։ Կուրտը կազմակերպված մարդ է։ Նորից կարդացի երեկվա գրածս։ Ուղարկում եմ քեզ, տես թե հիմա ինչպիսին եմ։ Այնտեղ շընիկի մասին գրածս ճշմարիտ է։

Իհարկե, մեղավոր եմ քո առջև։ Սակայն ինձ չեմ մեղադրում այն բանում, ինչը քեզ հավանաբար թվում է ամենածանր հանցանքը քո նկատմամբ, մեր նկատմամբ։

Ես իրոք ինչ-որ կարգ պիտի սահմանեմ։ Գլխումս ամեն ինչ իրար է խառնվել։ Չգիտեմ արդյոք երբ և որտեղ անուղղելի կերպով շեղվեցի կամ ստեցի, կամ սխալվեցի։ Վերջին իրադարձությունների մեջ (այսինքն՝ այն բանից առաջ, երբ դու եկար այստեղ և հետո անհետացար, չէ՞ որ դրանից հետո այլևս ոչ մի իրադարձություն չեղավ) կապ չեմ գտնում։ Գուցե և կապ կա։ Սա մի կծիկ է, այս բոլոր տարիները։

Ասեմ շնիկի մասին։

Ամբողջ կյանքումս ջանացել եմ շրջանի մեջ լինել։ Հասկանո՞ւմ ես, այնպես, որ աշխարհում ամեն բան շուրջս կատարվի։ Սակայն միշտ քշվել-տարվել եմ, մի կողմ եմ նետվել։

Զուր արնոտվել եմ։

Այդ բանն ահա թե ինչպես հասկացա։

Սակայն նախ ես երկու խոսք։ Վերջերս զբաղված էի որոշ թղթեր ձեռք բերելու գործով։ Ինձ հարցրին՝ «Ձեր մասնագիտությունը ի՞նչ է»։ Չէի կարող պատասխանել։ Հանկարծ

մտածեցի, իսկ ի՞նչ մասնագիտություն էի ուզում ձեռք բերել առաջ։ Շփոթվեցի, հիմար բան ստացվեց։

Հասկանո՞ւմ ես, շարունակ վախենում եմ մտքիցս շեղվել։

Անցնում էի խանութների շարքով։ Մի դարբասից ներս նայեցի։ Ամրոցի հաստ պատերը խրվել էին հողի մեջ։ Պահեստների դռներին ժանգոտած կողպեքներ էին կախված։ Եվ ամբողջ բակում մոլախոտ, եղինջ, կռատուկ, երկաթի կտորտանք, խիճ։ Ինչպես ամայի տեղում։

Թախիծը սիրտս ճմլեց։ Կամքիցս անկախ։ Դա այնքան տխուր ու հոգեմաշ բան է։ Ես մտածում էի մի համընդհանուր վախճանի մասին։ Ձեռքերս սառեցին։

Սակայն դեռ... մի խոսքով, դեռևս շարունակում էի ճանկռել...

Եվ ահա արդեն այս օրերին, Մոսկվայի մոտերքում, մի ընկերս ինձ Պոկլոննայա սարից ցույց տվեց նոր ռադիոկայանը։ Աշտարակը կառուցել էին հեղափոխության ժամանակ։ Ակզբում փլվել էր։ Նորից էին բարձրացրել։ Անպետք գործիքներով, շրթունքներն ատամների տակ առած։ Բարձրացրել էին։ Ալիքները հասնում են Ամերիկա։

— Դիտե՞ս ինչ,— ասաց ընկերս,— հիմա այնպիսի ռադիոկայան կկառուցենք, որի ալիքները կընդգրկեն ամբողջ երկրագունդը։ Մոսկվան հաղորդում է, Մոսկվան ընդունում է։ Աշխարհի շուրջը։

Այն ժամանակ մտածեցի, որ դա հիմարություն է։ Սակայն խսկույն նայեցի նրա դեմքին...

Մի խոսքով, վերջ տվեցի ճանկռելուն...

Դա անօգուտ է, անօգուտ, գրողը տանի։ Բարի կամքը, աները, ցանկությունը՝ այդ ամենը չափազանց քիչ են։ Իսկ հետո դրանք բնավ պետք չեն։ Ուտելու և խմելու համար պետք չէ ոչ բարի կամք, ոչ սեր։ Այդ մարդիկ փաստորեն ավելին չեն անում, քան պետք է անեն ըստ էության։ Նրանք իրենց ոտքերի տակ ոչինչ չեն տեսնում, շարունակ՝ առաջ և վեր։ Եվ այնպիսի լարվածությամբ, կարծես ոչ թե մարդիկ են, այլ կոճեր, լարված կոճեր։ Եթե նրանց ասես ժանգոտած կողպեքների, մոլախոտի և խիճի մասին, ոչինչ չեն հասկանա։ Նրանք շրջանի մեջ են. հավանաբար շրջանի կենտրոնում։

Ինձ սարսռեցնում է այն միտքը, թե մահացած մարդու եմ գրում։ Եթե այդպես է, քեզ հարություն կտամ, որպեսզի հասկանաս. ես չեմ ստել։

Իմ մեղքն այն է, որ մեռաղալարից չեմ։

Դու ինձ պետք է հասկանաս, Մարի։

Անդրեյ։

Անցման բանաձևը

Կոմիտեն կազմված էր յոթ հոգուց։ Բոլորն ուշադիր հետևում էին Կուրտին, որը խոսում էր. նույնիսկ քարտուղարը ամեն րոպե ընդհատում էր սղագրությունն ու ճակատին հավաքում կնճիռների եռանկյունին, ասես ականջ դնելով մի բանի, որ պետք է տեղի ունենար սենյակի սահմաններից դուրս ինչ-որ տեղ։ Նախագահի աթոռին նստել էր հաստ ապակյա ակնոցով մի մարդ. նրա ակնոցի ֆոկուսը Կուրտի խոսելու ընթացքում ոչ մի անգամ չփոխվեց։

Կուրտը կանգնել էր նախագահի դիմաց, բռունցքները սեղանին սեղմած և ամեն նախադասությունից հետո գլուխը թեթևակի շարժում էր։ Խոսում էր սահուն, առանց կմկմալու, ասես գիրք էր կարդում, և նրա ճառն էլ գրքային էր։ Քրտինքի կաթիլներ էին դուրս տվել վերին շրթունքի վրա։

— Ամփոփում եմ,— ասաց նա։

— Այդ մարդը բարոյական անկման վիճակում էր այն պահին, երբ ինձ խոստովանեց իր հանցագործությունը։ Որքան կարողացա նկատել, նրա մտավոր կարողությունները նույնպես խանգարված էին։ Ես գիտեի, որ այդ ամենը անձնական կյանքում կրած ծանր ցնցման հետևանք է։ Ուստի նրա խոստովանությանը մեծ զգուշությամբ վերաբերվեցի։ Սակայն ես ինձ ընտելացրել եմ օբյեկտիվորեն մտածել և վարվել բանականությանս թելադրանքին համապատասխան։ Հիշողությունս հաջորդաբար վերականգնեց իմ բոլոր հանդիպումներն այդ մարդու հետ Սեմիդոլում, նրա անձնական կյանքի այն փաստերը, որ կապված են մարկգրաֆի հետ, վերջապես Մոսկվայի զինվորական դեպուտատների գերմանական խորհրդից մարկգրաֆի անհետանալու հանգամանքները։ Իրադարձությունների փաստական ընթացքը ամենայն

մանրամասնությամբ համընկնում էր այն բանի հետ, ինչ ես լսեցի այդ մարդուց նրա վերջին զբոսանքի ժամանակ։ Նա ի միջի այլոց ինձ խոստովանեց, որ մտադիր է որոնել մարկգրաֆին, դա միակ մարդն է, որ կարող է որևէ բան իմանալ իր սիրեցյալի մասին։ Կասկած չկար. անձնական նկատառումներով նա փրկել էր մեր թշնամու կյանքն ու դավաճանել այն գործին, որին մենք բոլորս ծառայում ենք։ Իբրև մարդ ինձ համար ատելի դարձավ, որպես բարեկամ,— իմ բարեկամն էր,— զզվելի։ Ես նրան սպանեցի։ Հաջորդ օրը տեղեկացա մարկգրաֆի մասին։ Նա իրոք հանգիստ ու խաղաղ ապրում է Բիշոֆսբերգի մոտի իր ամրոցում և, ինչպես կպատշաճեր անհաջողակ բախտախնդիր մեկին, ուժերի ներածին չափով ծառայում է հայրենի արվեստին՝ զբաղվում է դերմանական վարպետների նկարների սպեկուլյացիայով։ Սխալ թույլ չի տրվել։ Ոստիկանությունը գտնում է, որ սպանությունը կատարվել է քրեական նպատակով։ Մինչ այս գործի մասին կոմիտեին հայտնելը, ես հարկ չեմ համարել հերքել այդ ենթադրությունը։ Ենթարկվում եմ ձեր որոշմանը։

Կուրտը վերջացրեց, կարծես փակեց կարդացած գիրքը։

Նախագահը հերթով դարձավ նիստի բոլոր մասնակիցներին.

— Հարցեր չկա՞ն... Ընկեր Վան, խնդրեմ, հեռացեք։

Կուրտը դուրս եկավ։ Կից սենյակում նա թաշկինակով երեսը չորացրեց, սիգար ծխեց և, պատրաստվելով սպասել, հարմար տեղավորվեց բազկաթոռին։ Ծխի կապտավուն շերտերը, իրար մեջ մտած, սկսեցին տարուբերվել սենյակի մեջտեղում։ Դրանց մեջ բացվեց ինչ-որ մեկի բերանը, կեռացրած հինգ մատ դանդաղ շրջվեցին, կախվեցին ցած, մատներին կպավ արմունկից ծալած թևը և ձգվեց դեպի Կուրտը։

— Հիմարություն է,— փնթփնթաց նա և ուժով փչեց ծխի վրա։ Կապույտ շերտիկները շարվեցին օդի հոսանքի երկայնությամբ և անհետացան։

— Ընկե՛ր Վան։

Յոթ մարդ նախկին կարգով նստած էին սեղանի առջև։ Նախագահը ակնոցն ուղղեց քարտուղարին։ Վերջինս թուղթը ձեռքն առավ և բարձրաձայն կարդաց.

— «...լսելով ընկեր Կուրտ Վանի հաղորդումը, միաձայն որոշեց. վերոհիշյալ ընկերոջ գործելակերպը համարել ճիշտ, գործն արձանագրության մեջ չմտցնել, սղագրությունը ոչընչացնել և անցնել հերթական հարցերի քննարկմանը»։

Քարտուղարը թուղթը երկտակ ծալեց և պատռեց։

— Նստեք, ընկեր,— ասաց նախագահը։

Կուրտն աթոռը մոտ քաշեց։ Նա հանգիստ էր և իրեն շատ սովորական ձևով էր պահում, ասես չէր էլ կասկածում, որ այդ հրավերը կլսի։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԻՆՉ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆԻՆՉ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Պետերբուրգ

Մարդը պետք է մի երկար կյանք ապրի առանց երկնքի, առանց իսկական, լայնաշունչ քամիների, պետք է մեծանա երկաթի սյուների փակ շարքի մեջ, մանկությունն անցկացնի թուջե սանդուղքի վրա, ասֆալտած փողոցում, որպեսզի քաղաքում իրեն զգա այնպես, ինչպես անտառաբնակը՝ անտառում։

Ոտքը գիտե, թե տակը երբ է երկաթե ռելս, երբ՝ փտած գերան, երբ՝ սայթաքուն և հնչեղ ցեմենտ։ Ականջն էլ իմանում է, թե տանիքներից ուր է թափվում անձրևաջուրը, և ինչի դիպավ ու պայթեց հանկարծակի պոռթկացող ուժեղ քամին։

Այն մարդուն, ում համար քաղաքը նույնն է, ինչ անտառը՝ անտառաբնակի, լույս պետք չէ։ Նա հիշում է ամեն մի անկյուն, գիտե յուրաքանչյուր փողոց, յուրաքանչյուր տուն՝ հին թե նոր, քանդված և որպես վառելիք օգտագործված, փակված, լքված և կիսակառույց։

Հատկապես կիսակառույցները։ Այդպիսի տների ցանկապատերը վաղուց անհետացել են։ Սակայն քարացած աղյուսե կմախքի վրա տեղ-տեղ տնկված են ցցագերանների

մնացորդները, կիսով չափ խիճով ծածկված մի գերան է ընկած կամ էլ պոկված չէ ձողը՝ փայտե խաչով։

Այդ ցցագերանների, գերանների և խաչերի մասին արժե հիշել նոր թվականության երրորդ տարում։

Նոր թվականության երրորդ տարում, հոկտեմբերի վերջին Պետրոգրադի գլխին խավար էր կախված։ Խավարը հյուսիս-արևմուտքից սուլոցով ու թնդյունով քշում էր թաց, ծուռթև քամին։

Պետերբուրգը թեփը տալիս էր, երկաթի թեփ էր թափում, և այն զնգոցով խփվում էր տանիքներին ու կրճատոցով ընկնում փողոցների քարե հատակին։

Ներքևում մութ էր, ինչպես թունելում։

Տները մեռել էին, տները խորտակվել էին, տներ չկային։ Իրար հատում էին, մթության մեջ ձգվում թունելների անաչք թաց կողերը։

Եվ թունելների թաց, անաչք կողերով ու նրանց քարե հատակներով ճռնչալով, զնգալով, սլանում էր երկաթե թեփը։ Քամին ծուռ թևերով տրորում էր քարե քաղաքը, կտոր-կտոր պոկոտում մաշված կաշին, շպրտում խոնավ խավարի մեջ։

Ավտոմոբիլի սպիտակ կապկի թաթերը ճանկռում էին թունելների մեռած, սառնաշունչ կողերը, կորչում նույնքան արագ, ինչպես հայտնվում էին։ Եվ միայն սատկող շնագայլի նման ոռնում էր ավտոմոբիլի շչակը։

Մարդը, որ հազիվ էր տարբերվում քարից, ինչից սարքված էին թունելները, շոշափելով անկյուններն ու ելուստները, քամուց քշված, արագ ու թեթև սահում էր ջրափոսերի վրայով։ Ահա նա միաձուլվեց սև պատին, ասես դարբասից ներս մտավ։ Ահա շոշափելով բարձրացավ սայթաքուն թրմբիկի վրա։ Իջավ փոսի մեջ։ Խցկվեց նեղ, գերեզման հիշեցնող նեղ միջանցքը։ Նրա գլխավերևում համաչափ զարկվում էր քարին պոկված տանիքի թիթեղը։

Մարդը գրպանից հանեց թերթը, ծածկեց ուսն ու կուրծքը, միջանցքի անկյունում շոշափեց իր բեռը, գցեց ուսին ու ըզգուշությամբ ետ սողաց։

Անցավ միջանցքը, փոսը, թմբիկը, սև պատի միջով դեպի թունելների խոնավ խավարը և շարունակեց՝ խոնավ խավարի միջով, քամուց քշված, սահեց ջրափոսերի վրայով։

Այն մարդուն, ում համար քաղաքը նույնն է, ինչ անտառը՝ անտառաբնակի, լույս պետք չէ։

Մարդը գտավ դարբասը, դուռը, սանդուղքը, ևս մի դուռ։ Այնտեղ բեռն ուսից գցեց, հանեց մի բանալի, երկրորդը՝ ֆրանսիական, երրորդը՝ շատ երկար, մեջտեղում օղակով, ինժեներ Տուբկինի արտոնագիրը, հերթով բացեց փականները։

Խոհանոցում վառեց «էկոնոմիա» լամպիկը (շաբաթական քառորդ ֆունտ նավթ), հանվեց։ Մատներով չափչփեց. գերանը կարելի է սղոցել չորս մասի՝ ութական վերշոկ երկարությամբ, ամեն կտորը ջարդել մեկ, երկու, երեք...— ութ կտոր անել։ Երկու ութվերշոկանոց ձողանը եռման ջուր է սուրճի համար։ Տասնվեց անգամ։ Լավ է։

— Սատանան գիտի, թե դեռ ինչքան է տևելու այս քաշքշուկը։ Տասնվեց անգամ...

Երբ գերանը շրջեց, վրան գրություն տեսավ։ Կպցրած էր հարթ, կարմրագույն խմորով։ Գրված էր քիմիական մատիտով։ Գրերը խոնավացել էին, ծորում էին.

Սովորեցնում եմ ֆրանսերեն և գերմաներեն աշխատանքային դպրոցի բոլոր դասարանների համար։ Գինը չափավոր.

ՊԵՏՐՈԳԱՎՈԴՍԿԱՅԱ 17, բն. 8։

Նույն տեղում գուլպաների լցում և հագուստի հավաքում։

Ինչպես նաև վաճառվում են ճագարներ։

Գլուխն օրորեց, ասաց բարձրաձայն.

— Ինչ օրի հասցրին ինտելիգենցիային, հը՞։

Գերանը տարավ դրեց խորդանոցը։

Բացեց պատի մեջ սարքված պահարանը։ Կորեկաձավարի ամանի միջից հանեց լաթի կտորը։ Կորեկաձավարը թղթե տոպրակից լցրեց ամանի մեջ, լաթով ծածկեց։ Վրան դրեց բլթի նման կլոր մի գետաքար։

— Մկները։ Սրիկաներ։

Թիթեղյա վառարանը վառեց։ Ջուր եռացրեց, տապակի մեջ լցրեց ցորեն՝ բովելու։ Եռման ջրով լվաց սուպի կաթսայիկն ու ափսեն։ Հետո ճիլոպով և ծեծած աղյուսով լվաց ջրի կոնքը։ Ֆրենչը հանեց։ Վերնաշապկի թևքերը ծալել էր մինչև արմունկը։ Երբ այրվածի հոտ ընկավ, կոնք լվանալն ընդհա-

տեց, դանակը շտապով ձեռքն առավ ու տապակից պոկելով այրված հատիկները, մի հինգ անգամ ասաց.

— Սուրճ։ Սրիկաներ։

Հետո տնտղեց պահարանը։ Բանկաների մեջ կային ցորեն, գարեձավար, կորեկաձավար և հնդկացորենի ձավար, հարինգ։ Շշերի մեջ՝ վուշի և արևածաղկի յուղ։ Կտավե տոպրակի մեջ՝ վորլա։ Թղթե տոպրակներով՝ աղ, դափնետերև, ժելատին։ Ժելատինը մի երեք ֆունտ կլիներ։ Ասաց.

— Ժելատին, հը՞։

Ձեռքն առավ Մոպասանի գիրքը՝ «Տիկին Գյուսոնի ընտրյալը», լամպիկը մոտ քաշեց։ Ֆրենչը հագավ, եղունգները մաքրեց փոքրիկ դանակով, նստեց լայն բազկաթոռին ու պենսնեն դրեց կլոր քթին։

Հասավ մինչև այս տողերը.

— Հուսով եմ, դեռ չե՞ս նախաճաշել։

— Ոչ։

— Շատ լավ է։ Ես հենց պատրաստվում էի սեղան նստել, այսօր հիանալի իշխան ձուկ ունեմ։

Պենսնեն գցեց գրքի վրա, ասաց.

— Ժելատին, ամեն կտրոնին մի ֆունտ, երեք շաբաթ շարունակ, հը՞։

Հանկարծ ուշադրությունը լարեց։

Բախում են, բայց ոչ ուժեղ, անհաստատ։ Ավելի լավ է սպասել։ Սպասեց։ Բախում են ավելի ուժեղ։ Վեր թռավ, պահարանը ծածկեց, փակեց, նայեց սեղանին։ Հացը՝ անձեռոցիկի ներքև, սախարինի տուփիկը՝ գրպանը։

— Ո՞վ է։

— Սերգեյ Լվովիչ Շչեպովն այստե՞ղ է ապրում։

— Իսկ ո՞վ է հարցնում։

— Ստարցովը։

— Ի՞նչ եք կամենում։

— Ստարցովն է։ Սեմիդոլից, Անդրեյ Ստարցովը։

— Սեմիդոլի՞ց։

— Ես նամակ եմ բերել ձեր որդուց, Ալեքսեյ Սերգեևիչից։

— Ա՜-ա-ա։ Իհարկե, իհարկե։ Հիմա։

Իրար անցավ։ Մի փականք դուռն վերևում, մի փականք՝

ներքևում, հետո՝ մի կեռ, հետո՝ ինժեներ Տուբկիսի՝ կողպեքը, մի հասարակ փականք, ֆրանսիական փականքը, շղթայիկը։

— Գիտեք ինչ, հիմա ոչ մեկին չի կարելի վստահել, հարազատ որդուդ էլ չես կարող վստահել։ Շուրջդ գողեր են, միայն գողեր, խաբեբաներ, ավազակներ։ Շատ ուրախ եմ ծանոթանալու։ Այո։ Ահա տեսնում եք, այսպես էլ ապրում եմ։ Ամաններ եմ լվանում, փայտ եմ սղոցում, ինքս եփում եմ, ինքս լվանում, կարում, լամպերը լցնում, սապոգներ կարկատում, pardon, արտաքնոցներ եմ մաքրում։ Խնդրեմ, համեցեք։ Ահա տեսնո՞ւմ եք ձեռքերիս կոշտուկներ են, կոշտուկավոր ձեռքեր։ Այրվածի հոտ է փչում, սուրճից է, նավթի հոտը՝ լամպից է, գերչակի ձեթի հոտը կոտլետներից է։ Կարտոֆիլի կոտլետ եմ պատրաստում գերչակի ձեթով։ Ահա այդպես։ Խնդրեմ, նստեցեք։ Սուրճ կա։ Միայն թե ավելեմ, մոռացել եմ ավելել։ Երկա՞ր ժամանակով եք եկել։ Գործո՞վ։

Ստարցովը պարկը մեջքից ցած դրեց։ Կանգնել էր՝ մեծ, մուգ գորշագույն, թրջված զինվորական շինելը հագին, որի ուսերը կախ էին, օձիքը նեղլիկ, թևքերը երկար՝ հասնում էին մինչև մատների ծայրերը։

— Չգիտեմ,— ասաց նա,— այսօր ոչինչ չիմացա։ Վաղն առավոտյան հայտնի կլինի։

— Իսկական պետական խորհրդական։ Ահա այս ձեռքերով, ամեն ինչ ինքս։ Առավոտյան ութից մինչև դիշերվա տասներկուսը։ Իսկ ինձ ի՞նչ են տալիս դրա դիմաց։ Հրեն երեկ նորից կես ֆունտ վորլա, մեկ էլ մի ֆունտ ժելատին տվեցին։ Ժելատինն ինչի՞ս է պետք։ Պլանով է հասնում։ Լավ։ Իսկ եթե պլանով կարթեր հասնե՞ն։ Ասենք, ամեն քաղաքացուն երկուական կարթ։ Ի՞նչ կհրամայեք անել։ Հիմարություն... Ասում եք Ալեքսեյից նամա՞կ եք բերել։ Նա ինչպե՞ս է... Ահա սուրճը։ Հաց ես...

— Ես հաց ունեմ,— ասաց Ստարցովը,— սպիտակ, Սեմիդոլի հաց։

— Այնտեղ ալյուրն ի՞նչ արժե։

— Ահա նամակը,— ասաց Ստարցովը։

Կարդալիս Սերգեյ Լվովիչը քիթը վեր էր քաշում, և պենսնեն վերին մասով դանդաղ թեքվում էր դեպի թուղթը։ Սերգեյ Լվովիչը շարունակ ավելի էր գլուխը տնկում, ու նրա դեմքը

գնալով ավելի նեղանում ու մեծամիտ արտահայտություն էր ստանում։

— Ամուսնացե՞լ է,— բացականչեց նա մատները խփելով նամակին։— Ամուսնացել է դեբասանուհու հետ։ Պատկերացնո՞ւմ եմ։

Նա պենսնեն ուղղեց և աչքերով որոնեց այն տողը, որտեղ կանգ էր առել։ Հետո նամակը գրեց գրքի մեջ, արմունկներով հենվեց սեղանին և հայացքը հառեց հյուրի աչքերին։

— Իհարկե, իհարկե։ Այ թե հիմա ինչ երեխաներ են։ Առաջ վաճառականներն էին այսպես գրում. պատիվ ունենք հաղորդելու, որ հավասար իրավունքներով մեր առևտրական տան մեջ է մտել Իվան Իվանովիչ Սիդորովը։ Խնդրում ենք ձեզ մատ հաշվի առնեք նրա ստորագրությունը։ Իսկ հիմա այդքանն էլ չկա, հաղորդում եմ, որ ձեր ազգանունը պետք է կրի մի երգչուհի։ Նույնիսկ անունն էլ չկա՝ Դարյա՞ է, Մարյա՞ թե՞ Ագրաֆենա։ Սատանան գիտի։

— Նրա անունը Կլավդիա է... հայրանունը... մոռացել եմ,— ասաց Ստարցովը։

— Իսկ ազգանո՞ւնը։ Մի որևէ Կուլտյապկինա, բեմական անունով՝ Ռազդոր-Զապոլսկայա, էնժենյու-գրամատիկ համր և անշարժ դերերում... Ասենք, մի՞թե միևնույն չէ։ Միևնույն չէ՞ արդյոք, հարցնում եմ ձեզ, հը՞։

— Ինչո՞ւ։

— Որովհետև հիմա ամեն ինչ գրողի ծոցն է գնացել։ Ամեն ինչ։ Հիմա ես ու դուք իսկական շիլա ենք մի հրեշի փորում։ Մեզ մշակում է ստամոքսահյութը, հետո կսողանք աղիքներով, տասներկումատնյա աղիքով, բարակ, հաստ աղիքներով և ուղիղ աղիքով։ Ահա թե մենք ինչ ենք։

Սերգեյ Լվովիչը գրպանից հանեց սախարինի տուփիկը, գդալի ծայրով մի փոքրիկ սպիտակ հաբ վերցրեց, գցեց իր բաժակի մեջ։ Մի պահ մնաց անշարժ։ Հետո տուփը մեկնեց Ստարցովին։

— Շնորհակալություն, սովորել եմ առանց քաղցրի։

Սերգեյ Լվովիչը տուփը խնամքով փակեց և անսպասելի, երեխայի նման միանգամից արտասվեց.

— Ասում եք, ինչո՞ւ է միևնույն։ Դե ես Ալեքսեյի ի՞նչ պետքն եմ։ Դեռ լավ է, որ հայտնեց, թե չէ կարող էր մի գեղեցիկ օր չորս փսլնքոտի ուղարկել մոտս մի գրություն տված, թե՝ թանկագին հայրիկ, ուղարկում եմ ձեզ ձեր թոռնիկներին, խնամեցեք, ինքս մեկնում եմ ճանապարհորդության։ Կարծում եք, նա օդաչու այդպես չդարձա՞վ։ Մի անգամ հայտնվեց ու ասում է. «Մենք բարով, գնում եմ ռազմաճակատ, կարող է գլխիս փորձանք գա, էլ չենք տեսնվի։— Գլխիդ ի՞նչ փորձանք պիտի գա, երբ դու ռուսաստանյան ծառայության միլման ես»։ — «Էհ, պատասխանում է, ուշացել եք։ Ես արդեն կես տարի է թռնում եմ հիդրոպլանով, իսկ հիմա նշանակված եմ հրահանգիչ ռազմաճակատում»։ Հորն ինչ էր մնում անել։ Օրհնություն տալ։ Իսկ հիմա ի՞նչ կհրամայեք անել։ Օրհնել նրան և իր Կուլտյապկինային, Ռազդոր-Զապոլսկայային։ Միևնույն է, նա թքել է դրա վրա, կուզես օրհնի, կուզես՝ ոչ։ Սա դեռ բախտավորություն է, հավատացեք ինձ, բախտավորություն է։ Մի ուրիշ որդի ունեմ, կրտսերը...

Սերգեյ Լվովիչը հանկարծ վեր կացավ, ձեռքը բարձրացրեց ու բղավեց նայելով մի անկյուն.

— Հրաժարվո՞ւմ եմ։ Աստծո և մարդկանց առջև հրաժարվում եմ։ Երկրորդ որդի չունե՞մ։ Կար, բայց մահացավ, փտեց, դարձավ փոշի, անհետացավ, կործանվեց, մահացավ...

Նա փլվեց բազկաթոռին, գլուխը խփեց սեղանի եզրին, հեծկլտաց, նորից գլուխը խփեց, ցնցվեց։

— Կործանվեց Լյովոչկան, կործանվեց... Ստոր սրիկա, սրիկա... Բոլորովին կործանվեց...

Ստարցովը վեր կացավ, շրթունքները շարժեց, նստեց, կրկին վեր կացավ։ Իսկ Սերգեյ Լվովիչը գլուխը թափահարեց ու հանկարծ հանգիստ.

— Սրիկան չարժե նույնիսկ որ հիշեմ, ոչ թե արտասուք թափեմ։ Այ թե ինչու եմ ասում, որ հիմա ամեն ինչ գրողի ծոցն է գնացել։ Երեխաները դարձել են դավաճան, իսկ հայրը դաժանացել են։ Ոչ ափսոսանք, ոչ արտասուք, ոչ սիրտ, դաժան ու սառը, ահա ինչպես այս սալը։ Այո, ձեզ, օտար մարդու, ես հանգիստ սրտով ասում եմ, ինչպես գեկույց են գրում պետերին. իմ տղան՝ Լեը, գող է։ Ոչ թե փոխաբերական իմաստով, այլ ուղղակի, իսկական գող։ Հորը թալանեց, մորաքրոջը թալանեց, ծանոթներին թալանեց։ Երեկ քրեական հետախուզությունից եկել փնտրում էին նախկին ավնվակա-

նի որդի Լև Շչեպովին, որը բռնվել է գողության մեջ։ Ժամացույց է գողացել, երեք կոստյում, սպիտակեղեն, ջրարջենու մուշտակ, արծաթե գդալներ։ Դռանս երեք փականք էի արել։ Ամեն օր գողություն էր լինում։ Տանս դարան սարքեցի, երբ ծառայության էի գնում, պահարանի մեջ գաղտնի գործակալ էր նստում։ Երեք օր նստում էր։ Իսկ հետո քթի տակ ծիծաղելով ասում է ինձ. ընկեր Շչեպով, ներեցեք, բայց այստեղ տանու մարդ է։ Այն ժամանակ ես Լևին ապտակ տվի, դուրս արեցի։ Նա գնաց մորաքրոջ մոտ գիշերելու և նրան թալանեց։ Ահա այս բոլորը ձեզ եմ ասում, օտար մարդու։ Լևը իմ որդին չէ։ Քոսի պես տառապեցրեց, ու պրծա։ Ինչպես ուրիշ մարդկանցից, նրանից էլ պրծա. հիմա մարդիկ ինձ համար գողեր են, դավաճաններ, սրիկաներ։

Սև պատուհանի տակ խուլ շխկշխկում էր ջրատար խողովակի պոկված երկաթը։ Թիթեղյա վառարանի խողովակի նեղլիկ կափույրը մտահոգ ղրնգում էր առաստաղի վրա ինչոր տեղ։ Քամին մերթ այն դուրս էր քաշում, մերթ ներս հրում։ Սերգեյ Լվովիչը բաժակի մեջ թեյի գդալով սախարինն էր խառնում։

— Նա ինչ է, սովետական կարգո՞վ է ամուսնացել։

— Չգիտեմ։ Կարծում եմ՝ այո,— պատասխանեց Ստարցովը։

— Այդ դեպքում աստված նրա հետ։

Ստարցովը ծիծաղեց։ Սերգեյ Լվովիչը նրան նայեց արագ, աչքերը նեղացրած, պրպտող հայացքով, ասես նոր միայն հիշեց, որ պետք է զննել հյուրին։

— Անդրեյ... Ձեր հայրանունն ինչպե՞ս է։

— Գեննադիևիչ։

— Դուք գործո՞վ եք այստեղ եկել, Անդրեյ Գեննադիևիչ։

— Ես զորահավաքի եմ ենթարկված։ Եկել եմ այստեղի բանակը։

Սերգեյ Լվովիչի հայացքը թռավ դեպի մթերքների կիսաբաց պահարանը։

— Ես ձեզ կհրավիրեի ինձ մոտ գիշերելու... Ահա Ալեքսեյն էլ խնդրում է նամակում... Միայն թե սենյակում երկու աստիճան ջերմություն է... Վառում եմ միայն մի փոքրիկ խցում...

— Ոչինչ, կծածկվեմ...

— Դե, եթե չեք վախենում...

Ստարցովը պառկեց կաշվե բաղմոցին, ուղղակի շորերով, այնպես, ինչպես պառկում էր այդ բոլոր գիշերները՝ տաքացվող ապրանքավագոններում, կայարաններում, Մոսկվայի զորանոցում. պառկեց շինելով, սապոգները հագին, ուսապարկը դրած գլխի տակ։

Սերգեյ Լվովիչը տնտղեց մթերքների պահարանը, բանալիով փակեց, նիկելապատված փոքրիկ կողպեք կախեց, թևի տակ դրեց «Տիկին Գյուսոնի ընտրյալը», ձեռքն առավ «Էկոնոմիա» լամպիկը և գնաց ննջարան։ Այնտեղ, գլխավերևը, փոքրիկ սեղանի վրա ժամացույցն է, սադափապատ վառիչը, պենսնեի ծածկոցը, «Տիկին Գյուսոնի ընտրյալը», արծաթի ծխախոտատուփը՝ փորագրված անվանատառերով և մի փոքրիկ կտոր, ընդամենը մի պստլիկ քառակուսի՝ հին, նախապատերազմյան շոկոլադ։ Վերմակը ծրարի պես հարմարեցնելով և մեջը մտնելով, Սերգեյ Լվովիչը հառաչեց, ձեռքերը առաջ մեկնեց և մի պահ աչքերը փակեց։ Հետո, արդեն կերպարանափոխված, դանդաղորեն բերանը տարավ շոկոլադի քառակուսին։ Նորից աչքերը փակեց։ Հետո ծխեց, ծուխը խոր ներքաշեց և կողքի շրջվելով, սեղանից վերցրեց գիրքը։

Պատուհանի ետևում պոկված երկաթի համաչափ զնգոցն այստեղ հազիվ էր լսվում։

Խրամատի պրոֆեսորը

— Լսեցեք, լսեցեք, բախում են։

Ստարցովը փորձեց աչքերը բացել։ Կոպերը ծանր էին, ինչպես ցինկապատած սնդուկի կափարիչը։

— Անդրեյ Գեննադիևիչ, բախում են։

Առանց շարժվելու, Ստարցովն ասաց.

— Հետո ինչ։

— Մտածում եմ, որ եթե խուզարկություն է...

Եվ դարձյալ Ստարցովը նույն կերպ արտասանեց.

— Թողեք, թող...

Նա լսեց, ինչպես տուֆլիները շտապով քստքստացին հա-

տակին։ Շարժվեցին, շարժվեցին։ Կանգ առան։ Դարձյալ քստքստացին։ Մոտ, ավելի մոտ։

— Անդրեյ Գեննադիևիչ, չէ՞ որ դուք գրանցված չեք։

— Փաստաթղթեր ունեմ։ Կբացատրեմ...

Պատերի վրայով թնդաձայն հառաչ դլորվեց։ Տուֆլինները շտապեցին։ Սակայն անմիջապես, ասես մի պտույտ քստացնելով, նորից շմփացին ուղղակի ականջի տակ։

— Իսկ եթե հարձակում է... Թալանչիները... գիտեք...

— Մաուզեր ունեմ,— ասաց Ստարցովն ու աչքերը բացեց։

Սերգեյ Լվովիչը կանգնել էր նրա առջև մուշտակն ուսերին գցած, մինչև ծնկները հասնող երկար գիշերանոցով և տրիկոտաժե խունացած վարտիքով, որ կիպ կպած էր նիհարիկ սրունքներին։ Ձեռքին դողդողում էր լամպիկը, լույսի փոքրիկ, ջերմ ճառագայթներ գցելով մերթ կզակին, մերթ քթին, և Սերգեյ Լվովիչի դեմքը մեկ թվում էր ճարպոտ, մեկ տարօրինակ կերպով նիհար։

— Իսկ թույլտվություն ունե՞ք,— կամացուկ հարցրեց նա։

Պատերն ավելի թնդաձայն հառաչեցին։ Սերգեյ Լվովիչը նետվեց դուռը բանալու։ Անորոշ ձայները միահյուսվեցին և դղրդացին սենյակներում։ Հետո հանկարծ անջատվեց մի լացին, բարալիկ ձայն.

— Օրական տասնվեց ժամ աշխատում եմ։ Վեց ժամ՝ պաշտոնավայրում, վեց ժամ՝ տանը և չորս ժամ էլ հերթերի եմ կանգնում, հետո էլ հերթապահություն, աշխատապարհակ։ Ես հիսուներկու տա...

Մեկը հեռվից և խուլ ձայնով, ասես կացինը խփեին դատարկ տակառին.

— Քաղաքացի, մի ուշացրեք...

Մուշտակն ընկել էր Սերգեյ Լվովիչի ուսերից, և նա աշխատում էր այն մի ձեռքով բռնել, շուռումուռ գալով իր պոչը որսացող ջահել, անշնորհք գամփռի նման։

— Գիշերվա կեսին գրողի ծոցն են ուղարկում խրամատ փորելու։ Դանակը մարգու բկին դեմ աված։ Բավական չէ կեղտահոտ ենք մաքրում, փայտ ենք ջարդում, գրողը տանի, հերթերի ենք կանգնում... Ժելատինի համար հող փորե՞ս։ Ախր ինչիս է պետք...

— Հիմա ժամը քանի՞սն է,— հարցրեց Ստարցովը։

— Երեքը։ Գիշերվա երեքը։ Մի՞թե...

— Գիտե՞ք ինչ։ Ես կգնամ ձեր փոխարեն։ Արդեն քունս առել եմ։

Սերգեյ Լվովիչը լամպիկը մոտեցրեց Ստարցովի դեմքին։

— Գնացեք ասացեք, որ ձեր փոխարեն ուրիշ մարդ է գալիս, ավելի երիտասարդ և...

— Ավելի ուժեղ, իհարկե, ավելի ուժեղ։ Այ թե ինչ ուսեր ունեք,— խոսքն շտապով շարունակեց Սերգեյ Լվովիչը։

Նա այդ բառերն արտասանեց արդեն քայլելով, մուշտակն իրար վրա բերած դեպի դուռը սլանալիս։

Հյուրին ճանապարհ դնելով, ազնվորեն և սրտաշարժված մաղթանքներ էր շռայլում։

— Ցանկանում եմ ձեզ, ցանկանում եմ... Համեցեք։ Եթե այնտեղ ուշանալու լինեք, եկեք գիշերելու, նույնիսկ ապրելու։ Չէ՞ որ ես բոլորովին մենակ եմ։ Շատ ուրախ եմ...

Արդեն դռան մոտ նա բռնեց Ստարցովի թևքից, բարձրացավ ոտքերի ծայրերին ու շշնջաց.

— Երևում է, այնտեղ վատ է։

— Որտե՞ղ։

— Դե այնտեղ...

— Կգնամ կտեսնեմ,— պատասխանեց Անդրեյն ու սանդղուղքով վար նետվեց դեպի մթությունը։

Բակում, մրոտած լապտերի պղտոր լույսի տակ անվանական կանչ էին անցկացնում։

— Բնակարան քսանյոթ։

— Այստե՞ղ եմ,— բղավեց Անդրեյը։

Եվ խուլ, ինչպես կացնով հարվածես դատարկ տակառին, հնչեց մի ձայն.

— Վարձել է։

Հետո մութ զանգվածը Անդրեյի առջև տնկվեց, ծածկեց լապտերը և նույն ձայնը հնչեց նրա գլխավերևը.

— Փաստաթուղթդ...

Թաց, խուլ թունելը, ցրտի սև երախը լցվեցին համր, խռնված երամակով։ Երկաթի թեփի վրայով, ինչ-որ տեղ գլխավերևում, կալի վրայի շղթաների նման դիսկդիսկում էին արագ քայլերը։ Օձիքները բարձրացրած, ձեռքերը թևքերի

մեջ քաշած, մեջքները կորացրած, դեմքերը դեռևին հառած, հայացքը ոտքերի տակ՝ առաջ, միշտ առաջ, անպայման առաջ, միայն առաջ՝ դեպի ցրտի սև երախը։

Եվ հանկարծ՝ մեջքներին, ծոծրակներին, վզներին, ոտքերի տակ՝ քթերով, փորերով, ծնկներով բոթբոթում են իրար, բոլորը, բոլորն անխտիր։ Եվ առջևից.

— Կա՜նգ առ, կա՜նգ, կա՜ն-ն-ն...

Կամաց-կամաց, շոշափելով, աչքերը կկոցելով, արմունկները, ձեռքերը, մատները՝ առաջ, դեպի կողքերը, դեպի ետ տնկելով, բազմությունն սկսեց ցրվել աջ ու ձախ։ Իսկ առջևից.

— Գ-գրո՜ղը տանի։ Դեմ առանք։

— Տե՜ր աստված, ախր ո՞ւր էիր ճխտվում։

— Դե, ընկերն է տանում, ես էլ մտածում էի, թե ճանապարհը դիտի...

— Աքաղաղներն են մտածում... Վա՜յ փեշերս պոկվեցին վրայիցս։

— Դուք ինքներդ...

— Հա՜-հա՜...

— Քաղաքացիներ, ձախ կողմով, ահա լուցկու լույսի կողմը, այստեղ։

— Կրիվ չարած, վիրավորվել ենք։

Շրջանցում էին կույրերի նման, ոչ թե երամակով, այլ մարդկային բազմությամբ, մարդկային ծիծաղով, մետաղալարի մեջ խճճված, խղճուկ փայտե իշոտնուկ։ Լուցկիներ էին շրթացնում, վառիչներից սպիտակ կայծեր էին կորզում քամուն ի զվարճություն։

Անկյունադարձին, հեռվում հանկարծ լուսնի լույսով լուսավորվեց ժամացույցի թվատախտակը։ Այն հարթ էր, մաքուր, հստակ, շրջապատված կիշերվա անսահման մթությամբ, լուսավորվում էր, առանց լույս տալու, և ցույց էր տալիս ութից տասնհինգ պակաս։

Այդ թվատախտակի շնորհիվ մարդիկ ավելի կայտառ քայլեցին և աղմկում էին անդադար։

— Շատ տարօրինակ զուգորդություններ են լինում,— լսեց Ստարցովը կամացուկ մի ձայն։ Նա ուշադիր նայեց մթության մեջ։ Կողքից արագ-արագ քայլում էր փոքրիկ մի ստվեր, հաղիվ մինչև իր ուսը հասնող հասակով։

— Շատ տարօրինակ։ Ես մի ծանոթ ունեմ, Թանգարան պահող։ Տասնութերորդ դարի մանրանկարների միակ հավաքածուի և մանրանկարչության պատմության գրադարանի տերը։ Հիմա, իհարկե, կարիքի մեջ է, վաճառել է կահույքը, զանազան իրեղեն, մանր-մունր բաներ։ Հասել էր ծայր աստիճանի. արդեն պետք է վճռեր առաջ ո՞րը ծախի՝ մանրանկարնե՞րը թե գրադարանը։ Հիշում եմ, տանջվեց, տանջվեց ու սկսեց գրադարանից։ Եվ գիտե՞ք ինչ, այդ օրից ամեն ինչ մոռացավ, մոռացավ այն ամենը, ինչ գրքերում կար, ամեն բան՝ ժամանակագրություն, դարաշրջաններ, ոճեր՝ ամեն ինչ։ Նայում է միայն իր մեդալիոններին՝ ճենապակի և արծնապակի, ժպտում է, պայծառանում՝ և վերջ։ Ու ինչ էլ փորձում է հիշել, բոլորը խառնում է։

— Դուք ի՞նչ զուգորդության մասին եք ասում,— հարցրեց Անդրեյը։

Կամացուկ ձայնը՝ անթափանց խավարի միջից, մարդկանց ղժժոցի, երկաթաթեփի շչյունի միջից, ասես ներողություն հայցելով, ծիծաղեց ինքն իր վրա։

— Ոչինչ, էլեկտրական ժամացույցի մասին եմ ասում։ Ահա դեռ փայլփլում է, ու թվում է, թե դեռ ժամացույց է, իսկ սլաքներն արդեն կանգնել են, կանգնել մնացել, բոլորովին չեն շարժվում։ Փայլփլում է, բայց կմարի, անպայման կմարի...

— Դատարկ բան է,— հանկարծ դուրս թռավ Անդրեյի բերանից, և իսկույն հիշեց, որ այդ խոսքն իրենը չէր, որ Գոլոսովն այն այլ կերպ էր արտասանում։

— Ժամացույցը հենց կաբելի վրա է, դրանից է վառվում,— լսվեց ետևից։

Կանգ առան այն նույն սառը երախի մեջ, թվում էր անտեղի, թվում էր կարելի էր կանգ առնել շատ ավելի առաջ, և կարելի էր նաև էլի գնալ։ Կարմրագույն լույսը բոր միջից դիպավ կնճիռներով ակոսված, շեշտ լայն երեսին։ Հետո դեմքի տեղում կարմրին տվեց ծխախոտի կրակը։ Կրակին մոտեցավ թևքը, կրակը թեժացավ, լուսավորեց ժամացույցի փոկը։

— Տասն է պակաս,— հառաչեց զանգվածը։

Ինչ-որ տեղ տրտնջաց խավարը, ճանապարհը ցնցվեց,

երեքաց. մի երկու հարյուր քայլի վրա գետնից դուրս ցցվեց սպիտակ զանգակատունը, նրա կողքին՝ փլատակներ, սառը-մեռած լուսարձակի դողացող լույսի տակ, հետո ուրտունջը վերածվեց աղմուկի, զվռոցի, որոտի, դղրդոցի և հետո, սա-վանի պես փռվելով տների վրա՝ եկեղեցուց, փլատակների վրայով, տնից տուն, որքան հեռանալով, այնքան արագ, լույսի ուղղակի, աչք ծակող փողը խփեց երեսներին և կու-րացրեց։

Դղրդացող, լեռան նման բեռնատարից, ճայթյունն ու ցնցումը հաղթահարելով, զիլ ձայնով բղավեցին.

— Ք-քանի՞ հոգի են։

— Երեսուն։

Դղրդոցով, զնգոցով գետնին թափվեցին բահերը, վեր-վեր թռչելով սալարկի վրա։

— Տասնչորս։ Տո՛ւր, է՛լ-լի։

— Բավական է։

Ու նորից գետինը ոտքերի տակ երերաց, նորից մեռյալ-սառը լուսարձակը ճանկեց տները, փլատակները, ցանկա-պատերը. հետո սև խորխորատը միանգամից շրջվեց ու կիպ փակեց մարդկանց, և բոլորը կուրացան։

— Բաժանվեցեք երկու մասի։

Փլատակների վրա էին բարձրանում խումբ-խումբ, իրար ձեռք բռնած։ Այնտեղ սկսեցին լուցկիների վերջը տալ՝ գե-ռաններ էին որոնում։ Զգիտես ինչպես, ամեն կողմից ծպեղ-ներ, փայտեր, տախտակ, բաղդատիներ, շրջանակներ էին հավաքել, մոտ գլորեցին մի թաց գերան։ Երկու ծայրերին, որ ծածկել էին ծպեղներով, խարույկներ վառեցին։

Թնդաձայն կոկորդը անհամբեր որոտաց.

— Հը, ի՞նչ եք ասում, քաղաքացիներ, վեր կենա՞նք։

Այն ժամանակ մեկի մեծ ձեռքը, խարույկների աղոտ լույսի տակ դողդողալով, ծանրորեն բարձրացավ դեպի ճա-կատը, իջավ փորին, մի ուսից մյուսը նետվեց և հանգիստ ձայնը կանչեց.

— Տեր ընդ մեզ, ընկերնե՛ր։

Եվ ահա մի երկու տասնյակ մեջքեր դանդաղ հակվեցին գետնին։

Ցուցանակներից սարքված ցանկապատի մոտ, որտեղ անցավ հերթափոխը, սալարկը ջարդուփշուր անելով, դղրդում ու խշխշում էր երկաթը։ Անդրեյը կոճակներն արձակեց, ձեռքով սրբեց քրտնած վիզը, նստեց ասֆալտին։ Իրեն փո-կով կապկպած կինը, անճարպիկ, գեր, փնչացնելով, ժան-գոտած թիթեղի կտորով քերելով ափերի վրայի կպչուն ցե-խը, հարցրեց.

— Հը, պրոֆեսոր, քարեր շուռ տալը ո՞նց է։

Մեկը, որ հասակով Ստարցովի ուսից կլիներ, ճմլկոտաց, ասես քնից արթնանալով, և ծիծաղեց.

— Գիտե՞ք ինչ՝ լավ է։ Չեմ կարող ձեզ ստույգ հաղոր-դել, թե ինչ զգացում ունեմ։ Երբեմն այնպես գնում ես փո-ղոցով, պատահաբար գլուխդ բարձրացնում ես, և հանկարծ՝ երկինք։ Այնպիսի մի զարմանք է պատում հոգուդ։ Տարի-ներով չես տեսնում, չես նկատում, ասես ոչինչ չկա։ Մեկ էլ հանկարծ առնչվում ես։ Բանից պարզվում է՝ երկինք է... Ահա այդպես էլ...

— Պարզվում է՝ աղբ է։

— Միանգամայն ճիշտ է՝ աղբ է, ցեխ։ Իսկ դիպչում ես՝ ուրախություն է։

— Ես կհասկանայի, եթե ասեիք՝ պաթոս է,— լսվեց կեր-կերուն, հևացող մի ձայն։

Գեր, անճարպիկ կինը գլխի ընկավ.

— Այո՛, այո՛։ Փետրվարին բարիկադներն իրենք իրենց էին սարքվում։ Իսկ հիմա՝ զորանոց է։

— Եվ կարևորը ի՞նչ ենք պաշտպանում։ Ավերելու իրա-վունքը։

— Ավերելու,— արձագանքեց ետևում։

— Ավերելու,— ծփաց առջևում։

— Պաթոսը,— ասաց պրոֆեսորը հայացքը սևեռելով Անդ-րեյին,— պաթոսը՝ մոլուցք է։ Չի կարելի, որ ժողովուրդը տա-բիներ շարունակ մոլուցքով բռնկված մարտնչի։

— Իսկ ինչո՞ւ պետք է մարտնչի։

— Պրոֆեսոր, չէ՞ որ կուլտուրան...

— Կուլտուրան,— արձագանքեց ետևում։

— Կուլտուրան,— ծփաց առջևում։

Եվ դարձյալ, ասես ինքն իր վրա ծիծաղելով, պրոֆեսորը արդարացավ.

— Գիտե՞ք ինչ, պատմություն ուսումնասիրելիս ես չկարողացա հայտնաբերել այնպիսի մի դեպք, երբ որևէ գաղափար անհետ կորած լիներ ակադեմիայի, քաղաքի կամ պետության փլատակների տակ։ Չկարողացա։ Եվ միանգամայն հանգիստ եմ կենսաբանությանը, պատմությանը, արվեստին, ֆիզիկային, ընդհանրապես մարդկության կուտակած գիտելիքներին հիմա ոչ մի վտանգ չի սպառնում։

— Գաղափարներ կարող են հղանալ միայն մարդկության մեջ։ Իսկ մարդկությունը դատապարտված է փոխադարձ բնաջնջման։

— Բնաջնջման,— արձագանքեց ետևում։

— Բնաջնջման,— ծփաց առջևում։

— Ես այդպիսի բան չեմ տեսնում,— առաջարկեց պրոֆեսորը։

— Ինչպե՞ս թե,— հարցրեց Ստարցովը,— հապա ժամացույցի մասին ասվա՞ծը։

— Ի՞նչ ժամացույց։

— Այն, խաչմերուկինը։ Փայլփլում է, բայց կմարի, անպայման կմարի...

— Թանգարան պահողի մասի՞ն։ Բայց չէ՞ որ դա զդացում է, մարդկային զգացում։ Պարոնայք (պրոֆեսորը բացականչեց՝ պարոնայք, սակայն դիմեց միայն Անդրեյին և խոսում էր մտերմիկ կշտամբանքով), Ո՞վ կարող է ժխտել, որ մեզ համար ցավալի է տեսնել սեփական մահը։

— Մահը,— ձայնակցեց հևոցը։

Ցուցանակներից սարքված ցանկապատը դղրդաց և ոռնաց, խլացնելով կամացուկ խոսակցությունը։ Խարույկները մարեցին, հետո մի պահ մարդկանց ողողեցին կարմիր բոցով և հավասարաչափ գետնահարեցին կրակը։

Հողաթումբը բարձրանում էր ամբողջ խրամատի երկայնությամբ, մայթից մայթ, լայնակի ուղիղ գծով։ Երբ խրամատ էր մտնում հերթափոխը, բահերը շարժվում էին դանդաղ, թույլ, հողը թմբից ետ էր լցվում փոսի մեջ։ Հետո պինդ հողակոշտերը ուժեղ կարկուտի նման հողաթմբի վրա։ Լցվելով ջարդուփշուր

եղած գետաքարերի վրա։ Բահերի ցեխոտված երկաթը ծլընգում էր հողին դիպչելիս, ինչպես գերանդիները շաղոտ մարգագետնում, մարդիկ կրակ էին կտրում և չարացած աշխատում։

Առավոտյան ժամը վեցին այն ձայնը, որ թնդում էր, ինչպես դատարկ տակառին կացնով հարվածելիս, թռավ խրամատի մեջ, աչքով չափեց հողաթումբը, քայլեց ծայրից-ծայր, հետո բարձրացավ սալարկ ու որոտաց.

— Բավական է, քաղաքացիներ։ Շնորհակալություն։

— Այսպես ասած, հանրապետությո՞ւնն է շնորհակալություն հայտնում,— արտասանեց հևոցը։

Մեկը ծղրտալով հառաչեց.

— Տե՞ր աստված։

Իրենց թափ էին տալիս, մաքրում, ցեխը քերում, բաժանում էին ծպեղների մնացորդները, ծխացող խանձողները հանգցնում ջրափոսերի մեջ, ծիծաղում. գիշերային խավարի վերջին ժամը ոտնակոխեցին աղմկոտ խմբով։

Ստարցովը շատ առաջ էր անցել։ Նրա ետևում ձայները մարել էին, քաղաքը խստաշունչ լռությամբ էր արձագանքում նրա քայլերին։

Հանկարծ նա իր առջևում խրոխտալի երգի պատառիկներ լսեց։ Ուշադրությունը լարեց, քայլերն արագացրեց։ քայլելով միայն ներբանների վրա։

Փոքրիկ ուրվապատկերը, որ հազիվ նրա ուսին էր հասնում, ձեռքերը դրած խոր գրպանները, ամբողջապես կծկված և վերարկուի մեջ քաշված, սալաքարերի վրա էր գրոշմում իր արագ, պստլիկ քայլերն ու վճռականորեն մրոմրոացնում.

Aux armes, citoyens!

Ստարցովը ձայնակցեց.

Formez vos bataillons!

Պրոֆեսորը թափով կրնկի վրա շուռ եկավ, մի տեսակ թռչնավարի Ստարցովին հառեց ածխիկ-աչուկները, կտրուկ բացականչեց՝ «Օ՜, դո՞ւք եք» — և իսկույն նրան թևանցուկ անելով, երգի ռիթմով նրա թևը քաշելով, կարծես ուզում

էր Ստարցովին խթելով զգաստացնել, կարծես ուզում էր աշխուժացնել, եռանդ ներշնչել, գրեթե բարձր ձայնով շարունակեց.

Marchons, marchons...[1]

Եվ խրոխտ, երթային, խանդավառված զրնգուն փոքրիկ քայլեր էր դրոշմում թաց սալաքարերին։

Այսպես ամայացած, խոնավ, երկաթե թեփուկ թափող քաղաքում, գիշերային խավարի այդ վերջին ժամին քայլում էին երգելով մի երգ, որին հավասարը չկար։ Եվ երբ երգը վերջացավ, մեկն ասաց.

— Մարդ մի անգամ էլ ծնվեր, մի անգամ էլ, տեր աստված։ Հարյուր տարի հետո։ Որպեսզի տեսնի, թե ինչպես են մարդիկ լալիս այս տարիների անունը տալով միայն, որպեսզի «թեկ տեղ երկրպագի դրոշի փտած կտորը, կարդա Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շտաբի օպերատիվ հաղորդագրությունը։ Ահա խնդրեմ՝ նայեցե՛ք, նայեցեք՝ քամին պոկում, անձրևով ողողում է ցանկապատին խմորով կպցրած թերթը։ Բայց չէ որ հաբյուր տարի հետո այս թղթի մի կտորը, մի մառնիկը մարդկությունը կպահի որպես մասունք։ որպես սրբություն սրբոց... Հարյուր տարի հետո ծնվես և հանկարծ ասես՝ խսկ ես ապրել եմ այն ժամանակ, այդ տարիներին։ Եվ մի անգամ, խոնավ, ցուրտ մի գիշեր Պետերբուրգում, Պետրոգրադում, Պիտերում խրամատներ եմ փորել։ Ահա այս ձեռքերով, քայլել եմ ամայի փողոցով, քաղաքով, որ մառանում էր և կուվում, կուվում էր և մահանում։ Քայլել եմ Կարմիր Բանակի մի գինվորի հետ թևանցուկ։ Ահա այս, ահա, ահա՝ նայեցեք, ահա այս ձեռքով այսպես սեղմել եմ Կարմիրբանակայինին։ Չէ՞ որ դուք կարմիրբանակայինն եք։

— Ես գնում եմ... Այսինքն... ես պետք է այսօր նշանակում ստանամ...

— Դուք թերևս դեռ տեսնեք... Ես, իհարկե, կենդանի չեմ մնա։ Այդպան չեմ դիմանա։ Փորի, մամոնայի, գազանի համար հիմա ժամանակ է։ Եթե դուք պատկերացնեք, թե երբեմն

[1] Դեպ առաջ քայլենք,
Դեպ դարերից դարերը,
Դեպ հեռուները... (Թարգ.)

որքան ցավալի է, ուղղակի լացդ գալիս է, գիտե՞ք։ Գուցե ծերություն է։ Այո, ծերություն է։ Ահա և... Թույլ տվեք ձեզ...

Հանկարծ պրոֆեսորը հայտնվեց Ստարցովի դիմաց, մի ձեռքով գրկեց նրա ծոծրակը և դողացող շրթունքներով երեք անգամ համբուրեց նրա այտը։

— Ես պետք է ձախ թեքվեմ։ Ցնեղանաք։ Հաջողություն։

Եվ անհետացավ փողոցի անկյունում։

Անդրեյը կանգ առավ։

Տաք օդն այրեց նրա դեմքը՝ այնքան որոշակի, այնքան զգալի, որ նա ցնցվեց։ Հիշողությունն անսպասելի էր և նրան շփոթեցրեց։ Այն ամենից, ինչ տեղի ունեցավ Սեմիդոլի կայարանում, ինչ պատահեց այս հրաժեշտի վերջին օրը, միայն մի բան, մի աննշմարելի փոքրիկ զգացում էր պահպանվել հիշողության մեջ։ Մնացյալը միախառնվել էր, մի կծիկ դարձել։

Մթնշաղ, խառնիխուռն ձայներ, պլատֆորմներ և դրոշակներ, ծալած, որպեսզի հարմար լինի, հրմշտոց կայարանի նեղ կառամատույցում։ Ոտքերի տակ բղավոցներից երերացող ճռճռան արկղ, հետո գործնական, շտապ համբույրներ ընկերներին, նրանց դեմքերը՝ մի տեսակ ամաչող, մեղավոր, հետո այդ վաղը սև, խառնիխուռն ուղիներով և ճանապարհ դեպի քաղաք, միայնակ և երկար ճանապարհ։ Եվ այդ ամենը՝ մի պինդ կծիկ դարձած, ետ վանվեց հստակ, աննկուն կամքով. այո, կամքով, ցանկությամբ, ցանկությամբ ևս մեկ անգամ ունենալու այն զգացումը, կատարյալ աղատության այն զգացումը, որ տիրել էր դաշտում, Սանշինի մոտերքը. մարմին չունենալու զգացումը։

Սակայն ահա թե ինչը խաթարեց կամքի անընդմիջելիությունը, ինչը ձուլածո գնդակի նման մի կողմ նետեց այն ամբողջ օրը, Սեմիդոլում անցկացրած վերջին օրը, և ահա թե ինչն այդ օրը դարձրեց հրաժեշտի օր.

Ցուրտ գիշեր էր։ Երկինքը արտասովոր բարձր, և աստղերն էլ երկնքում մեռած էին։ Կայարանի առջևի հրապարակը ոչ թե ընկած էր ինչպես միշտ որպես ա-

մայի տարածություն, այլ տարածվել էր անապատի նման։ Ձին շարժում էր ոտքերը, կառապանական երկանիվ կառքը աջ ու ձախ էր թեքվում։ Սակայն առաջանալու, շարժման զգացում չկար։ Հանկարծ գիշերվա մեջ աննշմարելի մի մարմին թռավ կառքի ոտնակին։ Ձին կանգ առավ։

— Ռի՛տա,— բղավեց Անդրեյը։

— Ուղում էի, ոչ ոք չտեսնի,— շնչակտուր ասաց աղջիկը։ Հետո փարվեց նրա պարանոցին, սառցասառն շուրթերով սեղմեց նրա բերանը, սառը թափթփված մազերը դիպան նրա դեմքին, պարանոցին, ձեռքերին, և այս աշնանային գիշերվա, շուրթերի և մազերի սառնության մեջ անսպասելիորեն տաք այրեց.

— Գնաս բարո՞վ։

Նա պետք է մի բան բղավեր, որովհետև ճիշը կանգնել էր կոկորդում, որովհետև Ռիտան կառքից պոկվեց ու փախավ գիշերվա մեջ, որովհետև նա հանկարծ իրեն այնպես զգաց, կարծես հեռանում էր մորից, հեռանում էր հավերժ. պետք է, պետք է բղավեր, սակայն ճչալու փոխարեն մատով բզեց կառապանի մեջքն ու ճիգով կոկորդից դուրս կորզեց.

— Քշի՛ր։

Ու դարձյալ ամեն բան ետ վանվեց մի պարզորոշ ցանկությամբ՝ ևս մեկ անգամ, շուտով զգալ, ապրել, դարձյալ զգալ այն, ինչ եղել էր Սանշինի մոտերքը, դաշտերում։

— Քշի՛ր, քշի՛ր, քշի՛ր։

Հիմա էլ, գիշերային ցրտի մեջ, օտար շուրթերի սառը հպումից որոշակի, զգալիորեն նրա դեմքն այրեց տաք մի հառաչ, և հիշողությունը վերջին օրվա, որ դարձավ հրաժեշտի օր, դառն էր։ Սակայն նույնքան արագ դառնությունը վերացավ անդադրում ցանկությամբ՝ զգալ, ապրել։ Եվ Անդրեյը. նետվեց մթության մեջ, բղավելով ինքն իրեն.

— Քշի՛ր։

Օ՜, եթե նա հիմա լիներ այն վարորդի տեղը, որն անկյունից դուրս քշեց դղրդացող մեքենան, թափով անցավ թուջե

սյունից երկու մատ հեռավորությամբ, ընկավ ջրափոսը, վեր թռավ, ուղղվեց, կարգավորեց, մեքենան մոցրեց պողոտայի անծայրածիր հարթության մեջ և քշեց ջրացայտերի մրրիկի, անիվների սուլոցի, շարժիչի հռնդյունի, աղմուկի, դղրդոցի, որոտի միջով։ Ամեն պահը՝ մահ, ամեն փոսում՝ մահ, ամեն խանդակում՝ մահ, ամեն սյան մոտ՝ մահ, շրջադարձին՝ մահ, ուղիղ ճանապարհին՝ մահ։ Եվ հիանալի է, հիանալի, քանզի չկա ոչինչ, բացի՝ այդպես է պետք, ոչինչ, բացի՝ անհրաժեշտ է։ Հիանալի է, թեթև, անսահման թեթև։ Օ՜, եթե հիմա զգար, ապրեր, կրկին զգար այն, ինչ նրան համակել էր Սանշինի մոտերքը, դաշտերում։

— Քշի՛ր, քշի՛ր, քշի՛ր։

Կոնրադ Ծտեյն

Նույն օրը, Մոսկվայում, այն տանը, որտեղ տեղավորվել էր Զինվորական դեսպանատների գերմանական խորհուրդը, մոտեցավ մի մարդ՝ գլխին նապաստակի մորթու փափախ, գերմանական տիպի պատռտված, կեղտոտ շինելով, ոտքերին ավստրիական երկնագույն փաթաթաններ։ Նա մի քիչ քարշ եկավ նախասրահում, մեկ-երկու անգամ կարդաց պատերին փակցված հայտարարություններն ու գրությունները և բարձրացավ երկրորդ հարկ։

Սենյակում, ուր խոնվել էին հին, պատռտված շորերով մարդիկ, նա հերթի կանգնեց։ Մի կես ժամի չափ առաջ էր շարժվում հոգնած և անտարբեր, սպասելու սովոր մարդու տեսքով։ Մոտենալով սեղանին, գլխարկը հանեց։ Մազերը շատ կարճ խուզված էին և գլխի վրայով՝ աջ ականջից դեպի ծոծրակը, կնճռոտ վարդագույն մանրիկ սպիներով ծածկված լայն սպի էր ձգվում։ Նա իրեն պահում էր ուղիղ, լավ զինվորի նման և կրունկները հնչեղ իրար զարկեց, երբ սեղանի առջև նստած մարդը հայացքը նրան հառեց։

— Ես ետ եմ մնացել հայրենիք վերադարձող էշելոնից։ Ահա փաստաթղթերս։ Խնդրում եմ ինձ ուղարկեք մոտակայում մեկնող խմբով։ Ես պետք է...

— Էշելոնը որտեղի՞ց էր մեկնում։

— Սեմիդոլից։

— Իսկ ինչպե՞ս եք մնացիք։

— Ընկերներիս համար կարտոֆիլ էի գնում։ Էշելոնի պետն ասաց, որ ութ ժամ կկանգնենք։ Գնացի երկու-երեք կիլոմետր հեռավորության վրա գտնվող գյուղակը։ Այդ միջոցին գնացքն ուրիշ գծի էին քաշել։ Ռուսական այս ամբողջ խառնաշփոթության մեջ մինչ ես հետաքրքրվում էի...

— Դա որտե՞ղ պատահեց։

— Ռյազանում։ Մինչև Մոսկվա գրեթե կես ճանապարհն ոտքով եմ եկել։

— Ձեր անո՞ւնը։

— Կոնրադ Շտեյն։

Մատը ցուցակների վրայով սահեցնելով, սեղանի առջև նստած մարդը ծխախոտը վառեց ու ասաց.

— Այո, կա։ Դա հոկտեմբերի վերջի՞ն էր։

— Էշելոնը Սեմիդոլում բռնվեց հոկտեմբերի քսանչորսին և մեկնեց քսանհինգին։

— Մի բոպե,— արտասանեց ցուցակները ստուգող մարդը, տեղից ելավ ու գնաց հարևան սենյակը։

Վգին ռուսական բաշլուղ փաթաթած մորուքավոր տարեց մի զինվոր սիրալիր տնտղեց Կոնրադ Շտեյնին և, աչքերով ցույց տալով նրա սպին, ասաց.

— Լավ է արված։ Բեկո՞ր է։

— Ֆրանսիական աշխատանք է,— արձագանքեց Շտեյնը,— Շամպանյում, տասնհինգ թվականին։

— Լավ է արված,— կրկնեց զինվորը։— Սաքսոնացի՞ եք։

— Այո։

Հարևան սենյակի դուռը բացվեց, և ցուցակները բռնած մարդը բղավեց.

— Կոնրադ Շտեյն, համեցեք այստեղ։

Երբ Շտեյնը հավասարվեց նրան, ավելացրեց.

— Քարտուղարին զեկուցեք այն, ինչ ինձ ասացիք։

Եվ կանգնեց դռան մեջ։

Քարտուղարը մի թռուցիկ հայացք նետեց նրա վրա և ասաց.

— Դուք կարող եք գնալ, ընկեր։

Հետո չոր դիմեց Շտեյնին։

— Դուք ո՞ր ճամբարում էիք։

— Տոմսկի։

— Մինչև ե՞րբ։

— Ահա փաստաթղթերս, մանրամասնություններն այնտեղ գրված են։ Նեղություն քաշեցեք...

— Խնդրում եմ պատասխանել հարցերին։ Մենք գտնվում ենք օտար երկրում, որը դեռ նորերս պատերազմում էր մեր դեմ, և մեր պարտքն է օգնել միմյանց։ Բոլորն էլ տուն են շտապում, սակայն բոլորը չէ, որ հավասարապես իրավունք ունեն առաջին հերթին մեկնելու։

— Սակայն չէ՞ որ ես արդեն էշելոնի մեջ էի։

— Գիտեմ։ Ե՞րբ եք գերի ընկել։

— Ես ծանր հիվանդ եմ, տեսնո՞ւմ եք,— Շտեյնը ցույց տվեց իր սպին։

— Ե՞րբ եք գերի ընկել։

— Տասնյոթ թվականի փետրվարին։

— Որտե՞ղ։

— Ռիգայի մոտ։

— Մինչև ե՞րբ են ձեզ Տոմսկում պահել։

— Ստույգ չեմ հիշում։ Մինչև այս տարվա գարնանը։ Ես, տեսնո՞ւմ եք,— Շտեյնը դարձյալ գլուխը ցույց տվեց։

— Սակայն դուք ստույգ ասացիք, թե երբ եք մեկնել Սեմիդոլից։

— Դա գրված է փաստաթղթերումս։

— Ինչպե՞ս հայտնվեցիք Սեմիդոլում։

— Վեց մարդ փախել էին Տոմսկից, ի թիվս դրանց՝ ես։

— Ինչպե՞ս անցաք ռազմաճակատը։

— Կարմիրները մեզ լավ ընդունեցին և օգնեցին, որ Սեմիդոլ հասնենք։

— Իսկ սպիտակնե՞րը։

— Սպիտակներին շրջանցեցինք։

— Քաղաքացիական պատերազմին չե՞ք մասնակցել։

— Ո՛չ։

— Շարքայի՞ն եք։

— Եֆրեյտոր եմ։

Քարտուղարը վեր կացավ և դիմեց դեպի սենյակի ծայրին գտնվող դուռը։ Դռան մոտ հասնելով, արագ շրջվեց և հարցրեց.

— Դուք չէի՞ք ճանաչում ոմն ցուր Ֆյուլեն-Շենաուի։

Ֆրեյտորը հոնքերը խոժոռեց, աչքերը հառեց առաստաղին, հառաչեց.

— Ոչ, չեմ հիշում,— հանգիստ պատասխանեց նա։

— Ձեր անունն ինչպե՞ս է։

— Կոնրադ Շտեյն։

Քարտուղարը դուրս եկավ։

Այն ժամանակ Կոնրադ Շտեյնը նետվեց դեպի դուռը, որով ներս էր եկել, մի պահ կանգ առավ, շունչը պահեց՝ ականջ դնելով, հետո անշտապ սեղմեց դռան բռնակը։

Այն սենյակում, որտեղ խմբված էին գլխոտած մարդիկ, սեղանի առջև ոչ ոք չկար։ Հեռախոսի խցիկից լսվում էր մեկի զայրացած, սուր ճիչը։

Կոնրադ Շտեյնը գլխարկի մեջ դրեց իր փաստաթղթերը, նապաստակի մորթուց փափախը քաշեց մինչև աչքերը ու սկսեց քայլել դեպի ելքը։ Վզին բաշլուղ փաթաթած մորուքավոր զինվորին, որը սիրալիր նայեց նրան, նա ձանձրացող մարդու ձայնով ասաց.

— Գնամ ծխեմ, մինչև թղթերիս հետ քաշքշուկը վերջանա։

Ու հանգիստ իջավ սանդուղքով։ Փողոցում իսկույն ծլկեց մյուս անկյունը, նետվեց դեպի տրամվայի կանգառը ու խառնվեց անբարետես ամբոխին։

Իսկ գիշերը Մոսկվայից Կլին մեկնող ապրանքատար գնացքին մթության միջից մոտ վազեց մի արագաշարժ մարդ՝ մեծ սպիտակ գլխով, և սպասելով, որ անցնի կցաշղթաները գնգացնող, ճռճռացող գնացքը, կպավ վերջին վագոնի ծոծրակին, թափարգելի մոտ, կարմիր լապտերի կույր աչքի տակ։

Թշնամին դարբասի մոտ է

Շտաբը լուսավորված էր և կեղտոտված, կոխկրտած սանդուղքով վազում էին, այս ու այն կողմ նետվում, քարշ էին գալիս մարդիկ։ Բաց դռնից խուժում էին հեռախոսի զանգերը և խռպոտած, տանջահար ձայնը կոնչում էր բոպեն մեկ։

— Լսում եմ... հանձնարարությունների համար...

— Խոսում է հանձնարարությունների համար... հանձնարարությունների համար հեռախոսի մոտ։

Կլոր, բարձրաստաղ սենյակում ծխախոտի ծխի և թղթե կույտերի մեջ թաղված էր քնատ մի մարդ։ Մատները թքոտելով, նա ընտրում և առանձնացնում էր ստվարաթղթե քարտերը, թղթիկները, շուրթերին էր մոտեցնում արծնապատ թեյամանը, ծծում մաշված քթիկը, հետո երկար ժամանակ շոում էր աչքերը՝ հաստացած կոպերով և գունազրկված բիբերով, և կրկին թղթերն էր վերադասավորում։

— Ձեզ ասվա՞ծ է երբ ներկայանալ,—հարցրեց նա Ստարցովին, առանց թղթերից կտրվելու։

— Իննին։

— Իսկ հիմա քանի՞սն է։

Նա մի տեսակ ամբողջովին կախ էր ընկել՝ բեղերը մտել էին բերանը, այտերն իջել ստորին ծնոտին, երկար մազերը ծածկել էին ճակատը, աչքերը, ականջները, սակայն անդադար էին ձեռքերը, որ փնտրում, դասավորում էին քարտեր, թղթեր, թղթիկներ։

— Սպասեցեք,— ձայն տվեց նա հեռացող Ստարցովին,— կա։ Ֆրանսիական գետափնյա փողոցում է։

Ստարցովը թուղթը վերցրեց, մտցրեց թևածալի մեջ և թափառող, վազվզող, այս ու այն կողմ նետվող մարդկանց, բազմաձայն զնգոցների և ծղրտացող խռպոտ «Հանձնա-բարու-թյունների համար» ձայնի կողքով դուրս եկավ հրապարակ։

Պալատի վրա բարձրանում էր այգաբացի անհավասարաչափ սպիտակը, սակայն պալատն ինքը, Ալեքսանդրյան այգին, շտաբի բացված պայտը դեռևս կանգնած էին գորշ, հոծ պատի նման, կտրելով ավտոմոբիլների լուսարձակների խաչաձևած ճանկերը։

Անդրեյը սուզվեց մառախուղի մեջ։ Նա քայլում էր լայն ու վստահ՝ սառը քամուց կայտառացած, որ սողոսկում էր օձիքի տակ, թևքերի մեջ։

Նա շտապում էր գործին ընդառաջ, և վստահ էր, որ աշխարհում ամեն բան կդառնա պարզ ու հստակ, ինչին էլ ինքն առնչվի։ Նրան թվում էր, թե այն զգացումը, որ իրեն կտրել էր գետնից, ինչպես քամին է վեր թռցնում թղթի կտորը,

պահված էր մի տեղ, բոլորովին մոտիկ, և ուր որ է կներխուժի իր ներսը, որպեսզի դարձյալ առնի հողմապտույտի մեջ։ Նա ինչպես կարող էր գիտենալ, որ իր համընթաց քամին փչում էր հենց այն ափից, որին ինքն աշխատում էր մոտենալ։ Ինչպե՞ս կարող էր գիտենալ, որ այն ժամից, երբ ոգեկոնի անձրևներից կուրացած տան շեմքին, նրա ապրած ամենօրը սարի պես կկանգնի իր և իր պարզ, որոշակի նպատակի միջև։

Նա բացեց խոնավությունից թաց դուռն ու բարձրացավ սանդուղքով, որի վրա փռված ուղեգորգը ամբողջապես ցեխոտված էր։

Մեծ դահլիճում վառվում էր մի թույլ, անուժ էլեկտրական լամպիկ։ Լամպիկի կարմրագորշ լույսն ընկել էր պատուհանների երկայնքով շարված թղթախաղի սեղանիկների երկայնքին։

— Սա-լա-վատ,— Անդրեյի ականջին հասավ կոշտ կոկորդային բառը։

Նա շուռ եկավ։ Անկյունում, համերգային դաշնամուրի կափարիչի վրա երեսնիվեր պառկած էր մի մարդ, հեռախոսի փողը բերնի մոտ բռնած։

— Սալավա՛տ, Սալավա՛տ,— բղավում էր նա այնպես, որ փողը ցնցվում էր, ոտքերը ձգվում էին։

Անդրեյը նայեց դահլիճի հեռավոր անկյունը։ Նրան թվաց, թե այնտեղ ոչ ոք չկար։ Սակայն պատուհանից թափանցող աղոտ լույսի տակ հանկարծ նկատեց զինվորի պատկերը։ Սվինը ուղիղ քանոնի նման ցցված էր նրա գլխավերևում։ Զինվորը կանգնել էր հատակի վրա բարձրացող սև, անձև կույտի առջև։ Անդրեյը մոտեցավ։ Բարձր ոտնակին, որի վրա փռված կտորը երկու կողմերից ծալքերով ցած էր իջնում և ծածկված էր պսակներով, դրված էր դագաղ։ Պահակ կանգնած զինվորը խոր քնած էր։

— «Սալավատի» թողարկի՞չն է,— բղավեց դաշնամուրի վրայի մարդը և իսկույն եռանդով սկսեց հեռախոսափողի մեջ հրել կոշտ, անհասկանալի բառեր։ Հետո դաշնամուրից ցած թռավ և ասաց, արդեն դիմելով Անդրեյին.

— Ա՛յ քեզ սրիկաներ, մինչև հիմա դեռ մեքենայի մեջ չեն գցել։

— Ի՞նչը։

— «Սալավատը», ի՞նչը։ Թերթը, գրողը տանի։ Իսկ դուք ի՞նչ էիք կամենում։

— Չգիտեմ, արդյոք ճի՞շտ եմ եկել։ Ես ուզում եմ պետին...

— Պետի՞ն։ Ահա այնտեղ է։

Եվ կարճ մատը Անդրեյին ցույց տվեց դահլիճի հեռավոր անկյունը, դագաղը։

— Նա մահացե՞լ է,— հարցրեց Անդրեյը։

— Ո՛չ, ո՛չ, դա բոլորովին ուրիշ մարդ է։ Ահա այնտեղ, այն դուռը։

Պատերին թափառող կարմիր լույսը թռավ Անդրեյի կրծքին, ծփաց դեմքի վրա և սողաց ցած, հատակին։ Բուխարու մոտ, մեծ գորգի վրա ծալապատիկ նստել էին երեք մարդ։ Այտոսկրոտ սև մի մարդ իրար կպած ուղիղ ճարպոտ մազերով գլուխը կտրուկ Անդրեյի կողմը դարձրեց և հարցրեց արևելյան ծորուն առոգանությամբ։

— Ընկեր, ի՞նչ եք ուզում։

Անդրեյը մոտեցավ ու մեկնեց իր թղթերը։

— Լավ, մեզ այսպիսի աշխատող պետք է,— ասաց սև մարդը և Անդրեյին ծակեց իր շեշտակի աչքերով։

Մյուս երկուսը թռուցիկ խեթ հայացք նետեցին Անդրեյի կողմը և բարձր հառաչելով միապաղաղ մի երգ մմռացին։

— Ուզում ես սպասել՝ կարող ես սպասել մյուս սենյակում։

— Դուք ինձ զորամաս կնշանակե՞ք,— հարցրեց Անդրեյը։

— Ի՞նչ զորամաս, ինչո՞ւ զորամաս, երբ ես ասում եմ, որ մեզ այսպիսի աշխատող է պետք։

— Սակայն ես ցանկություն եմ հայտնում ռազմաճակատ գնալու, ոչ թե այստեղ մնալու։

— Սիրելի ընկեր, ես էլ ցանկություն եմ հայտնում, որ դու այստեղ մնաս։ Այստեղ էլ ռազմաճակատ է, ոչ թե այլ բան։

— Ես ուզում եմ առաջին գծի զորամասում լինել, ընկեր, ինձ դրա համար են այստեղ ուղարկել։

— Ի՞նչ շատախոսն ես, ի՞նչ շատախոսն ես, սիրելիս,— բացականչեց սև մարդն ու Անդրեյին ցույց տվեց իր բավա-

կան փայլուն սեպերը։— Ահա, ուրեմն, հայտնում եմ, որ այստեղ առաջավոր զորամաս է, հիմա կարող է պատահել, որ առաջավոր զորամասը հենց Պետրոգրադում լինի։ Ջենք ունե՞ս։

— Մաուզեր է։

— Գնա մաուզերդ մաքրիր։

— Ցուղած է, մաքրելու բան չկա։

— Ի՞նչ շատախոսն ես։

Սև մարդը տեղից վեր թռավ, խփեց իր ազդրերին ու մոտեցավ Անդրեյին։ Նա բարեկազմ էր, ճկուն, նեղկուրծք, և այն բանում, ինչ նա ասաց, անսպասելիորեն լրջություն լրսվեց; նրա բառերի հետ չկապվող առոգանությամբ խորացած լրջություն։ Նա ասաց.

— Երիտասարդ ընկեր, հեղափոխությունը գիտե, թե ինչ պետք է անի քեզ, ինձ, ահա այն մյուսներին։ Ես էլ չեմ ուզում նստել այս սենյակում, ցուրտ, բարձրառաստաղ, հատակից մինչև առաստաղը հինգ վերստ է։ Հեղափոխությունը գիտե, որ ես, պետս, այստեղ եմ պետ, այս գարշելի բուխարու մոտ։ Սպասիր մյուս սենյակում։ Դու կօգնես թաղելու սպանված հրամանատարին։

Նա ձեռքը խփեց Անդրեյի ուսին։

— Լավ թաղում է պետը, նա լավ կարմիր հրամանատար էր։

Բանբերը մտավ ու կանգնեց դռան մեջ։ Պետը նրան ընդառաջ գնաց, և հանկարծ կոկորդային ճիչերի մի անդուսպ հեղեղ թափվեց բանբերի գլխին և կարծես նրան ցած տապալեց. մարդը հետ-հետ գնաց ու նստեց բազկաթոռին։ Այն ժամանակ սեր հարձակվեց նրա վրա, նրա ուսերը թափ տվեց, կրծքին խփեց, սկսեց գոտին քաշքշել։ Բանբերը պետին մեկնեց կարճ մատներով ձեռքը՝ ափը դեպի վեր, պետը խփեց նրա ձեռքին և նետվեց բուխարու մոտ։ Այնտեղ նրա երկու ընկերները դեռևս օրորվում էին ու երգը մռռացնում։ Նա մի բան ասաց սրանց. վերջիններս դարձան բանբերի կողմը և մի կարճ խոսք բղավեցին։ Բանբերը վեր կացավ, նույն խոսքն արտասանեց ու դուրս եկավ։ Այն ժամանակ պետը մոտեցավ Անդրեյին։

— Ես նրան ասում եմ, իմ ձիուն ինչո՞ւ ես սպիտակ սթար տալիս։ Ես սպիտակ բանակային չեմ, ես կարմիր բանակային եմ, ուրեմն կարմիր սթար տուր, կարմիր աստղ, կարմիր թամբ տուր։ Սպիտակն ինչի՞ս է պետք։

Նա ուրախ քրքջաց ու ձեռքը մեկնեց Անդրեյին։

Անդրեյը բռնեց այդ ձեռքը՝ կառչուն, ուժեղ և չոր այդ ձեռքը, սեղմեց և դեպի դուռը շարժվեց։ Երբ մի քանի քայլ անելով կանգ առավ սենյակի մեջտեղում, նրա դեմքին սովորի պես արտացոլվեց սև մարդու խաբուսիկ, ուրախ, խորամանկ ժպիտը։

Նա սկսեց աշխատել։

Հեռախոսներ, ծրարներ, թղթեր, հեռագրային ամփոփագրեր, ինչ-որ գրքեր ու տեղեկագրեր, ինչ-որ դերասաններ և կապտենարմուներ, հանկարծ ինչ-որ մի բան, որ կարծես սառն էր, սառնախյուսի նման, դռնից սողում էր պարկետի վրայով, կամ հեշտ կեղտոտվող, ինչպես լամպի վրայի մեռաքե ծածկոցը, ինչ-որ մեկի վիշտը, մեկի երջանկությունը, ձիապաններ, նախնադարյան մշակույթի պատմության դասախոսներ և դիվիզիայի բժիշկներ, նապաստակի մորթե մուշտակներով օրիորդներ և թաղիքե կոշիկներով նկարիչներ, մի անընդգրկելի և հանկարծ շատ շնչին մի բան. այդ ամենը նրան առավ իր պտույտի մեջ, օրորեց, ինչպես նավակում, և նա լողում էր, խեղդվում ու դուրս պրծնում, որպեսզի կրկին լողա և խեղդվի։

Նա ուշքի եկավ մթնշաղին, կարմիր դագաղը շրջապատած այտոսկրոտ մարդկանց բազմության մեջ, հենց դագաղի մոտ, սգի պես սև պետի կողքին։ Ածխալամպերով լուսավորված դահլիճը, ամբողջապես պանոներով, գոբելեններով և ծանր նկարներով ծածկված, լցվել էր սովորական դարձած երգի մեղեդիով։ Սակայն երգը երգում էին կարճահնչյուն, անտառակացարի նման սվսվացող լեզվով և եղանակն ստացվում էր թախծալի, ինչպես տափաստանը։ Անդրեյին թվաց, որ այտոսկրոտ, անշարժ, պղնձաձույլ դեմքերին չափազանց հաճախակի էին փակվում ու թարթում շեղ, չոր աչքերը։

Նա գետափնյա փողոց դուրս եկավ, երբ կպչուն խավարը կառչել էր մռայլ, մութ տներին։ Մի պահ վարանոտ կանգնեց ճանապարհի մեջ, գլուխն այս ու այն կողմ դարձնելով, հետո ղեկարկը դրեց ու քայլեց դեպի Լիտեյնի կամուրջը։

Գիշերը նոր բանշտաբը գործի անցավ։

Պատերի, ցանկապատերի և սյուների վրա թպրտում էին երիզակներով և լարանով կախ տված հեռախոսալարերը։ Նրանց վրա զնգզնգում էին Զմեռայինի, Սմոլնիի դիվիզիաների շտաբների, Պետրոպավլովյան ամրոցի փայտե պիտակները։

Զեկույցի սևագրությունը գրվեց առանց ջնջումների, քիմիական մատիտով, երկու էջի վրա։ Երբ առաջինը ծածկվեց տառերի խիտ շարքերով, դուռը բախեց մի ձայն, որ անմիջապես բռնվեց և խլացավ հեռախոսի զանգով.

— Արտագրե՛լ։

Երկրորդ էջը վերջանում էր հետևյալ պարբերությամբ.

> Ներկա իրադրության մեջ, երբ 2-րդ և 6-րդ դիվիզիաների զորամասերը գրեթե դիմադրություն չեն ցույց տալիս հակառակորդին, լքում են դիրքերը, որը կազմալուծող ազդեցություն է ունենում նրանց որպես օգնություն ուղարկվող նոր զորամասերի վրա, միանգամայն հնարավոր կարելի է համարել, որ ամենամոտակա ժամանակ թշնամին կտրի Նիկոլաևսկի երկաթուղին։ Պետրոգրադի ամրացված շրջանի միջոցները քիչ մարտունակ են և նրա պաշտպանությունը չի կարգավորված։ Նկատի ունենալով Պետրոգրադի համար ստեղծված ծայրահեղ լուրջ սպառնալիքը, խնդրում եմ Տոսնոյի շրջան ուղարկել մարտունակ օժանդակ զորամասեր, ամենաքիչը երկու բրիգադի չափ, որպեսզի կասեցվի Գատչինայից դեպի Տոսնո թշնամու առաջխաղացման հնարավորությունը և արգելք հարուցվի Պետրոգրաց գրավելու նրա մտադրությունը։ Այս օրվանից բանակի շտաբը տեղափոխվում է Պետրոգրադ։

— Արտագրե՛լ։

Դա բանակի նոր շտաբի առաջին զեկույցն էր Հյուսիս-Արևմտյան ռազմաճակատի շտաբին։

Ռազմաճակատի օպերատիվ ամփոփագիրն այդ օրը աղդարարում էր— նախավերջին պարբերությունը.

> Ցամբուրգի ուղղությամբ մեր զորքերը համառ մարտերից հետո թողեցին Գատչինան։

Վերջին պարբերությունը.

> Լուժսկի շրջանում թշնամու ճնշման տակ մեր զորամասերը հեռանում են դեպի Վինդավի երկաթուղին։

Տներում կան սանդուղքներ, խառնիխուռն ու ամայի, խորդանոցներ, ուր խոհարարուհիներից բացի մեկ էլ մկներն են մտնում. նկուղներ, կառանոցներ և ձեղնահարկեր, որոնց դռները փակ են նույնիսկ շների համար. նախասենյակներ, մառաններ, միջանցքների փակուղիներ։

Ահա այս սանդուղքների վրա, այս ձեղնահարկերում, այս նկուղներում շրթունքները ավելի պարզորոշ են շշնջում և բառունցքները քիչ-քիչ դուրս են գալիս ծոցերից։ Կառանոցների լքվածությունը, նկուղի լռությունը, միջանցքի դատարկությունը, որտեղ ամենավտանգավոր վկան սարդն է՝ շրջապատված ճանճերի փոշոտ, դատարկափոր դիակներով, արիություն են ներշնչում հոգուն, որին վիճակված է սոսկ դողալ։

Շուրթերը պարզորոշ շշնջում էին.

— Յուրաքանչյուր պատուհանից՝ դրոշներ։ Ազգային դրոշներ։

— Յուրաքանչյուր ձեղնահարկից՝ հրավառություն։ Հանդիսավոր, շքեղ հրավառություն։

— Յուրաքանչյուր նկուղից ազատվածների գոչերը։ Ուրախ, խելահեղ գոչեր։

— Յուրաքանչյուր անկյունում ծաղիկներ։ Բուրավետ, շքեղ ծաղիկներ։

— Ամե՛ն տեղից։ Ամե՛ն տեղից։

Դրոշների, հրավառությունների, գոռում-գոչյունների և ծաղիկների մասին էին շշնջում շուրթերը ձեղնահարկերում, նկուղներում, ասես ի պատասխան այն հրամանի, որ տակնուվրա էր արել քարացած մայրաքաղաքը։ Կառանոցներում, նկուղներում գաղտագողի երևում էին բառունցքներ՝ հակառակ կոչի, որ փակցված էր փողոցներում և համոզում էր քաղաքացիներին, թե հսկա քաղաքը բավականաչափ գնդացիրներ, նռնակներ, հրացաններ և նագաններ ունի և սպիտակգվարդիականներին չախչախելու համար պետք է միայն, որ մի քանի հազար մարդ վճռեն չհանձնել Պետրոգրադը։

Մի քանի հազար մարդ վճռեցին։

Սակայն Լիտեյնին, այն վիճակում, ինչպես Անդրեյը տեսավ, կարծես չգիտեր այդ։

Պողոտայի կպչուն մթության մեջ մառախուղից ճզմված

մարդիկ իրենց ետևից քարշ էին տալիս պարկեր, կապոցներ, զամբյուղներ։

Այս ու այն կողմ էին նետվում, կպչում ծռմռված, ծակծկված տրամվայներին, որոնք իրենց կախ ընկած թափարգելներով պոկում էին սալարկի փայտաղյուսներն ու քարերը։

Պատերին փակցված նոր հրամանի հատվածներից խելահեղ աչքերով պոկում էին անվեհեր խոսքերը.

ՀԱՆՈ՛ՒՆ ԳՈՐԾԻ
ԲՈԼՈ՛ՐԴ ՊԱՏՐԱՍՏ։
ՏԱԳՆԱՊ ՀՆՁԵՑՐԵ՛Ք, ԹՇՆԱՄԻՆ Է ԴԱՐԲԱՍԻ ՄՈՏ։

Ավելի ճարպկորեն էին բռնում պարկերը, վեր քաշում ցեխի մեջ ընկած փեշերը, ցրվում էին տրամվայի գծի երկայնքով։

Փրկվում էին։

Եվ հանկարծ այդ կործանման զառանցանքով խելակորույս փախստականների մեջ Անդրեյը տեսավ մի կնոջ, որ կարում էր փողոցը լարովի տիկնիկի նման համաչափ քայլով։ Կինը գնում էր հովանոցը բացած։ Մազերին գլխաշոր էր կապած և զգեստն էլ կանոնավոր էր։ Անշտապ փակելով հովանոցը, նա գլուխը թեքեց ու տան մուտքից ներս գնաց։ Անդրեյը հետևեց նրան։

Դռան վրա, աղոտ լապտերիկի տակ կարդաց.

ՆԵՐՍ ԵԿ ԵՎ ԼՍԻՐ
ԽՈՍՔՆ ԱՎՆՏԱՐԱՆԱԿԱՆ,
ԿԱՆՁՈՒՄ ԵՆՔ ՔԵԶ։
ՄՈՒՏՔԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ Է ԱՁԱՏ։

Ինչպես թատրոնում շարված նստարանների ետևը, աղջամուղջի կիսախավարի մեջ կուտակվել էին ծնկաչոք կանայք։ Դպրոցական ամբիոնից խոսում էր լայնաթիկունք մի մարդ։ Նրա խոսքերը պարզորոշ էին, սակայն ոչնչի հետ չէին կապվում, բացի իր ձայնից՝ կոկած, հարթած, մի տեսակ կամացուկ, թաքուն հասնող, ինչպես քարոզչի զգույշ շարժումները։

...Խղճի գործունեությունը մեզ պետք է, որպեսզի մարդը չհանգստանա մեր կյանքի խաբուսիկ փետրաներքնակների վրա։ Իսկ ես գիտեմ, փրկիչն իմ կենդանի է, ինչպես ասել է Հոբ Երանելին։

Եղբայրներ և քույրեր, մեր հավիտենականությունն ապահովված է, ապավինենք Քրիստոսին։ Քանզի ասված է կորնթացիների Ուղերձում. զատիկը մերն է, Քրիստոսը զոհվել է հանուն մեզ։ Աղոթենք, օ՜ն, եղբայրներ ու քույրեր, միասին ի սփոփումն մեր վշտերի և ընթացիկ պահանջների...

Հռետորը ձեռքերը խաչեց ամբիոնին և գլուխը դրեց ձեռքերի վրա։ Նստարանների ետևի սև կիտուկները երերացին ու սկվեցին։ Մեկի խուլ ձայնը անհասկանալի մի բան մրթմրթաց։ Հետո այդ մռթմռթոցից դուրս սողացին ու սենյակում ծփացին ընդհատուն խոսքեր.

— Ողորմած աստված, ես աղքատ կին եմ...

— Տի՜ր աստված, աղջիկս թույլ է...

Հանկարծ այդ բղավոցների և հեծկլտանքի ծփոցի մեջ Անդրեյը տարօրինակ կերպով ծանոթ մի ձայն լսեց։ Նա լռությունը լարեց, առաջ գնաց, փնտրելով խոսողին։ Հենց ամբիոնի մոտ տեսավ վեր տնկված մի գլուխ։ Քթի վրայի պիենսնեն դողդողում էր ու ցած սահում, ծիածանագույն կայծեր ցոլացնելով, իսկ գլուխը յուրաքանչյուր խոսքի հետ ավելի ու ավելի էր բարձրանում։

— Տեր աստված, ներիր որդուս՝ Լևին, և ուղիղ ճամփի դարձրու... Որդուս՝ Լևին... Իմ որդուն, Լևին, որ թալանեց հորն ու ազգականներին, տե՜ր աստված... Եվ իմ մյուս որդուն, Ալեքսեյին... աստված...

Մեկը խեղդվեց հեծկլտանքի նոպայից և իսկույն ճղճղաց, վայնասուն բարձրացավ սև գլխաշորերով ծածկված, խոնարհված, ցնցվող գլուխների վրա։

Եվ մի գլուխ միայն անշարժ էր քարի պես՝ քարոզչի գլուխը, որ ընկած էր բարձր՝ ամբիոնի վրա, լայն ծոծրակը դարձրած դեպի եղբայրներն ու քույրերը։

Անդրեյն ինչպե՞ս ընկավ այստեղ։ Ի՞նչը նրան մղեց գնալ լարովի տիկնիկի նման այն կնոջ ետևից։ Ո՞ւր է հիմա նա։ Մի՞թե անդեմ, անխոս հայտնվեց, որպեսզի շեղի Անդրեյին

այն ճանապարհից, որով այնքան թեթև ու առույգ է քայլում։

Անդրեյը նետվեց դեպի ելքը։ Պլակատի համառ տառերը աչքը մտան.

ԳՆԱ ԵՎ ԱՅԼԵՎՍ ՄԵՂՔ ՉԳՈՐԾԵՍ։

Դո՜ւրս, դո՜ւրս այստեղից։ Պողոտա։ Դեպի պողոտա։ Գորշ շինելների խառնարանը, երթի, հավերժական երթի, ու թող հավերժ լինի այս երթը։

Բարակ լարի նման ձգված շրթունքներով մի դեմք ասես դանակով ծակեց Անդրեյին իր սրած հայացքով և դարձավ նրա ետևից վազող կարմիրբանակայինին.

— Դեռ կտեսնե՛նք,— լսեց Անդրեյը։

— Դեռ կտեսնե՛նք,— բղավեց կարմիրբանակայինն ու ուրախացած քրքջաց, վազելով ընկերոջ ետևից։

— Դեռ կտեսնենք,— սպառնաց չգիտես ում Անդրեյը և հանկարծ քթին հացի թթվաշ հոտ փչեց։ Հոտը հաղիվ էր զգացվում, սակայն այդ հոտից, ինչպես նարկոզից, սիրտն սկսեց ուժգին բաբախել։ Անդրեյը նայեց շուրջը, որպեսզի վճռի, թե ուր գնա։ Մարդիկ շարժվում էին նոսրացած հանդիպական շարքերով։ Դեմքները հողագույն էին և տափակ։ Անդրեյը նկատեց մեկի անգույն աչքերը։ Դրանց բութ, անշարժ փայլի տակ տեսավ սովի գազանային ցավը։ Անմիջապես կարծես մի ծանր բան ուսերից ցած քաշեց, և նա երերաց։

Քաղցը, քաղցն էր շարժում ամբողջ պողոտան,— թվաց Անդրեյին։ Այս ամբողջ շփոթությունը, մարդկային մարմինների այս վազքը, գորշ շինելներ հագած մարդկանց այս անվերջանալի երթը— վազք է տեղում, երթ է սովահարության սև կմախքի շուրջ։

Շուտ, հասի՛ր բնիդ մութ անկյունը, տո՛ւն, տո՛ւն։ Այնտեղ, ուր հացի կտոր կա։

Պայուսակում, որ Անդրեյը բերել էր Սեմիդոլից, դեռևս շատ հաց կար։ Այնքան շատ, որ կբավականացներ ամբողջ երեկո և ամբողջ գիշերը։ Սակայն պայուսակը մնացել էր Շչեպովի մոտ՝ կաշվե բազմոցին։ Անդրեյն ամբողջ օրվա ընթացքում ընդամենը երկու անգամ այդ մասին հիշեց ու գիտեր, որ կգնա Շչեպովի մոտ, որ ուրիշ տեղ չուներ գնալու։ Սակայն սարսափելի էր մտածել, որ արդեն գիշերելու թույլտվություն խնդրելու ժամանակն է։

Նա տեղից պոկվեց, և պողոտան սովոր ձևով տարավ նրան իր սառած փայտաղյուսների վրայով։

Տանը, որտեղ նա պետք է ապաստան գտներ, սանդուղքի վրա, Շչեպովի բնակարանի դռան մոտ, Անդրեյն սպասում էր Սերգեյ Լվովիչին։

Սակայն Սերգեյ Լվովիչը շուտ չեկավ։

Ավետարանական քրիստոնյաների ընկերությունից նա վերադառնում էր դանդաղ, ձեռքերը մեջքին դրած և կանգ առնում ավերված տների մոտ, որպեսզի գլուխն օրորի։ Ժամանում ավերված տների մոտ, որպեսզի գլուխն օրորի։ Ժամանակից սանձված և կոտրված նրա քայլվածքում դեռևս պահպանվում էր թոշակառուի բնավորության գիծը. նա չէր շտապում, նա հանդարտ տանում էր չորրորդ կարգի վաստակավոր իր անձը։

Բնակարան մտնելուց առաջ Սերգեյ Լվովիչը մտավ տնային կոմիտեի նախագահի մոտ։

— Բարև ձեզ,— ասաց նա հանելով գլխարկը և նստելով։— Խրամատ փորելու համար մի ֆունտ հաց է հասնում։ Եկել եմ հարցնելու՝ իմ հացը դուրս գրված է, թե դեռ ոչ։

— Բայց չէ՞ որ դուք չեք փորել,— պատասխանեց նախագահը։

— Փորել է իմ բնակարանը, համաձայն ցուցակի։ Հանձին ո՞ւմ է բնակարանը փորել՝ միևնույն է։ Բնակարանի վարձակալը ես եմ, ուստի իրավաբանորեն ինձ հասնում է մի ֆունտ հաց։ Բացի այդ, հիմա այնպիսի ժամանակ չէ...

Եվ Սերգեյ Լվովիչը գլանակը թխկթխկացրեց բութ մատի եղունգին։

Պետերբուրգը պատրաստվում էր ընդունելու բարձր հյուրին։

Բարձր հյուրը մայրաքաղաք գալիս ուշացավ կայսերական ամառային նստավայրերում։ Սակայն սուրհանդակներն ու արագավազ բանբերներն մոտենում էին մայրաքաղաքի ուղեկալներին, որպեսզի ստուգեն, թե մայրաքաղաքն արդյոք պատրաստ է ընդունելու և պատվելու հյուրին։ Սուրհանդակ-

ներն ու արագավազ բանբերները հազվադեպ էին ուղեկալներից վերադառնում ամառային նստավայրերը, որովհետև Պետերբուրգը՝ կայսերական ավանդությունների այդ քաղաքը, չէր կարելի հանկարծակիի բերել և որովհետև մայրաքաղաքը միշտ էլ գիտեր ինչպես վարվել բարձր հյուրերի՝ դեսպանների հետ։

Պետերբուրգը պատրաստվում էր ընդունել բարձր հյուրին։

Սմոլնի և Կսենինսկի ազնվազարմ ինստիտուտները, փորձված բարձր և բարձրագույն անձանց ընդունելությունների գործում, մի ժամանակ հպարտ իրենց անցյալով, ներկայումս վստահ ապագային, պատվով գլխավորում էին մայրաքաղաքի հուզումնալից հոգսերը և անդադրում ջանքերը։ Պետք էր զարդարել ամբողջ քաղաքը։ Պետք էր գեղեցկացնել մուտքը։ Հաղթակամարներ կառուցել։ Տախտամածներ բարձրացնել, պատվո պահակներ կանգնեցնել, պարզել շտանդարտներն ու պատվավոր դրոշները։

Որպեսզի ամեն պատուհանից դրոշ երևա։ Ամեն տանիքին հրավառություն լինի։ Ամեն անկյունում ծաղիկներ լինեն։

Ա՜խ, փշալարից հիանալի օձաժապավեն է ստացվում։ Իսկ նրա առաձիգ ժապավեններից թեթևագույն վարդակապեր են հանգուցվում ռեժիսորների մերակներին։ Եվ մի՞թե մանրագնդակով լցված տաշած արկերը չեն ցրվի բազմագույն և ուրախ կոնֆետտիների նման։ Իսկ հաստ, խոնավ ավազով լցված պարկերը մի՞թե հարմար չեն տաղավարներ սարքելու համար։ Մի ժամանակ այսպիսի տաղավարներում վեր էին թռչում պահորակ սեկ-ի խցանները, սակայն խցաններից ինչո՞վ է պակաս լավ յուղած գնդացրի ոռնացող ճարճատյունը։

Ազնվազարմ Սմոլնին հյուսում և կտրում էր փշալարի օձաժապավեն, և ազնվազարմ Կսենինսկին տարօրինակ տաղավարներ էր սարքում ավազով լցված պարկերից։

Եվ ահա ամեն ինչ պատրաստ էր, և պողպատե պայուսակների մեջ պահված կոնֆետտիներն էին հանգիստ սպասում իրենց ժամին, և տաղավարներից դուրս էին նայում կարմիր գլխաշորերով կապված գլուխները, ու մնում էր միայն քաշել Շիգովկայում դրված ութդյույմանոց հրանոթի քուղը՝ բարձր հյուրի Պետերբուրգ գալուստը ողջունելու համար։

Սակայն բարձր հյուրը մայրաքաղաք չմտավ։ Նա խուսափեց մեծարանքից։ Նրան սխալ էին հասկացել։ Նա այդպիսի շքեղ ընդունելություն չէր կամենում։ Նա բնավ չէր կարծում, որ իր հայտնվելը կարող է այդպիսի ոգևորություն առաջ բերել։ Նա կարծում էր, որ ամեն ինչ ավելի պարզ կլինի։ Նա տեսավ, որ սխալվել է, երեսը թեքեց մայրաքաղաքից, որպեսզի հեռանա առհավետ. խե՜ղճ, չհասկացված բարձր հյուր։

Եվ որքա՜ն ափսոս էր։ Ինչ տաք ընդունելություն էր պատրաստել Պետերբուրգը։

Ահա թե ինչ ասաց Անդրեյին ծորուն արևելյան առոգանության տեր մարդը, երբ ժամանակ եղավ հրամանից բացի ուրիշ մի բան ասելու.

— Հեղափոխությանը գրագիր է պետք։ Դու գրել գիտես՝ գրիր։

Այն ժամանակ Անդրեյը բղավեց կատաղած.

— Ես չեմ ուզում գրել։ Ինձ համար զզվելի է թղթիկների հետ գործ ունենալ, երբ կենաց-մահու կռիվ է։

Եվ առոգանության տեր մարդը պատասխանեց հանդարտ ձայնով, այտոսկրոտ դեմքին մի խաբուսիկ ժպիտ.

— Սիրելի ընկեր, ինչո՞ւ ես կարծում, որ հեղափոխության ժամանակ ամեն մարդ պետք է հրացանով կրակի։ Գուցե քո հեղափոխությունը հենց թղթայի՞ն է։

Եվ հետո, հեռանալով, շրջվեց ու գրեթե քնքշորեն ավելացրեց.

— Հեղափոխությունը չի սիրում, որ նրան առարկեն։ Պետք է միշտ ուրախ լինել...

Ճիշտ է, այն ժամանակ էլ մարդիկ կային, որ չէին կորցնում ուրախության կայտառ ոգին։

Այն դիվիզիայի կոմիսարը, որտեղ Անդրեյն էր ծառայում, պատրաստվում էր ամուսնանալ նապաստակենու մուշտակով սպիտակամորթ կնոջ հետ։ Կոմիսարը հյուրասեր էր, սիրում էր մարդկանց, ընկերներին և պատերազմի եղբայրակիցներին։ Եվ նա ուզեց մի լավ հարսանիք անել, ինչպիսին անում են տափաստանում, ազատության մեջ, բաց երկնքի տակ։ Ձիերը չբավականացրին, նա խնդրեց դիվիզիայի բժշկից, որպեսզի փոխարինաբար իրեն տրամադրի կլորիկ զամբիկին,

որով վերջինս շրջում էր քաղաքում։ Բժիշկը տվեց. քաղաքում ավելի հանգիստ վիճակ էր, զինվորներն առողջանում էին, կարելի էր մեկ-երկու օր ոտքով շրջել։

Սակայն մեկ-երկու օրն անցան, իսկ զամբիկին չէին վերադարձնում բժշկին։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում տեսնել կոմիսարին և ի վերջո գլխի ընկավ իր ձիու մասին հարցնել նրա կնոջը՝ նապաստակենու մուշտակով սպիտակամորթ տիկնոջը։

— Զամբի՞կը,— զարմացավ մուշտակով կինը։— Սիրելի բժիշկ, չէ՞ որ մենք հենց այն ժամանակ, հարսանիքին նրան մորթեցինք ու բաժանեցինք հյուրերին։ Եթե գիտենայիք, թե ի՞նչ հյուրեր ունեինք։

Եվ նա սկսեց ծիծաղել...

Այ, եթե Անդրեյը կարողանար ծիծաղել։ Թերևս, այն ժամանակ նրա աչքերն այդպես փոս չէին ընկնի, և քայլվածքն էլ ավելի ամուր ու հաստատուն կլիներ։ Սակայն յուրաքանչյուր օրը հարվածում էր նրան, ինչպես քամին Թոչունին, և նրա շուրջն ամեն ինչ դառնում էր տարօրինակ ու հազիվ հասկանալի։

Ու, մի անգամ, ձյունոտ մի երեկո տուն վերադառնալիս, նա կանգ առավ անկյունում, զարմացած նայեց շուրջը, ասես այս փողոցներն էր ընկել ուրիշ աշխարհից։ Թաց ձյունը կատաղորեն հարվածում էր գորշ, պլոկված պատերին։ Մարդիկ վազում էին, կարծես բոլորովին աննպատակ, և այն ամենի մեջ, ինչ շրջապատում էր Անդրեյին, չէր կարելի իմաստ տեսնել, որն այնքան սովորական և պարզ բան է ապրող քաղաքում։

Մի աղջիկ, գլխին շորի կտոր գցած, կարմ զգեստով, թևի տակ ինչ-որ բան սեղմելով, ոտքից ոտք էր փոխվում մեխած դռան մոտ։ Նրա դեմքը չէր երևում։

— Ի՞նչ ասացիք, քաղաքացի։

Բարձրահասակ, ոսկրոտ մարդը Անդրեյին հառեց դատարկ աչքերը։ Նրա բերանը կիսաբաց էր, գլխարկի կախ ընկած եզրերից ջուր էր կաթում թաց ուսերին։

— Դուք, կարծեմ, հիմա մի բա՞ն ասացիք,— կրկնեց նա։

— Ե՞ս ասացի,— հարցրեց Անդրեյը։

— Դուք ոչինչ չասացի՞ք։

Բարձրահասակ մարդը կիպ մոտեցավ Անդրեյի դեմքին և ուշադիր նայեց նրան։

— Քաղաքացի, մի կտոր հացի փող ողորմացեք,— հանկարծ մոթմոթաց նա և բերանն ավելի մեծ բացվեց։

— Հացի՞,— հարցրեց Անդրեյը։

Մարդը մի քիչ ժամանակ կանգնեց լուռ, սառած դեմքով, աչքերը չռած, հետո շրջվեց ու արագ վազեց հեռացավ։

Անցավ մի ծերուկ՝ մարմինն առաջ հակված, ոտքերը մի կես քայլ մարմնից ետ ընկած։ Նրա ոտքերի թաթերին փաթաթված էին թաց, ծանր լաթի կտորներ և քայլերից մայթի վրա շվաբրի թողած հետքեր էին մնում։ Նա կանգ առավ աղջկա դիմաց և ինչ-որ բան հարցրեց։ Հետո կռացավ դեպի աղջիկը և դարձյալ ինչ-որ բան ասաց։ Այն ժամանակ աղջիկը սուր ճիչ արձակեց և, փողոցը կտրելով, մի կողմ վազեց։ Նրա բարալիկ երկար ոտքերը՝ մերկ, ջրից փայլփլող ծնկներով, երևացին ու անհետացան Անդրեյի աչքին։ Անդրեյը մի քանի քայլ արեց աղջկա ետևից։ Աղջիկը չգիտես ուր կորավ։

Խոպոտ, սկզբում խեղդված, հետո սուր, շարունակ սաստկացող ղողանջը ողողել էր ամբողջ փողոցը։ Հասկանալի չէր, թե որտեղից էր այն գալիս։ Հետո հանկարծ ծանր աղմուկը Անդրեյի վրա փլվեց վերևից, կողքերից, գետնի տակից և խկույն հանդարտվեց, իրմով սրբելով փողոցը ողողած ղողանջը։

Նույն պահին մեկը մոտ վազեց Անդրեյին ու նրա թևը բռնեց։ Անդրեյը շրջվեց։ Դեղին, անզոր, պղտոր լապտերը կույր նշանի նման նայում էր նրա թիկունքին։ Խոպոտած կոկորդների ղռվոցն ընդհատեց կանացի զիլ ձայնով հայհոյանքը։

— Գ-գրո՞ղը տանի։ Ես նրան զանգահարում եմ, իսկ նա, գ-գրո՞ղը տանի, իսկապես որ...

— Ախր ի՞նչ եք ասում,— արտասանեց մեկի կամացուկ ձայնը։

Ձեռքը, որից բռնած Անդրեյին, ինչպես կույրի տարան մայթ, մնացել էր մեկնած... Հետո Անդրեյը ինչ-որ բան հասկացավ, ուղեց ինչ-որ մեկին շնորհակալություն հայտնել և կույրի նման սկսեց մեկնած ձեռքով հենարան որոնել։

Եվ նրա ձեռքը դիպավ մեկի բարալիկ սառը մատներին։ Նա բռնեց այդ մատներն ու դեպի իրեն ձգեց։

— Շնորհակալություն,— ասաց նա։

Վախեցած, դողդոջ ճիչը մտրակեց նրա դեմքին։

— Անդրե՞յ։

Անդրեյն աչքերը կկոցեց, ինչպես հարված ստացած լիներ, նայելով իր առջև կանգնած սև, կլոր աչքերին։

— Անդրեյ, դո՞ւ ես, Անդրե՞յ։

Նա նետվեց դեպի կինը, գրկեց նրա գլուխը՝ սառը, թաց մազերը վրան կպած, փնտրեց շրթունքները, սեղմեց իր շուրթերին և սկվեց.

— Ռիտա,— արտասանեց նա հազիվ հասկանալի,— դու ինչպե՞ս այստեղ ընկար։

— Եկել եմ, քեզ էի փնտրում...

— Գնանք, այստեղ մարդիկ կան,— ասաց Անդրեյը, տանելով նրան կողքի փողոցը։

Եվ անմիջապես փողոցները գծագրվեցին պարզորոշ, և ամեն ինչ կոպիտ պարզություն ձեռք բերեց։

— Ինչ անիմաստ բան,— ասաց Անդրեյը։

Ռիտան շտապով նրան ընդհատեց.

— Քեզ ի՞նչ է պատահել, խելագարի նման կանգնել էիր ճանապարհի մեջտեղը, հազիվ ճանաչեցի։ Անդրեյ, դու տկա՞ր ես։

— Սպասիր, ասում ես, թե ինձ մո՞տ ես եկել։

— Այո, Անդրեյ։ Այլևս չէի կարող։

— Դե իհարկե չէիր կարող, կարոտել էիր։

— Անդրե՞յ։

— Ի՞նչ Անդրեյ։ Ինչ հիմար բան, անիմաստ բան։ Իսկ եթե ես այսօր ռազմաճակա՞տ մեկնեմ։ Եվ հետո չէ՞ որ գիտեիր, որ ռազմաճակատ եմ մեկնել։ Գիտեիր չէ՞, որ ռազմաճակատում եմ։ Ինչպես կարող էիր... Ո՛չ, սա սատանան...

— Անդրե՞յ...

— Էհ, թող։ Ինչի՞ վրա էիր հույս դնում։ Որտեղի՞ց իմացար, թե այստեղ եմ ապրում։ Դու ի՞նչ պիտի անես։

— Գիտեի, որ դու այստեղ ես ծառայում։ Չէ՞ որ երկու ամիս է անցել։ Մտածում էի...

— Իսկ մտածո՞ւմ էիր, որ ես օրական յոթանասուներկու մսխալ հաց եմ ստանում։ Մտածո՞ւմ էիր, որ կարող ես մի տեղ ցանկապատի տակ ընկնել ու մնալ։ Վերջապես դուք ես սպանվա՞ծ եմ։ Այսինքն՝ մտածո՞ւմ էիր, որ ես կարող էի սպանված լինել։ Դե, ասենք, եթե ոչ սպանված, համենայն դեպս հարյուր անգամ կարող էի մեռած լինել քաղցից։

— Լսիր...

— Հիմա ո՞ւր պիտի գնաս։

— Քեզ մոտ։

Նա կանգ առավ, թևերը թափահարեց և ուզում էր բղավել, սակայն Ռիտան նրա բղավոցը կանխեց կամացուկ, մի տեսակ խղճալի հառաչով.

— Ես այլևս գնալու տեղ չունեմ, Անդրեյ...

Անդրեյն արտաշնչեց բղավելու համար կուտակած օդն ու նայեց նրան։ Ռիտայի աչքերը խոնավ էին, կոպերը բոլորել էին աչքերը մեռած կապույտ օղակներով։ Քամուց կոշտացած շրթունքները ցնցվում էին, ասես ջանալով մի բառ արտասանել։

— Իհարկե, ուրիշ տեղ չունես,— փնթփնթաց Անդրեյը, երեսը Ռիտայից շրջելով և շարունակելով կանգնած մնալ։

— Ուզում էի քեզ ասել...— լսեց նա նույն տնքացող, ինչ-որ տեղ գահավիժող ձայնը։ Անդրեյը ցնցվեց, անմիջապես կծկվեց, ձեռքերը թաքցրեց շինելի թևքերի մեջ և արտասանեց այն խոսքը, որ միշտ սիրտ էր տալիս։

— Դատարկ բան է։

— Ուզում էի քեզ ասել, թե ինչու եկա։

Անդրեյը ոչ մի շարժում չարեց։

Այն ժամանակ Ռիտան հենվեց նրա թևին և կամացուկ, արագ շշնջաց.

— Ես պետք է գայի։ Ես հղի եմ։

Անդրեյը ետ թռավ, սեղմվեց թաց պատին։ Ձեռքի ափերը քսում էր լպրծուն քարին, ծնկները ծալվում էին և ծանր, խոնավ շինելի փեշերը ցնցվում էին։ Նա երկար ժամանակ լուռ էր, փոս ընկած աչքերը սևեռած Ռիտայի գլխավերևում մի կետի։ Հետո հազիվ լսելի շշնջաց.

— Բայց դու ինչպես...

— Ես մեղավոր չեմ, Անդրեյ...

— Ո՛չ, ո՛չ,— բացականչեց նա, պատից պոկվելով։— Ինչ հիմարություն է։ Եվ ընդհանրապես...

— Անդրե՞յ։

— Ո՛չ, ո՛չ։ Ես ասում եմ, ինչո՞ւ ինձ ոչինչ չասացիր։ Այսինքն՝ ինչո՞ւ ինձ անմիջապես չասացիր, հենց որ հարց բեցի։

— Բայց դու չհարցրեցիր,— ասաց Ռիտան դողացող ձայնով։

Անդրեյը ծիծաղեց մի տեսակ ընդհատուն, ոչ սովորական, բռնեց Ռիտայի թևն ու տարավ արագ, գրեթե վազելով։

— Բայց ինչո՞ւ ենք կանգնել։ Ինչո՞ւ ենք կանգնել։ Ինչ հիմարիկն ես։ Պետք էր...

— Անդրեյ, ես ինչպես կարող էի գիտենալ, որ դու...

— Որ ես՝ ի՞նչ։ Ես՝ ի՞նչ։

Ռիտան նայեց նրա աչքերի մեջ ներքևից վերև, գլուխը մի տեսակ թոչնավարի թեքած, և լուռ ժպտաց։

Նրանք քայլում էին ամայի փողոցներով, իրար սեղմված, և Անդրեյը ուշադիր նայում էր ճանապարհին, շրջանցում տեղահան արված քարերն ու աղոտ փայլփլող ջրափոսերը։

Հետո կամացուկ հարցրեց.

— Ռիտա, չե՞ս մրսում։

Կծիկ

Վաղ առավոտյան Անդրեյը սանդուղքի վրա հանդիպեց պրոֆեսորին։ Նրան ճանաչեց հասակից և գլխի շարժումներից՝ կարճ, ցնցվող և հաճախակի։ Եվ դեմքն էլ,— այդ կարելի էր տեսնել հարթակում, որտեղ վաղորդյան լույսն արդեն մի քիչ խտացել էր,— նրա դեմքը նույնպես ջղաձգվում էր, խաչաձև դիմագծերով ամբողջապես խորանարդիկների բաժանված։ Նա ամուր թափահարեց Անդրեյի ձեռքն ու զարմացավ։

— Ինչպիսի՜ հրաշք։ Գիտե՞ք, ուղղակի մարդ չի հավատում։ Կարծես ոչ թե ապրում ես, այլ գրքի մեջ ես, մի հիանալի գրքի մեջ։ Օր օրի ետևից, էջ էջի ետևից, հրաշքից հրաշք։

Անդրեյը լսում էր պատուհանից դուրս նայելով։ Դառնալ և նայել այս փոքրիկ մարդու արագ-արագ թարթվող, փայլաթիթեղի նման պսպղուն աչքերին, տեսնել այն մարդուն, որ շարունակ կուչ ու ձիգ էր անում զսպանակի նման, նրա ուժերից վեր էր։

— Բացառիկ ժամանակ է,— բացականչեց պրոֆեսորը և մոտեցավ Անդրեյին։— Ասացեք,— սկսեց նա շողոմ ձայնով,— դուք, ահա դուք, երիտասարդ, համոզվա՞ծ եք։ Հը, համոզվա՞ծ եք։ Այնպես, ձեր մտքում, երբ խոսում եք ինքներդ ձեզ հետ, մենակ ժամանակ, համոզվա՞ծ եք։

Նա չսպասեց պատասխանի և կրկին տաքացած ու շտապով բացականչեց.

— Ոչ մի կասկած, ես ոչ մի կասկած չունեմ։ Մինչև հիմա ես նման բան չէի զգացել։ Դա մի հրաշալի բան է։ Զգիտեմ, թե ինչու։ Ինձ կարծես մի բան թոցնում է գետնի վրայով։

— Ինձ ծանոթ է այդ զգացումը,— խուլ ձայնով ասաց Անդրեյը։

— Դուք անպայման պետք է գիտենաք։ Ինձնից լավ։ Եթե ես լինեի ձեր տե՛ղը։ Հասկանո՞ւմ եք, ես մի ամբողջ շաբաթ պտտվում էի Սմոլնու շուրջը։ Շրջում էի ու նայում, միայն նայում, ուրիշ ոչինչ...

Պրոֆեսորը լռեց, հետո ծիծաղեց.

— Ինչպես տեսակցության գնացող գիմնազիստ՝ ամեն օր որոշակի ժամին։ Եվ, կ՚ավատա՞ք, գնում եմ, նայում շենքին, ու քիչ է մնում խեղդվեմ։

— Իսկ չե՞ք հոգնում,— թույլ հարցրեց Անդրեյը։

Պրոֆեսորը սսկվեց։

— Ինչպես ձեզ ասեմ... իհարկե։ Ես այնքան էլ առողջ մարդ չեմ։ Թեև հիմա առողջ մարդն էլ...

Նա թաքուն, ասես մեղավոր, խեթ-խեթ նայեց Անդրեյին։

— Լսել եմ, որ ձեզ մոտ է եկել...

Եվ հանկարծ ամբողջապես սկսեց շարժվել՝ փոքրիկ կարճ ոտքերից մինչև դեմքի ամենափոքր ջլերն ու խորանարդիկները։

— Վաղուց էի ուզում ձեզ տեսնել, որպեսզի... Գիտե՞ք ինչ, ինձ համար գյուղից ալյուր են բերել... ծանոթներս, ես առաջ այնտեղ...

— Ոչ, ինչու,— ասաց Անդրեյը, մռայլվելով։

— Մտածում էի, որ հիմա ձեզ համար ծանր է, ձեր կնոջ գալու...

— Կնո՞ջ,— կրկնեց Անդրեյը և ապա ինքն իրեն պատաս-

խանեց։— Այո՛, այո՛, Ռիտայի... Բայց ոչ, ինչու, դուք ինքներդ...

Պրոֆեսորը դիպավ նրա ձեռքին իր անհարթ մատների ծայրերով։

— Խոսք եմ տալիս, որ դուք ինձ չեք նեղի։ Ես շատ ուզեմ։ Ձեզ համար կբերեմ։ Կբերեմ, լա՞վ։

Նա սանդուղքով վեր նետվեց և, բազրիքի վրայից կախվելով, բղավում էր անհանգիստ.

— Կբերեմ, կբերեմ... Նրբավարություն անելու հարկ չկա... Կբերեմ։

Ռիտան, շալի մեջ փաթաթված, ոտքերը ծալած նստում էր թախտին ու այդպես անշարժ մնում ամբողջ մռայլ երեկոները։ Պետք էր պահպանել շալի տակ կուտակված ջերմությունը, և նա ժամերով տեղից չէր շարժվում։

Նրա ձայնը չէր լսվում, սակայն դեմքը՝ սպիտակ, ճաքճքած, չոր շրթունքներով և մարող անշարժ հայացքով, երևում էր ամեն տեղից, ամեն անկյունից; կարծես սենյակը պատել էին խավար հայելիներով, որոնք այդ դեմքից բացի ոչինչ չէին արտացոլում։

Նա չէր շրջվում, բայց տեսնում էր Անդրեյին այնքան լավ, ասես նրա գլուխն իր ձեռքերի մեջ լիներ։ Եվ Անդրեյն էլ, պեպի նա մեջքով նստած, տեսնում էր նրա դեմքի ամենանուրբ գծիկները, գլխաշորի ծալքերը, և կզակին հենված ծնկները, և գլխաշորի վրա թափթփված մազերը։

Նրանք երեխա պետք է ունենային։

Երեխան աշխարհ էր գալու ոչ շուտ, անորոշ, հեռավոր ապագայում։ Պետք է աշխարհ գար, ծծելով մոր արյան վերջին կաթիլը, կլանելով նրա ճարպի վերջին կաթիլը։

Ճարպը մի ժամանակ տեղափոխում էին հաստ օղակապերով ամրացված տակառներով. ճարպը մի ժամանակ անհաշիվ, անհամար գնդերով լցված էր վաճառասեղաններին, որոնք ճնշվում էին նրա ծանրության տակ. ճարպով մի ժամանակ լիքը լցված էին, տրաքվում էին մառաններն ու նկուղները. ճարպը մի ժամանակ նույնիսկ շուկայի շները չէին լափում, որոնք դրանից հոտառությունն էին կորցրել. այո՛, այո՛, հենց այդ ճարպը։

Ճարպի կշիռ չունեցող մի փոքրիկ կտոր ստանալու համար պետք էր սպասել յոթ անվերջանալի օր։ Դրա մի կաթիլը կուտակելու համար պետք էր պահպանել ջերմությունը, պահպանել թուլացած մկանների չնչին ուժերը, պետք էր շալի մեջ փաթաթված նստել։ Այդ մի կաթիլը պետք էր երեխային, որն անդառնալիորեն պիտի աշխարհ գար անորոշ ապագայում՝ աշխարհ գար մի այլանդակ էակ, փափուկ ծռմռվող ոսկրերով, ոտքերի, ձեռքերի մատներն առանց եղունգների։

Հանուն այդ այլանդակ էակի, հանուն անշոշափելի, անտեսանելի հյուսվածքի, որ պիտի վերածվեր այդ այլանդակ էակի, Ռիտան նստել էր անշարժ, կծկված, և Անդրեյը վախենում էր խանգարել լռությունը, որպեսզի Ռիտայի կուտակած ջերմությունը չցրվի։

Սակայն լռությունը խախտեց Սերգեյ Լվովիչը։

Նա սենյակ ներս ընկավ, ձեռքերը խաչեց և սպառնալից ֆշշացրեց.

— Հը՛-մ, հը՛-մ։

Պենսնեն ցնցվեց և քթից ցած սահեց։ Նա գլուխը վեր նետեց։

— Հը՛մ,— կրկնեց նա, ոտքով դոփելով գետինը։— Ահա թե դուք, Անդրեյ Գեննադիևիչ, ինչպես ինձ շնորհակալ եղաք հյուրընկալության համար։ Վատ չէ։ Միանգամայն ժամանակակից ոգով է։ Դուք ամենայն հավանականությամբ կարծում եք, թե հիմարի՞ հետ գործ ունեք։ Սխալվում եք, սը-խալվում եք։

— Ի՞նչ է պատահել,— ասաց Անդրեյը։

— Ախ, դուք չե՞ք հաս-կա-նում։ Դուք տեղյակ չե՞ք։ Օ՜, որպիսի անմեղություն։

— Ասացեք վերջապես, թե ինչ է պատահել,— բղավեց Անդրեյը, աթոռն իրենից ետ հրելով և տեղից ելնելով։

Այն ժամանակ Սերգեյ Լվովիչը մի քայլ գցեց դեպի Անդրեյը, վճռական շարժումով ձեռքերը խոթեց գրպաններն ու սկսեց տեղալ վաղուց չափած-ձևած խոսքերը։

— Դուք շատ խորամանկ եք, երիտասարդ։ Դուք օգտվում եք յուրաքանչյուր բոպեից, որպեսզի իմ հաշվին ձեր բյուջեն ավելացնեք։ Բավական է շուռ գամ, իմ մի որևէ բանը կոր-

լում է։ Դուք ոչնչից չեք խորշում, իսկական պառավ խոհարարուհու նման։ Դուք...

— Ինչո՞ւ ես լռում,— բղավեց Ռիտան։

— Իսկ ի՞նչ կարող է ասել։ Նա ի՞նչ կարող է ասել, երբ ահա հենց հիմա, մի քառորդ ժամ առաջ, մինչև վաղ տվեցի կրպակ եկա, մի ութ մսխալ ճարպ չքացավ։ Չհասցրի փակել, շտապում էի կրպակ, թողել էի սեղանին, ամանի մեջ, աղաջրի մեջ, այսպես, մի կեսֆունտանոց կտոր։ Վերևից խաչերով նշան արեցի, միշտ էլ այդպես եմ անում։ Եկա, տեսնեմ նշանները տեղում են, իսկ ճարպը կարծես թե պակասել է։ Իսկույն դրեցի կշեռքին։ Ութ մսխալ պակաս է։ Խորամանկ է մտածված, երիտասարդ, խորամանկ։ Միայն թե ես ձեզնից խորամանկ եմ։ Դուք բարեհաճել էիք տակից դանակով այսպիսի մի կտոր կտրել։ Իբր, դեհ, ճարպի կտորը լող է տալիս ջրի մեջ, ո՞վ կհասկանա, թե տակից մի կտոր կտրել են, եթե վերևից ամեն ինչ տեղում լինի։

— Անդրեյ,— հառաչեց Ռիտան։

— Դա էլ ձեր շնորհակալությունն է այն բանի համար, որ ես ձեզ, կարելի է ասել, ուղղակի փողոցի՞ց տուն բերի։ Դա էլ որպես շնորհակալություն է, այն բանի համար, որ, այսպես ասած, ձեր կինը...

Անդրեյը երերաց, ասես նրան տեղից բոթեցին, մոտեցավ Սերգեյ Լվովիչին, բռնեց նրա ուսերից, շրջեց ու դուրս տարավ սենյակից։ Սերգեյ Լվովիչը ոչ միայն չդիմադրեց, այլ մի տեսակ նույնիսկ շատ շտապում էր, մոռանալով բերանը փակել, իսկ դռան մեջ կողքի դարձավ, որպեսզի հեշտ դուրս գա։ Սակայն դուրս գալուց հետո հանկարծ ոտքը գետնին խփեց ու սուր ճչաց.

— Դո՛ւրս իմ տնից, դու-ո՛ւրս։

Անդրեյը դուռը փակեց և նայեց Ռիտային։ Եվ իսկույն էլ կրկին դուռը բացեց և միջանցքից լսվող ճչոցի տակ, գլուխը ձեռքերով սեղմած, դուրս փախավ տնից։

Սանդուղքի վրա նրա երեսին սառը քամի փչեց։ Նա կանգ առավ։ Շինելը և գլխարկը վերցնելու համար սենյակ չէր կարող վերադառնալ։ Բարձրացավ մի հարկ վերև և բախեց պրոֆեսորի բնակարանի դուռը։ Ոչ ոք չարձագանքեց։ Նա սկսեց ավելի ուժգին բախել, ականջ դնելով, թե ինչպես են թակոցները խլանում բնակարանում և կորչում լռության մեջ։ Հետո սկսեց դուռը կատաղի ծեծել սապոգներով և ամբողջ սանդղեղահարթակում՝ ձեղնահարկից մինչև նկուղ ահավոր աղմուկ բարձրացավ։

Ետևից լսվեց մեկի ձայնը։

— Դուք պրոֆեսորի մո՞տ եք եկել,— լսեց նա և դարձավ։

— Այո։

— Չի՞ պատասխանում։

— Ոչ։

— Նա այս ժամերին միշտ տանն է։

— Այո, գիտեմ։

— Հապա մեկ էլ բախեցեք։

Անդրեյը բախեց։ Ականջ դրեց։ Լռություն էր։

Անդրեյի ետևում լսվեց շղթայի զնգոց, և մթության մեջ հայտնվեց բարձրահասակ, փոքր-ինչ կորացած մի մարդ։

— Տարօրինակ է, կարծես վաղուց նրան չեմ տեսել,— ասաց նա և շոշափեց դուռը։

— Գուցե...— սկսեց Անդրեյը։

— Կարող է պատահել, իհարկե, ամեն բան կարող է պատահել,— ընդհատեց նոան բարձրահասակը։— Գնանք կոմիտե։

— Մի՞թե դուք կարծում եք...— նորից սկսեց Անդրեյն ու նորից բարձրահասակը նրան ընդհատեց.

— Կարծո՞ւմ եմ։ Իհարկե կարծում եմ... իսկ ինչո՞ւ չկարծել։

Մութ սանդուղքով, նեղ, ձայներն արձագանքող բակով, մուտքերով, որոնց մեջ սուլում էր քամին, քայլում էին երկու մարդ, հետո՝ երեք, չորս, հինգ, ամեն տեղ հապաղելով ու կանգնելով, ասես վախենում էին գործն սկսել։

Հետո երկար ժամանակ բախում էին պրոֆեսորի բնակարանի դուռը, ականջ դնում, կրկին բախում։ Հետո կրկին ու կրկին անգամ հարցնում իրար, թե վերջին անգամ ե՞րբ էին տեսել պրոֆեսորին, չէ՞ր կարող արդյոք նա որևէ տեղ գնալ կամ մեկնել, կամ որևէ տեղ գիշերել։

Վերջապես բութ, մաշված սայրով կացինը մտավ դռան փեղկերի մեջ, և այն չոր, ինչպես հրդեհված, ճարճատեց։ Այն ժամանակ բոլորը, ասես ազդանշանով, սկսեցին իրար խոսք

կտրելով խորհուրդ տալ, թե ինչպես ավելի հարմար կարելի է դուռը ջարդել։ Սակայն հենց որ փականքը տեղի տվեց, և արդեն պարզ էր, որ հաջորդ սեղմումից դուռը կբացվի, բոլորը նորից սսկվեցին։

Անդրեյը երկրորդը մտավ բնակարան, կոմիտեի նախագահից հետո։ Սենյակից սենյակ էին անցնում վախեցած, լուռ։ Լուցկիներն էին շրթացնում, կողափայտերի ետևը միացուցիչներն էին փնտրում, փորձում էին արդյոք լույս կա՞։ Նորից լուցկիներ էին վառում, շրջում դատարկ անկյուններում և ապա շարունակում առաջանալ։

Միջանցքի ծայրի սենյակից, երբ դուռը կիսաբացեցին, մեղմ, վարդագույն լույս դուրս սողաց։

— Հենց այդպես է որ կա,— ասաց նախագահը և դարձավ Անդրեյին,— մենք գլխի չընկանք բակից նայել պատուհաններին։

— Պատուհանները վարագուրված են,— ասաց մեկը։

— Դեհ, շո՛ւտ, շո՛ւտ։

Նախագահը առաջ մեկնած ձեռքով դուռը բացեց։ Բոլորը զգուշորեն խմբվել էին դռան մոտ։

Սեղանի լամպիկի փայլատ լույսը համաչափ շրջանիկով ընկել էր գրքերի վրա, հատակին, մահճակալին։

Պրոֆեսորը պառկած էր անկողնու վրա, գլուխը ետ գցած, սուր կզակը դեպի վեր ցցած։ Նա լարի պես ամբողջովին ձգվել էր, երկարել, ասես հասակ էր առել այն օրից, ինչ վերջին անգամ եղել էր մարդկանց մեջ։ Դեմքի կնճիռները հարթվել էին, խալիկներն ու խորանարդիկները, որ այնքան ընդգծված էին կենդանության օրոք, անհետացել էին. նա երիտասարդացել էր։ Ողորկ ճակատին լույսի մի մեղմ բիծ էր ընկել։

Բոլորը լուռ մոտեցան նրան, ուշադիր դիտեցին, հետո առանց իրար նայելու, ցրվեցին սենյակում։ Եվ քանի որ ոչ ոք չէր խոսում և ասելու էլ բան չկար, Անդրեյը հազիվ լսելի ասաց.

— Ա՜յ թե մկներն ինչ են արել...

Եվ իսկույն բոլորը գլուխներն այն կողմը դարձրին ու սկսեցին հետաքրքրությամբ նայել գրքերի պահարանին հենած ալյուրի պարկին։ Այն բոլոր կողմերից կրծմրծված էր,

քթանի պատառոտված կտորները կախվել էին հատակին և պարկետի վրայով դեպի շրիշակներն էին ձգվում նեղլիկ սպիտակ հետքեր։

— Սա պետք է մաքրել,— ասաց նախագահը, և անմիջապես երեք մարդ նետվեցին դեպի պարկն ու դուրս տարան։

Մեկ, գուցե երկու տարի շարունակ տեղի էին ունենում ընդհարումներ, վեճեր, կռիվներ, նույնիսկ սպանություն էր լինում, թեև մեղավորներից ոչ մեկը չէր ուզում մեղքն իր վրա վերցնել։ Վերջապես այդ մարդկանց գիտակցությանը հասավ, որ ապրում են նոր դարաշրջանում և որ աշխարհն այսօրվանից մերժում է ամբողջ անցյալն ու ապրածը։ Վճռված էր հիմնել արտել պրոֆեսիոնալ համապարտության հիմունքներով։ Ճիշտ է, այդ արտելը դատապարտված էր գաղտնի գոյության. նրա իսկական նպատակների մասին չէր կարելի խոսել նույնիսկ գերեզմանատան քահանայի ներկայությամբ։ Եվ դրանով իսկ ավելի հաստատուն ու խիստ էր նրա չգրված կանոնադրությունը։

Գերեզմանատունը բաժանված էր յոթ տեղամասի, և ամեն տեղամասը տրված էր երկու գերեզմանափորի տնօրինությանը։ Այստեղ հարկ է մի քանի խոսք ասել հենց գերեզմանատան մասին, որքան էլ որ անշնորհակալ բան լինի այդ նկարագրությունը։ Գերեզմանատունը տարածված էր լայնարձակ հարթավայրում, ցաքուցրիվ տներով մոայլ արվարձանի ետևը և իր հին մասում ամբողջապես ծածկված էր բարդիներով։ Եկեղեցին հազիվ էր երևում ծառերի խիտ սաղարթի միջից։ Նոր տեղամասերն ամայի էին, եթե կարելի է ամայի համարել գերեզմանաթմբերի անծայրածիր մի տարածություն։ Եկեղեցու շուրջ կուտակվել էին հինավուրց դամբարաններ, մատուռներ, ծանր գերեզմանաքարեր։

Սակայն բանը ոչ դամբարաններն էին, ոչ էլ շքեղ հուշարձանները։ Այս տեղամասը, որ մի ժամանակ ամենաակամբտաբերն էր, վերջին ժամանակներս գյուղական գերեզմանատան նման ցամաքել էր, խեղճացել և երկու տարվա ընթացքում ընդամենը մի թարմ մարմին էր ստացել, այն էլ ոչ եկամտաբեր՝ գերեզմանատան հայր սարկավագի մարմինը, որ մահացել էր թախծից։

Հուշարձաններ վաղուց չէին գնում և մատուռներով դամբարաններ էլ չէին կառուցվում։ Սակայն խաչերը դեռևս գործածությունից դուրս չէին եկել, և խաչերը, հենց այդ խաչերն օգնեցին գերեզմանափորներին՝ հասկանալու իրենց բնույթը և արտել հիմնելու՝ անցման դարաշրջանում իրենց շահերը պլանաչափորեն պահպանելու համար։

Խաչերը, այո՛, որ, ինչպես հայտնի է, լինում են թուջից, երկաթից և մեծ մասամբ փայտից։ Թուջե խաչերը պիտանի չեն որևէ գործնական բանի համար։ Դա, ըստ էության, անպետք բան է, ինչպես հուշարձանները, մատուռները, տապանաքարերը։ Բարեբախտաբար թուջը առաջնակարգ կամ գասակարգային հուղարկավորությունների հետ միասին դարձել էր ավանդություն, և խաչերի ռեզերվները այդ տարիներին լրացվում էին միայն երկաթով ու փայտով։ Եկեղեցու ցանկապատի նման խիտ պարուրազարդերով կռած երկաթե խաչերն էլ թուջե խաչերից ավելի պետքական չեն։ Դրա փոխարեն երկաթաթերթից սարքված դատարկ խաչերը, որ սովորաբար ներկվում էին կեչու գույնի, շատ գործածական են տնտեսության մեջ։ Դրանցից, առանց մեծ չարչարանքի, ամեն մեկը կարող է իր համար սարքել ծխնելույզի արմունկ՝ թիթեղյա վառարանի համար, կամ ինքնաեռի խողովակ, կամ հարմար ջրհորդան։ Բարդիներից հեռու ընկած լայնարձակ տարածության մեջ այդպիսի խաչեր բավականաչափ շատ կային, և խելամիտ օգտագործելու դեպքում դրանց պաշարը կարող էր երկար ժամանակ բավականացնել։

Արտելի անդամների մեջ տեղամասերի բաշխման դժվարությունն այն էր, որ գերեզմանատան ոչ բոլոր տեղամասերում հավասար քանակությամբ փայտե խաչեր կային։ Արտելն այդ պատճառով ստիպված եղավ մեծ նախապատրաստական աշխատանք կատարել հին ռեժիմից մնացած ունեցվածքի գույքագրման ուղղությամբ։ Սակայն այդ աշխատանքի ընթացքում երևան եկան նոր դժվարություններ, քանզի, ի տարբերություն հասարակայնության այլ բնագավառների, գերեզմանոցային գործի բնագավառում հին ռեժիմը փտել էր, այսպես ասած, ոչ թե ամբողջապես, այլ միայն մասամբ, թեև հաշվելու ժամանակ պարզվեց, որ փտած խաչերն ավելի են, քան պահպանվածները։ Սակայն

մի անգամ արդեն արթնացած գիտակցությունը օգնեց արտելականներին հանգելու իմաստուն վճռի. երկու փտած խաչը հավասարեցրին մեկ հատ չփտած, պինդ փայտե խաչի, այն հաշվով, որ մի կտոր պինդ վառելափայտը նույնքան ջերմություն է տալիս, որքան երկու կտոր փտած փայտը։

Երբ այսպիսով միավորման հիմունքները սահմանվեցին, գերեզմանափորները գերեզմանատան երեցփոխին առաջարկեցին իրենց վրա դնել տարերայնորեն գողացվող խաչերի պահպանության գործը։

Երեցփոխը համաձայնվեց։ Դրանից հետո գերեզմանատան ավերումն արդեն պլանաչափորեն էր կատարվում, և գերեզմանափորներին համակեց մի փիլիսոփայական հայեցականություն, որ վաղուց ի վեր նկատված է այդ արհեստի տեր մարդկանց մեջ և միայն այդ արհեստին է հատուկ։

Պրոֆեսորի մահը հայտնաբերելուց երկու օր հետո գերեզմանատուն եկավ երիտասարդ, զգլխված մի ուսանող և գրասենյակում տեղեկացավ, թե ինչպես կարելի է արագացնել վաղուց մահացած մարդու թաղումը։ Գրասենյակում սկսեցին բացատրել դագաղի, գերեզմանի համար օրդերներ ստանալու կարգը, գրանցումների, հաշվառումների, հերթերի հարցը։ Բանը վերջացավ նրանով, որ ուսանողին ուղարկեցին գերեզմանատուն՝ գերեզմանափորներին փնտրելու։ Նա հանդիպեց սրանցից մեկին և պատմեց, թե ինչ գործով է եկել։ Գերեզմանափորն այնպիսի գին ուզեց, որ ուսանողն ուղղակի սարսափեց։

— Իսկ հանգուցյալն ո՞վ է,— հարցրեց գերեզմանափորը։

— Գիտնական է,— պատասխանեց ուսանողը։

— Ուրեմն սովի՞ց է։

— Ոչ, սովից չի։

— Եթե սովից չի, ուրեմն վճարելու բան պիտի լինի։

— Հենց բանն էլ այն է, որ չկա։ Եթե լիներ, չէի սակարկի։

— Ավելի էժան չի լինի։ Ձեք կարող, ուրեմն հերթի դրեք, գուցե մեկ, մեկուկես շաբաթից...

— Այդքան փող չկա,— ասաց ուսանողը։

— Մենք կամավորներ չենք, մեզ մոտ սակագնով է։ Ձեր կամքն է։

— Ո՞չ, այդքան փող մենք չենք կարող վճարել,— վճռաբար կրկնեց ուսանողը։

Դերեզմանափորը մտածեց և հարցրեց.

— Իսկ պետք է թաղեք ուղղափառ եկեղեցո՞ւ կարգով թե քաղաքացիական։

— Քաղաքացիական։

— Ուրեմն ավելի թանկ կլինի։

— Ինչո՞ւ։

— Ինչպես ասեմ... Եկեղեցական կարգով թաղումից էլի ինչքան չլինի մի եկամուտ կա։ Մեկ էլ տեսար կհանձնարարեն խաչին հետևել, որ չթոցնեն... Դե դա էլ իսկի հետևել կլինի՞։ Փայտի ի՞նչ կարիք կա... Իսկ թե քաղաքացիական է՝ ի՞նչ օգուտ։ Հողի մեջ կդնեն, ու վերջ։ Անցյալ օրը թաղեցին մի օդաչուի, գերեզմանի վրա կաղնեփայտից մի պտուտակ դրին, իր մեքենայից էր։ Դե այդ պտուտակի ի՞նչը վերցնես։ Դա քշփորելով էլ չես պոկի, ոնց որ երկաթից լինի։ Ձեր տված փողով քաղաքացիական թաղելուց օգուտ չկա։

— Հապա ի՞նչ անենք։

— Այդ փողով գերեզման փորել դեռ մի կերպ կարելի է, իսկ թաղելը՝ ինչպես կուզեք արեք։

Այդպես էլ որոշեցին. փոսը գերեզմանափորները կփորեն, իսկ հանգուցյալին մեջը կդնեն ու կթաղեն ուղեկցողները։

Պրոֆեսորին վերջին հարգանքը մատուցելու էին եկել չորս ուսանող, նիհար շիկամորուք մի մարդ, որ նման էր ուսուցչի, և համալսարանի դռնապանը։

Սառնամանիքն այդ օրը մեղմացել էր և գորշ, մանր անձրև էր մաղում։ Մի խումբ մարդիկ ցրտից կծկված, թաց, կախ ընկած կարմիր դրոշը ձեռքներին դարբասի մոտ սպասում էին դագաղին։ Դագաղը դուրս բերին տան բնակիչները, դրեցին սայլի վրա և, խաչակնքելով, կարգադրեցին շարժվել։ Սայլի ետևից գնացին ուսանողները՝ դրոշակը ձեռքներին, նիհար մարդը, որ նման էր ուսուցչի, համալսարանի դռնապանը, Անդրեյը և տնային կոմիտեի նախագահը։ Եվ քանի որ թաց դրոշակը դժվար էր տանել, դրեցին դագաղի վրա, և

սայլի ցնցումներից այն կիպ կպել էր կափարիչին, փակել ծածկոցի նման։

Երբ գերեզմանը հող էին լցնում, Անդրեյը կանգնել էր քիչ հեռու, նայում էր հատուկենտ խաչերով անթիվ-անհամար գերեզմանաթմբերի վրայով։ Նա լսում էր, ինչպես են փոսի մեջ լցվում անձրևից թուլացած ցեխակոշտերը, ինչպես մոտենալ ընկնելու ձայները դառնում կարճ ու սուր, մոտենալով հողի մակերեսին։ Եվ նրան թվում էր, թե պրոֆեսորը այդպես անսպասելիորեն հայտնվելով նրա կյանքում, իր կյանքից տարավ ամենակարևորի մասին մի բան ասելու վերջին հնարավորությունը։ Ի՞նչն էր այդ ամենակարևորը, Անդրեյը ինքն էլ կարգին չգիտեր։ Սակայն նա այնպիսի մի զգացում ուներ, ասես մեկի դաժան ձեռքը բռնել էր իր կոկորդից, և նա հասկանում էր, որ այդ ձեռքը իրեն բաց չի թողնի, մինչև որ ինքը չասի այդ ամենակարևորը։

Նա գերեզմանատնից հեռացավ վերջինը, բոլորից հետո, կորացած, բթացած, աղջամուղջի մշուշով պարուրված։ Նա ոչ թե քայլում էր, այլ քարշ էր գալիս, գրեթե սողում արվարձանների անվերջանալի փողոցներով։ Անդրեյը նմանվում էր հիվանդի, որին հիվանդանոցից դուրս են գցել հիվանդությունը հազիվ դեռ նոր հաղթահարած վիճակում։

Տանը նրա համար դուռը Ռիտան բացեց։

— Քեզ մի զինվոր է սպասում։

— Զինվո՞ր։

— Այո։ Նա իր անունը չասաց, ասում է, թե դու իրեն ճանաչում ես...

— Տարօրինակ է,— անտարբերությամբ ծոր տվեց Անդրեյը և սենյակ մտավ ճիշտ այնպես, ինչպես փողոցում էր քայլում, հյուծված, դժվարությամբ քարշ տալով կախ ընկած մարմինը։

Թիթեղյա վառարանի մոտ, դեմքը դեպի կրակը դարձրած, տաքանում էր զինվորը։ Նրա շինելը գցված էր աթոռին, վառարանի մոտ։ Նստել էր ծալապատիկ և ձեռքերն էր տրորում։ Երբ դուռը ճռռաց, գլուխը բարձրացրեց, կրակի լույսը նրա ճակատից վազեց դեպի կիսաբաց բերանը, որ շրջապատված էր հազիվ նկատելի կնճիռներով, և նրա շրթունքները ծուվեցին ժպիտի նման մի բան արտահայտելով։

— Ահա և դուք,— ասաց նա, և վեր կացավ հատակից։

Անդրեյը հյուրին տեսավ միայն այն ժամանակ, երբ լույսն ընկավ նրա շրթունքներին։ Նա բռնեց դռան կողափայտից։ Նրա միջից գրեթե վայրկենապես վերացավ ողջ լիկածությունը։ Թուլացած, կորամեջք մարդուց նա դարձավ փայտացած, ձիգ, սյան պես կանգնած մի արձան։ Ռիտան նրա ետևից ներս մտնելով և դուռը փակելով, նրան մի կողմ հրեց, սակայն նա մի քայլ միայն արեց և դարձյալ կանգնեց փայտացած։

— Թարև ձեզ,— ասաց զինվորը, մոտենալով Անդրեյին։

Անդրեյի ձեռքերը ետ քաշվեցին, կարծես ուզում էր դրանք պահել մեջքին, հետո մի հայացք նետեց Ռիտայի վրա և արագ սեղմեց հյուրի մեկնած հանգիստ ձեռքը։ Զինվորն էլ նայեց Ռիտայի կողմը և գլուխ տվեց։

— Պատիվ չունեմ գիտենալու ձեր... հրմ... անունը... — Նա սիրալիր էր։— Տեսնո՞ւմ եք, շորերս եմ չորացնում... Կարծում եմ, ավելի լավ չի՞ լինի մենք...

Եվ նա հանգիստ արտասանեց գերմաներեն.

— Մեզ համար ավելի հարմար կլինի ռուսերեն չխոսել։

Օտար լեզվով արտասանած այդ անսովոր, կտրտված խոսքերից Անդրեյն ասես ցնցվեց և արագ հարցրեց.

— Ինձ ինչպե՞ս գտաք։

— Փողոցում տեսա։ Մի գումարտակ զինվորների մեջ էլ ձեզ կճանաչեմ։ Հետո հետևեցի։

— Ինչո՞ւ մինչև հիմա չեք մեկնել։

— Դա երկար պատմություն է։

— Ի՞նչ եք ուզում ինձնից։ Ինչո՞ւ եք եկել։

Անդրեյն իր միջից հարցերն այնպիսի լարումով էր դուրս քաշում, ասես ջանում էր դրանով խեղդել հուսահատական ճիչը։

— Ես կարող էի ավելի ուրախ ընդունելություն ակնկալել,— պատասխանեց հյուրը և կկոցած աչքերը սահեցրեց Անդրեյի դեմքով։

— Հանվեցեք, դուք թրջված եք,— ավելացրեց նա ներողամտորեն և ուսերը թոթվեց։— Որքա՜ն հուզված եք։ Ես իրերին ավելի հանգիստ եմ նայում։ Մեկընդմիշտ ասել եմ ինքս ինձ, որ ամեն րոպե կարող եմ մահանալ։ Պատրաստ եմ ամենասարսափելիին՝ մահվան։ Ուստի միշտ հանգիստ եմ։ Ի՞նչը կարող է մահվանից ավելի վտանգավոր լինել։

— Հավանաբար այդպես է, եթե կյանքում ոչինչ չես սիրում,— քթի տակ ասաց Անդրեյը, շինելը հանելով։

Նա այն կախեց աթոռի թիկնակին, մոտեցրեց վառարանին, անշտապ, դանդաղ, հետևելով իր յուրաքանչյուր շարժումին և նստեց։

— Ի՞նչ պատահեց, որ չմեկնեցիք։

Հյուրը նստեց նրա կողքը։

— Մեծ դժվարությամբ ընկա Մոսկվա։ Դա մոտ մեկ ամիս տևեց։ Մենակ էի գնում։ Մոսկվայում առաջին անգամ վճռեցի օգտվել նոր անունից։ Պարզվեց, որ դա այնքան էլ հարմար չէր։ Չեմ ուզում որևէ վատ բան ասել նրա նախկին տիրոջ մասին, սակայն այդ անունն ինձնից առաջ մեկն արդեն արատավորել էր։ Ճիշտն ասած, մի ժամանակ մտածում էի, որ դուք...

— Իմացա՞ն,— շշուկով հարցրեց Անդրեյը։

— Իմացան,— ասաց հյուրը։

Անդրեյը վեր թռավ, նետվեց դեպի Ռիտան և սոսկալի վախեցած շշնջաց.

— Իմացել են, տեր աստված։ Ռիտա, իմացել են։ Ռիտա, հասկանո՞ւմ ես, իմացել են...

Ռիտան նստել էր մահճակալին, ինչպես միշտ, շալով փաթաթված կզակը ծնկների մեջ առած։

— Անդրեյ,— ասաց նա ձգվելով դեպի նա և ձեռքը հանելով շալի տակից,— չեմ հասկանում, դուք ի՞նչ եք խոսում։ Խնդրում եմ քեզ...

— Ախ, դու չպետք է հասկանաս,— հառաչեց նա, նորից նետվելով իր աթոռին,— ոչինչ չպետք է հասկանաս։ Մի՞թե իմացան։

Հյուրը մի քիչ լռեց, հետո, ասես դիտմամբ դանդաղելով, ընդհատելով և ընդմիջումներ տալով ասաց.

— Սակայն ձեր ինքնատիրապետումը շատ կարճ տևեց։ Իմ տեղը լինեիք, վաղուց բռնված կլինեիք։ Ես, ինչպես տեսնում եք, գլուխս պրծացրել եմ։

Անդրեյը նրա թևքը քաշեց.

— Ասացեք, գրողը ձեզ տանի, ասացեք վերջապես։ Իմացա՞ն։

— Այ այսպես ավելի լավ է,— ասաց Հյուրն ու նրա բերանը կրկին ծռվեց ժպիտի նման մի բանից։

— Իմացան,— ասաց նա զզվանքով։— Սակայն վրստահորեն չեմ կարող ասել, թե հատկապես ի՞նչ իմացան։ Հավանաբար, նրանց հայտնի էր, որ ես ուրիշի անունով եմ ներկայանում։ Բայց թե իրականում ո՞վ եմ, նրանք կարող են միայն ենթադրել։ Ինչ վերաբերում է ձեզ...

— Տեր՞ աստված,— կրկին հառաչեց Անդրեյը։

— Ձեր մասին ես ոչինչ չեմ կարող ասել։ Մի ժամանակ մտածում էի, թե հենց դուք եք արատավորել իմ նոր անունը։ Սակայն հետո վճռեցի, որ դա վտանգավոր կլիներ ձեզ համար։

— Վտանգավո՞ր։

Հյուրը սևեռուն նայեց Անդրեյին։

— Այո։ Եթե անգամ դուք ցանկանայիք ինձ մատնել, որպեսզի դրանով մի քիչ հեշտացնեք ձեր վիճակը։ Հետո հիշեցի, որ դուք ռուս եք։ Մատնությունն ու դավաճանությունը հատուկ չէ ռուսներին, որքան ես կարողացել եմ նրանց ուսումնասիրել։

— Ես ցանկություն չունեմ փիլիսոփայելու ազգային թեմաների շուրջ։ Ուզում եմ, որպեսզի դուք ասեք, թե ինչ եք մտածում... ձեր կարծիքով... Ինչ է հայտնի...

— Հա՞-հա՞։ Որքան լավ սկսեցիք և ինչպես խառնաշփոթ եք վերջացնում։ Ուզում եք իմանալ, արդյոք հայտնի՞ է դարձել, թե դուք ինչ դեր խաղացիք...

— Այո, այո։ Այն դերը, որ ես... դե միևնույն չէ՞ միթե,— ընդհատեց Անդրեյը։— Ասացեք։

— Դատելով այն բանից, որ դուք հանգիստ ման եք գալիս այս մեծ քաղաքում, ձեզ ոչ մի բանում չեն կասկածում։ Ընդհանրապես, ինձ թվում է, թե գործը բարեհաջող վերջացավ։ Ես գրեթե համոզված եմ դրանում։ Համենայն դեպս, այստեղ ինձ առանց մի առարկության էշելոնի մեջ մտցրին։

— Ի՞նչ։ Դուք եղել եք... Դուք ձեր անունը տվեցի՞ք,— բղավեց Անդրեյն ու բռնեց իր զրուցակցի ուսերը։

— Այսինքն ոչ թե իմ...

— Կոնրադ Շտեյնի՞։

— Հանգստացեք, սիրելիս։ Այդ կողմից ոչ մի վտանգ չկա։ Կոնրադ Շտեյնն այլևս գոյություն չունի։

— Ի՞նչ,— ետ թռավ Անդրեյը։

— Կոնրադ Շտեյնը մահացել է։

— Ոչինչ չեմ հասկանում։

— Դե լսեցեք։ Մոսկվայում ամեն բան կարող էր պարզվել։ Ես ժամանակին փախա։ Ընկա Կլին, այնտեղից՝ Տվեր։ Տվերում աշխատում էի օրավարձու։ Մի ընկեր ունեի, հիանալի տղա էր, բեռլինցի։ Գիշերում էինք մերթ այստեղ, մերթ այնտեղ, մշտական անկյուն չունեինք։ Որտեղ աշխատանք էինք ստանում, այնտեղ էլ ապրում էինք։ Մեզ ոչ մի տեղ կարգին չէին ճանաչում։ Այնպես որ, երբ այդ բեռլինցին մեռավ, ամեն ինչ ինքնըստինքյան ստացվեց։ Ես վերցրի նրա թղթերը, իսկ իմը թողեցի նրան։

Անդրեյը նստել էր լուռ, կարծես չէր լսում։

Հյուրը նայեց նրա աչքերին և հանկարծ, գլխի ընկնելով, ասաց.

— Ոչ, այդ չէ, այդ չէ։ Դուք ինձ ո՞ւմ տեղն եք դրել։ Մոռացա ասել, որ բեռլինցին տիֆով հիվանդացավ։ Ես մեկուկես շաբաթ խնամում էի նրան։ Լավ տղա էր։

Անդրեյը վեր կացավ։

— Ուրեմն, Կոնրադ Շտեյնի գործը փակվե՞ց նրա մահվամբ։

— Հավանաբար։

— Ուրեմն, մենք քվի՞տ ենք։

Հյուրն արագ վեր թռավ տեղից, կծկվեց, դանդաղ շարեց իր չափած-ձևած սառը խոսքերը.

— Ոչ, մենք դեռ քվիտ չենք, ընկեր Ստարցով։

— Ի՞նչ եք ուզում ինձնից,— նորից ճչաց Անդրեյը։

Հյուրը գլուխն օրորեց, դեմքին քնքուշ-սիրալիր ժպիտ սարքեց և, մոտենալով Անդրեյին, բռնեց նրա արմունկը։

— Սիրելի բարեկամս, ես այդպես եմ ասում, որովհետև ինձ պարտավորված եմ զգում։ Դուք արեցիք ամեն բան, ինչ կարող է անել բարի սիրտ ունեցող մարդը։ Սակայն մենք դեռևս քվիտ չենք։ Ես խոստացել եմ ձեզնից նամակ

տանել ձեր հարսնացուին։ Դա իմ պարտքն եմ համարում։ Հիշում եմ նույնիսկ նրա անունը՝ Ֆրոյլայն Մարի Ուրբախ, Թիշոֆսբերգից, այնպես չէ՞։ Ինչո՞ւ եք լռում։ Կարծեմ չե՞մ սխալվել։ Ֆրոյլայն Մարի Ուրբախ, այնպես չէ՞։

Անդրեյը դեմքը ծածկեց ձեռքերով։

— Սակայն գիտեք ինչ, ձեր նամակը կորցրել եմ։ Այսինքը, ոչ թե կորցրել եմ, այլ դրել եմ այն բեռլինցու գրպանը՝ Կոնրադ Շտեյնի թղթերի հետ...

— Դժվե՞լ եք, ինչ է,— գրեթե շնչահեղձ լինելով, խոխոչաց Անդրեյը։— Չէ՞ որ եթե Կոնրադ Շտեյնի թղթերի հետ գտնեն նաև իմ նամակը։

— Ի՞նչ եք ասում, ում մտքով կանցնի ձեր անունը կապել Կոնդրատ Շտեյնի հետ։

— Խնդրեմ, չծաղրեք։ Դուք չհամարձակվեք ինձ ծաղրել։

— Ես ասում եմ այն, ինչ մտածում եմ։

— Թղթերն անպայման կուղարկեն Սեմիդոլ, Կուրտին։ Չէ՞ որ Կուրտն անմիջապես ամեն ինչ կհասկանա։

— Այդ մեկը, ճիշտն ասած չէի մտածել...

— Լսեցեք, դուք... գրողը... Լսեցեք։ Ծաղրելու համար դուք ուրիշ մեկին գտեք։ Չմոռանաք, որ իմ ձեռքում եք...

Հյուրը չռած մատը թափ տվեց Անդրեյի աչքերի առջև։

— Սակայն ձեզ էլ խորհուրդ եմ տալիս չմոռանալ, որ իմ ձեռքում եք։ Այո... Բայց սա ի՞նչ գժտություն է,— կրկին շողոքորթեց նա,— մի՞թե չեք զգում, որ անչափ շնորհակալ եմ ձեզնից և պատրաստ եմ ինչով ասես հատուցել։

— Ինչպես կարող էիք չմտածել, որ...

— Կատակեցի, սիրելի բարեկամ, հավատացնում եմ ձեզ, կատակեցի։ Հանգուցյալի գրպանը դրեցի միայն Շտեյնի թղթերը։ Ուրիշ ոչինչ։

— Նամակը ձեզ մո՞տ է։ Տվեք ինձ, տվեք։

— Ոչ։ Նամակը պատռել եմ, որպեսզի պատահմամբ ձեզ որևէ կերպ չվնասեմ։

— Ախ, ձեր ոչ մի խոսքին չեմ հավատում, չեմ հավատում։

Անդրեյը գլուխը ձեռքերով բռնած ու թափահարելով, ասես ցավից, անկյունից անկյուն էր վազվզում։ Հյուրն աչքերը կկոցած հետևում էր նրան և խոսում դանդաղ, բառերը շարում էր, ինչպես խայծն են ամրացնում կեռիկին։

— Ինչո՞ւ եք հուզվում, սիրելի բարեկամ։ Մի՞թե դժվար է մի նամակ ևս գրել։ Դա ձեզ ավելորդ անգամ բավականություն կպատճառի զրուցելու սիրելի կնոջ հետ։ Խոսք եմ տալիս, որ հենց վերադառնամ հայրենիք, անմիջապես կգտնեմ Ֆրոյլայն... Մարի Ուրբախին՝ այդպե՞ս է կարծեմ,— կհանձնեմ նրան նամակն ու կպատմեմ այն ամենը, ինչ գիտեմ ձեր մասին։

— Դուք ճանաչո՞ւմ եք Մարիին,— հարցրեց Անդրեյը, հանկարծ դադարելով վազվզելուց։

Հյուրը լռեց և սևեռուն նայեց Անդրեյին։

— Ոչ։

— Նրան իմ մասին ոչինչ չասեք,— ասաց Անդրեյը, կանգնելով հյուրի դիմաց։

— Բայց դուք ինքներդ էիք ինձ խնդրել։

— Իսկ հիմա խնդրում եմ, որ այդ բանը չանեք։ Մարիին մի որոնեք։ Պետք չէ։

Հյուրը նորից լռեց, հետո խփեց Անդրեյի ուսին, գլխով ցույց տվեց Ռիտային և ծիծաղեց։

— Մենք բոլորովին մոռացել ենք տիկնոջը։ Ես ձեզ շատ լավ եմ հասկանում։ Սակայն իզուր եք անհանգստանում. Ֆրոյլայն Ուրբախն այդ մասին ոչինչ չի իմանա։

Եվ նա կրկին գլխով արեց Ռիտայի կողմը։

— Խոսենք գործի մասին,— ասաց Անդրեյն, իրենով ծածկելով Ռիտային։— Ինչո՞ւ եք ինձ մոտ եկել։

— Խոսենք գործի մասին,— Անդրեյի տոնով ասաց հյուրը։— Եկել եմ ձեզ մոտ գիշերելու։ Վաղն ինձ էշելոնով ուղարկում են։ Խուսափում եմ լինել այնպիսի տեղերում, որտեղ շատ մարդ կա։

— Լավ։ Խոսք տվեք, որ ինձ ընդմիշտ հանգիստ կթողնեք։

— Խոսք եմ տալիս։

Անդրեյը մեծ-մեծ քայլերով դուրս եկավ սենյակից։

— Սերգեյ Լվովիչ,— ասաց նա, մտնելով տանտիրոջ սենյակը,— ինձ մոտ մի ընկեր պետք է գիշերի։ Դա անհրա-

Ժեշտ է։ Ես նրան կպատկեցնեմ կողքի սենյակում, բազմոցին։

Սերգեյ Լվովիչը ձեռքերն իրար զարկեց։

— Սպասեցեք,— համառորեն շարունակում էր Անդրեյը,— ոչ մի առարկություն։ Նա պետք է մնա։ Այլապես վատ կլինի։ Լսո՞ւմ եք։ Եվ՝ ոչ մի խոսք։ Ոչ մեկին ոչ մի խոսք այդ մասին։ Շնորհակալ եմ։

Նա շրջվեց և հեռացավ, չնկատեց, թե ինչպես Սերգեյ Լվովիչն սկսեց խաչակնքել արագ-արագ, վախեցած շարժումներով։

Անդրեյը հյուրին տարավ հարևան սենյակը, ցույց տվեց բազմոցը, դուռը ծածկեց և վերադարձավ իր սենյակը։

Այնտեղ նա մի քանի վայրկյան անշարժ կանգնեց, ձեռքով շփեց գլուխը, շփեց ճակատը, այտերը, վիզը։ Հետո բռունցքները սեղմեց և ասաց ինքն իրեն.

— Նա ճանաչում է նրան, ճանաչում է, ճանաչում։

Երբեմն, մոտեցավ մահճակալին, գլուխը դրեց Ռիտայի ծնկներին։ Հետո փակեց աչքերը։

Ռիտան նրա գլուխը գրկեց, թեքվեց նրա վրա։ Անդրեյի շուրթերին մի տաք կաթիլ ընկավ։ Նա հարցրեց կամացուկ, առանց կոպերը շարժելու.

— Դու ինչո՞ւ ես...— և լիզեց աղի շրթունքները։— Եթե կարելի լիներ կյանքը նորից սկսել... Բացել կծիկը, թել առ թել հասնել այն անիծյալ ժամին և այլ կերպ վարվել։ Բոլորովին այլ կերպ...

Ռիտան բարձր հեծկլտաց և այտը դիպցրեց նրա ճակատին։

— Սիրելիս, սիրելիս...

— Ինչո՞ւ ես...— նորից հարցրեց նա։

— Ո՞վ է այդ մարդն, ասա։ Ի՞նչ էիք խոսում։

Նա երկար ժամանակ չէր պատասխանում։

Լռություն էր, պատուհանից դուրս հեռավոր աղմուկ էր լսվում։ Դանդաղ, դժկամորեն մարում էր էլեկտրական լույսը։

Անդրեյը գլուխը շրջեց, դեմքը թաղեց Ռիտայի ծնկների մեջ՝ ծնկների, զգեստի, ոտքերի ջերմության մեջ, ասաց.

— Այդ բանը ես ոչ մեկին չեմ կարող ասել։ Ոչ մեկին։

ԳԼՈՒԽ
ԻՆՉ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՉՈՐՍ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Սիրո ցեռտրիֆուգա

— Belegte Brötchen!

— Warme Würstchen!

— Bier, Bier, Bier, gefälligst!

— S-s-simplicissimus, Berliner, ageblatt, Lustige Blätter!

— Woche, Woche, Woche!

— Bier, Bier, Bier!

— Belegte Brötchen, warme Würstchen!

— Zigarren, Zigarren, Zigaretten!

— Kladderadatsch, Kladderadatsch!

— Einsteigen![1]

Սիգարի ծուխը երկնագույն սավանի նման ծածանվում է առաստաղի տակ և փափուկ պարուրում դժժացող ձայները։ Ծավալուն փորերը, քրտնած հաղատները, սպիտակ շրջազգեստները, մերկացած ամուր արմունկները, մեծ, կլոր կրծքները՝ ժանյակների և զարդանկարների տակից, հավասարաչափ օրորվում են նստոցներին։

Պատուհաններից դուրս դանդաղ լողում-անցնում է մարմնեղ, լվացված, արևով օրհնված հայրենիքը։

Էոլանգենում փարթամ, շքեղ, սուլող, զարդարված գնացքը դատարկվեց կայարանում, և ամբոխը նեղ փողոցով շարժվեց դեպի քաղաքի ծայրը։

Անդրեյն ու Կուրտը բազմությունից զատվեցին, մտան համալսարանի այգին։

Այստեղ խաղաղ էր, տաքուկ ստվերներն ընկել էին շավիղներին, հացենիներն ու կաղնիները ծածկել էին երկինքը։ Ծառաբներին դեղնին էին տալիս ողորկ ցուցանակները՝ լա-

[1] Վաճառողների գոռում-գոչյուն կայարանի կառամատույցում. բուտերբրոդներ։ Տաք նրբերշիկ։ Գարեջուր։ Սիգար։ Ծխախոտ։ Ամսագրերի, թերթերի անուններ և այլն։ Վերջին բղավոցը՝ գնացքի ուղեկցողի հրավերք՝ անցնք վագոնները։

տիներեն մակագրություններով, նույնպիսի ցուցանակներ ցցված էին նաև թմբերի մեջ խրված ձողիկների վրա։ Կուշտ, պարարտ հողի և, չգիտես որտեղից, թարմ յուղաներկի հոտ էր գալիս։

— Դուք այդպիսի զգացում ունե՞ք,— հարցրեց Կուրտը,— հանգիստ, խաղաղարար, հարազատության զգացում։ Մենք բավարարվում ենք չնչին բաներով, որովհետև դրանք մեր չնչին բաներն են։ Հավատացնում եմ քեզ, երջանիկ եմ, որ եկել եմ այստեղ։ Հիմար, սիրելի տոնախմբություն, հիմար, սիրելի սովորություն։ Մեկ անգամ ևս նայում եմ ահա այս հացենուն՝ որքան այն հին է, փխրուն, ծակոտկեն։ Անցյալ տարի դրա վրայի սունկերը մինչև գոտկատեղս էին հասնում։ Հիմա, տեսնո՞ւմ ես, ավելի վեր են սողացել... Ահա և անատոմիական թատրոնի դարբասը։ Գնանք, թանգարանը քեզ ցույց կտամ։

Այգի դուրս եկող դռնից գետնի վրա էր տարածվում յոդոֆորմի սառնավուն, քաղցր հոտը։ Սենյակում, ուր նրանք մտան, խոնավ պատի որմնախորշի մեջ էր մտցված ցինկապատ մի սնդուկ։ Նրա կափարիչը մի փոքր բացված էր։

Կուրտն այն բացեց։ Սնդուկի մեջ ընկած էին պոկպկված մաշկով մարդկային ձեռքեր ու ոտքեր, կապտած մկանների կտորներ, սպիտակ ոսկրեր, ճիլոպի նման գզգզված ջլերով, կապտա-կարմիր, սև, գորշ ներքին օրգաններ՝ աղիքներ, լյարդ, թոքեր։ Սնդուկի անկյունում երևում էին իրար սեղմված երկու գլուխ՝ լուսավորված դուռն միջով այգուց ընկած ցերեկային լույսով։ Մեկի ծոծրակի մաշկը հանված էր, և գլխի վրա մանր, արյունոտ գանգակարերն էին երևում։ Մյուս գլխի վզին, որ անմազ էր և բարեձև, փաթաթված էր, ինչպես փողկապ, թմբլիկ կապույտ մանկական մի ձեռք։ Այս ու այնտեղ ինչ-որ դեղին փոշու կույտեր էին։

— Գնանք,— ասաց Անդրեյը։

Կուրտը լուռ նայում էր սնդուկին։

— Գնանք, այստեղ մարդ կխեղդվի։

Կուրտը սնդուկի կափարիչը ծածկեց և, ժպտալով, կամացուկ Անդրեյին թևանցուկ արեց։

Նրանք անցան մի ընդարձակ, լուսավոր սենյակով, որտեղ ապակով ծածկված բարձր նեղ սեղաններ էին դրված։ Սեղանները մաքուր լվացված էին, հատակը փայլում էր, դռնից դուռ սառնավուն, կամֆորայի հոտով հագեցած միջանցիկ քամի էր վազում։ Կամարակապ միջանցքի կիսամութը տանում էր դեպի լայն սանդուղքը։ Հարթակում, սեղանիկի մոտ նստած էր պահակը։ Նա գլխարկը հանեց, հարցրեց.

— Պարոնայք ցանկանում են թանգարա՞նը տեսնել։

Հետո առաջ անցավ։

Մեկը մյուսի ետևից ձգվում էին ապակյա պահարանները։ Պահարանների մեջ ապակյա դարակների վրա շարված էին ապակյա բանկաներ՝ սպիրտի մեջ դրված մարդկային օրգաններով։ Ապակի, սպիրտ և մարդկային մարմնի կապույտ, գորշ, կարմիր մսակտորներ, թելեր, հյուսվածքներ՝ ահա այն ամենը, ինչ լցված էր այդ ընդարձակ, բարձրառաստաղ սրահներում։

Արևն անզուսպ կերպով հորդում էր մաքուր պատուհաններից և պատերի, առաստաղի, հատակի վրա, մարդկանց հագուստներին, ձեռքերին, դեմքերին թրթռում էին բազմագույն լուսակները, որոնք բեկվում էին պահարանների, դարակների, բանկաների և սպիրտի միջով։

Հանկարծ պահակը կանգ առավ, մի ոտքը ետ գցեց, աջ ձեռքի բութ մատը մտցրեց համազգեստի դարձածալի ետևը և անշտապ բացեց բիբանը։

— Սաղմնաբանության բաժանմունք։ Աշխարհում առաջինն է իր պրեպարատների թվով։

Այստեղ, մեծությամբ իրարից հալիվ տարբերվող բանկաների մեջ, լողում էին սաղմերի դեղնավուն գնդիկները՝ չծնված հոգիների ամբողջ մի խումբ։ Հետո ձգվում էին մեծագլուխ մարդուկների խիտ շարքերը՝ փորներին սեղմված բարալիկ ոտիկներով և ձեռքերի թաղանթավոր մատներով։ Վերջում, մի դույլի չափ տարողություն ունեցող բանկաների մեջ, իրենց ծնկներին էին նայում երեխաներ, արդեն այնպիսիները, որոնց անկողնու մոտ տեսնում են մայրերը ծնընդաբերությունից հետո։ Այնուհետև, մյուս սրահում արևի տակ սևին էին տալիս ուղեղի կտորները, իսկ դրանց ետևը,

հատուկ ապակյա պատյանի մեջ, լայն բանկայի հատակին էր դրված մարդու գլուխ։

Գլուխը նեղճակատ էր և ամբողջ ճակատի վրայով իջնում էին անփույթ կարի հետքերը։ Շագանակագույն աչքերը բաց էին, բիբերը լայնացրած և ուղղված ինչ-որ կետի, որ հավանաբար ուղիղ նրա առջևն էր։ Վերին շրթունքի և այտերի վրա տարբեր կողմեր էին ցցվել կարճ, հաստ, մուգ մազերը. դրանք սափրվել էին մահապատժից մի շաբաթից ոչ շուտ։ Եվ ամբողջ դեմքը, վզի կտրված կտորն ու ականջները մուգ կապույտ էին։ Պատյանի տակ ցուցանակ էր ամրացված.

Նշանավոր մարդասպան
ԿԱՐԼ ԷԲԵՐՍՈԿՍԻ
գլուխը
(Նյուրնբերգում կայացած վերջին՝
հրապարակային մահապատիժը)

— Հայրս ներկա է գտնվել այդ մահապատժին,— սկսեց պահակը՝ ոտքը կախ գցելով,— և եթե պարոնայք ցանկանում են...

— Լսիր,— ասաց հանկարծ Անդրեյը,— գրողը տանի, ախր ինչո՞ւ ենք մենք այս ամենը նայում։

Կուրտը գլուխը ետ գցեց։

— Սա նշանավոր թանգարան է։

— Ես եկել եմ այստեղ կարուսելի, ոչ թե մեռյալներ տեսնելու։

— Կարուսելն էլ կտեսնենք։ Սակայն այս թանգարանը...

— Գրողի ծոցը թանգարանը, գրողի ծոցը Կարլ Էբերսոկսին, ես ուզում եմ օդ, արև։

Էլանգենն օդառատ է։

Պատշգամբում, մի գավաթ սուրճն առջևդ, ծխամորճը բերանիդ նստելն ու այդ օդը ծծելը մի բավականություն է, որով կարող է պարծենալ միայն փոքրիկ քաղաքը։

Կեսօրից հետո, երբ գլխավոր փողոցի վրա որոշակի է

դառնում ստվերոտ խաղաղ կողմը և երբ յուրաքանչյուր պատուհանից կախվում են գորգիկներ, բարձեր, փետրաներքնակներ, Էլանգենի պատշգամբներում թեք թիկնակների մեջ կիսապառկած են ուսանողները։

Համալսարանի այգուց վեր են խոյանում ծաղկող ծառերի նուրբ բույրերը, ցածից՝ աղմկոտ, արագահոս գետակից ղողանուն խոնավություն է փչում։ Երկինքն անսահման վեր է բարձրացել, և քաղաքն իրեն զգում է անսահման թեթև, հաճելի, հարմար։ Ճանապարհներն ու մայթերն ամայի են։

— Հե՛յ-հե՛յ,— լսվում է պատշգամբից մի զրնգուն ձայն։— Հե՛յ-հե՛յ։ Էրիխ, երեկվա կազինոյից հետո ո՞նց ես։

— Մի ծիծաղիր, կարճլիկ. գիշերվա ընթացքում գոտկատեղս հինգ սանտիմետր լայնացել է...

— Հա՛-հա՛-հա՛։

Եվ այսպես պատշգամբից պատշգամբ, փողոցի մի անկյունից մյուսը.

— Հե՛յ-հե՛յ, կոլեգա։ Ինչո՞ւ եք այդպես հոհոում։

— Էրիխի հետ վիրաբուժական դեպք է պատահել՝ գոտկատեղը ձգվել է։

— Հա՛-հա՛-հա՛։

— Ալֆա կորպորացիան ռադիկալ միջամտության դեմ է։ Փորձեցեք բուժով հետազոտել։

— Իսկ ի՞նչ կնշանակեիք թեթև խռպոտության դեմ։

Նեղ նրբանցքներում տնից տուն.

— Գլխավոր փողոցում փնտրում են գործածված շալվար. գոտին՝ հարյուր հիսուն սանտիմետր։

— Հա՛-հա՛։

Պատշգամբների ետևը, վարագույրներով և գորգիկներով ոչ բարձր սենյակներում ջանադիր տանտիրուհիները կոշիկի քսուքով մաքրում են իրենց կենվորների կոշիկները։ Համալսարանի լաբորատորիաներում և առանձնասենյակներում պահակներն անշտապ ողողում են փորձանոթները, թորանոթներն ու սրվակները։ Ընդարձակ սրահում հավաքում և կացոցների վրա ամրացնում են սուսերները, թրերը, դաշույնները ու էսպադրոնները։

— Հե՛յ-հե՛յ, Օտտո։ Ի՞նչ կասես մեր այս Էրիխի մասին...

Գլխավոր փողոցով ցած, դեպի գետը դեռևս շարունակում էին քայլել ժանյակներով, դեկոլտեներով, զուգված-զարդարված հյուրերը։ Սակայն աղմուկ չկար, և պատշգամբներից ելնող ծխախոտի ծուխը հանգիստ վեր էր մագլցում հարթ պատերի վրայով։

— Որքան խաղաղ է, ի՜նչ անսահման խաղաղություն,— ասաց Կուրտը։

Նա քայլում էր գլխաբաց, դանդաղ, սիրով նայելով ամեն մի անկյուն, ասես վաղուց կորցրած ու հարազատ մի բան էր փնտրում։ Անդրեյը լուռ էր։

Տարիների ընթացքում մեր բարեկամների կատարած զբոսանքներից և ոչ մեկը այնքան կամովին և աննպատակ չէր, ինչպես էդլանգեն կատարած ճամփորդությունը։ Ահա թե ինչու չենք շտապում առաջ անցնել և ուրախությամբ քայլ առ քայլ գնում ենք նրանց ետևից փողոցով, քաղաքի ծայրով, անցնում ենք կամուրջը և այնուհետև բարձրանում խիտ անտառով պատած սարը։ Ո՞վ գիտե, գուցեև այս զբոսանքը վերջին հանգիստն է, որից ավելի լիակատար միայն մահն է լինում։

Սարը, որ լորենու, կեչու, թխկու խիտ անտառով պատված նմանվում էր գլխաշորով ծածկված գլխի, պտտվում էր ձայների կենդանի ձագարի մեջ։ Ձայները դոփդոփում էին տեղում, այս ու այն կողմ էին նետվում, օձերի պես գալարվում էին ծառերի շուրջ, ոտքերի տակ փռվում։ Այստեղ կային Արևելքի և Արևմուտքի հնարած բոլոր գործիքները՝ տնայնագործական եղանակով սարքած, թե գործարաններում պատրաստված ավտոմատիկ, փողային, լարային գործիքներ։ Եվ նրանք սուլում էին, դոփում, գվվում, ճայթում, երգում, ոռնում, բոլորը միանգամից, ոչ մի րոպե դադար չտալով։ Երբևէ աշխարհում հորինված բոլոր օպերետները, օպերաները, մազուրկաներն ու վալսերը, քայլերգներն ու գալոպները, չհաշված հանդիսավոր օրատորիաները, թախծալի կանտատները, ռապսոդիաները, մենուետները, պոլոնեզներն ու երգերը, երաժշտական ստեղծագործության այդ բոլոր ձևերն ու տեսակները, կենդանական աշխարհին և երգեհոնային ֆաբրիկաներին հայտնի բոլոր տոներով և տեմպերով, մեծաշուքն ջանացողությամբ և աներևակայելի

ֆորտիսսիմոյով տքնում էին իրենց դրսևորելու այստեղ, այս սարում, որն, ինչպես գլխաշորով, ծածկված էր լորենուց թխկու խիտ անտառով։

Եվ սարը պտտվում էր, պտտվում։

Սարի գլխին, ծառուղիների երկայնքով փռված էին բալագանները, բուդկաները, կրպակները, կարուսելները, համացուցարանները, համայնապատկերները, կինոները, հիպնոսի առանձնասենյակները, ճոճանակները, հրաձգարանները, ուժաչափման և սպորտային սրահները, բախտագուշակների տաղավարները և գուշակուհիների քարանձավները։ Ամեն մարդ այս զբոսանքի մեջ մխրճված էր, ինչպես խցկանը փամփուշտի մեջ, և անմոռնչ բավարարվում էր նրանով, որ կարող է գլուխն ամեն կողմ դարձնել։

— Գեղեցիկ տիկնայք, հարգելի պարոնա՜յք։ Կոչ եմ անում ձեզ գերմարդկային մի ջանք անել՝ մի երկու րոպե կանգ առնել իմ առջև։ Այդ ջանքը պետք է թափվի, որպեսզի ետ պահեք այն ոչխարների գրոհը, որոնք ձգտում են ձեր տեղը գրավել։ Դուք չեք կամենա ձեր տեղերը զիջել ոչխարներին, հարգելի պարոնայք։ Մի պահ ուշադրություն։ Ձեր առջև են տաբատակալները, որոնց համեստ տեսքը տրխրեցնում է պարզամիտ մարդկանց և գեղջկուհիներին։ Սակայն մենք գիտենք, որ իսկական առաքինությունը միշտ համեստ է։ Նայեցե՛ք, ես ամբողջ ուժով ձգում եմ այս տաբատակալները, ես դրանք պատռում եմ, ատամներով քրքրում, ինչպես Համբուրգի կենդանաբանական այգու առյուծը, ես դրանք հանգույցներ եմ անում, կտրում եմ կացնով, ահա՝ ա՛յ, ա՛յ, ա՛յ, ես դրանցով քսանհինգ կիլոյանոց կշռաքար եմ բարձրացնում։ Նայեցեք, դրանք դառնում են ավելի առաձգական, փափուկ և հաճելի, բնավ չեն փոխում իրենց գույնը, ամրությունն ու հաճելի տեսքը։ Սպասեցեք, սպասեցեք։ Ես դրանց դնում եմ ջրի մեջ, օճառում եմ, տրորում խոզանակով...

— Այստե՛ղ, այստե՛ղ, տիկին։ Ահա այն հովանոցը, որ կոչված է պաշտպանելու ձեր անմման մաշկը արևի տապից։ Փորձենք նրա վրա ջուր լցնել, փորձենք այն հակառակ երեսին շրջել, փորձենք կոտրել նրա կոթը կամ մատով ծակել այն. ոչինչ դուրս չի գա։ Այսպիսի մետաքսից մեծն Նապո-

լեռնը զգեստ էր կարել տվել իր երկրորդ կնոջ, իր սիրելի տիկնոջ համար, ինչպես պարզել է պատմական գիտությունը։ Եթե այդ հովանոցը հմուտ ձեռքով փակենք, այն բարակ կլինի ասեղի նման, որի ծակից ուղտը մտավ երկնային արքայություն։ Եթե այն տեսներ ձեր տատիկը, իհարկե, ոչ տիկին ուղտը...

— Օ՜-լյա, Օ՜-լյա-լյա։ Այ քեզ մարդիկ, սրանք պատրաստ են ականջները կախ գցել ու ամեն մի դատարկախոսի լսել։ Փա՜ռք աստծու, արևից պաշտպանված եք ծառերով։ Ի՞նչ միտք ունի փող ծախսել հովանոցի վրա։

Դրա փոխարեն էլանգենի մագիստրատը ձեր բաց բերաններն է լցրել իր փողոցների ամբողջ փոշին, և ձեզ վնաս չէր տա բերաններդ ողողել սառույցով և մաքուր շաքարով սարքված իսկական լիմոնադով...

— Իմ սիրելիներ, հանուն քաղաքակրթության և դաշնակից գերմանական միապետությունների միջև լավ հարաբերություններ պահպանելու՝ միայն կես րոպեի ուշադրություն։ Ոսկյա շղթայիկ, հորինված պրոֆեսոր...

— Այդ երբվանի՞ց են կանայք սկսել տաբատակալներով վարտիք կրել։ Բավական է լսեք այդ տաբատակալ վաճառողին, գրո՜ղը տանի, իմ հետաճաշյա հանգիստը...

— Սկսվում է, սկսվում է...

— Դուք կտեսնեք մի մարդու, որ ամբողջ կյանքում սնվել է հին կաշվե կոշկատակերով։ Ձեզ համար կցուցադրեն...

— Հինգ հարյուր մարկ նրան, ով կապացուցի, որ իր ձեռքով շոշափել է Պոնդի-Ռոնդի-Կակսից փոքր գաճաճի. Պոնդի-Ռոնդի Կակսի հասակը տասներկու սանտիմետր է և քաշը...

Կապտա-կարմիր դեմքերով կանչողները, որոնց երեսներից քրտինք ու թուք էր հոսում, մի ըմպանակ լիկյոր են խմում ու դարձյալ ոռնում իրենց խռպոտ կոկորդներով, ճակատի և պարանոցի երակները պրկելով կապույտ, թանձր արյունով։

— Ըս-կրս-վում է։

— Ըս-կրս-վու-ո՜ւմ է։

Թութակների ճչոցներ, գիտուն ավանակների ոռնոց, գրամոֆոններ, երգեհոններ, փոքրիկ երգեհոնիկներ, նվագախմբեր, օրկեստրիոններ, դաշնամուրներ և միայնակ սրտակեղեք ջութակներ։ Իսկ այդ ամենի վրա իշխում է մարդկային ձայների աղմուկը, անօրինակ, աննկարագրելի, տիտանական ոռնոց։ Քանզի մարդը պետք է խլացնի բոլոր ձայները, մեքենաների, գործիքների, գազանների և թռչունների ամբողջ աղմուկը, դղրդոցը։ Քանզի այս հիանալի, տարվա մեջ միակ այս սրբատոնի, ամառային, սիրային տոնախմբությանն անհրաժեշտ է ոչ միայն վաճառք անել, ոչ միայն ցույց տալ ապրանքը, այլև ծիծաղել, սրամտել, սեր խոստովանել։

Օ՜, այո, սեր խոստովանել։

Դրա համար անհրաժեշտ է սիրեցյալ աղջկա հենց ականջի տակ բղավել, ինչպես ամբողջ ուժով ղողանջող զանգակատունը։

Սակայն իսկական կիրքը երբևէ մնացե՞լ է էլեդիկ պիանոյի սահմաններում։

Ա՜խ, կիրք։ Ա՜խ, դեռատի, դաժան, ուժգին կիրք։

Նստել ժապավենաթելերով զարդարված կարուսելի սայլակում, նստել՝ ամբողջ մարմնով սեղմվելով ժանյակների մեջ կորած, տաք, լիքը կրծքով, շպարված, մի քիչ քրտնած աղջկան, որին տեսել ես, հանդիպել, մոտեցել մի րոպե առաջ, բազմության մեջ, որտեղ ամեն մեկը կարծես խցկան է փամփուշտի մեջ, նստել՝ ա՜խ, ա՜խ, ոչ, թռչել, սլանալ, պտտվել, ասես ամպերի թևին։ Ահա մութ կիսաշրջանը՝ թունելը, ոչինչ չի երևում, ոչ ոք չի տեսնում, մի վայրկյան, ևս, ևս. ահա ցերեկը՝ կուրացնող, պայծառ. ոտքերիդ տակ մարդիկ են՝ ցույց են տալիս մատներով, ծիծաղում են. ահա կրկին մթություն՝ ոչ ոք չկա, միայն՝ նա է, սակայն ո՞վ, անծանոթ, կարուսելում պտտվող, մի վայրկյան, ևս, ևս՝ լույս, ցերեկ, մարդիկ, և դարձյալ թունել։

Արդյոք մարդկությունը հորինե՞լ է մի ուրիշ մեքենա, որը սրտերը, հոգիները, գրկախառնությունները, համբույրները՝ սիրային այդ ամբողջ հումքը վերամշակեր ու դարձներ երջանկության այնպիսի բյուրեղային, խտացված ֆաբրիկատ, ինչպիսին ստեղծում է կարուսելը, սիրո այդ կախարդական ցենտրիֆուգան։

Այս ամբողջ ճոճանակները, թռչկոտող սանդուղքները և

անվերջանալի կածանները, և ամերիկյան սարերը, դրանք բոլորը երջանկության քիչ թե շատ որակյալ փոխամիջոց էլ չեն արտադրում, երջանկություն, որի արտադրության արտոնագիրը պատկանում է կարուսելին։ Իսկական երջանկությունը, աշխարհում միակ երանելի նիրվանան, իսկական փոթորկող կիրքը (զգուշացեք կեղծվածից) կարուսելի մեծաշնորհն է։

Ուրախացի՛ր ժապավենազարդ, երփներանգ, ոսկեթելիկ, հուրհրատող, ձիու վազքը նավակի համաչափ ճոճումին զուգակցող, հավերժ հմայված երգեհոնիկի ձայներից, հավերժ պտտվող՝ ուրախացի՛ր։

Երբ փաստորեն սկսվեց համաշխարհային պատերազմը

Երերալով, ճոճվելով՝ բալագանից ճոճանակները, ճոճանակներից դեպի բուդկաները քշվելով, Կուրտն ու Անդրեյը անձնատուր եղան ամբոխին, նրա անհոգությանը, նրա քմահաճույքներին։ Որպես ի ծնե բերանբացներ, նրանք չէին կարող ասել, թե իրենցից քանի ժամ խլեցին կանչողները, առևտրականները, ծաղրածուները և իրենց նևրոլոգիայի ու հոգեբուժության պրոֆեսորներ մեծարող ճմրթված ֆրակներով պարոնայք, որոնք սեփական ձեռքերով բալագանների լաստակներին էին դնում նախշված քնած լուսնոտներին։

Երբ հոսանքն ընկերներին դուրս բերեց այնպիսի մի տարածություն, ուր կարելի էր ազատ շնչել ու շարժվել, նրանք նայեցին իրար ու ծիծաղեցին։ Քրտնած, ճմրթված, նրանք նման էին հորդ անձրևի տակ ընկած մարդկանց։ Կուրտը հիացմունքով բացականչեց.

— Նայիր, Անդրեյ։ Ահա այս բեղավոր, իսկ շատերն էլ ճերմակահեր այս մարդիկ, այս հայրերը, մայրերը, գուցեև պապերն ու տատերը՝ սրանք բոլորը երեխաներ են, որոնց համար խաղալիքն ամենաթանկ բանն է։ Այսպիսի տոնախմբություն... այսպիսի պարզամիտ ուրախություն...

— Սպասիր,— կանգնեցրեց նրան Անդրեյը,— սա ի՞նչ է։ Կուրտ, սա ի՞նչ է։

— Տիր։

Անդրեյն առաջ նետվեց, հետո Կուրտի ձեռքը բռնեց, ամբողջ մարմնով սեղմվեց նրան, ասես ապաստան և պաշտպանություն փնտրելով։

— Քեզ ի՞նչ պատահեց, ի՞նչ ես անում։

Ոչ բարձր բալագանի առջև լիահնչյուն, հանդարտ քրքիջ էր լսվում։ Տղամարդկանց մի հոծ խումբ մերթ ետ էր քաշվում վրանի արգելապատից, մերթ վրա էր ընկնում պատին։ Արգելապատից ութ-ինը քայլ հեռու, երկաթաձողերի վրա ամրացված ցցվել էին գզգզված, ծեծված մարդկային գլուխներ։ Դրանցից յուրաքանչյուրի վրա ամրացված էին ցուցանակներ՝ վրան այն հանցագործների անունները, որոնց մի ժամանակ պատժել էր արդարադատությունը, և որոնց հիմա խրտվիլակ էր դարձրել բալագանի տիրոջ ցասումնալից ձեռքը։

Շատ հասարակ խաղ էր։ Հարկավոր էր մեծ լաթե գնդակը խփել գլխին։ Այն ընկնում էր և ծածկվում քաթանե վաճառասեղանի վրա։ Նիհարիկ, գունատ դեմքով մի փոքրիկ տղա, որ վազվզում էր վաճառասեղանի ետևում, նշանակետն անմիջապես կարգավորում էր ու գնդակը նետում տիրոջ ոտքերի մոտ, որը արգելապատի առջև կանգնած տուգանք էր գանձում յուրաքանչյուր վրիպումի համար։

Գործն անընդմեջ առաջ էր գնում. գնդակները արգելապատից թռչում էին նշանակետերի գծի ետևն ու ետ գալիս. տերը մարկաներ էր փոխում, գնդակները տալիս մրցության մասնակիցներին, բղավում էր տղայի վրա ու գավաթից գարեջուր ծծում. հավաքված մարդիկ հոհոում էին, խրախուսում և ծաղրում, ետ էին նահանջում, երբ սպորտսմենը թափ էր առնում, որ նետի և նորից վրա ընկնում, երբ նա գնդակը նետում էր նշանակետին։

Նշանակետերի կենտրոնում ցցված գլուխը՝ նեղ ճակատին արած անփույթ հանգուցավոր կարով, մուգ կապույտ դեմքին դուրս պրծած շագանակագույն աչքերով, որ ծածկված էր սափրելուց հետո բուսած կարճ մազերով, այդ գլուխը բազմության առանձնահատուկ ուշադրությանն էր արժանացել, և գնդակ գնդակի ետևից նրան էին հարվածում։ Իսկ այն ետ ընկնելով և քաթանի տակ ծածկվելով, նորից ու նորից տնկվում էր առաձիգ երկաթաձողի վրա և իր շագա-

նակագույն խելահեղ հայացքը բութ կերպով սևեռում քրքջացող, քրտնած, ամբոխին։

Գլխի հետ վարվում էին սիրալիր, մտերմավարի, տնավարի.

— Կառլիկ, Կառլուշա, Կառլո։

Իսկ գլխի վրա կախված էր ցուցանակը.

Գազանային մարդասպան,
Սարսափելի ավազակ,
Օրը ցերեկով թալանչի և
նշանավոր կին լլկող
Կարլ Էբերսոկս։
Սրիկայի գլուխը կտրեցին
Նյուրնբերգում։

— Սա ի՞նչ բան է,— նորից բղավեց Անդրեյը։

— Սա սպորտ է,— լսվեց մեկի հանգիստ ձայնը նրա ականջի տակ։

Նա անմիջապես գլխի չընկավ, թե ով արտասանեց այդ բառերը, և, իսկույն չհասկացավ, որ դրանք ռուսերեն ասվեցին։ Ուրեմն իր բերանի՞ց էլ էին ռուսերեն բառերը դուրս թռել։

— Ծանոթանանք, ես այստեղի ուսանող եմ, ազգանունս է... Ի դեպ, այդ կարևոր չէ։ Դուք և ձեր բարեկամը ինձ դուր եկաք. վազուց եմ ձեզ հետևում, նայում, թե ինչպես եք ձանձրանում այս խառնաշփոթության մեջ։

Կկոցած, մի փոքր հոգնած աչքերը նայում են ծաղրալի ու հանգիստ, բերանն ասես ջղաձգվում է անվստահ ժպիտից։

Ուսանողը սեղմում է Անդրեյի և Կուրտի ձեռքերը։

— Դուք գերմանացի՞ եք,— աշխուժորեն դիմում է նա Կուրտին։— Հիանալի է, ուրեմն գերմաներեն կշատախոսենք։ Այս բալագանի մոտի զվարճությունը ձեր բարեկամին այնպես է շշմեցրել, որ նա նույնիսկ գունատվել է։

Անդրեյը ջանում է նայել Կուրտի աչքերին ու ասում է.

— Համենայն դեպս, երեխաներն այդպես չեն զվարճանում։

Կուրտը սեղմում է Անդրեյի արմունկն, ասես ուզում է նրան հանգստացնել և ուշադիր նայում է նոր ուղեկցին։

Սա խոսում է, քիչ անհանգստանալով, արդյոք լսվո՞ւմ է իր ձայնը թե ոչ։

— Սպորտն, ինչպես հայտնի է, ֆիզիկական դաստիարակություն է։ Սակայն որքան իմաստնություն է հանդես բերել բալագանի տերը օգտակարը զուգակցելով վսեմին։ Հոյակա՜պ է։ Այս ձևով դուք ոչ միայն մարզում եք լանդշտուրմի քարացած մկանները, այլև սրում եք նրա բարոյական զգացումը, ամրացնում իրավագիտակցությունը և այլն։ Իսկ որպեսզի այդ ամենը շատ տաղտկալի չլինի, հաբը ոսկեջրում են ամենագրգռիչ ակնարկությամբ. կին լլկող, և այն էլ ոչ թե սովորական, այլ՝ նշանավոր։ Ահա, խնդրեմ, օձի իմաստությունը։ Որպիսի լայն հնարավորություններ Տիցի գործակատարի երևակայության համար։ Ճապոնական և ոչ մի պատկեր նրա երևակայությունն այնպես չի բորբոքի, ինչպես այս կարճ տողը՝ նշանավոր կին լլկող։ Կարևորն այն է, որ այս ամբողջ պատմությունը ներծծված է հայրենասիրական գաղափարով, քաղաքացիներին պետականության ոգով դաստիարակելու գաղափարով։

— Իսկապես զզվելի է,— կուչ եկավ Անդրեյը։

— Քա՜հ-քա՜հ, եթե լավ տրամադրության մեջ չլինեի,— ծիծաղեց Կուրտը,— ձեզ կդնգսեի, կոլեգա։

— Ինչի՞ համար։

— Ընդհանրացումների։ Խաբեբայի մեկը բան է հորինել, հիմար մարդկանց գրավելու համար, իսկ դուք պետականության մասին եք դուրս տալիս։

Ուսանողն աչքերը կկոցեց, ուսերը թոթվեց։ Նրա դեմքով շարունակ ժպիտ էր սահում, դեմքի արտահայտությունը սակայն անորսալի էր։ Նա ասես ծիծաղում էր ինքն իր ճառի վրա ու վճռել էր մտքում ստուգել՝ հավատո՞ւմ են իրեն թե ոչ։

— Դուք լավ տեսք ունեք։ Հավանաբար ուսանող եք, գուցե նկարի՞չ եք։ Մի խոսքով ձեզնից ոչինչ չի կարելի պահանջել։ Ուզում եմ ասել, որ դուք երազող մարդիկ եք։ Իսկ ես սթափ մարդ եմ, թեև դեմ չեմ կոնծելուն։ Գնանք այնտեղ, սարը բարձրանանք, գնանք ռեստորան։ Վահ, ձեռք քաշեք վերջապես կածաններով ման գալու սովորությունից։ Անտա-

ոի միջով և՛ ավելի մոտ է, և՛ ավելի ազատ... Բարեկամներ, ես հինգ համալսարանում եմ եղել, ընդ որում, չորսից ինձ վռնդել են։ Ասենք, բանը համալսարանները չեն, այլ այն, որ ես կարճ ժամանակում ապրել եմ չորս երկրում և սովորել եմ թքել ամեն ինչի վրա։ Այնպես որ, ինձ դժվար կլինի կողմնակալության մեջ բռնացնել։ Ես միջազգային անասուն եմ։ Եվ եթե ձեր ձեռքերը քոր են գալիս, ես պատրաստ եմ շարունակելու իմ ընդհանրացումները, որպեսզի ինձ դնգսեք ամբողջությամբ։ Համաձա՞յն եք։

Խոտի վրա թավալվել էին հոգնած մարդիկ, առանց բաճկոնների, առանց գլխարկների, գետնի վրա շռված բացված հովանոցների տակ։ Բարեկամներն անտառն անցան և դարձյալ հայտնվեցին զվարճասերների տոնական ամբոխի մեջ։

Այստեղ, լայն հրապարակի վրա ծավալվել էր ռեստորանը։ Երկար սեղանների ու նստարանների շարքերը ձգվել էին հրապարակի ամբողջ երկայնքով և հավասար սանդուղքով բարձրանում էին դեպի վրանը, որ գրոհված էր օսլայված մատուցողուհիների մեծ խմբով։ Նստարաններն այնպես էին ծածկվել հյուրերով, ասես միայնակ ծառի վրա սերմնագուավների մի ամբողջ երամ նստած լիներ։ Սեղաններն ամբողջովին ծածկված էին գարեջրի կավե ամաններով։ Հաստամարմին մատուցողուհիները, մատներին ամրացված գավաթները գլուխներից վեր բռնած, մի կերպ առաջանում էին դեպի վրանը, որտեղ դրված էին փրփրալի հեղուկի տակառիկները։ Ծաղիկներ և օձաժապավեններ վաճառողները թեքվում էին հյուրերի մեջքի վրայով, նայում ուղիղ նրանց երեսին այնպիսի ժպիտով, ասես այդ բոլոր մարդիկ նրանց սիրեկանները լինեին։ Գլխավերևները, ծառերի ճյուղերին կպած, խառնված, խճճված կախվել էին օձաժապավենի գույնզգույն ժապավենները, որ երերվում էին, պոկոտվում նոր ու նոր թղթե օձերի հարվածների տակ։ Այստեղ էլ ծիծաղ էր լսվում։

Բարեկամները սեղան նստեցին հարթակի վերևում։ Նոր ուղեկիցը հայտնվեց նրանց մեջտեղում և հերթով դառնում էր մերթ մեկին, մերթ մյուսին, ջանալով որ իրեն լսեն։

— Ահա ձեզ կենսաբանության այբուբենը. եթե որևէ օրգան երկար ժամանակ անգործության մատնվի, այն կորցնում է իր ֆունկցիաները կատարելու կարողությունը։ Ըստ իս, օրգանական տեսությունը զուր են հայհոյում։ Կենսաբանության օրենքներն, ըստ էության, ընդգրկում են ժողովուրդների հոգեկան ողջ կյանքը։ Արյան վրեժը եվրոպացուց փոխարինեցին մենամարտով, իսկ մենամարտը վերածվեց չափանոթի. հակառակորդիդ թշիկը քերծեցի՞ր սրովդ, ուրեմն բավական է։ Կամ դրանից էլ լավ. ձեզ ապտակել են, դատավորը տուգանել է վիրավորողին, ուրեմն վիրավորանքը վերացավ. դուք հանգիստ եք։ Սա նրանից է, որ մենք սերնդեսերունդ չենք մարզել մեր վրիժառության զգացումը։ Այն աստիճանաբար ատրոֆիայի է ենթարկվում։

— Դուք ի՞նչ եք ուզում մեզ համոզել,— հարցրեց Անդրեյը։

Ուսանողը գավաթից գարեջուր խմեց, և հանկարծ նրա դեմքը սմքեց, մթնեց, ծերացավ, ժպիտն անհետացավ, և նա հոգնած ասաց.

— Ոչ մի բան։ Ինձ ուղղակի զվարճացրեց ձեր միամտությունը որպիսի տեսքով ձանձրանում էիք նայելով բալագանին։ Եվ հետո ձեր վախը հրաձգարանի մոտ. ուզում էի մի քիչ շատախոսել, ուրիշ ոչինչ։

Նա սեռեռուն նայեց Անդրեյին։

— Հատկապես ձեզ, ռուսներիդ հետ։ Ես սոսկ հարցեր եմ դնում։ Դուք Հռոմը չհիշեցի՞ք, երբ առաջին անգամ տեսաք Գերմանիան։ Հասկանո՞ւմ եք։ Այսպիսի ծաղկում, այսքան շքեղություն, այսքան լիություն, գոհունակություն։ Անտանելի է։ Ես զգում եմ, որ ամբողջ երկրի հոգի տակ, ամբողջ ժողովրդի գիտակցության խորքում լարված անհամբերության հսկայական շերտեր են փռվել։ Շուրջն ամեն բան այնքան հագեցած է, այնքան լիքը, որ պետք է, անհրաժեշտ է, անխուսափելի է լարումը թուլացնել։ Շուրջս ամեն ինչի մեջ ես զգում եմ մի սարսափելի պոտենցիայի շունչ։ Եվ տեսնում եմ ինչպես է այդ պոտենցիան աճում, ինչպես է շարունակ դրսից սնուցվում, ասես էլեկտրականությամբ լիցքավորված ակումուլյատոր։ Դուք հիշո՞ւմ եք սպորտսմենների դեմքերը։ Դուք սարսափեցի՞ք։ Իսկ մտածե՞լ եք, թե ինչ ուժ է թաքնված այդ զվարճության տակ։ Այն մարզում են այդպիսի անմեղ ձևով, որպեսզի հետո ուղղեն ուր հարկն է։

Դուք հասկանո՞ւմ եք, թե այն ուր կուղղվի։ Հասկանո՞ւմ եք։ Զգո՞ւմ եք, թե ինչպես է այդ ուժը երերում հողը ձեր ոտքերի տակ։ Զգո՞ւմ եք, թե դա ինչ ժայթքում կլինի։

— Ի՞նչ եք խոսում,— հանկարծ բղավեց Անդրեյը։

Ուսանողը բռնեց նրա ձեռքը։

— Ժայթքում,— խուլ ձայնով կրկնեց նա,— զգո՞ւմ եք։— Եվ նա գլխով ցույց տվեց ցած՝ սեղանները, որոնց շուրջ խիտ-խիտ, ինչպես սերմնագռավները ծառի ճյուղերին, նստել էին զվարճասերները։

— Նայեցեք։

Իրենց սեղանից մի շարք ցած, նստարանին կանգնել էր մի ուսանող։ Նրա նախշված կորպորանտական գլխարկը թեքվել էր հարթ, վարդագույն ծոծրակին։ Նա առանց բաճկոնի էր, վերնաշապկի թևքերը ծալած։ Ետևը կանգնել էր մի աղջիկ օձաժապավեններով լի զամբյուղը ձեռքին։ Ուսանողը զամբյուղից վերցնում էր օձաժապավենի մի կծիկ, ժապավենի ծայրը փաթաթում մատին, երկար ժամանակ հարմարեցնում ու նշան էր բռնում, իսկ հետո կծիկը շպրտում ներքևի սեղանի ուղղությամբ։ Ճանապարհին ժապավենը խճճվում էր ծառերից կախ ընկած օձաժապավենների կամ դեմ էր առնում դիմացից թռչող ժապավենին ու միահյուսվում նրա հետ կամ էլ հենց իսկույն խրվում մնում էր լորենու ճյուղերի մեջ, առանց նույնիսկ բացվելու։ Ուսանողը, առանց շրջվելու, ձեռքը դարձյալ մտցնում էր իրեն մոտեցած զամբյուղի մեջ, վերցնում էր նոր կծիկ ու, ջանալով ճարպկորեն շրջանցել արգելքների բարդ ցանցը, նորից էր ժապավենը նետում։ Յուրաքանչյուր անհաջողությունից հետո նա ավելի էր բորբոքվում։ Վերջապես նրան հաջողվեց իր ժապավենով դիպչել օձաժապավենի խիտ ծածկույթին, որը նրան բաժանում էր իր նպատակից։ Ընդհանուր քրքիջի տակ նա օձաժապավենը ցած քաշեց հյուրերի գլխին։ Հիմա մարտի դաշտը նրանն էր։ Նա ոտքերն ավելի լայն բացված դրեց, վերցրեց օձաժապավենների մի ամբողջ կապոց և աշխույժ կրակ բացեց։

Ուսանողի նշանակետը մի աղջիկ էր։ Նա նստել էր մի տարեց, պատկառելի տիկնոջ հետ, որն իրեն պահում էր մոր կամ մորաքրոջ նման։ Նպատակին հասած առաջին ժապավենը կպավ աղջկա ուսին։ Նա անշտապ ցած նետեց օձաժապավենը։ Էհ, այստեղ ինչքան ասես օձաժապավեն կար։ Գրանք թափում էին վերևից անձրևի նման և խշխշում ոտքերի տակ, ինչպես տաշեղներն ատաղձագործի արհեստանոցում։ Երկրորդ ժապավենը հարվածեց աղջկա թևին։ Նա անհամբերությամբ ժապավենակծիկը մի կողմ նետեց։ Երրորդը սահուն կերպով ընկավ սեղանին, տիկնոջ դեմքի մոտ։ Աղջիկն շտապով ժապավենը մի կողմ քաշեց և ինչ-որ բան շաղակրատելով, ակամա այն փաթաթեց իր մատին։

Այն ժամանակ ուսանողը ժապավենը ձգեց և մեծ զգուշությամբ քաշեց։ Աղջիկը գլուխը բարձրացրեց, նրա հայացքը սահեց այդ օդալարի վրայով և հանդիպեց ուսանողի ժպիտից ճապաղած, քրտնքից փայլփլող դեմքին։ Աղջիկը քմծիծաղ տվեց և ձեռքի մի թեթև շարժումով լարը կտրեց։

Կուրտն ու Անդրեյը ծիծաղում էին։ Նրանց ուղեկցի դեմքը դարձյալ երիտասարդացավ, և երեսին մի անվստահ ժպիտ սահեց։

— Դուք գիտե՞ք,— ասաց նա,— որ այս տոնախմբությունը ուսանողներն անվանում են գինեկոլոգիական սեղան։ Ո՞չ։ Դա ուսանելի պատմություն է։ Այստեղի պրոֆեսորներից մեկն իր դասընթացն սկսելիս հայտարարել է. «Շատ ափսոս, որ մենք աշխատանքն սկսում ենք ձմեռային սեմեստրին և առաջին շրջանում զրկված կլինենք այն փրկարար նյութերից, որոնց շնորհիվ մեր թանգարանի սաղմնաբանական բաժանմունքը համաշխարհային համբավ է ձեռք բերել։ Էղլանգենի տոնավաճառից երկու-երեք ամիս հետո այդպիսի նյութեր ինչքան ասես կան»։ Դուք զարմացա՞ծ եք։ Ձեզ համար դա անհասկանալի՞ է։ Պրոֆեսորը գիտեր ինչ էր ասում։ Տարին մեկ անգամ այս մշտապես քաղցած քաղաքն են մտնում կանանց հոծ շարքեր։ Նրանց այստեղ սպասում են ուսանողներն ու զինվորները։ Դուք կարծում եք նրանք կանանց զո՞ւր են սպասում։ Երկու ամիս անց այդ կապտաչյա հարսնացուների, կանանց, զարմուհիների և քույրերի մի որոշ տոկոսը դարձյալ կգա հյուրասեր Էղլանգեն, որպեսզի պառկի համալսարանի կլինիկաների մահճակալներին։

— Դուք չափազանցում եք, և մռայլ եք, կոլեգա,— ասաց Կուրտը։

— Զարմանալի՞ է։ Մոռա՞յլ եմ։ Օ՜, դուք ռոմանտիկ եք։ Ուզում եք գրաղ գանք, որ այդ բուրշն[1] ամենաուշը այսօր երեկոյան կհասնի իր նպատակին։ Նայեցե՛ք, նայեցե՛ք։

Նստարանին կանգնած ուսանողի մոտ խմբվել էին ծաղկավաճառուհիները։ Նրա և ներքևի սեղանին նստած աղջկա միջև օտար օձաժապավեն էր ձգվել։ Ուսանողը շուրթերը հպում էր ձեռքի մեջ սեղմված ժապավենի ծայրին և ամբողջ իր ծանրամարմին տեսքով աղջկա նկատմամբ անզուսպ մի տենչանք էր արտահայտում։ Նա ընտրում էր մի ծաղիկ, իրեն մատուցած կողովից, համբույր էր դրոշմում այդ ծաղիկին և ծաղկավաճառուհու ձեռքով ուղարկում իր ընտրյալին։ Հետո գլխավերևն էր բարձրացնում գարեջրի գավաթն ու մի քանի կումով դատարկում։ Աղջիկն ընդունում էր ծաղիկները, սեղմում դեմքին և աննկատելիորեն խորամանկ հայացքներ նետում ուսանողի կողմը։ Սա անմիջապես որսում էր այդ հայացքներն ու իր հիացմունքն արտահայտում այնպիսի շարժումներով ու դեմքի արտահայտությամբ, որ ուրախացնում էր աղջկան։

— Ուրախ է, ազնիվ խոսք, ուրախ է,— ծիծաղեց Կուրտը։

— Նայեցեք սրա մարմնին,— բղավեց ուսանողը,— չէ՞ որ սա սարսափելի է։ Փորձեցեք նրան խանգարել, մի պահ միայն ուշադրությունը շեղել, նա կատաղած շան պես վրա կպրծնի ձեզ, ձեզ կգզի։ Եվ դա նրան մեծագույն բավականություն կպատճառի, քանի որ ծայր աստիճան անհամբերությամբ է համակված։

— Դուք այդ բո՞ւրշի մասին եք ասում։

— Ես ասում եմ բոլորի մասին։

— Խելագարվել եք։

— Հա՜, հա՜։ Դուք նկարի՞չ եք։ Այդպես էլ գիտեի։ Նստում եք այս ու այնտեղ ձեր քաթանե աթոռակներին ու ոչ մի անգամ մտքներովդ չի անցել, որ հրաբխի վրա եք նստած։ Քա՜հ, քա՜հ։ Մի գեղեցիկ մի անգամ ձեզ պատառ-պատառ կանի այդ ներկապնակների, հովանոցների և աթոռակների հետ միասին, ինչպես սոդոմյաչրի շիշն է արևից

[1] Բուրշ—գերմ. ուսանողական միության անդամ (Ս. Բ.)։

ջայթում։ Ահա այդպիսի բուրշերի հրոսակախումբը կրունկներով կտրորի ձեր բարեհոգությունը։

— Մտագար է,— ասաց Կուրտը, ուսանողից ետ քաշվելով։

— Սպասեցեք,— ասաց սա ոտքերը նստարանի վրայով անցկացնելով,— ես մի ապուշի պետք է տեսնեմ։ Հիմա կվերադառնամ և միտքս կավարտեմ։

— Նեղություն մի քաշեք,— պատասխանեց Կուրտը։

— Ուզում եմ ձեր գլուխը մտցնել. ոչ ձեր, ո՜չ, կոլեգա, այլ իմ միամիտ համերկրացու, որ... հետո կասեմ, որ...

Նա պտտվեց և անհետացավ կիսահարբած, աղմկոտ ամբոխի մեջ։

— Գնանք,— ասաց Անդրեյը և բարեկամի դեմքին հառած նրա հայացքում հոգսի ստվեր էր երևում։

Երբ իջնում էին բալագանների մոտ, և շուրջն ամեն ինչ խառնվել էր երգեհոնի դմբդմբոցի մեջ, Կուրտն ասաց.

— Այդ տղան, իհարկե, հիվանդ է։

Հետո, քիչ անց, քնքուշ ժպտալով ավելացրեց.

— Առանց նրա զվարճանանք, հը՞...

Գիշերը, կայարանում՝ արևից, կարուսելներից, ոգեհարցումներից և ամբոխից հոգնած մարդկանց հետ, որոնք փորձում էին վագոն բարձրանալ, բոթբոթվելուց ու վեճերից հետո, Կուրտը կրկին ընկավ հաճելի հայեցականության մեջ՝ հայացքներից, ծիծաղից, երգերից ու գիշերից բորբոքված։

— Անդրեյ, միևնույն է, մենք գնացք չենք ընկնի։ Արի այս տոնախմբությունն ավարտենք հին կարգով. մի հյուրանոց գտնենք, գիշերենք, իսկ վաղը լուսաբացին՝ տուն, ոտքով, մեր զարմանահրաշ, մեր սքանչելի...

Կուրտը խոսքը չավարտեց։ Նրա հայացքն ընկավ սրահի ծայրին սեղանի մոտ տնկված բրգաձև ծառին։

— Իսկ այն տղան,— փնթփնթաց նա,— նա, որ այսօր մեզ էր կպել, որոշ բաներում ճիշտ է, գրողը տանի։

Բրգաձև ծառի ետևում, սեղանին դրված էր վառ դեղին մի փոքրիկ ճամպրուկ։ Ճամպրուկի ետևը, կաշվե բազմոցին փռվել էր ուսանողը, այն աղջկան գրկած ու իրեն սեղմած։ Մի քանի ժամ առաջ այնտեղ, բալագանի ռեստորանում

նրանց միայն թղթե ժապավենն էր միացնում։ Նրանց աչքերում թափառում էին ծույլ կրակներ։ Ուսանողը օդում թափահարում էր ձեռքը, նույնիսկ ոչ թե ձեռքը, ոչ թե դաստակը, այլ միայն ձիգ և ուղիղ տնկված մատները։ Այդ շարժումը,— ներողամիտ սիրալիր և անփույթ,—վերաբերում էր տարեց պատկառելի տիկնոջը՝ աղջկա մորը կամ մորաքրոջը։ Տիկինը կանգնել էր մի քիչ հեռու, պատրաստվելով հեռանալ, և գլուխն էր օրորում՝ չգիտես կշտամբանքով, ափսոսանքով, թե խրախուսելով։ Նրա գլխարկը մի կողմ էր սահել, և գլխարկի տակից դուրս ընկած մազափնջերը թաց էին։ Ուսանողը խաղաղաբար մռմռում էր.

— Adieu, Frau Mama, adieu![1]

Անդրեյն ու Կուրտը փողոց դուրս ելան։

Հրապարակով հաղթականորեն, գոռգոռալով քայլում էր մի խումբ, մի յոթ հոգի, ձեռք-ձեռքի տված, ամուր շղթա կազմած, աջ ու ձախ երերալով։ Նրանք բարձր երգում էին միասնաձայն.

Die Männer sind alle Verbrecher,
Ihr Herz ist ein finsteres Loch ;
Die Frauen sind auch nicht viel besser,
Aber lieb,
aber lieb
sind sie doch![2]

DICHTUNG UND WAHRHEIT[3]

— Առանց դույզն իսկ ջանք թափելու դու մի հարյուր տարով ետ ես գնում։ Դու այլևս քաղաքակրթության դարում չես ապրում։ Երևակայությունդ հեշտությամբ վերականգնում է անցյալի ամենափոքր մանրամասները։ Դու միայն չես ընդդիմանում նրան, խոշընդոտներ չես հարուցում, ուժով չես քաշում ցած, այսօրվա երեկոյին... Եվ տես,

[1] Գնաք բարով, մայրիկ, գնաք բարով (գերմ.)։

[2] Տղամարդիկ բոլորն էլ չարագործներ են, նրանց սրտերը՝ մութ վիհ։ Կանայք նույնպես ավելի լավը չեն, բայց սիրելի են, սիրելի (գերմ.)։

[3] «Բանաստեղծություն և ճշմարտություն»— Գյոթեի ինքնակենսագրական վիպերգության վերնագիրը։

դու արդեն մի աշակերտ ես, շտապում ես մինչև մութն ընկնելը քաղաք հասնել, դու գիտես, զգում ես, տեսնում ես այն։ Նրա համբավը տարածված էր իշևանատներում և հյուրանոցներում, նրա մասին երգեր են երգում։ Դա գեղեցիկ հին քաղաք է՝ բոլոր արհեստների իր վարպետներով, սուրբ Լավրենտիոսի զարմանահրաշ կիրկայով, որը նույնիսկ Ստրասբուրգի տաճարից պակասը չէ, զմայլելի շատրվաններով, հիանալի շուկայով և ընտիր տապակած նրբերշիկներով։ Ամեն քայլ գցելով դու մոտենում ես նպատակիդ, և ամեն քայլիդ հետ պակասում է հոգնությունդ։ Բարձրանում ես բլուրը, և առջևդ փռվում է քաղաքը՝ բարձր պատերով, աշտարակներով, ծառերով ու ծաղիկներով պարսպված։ Դու տեսնում ես դարբասը, ուզում ես անպայման դարբասից ներս ընկնել, մինչ արևը կանհետանա հորիզոնում։ Դու վազում ես։ Սակայն երեկոյի լռության մեջ հանկարծ կախվում է հուզիչ, թախծալուր սուլոց։ Քեզ ընդառաջ է գալիս բարձրահասակ, նիհար մի մարդ։ Նրա մազերը գզգզվել են, աչքերը կիսաբաց են։ Նա հովվի շվիով մի միալար եղանակ է սուլում և քայլում թեթև, լուսնոտի նման գրեթե սահում է ճամփով։ Սա ի՞նչ է, Անդրեյ, ի՞նչ է։ Նրա ետևը ծառս է լինում ճամփեն, ինչպես ալիքի կատարը, որը չի կարող ափին հասնել։ Այն գորշ է, այդ ճամփան, նրա վրա ինչ-որ էակներ են զեռում։ Անդրեյ, առնետներ են, առնետներ։ Դրանք հոծ զանգվածով տարածվել են ճամփին, մեկը մեկի վրա են բարձրանում անշարժ սև մանրիկ աչքեր, ատամները բացած մռութներ։ Կանգնիր, կա՛նգ առ, չշարժվես։ Նրանք քեզ կշրջանցեն, նրանք ոչինչ չեն տեսնում, նրանք միայն մի բան են ուզում, լսել մարդու մռայլ սուլոցը, որը բներից ու մառանների ծակերից նրանց դուրս է կորզել փողոց, և իր ետևից բերել է դաշտ։ Շտապի՛ր. առնետների վտառի ետևից քաղաքի դարբասները փակում են։ Արևը մայր մտավ։ Դու զովացար, հոգնությունդ անցավ։ Դու քաղաք ես մտնում...

— Դու մտնում ես քաղաք,— շարունակում է Անդրեյը,— ու քեզ անմիջապես շրջապատում են աշակերտների, սպասուհիների երեխաների հուզված դեմքեր՝ այն նույն քաղաքացիները, ովքեր այնքան թնդաձայն քրքջում են երգիչների մրցույթներին և այնքան դառը հեծեծում, տեսնելով մեր

տեր Հիսուսի շարշարանքները շուկայի հրապարակում ցուցադրվող միստերիայում։ Նրանք վախեցած են, նրանք աչքերով խժռում են քեզ, նրանք անպայման ուզում են իմանալ՝ արդյոք լսե՞լ ես այն տարօրինակ պատանու մասին, որ այսօր լուսաբացին հայտնվեց նրանց քաղաքում։ Չէ՞ որ դու այստեղացի չես։ Ու դու անպայման գալիս ես հեռվից և շատ բան գիտես։ Այսպես, ուրեմն, այսօր առավոտյան փողոցներում հայտնվեց մի տղա, որին ոչ ոք չէր ճանաչում։ Նա գունատ է թղթի պես, մաշկը թափանցիկ է, նա նիհար է և այնքան թույլ, որ մի հինգ քայլ էլ չի կարողանում անել։ Նա ունի գեղեցիկ, կապույտ աչքեր, շատ երկար մազեր, որ հավանաբար երբեք չեն կտրվել և բմբուլի պես փափուկ են։ Դատելով հասակից, նա կարող է մի տասնհինգ տարեկան լինել, սակայն մանկան պես անօգնական է։ Նրա հայացքից սոսկում ես՝ այնքան մաքուր, անմեղ է այդ հայացքը։ Հավանաբար այդպես են նայում մեծ նահատակներն ու հրեշտակները։ Սակայն ամենասոսկալին այն է, որ նա ոչ մի խոսք չգիտե, ասես հենց նոր է աշխարհ եկել։ Ահա դու եկել ես ուրիշ քաղաքից՝ Հալլեից, Ֆրանկֆուրտից, իսկ գուցեև՝ հենց Հռենոսից։ Արդյոք որևէ տեղ չե՞ս լսել այդ պատանու մասին։ Ճի՞շտ է, արդյոք, որ մի չարագործ նրան պահել է մութ զնդանում, ու այդ տղան ծնված օրվանից ոչ մի մարդկային դեմք չի տեսել, մարդու ձայն չի լսել։

— Դու էլ արդեն վախեցար,— ասում է Կուրտը Անդրեյի ուսերը գրկելով,— ինքդ էլ այս բարի մարդկանց պես տագնապած ես. քո սրտի զարկերը ներդաշնակեցին քաղաքի սրտի զարկերին, դու ներքաշված ես նրա կյանքի մեջ և ապրում ես այդ կյանքով այնպես, ինչպես եթե այստեղ մեծացած լիներիր...

Բարեկամները գնում են արագ, համաքայլ, ուղիղ, քարերով խիտ սալարկած ճանապարհով։ Երկու կողմերից ձգվում են փարթամ սաղարթներով կարճլիկ խնձորենիները, բեռնավորված կիսահասուն պտուղների դեղնին տվող գնդերով։ Ոտքերը ծածկվել են ճերմակավուն մանր փոշով, սակայն քայլերը դեռևս թեթև են և առույգ։ Առջևում, զառիվայր բլրի ետևը, երկնքում ինչ-որ տեղ կախված է մի թեթև ծխանման ծածկույթ։ Այնտեղ քաղաքն է։ Բարեկամները նայում

են այնտեղ, առաջ, երկնքին, բաց, զզզված գլուխները տնկած։

— Դու շնչում ես այս քաղաքի կրծքով։ Այն քեզ նման պարուրում է քեզ իր էությամբ։ Ինչ-որ կատարվում է այստեղ, կատարվում է նաև քո մեջ։ Դու տեսնում ես հրաշք հրաշքի ետևից... Սուրբ Լավրենտիոսի կիրկայի մոտ խաղացող տղան ասաց... «Սատանան տանի», ու հենց իսկույն սատանան բուսեց. մի ակնթարթ, և տղան թպրտում է նրա թևատակին, ու տղան գետնի տակն է, ու հողի մեջ միայն մի ծակ է։ Մի՞թե քեզ համար միևնույն է, թե սատանան ինչ պոզեր ունի, ինչպիսի պոչ, նրանից ինչ հոտ է փչում։ Եվ մի՞թե վաղ չես տա քաղաք, որպեսզի սեփական աչքերովդ պատին տեսնես այն ձիու սմբակների հետքերը, որին հեծած փախավ ավազակը, թռնելով բերդի փոսի վրայից...

Բարեկամները կանգ առան։ Հենց նրանց ոտքերի տակից ճանապարհը ուղիղ սահում էր դեպի դաշտերի վառ քառակուսիները։ Նոր քաղաքը մութ շրջանով ցցտում էր հինը։ Լայն ու ծանր հինգ աշտարակ հսկում էին շրջադարձը։ Խիտ-խիտ մութ տների վրա, որ միաձուլվել դարձել էին անհաղթ քարե կուրծք, դարերի թաղի նման բազմել էր վարդագույն բուրգը։

— Նյուրնբե՛րգ։— դուրս թռավ Կուրտի բերնից։

— Նյուրնբե՛րգ,— կրկնեց Անդրեյը։

Նրանք կանգնել էին անշարժ, ամբողջ մարմնով առաջ հակված, ինչպես անապատի ճամփորդներ անսպասելի հայտնված ջրհորի առաջ։ Հետո Կուրտը բռնեց Անդրեյի ձեռքերը, դեպի իրեն ձգեց նրան փութկոտ, շտապ շարժումով և նայեց նրա աչքերին, ասես ուզում էր Անդրեյին ներարկել իր հիացմունքն, ու նրանք համբուրվեցին։

— Հավե՛տ,— ասաց Անդրեյը։

— Հավե՛տ։

Ձեռք-ձեռքի տված, նրանք անբարբառ մի ճիչ արձակեցին ու սլացան ցած, քաղաք։

Երեկո էր։

Իր ձեղնահարկից ջանդուղքով իջնելիս Կուրտը մի սպայի հանդիպեց։ Սպան երիտասարդ էր, աշխույժ, նրա կեցված-

քի մեջ անկաշկանդություն կար։ Նա ձեռքը գլխարկին տարավ, ողջունեց.

— Չէի՞ք ասի արդյոք, թե որտեղ է ապրում նկարիչ Վանը։

— Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել։

Սպան մի աստիճան էլ վեր բարձրացավ, կանգնեց Կուրտին դեմ-հանդիման, ժպտաց ու գրեթե բացականչեց.

— Ախ, ուրեմն դուք ինքնե՞րդ եք։ Ճանաչեցի ձեզ ինքնանկարից. հիշո՞ւմ եք, այսպիսի փոքրիկ մատիտանկար է։

— Դուք... դուք— փնթփնթաց Կուրտն ու հանկարծ շրջվեց, որպեսզի սանդուղքով իջնի։ Սակայն իսկույն էլ միտքը փոխեց ու երկու աստիճան վեր թռավ։ Հետո կրկին ցած նետվեց, նայեց սպային, սեղմեց նրա մեկնած ձեռքն ու պարզորոշ, զինվորավարի պատասխանեց.

— Շատ ուրախ եմ, պարոն լեյտենանտ։

— Դուք, կարծես, շտապո՞ւմ եք։ Խնդրում եմ ինձ կոչել պարզապես ֆոն Շենաու։ Գուցե միայն մի քանի բոպեո՞վ... Ձեզ չեմ ուշացնի։ Եվ խնդրեմ՝ պարզապես ֆոն Շենաու։

— Շատ ուրախ եմ,— կրկնեց Կուրտն ու ձեռքով վերև ցույց տվեց։

— Ես ձեզ առանց դժվարության գտա,— ասում էր սպան սանդուղքով բարձրանալիս,— թեև իմ գործակալը, որի հետ մինչև հիմա գործ ունեիք, հավատացնում էր, թե ձեր արվեստանոցն ուղղակի անհնարին է գտնել։ Հա՜-հա՜։ Վախենում եմ, որ այդ բարի մարդն անպայման ուզում է իմ և ձեր միջև անջրպետ պահպանել։ Ի դեպ, ասացեք, վերջին անգամ նրանից ի՞նչ գումար եք ստացել ավանսի կարգով։

— Հինգ հարյուր մարկ։

— Տեսա՞ք։ Դա նրան պատիվ է բերում, հա՜-հա՜։

Կուրտը դուռը բացեց և սպային առաջ թողեց։

— Սա՞ է ձեր արվեստանոցը։ Տեսա՞ք։ Ահա թե որքան համեստ են իսկական մեծ մարդիկ։

— Ես շատ զգացված եմ, պարոն ֆոն Շենաու, սակայն...

— Իրավ, չեմ կատակում։ Ես կուզեի ձեզ հետ բարեկամանալ։ Այն բարի մարդը, որի հետ գործ ունեիք, ձեզ հավանաբար պատմել է, թե ինչպես եմ ձեր տաղանդը գնահատում։ Կուզեի ավելի պարզ լինել, առանց ձևականությունների։ Շատ ուրախ եմ, որ ձեզ գտա։ Ես ընդհանրապես սիրում եմ նկարիչներին։ Հակադրության ոգով, մեզ մոտ ամեն ինչ այնքան բարդ է. ներկայացչություն, վարվելակարգ, իսկ դուք՝ պարզ եք։ Ասացեք։ Սա ձեր նոր կտա՞վն է։ Դարձրեք իմ կողմը, հապա դարձրեք, ահա... ահա այսպես։ Սա ի հաշիվ ավանսի՞ է. ի՞նչ։ Հա՜-հա՜։

— Ներեցեք, պարոն ֆոն Շենաու, բայց ես այս նկարն արդեն խոստացել եմ ուրիշ անձնավորության... այսինքն, Նյուրնբերգի քաղաքային մագիստրատին...

Սպան նստեց բազկաթոռին ու առաջ հակվեց, արմունկը հենելով ծնկին։ Նրա դեմքը նեղացավ, լայն ճակատը, որի վրա կարմիր գիծ էր թողել գլխարկը, մեծացավ, բերանը պարզորոշ ու խիստ գծագրվեց։ Նա նայում էր նկարին։

— Ի՞նչ ասացիք,— մոլտաց նա։

Հետո հայացքը կտրեց կտավից։

— Ինձ թվաց, թե դուք մի անհեթեթ բան ասացիք, պարոն Վան։

Կուրտը քայլեց դեպի հյուրը, նրա ձայնը ծանրացավ։

— Ես պատրաստվում էի երախտահատույց լինել ձեզ, պարոն ֆոն Շենաու... Ուզում էի նաև վերադարձնել ձեր ավանսը...

Սպան արագ վեր կացավ, ձեռն առաջ նետեց կտրուկ, մարզիկի նման.

— Տվե՛ք։

— Ցավոք սրտի, ներկա պահին... ես...

— Դուք հիմարություններ եք դուրս տալիս, սիրելի Վան։ Ես ձեզ հնարավորություն եմ տալիս աշխատելու։ Չեմ շտապեցնում։ Կարող եք երեք տարին մի նկար նկարել։ Խնդրե՛մ։ Ձեզ ապահովում եմ։ Ձեր առջև ոչ մի պայման չեմ դնում, բացի մեկից. այս արվեստանոցից նկարները միայն մի ճանապարհ ունեն՝ դեպի իմ հավաքածուն։

— Խայտառակությո՞ւն է։

Սպայի բերանը պարզորոշ ու խիստ գծագրված է, նրա բառերն, ինչպես բերանը, պարզորոշ են ու խիստ։

— Պարոն նկարիչը հասկանում է, որ նրա հետ սպա է

խոսում։ Սպան առաջարկում է, նկարիչը համաձայնվում է կամ մերժում։ Դուք մերժո՞ւմ եք։

— Տե՛ր աստված։ Չէ՞ որ դուք ինձ զրկում եք գլխավոր բանից, դուք ինձնից խլում եք...

— Ես ձեզ պատիվ եմ անում։ Դուք ծանո՞թ եք իմ հավաքածուի ցուցակին։ Վան-Դեյկ և Ռուբենս, ֆրանսիացիները՝ մինչև Սեզանը, գերմանացիները՝ մինչև Կլինգերը։ Ես ձեզ մի ամբողջ պատ եմ հատկացրել։

— Ինձ ոչ ոք չի ճանաչում։ Ես աշխատում եմ... աշխատում եմ...

Կուրտը ձեռքը զցում է բազմոցի թիկնակին, ոտքերով հրում նկարների ենթաշրջանակները, կերկերուն ձայնով, ասես ծարավից պապակած, ասում.

— Ես ձեզ համար եմ աշխատում։

— Ասացեք, խնդրեմ, Վա՛ն, Վա՛ն, դուք խելագար եք, վայել հանճարին։ Ուզում եք քայլ առ քայլ ձեր ճանապարհը հարթել, իսկ ես խոսք եմ տալիս ձեր ապագան մի շարժումով գլուխ բերել։ Ձեզ ոչ ոք չի՞ ճանաչում։ Ես այնպես կանեմ, որ ամբողջ աշխարհը ձեզ կճանաչի։ Ես այդ կանեմ։

Կուրտը նետվում է բազմոցին։

— Սակայն այս կտավը... հենց սա։ Խնդրում եմ։ Ես ուզում եմ սա տեսնել քաղաքային մագիստրատում։ Գերմանական թանգարանի բակը. սա մերն է, Նյուրնբերգյան, մեզ մոտ...

— Վան, բավական է անհեթեթ բաներ ասեք։ Ես չէի ցանկանա ձեզ թողնել վատ տրամադրության մեջ։ Բացի այդ...

Սպայի գլուխը դարձյալ մեծանում է, գլխարկի թողած կարմիր հետքը գունատվում, անհետանում։ Սպան նայում է նկարին։

— Լավ է։ Շատ լավ։ Որքան ուրախալի է հետևել ձեր ոճին։ Գիտեք...

Սպան վեր է կենում, մոտենում է Կուրտին, բռնում նրա ուսերից ու նայում է դեմքին, նայում ինչպես զինվորին՝ խրախուսանքով։

— Գիտեք, դուք ձեր սերնդի նկարիչներից լավագույնն եք։ Չէ՞ որ ինձնից այնքան էլ մեծ չեք, այնպես չէ՞։

Հետո կրկին հայացքը պտտեցնում է սենյակում, գրպանից հանում է այցետոմսը, վրան մի քանի խոսք է գրում ու առաջվա նման առույգ ասում.

— Ես այստեղով անցնում էի, այդ առիթով մտա։ Ցավոքանց ուրախ եմ, որ ձեզ հանդիպեցի։ Ահա, վերցրեք, գուցե պետք գա։ Եվ ցտեսություն։ Ձեզ անպայման կհրավիրեմ ինձ մոտ, Շենաու։ Կտեսնեք, թե ձեզ ինչ պատ եմ հատկացրել։ Անպայմա՛ն։ Ցտեսություն։

Սպան սեղմում է նրա ձեռքը, առույգ և ուրախ խշխշացնում է համազգեստն, աղմուկով փակում է ետևից բարակ ապակյա դուռը։

Կուրտը նստած է անշարժ։

Ներքևից, փողոցից լսվում է ֆաբրիկաներից վերադարձող բանվորների երեկոյան աղմուկը։ Լսվում է, ինչպես են սալարկի վրա խշշում հեծանիվի անվադողերը։ Սենյակի անկյուններում իրիկնաշաղն էր լցվում։ Նկարակալին դրված կտավը կարմիր է արտացոլում։

Կուրտը ձեռքի մեջ զգում է այցետոմսը։ Մոտեցնում է աչքերին։

Մատիտով.

Վճարեք 200 ի հաշիվ վարձի՝ «Գերմանական թանգարանի բակը» նկարի համար։

Տպագրական ներկով.

Այլտենանտ ֆոն ցուր Մյուլեն-Շենաու (մարկգրաֆ)

Այն ժամանակ Կուրտը վեր է թռչում բազմոցից, պատռում է այցետոմսը, վազում է պատուհանի մոտ և բռունցքը սեղմած, սպառնում՝ նայելով ներքև, դեպի փողոց։

Ծանր շնչով բերնից դուրս է սողում ու ֆշշում.

— Ա-տո՛ւմ եմ։

Ռոզենաուն գտնվում է ցածրավայրում, և Ռոզենաուում կա լճակ։ Նրա խոնավությունից, հյութեղ կանաչից ու ուռենիների խիտ սաղարթից Ռոզենաուում զով է։

Եվ երբ իջնում էր մթնշաղը ու քաղաքը դառնում էր հեղձուկ, մարդիկ գնում էին Ռոզենաու։

Քանզի այդ ամառ Բավարիայի գլխով ամպրոպներ էին անցնում։

Դրանք կուտակվում էին և գիշերվա դեմ կատաղի թափով պայթում քաղաքների, ճանապարհների, դաշտերի վրա։ Լուսաբացին երկինքը պարզվում էր, ցերեկները տոթ էին, ծանր, երեկոյան կուտակվում էին ամպերն ու գիշերը, ամպրոպից պատռված, թափվում երկրի վրա...

Մարդն իր ուղղումները մտցրեց բնության խելահեղությունների մեջ։ Շանթարգել կանգնեցրեց, կոյուղի անցկացրեց, հովանոց հորինեց։

Օ՜, այդ հպարտ մարդը։

Երբ առաջին անձրևակաթիլը պաղ նախագուշակի պես ընկնի գետնին, մարդը ձեռքով կշռոտափի ճաղատը, հովանոցը կբացի, և նրա դեմքին շփոթմունքի հետք իսկ չի երևա. հովանոցի տակ նորից քայլում է բնության արքան։

Ոչ մի շփոթմունք ընդհանրապես։ Ո՜չ մտահոգություն, ո՜չ շտապողականություն, ո՜չ իրարանցում։ Կյանքը ներդաշնակություն է։ Եվ ներդաշնակության հայրենիքն է՝ Բախի, Մենդելսոնի, Լիստի, Հայդնի հայրենիքը։

Ամեն քայլափոխում կհանդիպես այնպիսի մարդու, որ ի վիճակի չէ c-dur-ը զանազանել a-moll-ից։ Սակայն ամեն մարդ գիտի, որ Հայդն և Մենդելսոն Գերմանիան է տվել։ Եվ ամեն ոք, ինչպես ուղղափառ հելլեն, հավատում է, որ երաժշտական գամմայի յոթ տոները համապատասխանում են սպեկտրի յոթ գույներին։

Կյանքը մի ներդաշնակություն է, որի մեջ յուրաքանչյուր սիգարը՝ որոշակի տոնայնություն է։

Տանիքների նարնջագույն կղմինդրը, օդային զանգի կոճակը, երշիկավաճառուհու կաշվե բազկակալը, մատուցող կնոջ գլխի սանրը՝ որոշակի, միայն նրանց հատուկ, միայն նրանց կողմից հաղորդվող հաճելի ձայներանգ է։

Դանակով խփեցեք բեռլինցի տեղադրիչի սուրճի գավաթին։ Գավաթը այն նույն ձայներանգը կարձակի, ինչպիսին արձակում է Հաննովերի կամ Դրեզդենի, Շտետտինի, Լյուբեկի ուղածդ տեղադրիչի սուրճի գավաթը, Հերլիցի շտադտրատի թանաքամանը փոխեք Բաուտցենի շտադտրատի թանաքամանի հետ։ Պատվելի քաղաքացիների մտքովն իսկ չի անցնի, որ իրենց գրիչներն ուրիշի թանաքամանի մեջ են թաթախում։

Բաուտցենը ո՞րն է, Հերլիցը ո՞րն է։ Հապա քառասուն կիլոմետրը, որ բաժանում է այդ հարևան քաղաքները։

Օ՜, թեկուզ չորս հարյուր, հինգ հարյուր, նույնիսկ հազար կիլոմետր լինի։

Չէ՞ որ դրանք շտադտրատների թանաքամաններն են։ Ոչ թե պրոֆեսորների, քահանաների, սպաների։

Կյանքը ներդաշնակություն է։

Եվ ապրել՝ նշանակում է չխախտել ներդաշնակությունը։ Ամեն հասակում և ամեն ժամ, ամեն տեսակի կոչում և աստիճան ունենալու դեպքում, յուրաքանչյուր հասարակական միջավայրում հնչել քեզ հատուկ, քեզ տրված հաճելի ձայնեբանգով...

Այսպես, այդ ամառը, երբ Բավարիայի գլխով ամպրոպներ էին անցնում, և մթնշաղին քաղաքը դառնում էր հեղձուկ, երեկոները մարդիկ գնում էին Ռոզենաու, լճի զովը։

Տղամարդիկ հանում էին բաճկոնները, ժիլետի կոճակից կախ տալիս պանամաները, գլխարկները (հատուկ պահելի համար՝ Տիցի անվճար մրցանակ), վերցնում էին հովանոցներն ու գնում։

Եվ նրանց առաջին իսկ քայլի հետ, հենց որ ոտքը գցում էին, հանում բաճկոններն ու ժիլետի կոճակներից կախում գլխարկները, ամեն ինչ կատարվում էր ներդաշնակության սահմանած ռիթմով և չափով։

Ահա այդպես՝ տղամարդիկ։

Նրանց ետևից՝ համերաշխորեն. կանայք, դուստրերն ու զոքանչները։ Բոլորը սպիտակ բլուզներով, ռիդիկյուլներով, հովանոցներով։

Իսկ առջևից՝ որդյակները՝ առանց գլխարկի, «Ռոբեսպիերը» վերնաշապիկները կարճ անդրավարտիքների մեջ դրած։ Դեռ սրանք առանց հովանոցների էին։ Ամպրոպի առաջին իսկ

որոտից՝ վազքով տուն, շտապ, շտապ։ Իսկ «Ռոբեսպիերները» կշորանան ու կարդուկվեն վաղը...

Սեղանի շուրջ նստում էին հիմնավորապես, երկար։ Անսասան լսում էին նվագախմբին։ Ծոր էին տալիս Շտրաուսը, խանդաղատվում։

— Լավ կոմպոզիտոր է, Prosit.

Ֆելդֆեբել-դիրիժորը զեկավարում էր հատու, ինչպես շքերթի ժամանակ։ Ծափահարություններից շրջվում էր՝ մեկ, երկու, երեք անգամ ու գլուխ տալիս, որքան որ թույլ էին տալիս զինվորական կանոնադրությունն ու օձիքը։

Ցլեյտահարը վեր էր կենում, փոխում ցուցանակ-համարը՝ «4»։

Եվ իսկույն յուրաքանչյուր ընտանիք, նահապետական հեռուողականությամբ, նայում էր ծրագիրը.

— Չո՞ր։ Շուման, պոպուրի երգերից։

— Ա՜խ, Շուման։

— Այո, երգերից...

— Հիանալի երաժիշտ է, թեև՝ ավստրացի՞ է։ Prosit։

Ամեն ինչ այս ռիթմով, այս չափով։

Սակայն գիշերը, մինչ ամպրոպի թուխպը կկախվեր քաղաքի վրա ու անձրև կթափվեր, սովորական և հարմար ռիթմը խախտվեց։

Այն ձայներանգների մեջ, որ հատուկ էին, ավանդված և ճշտապես ընդունված Ռոզենաուի զովից, Շտրաուսից և Շուման-ից հետո, մխրճվեցին բառեր, որ պատռեցին ներդաշնակությունն, ինչպես ամպրոպը՝ տոթը։

Մարդիկ, հորդ անձրևից մտրակված, խմբվել էին խաչմերուկներում, ինչպես քամուց խփված թռչուններ, ինչպես որոտից խլացած ոչխարներ։

Բացում-փակում էին հովանոցները։ Արձակում-կոճկում էին օձիքները։ Հագնում-հանում էին գլխարկները։

Սակայն չէին շարժվում, սպասում էին կայծակի։

Եվ երբ այն գողավարի այս ու այն կողմ էր նետվում տանիքների գլխին, մարդիկ աչքները գամում էին պատերին փակցված հեռագրերի թղթիկներին, որպեսզի կրկին և կրկին անգամ կուրանան այդ խոսքից՝

ԷՐՑԻԵՐՑՈ՛Գ

Հետո տեղից պոկվում էին ծեծված, ջարդված, որոտից ու հեղեղից խլացած և դարձյալ միանում խաչմերուկում կուտակված բազմությանն ու դարձյալ կուրանում.

ԷՐՑԻԵՐՑՈ՛Գ

Եվ դարձյալ չէին շարժվում. սպասում էին կայծակի։

Եվ այսպես յուրաքանչյուրը, ամեն տարիքի, ամեն կոչման, ամեն տեսակի հասարակական խավից։

Քանի որ այս գիշերվանից, որ կուրացրեց

ԷՐՑԻԵՐՑՈ՛Գ

խոսքով, հին ներդաշնակությունն այլևս չկար, և մարդիկ շփոթված, նետվեցին նորը որոնելու։

Անդրեյը, մինչև վերջին թելը թրջված, ծանոթ ծայրամասերով մի կերպ հասավ Կուրտի ապրած տանը։ Քամու պոռթկումներից մարում և հարություն էին առնում գազի լապտերները։ Անդրեյը լուցկին վառեց, գտավ զանգի կոճակը։ Մի երեք րոպեից հետո վերևից ներքև սահեց թույլ մի ձայն.

— Դո՞ւք եք, հերր Վան։

Անդրեյը դռնից ետ վազեց փողոցի մեջտեղը.

— Ներեցեք անհանգստության համար, Ֆրաու Մայեր։ Մի՞թե Կուրտը տանը չէ։

— Ահ, հերր Ստարցով։ Բարի երեկո։ Մենք կարծում էինք, թե հերր Վանը ձեզ հետ է։ Նա վաղուց է գնացել։ Նրա մոտ մի սպա էր եկել։

— Սպա՞։

— Երիտասարդ սպա։

— Եվ Կուրտը նրա հետ գնաց։

— Ոչ։ Սպան ավելի վաղ գնաց։

— Հապա Կուրտը որտե՞ղ է։

— Իրավ, դուք ինձ վախեցնում եք, հերր Ստարցով։ Ես ի՞նչ գիտենամ, թե նա ուր է կորել։ Նա գնալիս դուռն այնպես շխկացրեց, որ խոհանոցում ամանները վեր-վեր թռան։

— Ներեցեք անհանգստացնելու համար, ֆրաու Մայեր։ Բարի գիշեր։

— Բարի գիշեր, հերր Ստարցով։

Ձեղնահարկի սպիտակ կետն անհետացավ, պատուհանը փակվեց։ Անդրեյը մի քանի վայրկյան անշարժ կանգնեց։ Հետո կամացուկ ասաց.

— Սպա։

Ապա դանդաղ ետ գնաց այն նույն ծայրամասերով, որոնք նրան մինչև Կուրտի բնակարանն էին հասցրել։

Տանը նա հանվեց, շոր սրբիչով շփեց կուրծքը, մեջքը, փորը, ոտքերը, սպիտակեղենը փոխեց, բացեց պատուհանը, փաթաթվեց ու անմիջապես քնեց, ասես գահավիժեց մի վիհ։

Այդ վիհում նա պարզորոշ տեսավ.

Անհոն, թերևս ձյունածածկ տարածության մեջ կախված է մի մարդկային գլուխ։ Շուրջն ամեն ինչ լուռ է և անշարժ։ Հանկարծ այդ դատարկությունից հառնում է մի ուսանող՝ կորպորանտական գլխարկը հարթ, վարդագույն ծոծրակին դրած։ Գլխի շագանակագույն աչքերը բաց են, բիբերը հառած են ուսանողին։

— Adieu, Frau Mama!— ասում է գլուխն ու աչքով անում ուսանողին։ Այն ժամանակ ուսանողը ետ է վազում, ոտքերը չոռում է ու ձեռքը բարձրացնում։ Կտորից գնդակնե՞րը որտեղից է գտել։ Առաջին հարվածն անցնում է կողքով։ Երկրորդը՝ նույնպես։ Գնդակները գլխից կես սանտիմետր աջ ու ձախ են թռչում։ Գլուխը հայացքը դարձնում է Անդրեյին և բացում կապույտ շրթունքները, որպեսզի մի բան ասի։ Սակայն մի պահ գնդակը ծածկում է գլուխը, և այն սկսում է երերալ ու ցնցվել, ասես մտասուզված, հետո հանկարծ ետ է ընկնում ծոծրակին ու թռչում ուր որ ցած։ Եվ նույն պահին անհետանում է նաև ձյունի անսահմանությունն, ու Անդրեյի առաջ ցցվում է հսկայական մի քարե սանդուղք ու գլուխն սկսում է այդ սանդուղքով ցած գլորվել քրոնոմետրի համաչափությամբ, հերթով խուլ կերպով զարնվելով յուրաքանչյուր աստիճանին մերթ դեմքով, մերթ ծոծրակով.

Բո՛ւմ-բում
Բո՛ւմ-բում...

Սակայն նրա հայացքը շարունակ սևեռված է Անդրեյի աչքերին, թեև չէ՞ որ պետք է լինեն, պետք է լինեն պահեր, երբ Անդրեյը չի կարող, չի կարող տեսնել այդ հայացքը.

Բո՛ւմ-բում
Բո՛ւմ-բում...

Անդրեյը տեղից վեր թռավ։ Ամբողջովին ողողված էր քրտինքով, բերանում էլ ինչ-որ աղի շորություն էր զգում։ Նա գլուխը ձեռքերով սեղմեց։ Ականջ դրեց։ Հնչեղ հարվածները դղրդալի լսվում էին փողոցում։ Անդրեյը նետվեց դեպի պատուհանը, վարագույրը բարձրացրեց։

Ամպրոպից հետո վաղորդյան զովության մեջ թնդում էին բազմաթիվ պայտեր։ Օդում, հեծելազորային նիզակների ծայրին ծածանվում էին երկնագույն դրոշակները։ Փայլեցրած մուգ կանաչ համազգեստները, տոգած՝ լավ, լայնաթիկունք մարմիններով, ձգվում ու վեր-վեր էին թռչում թամբերի վրա։ Սաղավարտների ծայրի սև լաքե քառակուսիների վրայով սահում էին վաղորդյան երկնքի տարտամ ստվերները։

Հեծելազորի առջևից, սևաթույր ձիերին հեծած, փողերի պղնձի տաք փայլով ողողված շարժվում էր գնդի նվագախումբը։ Մեծ թմբուկը դղրդացնում էր քնած փողոցների հանգիստը.

Բո՛ւմ-բում
Բո՛ւմ-բում...

Անդրեյը նստեց լուսամուտագոգին և ձեռքերով երեսը ծածկեց։

Մարդիկ հիշեցին, որ աշխարհում գոյություն ունեն թագավորներ։

Նրանց միանգամայն ռեալ կեցությունը հանկարծ ակնհայտ դարձավ այն բանից հետո, երբ շլացուցիչ

խոսքը ներխուժեց ներդաշնակության մեջ, խախտեց ռիթմերը, աղավաղեց չափսերը, այլանդակեց ձայներանգները։

Բանից պարզվեց, որ թագավորներն ապրում են ոչ միայն ամսագրերի, հանդեսների էջերում և լուսանկարիչների ցուցափեղկերին։ Բանից պարզվեց, որ նրանք ոչ միայն ճամփորդում են, ձմեռային աթոռանիստից տեղափոխվում ամառային, ժպտում դիմանկարներում և ամեն տարի տոնում անվանակոչությունները։ Բանից պարզվեց, որ թագավորները լինում են ոչ միայն պատմության և աշխարհագրության մեջ, այսինքն՝ ըստ էության դպրոցական նստարանին։ Ո՞չ։

Թագավորներն ապրում էին իրականության մեջ, ապրում իսկապես։ Թագավորներն իրոք ունեին գանգեր, որոնք գընդակներին վերաբերվում էին ճիշտ այնպես, ինչպես նրանց հպատակների գանգերը։ Եվ թագավորներն այնքան լավ էին բղավում, որ նրանց ձայները լսվում էին աթոռանիստից շատ հեռու ընկած վայրերում։

Օ, տե՜ր աստված, հանկարծ որքան շատ թագավորներ հայտնվեցին։ Ամեն օր, ամեն ժամ նրանք ուտիճների նման դուրս էին սողում իրենց նստավայրերից։ Ի վերջո նրանք իրենցով ծածկեցին թերթերի բոլոր անկյունները, և եկավ այդ արքայական անկարգությանը վերջ դնելու ժամանակը։

Բավ է ականջ դնել այս տարաձայնությանը, բավական է գլուխ կոտրել այս խառնաշփոթի վրա, բավական է աչք փչացնել ամեն տեսակի նոտաների, հուշագրերի, հրամանների և մանիֆեստների վրա, բա՜վ է։

Մի՞թե պարզ չէ արդեն, թե մեզ ուր է կանչում պարտքի զգացումը։

Ենթարկվեցեք այդ զգացումին՝ պարտքի զգացումին։ Միայն դրան, ուրիշ ոչնչի։

Այն ձեզ կտանի փողոց, ամբոխի մեջ, և ամբոխը ձեզ կառնի իր ուսերին, ինչպես ալիքն է տաշեղն իր կատարին բարձրացնում։ Ու դուք կնետվեք դեպի սերբերի առևտրական հյուպատոսի տունը, և պարտքի զգացումը ձեր ներքին օրգաններից զայրույթի ճիչ դուրս կմղի։ Եվ հետո դուք կսկսեք փայտով խփել հյուպատոսարանի փակ շքամուտքին, մինչև

որ շուցմանը մոտենա ձեզ ու բացատրի, թե սխալվում եք, եթե կարծում եք կարգապահությունը թույլ է տալիս դռները փչացնել։ Այն ժամանակ պարտքի զգացումը ձեզ փողոցներով կքշի դեպի Իտալիայի առևտրական հյուպատոսի դուռը, և դուք կերգեք ազգային հիմնն ու կբղավեք «Viva Italia», մինչև որ շուցմանը դարձյալ մոտենա ձեզ ու խորհուրդ տա տուն գնալ, ասելով, որ մոտենում է ոստիկանական ժամը, ու աղմուկին պետք է վերջ տալ։ Ահա այսպես, որքան էլ պարտքի զգացումն ու խոպոտած կոկորդը մեղմեն ձեր ավյունը, դուք, այնուամենայնիվ, կշարունակեք բղավել ու զայրանալ, վրդովվել, քանզի՝ մի՞թե կյանքն այլևս կարող է նախկին ներդաշնակությամբ հնչել թարմացնող ամպրոպից հետո, մի՞թե վիճակված չէ զգալ երկար սպասված հիանալի փոփոխությունը. մի՞թե դարձյալ պետք է լինի օրհնյալ, ծանր, ներդաշնակ խաղաղությունը։ Օ, երբե՛ք։ Ոչ մի դեպքում, փոփոխությո՛ւն, փոփոխությո՛ւն, փոփոխությո՛ւն։

Մենք պահանջում ենք, մենք ուզում ենք, մենք տենչում ենք փոփոխություն։

Արդ, անսացեք պարտքի զգացումին։

Ամբոխը գաղաղել էր սերբերի առևտրական հյուպատոսարանի շքամուտքի առջև, և ամբոխի մեջ էին Անդրեյն ու Կուրտը։ Սակայն նրանք իրար չէին տեսել։ Քանզի, եթե փողոցի երկու կողմերի մեջ ամփոփված բազմությունն ընդունենք որպես ուղղանկյուն, ապա Անդրեյը գտնվում էր անկյունագծի մի կողմում, իսկ Կուրտը՝ մյուսում։ Եվ անկյունագծի այդ մյուս ծայրն ընկնում էր հենց հյուպատոսարանի շքամուտքի դիմացը, իսկ առաջինը՝ այնտեղ, ուր կանգնած էին մարդիկ, որոնք համակված չէին պարտքի զգացումով կամ էլ ի բնե զուրկ էին այդ զգացումից։

Քաղաքների փողոցներում ժողովրդական զանգվածների մեխանիկան իր օրենքներն ունի, և այդ օրենքներն, իհարկե, չեն կարող խախտվել այնպիսի մակերեսային երևույթներով, որպիսին է մարդկային բարեկամությունը։

Եվ երբ ամբոխը շրջվեց ու գնաց ետ, դեպի Իտալիայի առևտրական հյուպատոսի տունը, Անդրեյը հայտնվեց թափորի առջևում և գլխավորեց այն մինչև առաջին նրբանցքը։

Այնտեղ նա նետվեց փողոցի անկյունն ու ծայրամասերով գնաց Կուրտի մոտ։

Ֆրաու Մայերից իմանալով, որ նրա կենվորը առավոտից տուն չի եկել, նա գնաց Կուրտի սենյակը, սեղանին մի թղթի կտոր գտավ և ձեռքն ընկած դարչնագույն պաստելամատիտով հաստ տառերով գրեց.

ԿՈՒՐՏ, ՔԵԶ Ի՞ՆՉ Է ՊԱՏԱՀԵԼ։ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ ԵԿԱ։ ԿԳԱՄ ՎԱՂՆ ԱՌԱՎՈՏՅԱՆ։ ՈՒՂՂԱԿԻ ՏԱՆՋԱՀԱՐ ԵՄ։

ԱՆԴՐԵՅ։

Հաջորդ օրը արեգակը նախորդ օրվանից երկու և կես բոպե ուշ ծագեց։ Ուրիշ որևէ բանով այգաբացն աչքի չընկավ։

Ինչպես միշտ, առավոտյան յոթի մոտ փողոցներում հայտնվեցին հեծանվորդները՝ պարկերն ու զամբյուղները մեջքներին։ Անվադողերը խշխշացնելով, նրանք Կուրտի պատուհանների տակով շարժվում էին դեպի աջ ու ձախ։

Նրանք, որ դեպի աջ էին շարժվում, իրենց թամբին տանում էին Իոհան Ֆաբերի բանվորներին։

Ինչպես միշտ, բանվորներն իրենց հեծանիվները թողեցին լայնածավալ ավտոկայանում, կանգնակների վրա, և բարձրացան հանդերձարան։ Այստեղ յուրաքանչյուրը բացեց իր պահարանիկը՝ բանվորի ազգանունով և համարով, որն ուներ իր առանձին փականքը, հանեց բաճկոնը, բազկակալները, ցելյուլոիդի օձիքը՝ կրծքակալով, և այդ ամենը պահարանում կախելով, հագավ քաթանե բլուզը։

Ժամը յոթին բոլորը կանգնած էին իրենց տեղերում։

Ժամը յոթին վարպետ Մայերը անցավ երկրորդ հերթափոխին մշտավառ վառարանի մոտ։

Չափիչ ապարատները, ճառագայթիչ հրաչափերը գտնվում էին հարևան շենքում, ուր ցուցանակների, աղյուսակների և չափիչների առջև նստած էին անշարժ մարդիկ, որոնք հատուկ ուժաչափի վրա մի խազով ավելի էին սեղմում, քան սովորական վարպետները։ Օդալարերը, զանգերը և հեռախոսներն այդ մարդկանց միացնում էին Մայերի հետ, և նա կատարում էր նրանց հրամանները, ինչպես ծովայինը՝ լոցմանի աշտարակի ազդանշանները։

Նա ազոտ պատկերացում ուներ հարևան շենքում հրաչափերի առջև նստած անշարժ մարդկանց հաշվումների մասին։ Գիտեր միայն նրանց կամքով ծագող ազդանշանները, և ըստ ազդանշանների կարող էր վստահորեն ասել, թե որ համարի գամիկ է թրծվում վառարանում։

Նա հավատում էր լոցմանի աշտարակին, ու նաև այն բանին, որ այնտեղ՝ դիտանցքների, պտուտակների, բետոնե երկաթապատ պատի ետևում կա մի տարածություն, անունը վառարան, որը կարելի է տաքացնել մինչև 1300 աստիճան։

Մինչև 1300 աստիճան ըստ Ցելսիուսի։

Նա՝ վարպետ Մայերը, հավատում էր դրան։

Ամեն օր, կեսօրին բանվորները մոտենում էին լվացարանին, պատշաճը մատուցում ֆարրիկայի օճառին և սրբիչներին, հագնում ցելյուլոիդի օձիքներն ու բազկակալները և գնում ավտոկայան՝ հեծանիվները վերցնելու։

Այդ օրը նրանք լվացարանին մոտեցան առավոտյան ժամը տասին և հեծանիվները չվերցրին։

Առավոտյան ժամը 10-ին մշտավառ վառարանի շենքը մտան երկու մարդ։

— Ահա թե ինչ, Մայեր,— ասացին նրանք,— մենք այսօր փողոց ենք գնում։ Մենք դեմ ենք պատերազմին։ Գնանք մեզ հետ։

— Դեմ եք պատերազմի՞ն,— կրկնեց Մայերը։— Այդ լավ է։ Սակայն իմը՝ վառարանն է։

— Ճիշտ է, Մայեր, քոնը վառարանն է։ Բայց մենք կարծում էինք, թե դու, դրանից բացի, նաև գլուխ ունես...

Մայերի հոնքերը վեր թռան, և նա ծամելու այնպիսի շարժում արեց, ասես բերանում չիբուխ կար։

— Բայց չէ՞ որ ձեզ ասում եմ, ես էլ եմ դեմ։

— Դեհ, ուրեմն, գնանք։

— Հապա վառարա՞նը։

— Ուրեմն արձակիր բանվորներիդ։

Մայերը քաշվեց անկյունը, գրպանից հանեց ծխախոտն ու ցածր, թավ ձայնով մռթմռթաց.

— Ես ոչինչ չգիտեմ...

Իսկ մի քառորդ ժամ անց, գզգզված մազերով, կալենկորե խալաթ հագած մեկը ներս ընկավ ու ձայն տվեց Մայերին.

— Մայեր, դուք այստե՞ղ եք։

Շփոթված ժպտաց ու անմիջապես փողոց դուրս թռավ։

Այն ժամանակ Մայերը մոտեցավ հեռախոսափողին ու հանգիստ ասաց.

— Ինձ մի երկու հոգի ուղարկեցեք օգնության։ Իմանք չգիտեմ ուր են կորել, գրողը դրանց տանի...

Իսկ մի քառորդ ժամ հետո, այն մարդուն, որ ֆաբրիկայի դարբասից դուրս էր տանում՝

ՄԵՆՔ՝ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐՍ, ԴԵՄ ԵՆՔ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

պլակատը, մոտեցավ ոստիկանական հրահանգիչը, պլակատի կոթը նրա ձեռքից վերցրեց ու այն տալով շուցմանին, ասաց.

— Այս զիբիլը տարեք տեղամաս։

Այդ մարդու ետևում, որի ձեռքից պլակատն առան, ծփում էր ոչ հոծ, անկանոն բազմությունը։ Հրահանգչի ետևում, ասես սալակի վրա գծված ձգվում էր շուցմանների համազգեստների ուղիղ գիծը։ Մոտ մի բոպե բազմությունը նայում էր համազգեստներին։ Հետո այն սկսեց նոսրանալ, հետո հալվեց, և վերջին մարդը, նա, որը պլակատը փողոց էր դուրս բերել, լուռումունջ վերադարձավ ֆաբրիկայի բակն ու ետևից փակեց շուգունե դարբասը։

Դա տասնմեկից քառորդ պակաս էր։

Եվ այդ օրը Անդրեյը երրորդ անգամ մոտեցավ Կուրտի ապրած տանը։

Նա կանգ առավ դռան մոտ՝ շունչ առնելու։ Հայացքն ընկավ ճմրթված թղթի կտորին, որ ընկած էր մայթին, Կուրտի պատուհանի տակ։ Մի բան նրան առաջ մղեց։ Կռացավ, վերցրեց թուղթը և ուղղեց։

Պատռված, ճմրթված, դարչնագույն պաստելից կեղտոտված գրությունը վերջանում էր մի խոսքով.

Անդրեյ։

Ծաղիկներ

Մայերի հագին գործած բաճկոն էր՝ կրծքագրպաններով։ Մի գրպանից մյուսը շղթայիկ էր գցված։ Անատամ բերանից, որ հաճելի կերպով եզերված էր մորուքի և բեղերի ճերմակավուն ստվերներով, երկար չիբուխն էր կախված։ Չիբուխը կախվել էր փորին։ Փորը հաստ էր, բայց ոչ թե նրա համար, որ Մայերը լավ էր ապրում և շատ ապուխտ էր ուտում, այլ պարզապես լրացել էր Մայերի վաթսուն տարին, և նրա փորը, որ բավական ջանք էր թափել կարտոֆիլի, սալաթի ու լյարդաթոքի երշիկի վրա, Մայերի այդ փորը պարզապես մի քիչ կախվել էր։

Տասնութ տարի է, ինչ Մայերը վարպետ է, սակայն, միևնույն է, իրեն չի կարող շռայլություն թույլ տալ ու տաքացնել իր ձեղնահարկի բոլոր սենյակները, ուստի ամենամեծը (հարավ-արևելյան կողմինը) վարձով է տալիս։

Ահա հիմա, ճաշից հետո, ծխամորճ ծխելով, Մայերը մտավ իր կենվորի մոտ, որը երազող, տարօրինակ, բայց ընդհանրապես լավ տղա էր, մտավ նկարիչ Կուրտ Վանի մոտ։ Լավ տղան կանգնած էր բաց պատուհանի առջև ու նայում էր ցած, դեպի փողոց։

— Ինչ ասես չի կատարվում այս աշխարհում...— ասաց Մայերը շրթունքներով չիբուխը պահած։

Լավ տղան շարձագանքեց։

— Բանն ավելի բարդ կլինի, քան յոթանասունմեկ թվականին...

Լավ տղան կոշիկներով դոփեց հատակին։

— Որ մտածում ես...— սկսեց Մայերն ու լեզուն ճպճպացրեց.— հըմ-հըմ-հըմ...

Լավ տղան, առանց շրջվելու, հարցրեց.

— Ի՞նչ նորություն կա, հերր Մայեր։

Տանտերը չիբուխը ծծեց և նստեց բազմոցին, իրենից հեռացնելով փոշոտ ենթաշրջանակները։

— Ամեն վարպետություն իր կարգն ունի, որ կարելի է հասկանալ, եթե ուշադիր նայես։ Նայում եմ ձեր վարպետությանն ու ոչինչ չեմ հասկանում։ Հերր Վան, դուք ե՞րբ պիտի ասեք, որ իմ կինը ձեր փոշիները սրբի... Նորությո՞ւն։ Նույնն է, նույն հիմարությունը։

— Ձեր կարծիքով պարտքը նույնպե՞ս հիմարություն է։ Վրդովմունքը, զայրույթը նո՞ւյնպես։

Կուրտը շրջվեց, բռունցքը խփեց կրծքին ու բղավեց.

— Երբ այստեղ ասես եռման ջուր լինի, ասես կրակ լինի,— ու դարձյալ երեսը դարձրեց պատուհանին։

Մայերը ծուխը բաց թողեց։

— Ես անցյալ գիշեր չեմ քնել, հերր Վան։ Մտածում էի, հերր Վան։ Այնպես որ կինս ուզում էր ոտնատակերիս մանանեխի ծեփելիք դնել։ Գլուխս այսպիսի մտքեր էին գալիս, հերր Վան։ Ես այսքան տարի կանգնած եմ վառարանի առաջ, դուք հո գիտեք։ Բարեկամս, նկարիչ Վանը, որ թույլ չի տալիս իր սենյակի փոշին սրբել, գնում է քաղաքից դուրս, որպեսզի բնությունը նկարի, իսկ հետո նկարներ է ստեղծում։ Ինձ ու իմ բարեկամին ոչ ոք չի նեղացրել, ու մենք վիրավորվելու բան չունենք։ Բայց հանկարծ...

— Ազգը, հերր Մայեր, ազգը, ժողովուրդը,— բղավեց Կուրտը պատուհանից դուրս։

— Հասկանում եմ, հերր Վան։ Սակայն ես կարծում եմ, հերր Վան... Գուցե ես պետք է կնոջս լսեի մանանեխի ծեփելիքի հարցում. դա արյունը գլխիցս ցած կքաշեր։ Ես մտածում էի, թե ինչո՞ւ է այսպես ստեղծված։ Ինչո՞ւ ես պետք է վիրավորվեմ, այն...

Կուրտն ընդհատեց։

— Լինում են դեպքեր, երբ մտածել չի կարելի։ Ներեցեք ինձ, հերր Մայեր, սակայն ձեզ ապտակել են, իսկ դուք փիլիսոփայում եք։

— Ես այդ բանն իմացա, ինչպես և դուք, հաջորդ օրը, թերթերից, հեռագրով։ Իսկ երբ այդ ապտակը շառաչել էր, հանգիստ քնած էի կնոջս հետ։

Կուրտը պատուհանից պոկվեց, վազեց դեպի տանտերը, և գլուխը ցնցելով, խուլ ձայնով ասաց.

— Ես ձեզ խնդրել եմ, հերր Մայեր, ինձ հետ այդ նյութի շուրջ չխոսել։

— Չէի կարծում, թե այդքան տաքգլուխն եք,— պատասխանեց Մայերը և չիբուխը սեղմեց շրթունքների մեջ։— Ես չէի էլ ուզում այս նյութին անդրադառնալ։ Ինքներդ հարցրիք, ինչ նորություն կա։ Ուզում էի պատմել, թե այսօր ինձ ինչ պատահեց ճաշից առաջ...

Մայերը բացեց ծխամորճի կափարիչը, մատով ծխախոտը տրորեց ու շարունակեց չիբուխը ծծել։

— Առավոտյան ինձ կանչում են հեռախոսի մոտ։ Ասում են. ճաշին մտնել գրասենյակ։ Գնացի։ Երկրորդ դիրեկտորը, հերր Լիբերը, ընդառաջ է գալիս ինձ, մեկնում է ձեռքը և ասում. հերր Մայեր, վարչությունն ինձ հանձնարարել է իր անունից ձեզ շնորհակալություն հայտնել այն բանի համար, որ դուք դրսևորել եք պարտքի գիտակցություն ու ձեր պոստը չեք լքել տեղի ունեցած անկարգության ժամանակ։ Ես նրան ասում եմ, հերր դիրեկտոր, բայց չէ՞ որ վառարան էր, չէ՞ որ այն... Այդ րոպեին նրան մի թուղթ են մոտեցնում, ու նա հարցնում է, թե դա ինչ է։ Նրան ասում են թերթիկ է՝ տուգանքաթերթ։ Այն ժամանակ նա գրպանից հանում է մատիտը, գորշ շրջանակով, մեր ստեղծածն է, ամենավերջին խոսքը, գիտե՞ք, հերր Վան, գամիկը մեխանիկորեն է դուրս գալիս, պետք չէ ոչ սեղմել, ոչ պտուտակել, մեխանիկորեն. ահա դիրեկտորը թերթում է թուղթը, ես տեսնում եմ՝ էջ էջի ետևից, բայց չեմ հաշվում, այլ նայում եմ դիրեկտորի մատներին։ Այնպիսի երկար և այնքան սպիտակ մատներ են։ Հավատացեք, հերր Վան, ես մտածում էի միայն, որ երբեք այդպիսի մատներ չեմ ունեցել, նույնիսկ երիտասարդ ժամանակ, և որ բնավ ոչ աշխատանքի պատճառով, այլ պարզապես ես ի ծնե ուրիշ տեսակի մատներ ունեմ։ Հերր դիրեկտորը թուղթը թերթեց և թեթև այնպես մատիտով սահեցրեց ուր պետք էր, ու նորից ինձ ձեռք է տալիս և խոսում վարչության անունից։ Ես նրա ձեռքը սեղմեցի՝ անոսկր ձեռքը, և ասում եմ, վառարանը, չէ՞ որ այն... և այլն, և այլն, իսկ ինքս, մատներից բացի, ոչինչ չեմ կարողանում մտածել։ Այդպես էլ դուրս եկա։ Անցա բակով, հեծանիվը վերցրի, ոտքով ոտնակը սեղմեցի և հանկարծ ասում եմ ինձ. սպասիր, ծերուկ Մայեր, սպասիր։ Չէ՞ որ դու վատ բան ես արել, անպայման վատ բան ես արել, եթե շնորհակալություն ստացար այն ժամանակ, երբ ամբողջ ֆաբրիկան, բոլոր բանվորները...

— Հերր Մայեր, խոստովանեցեք, դուք սոցիալիստ եք։

Մայերը չիբուխը բաց թողեց, աչքը կկոցեց լուսավոր պատուհանի կողմը, ջանալով ուշադիր նայել կենվորի դեմքին։ Փափուկ բերանը ճպպացրեց, հետո անվստահորեն ժպտաց, հետո վեր կացավ։

— Առաջ դուք ավելի հաջող էիք կատակում, հերր Վան։

Եվ դուրս եկավ։

Կուրտը պատուհանից դուրս էր նայում։

Սպիտակ ճանապարհով անվադողերը խշխշացնելով, աջ ու ձախ էին սահում հեծանիվները։ Հեծանվորդների մեջքներին պարկեր և զամբյուղներ կային։ Ճոճվող ղեկերի վերևը երերվում էին ծխամորճերը, մերթ ընդ մերթ ծխողների մեջքի ետևը թողնելով կապույտ ծխի քուլաներ։ Այդ քուլաներն անցնում էին պարկերի և զամբյուղների ետևը, կախվում նրանցից, ձգվում, դառնում էին սպիտակ շերտիկ ու անհետանում։ Հեծանվորդները իրարից առաջ էին անցնում, խմբվում էին կույտ-կույտ, ցրվում շղթայի նման, շտապով սոդալով տների ետևից և փողոցների ծայրին վերածվելով սև հոծ հոսանքի։

Ահա փողոց դուրս սողաց, պտտվեց ու աջ սլացավ բարձր ղեկով մի դեղին հեծանիվ, որի վրա նստած մարդը բազմել էր, ինչպես բազկաթոռին՝ ուղիղ, հանգիստ. հերը Մայերը գնաց Ֆաբերի մոտ։

Եվ այսպես, մի քառորդ ժամ. իրարից առաջ էին անցնում, խմբվում կույտ-կույտ, ցրվում շղթայաձև, փողոցների ծայրերին անհետանում սև հոծ հոսանքով՝ հեծանիվներ, հեծանիվներ, հեծանիվներ։ Ու երբ այդ քառորդ ժամն անցավ, և ոչ ոք չուշացավ, քանի որ ոչինչ չպատահեց, ճանապարհը դատարկվեց։ Մի կին, դեմքի քրտինքը սրբելով, քշում էր սայլակին լծած զույգ մկանուտ շներին։ Շները երախները բացել էին, և ձեզնահարկում, որ ճանապարհից շատ բարձր էր, լսվում էր նրանց արագացած շնչառությունը։ Մի վանական, հագին գլխադիրով դարշնագույն փարաջա, որ դաստակներին պինդ կապված էր ոլորած գոտեկապով, տերողորմյան ձեռքին, գլուխը կախ գցած, սլանում էր փողոցով։

Կուրտը պատուհանից դուրս էր նայում։

— Պատերա՛զմ։

Ո՞վ այդ խոսքն արտասանեց։

— Պատերա՛զմ։

— Սա ո՞ւմ ձայնն է։

— Պատերա՛զմ։

Ինչո՞ւ այստեղ, խնձորենիներով եզերված այս ճանա-

պարհներին, սիրով խնամված, աճեցված, փայփայված այս մայրի ծառերի ստվերում, ինչո՞ւ, ինչո՞ւ այստեղ։

— Պատերա՛զմ։

Տուրբինների զնգուն աղմուկի մեջ, որ սուզվում էր ուռենիների կանաչում, քարավանները բաց թողնող ջրարգելակների սուլոցի և խշշոցի մեջ, ինչո՞ւ այստեղ։

— Պատերա՛զմ։

Մեր տների շուրջը ծաղիկներ են տնկած, մեր դաշտերը հերկված են նոր բերքի համար, մեր ֆաբրիկաները, մեր ֆաբրիկաները, մեր ֆաբրիկաները՝ տաճարներ, ուր մենք մանկուց օր ու գիշեր պատարագ ենք անում։ Ինչո՞ւ, ինչո՞ւ։

— Պատերա՛զմ։

Խնձորենիներն ու մայրիները, ծաղիկներն ու տուրբիններ, դաշտերն ու ջրարգելակները և մեր հավերժական պատարագը ֆաբրիկային,— և այդ ամենը մեր ոսկորների, մեր մկանների, մեր հոգիների գնով,— մենք չե՞նք ուզում, չե՞նք ուզում, չե՞նք ուզում։

— Պատերա՛զմ։

Կուրտը սանդուղքով ցած է վազում, կտրում է ճանապարհն ու թռչում տրամվայ։ Տրամվայը սլանում է կենտրոն՝ հին քաղաքը։ Կենտրոնը՝ հին քաղաքը, ավտոբուսներով, բարերով, հրապարակներով և փողոցներով, եկեղեցիներով, ավտոմատներով և միջնադարյան բուրգով սլանում է ոչ մի տեղ։

Այդ քաղաքը չափազանց խաղաղ էր, այն գրեթե նիրհում էր, այն խնայում էր իր միջնադարյան քարե կմախքի հանգիստը։ Բարերում և ավտոմատներում դանակներն ու բաժակները այնքան էլ բարձր չէին չխկչխկում, ավտոբուսներն էլ ակնածանքով խլացնում էին իրենց շարժիչները, որպեսզի չխռովեն, չխանգարեն տասնչորսերորդ դարի հաճելի նիրհը։

Եվ հիմա արթնացած, վախեցած քունը թոթափած քաղաքը պետք է մի քանի օրում, մի քանի ժամում հասներ քսաներորդ դարին։ Նա պետք է հասներ քսաներորդ դարին, որպեսզի անխաթար պահպաներ իր միջնադարյան կմախքը։ Այդ են աղաղակում թերթերը՝ առավոտյան և երեկոյան, պահպանողական և սոցիալ-դեմոկրատական, լիբերալ-ժողովրդական և եկեղեցական-կաթոլիկական, հարուստ, աղքատ, մեծ

փոքր, ընթերցող ունեցող և չունեցող, պատկերազարդված, արտակարգ, ավանդական, քրիստոնյաների համար, տնային տնտեսուհիների համար, սպասուհիների համար և պարոնայք սպաների համար։

Թղթակիցներն արդեն ուղարկված են սահմանները, արդեն հայտարարված է չորս նոր, ռազմական վեպերի տպագրության մասին, արդեն երևան է եկել առաջին ռազմական հաղորդագրությունը՝ հաստ տառերով, տպված առաջին էջերին բոլոր թերթերի՝ քրիստոնեական, սոցիալ-դեմոկրատական և այլն՝ հաստ տառերով, առաջին ռազմական հաղորդագրությունը.

Երեկ, ցերեկվա ժամը չորսին, Մենցից դեպի հարավ-արևմուտք գտնվող Ֆանուար խուտորի մոտերքը մեր պահակախումբը հանդիպեց ֆրանսիական հետախուզական ջոկատի և հարձակվեց նրա վրա։ Ֆրանսիացիք ապարդյուն կրակելով, փախուստի դիմեցին։

Օ՜, օ՜։ Նրանք արդեն փախուստի են դիմում։

Օ՜, նրանք ինչպես պետքն է կրակել չգիտեն։

— Կարդացի՞ք։

— Իսկ դուք կարդացի՞ք։

— Լսե՞լ եք ինչպես ֆրանսիական լրտեսը քահանայի շորեր հագած...

— Գիտե՞ք, որ ռուսներն արդեն վաղուց...

— Օ, մենք չափազանց բարեհոգի էինք և մեր համբերությունը...

— Նրան բռնել են և, ի՞նչ եք կարծում, նրա բերանում պիրոկսիլինե...

— Գրողը տանի, սակայն նա մեր կայզերին նամակներ էր գրում, մինչդեռ...

— Այդ կինը սովորական ուսուցչուհու անձնագիր ուներ, իսկ երբ նրան խուզարկեցին...

— Ստոր վախկոտներ, մերոնց սաղավարտները տեսնելուն պես ծլկում են։

— Հավատացնում եմ ձեզ, ամենաբարի տեսքով՝ երկնագույն աչքեր...

— Ես իսկույն գլխի կընկնեի...

— Բռնեցեք, բռնեցեք, բրռ-նե-ցեք։

— Արտակարգ հե-ռա-գիր...

— Արտա...

— ...ռա-գիր...

— Կարդացեք, կարդացեք։

— Ը՜հը...

— Ասում էի ձեզ, ասում էի...

— Կարդացե՞լ եք։

— Իսկ դո՞ւք։

— Հապա դո՞ւք։

Օ՜, օ՜։ Նրանք արդեն փախուստի են դիմել։

Օ՜, նրանք ինչպես հարկն է կրակել չգիտեն։

Այսօր, առավոտյան ժամը հինգին Ռոտի շրջակայքում բռնել են մի երիտասարդի, որն իրեն անվանել է...

Կառապանը ցիլինդրը ծոծրակին ետ գցած, բարձր նստոքին վեր-վեր թռչելով, օդում թափահարում է հեռագիրը։ Վարորդը, ղեկը մի ձեռքով պահած, մյուսով թևածալի մեջ է խրում հեռագիրը։ Շուցմանը, խաչմերուկից մի տասը քայլ ետ կանգնելով, աչքը կկոցած նայում է պատուհանին, որտեղ հեռագիրն է փակցրած։ Հեծանվորդը, առանց հեծանվից իջնելու, շունչը կտրած, տղայից հեռագիր է առնում։ Ռեստորաններում, գարեջրատներում, ավտոմատներում, տրամվայներում, գլխների վերևը, ձեռքներին, գրպաններում, հատակին՝ հեռագրեր։ Պատուհաններին, պատերի վրա, ցուցափեղկերին՝ օդում՝ քամուց քշված, հեռագրեր, հեռագրեր, հեռագրեր։

— Արտակարգ հե-ռա-գ-գիր։

— Արտա...

— ...ռա-գը-գիր։

Ասես քաղաքով մեկ թունդ գինի էին լցրել, ու մարդիկ խմում են, խեղդվում, լողում, սուզվում, կորչում են գինու մեջ։

Կուրտը ճմրթում է կտրված տառերով նախշված սպիտակ թղթի կտորը։ Հետո հարթում է, սուր հայացքը սահեցնում պարզորոշ տողերի վրայով, նորից թուղթը պինդ ճմրթում է ու բղավում.

— Օբեր։

Վճարում է, դուրս վազում հրապարակ։ Այնտեղ, խեղդվող, սուզվող քաղաքի աղմուկի և դողի մեջ նա հանկարծ կանգ է առնում մայթի մեջտեղին։ Նրան շրջանցում են, բութում, նայում են նրան։ Նա ոչինչ չի նկատում։ Նայում է գլուխների, ուսերի, գլխարկների և հովանոցների վրայով ուղիղ իր առջև, այն կողմը, ուր նոր գնում էր։ Նույնքան հանկարծակի, ինչպես կանգ առավ, դառնում է, կտրում հրապարակն ու նստում տրամվայ։ Հրապարակը կտրելով, մայթի մարդկային հրհրոցից պոկված, վագոնի մոտ է վազում մի մարդ։ Վագոնը շարժվում է։ Մարդն արագացնում է վազքը, թռնում ոտնակին, ներս է մտնում վագոն և աչքերով փնտրում մեկին։

— Կո՛ւրտ։

Կուրտը նայում է դեպի փողոց, ձեռքերի մեջ տրորում սպիտակ թղթի կտորը։

— Կո՛ւրտ, Կո՛ւրտ..., Դու ինձ տեսա՞ր։

Կուրտը շրջվում է, ձեռքերը գրպանները խոթում։ Նրա բերանը սեղմված է, վերին նուրբ կոպերը սեղմվել են հոնքերի տակ։

— Մենք խոսելիք չունենք։

— Կո՛ւրտ...

— Լռեցեք,— սկսում է Կուրտը։

Սակայն նա, ով Կուրտին անունով էր կոչել, գլուխն է բռնում ու շշնջում.

— Ուրեմն դու ինձնից փախա՞ր։

Կուրտը փլվում է նստարանին։ Նրա շրթունքները ցնցվում են, աչքերը կարմրում։ Գուցե նա հիմա կժպտա, գուցե կհեկեկա, գուցե կբղավի։

Նա խոսում է, նույնպես շշուկով.

— Անդրեյ, ես քեզ ատում եմ... Ես պարտավոր եմ ատել։ Հեռացիր։ Գնաս բարով... Դեհ, գնա։

— Դու քո խելքի, սրտիդ դեմ ես խոսում։

— Սրտի՞ս։ Սրտի՞ս,— բղավում է Կուրտն ու բարձրանում նստարանից։

— Հեռացիր, թող ինձ։ Մենք խոսելիք չունենք։ Հեռացիր, ասում եմ... Այլապես կբղավեմ ամբողջ վագոնով մեկ, թե դու ով ես և քեզ...

— Բղավիր, բղավիր։ Ես մի քայլ էլ չեմ գցի։

Նրանք կանգնած են դեմ-դիմաց, իրարից չկտրելով համառ հայացքները, և նրանց դեմքերը գունատ են, լարվածությունից ծռված, քրտնքապատ։

— Ես սպասում եմ։

Կուրտը լռում է։

— Ցտեսություն, Կուրտ։ Դու կսթափվես, գիտեմ։

— Ես կեղծավոր չեմ։ Գնաս բարով,— ասում է Կուրտն Անդրեյից պոկվելով։

Ստարցովը վագոնից ցած է թռչում։

Փողոցում հեծանիվով նրան ընդառաջ է սլանում լրագրավաճառը և կտրում լռությունն իր խռպոտ ձայնով.

— Արտակարգ հե-ռա-գիր։

— Արտա...

— ...ռա-գիր..

Շուրջը տները լուռ են ու ամայի, բաց պատուհաններում գեղնին են տալիս և գանգրանում ծաղիկները, հարկերի գլխին կախված ձեղնահարկերը պահում են փողոցների անդորրը։ Մարդիկ այստեղից գնացել են կենտրոն՝ դեպի բարերն, ավտոմատները, խմբագրություններն ու գոռում-գոչյունները, հեռացել են, փախել, սլացել, որպեսզի իրենց աչքերով տեսնեն երկար դարեր նիրհած քաղաքի զարթոնքը՝ պատերազմի, փառքի։

Անդրեյը քայլում է լուռ՝ ծայրամասերով, խուլ նրբանցքներով, հին քարե շինությունների անկանոն, ծուռ շարքերի մոտով։ Շտապելու բան չունի։ Շտապելու տեղ չունի։ Ետևում են տարիները, որ չես վերադարձնի և որոնք պետք չեն մարդիկ, որոնք երբեք այլևս նախկինը չեն դառնա, երբեք Միևնույն չէ, թե ուր կգնաս։ Միևնույն չէ՞, թե ուր կհասնեսՆ Եվ կհասնե՞ս արդյոք որևէ տեղ։

Անցումը դեպի Ֆյուրտ տանող ճանապարհը՝ Գերմանիայի առաջին հնագույն ճանապարհը, մի անցում, որով այնքան հաճախ էր գնում Անդրեյը, պահպանվում է զինվորական պահակախմբի կողմից։

Նկատե՞ց արդյոք Անդրեյը, որ զինվորների հագին կանաչագորշ համազգեստ էր՝ փայլատ կռճակներով, հորթի կաշվից պայուսակ, քաթանե ծածկոցով սաղավարտ և փորքի

երկու կողմից փամփուշտակալներ էին կապված։ Նկատե՞ց արդյոք, որ զինվորները երթային համազգեստով էին։ Եվ որ այդ համազգեստներին նայում են պատուհաններից, դռներից, փողոցից, մայթերից։ Տեսա՞վ արդյոք, ինչպես դեպի Ֆյուրտ անցնող գնացքի մեջ այս ու այն կողմ նետվեցին, թրթռացին գլխաշորերը, հովանոցները, գլխարկները, ձեռքերը, և ինչպես երթային համազգեստ հագած զինվորների ոտքերի մոտ գետնին թափվեցին ծաղիկներ, սիգարներ, գլանակներ, ու նորից ծաղիկներ, ծաղիկներ, ծաղիկներ։ Տեսա՞վ արդյոք, ինչպես վսեմորեն գլուխները ետ գցեցին երթային համազգեստ հագած զինվորները, և նրանց շուրթերից ինչպիսի ժպիտ շնորհ եղավ գլխաշորերին, հովանոցներին, գլխարկներին, ծաղիկներին։ Երթային համազգեստ հագած զինվորներն իրենց ոտքերի տակ թափված բոլոր ծաղիկները չհավաքեցին, միայն մեկական վարդ խրեցին իրենց հրացանների փողի մեջ, գոտու մեջ և փամփուշտակալին։ Հնարավո՞ր է արդյոք հավաքել այն բոլոր ծաղիկները, որ հայրենիքը փռում է երթային համազգեստ հագած զինվորների ճամփին։ Տեսա՞վ արդյոք այդ ամենն Անդրեյը։

— Միևնույն չէ՞, սակայն։

Անդրեյը քայլում էր գլուխը հակած։

Լուսավոր, լվացած սանդուղքին, այն բնակարանի դռան մոտ, որտեղ նա ապրում էր, անշարժ կանգնած էին երկար սև վերարկուներ հագած և ցածր կոտելոկներ ծածկած մարդիկ։ Նրանք հինգ հոգի էին։ Կանգնած էին լուռ, անձայն։ Անդրեյն այդ մարդկանց նկատեց, երբ արդեն նրանց օղակում էր։

Գունատ դեմքով, մաքուր սափրված, բաց գույնի աչքերի բարի հայացքով մեկը կոտելոկը բարձրացրեց ու հարցրեց.

— Հերր Ստարցո՞վն եք։

— Այո։

— Բարի եղեք,— և նա կիսով բացեց Անդրեյի առջև արդեն բացած դուռը։

— Գուցե հերր Ստարցովը մեզ ցո՞ւյց կտա իր իրերը։

Զորսը հանեցին կոտելոկները, վերարկուները, բաճկոնները, արձակեցին բազկակալները և մինչև արմունկները վեր քաշեցին շերտավոր վերնաշապիկների թևքերը։ Այս հանված

մարդկանց բարակ կաշեզոտիների վրա, հենց ազդրերին կպած էլախված էին փոքրիկ կոլտեր՝ բաց դեղնավուն պատյանների մեջ։

ԳԼՈՒԽ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ

Լեգենդներ-ասեկոսեներ-եղելություն

Ուրբախ վիլլան ընկած է լեռներում, Բոհեմիայի սահմանին մոտ։ Շուրջը սոճիներ են՝ երեկոները մանուշակագույն, կեսօրին՝ կարմրագորշ։ Լեռնագագաթներին քարերը լերկ են, սուր-սուր։ Հեռվից նայելիս թվում է, թե լեռներին հին, կոտրտված կահույք է կիտված։ Ի դեպ, մի գագաթին դեպի արևելք են խոնարհվում Երեք Միանձնուհիները՝ վեղարներով, կնգուղները մեջքներին ետ գցած։ Մեկի ձեռքին տերողորմյա է. դա լեռան ծերպից գանգուր վարդագույն հավամրգի էր դուրս սողում։ Դեպի Ուրբախ վիլլան գալարվող հովիտով մի սպիտակ խճուղի էր վազում, նրա կողքին՝ նեղաղուր երկաթուղին։ Այնտեղ, ուր հովիտը դեմ էր առնում Լաուշեի թեք ստորոտին՝ կայարանի մրոտված կարմրավուն տանիքն էր։ Վերևից, Լաուշեի կլոր կրծքանման բարձունքից՝ հովիտը, խճուղին, երկաթուղին, կայարանը, թվում էր, կտեղավորվեն բուդ մեջ։ Այստեղից շոգեքարշերի սուլոցները լսվում էին, ինչպես ճնճղուկների ծլվլոց։ Այստեղ քնած էր արձագանքը, մատղաշ սոճիների խոր միջուկի մեջ թաղված։ Մինչև հովտի յուրաքանչյուր ձայն յոթ անգամ բարձրանում էր մինչև Երեք Միանձնուհիների ոտները։ Երեկոյան դեմ, երբ խճուղով իրենց գիշերօթևաններն են շտապում գյուղացիների սայլերը, ամենախիզախ մարդն էլ չի կարողանա նստած մնալ Երեք Միանձնուհիների ոտքերի մոտ։

Ուրբախ վիլլայի մասին ոչ մի լեգենդ չեն պատմում։ Հայտնի է, որ առաջ այն կոչվում էր ֆոն Ֆրեյլեբեն, մինչև որ այդ անունը կրող վերջին կինը ամուսնացավ ոչ մի զբաղմունք չունեցող և բնավ ոչ ազնվական Ուրբախի հետ։

Եթե պետք լիներ, վերջ ի վերջո, ֆոն Ֆրեյլեբեն վիլլայի մասին էլ կարելի էր լեգենդ հորինել։ Սակայն հարկ չկա։

Երեք Միանձնուհիներից դեպի աջ գտնվում են կապուցինների վանքի ավերակները։ Վանքն այրել էր կայծակը՝ այն պահին, երբ վանականները հարևան գյուղից երկու գեղեցկուհի էին խաբխբելով բերել վանքի նկուղը։ Կապուցինները բոլորը մինչև վերջինն այրվեցին։ Կենդանի մնացին հրաշքով փրկված երկու գեղեցկուհիները. նախախնամությունը պահպանեց անմեղությունը՝ որպես խրատ քրիստոնյաներին։ Այդ հաստատեցին գյուղացիները, որոնց բաժին ընկան գեղեցկուհիները։ Սրան հետևում է պատմությունն այն մասին, թե ինչ ուրուդմփոց սկսվեց ամբողջ այդ շրջանի փեսացուների մեջ այս աղջիկների պատճառով. ամեն մեկն ուզում էր նրանց միջոցով առնչվել նախախնամությանը։ Սակայն հենց այդ պատմության վրա կանգ առնելու ժամանակը չէ։

Խոսքն այն մասին է, որ գյուղացիները առասպելների կարիք չունեին։ Մինչ կապուցինների միաբանության այստեղ գալը, ամբոցը, որ քրիստոսասիրաբար ծառայել էր միաբանությանը, երկար տարիներ ցուր Մյուլեն-Շենաու փոքրիկ մարկգրաֆության տերերի նստավայրն էր եղել։ Այս ասպետական տոհմի նախնիները մի ժամանակ մոտ էին Վատիկանին և երկու անգամ ջոկատներ էին ճանապարհել տիրոջ գերեզմանին։ Երեսնամյա պատերազմին մարկգրաֆները չղջիկների նման նստել-մնացել էին իրենց ամրոցների ապաստարաններում։ Հետո թալանով էին զբաղված բողոքական Սաքսոնիայում։ Հետո սկված հալումաշ էին լինում։ Կարդինալ Սեբաստիանը մարկգրաֆներից ապաստան խնդրեց անանկացած կապուցինյան միաբանության համար։ Մարկգրաֆներն իրենց նստավայրը դարձրին վանք, այդ իրողությունը հայտնելով կաթոլիկական բոլոր տերություններին։ Այդ ժամանակ ամրոցում մնացել էին միայն նեպուկներն ու սարդերը։

Լաուշեից դեպի արևմուտք, գրեթե հենց նրա լանջին տեղավորվել էր մի նոր ամրոց՝ ավելի փոքր, ավելի բարեհամբույր և ավերակներից ջահել։ Այստեղ տեղափոխվեցին ասպետների նախնիները, կապուցիններին զիջելով նեպուկներն ու սարդերը։ Այստեղ պահվում էին տիրակալ տոհմի հիշատակները։ Այստեղ մեծանում էր նրա վերջին ժառանգը՝ լուակյաց, կոկլիկ, շիկահեր տղան՝ Մաքսիմիլիան Յոհան ֆոն

ցուր Մյուլեն-Շենաուն։ Նա մեծանում էր խնամակալի հսկողության ներքո, գյուղացիների աչքի առաջ, որոնք ժառանգներն էին նրանց, ովքեր երկու անգամ փորձել էին օգնել տեր աստծուն՝ նրա գերեզմանը խլելով անհավատներից։

Ահա թե ինչու այս վայրերում առասպելների կարիք չեն զգում։ Ահա թե ինչու, երբ նայում ես ոտքերը ձիու նման լայն-լայն գցող գյուղացու ետևից, թվում է, թե նրա մեջքին է ընկած դարերի բեռն՝ իր ասպետներով, թագավորներով, կարդինալներով և վանականներով։ Եթե չլիներ այդ մեջքը, ի՞նչ իմանաս, Լաուշեից արևմուտք ընկած այս ամրոցի գրադարանը հիմա կզարդարե՞ր արդյոք հիանալի, մի քիչ կանաչած մեծածավալ գիրքը՝ «Ֆոն ցուր Մյուլեն-Շենաու տիրակալ մարկգրաֆների զինանիշագրությունն ու տոհմագրությունը»։

Այսքանից հետո ի՞նչ կարելի է ասել Ուրբախ վիլայի մասին։

Բամբասել, բամբասել՝ այո։

Անհասկանալի մարդ է այդ հերր Ուրբախը։ Թերևս որևէ ուրիշ երկրում նա իր վրա ուշադրություն չգրավեր։ Սակայն Գերմանիայում, Գերմանիայում...

Նախ և առաջ. ինչո՞վ է նա զբաղվում։ Կալվածատեր է։ Լավ։ Ինչո՞ւ ուրեմն ոչ մի անգամ չի մտել պանրագործանոցը, չի նայել գոմերը, չի հետաքրքրվել խոտհունձով։ Կառավարի՞չ ունի։ Լավ։ Անխոհեմ բան է, իհարկե, մեծ տնտեսությունը վստահել հասարակ ծառայողին, սակայն հարուստ մարդն իրեն շատ բան կարող է թույլ տալ։ Բայց ինչո՞ւ հերր Ուրբախը ոչ մի անգամ հաշվետվություն չի ընդունում վստահված անձից, և միշտ այն ուղարկում է կնոջը՝ ֆրաու Ուրբախին, ծնյալ ֆոն Ֆրեյլեբեն։ Գուցե հերր Ուրբախը պետական պաշտոնյա՞ է։ Լանդտագի անդա՞մ։ Բնավ ոչ։ Գուցե գիտնական՞ն է։ Այդ դեպքում, սակայն, նրան կկոչեին պրոֆեսոր։ Գուցե գրո՞ղ է։ Դե դա արդեն հայտնի կլիներ յուրաքանչյուր ժանդարմի։ Պարզապես ռենտայով ապրող մա՞րդ է։ Սակայն մի՞թե ռենտայով ապրողը այդպիսի կյանք է վարում։ Մի օր վիլայում է, մի օր քաղաքում, մյուս օրը՝ հանգստավայրում։ Գիշերները լեռներում է, ճաշի ժամին՝ քնած, իսկ երբեմն էլ երեք օր իրար ետևից դուրս չի գալիս իր առանձնասենյակից։ Իսկական ռանտյեի ապրելակերպը պահ-

մանվում է պրոֆեսորների մի իսկական կոնսիլիումով։ Ռանտյեն ոչ թե պիտի ապրի, այլ անխոնջ կերպով ողջ-առողջ լինի։ Ասում են, թե հերր Ուրբախն ինչ-որ նախագծեր է գծում։ Սակայն ի՞նչ նախագծեր, ոչ ոք չգիտի։ Այնպես, միայն խոսակցություններ են։

Ոչ, հերր Ուրբախն անհասկանալի մարդ է։ Ֆրաու Ուրբախը երբեք նրա հետ չէր ամուսնանա, եթե... Մի խոսքով, նա դեռ ֆրոյլայն ֆոն Ֆրեյլեբեն էր, երբ որդի ունեցավ։ Հետո, մի քիչ էլ կաղում է մի ոտքից. դա մանկուց է։ Սակայն նա պատկառելի, խիստ, առաքինի տիկին է, և նրան չողջունելը, երբ անցնում է խճուղով, մի տեսակ անհարմար է։

Նրանք երեխաներ ունեն։ Այն տղան, որի աշխարհ գալով անսպասելիորեն երջանկացավ հերր Ուրբախը, և մի աղջիկ՝ Մարի անունով։ Ուղղակի տարօրինակ է, թե որքան արդարացի և խիստ է ճակատագիրը։ Մեծ երեխան նմանվել էր մորը։ Հայնրիխ Ադոլֆը— իհարկե ոչ Ուրբախը— Հայնրիխ Ադոլֆ ֆոն Ֆրեյլեբենը տոհմի ժառանգն ու հետնորդն էր։ Մարին... Դեհ, ինչ կարելի է ասել այդ աղջկա մասին։

Բամբասել, բամբասել՝ այո։

Հարցրեք ուղածդ գյուղացուն՝ նրան ճանաչում են ամբողջ շրջանում։ Նա հայտնվում է ամեն տեղ, ամենուրեք, և միշտ անսպասելի, ինչպես ուրվական։ Ճիշտ է, վատ նշան է, եթե Մարին վազում մտնում է ուրիշի բակը։ Նրա հայտնվելուց հետո տնտեսության մեջ անպայման որևէ փորձանք է պատահում՝ ձին է հիվանդանում կամ ջարդվում է հնձող մեքենան, կամ էլ, ամենաքիչը՝ կաթն է թթվում։ Մի անգամ Մարին կանգ առավ կիրկայի մոտ։ Այդ պահին եկեղեցուց դուրս էր գալիս երգեհոնահարը։

— Բարև, աղջիկս,— ասաց նա։

Եվ Մարին նայեց նրան այնպիսի աչքերով, որ վերջինիս քթի մեջ անմիջապես սկսեց քոր գալ։ Ու ի՞նչ եք կարծում. խեղճ երգեհոնահարը հարբուխով հիվանդացավ և սկսեց այնպես փռշտալ, որ եռամիանձնության ժամերգության ժամանակ երգչախմբից հենց միայն հափշի, հափշի էր լսվում։

Իսկ մի անգամ Մարին ներս էր նայել ֆորշտանդի պատուհանից։ Վերջինս նստած իր թղթերն էր նայում ու զանազան բաներ գրում։

— Վահ,— ասում է Մարին,— ինչքան շատ թղթեր ունես։ Ինչպե՞ս է, որ դրանց մեջ գլուխդ չես կորցնում։

— Ոչ,— պատասխանում է սա,— հենց նրա համար էլ ֆորշտանդ եմ, որ գլուխս չկորցնեմ։ Իսկ դու հեռացիր այստեղից, մի խանգարիր։

— Դեհ,— ասում է Մարին,— կտեսնես, որ ամեն ինչ իրար ես խառնելու։

Եվ փախչում է։

Իսկ ֆորշտանդն այդ օրից այնպիսի մի խառնաշփոթ է սարքում, որ քաղաքից պաշտոնյա է գալիս ու կարգադրում նրան անմիջապես հեռացնել։

Անպայման աղջկա մեջ մի սատանա էր նստած, նա երջանիկ պահի չէր ծնվել...

Սակայն ինչպես այս վայրերում կարիք չի զգացվում առասպելների, քանի որ առասպելներով է ծածկված ամեն մի քարը, այնպես էլ կարիք չի զգացվում Մարիի շուրջը եղած բամբասանքների, քանզի նրա մանկության պատմությունը լի է պատահականություններով և գաղտնիքներով, որոնք թերևս ավելի անսպասելի ու սարսափելի են, քան բոլոր բամբասանքները։

Մարին երեք ամսական էր, երբ առաջին անգամ մահը եկավ նրա ետևից։ Հերր Ուրբախը քաղաքից երկու բժիշկ բերեց, և բժիշկները տասնինն օր չհեռացան Ուրբախ վիլլայից։ Տասնինն օր երեխան մահանում էր։ Նա լուռ էր, գրեթե անձայն, օրական մեկ անգամ՝ երեկոները, ջերմությունից կրակվում էր, ինչպես ածուխ, և գիշերվա ընթացքում կամաց-կամաց սառչում, ծածկվելով մոխրանման գորշավուն գունատությամբ։ Աչքերը, որ երբեմն-երբեմն պարզվում էին աշնանային գետակի նման, հանկարծ կանգ էին առնում հոր վրա, և այդ ժամանակ հերր Ուրբախը տնից փախչում էր ու թափառում սարերում։ Բժիշկները խորհրդակցում էին, դեղատոմսեր գրում և երկար-երկար ինչ-որ բան էին բացատրում երեխայի հորը, հետո բարձրանում էին վերև, իրենց հատկացված սենյակները ու սկսում շախմատ խաղալ։ Սառաները դեղատոմսերը ձեռքներն առած վազվզում էին դեղատներ, բերում կոմպրեսներ, ջերմաչափեր, վաննաներ, հետո նստում էին

խոհանոցում և անշտապ հաշվումներ անում, թե տիրոջ վրա ինչքան կնստի երեխայի թաղումը։

Մարին մահանում էր։ Դա ակներև էր ոչ միայն կողմնակի մարդկանց՝ բժիշկների, ծառաների, այլև հոր համար։ Նա ավելի ու ավելի հաճախ էր անհետանում սարերում և վերադառնում էր թաքուն, ականջ դնելով մանկան սենյակի լռությանը։ Ֆրաու Ուրբախը աղջկա վախճանին էր սպասում առանց իր սենյակից դուրս գալու։

Տասնութերորդ օրը բժիշկներից մեկը ձանձրացավ շախմատ տարվելուց և մեկնեց, խոստանալով քաղաքից ուղարկել իր կոլեգային։ Տասնիններորդ օրը մյուս բժիշկը հայտարարեց, որ ոչնչով օգտակար լինել չի կարող։

Եվ այդ օրը, երեկոյան, երբ երեխայի մահացած մարմնիկը կարմրատակեց ջերմի տաք կրակով, մանկան սենյակում լացի ձայն լսվեց։ Դա կարճ էր, անօգնական և շատ նմանվում էր այն խղճուկ ծվոցին, որով երեք ամիս առաջ Մարին լույս աշխարհ եկավ։

— Լավ նշան է,— ասաց հիվանդապահուհին,— երեխան երկրորդ անգամ ծնվեց։

Հերր Ուրբախը հեկեկաց։

— Ինձ թվում է,— ասաց բժիշկը հրաժեշտ տալով,— որ չնայած ախտորոշումը շատ դժվար էր, մեր կիրառած բուժումն, այնուամենայնիվ, միանգամայն ճիշտ էր։

Այդ պահն ընդմիշտ որոշեց, թե Մարին ինչ տեղ պիտի գրավեր ընտանիքում։ Նա դարձավ հոր սիրելին, իսկ մայրը նրան չսիրեց։ Իհարկե, վաղ թե ուշ այդպես պետք է պատահեր, քանի որ ընտանիքում մեծանում էր նրա որդին՝ Հայնրիխ Ադոլֆը՝ ազգանունով Ուրբախ, արյամբ՝ ֆոն Ֆրեյլեբեն։ Սակայն այդպես պատահեց հենց այն պահից, երբ Մարին երկրորդ անգամ ծնվեց։

Երեխային շատ օգնեց այծի կաթը, որով սկսեցին կերակրել հիվանդությունից հետո։ Երբ աղջիկը սովորեց բռնել, ու հայրը նրա համար խաղալիքներ գնեց, Մարին մարդկանց ներկայությամբ ոչ մի հետաքրքրություն չէր ցուցաբերում խաղալիքների նկատմամբ, ու միայն երբ մնում էր մենակ իր սայլակի մեջ, սկսում էր այդ խաղալիքներն ուսումնասիրել։

Ինն ամսական հասակում Մարին սովորեց քայլել։ Հայրը

պատահմամբ տեսավ, թե դա ինչպես պատահեց։ Երեխան խաղալիքներով շրջապատված նստել էր հատակին։ Դայակը դուրս եկավ։ Նայելով նրա ետևից, ասես համոզվելու համար, որ սենյակում ոչ ոք չկա, Մարին թաթիկները մեկնեց դեպի աթոռը։ Ցնքտնքալով ու ճիգ ու ջանք անելով, նա տեղից բարձրացավ ու սկսեց քայլեր անել անհնազանդ, իրար կպչող ոտքերով։ Սեղանի շուրջը քայլելուց հետո Մարին վճռեց մի քանի քայլ անել առանց հենարանի և շարժվեց դեպի մահճակալը։ Սակայն անմիջապես ընկավ ու ծոծրակը զարկեց հատակին։ Հերր Ուրբախը ակամա մի քայլ արեց դեպի նա։ Մարին դժվարությամբ տեղից բարձրացավ, փորձեց թաթիկը տանել դեպի ցավող ծոծրակը ու շփել, ձեռքը չհասավ, քթի տակ մի բան թոթովեց ու նայեց շուրջը։ Աթոռը գտնվում էր նրա ետևում, իսկ մահճակալը՝ դիմացը։ Աթոռից բռնելու համար ընդամենը երկու-երեք քայլ պետք էր անել։ Մահճակալն ավելի հեռու էր։ Մարին վճռեց հասնել մահճակալին։ Սկզբում բարձրացավ ծնկների վրա։ Հետո մեծ դժվարությամբ ծնկները հենեց փորիկին ու մի քիչ հանգստացավ։ Գլուխը բարձրացնելն ու միաժամանակ ձեռները հատակից պոկելն ավելի դժվար էր։ Մարին հեշտությամբ կարող էր չորեքթաթ սողալ մինչև մահճակալը, սակայն նա վճռել էր ոտքի կանգնել ու պետք էր իր նպատակին հասներ։ Մի թաթիկը վերջապես հատակից պոկեց ու կախվեց օդում։ Սակայն հիմա փոքրիկ մարմնի ամբողջ ծանրությունն ընկավ մյուսի վրա։ Կանգնելն անհնարին էր։ Այն ժամանակ Մարին նստեց, մի քիչ հանգստացավ ու այդ ամբողջ աշխատանքը նորից սկսեց։ Դարձյալ ծնկները մոտեցվեցին փորիկին, դարձյալ շունչ առավ և նորից մի ձեռքը թափահարեց օդում։ Բայց ահա հանկարծ ծնկներն իրենք իրենց ծալվեցին, և Մարին պպզեցավ։ Այն ժամանակ նա թաթիկները հենեց ծնկներին, լարվեց, շտկվեց և առանց ձեռքերը ծնկներից պոկելու, առաջ դրեց նախ մեկ, հետո մյուս ոտքը։ Համոզվելով, որ կարող է շարժվել, Մարին մի թաթիկն առաջ մեկնեց, է՛լ ավելի շտկվեց և երերալով քայլեց առաջ, առաջ, հասավ գրեթե մահճակալին։ Այստեղ արդեն մյուս թաթիկն էլ ծնկից պոկեց, ուրախ ծափ տվեց, բադիկի պես կռնչաց և ընկավ անկողնու մեջ մատիկներով վերմակից կառչած։

Այն ժամանակ հերը Ուրբախը նետվեց դեպի աղջիկը, բարձրացրեց նրան գլխից վեր և անկապ մի բան բղավեց։

Սակայն սովորաբար լռիկ Մարին սկսեց անզուսպ կերպով լացել, ասես ծանր վիրավորանքից, որ մեկը թաքուն հետևել էր իր միայնությանը։

Դրանից հետո ինչքան էլ Մարիին սովորեցրին քայլել, ինչքան էլ փորձեցին ստիպել, որ կանգնի, նա ամեն անգամ նստում մնում էր անշարժ, քարի պես, մինչև իր տարին լրացավ և քայլեց վստահորեն, առանց որևէ օգնության։

Քարե մարկգրաֆուհին

Ոտքերի տակ փափուկ, փտած փշատերևը, կայմափայտի հավասար շարքը, ամենուրեք կիտված սարերը, ամրոցի ավերակները, ճանապարհով գոտևորված հովիտը և Լաուշեի թեք, հավասար սարալանջը՝ ահա Մարիի մանկասենյակը։

Նա ձանձրանում էր տնից, կահույքից և կյանքի ամենամեծ դժբախտությունը համարում էր ձմեռը։ Սակայն ձմռանն էլ Մարին ապրում էր սառնամանիքի, քամու մեջ, ապրում դահուկ քշելով, սարերից սահելով, սառած, լպրծուն քարերի վրա բարձրանալով և վազվզելով։ Նա վազում ու վեր էր մագլցում այծի նման, մագլցում էր ուղղաբերձ ժայռերին, արագ ու անձայն կառչելով անտեսանելի ելուստներից։ Ճշմարիտ էին ասում, որ նա իր ծծմորն էր եկել՝ ամբողջ շրջանին ճանձրացրած այդ խնթկան, կովարար, թովռան կնոջը։

Մի անգամ աշնանը Մարին անհայտացավ։ Ամբողջ օրը հնարավոր չեղավ նրան գտնել, իսկ երեկոյան Ուրբախ վիլլան տագնապ բարձրացրեց։ Մարդիկ ուղարկվեցին բոլոր ծայրերը։ Գյուղում հարցուփորձ արեցին Մարիի հետ խաղացող երեխաներին։ Ոչ ոք նրան չէր տեսել։

Ամբողջ գյուղը ոտքի էր հանված։ Գյուղացիները լապտերներն առած և խմբերի բաժանված հենց նոր էին շարժվել տարբեր ուղղություններով, երբ մեծ ճանապարհից սլացավ եկավ մի երիտասարդ բ ։տրակ։ Նրա ձին փրփրակոլոլ էր եղել, սայլի միջի խոտը քրքրվել էր, իր վրայից քրտինքը վազում էր. նա ամբողջ մարմնով դողում էր ու երկար ժամանակ չէր կարողանում խելքը գլխին պատմել, թե ինչ էր պատահել։

Բանից պարզվեց, որ նա խճուղով անցնելիս շրջանցել է Երեք Միանձնուհիների և անմիջապես գլխին մի ահավոր աղմուկ է պայթել։ Տղային թվացել է, թե սարերը տեղից շարժվել են, ու շար ոգին հոհոացել ու հաչել է նրա ետևից։ Ձին տեղից պոկվել ու սլացել է, ինքը հազիվ է կարողացել սայլի մեջ իրեն պահել՝ հիշելով տեր աստծուն ու այն բոլոր աղոթքները, որ սովորեցրել էր քահանան։ Իսկ ետևից լսվել է սուլոց, կրճտոց, հոհոոց, հաչոց։ Երևում է, հենց Բեհեղզեբուղն էր իր ծննդյան օրը տոնում։

Շատ էլ հեշտ բան չէր այնպիսի մարդիկ գտնել, որոնք համաձայնեին գիշերով գնալ Երեք Միանձնուհիների մոտ։ Հերը Ուրբախն ինքն էր գլխավորում խիզախ գյուղացիներին։ Որքան լավ էր ճանաչում աղջկան, եթե անմիջապես վճռեց, թե նա էլ ո՞ւր կարող էր գնալ, եթե ոչ հենց սատանային հյուր։

Պետք էր լսել, թե նա ինչ համերգ տվեց այդ անիծյալ երեկո։ Ամեն կողմը անտառների վրայով գլորվում էր տրաքոցն ու որոտը, ասես ամպրոպն էր արմատախիլ անում ու գլորում սոճիները։ Լեռները սվվում էին ու հեծեծում՝ հրեշները նրանց կուրծքը քրքրում էին մագիլներով։ Եվ ի լրումն ամենի՝ գիշեր, թեկուզ մատդ աչք կոխես, ոչինչ չի երևում, լապտերներն էլ մեկ էլ տեսար մարում էին անձրևից։ Ով թքել է իր հոգու փրկության վրա, իհարկե, թերևս այսպիսի գիշերով վեր մագլցի Երեք Միանձնուհիների մոտ։

Երիտասարդների քաջությունը դիմացավ ճիշտ մինչև ճանապարհի վերջը։ Այն կտրել-անցնել ու խճուղի դուրս գալ կտրականապես հրաժարվեցին։ Հերը Ուրբախն ընտրեց ամենալավ լապտերը և, շրջանցելով, գնաց դեպի ժայռը։ Նա դեռ չէր հասցրել խճուղին կտրել ու շրջանցել Երեք Միանձնուհիներին, երբ աղմուկը հանկարծ լռեց։ Բարձունքից երբեմն-երբեմն ցած էին գլորվում հավասարաչափ թափահարվող թիթեղի բեկվող զնգոցները։ Արձագանքն այստեղ ոչ մի անգամ չկրկնվեց։

Հերը Ուրբախը բղավեց.

— Մարի՜։

— Հա՜-ա,— լսվեց ի պատասխան։

— Ցածում քեզ եմ սպասում։

— Գա-լի՜ս եմ։

Լսվեց, ինչպես քարին դիպավ ու զնգաց թիթեղը։ Եվ կամաց-կամաց, վայրկյան առ վայրկյան խաղաղվեց ու լեռների վրա տարածվեց լռությունը։

Մարին, արագ սահելով թաց քարերի վրայով, ճմրթված, փայլուն անձրևակաթիլներով ծածկված, հայտնվեց լապտերների լույսի դեղին շրջանի մեջ։ Նա մատը դրեց բերանին ու դավադիրի նման գլուխը տարուբերեց.

— Հայրիկ, միայն թե ոչ մեկին չասես, որ այդ ես էի։ Թիթեղը մնաց վերևում։ Վաղը կգամ այստեղ և հետս մի թիթեղ էլ կբերեմ։

— Վաղը ամբողջ օրը սենյակում կլինես։

— Ոչ, հայրիկ, միասին կգանք այստեղ։ Դու անպայման պիտի նստես վերևում, Միանձնուհիների ոտքերի տակ։

— Իսկ դու կնստես փակի տակ, ասում եմ քեզ։

— Վա՜հ, ինչ տեռակն ես։ Քեզ ասում եմ, չէ՞, այնտեղ այնքան սարսափելի է, որ չես կարող դիմանալ։ Դու անպայման վախից ցած կգլորվես։

Նա ծիծաղեց, բռնեց հոր թևն ու թոչկոտելով վազեց առաջ, ասես ոչ թե հայրն էր նրան տուն տանում, այլ նա՝ հորը։

Դա վերջին շարությունն էր, որ Մարիի վրա ոչ մի հետք չթողեց։

Գարնանը նա սկսեց աչք ածել, տնտղել իր գյուղի ընկերներին։ Պետք էր ստուգել նրանց հավատարմությունը, ընտրել ամենավստահելիներին, ամենավճռականներին, լռակյաց ու դիմացկուններին։ Միայն երեքի վրա կարելի էր հանգիստ սրտով հույս դնել։ Դրանք տասներեք-տասնչորս տարեկան տղաներ էին՝ լայնաթիկունք, ամրակազմ, և երեքն էլ կարծես ընտրովի, այնպիսի մեծ, կլոր աչքերով, որ երբ Մարին պատմում էր նրանց սարսափելի պատմությունները, նրան թվում էր, թե այդ աչքերը ահա ուր որ է դուրս կթռչեն ու կգլորվեն։ Իհարկե, այդպիսի տղաների խելքը տեղն է, և նրանք կարողանում էին լեզուները փակ պահել։ Բացի այդ, նրանք որոշ բան լսել էին հարյուրավոր տարիներ առաջ ամբոցում թաղված քարե մարկգրաֆուհու մասին։ Նրանց դժվար չէր համոզել, որ սկսեն խորհրդավոր պեղումներ կատարել վանքի ավերակներում. նրանք իրենք էին շտապեցնում Մարիին ու վաղուց արդեն վճռել էին, թե ով որտեղ պետք է փախչի, երբ ամրոցի ստորերկրյա ներքնատանը զբաղեն մարկգրաֆուհու գանձերը։

Ամեն մեկին չէր հաջողվի հարկ եղածին պես կարգադրել այնպիսի բարդ գործը, ինչպիսին է գանձի որոնումը։

Մարին գիտեր ինչ պետք է անել։

Մի անգամ նա իր բարեկամներին բերեց հոր առանձնասենյակը։ Պահարաններից ու գրադարաններից երեխաների գլխին թափվեցին գրքեր, քարտեզներ և պլաններ։

— Ահա։ Նայեցեք։ Այստեղ գրված է անգլերեն. չորս հարյուր տարի առաջ մարկգրաֆներն իրենց ընտանեկան դամբարանում գտել են քարացած մարկգրաֆուհուն։ Երբ փորձել են վրայից հանել թանկարժեք զարդերը, դագաղի կափարիչն ինքն իրեն փակվել է, և այլևս անհնարին է եղել բանալ...

— Ահա ձեզ փաստաթուղթ։ Այստեղ գերմաներեն է գրված։ Գերմաներեն ինքներդ էլ կարդալ գիտեք։ «Հազար հինգ հարյուր վաթսուն թվականին մարկգրաֆներն իրենց ամրոցը տվել են կապուցինյան միաբանությանը»։ Տեսնո՞ւմ եք։ Կարդացեք. կապուցինյան միաբանությանը։

Առարկելու բան չկար. սևով սպիտակի վրա գրված էր. կապուցինյան միաբանությանը։ Եվ տարեթիվը։ Զարմանալի ճշտությամբ՝ 1560 թվական։

— Հաստատ գործ է,— ասաց մասնակիցներից մեկը։

— Ըհը,— ասաց Մարին, և բոլորը վախեցան։

— Հետո, նայեցեք այ այս գիրքը։ Տեսնո՞ւմ եք, այստեղ նկար էլ կա՝ ցուր Մյուլեն-Շենաու հին ամրոցը։ Եվ գրված է, որ մարկգրաֆուհու դագաղը ավերակների տակ է մնացել մինչև մեր օրերը։ Հասկանո՞ւմ եք։

Բոլորն էլ, իհարկե, հիանալի հասկանում էին։ Ասենք, հնարավոր էլ չէր չհասկանալ, երբ Մարին իր ընկերակիցների մոտ հանդես էր բերում արտակարգ գիտություն, կարդում էր ոչ միայն անգլերեն, այլև հոլանդերեն և նույնիսկ ամերիկերեն, ինչ-որ դեղնավուն էջեր էր շրջում, թեր-

թում հսկայական թղթապանակներ և գունավոր քարտեզներ։ Ահա թե երբ կարող էին աչքերը դուրս թռչել։

— Հիմա գործի անցնենք,— ասաց մասնակիցներից մեկը։

— Դեռ ոչ,— հայտարարեց Մարին,— ես դեռ պետք է ուսումնասիրություն կատարեմ։

Այդ խոսքը հնչեց հանդիսավոր, և բոլորը համաձայնեցին, որ առանց ուսումնասիրության չի կարելի գործին ձեռնամուխ լինել։

— Ո՞վ է այսօր իմ թղթապանակները քրքրել,— հարցրեց հերը Ուրբախը երեկոյան։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում,— վախեցավ Մարին և հոր գլուխը մոտեցրեց շուրթերին։— Դրանք բոլորը ձեռագրեր են, որ բացում են գաղտնիքը...

— Դու պետք է զբաղվես ոչ թե գաղտնիքներով, այլ թվաբանությամբ։

Սակայն գաղտնիքը բացվեց։

Գաղտնիքը բացվեց անտառում, ավերակների մոտ, և ամփոփված էր այն պլանի մեջ, ուր Մարիի ձեռքով նշված էին հին ամրոցի բոլոր ստորերկրյա անցքերը, այն տեղը, որտեղ պետք է պեղումներ կատարեին, և քարե մարկգրաֆուհու գերեզմանոցը։ Այդ օրն այլևս ոչ թե հավատում, այլ համոզված էին, որ ստորերկրյա գանձը գոյություն ունի։

— Երդվեցեք, կրկնեցեք իմ ետևից ամեն խոսքս,— շշնջաց Մարին, ձեռքը բարձրացնելով։

Եվ դավադիրներն արտասանեցին.

— Երդվո՛ւմ ենք, որ աշխարհում ոչ մեկին չենք հայտնի մեր գաղտնիքը։ Երդվո՛ւմ ենք, որ կաշխատենք այնքան, մինչև գտնենք քարե մարկգրաֆուհուն։ Կաշխատենք գաղանի նման։ Կաշխատենք ցուլի նման։ Թող մեզ կրակի վրա այրեն ու երկաթով դաղեն։ Երդվո՛ւմ ենք, որ ոչ մի խոսքով իրար չենք մատնի։ Երդվո՛ւմ ենք, որ եղբայրների նման, առանց զժտվելու կբաժանենք գանձը։ Երդվո՛ւմ ենք, որ կգտնենք բահեր, լապտեր և պարան։ Եվ ամեն ինչում կենթարկվենք Մարիին։ Ամե՛ն։

— Սպասեցեք,— ասաց Մարին, երբ երդումն արդեն տրված էր,— վերջը ինձ դուր չի գալիս, պետք է կրկնել։

Բոլորը նորից ձեռքները բարձրացրին և ասացին.

— Եվ ամեն ինչում ու ամբողջ կյանքում կենթարկվենք Մարիին։ Երդվո՛ւմ ենք, երդվո՛ւմ ենք։ Ամե՛ն։

— Ահա, հիմա լավ է։ Կարելի է գործի անցնել։

Եվ գործի անցան։

Ավերակների վրա առաջին անգամ բարձրանալով, նրանք սահմանափակվեցին տեղանքի ուսումնասիրությամբ։ Գտան հողով ծածկված, մամռակալած մի ելուստ՝ սուր և բարձր։ Վճռեցին, որ դա ստորերկրյա ներքնատան մուտքն է։

Հաջորդ օրվանից սկսեցին պեղումները։ Աշխատանքը տևեց երեք օր։ Առավոտները, երբ թփերի վրա դեռ վառվում էր փայլուն շաղը, երեք դավադիրները հորենական նկուղնեերից գողանալով բահերը, գաղտագողի, ամեն մեկն իր ճամբով, շարժվեցին դեպի ավերակները։ Այնտեղ հանդիպելով ու փոխադարձ մռայլ հայացքներ փոխանակելով, նրանք մեկին ընտրեցին պահակության համար։ Երկուսն սկսեցին փորել։ Հողը փխրուն էր, բահի տակ ընկնող արմատներն ու կոճղի կտորտանքը փշրվում էին մի թեթև հարվածից, քարեր չկային, և գործը շատ լավ էր առաջ գնում։ Երբ արևը բարձրացավ կաուշեի վրա, պահակ կանգնածի ականջին հասավ ծանոթ սուլոցը։ Մարին իր բարեկամների համար նախաճաշ էր բերում։ Դա գանձ որոնողների ապրած ամենալավ պահն էր։ Օ՜հ, ինչ համեղ բաներ կային Ուրբախ վիլլայի բուֆետում։ Եվ հողափորների ախորժակը ինչպե՞ս էր բացվում առավոտյան ժամը տասի մոտերքը։ Հենց միայն էդամական պանրի համար արժեր բահ բանեցնել։

Մարին հարցաքննում էր իր բարեկամներին, ինչպես սպան՝ զինվորներին, ամեն կողմից պատվում փորված ելուստի շուրջ, բահով խփում էր գետնին և բղավում.

—Լսո՞ւմ եք, ինչպես է թնդում։

—Թնդում է, ու-ու-ու,—արձագանքում էին դավադիրները։

—Շուտով կհասնենք։

—Այո, կհասնե՛նք։

Տարօրինակն այն է, որ իսկապես փորեցին հասան։

Երրորդ առավոտ, երբ նախաճաշից հետո բահերը ձեռքներն առան, խրամատը հանկարծ ոտքների տակ փլվեց, փոս դարձավ։ Վախեցած ետ թռան։ Իրար նայեցին։ Փորձեցին

զգուշությամբ հողը փորել փլվածքի շուրջը։ Եվ ուրախացած, վախեցած, մի տեսակ թռչնային վայնասուն բարձրացրին, փոսի մեջ թափվող հողագնդիկները խուլ կերպով զարկվում էին ստորերկրյա ներքնատան ամուր, անտեսանելի հատակին։

— Պարա՛նը,— հրամայեց Մարին, փորված հողակույտի մեջ մի սրածայր քար որոնելով։

Այն ամենը, ինչ դրանից հետո տեղի ունեցավ, կատարվեց այնպես, ինչպես նավի տախտակամածի վրա՝ կարճ, հատու, հարթ։

Քարով և պարանով ուղղալար պատրաստեցին։ Ուղղալարով չափեցին փոսի խորությունը։ Փոսին մոտեցրին մի չորացած ծառ և գցեցին անցքի վրա։ Պարանի մի ծայրին օղակ էր արված, մյուսն ամրացված էր չորսուներին։

Մարին մտնում է օղակի մեջ, լապտերը ձեռքն առնում և հաղթանակող հայացք նետում իր բարեկամների վրա։ Նրա դեմքին վճռականություն կար, բերանը կիսաբաց էր, շրթունքներն անհանգիստ թրթռում էին։ Նա նստում է չորսուի վրա, ոտքերը կախում փոսի մեջ ու հրամայում.

— Իջեցրե՛ք։

Տղաները ոտքներն ամուր սեղմում են գետնին ու պարանը ձգում։ Մարին ծառից ցած է թռչում, և նրա գլուխը, որ կարծես քանդակված լիներ խրամատի սև կտրվածքի վրա, անհետանում է գետնի տակ։ Պարանը ցնցվող լարի պես սահում է փոսի մեջ, կտրիճները հայացքները մեխում են մութ, սև անցքին և շունչները պահում ճիշտ նույնպիսի երկչոտ զգուշությամբ, ինչպես դողդոջ ձեռքերն են պարանը բռնում։ Սակայն ահա պարանը թուլանում է, ճոճվում օդում, ընկնում և գետնի տակից խեղդված, հազիվ լսելի մի ձայն է գալիս.

— Եկեք այստեղ։

Ու երբ դավադիրները գլուխները կախում են փլվածքի վրա և տեսնում խորքում լապտերի աղոտ լույսն ու Մարիի սոսկալի գունատված դեմքը, նորից լսում են խեղդված, օտար ձայնը.

— Ստորերկրյա ներքնատունն է։ Ցած իջեք, բերեք բահերը։ Ես առաջ եմ գնում։

Նրանք տեսնում են, ինչպես գունատ դեմքն անհետանում

է գետնի տակ, աղոտ լույսը ճապաղվում է, մարում, անհետանում խավարի մեջ։ Այն ժամանակ պարանը դուրս են քաշում, կանգնում են մի կողմ ու սկսում մտածել, թե ով իջնի ստորերկրյա ներքնատուն։

Այդ պահին գետինը ցնցվում է նրանց ոտքերի տակ և լեռներով՝ բարձունքից բարձունք ահավոր մի հառաչ է գլորվում. փորված ելուստը խրվում է հողի մեջ և Մարիին կլանած փոսի տեղում բացվում է փլվածքի խոր երախը։

Եվս մի պահ, ու դավադիրները փախչում են ոսկ աչքը որտեղ կտրի։ Լսվում է, ինչպես ավերակների ետևում, տարբեր կողմերից ճրթում են ճյուղերն ու ծանր քարեր են թափվում։ Հեռո՛ւ, ավելի հեռո՛ւ։

Լռություն։

Այդպես երկրորդ անգամ մահը եկավ Մարիի կանից...

Դանձ որոնողների տված երդումը չխախտվեց։ Ճիշտ է, նրանց երկաթով չդաղեցին և կրակով չայրեցին, քանի որ փորվածքի մոտ մոռացված բահերը անառարկելիորեն մատնեցին բոլոր դավադիրներին, սակայն նրանց վիճակվեց շատ դառն ժամեր ապրել։ Եվ ի՞նչ իմանաս, որն էր ավելի ծանր՝ հայրերի բռունցքնե՞րը, որոնց համը վաղուց էին առել, թե՞ գանձի կորուստը, որի մասին եղած երազանքը չքացավ առաջին իսկ վերջալույսին։

Քանդի երբ երեկոյան՝ փլուզումից տասը ժամ հետո, գյուղացիները փորելով հասան մինչև անձավները, և Մարին լացեց հոր գրկում, նրա առաջին խոսքերն էին.

— Մարկգրաֆուհին այնտեղ չէ...

Անդոր ածխիկի նման մարմրում էր լապտերը, որով Մարին իջել էր ստորերկրյա ներքնատուն։ Նա երկու ձեռքով կառչել էր այդ լապտերից։ Դեմքը հողագույն էր և խիստ։ Արտասուքները գլորվում էին դանդաղ շիթերով։

— Հիմար, հիմար,— ասաց հերը Ուրբախը,— պետք է նախ ինձ հարցներիր. մարկգրաֆուհին նոր ամրոցում է։

Այսպես Մարին ծնվեց երրորդ անգամ։

Դա համընկավ նրա տասներեքերորդ տարեդարձին, և գյուղացիներն այդ զուգադիպությանը վերագրեցին Մարիի մեջ տեղի ունեցած փոփոխությունը։

Նա դարձավ լռակյաց, դանդաղաշարժ, վերացավ շարժում-

ների կտրուկությունը, ու թեև դեռ երեխա էր, սակայն մեծի դիմագծերն արդեն պատրաստ էին կլանելու նրա մեջ մնացած մանկականը։ Նա վանում էր իրեն հանդիպած բոլորին։ Հատկապես վախեցնող էր աղջկա աչքերում հայտնված չար համառությունը, և մի միտք՝ դաժան ու անհանգիստ, մշտապես սառեցնում էր նրա հայացքը։

Այդ ժամանակից էլ ծայր առավ Մարիի շուրջ եղած խոսակցությունը. թե նա սատանայից շատ չի տարբերվում, ու թե ավելի լավ է մարդ նրան չհանդիպի։ Այդ ժամանակ, հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ այն անբացատրելի դեպքը ֆորշտանդի թղթերի հետ, իսկ հարգարժան երգեհոնահարը աղջկա շնորհիվ փոշտաց եռամիանձնության ամբողջ պատարագին։

Մեր կառապանը, որ իր կյանքում ինչքան ասես հավ, սագ ու բադ էր մորթել, հանկարծ հրաժարվեց կատարել մորթողի իր պարտականությունը։ Հարկ եղավ նրան խոհանոցում մի լավ նեղել, որպեսզի պատմի, թե իր հետ ինչ էր պատահել նկուղում, երբ պատրաստվում էր սագ մորթել։ Հենց նոր էր տեղավորվել աթոռին ու սագին սեղմել ծնկների արանքում, երբ նրա մոտ վազեց ֆրոյլայն Մարին ու ցանկություն հայտնեց իր ձեռքով սագին մորթել։ Այո՛, այո՛, Մարին՝ իր ձեռքով։ Պատկերացնո՞ւմ եք նրա վիճակը այդ լսելիս։ Իհարկե, նա Մարիին համոզում էր, խնդրում, նույնիսկ սպառնաց, թե կգանգատվի։ Բայց ի՞նչ։ Մարին սագի վզից բռնեց ու իրենն էր պնդում՝ տուր որ տուր։ Վերջ ի վերջո համարյա թե խլեց դանակն իր ձեռքից ու խփեց սագի վզին։ Սագի գլուխը նրան չհաջողվեց կտրել, սակայն արյունն ուժեղ սկսեց հոսել, ու սագը կառապանի ձեռքից փախավ։ Մեծ թռչուն էր, ուժեղ։ Թևերը երկու-երեք անգամ թափահարեց ու թռավ տանիքի տակ, այս ու այն կողմ նետվեց նկուղում, դիպչելով ծպեղնեերին, կողափայտերին, սոսկալի խռպոցներ արձակելով։ Սագն ամբողջապես արնաշաղախ էր, և արյունը սև կաթիլներով ընկնում էր հատակին։

Իսկ Մարին անշարժ կանգնել էր բարավորի մոտ և մի տեսակ մեռած, պաղած հայացքով հետևում էր շունչը փչող թռչունին։ Ու երբ կառապանը նկատեց այդ հայացքը, ղլուխը կորցրած դուրս թռավ նկուղից։ Մարիի աչքերը հիշել կամ

մտնել այն նկուղը, որտեղ տեսել էր այդ աչքերը, նա սարսափում էր։ Իսկ թռչուն մորթել հիմա պարզապես չի կարող։

Սագի հետ պատահած դեպքից քիչ անց Մարին փախցրեց Ադոլֆի սիրելի կատվին։

Ա՜հ, իսկապես, Հայնրիխ Ադոլֆը։ Սակայն նկարագրել Մարիին, կնշանակի ոչինչ չասել նրա ավագ եղբոր մասին։ Նրանք ապրում էին անջատ, թշնամաբար, տարբեր սենյակներում։ Ունեին տարբեր ուսուցիչներ, տարբեր ուրախություններ և տարբեր ատելություններ։ Մարին Ուրբախի աղջիկն էր, Հայնրիխ Ադոլֆը՝ որդին ֆրաու Ուրբախի, ծնյալ ֆոն Ֆրեյլեբեն։ Նրանց միացնում էին միայն անունն ու ճաշասենյակը։ Ճաշասենյակն ավելի, քան անունը։ Նրանք օտար էին։

Ադոլֆը, որ շարունակ կենդանիներ էր խնամում, իսկույն նկատեց իր սիրելիի՝ լավ խնամված, գեր անգորական կատվի անհետանալը։

Ամբողջ տանն սկսեցին դռները չխկչխկացնել, ձայներ էին լսվում միջանցքներում, անցումներում, ֆրաու Ուրբախն ինքը՝ իր ռետինե ծայրով փայտիկը ձեռքն առած բարձրացնում էր ծածկոցներն ու նայում կահույքի, մահճակալների տակը։ Ադոլֆը ճղավոցով, նվնվալով, ոտքերը գետնին դոփելով մի սենյակից մյուսն էր վազվզում, ու վերջապես սիրտ արավ մտնել վիլլայի հոր հարկաբաժին։ Այնտեղ, գաղտագողի, շունչը պահած նա մոտեցավ Մարիի սենյակին և մուտքի մոտ մի քիչ տատանվելուց հետո, միանգամից, ամբողջ ուժով դուռը բացեց, սենյակ ներս թռավ ու մնաց քարացած։

Պատի լամպի բարձակից, մահճակալի սնարին, կոկորդից կախված էր կատուն և ճոճվում էր. մեջքի փափուկ, երկար մազերը փոփոլացել էին, պոչը վեր էր քաշված։ Կատվի թաթիկները ջղաձգվում էին, բաց արած ատամների վրա, ասես խուտուտ տալուց, ցնցվում էին փայլուն, կոշտ բեղիկները, փորն էլ ցնցվելով ներս էր ընկել, կպել ողնաշարին։

Ադոլֆը Մարիին չէր տեսնում։ Նա նետվեց դեպի կատուն, բարձրացրեց և սկսեց քաշքշել վզի մեջ խրված և կատվի մազերի մեջ խճճված քուղը։ Նա շնչահեղձ էր լինում՝ կարմրատակած, արցունքներով ողողված, անեծքներ էր ֆշշաց-

նում, անհամբերությունից ոտքերը դոփում էր գետնին ու շրջեց հատակին դրած ափսեով կաթը։ Հետո մի սուր ճիչ արձակեց. կատուն, շունչը ետ բերելով, ճանկերը խրեց նրա մարմնի մեջ։ Ծառաները վազեցին եկան։

Մարին ոչ մի տեղ չկար...

Երեկոյան նա կանգնած էր հոր առանձնասենյակում և խեթ-խեթ հետևում էր իր խոնավ սուր աչքերով, ասես սպասելով հարձակման, պատրաստ այդ հարձակմանն, ամբողջապես կծկված, փոքրիկ, ինչպես մի գազանիկ։

Հերր Ուրբախը սենյակի մի անկյունից մյուսն էր քայլում, գզգզում էր իր կարճ կտրած մազերը, ձեռքերը ջղային շարժում, ասես գրպաններում մի բան փնտրելով ու հառաչում, մի կերպ իրենից դուրս կորզելով.

— Հը-ը՛մ։

Նա երրորդ անգամ կանգ առավ Մարիի դիմաց, ձեռքերն իրար զարկեց ու հարցրեց.

— Մարի, Մարի, քեզ ի՞նչ է պատահել։

Մարին վեր ցցեց սուր ուսիկներն ու այդպես, առանց իջեցնելու, խիստ զարմացած, բացականչեց.

— Ասում եմ, չէ՞, միևնույն է, ես նրան կաթ կտայի, այդ զզվելի կատվիկին։

— Բայց ինչո՞ւ այդպիսի գարշելի բան արեցիր։

— Ուզում էի տեսնել, թե նա ինչպես է մեռնելու...

— Տե՛ր աստված։

Հերր Ուրբախն ընկավ բազկաթոռին։ Նրա ձեռքերը լաթի պես կախվեցին, շտեսնող հայացքը սևեռեց լուսամփոփին, նստեց այդպես երկար ժամանակ, անձայն, մատն իսկ, հոնքն իսկ չշարժելով. մտածում էր։

Ֆրաու Ուրբախը պատմել էր նրան ոչ միայն Ադոլֆի կատվի մասին։ Նրան հայտնի էր նաև նկուղում տեղի ունեցածը։ Նա գիտեր այգում Մարիի արարքները՝ արյունարբու, զզվելի արարքները։

Ֆրաու Ուրբախը պնդում էր, պահանջում, հրամայում, որ Մարին ուղարկվի որևէ փակ դպրոց, վերջապես նույնիսկ մանկատուն. չէ որ գոյություն ունեն այդպիսի հաստատություններ փոքրահասակ հանցագործների համար։ Հո չի՞ կարելի

Հայնրիխ Ադոլֆին դաստիարակել այս այլասերված աղջկա հետ։

— Լռեցե՛ք,— բղավեց այդ ժամանակ հերր Ուրբախը։

Փակ, վարագուրված դռները, պատուհանները, ռետինե ծայրապանակի թխկոցը հատակին, ողբ, հանդիմանություններ, սպառնալիքներ, սուորացուցիչ, անիմաստ սրտխառնուք առաջացնող հիստերիա։ Այո՛, այո՛, հիստերիա առաքինի, պատկառելի և խիստ ֆրաու Ուրբախի հետ։

Մարին մի անկյուն մտած լուռ հետևում էր հորը։

Նա ցնցվեց, հայացքով դտավ աղջկան և փոխված՝ կոպտացած, խեղդված ձայնով ասաց.

— Ի՞նչ անենք, Մարի, ի՞նչ անենք։ Ես միշտ քո բարին էի կամենում, քո բարեկամն էի։ Ի՞նչ անենք։

Նա վեր կացավ, բռունցքը խփեց սեղանին։

— Աշնանը պանսիոն կգնաս։

Դեմքը դարձրեց աղջկան։

— Ես հո երբեք քեզ չէի ճնշում։ Հիմա... այդպես ավելի լավ կլինի... Գնա քո սենյակը։

Մարին դուրս եկավ իր դարանից, անհաստատ քայլեց դեպի դուռը։ Արդեն դուռը բացել էր, երբ կանգ առավ ու նայեց հորը։ Նա դարձյալ կանգնել էր մեջքով դեպի աղջիկը։ Թեթև, կտրուկ շարժումով Մարին նետվեց դեպի հայրը, կանգ առավ բազկաթոռի մոտ։ Զգուշությամբ դիպավ հոր բաճկոնին ու շշնջաց.

— Բարի գիշեր։

Հայրը, առանց շարժվելու, կրկնեց.

— Գնա սենյա՛կդ։

Այն ժամանակ Մարին կտրուկ շրջվեց, վազելով դուրս թռավ, դուռը ետևից շխկացրեց և սլացավ միջանցքով։

Մինչ ուշ գիշեր պառկել էր անկողնում, առանց հանվելու, արմունկները բարձին հենած, նայելով սեղանի տակ, ուր մի կույտ էր գոյացել վաղուց մոռացված նեգրերից, իշուկներից, տիկնիկներից, արջերից ու շնակապիկներից, որոնք ընկած էին մեջքի, փորի վրա, գլխիվայր։ Մարին շարունակ սպասում էր, թե բիբաբո-կապիկը մռութը նրա կողմը կդարձնի ու կճչա.

— Խե՛ղճ Մարի։

Սակայն բիբաբոն լուռ էր։

Ֆրաու Ուրբախը նստել էր ձեռագործը ձեռքին, երբ ամուսինը եկավ նրա մոտ։ Նա ձեռքը մեկնեց ու կամացուկ ասաց.

— Ներեցեք, ես խիստ էի ու կոպիտ։ Վճռեցի Մարիի հետ վարվել այնպես, ինչպես դուք խորհուրդ եք տալիս...

— Դա միանգամայն խելամիտ կլինի,— պատասխանեց Ֆրաու Ուրբախն ու իր մատների ծայրերը դրեց ամուսնու ձեռքի մեջ։

Հերր Ուրբախը համբուրեց կնոջ մատները, նստեց բազմոցին, նրա կողքը։ Տունը սուզվում էր լռության մեջ։ Ֆրաու Ուրբախի հիվանդ ոտքը դրված էր ուլունքազարդ աթոռակին։ Ոսկրե ճաղերը փափուկ շարժվում էին գործվածքի խավոտ բրդի մեջ։ Հերր Ուրբախը սևեռուն նայեց աղոտ լույսով լուսավորված կնոջ հաստատակամ կիսադեմին։

— Որքան դաժա՞ն եք,— ասաց նա,— որքան դաժա՞ն եք։

— Հեռացե՛ք այստեղից,— պատասխանեց կինը մի պահ լռելուց հետո։

Հերր Ուրբախը վեր կացավ և մատները ճթճթացրեց։

— Առանց ձեր հրավերի էլ այդ պիտի անեի...

Բիբաբոն լուռ էր։ Կապիկի ստորին ծնոտը անկենդան կերպով վեր էր ցցել նոսր ճերմակ մորուքը, ու դեղնակարմիր սաթե աչքերը կրակոտ շովել էին դեպի լուսինը, որը նայում էր սեղանի տակ, խաղալիքներին։ Ոչ մի շարժում, ոչ մի ձայն այդ կենդանի, իհարկե կենդանի հոգիների ու դանձերի կույտից։

Խե՜ղճ Մարի։

Նա տեղից վեր թռավ, սեղանի տակից դուրս քաշեց բիբաբոն ու խաղալիքի գլուխը զարկելով լուսամուտագոգին, այն դուրս նետեց այգի։

— Գնա այնտեղից նայիր քո հիմար լուսնին։

Հետո վարագույրը քաշեց, և մթությունը տեսնում էր, ինչպես անկողնում վերմակի մեջ փաթաթված մի գունդ էր ցընցվում։

Առավոտյան Մարիին հայրն արթնացրեց.

— Վեր կաց։ Կուզե՞ս ծով մեկնել։

Մարին մահճակալին վեր-վեր թռավ, վերմակը վրայից սահեց։ Քնից տաքացած, վարդագունած, զզզված մազերով, նա իր ամուր ձեռքերի ամբողջ ուժով սեղմեց հորը և փչեց նրա դեմքին.

— Քեզ վրա չեմ բարկանում։ Գիտեմ, պանսիոնը քո հնարածը չէ։ Ճիշտ է, չէ՞, դու չես...

Քայլերը հաստատուն են դառնում

Լայնարձակություն, լայնարձակություն և լույս։

Քամին այրող, ծակող ավազը քշում է հարավից արևմուտք, ափի հարթ դեղին տախտակից՝ ծով։ Ցածր ալիքների դանդաղկոտ կատարները հարթում են խաղաղ ջուրը, վազում ավազի վրա, զզզվում, ճանկռում այն, ներկում մի տեսակ կարմիր գույնով ու թափանցիկ փայլարե շղարշով ետ են գլորվում ծով։ Ավազի վրա կարմիր շերտը վարդագունում է, ներսից դեղնում, անհետանում։

Ամպերը կողքից կողք են շրջվում, ձգվում ու մնում անշարժ. նայում են ծովին։ Երկնքից թանձր կապտություն է իջնում, ավելի ու ավելի արագ գահավիժում, անհաշիվ-անհամար կապույտ կոտորուքով վեսվեսում ջրի վրա և կոտորուքից առաջացած խայտանքը անձայն ետ է թռչում ջրից, բարձրանում վեր, դեպի ամպերը, նրանցից էլ վեր՝ կապույտ անհունը, դեպի երկինք։

Լողափի հարթ, դեղին տախտակը տարածվում է հեռու, մինչև հորիզոն, և այնտեղ վազիր, վազիր՝ ուժ չկա, վերջ չկա։ Փայլուն գծի ետևից, տարօրինակ կերպով հեռավոր,— և ինչպե՞ս է մարդու աչքը կտրում,— փայլուն գծի, որը գուցե ծովի, գուցե երկնքի գիծն է, քամուն հանդիման, քամու պոռթկումների միջև մի տեսակ խեժահամ ու աղահամ կեղևի հոտ է փչում, ահա՝ ձկան հոտ է, ահա հիմա էլ՝ թարմ, նոր կթած կաթի։

Աչքերդ կկոցես ու պտտվես միևնույն տեղում, իսկ հետո գուշակես, թե ի՞նչ գույն կտեսնես։ Եթե դեմքդ դեպի ծովը դարձրած բացես աչքերդ. երբ հնարավոր չէ կռահել։ Թխադ

ոտքերը հազիվ դիպցնելով շիկացած ավազին, ամբողջ մարմինը դեմ անելով նրա ծակող ասեղիկներին, որոնց քշում է քամին, քամին այրում, վառում է մինչև ոսկորները։ Ականջներում՝ ջրի պղնձե հառաչներ, ինչ-որ տեղ աչքերի ետևը, գլխում, իր խորքում՝ վրդովված, այրվող, անմար կայծեր, որոնք հրդեհում են լույսի շերտերն ու թելերը։

Կեսօրին Մարին քայլում էր ափով, լողափին զարկվող խաղաղ ալիքների եզրից։ Ոտքերի տակ փափուկ մխրճվում էր տաք ջրով հագեցած ավազը, և ոտնաթաթերն իրենց տակ ոչ խոր փոսիկներ էին առաջացնում, որոնք իսկույն սպիտակին էին տալիս և ապա անմիջապես լցվում թանձր, մուգ թացությամբ։ Մաքրված, գույնզգույն խցիկներով զարդարված լողափը վաղուց արդեն մնացել էր ետևում։ Շարունակ ավելի էին ջրին մոտենում գանգուր մուգ կանաչ թփերը։ Երեք ուռենիների կողքին ընկած էր առագաստանավի փտած, կիսաջարդ կմախքը։ Այնտեղ, ուր նրա կողերը խրվել էին ավազի մեջ, տարածվել աճում էր թավ, գետնահար խոտը, իսկ խոտի վրա կարմրին էր տալիս մի լայն բիծ։

Մարին մոտեցավ դրան, անձայն քայլելով ավազի վրայով։

Ուռենու տակ, կարմիր լողազգեստը հագին նստել էր մի շիկահեր աղա, կորացած մեջքը ծովի կողմն արած։ Ավազի վրա գոյացած բացատում, երկարած ոտքերի արանքը նա մի բան էր սարքում խեցիներից, գլուխը կախ, գրեթե չշարժվելով և շուրջը ոչինչ չնկատելով։

Մարին այնքան մոտեցավ նրան, որ տեսնում էր ինչպես էին նրա ձեռքերը՝ ավազի նման սպիտակ ու նիհար, դարսում խեցիները, ու տղայի առաջ կանգնում էին տարօրինակ քարանձավներ, բերդեր, փոքրիկ ամրոցներ։ Հետո գաղտագողի հեռացավ, առանց մի անզգույշ ձայնով կամ շարժումով իրեն մատնելու։

Ծովափին Մարին խեցիներ հավաքեց. դրանք ալիքաձև շերտով ընկած էին ափի երկայնքով, ջրից մի քանի քայլի վրա, արևից չորացած, քամհարված, շոր։ Սակայն դրանցից մի բան կառուցել, թեկուզ շատ հասարակ մի բան, նրան չհաջողվեց։ Խեցիները թափվում էին նրա ձեռքից, իրար վրա ընկնում, գլորվում և ոչ մի հնարով նրան չհաջողվեց դրանք

միացնել և ստիպել, որ այդպես մնան։ Մարին խեցիները տրորեց, ավազի մեջ խրեց։

Հետո ետ դարձավ ուռենիների մոտ և մոտեցավ տղային։ Բերդերը շրջապատված էին ժայռերով, ամրոցից ամրոց էին ձգվում կարմիր մանրախճից սարքված արահետները, քարանձավներն ամբողջապես կանաչի մեջ էին։ Դա մի ամբողջ աշխարհ էր։

Եվ ահա՝ մեկ-երկու, թռիչք այդ աշխարհի հենց կենտրոնը, ոտքի արագ հարվածներ՝ քարանձավներին, բերդերին, ամրոցներին, հետո այս ու այն կողմ նետվող՝ ավազ, խոտ, խեցիներ, ճրճտոց, աղմուկ և՝ հուսակտուր ճիչ։

Տղան փախավ, ետ նայեց։ Ճչաց նա վախից, ոչ թե նրա համար, որ ափսոսում էր խեցիներից վարպետորեն կառուցածը. և հիմա, քիչ հեռու կանգնած, զարմանում էր իր վախի վրա։ Մարին, նայելով նրան, ձեռքերը դրել էր ետևն ու սպասում էր։ Նա սպասում էր դիմադրության, արցունքների, սպասում էր, որ աղջկա նման խեցիներով այսպես հիմար խաղեր անող փոքրիկ տղան պաշտպանվի։ Սակայն, տարօրինակ բան, նրա առջև կանգնած էր մի պատանի. Մարին հիմա միայն նկատեց, թե նա որքան մեծ է, ուժեղ ու հանգիստ, որ նրա մտքովն էլ չի անցնում ոչ լալ, ոչ պաշտպանվել։ Նա Մարիին էր նայում լայն, բաց գույնի աչքերի անշարժ հայացքով, հազիվ բերանը բացած, ու լռում էր։

Մի պահ Մարիին թվաց, թե երբևէ տեսել է նրա դեմքը։ Մարին ավելի ուշադիր նայեց տղային ու հանկարծ հիշեց, որ մերկ է, որ ծով վազեց առանց լողազգեստը հագնելու, որ նա՝ այդ պատանին, առաջին մարդն է, որին հանդիպեց խցիկից դուրս թռչելուց հետո և որ նրան այդ պատանուց բաժանում են միայն լույսն ու օդը։ Նա ատամների արանքից ֆշշացրեց նախօրոք պատրաստած խոսքերը.

— Հապա մի փորձիր ձե՛ռք տուր։

Սակայն պատանին չէր շարժվում, շարունակում էր առաջվա նման նրան նայել կանգ առած հայացքով, ու նրա հայացքը ոտքից գլուխ ընդգրկում էր աղջկան։

Այն ժամանակ Մարին վազեց դեպի ծով...

Բաց գույնի լայն աչքերը հետո նա տեսավ աղմկոտ քաղաքի կայարանի թունելում, երբ հոր հետ տուն էր վերադառ-

նում, և ինքն էլ չգիտեր ինչու ուրախացավ ու սարսափեցավ։ Աչքերը նրան չհանդիպեցին, հանդիպումն անցողիկ էր, սակայն Մարին հասցրեց նկատել, որ աչքերի վրա ռազմական գլխարկի խոր հովար էր կախված։ Ամբողջ ճանապարհին չէր կարողանում ազատվել այն մտքից, թե որտեղ է առաջին անգամ տեսել քիչ կիսաբաց բերանով ու այդ կանգ առած բաց գույնի աչքերով դեմքը։ Եվ ահա, երբ արդեն երևացին ծանոթ սոճիները, վերևից գնացքին նայեցին խոժոռադեմ Երեք Միանձնուհիները, ու փոքրիկ գնացքը զայրացած ճնճղուկի նման ծլվլաց սևացած կայարանի մոտ, ահա այն ժամանակ քիչ կիսաբաց բերանով դեմքը հանկարծ հայտնվեց նրա առջև։

Կոկլիկ, շիկահեր յունկերը մոտեցավ Մարիին, կրունկներն իրար զարկեց ու ասաց, գունատվելով ու շտապելով.

— Մենք կարծեմ ծանոթ ենք... լողափում...

Մարին կարմրեց, բռնեց հոր ձեռքը։

— Ես այստեղացի եմ, Շենաու... հարևաններ ենք...

Մարին նայեց հորը, արագ ձեռքը դուրս քաշեց նրա ձեռքից ու հարցրեց.

— Ամրոցի՞ց... այնտեղ, Լաուշեի ետևի՞։

— Այո, դեպի արևմուտք գտնվող...

Մարին վճռականորեն առաջ քայլեց։

— Ասացեք, մարկգրաֆուհին, քարե մարկգրաֆուհին...— Նրա շունչը կտրվեց, չկարողացավ ավարտել։

— Այո, նոր ամրոցում է։ Ուզո՞ւմ եք տեսնել։ Եկե՛ք։

Հերր Ուրբախը մոտեցավ յունկերից քիչ հեռու կանգնած կլորիկ տարեց մարդուն, և գլխարկը բարձրացրեց...

Ինչպե՞ս անցան այն երկու օրը, որ հավիտենականության պես ձգվեցին սարերում ապաստանած մրոտված կայարանի և Լաուշեից դեպի արևմուտք ընկած անտառի արահետների միջև։ Ինչպե՞ս շարժվեցին ու թռան օր ու գիշեր անշարժ կանգնած ժամերը։ Ինչպես վերջ եղավ այն դանդաղ տառապանքին, երբ յուրաքանչյուր պահ թվում է ինչ-որ բան պիտի պատահի, ամեն րոպե կարող է լսվել մեկի կանչը, և ամեն վայրկյանն իր մեջ որևէ հարց է ամփոփում։

Սակայն վերջը հասավ և ահա վայրկյանները, րոպեները, ժամերը ոտք առած սկսեցին սլանալ արահետներով, շիկա-

վուն սոճիների կողքից, խեժի և փափուկ փշատերևի խշխշոցի միջով։

— Եկա՞ք,— հարցրեց բաց գույնի աչքերով յունկերը, և Մարիին թվաց, թե նա վախից հազաց։

— Մի վախեցեք,— սիրտ տվեց Մարին,— գնանք ուղղակի նրա մոտ...

Ամրոցը խաղաղ էր, պարտեզում, այնտեղ, ուր յունկերը սպասում էր Մարիին, հին պատերի երկայնքով ընկած էին թափված կրի կույտեր, որոնց վրա խոտ էր աճել, դռներն ու անցքերը ցածր էին, քայլերի ձայները տարածվում էին շուրջն ու ինչ-որ տեղ պատերի խորքում դղրդոցի վերածվում։

— Ա՛յ, սա իսկական ամրոց է,— ասաց Մարին։

Սակայն բնակելի սենյակները գրեթե նույնպիսին էին, ինչպես Ուրբախ վիլլայում, միայն թե ամենուրեք կախված էին նկարներ՝ ծանր, մուգ գույնի շրջանակներով, մեկ էլ նեղ պատուհաններն էին լույսը գողանում ու աղոտացնում։ Եվ Մարին շտապեց.

— Դեհ, շո՛ւտ, շո՛ւտ։

Ահա վերջապես Մարին լամպը ձեռքին գնում է կամարակապ միջանցքներով, ամուր, թեք սանդուղքներով, քարե, խոնավ, սառը պատերի միջով։

— Դեպի աջ,— լսում է իր ուղեկցի ձայնը, ու նրան թվում է, թե տղան իրենից շատ հեռու է, չնայած նրա շունչն այստեղ է՝ իր ետևը, շատ մոտ։

— Մի քիչ կռացեք, հիմա...

Երկաթե, վերը կիսակլոր դուռ, ժանգոտած փականք՝ ոչ կողպեք, ոչ գաղտնիք, ճռճռացող օղակներ, ծանր, անհնազանդ փեղկեր և խոր թեքություն՝ առանց սանդուղքի։

— Թռեք։ Տեսնո՞ւմ եք հատակը։ Հիմա դեպի ձախ, ահա երրորդը...

— Ի՞նչ երրորդ։

— Այստեղից երրորդ շիրիմն է։ Այս երկուսը, քարից սարքվածները, հենց այնպես, դատարկ են։ Դրանց տակը, հողի մեջ են դագաղները։ Իսկ սա՝ դագաղ է։

— Իսկակա՞ն։

— Այո։ Հիմա կափարիչը կշարժեմ։

— Եվ այստեղ նա՞ է։

— Հիմա կտեսնեք...

Կափարիչը բարձրանում է հեշտությամբ, սահում, բացում դլխավերևի մասը, հնչեղ թխկոցով ընկնում դագաղի լայնքով։

— Դեհ, նայեցե՛ք։

Մարին մի քայլ է անում, երկրորդը, լամպը որքան կարելի է առաջ է մեկնում, ձգվում հսկայական կափարիչի վրայով։

Դագաղի մեջ, մանր փոշով ծածկված, փոշու մեջ, ինչպես բարձի վրա պառկած էր մի անմազ գլուխ։ Դեմքը բաց դեղին էր աղոտ լամպի լույսի ներքո, կոպերը խոր փոս էին ընկել, քիթը գրեթե թափանցիկ, ուղիղ, ռունգները թեթև կլորիկ եզրերով. բերանը կիսաբաց էր և ատամները՝ հավասար, երիտասարդ, չէին փայլում, այլ փայլատ դեղնին էին տալիս, ինչպես ճակատը, ինչպես կզակը, ինչպես լավ կորացրած, քիչ փոշեծածկ պարանոցը։

— Նա ընդամենը տասնյոթ տարեկան էր,— ասում է յունկերը,— ինչպես ես...

Մարին նայում է նրան՝ տղան կանգնած է նրա ետևը, դեմքը գունատ, նույնիսկ գունատ-դեղնավուն, ինչպես մարկգրաֆուհու դեմքը, և բերանը՝ բերանը կիսաբաց է, իսկ ատամները ճիշտ նույնպիսին են, ինչպես...

Մարին դարձյալ նայում է կրակի դեղնության մեջ սառչող քարացած դեմքին։

— Գեղեցիկ է,— շշնջում է նա։

— Նրան վաղուց է ցույց են տալիս, եթե որևէ մեկն ուզում է տեսնել։ Ահա, նայեցե՛ք։

Ցունկերը ձեռքը մտցնում է դագաղի մեջ, փոշու միջից դուրս է քաշում երկար, հղկված կոթով մուրճը և դրանով խփում մարկգրաֆուհու գլխին։ Գլուխը հարվածներին պատասխանում է հատու և խուլ, և մուրճը փափուկ ընկնում ու խրվում է փոշու մեջ։

— Ճիշտ ինչպես քարից լինի։

Մթության մեջ են սուզվում մի շարք ցածր տապանաքարերը, սև կամարը ձվաձև կախվել է հանգստարանի վրա, սպասեները, աղնվականները, մարկգրաֆները լուռ էին քարի և հողի դարավոր խոնավության մեջ։

— Հապա գանձե՞րը... հանե՞լ եք վրայից,— շշնջում է Մարին։

— Ոչ մի գանձ չկար... վաղուց չկար...

Սա ի՞նչ բան է։ Նա կարծես ժպտաց։ Ոչ, վախն է նրա դեմքը ծռմռել։ Ինչի՞ց վախեցավ։ Որքան գունատ է։ Նա ավելի, իհարկե, մարկգրաֆուհուց ավելի գունատ է։ Նրա աչքերն անշարժացան, նա գրեթե չի շնչում։ Ի՞նչ պատահեց։ Նա ձեռքերը մեկնում է դեպի Մարին, գրկում է նրան, կիսաբաց բերանը շատ մոտ է Մարիի շրթունքներին, նա...

— Ա-ա՛-ա՛։

Մարին ամբողջ ուժով խփում է նրա կրծքին, լամպը ձեռքին դողում է ու առկայծում, Մարին գլուխը շրջում է, ետ վազում դեպի ելքը, բարձր դռան երկաթե փեղկերը, դուրս է պրծնում միջանցք, վազում, վազում։ Ոլորանի վրա, որը ճյուղավորվում էր երկու կողմերը, Մարին կանգ է առնում. չէ՞ որ տղան մնաց մթության մեջ. այնտեղ սև է, ինչպես... այն ժամանակ, գետնի տակ. նա ելքը չի գտնի... ծիծաղելի տղա։ Եվ Մարին քրքջում է ու բղավում.

— Հե՛յ-հե՛յ, հոպ-հոպ։

Հետո տղան լուռ քայլում էր Մարիի առջևից, խոնարհաբար տանում է լամպը, երկար ժամանակ լուսավորելով ամեն մի աստիճան, ոլորան և շեմիկ։ Այգու ելքի մոտ Մարին ասում է.

— Ես մենակ կգնամ։ Մնաք բարով։

Իսկ այգուց, երբ արդեն աչքից ծածկվեցին կիրը թափված, պլոկված պատերը, բղավում է.

— Հե՛յ-հե՛յ, հոպ-հոպ։ Հե՛յ...

Եվ քրքջում է, քրքջում, ասես նախազգալով, որ այդ ծիծաղը երկար ժամանակվա համար է, որ երեկոյան, տանը, հայրը նրան կասի.

— Մարի, վաղը չէ մյուս օրը պիտի մեկնես Վայմար, միսս Ռոնիի մոտ։

— Ահ, ուրեմն իսկապե՞ս,— բացականչում է Մարին։

— Ի՞նչ արած, Մարի, ի՞նչ արած,— կասի հերը Ուրբախն ու կփակվի իր սենյակում...

Պանսիոնը զբաղեցնում էր մի ընդարձակ շենք, շրջապատված թուջե ցանկապատով, որի սուր-սուր ծայրերը ոսկեգույն էին, դարբասին կային քարե գնդեր։ Այգու մուտքից դեպի դռներն էին տանում բետոնե սալիկներից ամուր սարքված արահետները, որ փայլում էին տաք ջրից ու խոզանակից։ Այգու ծառուղիները հավասարաչափ ծածկված էին մանրախիճով. մեջընդմեջ խրած դեղին ու կապույտ երկաթե աղեղիկները ժանյակավոր գոտիների նման գրկում էին թմբերն ու սիզամարգերը. թմբերի մեջ տնկված տաշած փայտերի վրա բազմագույն արեգակների նման փայլփլում էին ջնարակված գնդիկները. թզուկը ձեռնասայլակը բռնած խորամանկորեն ծիծաղում էր գլուխը ետ գցած, կավե ոտնամանները հաստատապես խրած խուզած ճիմի մեջ։

Տունը կանգնած էր բարեձև, հարթ ու կոկիկ, արևի տակ փայլեցնելով, ինչպես շուցմանն իր կոճակները, պատուհանների պղնձյա բռնակները, փականքները, մաքրած-փայլեցրած զանգն ու դռանը կախված մեծ ցուցանակը.

Միսս Ռոնի. Պանսիոն
ազնվազարմ օրիորդաց համար

Մուտքի դռանը մոտիկ պատուհանին, երկաթե զիգզագաձև պահիչի վրա վառվում էր մի հայելի, որ ուղղված էր դեպի մուտքը։ Հայելիով պատուհանի ետևը թաքնված էր միսս Ռոնիի մոայլորեն վարագուրված ու միշտ լուռ առանձնասենյակը։ Դրա կողքին նրա բնակարանի մյուս սենյակներն էին՝ հեռավոր անկյունում ուսուցչանոցը, միջանքն անցնելուց հետո՝ ծառայողների շենքը, խոհանոցը, մառաններն ու պատժախուցը։ Վերևի հարկը զբաղեցնում էին դասարանները, մարմնամարզական սրահն ու ընդարձակ ննջարանը։

Պանսիոնում կյանքի ռեժիմը սահմանել էր միսս Ռոնին՝ մեկընդմիշտ, և դա նույնքան ուղղագիծ, ամուր ու ճշգրիտ էր, ինչպես թուջե ցանկապատը, ինչպես պատուհանների վրայի փականքները, ինչպես արահետներն ու այգու ջնարակած գնդիկները։ Միսս Ռոնիի տիրույթի սահմաններից ներս մտնողը

արդեն պետք է շարժվեր դիրեկտոր տիկնոջ մշակած պարզ ու անփոփոխ ձևով, նստեր իրեն հատկացված աթոռներին, հառաչեր նախօրոք նշված տեղերում և ժպտար նախատեսված պահերին։ Այստեղ ոչ մեկի համար կարդը չէր մեղմացվում։ Անգլերենի դասատուն և խոհարարուհին, վերակացուհին ու այգեպանը, ինքը դիրեկտորը և պարի ուսուցչուհին տարբեր աշխատանքներ էին կատարում, սակայն ենթարկվում էին միևնույն անփոփոխ ռեժիմին։ Ըստ կանոնադրության, ազնվազարմ օրիորդները հավասար չէին աղախիններին, որոնք հավաքում էին նրանց ննջարանը, սակայն կանոնադրության խախտման համար հավասարապես խիստ էին պատժվում և՛ պանսիոնի օրիորդները, և՛ աղախինները։

— Ցրոյլայն,— ասում էր միսս Ռոնին մեղանչած սանուհուն,— դուք սխալվում եք, եթե կարծում եք, թե համբերությունից դուրս գալով ձեզ կուղարկեմ ձեր ծնողների մոտ։ Գնացեք վերակացուհու մոտ և ասացեք, որ ձեզ երեք ժամ փակի պատժախցում։

Միսս Ռոնին գտնում էր, որ պանսիոնի գործերը բարեհաջող են այն դեպքում, եթե այնտեղի կարգուկանոնը լիակատար նույնությամբ արտացոլում է իր ապրելակերպը։

Միսս Ռոնին, վեր կենալով, ընդունում էր զով լոգանք, մարմնամարզություն էր անում, շփվում սրբիչով, հագնում էր աշխատազգեստը, աղոթում և սկսում իր աշխատանքը։ Եվ նա պահանջում էր, որ իր հետ միևնույն հարկի տակ բոլոր ապրողները, անկողնուց վեր կենալով, անեին ջրաշփումներ,— վաննաների պակասության պատճառով,— ապա՝ մարմնամարզություն, սրբիչով շփվեին և աղոթեին։ Նույնիսկ այգեպանը, մի վաթսուն տարեկան ծերուկ, հավատացնում էր միսս Ռոնիին, որ առավոտները պարապում է Մյուլլերի սիստեմով և սպիտակեղենը փոխում է ճիշտ այն կարգով, ինչ նշանակված է նրա համար՝ չորեքշաբթի և շաբաթ օրերը։ Կին ծառայողներին միսս Ռոնին կարող էր անձամբ ստուգել, ուստի այստեղ խաբեությունն անկարելի էր։ Իսկ տղամարդիկ, այգեպանից և դաս տալու համար հաճախող ուսուցիչներից բացի, որոնք գալիս էին մարմնամարզությունից և շփումներից հետո, տանը չկային։

Քսան սանուհի՝ միշտ քսան, ոչ ավելի, ոչ պակաս, դրա-

նրվում էին դիրեկտորուհու անդադրում հսկողության ներքո. և ոչ մի բան չէր կարող նրանից գաղտնի մնալ, ինչպես մուտքի մոտ տեղի ունեցող ոչ մի բան չէր կարող չարտացոլվել միսս Ռոնիի առանձնասենյակի պատուհանին ամրացված հայելու մեջ։

Ճաշի, պարերի և աղոթքի արարողություններով ուսուցիչները ստուգում էին ժամացույցները, և թվում էր, արևն ինքն էր հետևում միսս Ռոնիի պանսիոնի մերձքաղաքային էքսկուրսիաներին ու զբոսանքներին։

Զմռան ընթացքում սանուհիները երկու անգամ այցելում էին Գյոթեի տունը, որից առաջ միսս Ռոնին դասարանում հատվածներ էր կարդում նրա կենսագրությունից, համաձայնելով, որ այդ մարդու անունը կարելի է արտասանել Շեքսպիրի անվան կողքին։

Աշնանն ու գարնանը մեկնում էին քաղաքից դուրս, և այդ ժամանակ միսս Ռոնին կասկածով ականջ էր դնում, թե բնագիտության ուսուցիչն ինչ է ասում բույսերի փոշոտման մասին։

Ամիսը մեկ անգամ կատարվում էր զբոսանք քաղաքում։ Եվ ամեն շաբաթ այցելում էին կիրկա, ուր քարոզ էին լսում և ձայնակցում երգեհոնին։

Ամենօրյա զբոսանքը կատարվում էր այգում, ծառուղիներում և արահետներում, ցանկապատից հեռու, ժպտուն թզուկի ու թմբերի վրա փայլփլող գնդիկների շուրջ, և տևում էր երեք քառորդ ժամ։ Քայլում էին զույգ-զույգ, անշտապ, առանց ետ նայելու, տասնյակ անգամ պտտվելով և անցնելով միևնույն կետից, առջևից ընթանում էր վերակացուհին, պարանոցը ձգած, ձեռքերը դրած փորին, իսկ ետևից մանրախմբին իր շծալվող ներբաններն էր դրոշմում միսս Ռոնին։

— Ֆրոյլայն,— ասում էր նա, տալով սանուհու անունը,— կանգ առեք։ Ես նկատեցի ինչպես դուք բարդուց ճյուղ պոկեցիք ու նետեցիք խոտի մեջ։ Այսպիսով դուք երկու վատ արարք կատարեցիք։ Հապա ասացեք, թե դրանք որոնք են։ Առաջինը...

— Առաջինը, ես բարդուց ճյուղ պոկեցի...

— Երկրորդը...

— Երկրորդը՝ ճյուղը նետեցի խոտի մեջ...

— Ուրիշ ոչի՞նչ չունեք ասելու։

— Ներեցեք, միսս Ռոնի։

— Ճյուղը վերցրեք և տարեք գցեցեք աղբի զամբյուղը։

Օ՜, միսս Ռոնիի կիրառած դաստիարակչական սիստեմը ընդունում էին ոչ միայն մանկավարժության հեղինակությունները, այլև հասարակությունն ու նույնիսկ բարձրաշխարհիկ հասարակությունը։ Անբասիր էր այդ սիստեմը, և սանուհիներն այդ բանը շատ լավ էին հասկանում։

Այդ բանը շատ լավ հասկացավ Մարին, երբ թիկնոցը, թևնոցներն ու գոգնոցը հագնելով, հանկարծ կորցրեց իր դեմքը, իր ձայնը, նույնիսկ իր հայացքը, և նրա հիշողության մեջ հանկարծ լողացին անցան աղոտ, ցավից մթագնած, ասես երբեք գոյություն չունեցած վանքի ավերակները, Լաուշեի կատարը, որի վրա մագլցում է արևը, սրածայր ժայռերը, որ կոտրած կահույքի նման կիտված են սարերի կատարներին, մարկգրաֆների մռայլ գերեզմանոցը, և այնտեղ՝ գունատ, վախեցած, աղերսող դեմքը քիչ կիսաբաց բերանով։

Այդ պահից սկսած Մարին ֆիզիկական անհարմարություն զգալու աստիճան նեղվում էր այն երկաթե սեղմիրանից, որի մեջ ամփոփված էր պանսիոնի կյանքը, և որի մեջ ամփոփում էին նաև հիմա իրեն։ Եվ նա զգաց, որ իր մանկությունն անցավ։ Ավելի ուշադիր հետևեց պանսիոնի առօրյան կազմող ձևերին, փորձեց աջ ու ձախ շեղվել, ետ ու առաջ ընկնել՝ ամեն անգամ իրեն ցավ պատճառեց ու առաջ բերեց իրենից անհամեմատ ավելի կայուն ուժերի ըմբոստացում։ Նա ուշադիր զննեց այս մարդկանց ձգող սեղմիրանը, որոնց կամքին էր ինքը հանձնված, տնտղեց դրա կապերը, ոսկորներն ու կեռիկները և հասկացավ, որ այն անհնարին է պատռել, կոտրել, ոչնչացնել կամ գոնե թեկուզ բացել, թուլացնել։ Եվ այն ժամանակ Մարին համակերպվեց դրան, ու առանց փոքր իսկ դժվարության, ասես ծնվել էր հենց դրա համար, դիմադրության, կամայականության, կամակորության և ազատության սովոր ձեռքերով քաշեց այն իր վրա ու անմիջապես համոզեց բոլորին, որ իրեն հիանալի է զգում։

— Ֆրոյլայն Մարի,— ասաց մի անգամ միսս Ռոնին,— նկատում եմ, որ դուք շափաղանց մտախոհ եք ու քիչ եք շրջվում։ Դուք ավելի աշխույժ պիտի լինեք։

Իսկ երբ Մարին ավելի աշխույժ դարձավ, միսս Ռոնին արդեն նրա մեջ ոչինչ չէր գտնում, որ հարկ լիներ ուղղելու, և ծննդյան տոներին նրա ստուգման գրքույկում գրեց.

Ունի գեղազանց վարք, հիանալի առաջադիմություն, ջանասիրություն և ուշիմություն:

Իսկ ամառային արձակուրդներին՝

Պանսիոնում աչքի է ընկնում օրինակելի վարքագծով և հիանալի առաջադիմությամբ:

Սանուհիների մեջ այդպիսի բացառիկ տեղ գրավել Մարիին հաջողվեց առանց փոքր իսկ լարումի, համենայն դեպս, անհամեմատ ավելի հեշտ, քան նրա հորը հաջողվեց հավատալ, որ իր աղջիկը՝ Մարին, այդպիսի տեղ է գրավել: Հայրը կասկածամիտ էր և զգուշավոր, իսկ միգուցե՝ վիրավորված, քանի որ գտնում էր, թե առիթ չէր տվել Մարիի այս մշտապես քաղաքավարի, շոր վերաբերմունքի համար: Չէ՞ր տեսնում արդյոք նա փոխհատուցում այն դաժանության դիմաց, որ արեցին Մարիի նկատմամբ: Ի՞նչ գիտենաս: Մինչդեռ ֆրաու Ուրբախը բացահայտորեն ավելի բարեհաճ էր դարձել դստեր հանդեպ և վերջինիս հարգալից ծնկածալումով ողջույններին սիրալիր էր պատասխանում:

Այդպես անցավ երկու տարի:

Իսկ երրորդ տարին, Վայմարում, պանսիոնատի զբոսանքի ժամանակ, երբ անցնում էին խաղաղ փողոցներով, պանսիոնի նման առանձնատների մոտով, որոնք նույն-պես ունեին թուջե ցանկապատեր, թմբերի միջից ժպտացող թզուկներ, բարեպատշաճ տեսքով զույգ-զույգ քայլող սանուհիների առաջին զույգին, որ գնում էր վերակացուհու ետևից, սանուհի Մարի Ուրբախին, փողոցն արագ կտրելով, մոտեցավ մի երիտասարդ սպա:

— Մարի՜,— գրեթե բղավեց նա:

— Մա՛քս,— պատասխանեց աղջիկն, ու նրա ուղեկցուհիները տեսան, թե ինչպես վեր թռան նրա հոնքերը, ու արյունը տարածվեց այտերին:

— Պարոն լեյտենանտ,— հազաց վերակացուհին:

— Մի րոպե,— ասաց սպան ու դիմեց դեպի միսս Ռոնին:— Հարգելի միսս, թույլ կտա՞ք զրուցել զարմուհուս, ֆրոյլայն Ուրբախի հետ:

— Սակայն, պարոն լեյտենանտ, պանսիոնում սահմանված են ժամեր...

— Հարկավ, հարգելի միսս: Սակայն ես մեկնում եմ, ընդամենը մի ժամով եմ այստեղ և ինձ անհրաժեշտ է...

Եվ նա հանկարծ ձեռքը տարավ հովարին, ասաց «շնորհակալություն», ասես արդեն համաձայնությունն ստացել էր, և շտապեց Մարիի մոտ:

Շփոթմունքը տևեց մի րոպե, երբ սանուհիների շարքերը կոտրվեցին, խառնվեցին, երբ մեկը ձեռքը բարձրացրեց, մի ուրիշը ծիծաղեց, մեկը հեծկլտաց, երբ վերակացուհուն անասելի հաղի նոպա սկսվեց, երբ ամբողջ երթը խանդարվեց, և միսս Ռոնին ինքը ավելորդ երկու քայլ առաջ դցեց, հետո ավելորդ մեկ քայլ ետ գնաց, քանի որ այդ պահին նրա մեջ մի արագ մենամարտ տեղի ունեցավ սաքսոնական բանակի ուսադիրի հանդեպ ունեցած հարգանքի ու պանսիոնում սահմանված կարգը պահպանելու անհրաժեշտության միջև:

Սակայն հաջորդ րոպեին արդեն սպան մի քանի կարճ խոսք փոխանակեց Մարիի հետ, թևը մեկնեց նրան, և նրանք, ծիծաղելով ու քայլերն արագացնելով, կտրեցին անցան ճանապարհը: Եվ այդ ժամանակ բոլորը տեսան, թե ինչպես Մարին սեղմվեց սպայի թևին և ուսին, ու բոլորը լսեցին, թե նա ինչպես ետ դառնալով բարձր, ուրախ ասաց.

— Տե՞ր աստված, միսս Ռոնի, որքան նման եք փայտփորիկի:

Եվ հետո, ավելի բարձրաձայն.

— Adieu, adieu, աղջկերք:

Ու այդ «աղջկերք» բառից հետո Մարիի ընկերուհիներին թվաց, թե սպայի հետ հեռանում է ոչ թե թիկնոց, թևնոցներ ու գոգնոց հագած մի աղջնակ, այլ երիտասարդ մի կին՝ ճկուն՝ պիրկ և գեղեցիկ...

Սպան հաղիվ թե խաբեց միսս Ռոնիին, ասելով, որ Վայմարից մեկնում է, ընդամենը մի ժամով է այստեղ եկել. անկյունից շրջվելով, նա ասես դետնի տակն անցավ, հետն էլ Մարին...

Թե նա որտեղ էր երեք օր և երկու գիշեր, միայն իրեն էր հայտնի։

Երրորդ օրը հերր Ուրբախը նստած էր Բիշոֆսբերգի հին տան իր առանձնասենյակում, երբ նրան մի այցետոմս բերեցին.

Լեյտենանտ ֆոն ցուր Մյուլեն-Շենաու (մարկգրաֆ)

Այդ խոսքը, որ գրված էր փակագծերի մեջ ու տպված ավելի մանր տառերով, մեծ քառակուսի այցետոմսի անկյունում, վաղուց մտածված էր ֆոն ցուր Մյուլեն-Շենաուի կողմից ու բնավ չէր նշանակում, թե Գերմանիայում վիրականգնել են Կարոլոսի ժամանակների շքեղ տիտղոսը, այլ միայն մի նպատակ ուներ, որ չի կարելի մարկգրաֆների տոհմի շառավղին ու ժառանգին խառնել ինչ-որ մերձբալթյան բարոնների հետ, որոնք ևս պատահմամբ ճիշտ այդպիսի ազգանուն էին կրում։

Լեյտենանտը եկել էր Մարիի հետ, որը հագել էր նոր կոստյում ու դարձել ավելի սլացիկ, աչքի ընկնող, նա նոր սանրվածքով էր, նայում էր ինչ-որ նոր, մթագնած, հուզավառ հայացքով։ Նա նստեց հյուրասենյակում, ասես այցելության էր եկել մի գրեթե անծանոթ տուն, առանց գլխարկը հանելու, աջ ձեռքի ձեռնոցը կիսով չափ հանած։ Բազկաթոռի ետևը դրված հայելին նրան հանգիստ չէր տալիս, ու շուտով նա դեմքը շրջեց հայելու կողմը։

Լեյտենանտը մի հինգ րոպե մնաց նրա հոր առանձնասենյակում, հետո նրանք անցան հյուրասենյակով, և հերր Ուրբախը, խեթ-խեթ նայելով աղջկան, առանց կանգ առնելու նետեց.

— Բարի գալուստ։

Այնուհետև լեյտենանտը մենակ վերադարձավ հյուրասենյակ, Մարիի ձեռքը համբուրեց և ասաց.

— Ամեն ինչ կարգավորված է։ Դուք կմնաք այստեղ, ես վերադառնում եմ Շենաու։ Վաղը կեսօրին կգամ...

Ֆոն Շենաուի առաջարկությունը՝ անսպասելի և կատեգորիկ, Մարիի փախուստը պանսիոնից, որտեղ նա «ուներ

օրինակելի վարքագիծ և գերազանց առաջադիմություն», սակայն գլխավորն, իհարկե, առաջարկությունը, որը մարկգրաֆը և ոչ թե որևէ բարոն էր անում, և գլխավորը, իհարկե... մի խոսքով, ֆրաու Ուրբախը անչափ վհատված էր և շոյված։ Այդ ամենն այնպես շուռ տվեց թուլլատրելիի և օրինավորության մասին ունեցած պատկերացումը, այնպես բթացրեց մշտապես հետևելու ունակությունը, որ մայրն ուշադրություն չդարձրեց Մարիի տարօրինակ կոստյումին և տարօրինակ շարժուձևերին, իսկ հայրն ընկճված էր և փակվեց իր առանձնասենյակում։

Այդ երեկո ֆրաու Ուրբախը հիշեց, որ Մարին արձակուրդներին տուն գալիս հաճախ էր գնում Շենաու և շատ էր խոսում ամրոցում մարկգրաֆի խնամակալի հավաքած նկարների մասին։ Ինչպես երևում է, բանը միայն նկարները չէին։ Ֆրաու Ուրբախը գոհ էր։

Հերր Ուրբախը առանձնասենյակում ետ ու առաջ քայլելիս մի բան էր միայն հիշում՝ այն նոր, օտար զգեստը, որի մեջ տեսավ Մարիին, երբ ասաց «բարի գալուստ»։ Նա զանգը տվեց ու հրամայեց բուխարին վառել, թեև դրսում սկսվել էր վաղ ամառը։

Հաջորդ օրը, կեսօրին, լեյտենանտ ֆոն ցուր Մյուլեն-Շենաուն եկավ իր խնամակալի ուղեկցությամբ՝ կոկլիկ սանրված, կլորիկ, անդյուրաշարժ պաշտոնաթող մի գնդապետի, որը հաստատեց լեյտենանտի արած առաջարկությունը։ Նշանադրությունը վճռվեց կատարել երկու տարի հետո, երբ լրանար Մարիի տասնութ տարին։

Դա ինը հարյուր տասնվեց թվականի գարնանն էր։

ԳԼՈՒԽ
ԻՆԸ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՎԵՑ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

ԼաՌդջտուրմ

Եթե շշի բերանը կոտրենք, ձևով այն կնմանվի ոչ մեծ տրամաչափի հրետանային արկի՝ կտրված կոնով։ Շիշը կարելի է ներկել արծաթագույն և վրան կպցնել որևէ գենե-

բալի դիմանկար։ Այդպիսի բանը լավ է դնել դաշնամուրի կամ բուֆետի վրա՝ դա զարդարում է սենյակը, դարձնում հարմարավետ։ Տնային տնտեսուհիները շուտ հասկացան ապակյա արկերի արտադրության գաղտնիքը, սկսեցին շշերը կոտրել, գնել արծաթագույն ներկ, բացիկներ՝ գեներալների պատկերներով և զարդարանքները պատրաստել խնայողական ձևով։ Դրա հետևանքով արկերի պահանջը զգալի չափով պակասեց, և ֆաբրիկանտներն ստիպված էին հաստոցները փոխել. մի մասն սկսեցին արծաթագույն ներկ պատրաստել, մյուսները՝ գեներալների նկարներով բացիկներ տպել։ Ինչ վերաբերում է շշերին, այս խնդրում դեռևս զգացվում էր նախապատերազմյան գերարտադրությունը։ Մինչդեռ արտադրության մյուս բնագավառները, որ տնային տնտեսուհիներից պաշտպանված էին արտադրության տեխնիկական պայմաններով, լայնորեն զարգացան և երկար ժամանակ բարգավաճում էին։ Այսպես, օրինակ, սև-սպիտակ-կարմիր զարդերիզով պատած քառասուներկու սանտիմետրանոց արկի ձևի բրոշների և քորոցների արտադրությունը հասավ չտեսնված չափերի։ Հախճապակու գործարանների զարգացումը խթանվեց շնորհիվ բարեհաջող թագավորող կայսերական ընտանիքի անդամների պատկերներով ամանեղենի արտադրությանը։ Ստվարաթղթի արտադրությունը «փոթորկի և գրոհի» դարաշրջան էր ապրում. տուփերն ու կարտոնատուփիկները փաթեթվում, ներկվում էին ազգային գույների։ Պատերազմի երկրորդ տարում ամբողջ արտադրանքը սպառողին էր տրվում միանգամայն հայրենասիրական տեսքով, սկսած դեղատներում վաճառվող լուծողականներից, մինչև կաշեսարքի կրպակի խամութները։

Դա երևակայության չտեսնված մի պոռթկում էր, դա ճրագնավորական ծառայություն էր, միահամուռության գագաթնակետ։

Այդ տարի Անդրեյը տեղափոխվեց Բիշոֆսբերգ։

Նա ապրում էր ուժասպառ, բթացած, հոգնած։ Նրան շրջապատող աշխարհը աներեր մի ստվարաշերտ էր։ Այն ողողում էր Անդրեյին, ինչպես ջուրը։ Նա կարող էր շարժվել այդ ստվարաշերտի մեջ, սակայն վերջինս ամեն տեղ միանման հոծ էր։ Անդրեյին թույլ էին տվել շնչել։ Սակայն նա չէր կարող ուսերը շարժել, որպեսզի շակվի և խոր շունչ քաշի։ Նա օդ էր շնչում այդ ստվարաշերտի միջից դուրս բերված եղեգնախողովակի միջով, ինչպես շնչում է լճի մեջ թաքնված վայրենի որսորդը։

Այն օրից, ինչ Կուրտից բաժանվեց Նյուրնբերգի տրամվայում, նրան ղեկավարում էր անխուսափելին։ Նա հանկարծ զգաց, որ ինքը մի շյուղ է մեքենայանման շարժվող անխուսափելիությունների հսկայական զանգվածի մեջ։ Ըստ էության դա մի գիտակցություն էր, որ ճիշտ հակառակն էր այն բանի, ինչով նա ապրում էր առաջ։ Մի՞թե առաջ նրան չէր թվում, թե արևը ջերմացնում է այն պատճառով, որ իր կամքն ազատ է։ Հիմա նա բավարարվում էր ջերմությամբ ու լույսով, ինչպես մուրացկանը...

Բիշոֆսբերգը աշխարհի ամենավատ տեղը չէ։ Ինչպես ամեն մի քաղաք, այն բաղկացած էր դերձակներից, ոստիկաններից, գրավաճառներից, քահանաներից, ատամնաբույժներից, պրոֆեսորներից և վագոնավարներից։

Բիշոֆսբերգը հին քաղաք էր, իսկ հին քաղաքում պետք է լինեն զանազան մասնագիտություններ, գերազանցապես ազնիվ զբաղմունքի տեր մարդիկ։ Համենայն դեպս, այդպես մտածում էին Բիշոֆսբերգի իշխանավորները, իրենց բարեհաճ վերաբերմունքը տարածելով նույնիսկ սոցիալ-դեմոկրատների վրա։

— Սակայն թույլ տվեք խնդրեմ,— ասում էր, օրինակ, ոստիկանության քարտուղարը,— մարդը հո միայն սոցիալ-դեմոկրատ չէ։ Նա, դրանից բացի, նաև գարեջրագործ է կամ ապակեգործ, կամ էլ թղթատար։ Դրանք բոլորն էլ միանգամայն բարեհույս զբաղմունքներ են, որ կազմում են հասարակության որոշակի մասը։ Ուստի ես բնավ համաձայն չեմ Շտուտգարտի ոստիկանության տեսակետին։

Այս ասելով, քարտուղարը բացում է «Շտուտգարտ քաղաքի ոստիկանության տեղեկագիրն» ու կարդում.

Երկուշաբթի, երեկոյան ժամը յոթն անց կեսին ռադիկալ սոցիալ-դեմոկրատական կուսակցության երկու սեռի ներկայացուցիչները փորձում էին քաղաքական ցույց կազմակերպել։ Երթը Կաուլսպլացից ուղղվեց Դորոտենշտրասսեով դեպի Շաուլոտենպլաց, որտեղ այն անմիջապես ցրեցին։ Ղեկավարներն ու ղեկավարուհիները

ձերբակալված են։ Շտուտգարտի բնակչությունը 'երթին չի մասնակցել...

— Հարց է ծագում, հապա այդ երթը ումի՞ց էր բաղկացած, եթե բնակչությունը մասնակցություն չուներ,— բացականչեց քարտուղարը։

Ոստիկանության քարտուղարի այդպիսի լիբերալությունը՝ շնորհիվ Բիշոֆսբերգ քաղաքի փոքրության և բարեբարոյության, հայտնի էր ոչ միայն աստիճանավորներին, այլև հենց սոցիալ-դեմոկրատներին, և, ասված է վկա, նրանք օրեցօր ավելի ու ավելի լկտի էին դառնում։ Բանն այնտեղ հասավ, որ վարսավիր Պաուլ Գեննիգը, կուսակցության հին անդամ և խմբակային երգեցողության ընկերության գանձապահը, մի անգամ սոցիալ-դեմոկրատների շրջանում նստած բարձրաձայն գովում էր իր կենվորին՝ ռուս ուսանողին, որ Բիշոֆսբերգ էր արտաքսվել պատերազմի սկզբին։

— Հավատացնում եմ ձեզ,— մռնչում էր այդ անամոթ մարդը,— որ իմ ռուսը ամենահնազանդ անասունն է, ու եթե նրանք բոլորը սրանից վատը չլինեին, մենք շատ վաղուց դրանց կջարդեինք, ու դեռ դրանք մեզ կօգնեին ֆրանսիացիների հախից գալ...

Փոխանակ ավելի աչալուրջ հետևելու իր կենվորին և ջանալու հասկանալ նրա իսկական դիտավորությունները (չէ՞ որ նա, համենայն դեպս, դիտավորություններ պետք է ունենար), Պաուլ Գեննիգը, օգտվելով իշխանության զիջողամտությունից, ինչպես տեսնում ենք, ժողովրդի մեջ խռովություն և տարակուսներ էր սերմանում։ Ոչ, հաստատապես պետք է զգույշ լինել ոչ միայն օտարերկրացիների, այլև հայրենակիցներիդ որոշ մասի հետ։ Գուցե Շտուտգարտի ոստիկանությունը հիմք ուներ ջրի երես հանելու ողջ սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը։ Այ, թեկուզ հենց այս վարսավիրը՝ Պաուլ Գեննիգը...

Սակայն ժամանակը չէ՞ արդյոք՝ զրկենք Բիշոֆսբերգի բյուրգերներին խոսքից ու ամեն ինչ պատմենք մեզ հատուկ անխռովությամբ։

Ամեն օր առավոտյան ժամը իններին Անդրեյը դուրս է գալիս բարձր, հին դռնից, որի քանդակազարդերը ճաքճքված էին, կողափայտի նախշի ոլորանները՝ պոկպկված։

Երեք քայլ հեռու, ձեռքերը մեջքին դրած, սպիտակ խալաթով կանգնած է Պաուլ Գեննիգը։ Վաղորդյան հյութերով լեցուն դեմքը վառվում է, ինչպես վարսավիրանոցի մուտքի վրա կախված նոր փայլեցրած պղնձյա թասը։ Գեննիգի դեմքին տարածվում է խրախուսիչ ժպիտը, և նա արտասանում է փողոցով մեկ.

— Ամեն մարդ իր պարտավորությունն ունի, այնպես չէ՞, հերր Ստարցով։

— Այո, այո,— պատասխանում է Անդրեյը,— բարի լույս, հերր Գեննիգ։

Անկյունում, թատերական նրբափողոցի դարձումին, իր կրպակի մոտ կանգնած ոտքից ոտք է փոխվում զինվորի համազգեստ հագած ծխախոտավաճառը։ Մի քիչ այն կողմ, հաջորդ դռան մոտ նստած է դերձակի սապատավոր աղջիկը։ Հարևան պատուհանից դուրս է նայում վարդագույն հացավաճառուհին։ Հետո սկսվում են սրճարանի նեղ, շղարշե վարագույրներով ծածկված պատուհանները։ Այնուհետև՝ ոսկերչի կրպակը, մրգի խանութը, գրադարանը։

Հրապարակը սակավամարդ է, իսկ ռատուշան, որ գտնվում է այնտեղ՝ մռայլ ու սառը։ Զգուշորեն բլրի տակ է գլորվում տրամվայը։ Վագոնավարը նայում է Անդրեյին. նա ճանաչում է հավանաբար Անդրեյին ճիշտ այնպես, ինչպես Անդրեյը նրան՝ վագոնավարին, պահակակետում կանգնած շուցմանին, ծխախոտավաճառին, դերձակի աղջկան, քայլելով ծխամորճը փստացնող ծեր փոստատարին կամ փողոցներում երկաթե երկար ունելիներով թղթեր հավաքող լաթահավաքին։ Այս ճանապարհին ամեն մի քար, յուրաքանչյուր կենդանի արարած, ամեն հայացք վաղուց ուսումնասիրված է, ինչպես ձեռքի մատների եղունգները, ինչպես մաշած սապոգները կամ անկողնու գլխավերևին՝ առաստաղի վրայի նախշերն ու բծերը։ Ահա այստեղ, ոստիկանատան մուտքի առջև, հատարակական զուգարանի կիսաբաց դռան մոտ մորաքույր Մայերը, մշտական գուլպան ձեռքին, Անդրեյի վրա քարացած մի հա-

յացք կնետի, բամբ ձայնով ինչ-որ խոսք կասի ու նորից գլուխը կկախի իր շյուղերի վրա։

Ծերմակահեր աստիճանավորը՝ կարկատած արմունկներով, փողկապին քորոց խրած, աչքի տակով, կկոցած մի հայացքով կծակի Անդրեյին, կհարցնի.

— Հը՞։

— Հիսուներկու։

— Լավ է։

Ու կծածկվի գրասեղանի ետևը։

Դրանից հետո կարելի է գնալ տուն։

Կես ճանապարհին Անդրեյին հանդիպում է կարճահասակ փութկոտ մի մարդ՝ կնճռոտած, չոր դեմքով։ Նա գրպանից արագ հանում է ձեռքը, ճաղատ գլխի վրայից հազիվհազ բարձրացնում ցածր կոտելոկը և ժպտում սպիտակ բարակ շուրթերի շուրջ եղած անթիվ-անհամար կնճիռներով։

— Bonjour, bonjour, bonjour!

Նա իր ողջույնն արտասանում էր շուտասելուկի պես, անպայման երեք անգամ իրար ետևից, և ժպիտը նրա դեմքից անհետանում է նույնքան արագ, ինչպես իրար են գալիս բարակ շրթունքները։ Ձեռքերի դաստակների մոտ բրդյա լաթեր են փաթաթված. հարմոն նվագելու վարժություններից նա թուլացրել էր ջլերը, սակայն իր աշխատանքը թողնել չէր կարող, որովհետև ուրիշ անելիք չուներ և որովհետև ուրիշ ոչինչ անել չգիտեր։

Սա monsieur Պերսին էր, բելգիական քաղաքացի և երաժշտական ծաղրածու։

Monsieur Պերսին Անդրեյի հետ միևնույն միջանցքում էր ապրում, և ահա արդեն տարիուկես էր՝ առավոտից մինչև գիշեր նրա սենյակից սանդուղքներով գլորվում և քառատրոփ արշավում էին ելևէջային գամմաները։ Եթե այդ գամմաները չհաշվենք, monsieur Պերսին աղմկարար մարդ չէր, նույնիսկ ընդհակառակը՝ լուռումունջ էր և աչքի չէր ընկնում։ Առավոտները Անդրեյը նրան հանդիպում էր փողոցում կամ միջանցքում, և monsieur Պերսին շուտասելուկով ողջունում էր նրան, կոտելոկը բարձրացնելով.

— Bonjour, bonjour, bonjour!

Մի անգամ միայն monsieur Պերսին Անդրեյին ձեռք տվեց ու սեղմեց նրա ձեռքը. մի անգամ՝ խոնավ ու քամոտ մի երեկո, հին, գազի ծակ եղջյուրով լուսավորվող միջանցքում։

— Թախծում եմ, monsieur Պերսի,— ասաց Անդրեյը։

— Ռուսները սիրում են թախծել,— պատասխանեց նա։— Ես եղել եմ Ռուսաստանում, գիտեմ։ Լոձ, Ռիգա, Լիբավա, Դերպտ՝ լավ երկիր է։ Եվ բոլորը խմում են...

Monsieur Պերսին ծիծաղեց։

— Այսօր իմ ծննդյան օրն է, դրա համար ես էլ եմ խմել։ Ջզվելի կոնյակ է։ Ընդհանրապես չեմ խմում։ Ջբաղմունքս թույլ չի տալիս։ Նույն այդ պատճառով էլ չեմ թախծում։

— Կատակո՞ւմ եք։

Monsieur Պերսին կռացավ Անդրեյի դեմքին մոտ և դիմակի պես սառած դեմքով, միայն շրթունքները շարժելով ասաց, առանց ընդմիջելու։

— Ծաղրածուն միայն մանեժում է կատակում. ռուսները դա հիանալի հասկանում են։ Ես եղել եմ Մարոկկոյում, Ալժիրում, Անգլիայում, ավստրիացիների մոտ, շվեդների մոտ, ռուսների, գերմանացիների մոտ. ես աշխարհ տեսել եմ։ Հիմա գիշերները մտածում եմ, թե ինչ դժբախտ է աշխարհը, որքան դժբախտ են մարդիկ, եթե ծիծաղում են monsieur Պերսիի կատակներից։ Գիշերները փակում եմ աչքերս ու նայում մարդկանց. նրանք ոչինչ չեն հասկանում, monsieur Պերսին տեսնում է նրանց Ալժիրում, Ստոկհոլմում, Վիեննայում, Բիշոֆսբերգում, տեսնում է միանգամից բոլորին. նրանք monsieur Պերսիին չեն տեսնում, նրանք կարծում են, թե իրենք՝ ամբողջ աշխարհն են, և ամբողջ աշխարհը մեծ է սրանից, ահա սրանից...

Նա ցուցամատով ակնածանքով շոշափեց իր կոտելոկը։

— Սա՝ աշխարհից մեծ է, այստեղ է ամբողջ աշխարհը, հավատացեք ինձ, monsieur, ամբողջ աշխարհը...

— Գնանք իմ սենյակը։

— Օ՜, ոչ։ Ռուսները սիրում են թախծել և խոսել այդ մասին։ Ես բելգիացի եմ։ Ցերեկն աշխատում եմ, գիշերն աչքերս փակում՝ օ՜, monsieur Պերսիի ծեր աչքեր, և նայում եմ մարդկանց։ Տեսնում եմ նաև ձեզ, դուք ինձ համար հաճելի եք, շատ հաճելի։

Նա հանկարծ ետ ընկրկեց, բացեց իր ճաղատն ու սանդուղքով վեր վազեց, մի անգամ միայն բղավելով.

— Bonjour!

Դա նրա առաջին և վերջին խոսակցությունն էր Անդրեյի հետ։

Վերջինը, որովհետև այդ գիշեր բելգիական քաղաքացի և երաժշտագետ ծաղրածու monsieur Պերսիին բռնեցին և ուղարկեցին հայտնի չէ թե ուր։

Բիշոֆսբերգ քաղաքի շտադտրատին, ի թիվս բելգիական քաղաքացի Պերսիի սենյակը խուզարկելիս հայտնաբերված մյուս փաստաթղթերի, ներկայացրին երկնագույն թղթե կազմով մի տետր, որի կազմի անկյունում, կոնակի մոտ պատկերված էր Բելգիայի ազգային դրոշը։ Տետրի վրա մակագրություն կար.

Ի հիշատակ անպայմանագիր ճռավերի:
Քննադատության կարծիքները առանց իմ մասնակցության
կայացած գալա-ներկայացումների մասին:

Տեքստը բաղկացած էր թերթերից և ամսագրերից կտրված հատվածներից, որոնք խնամքով կպցված էին և լրացված ազբյուրը նշող մանրամասն ցուցումներով։ Ոչ մի տեղ ոչ մի ծանոթագրություն չկար։ Առանձին տեղեր ընդգծված էին թանաքով։ Հավանաբար դրանք առավել ուշագրավ էին թվում monsieur Պերսիին։ Համենայն դեպս, դրանցից մի քանիսը գրավեցին շտադտրատի ուշադրությունը, և նա այդ տեղերը նշեց կարմիր մատիտով։ Ահա դրանք.

Եթե Հիսուս Նազովրեցին, որ քարոզում էր սեր հանդեպ թշնամիները, ցանկար կրկին երկիր իջնել, նա, իհարկե, կմարմնավորվեր գերմանական հայրենիքում։ Եվ ի՞նչ եք կարծում՝ որտե՞ղ կարելի կլիներ նրան հանդիպել։ Մի՞թե մտածում եք, թե նա եկեղեցու ամբիոնից պիտի ազդարարեր՝ օ՜ երիցս մեղանչած գերմանացիք, սիրեցեք ձեր թշնամիներին։ Հավատացած եմ՝ որ ո՜չ։ Ոչ, նա կլիներ անսասան ատելությամբ մարտնչող ռազմիկների ամենաառաջին շարքերում։ Նա կլիներ այնտեղ, նա կօբհներ արյունոտ ձեռքերն ու մահաբեր զենքը, նա, թերևս, ինքն էլ ձեռքն առներ պատժիչ սուրը՝ Գերմանիայի թշնամիներին քշելով ավելայց երկրի սահմաններից շատ ու շատ հեռու, ինչպես մի ժամանակ քշեց մանրավաճառներին ու շահադետներին Հրեական տաճարից։

(«Volkserzieher»)

Բունցլաուի «Կոնկորդիա» ջուլհակա-մանվածքային ֆաբրիկայի հաշվեթերթի առաջին երեսը։

ԽՆԱՅԵՑԵՔ ՀԱՑԸ

Ամեն կտոր խնայած հացով դուք այս ծանր պատերազմում օգնում եք ձեր ամուսիններին, հայրերին և որդիներին։
Ամեն մի կտոր խնայված հացը՝ կրակոց է
ուղղված Անգլիային,
մեր վաղեմի թշնամուն։
Հացի ամեն մի խնայված փշուրը կրճատում է պատերազմը։

Նույն թերթի հակառակ կողմը.

Բունցլաուի ջուլհակա-մանվածքային
«Կոնկորդիա» ֆաբրիկան

№ ... աշխատավարձը 57½ ժամվա համար	Մ. 9.91
Հանումները.	
Հիվանդության դրամարկղ	28
Ապահովագրության դրամարկղ	12—40
Netto . .	Մ. 9. 51

Այլևս ոչ ոք չի կարող ժխտել այն տրամաբանական եզրակացությունից, որ ճաշտվողականությունը կլիներ աղետ, որ միակ հնարավորությունը պատերազմն էր։ Մինչև հիմա՝ մարտահրավերի պատասխանը պատվի գործ էր, նպատակի հասնելու միջոց, այսուհետև պատերազմը դառնում է ինքնանպատակ։ Ամբողջ ազգը մի մարդու նման կպահանջի ճավերժ պատերազմ:

(«Münchener Medizinische Wochenschrift»)

Դաստիարակել ատելությո՞ւն։ Դաստիարակել հարգա՞նք դեպի ատելությունը։ Դաստիարակել սե՞ր դեպի ատելությունը։— Կազմակերպե՞լ ատելություն։ Կորչի՜ մանկական վախկոտությունը, կեղծ ամոթը գազանությունից և մոլեռանդությունից։ Թող քաղաքականության մեջ էլ լինի, ինչպես Մարինետին է ասել՝ ավելի շատ ապտակ, ավելի քիչ համբույր։ Մենք իրավունք չունենք տատանվելու և աստվածանարգորեն կհայտարարենք՝ մեր կարողությունն է՝ հավատ, հույս և ատելություն։ Դրանցից մեծագույնն է՝ ատելությունը։

(Բժշկականության խորհրդական դոկտոր Վ. Ֆուքս, Էմենդինգենի Պետական Բաղնեյան հոգեբուժարանի ավագ բժիշկ)։

Շտադտրատը երկնագույն տետրը ձեռքին նստեց մինչև ուշ գիշեր, մի հատված մյուսի ետևից կարդալով։ Դրանք շատ

էին, կապված անկանոն, և մարդիկ, կերպարները, գաղափարները, անեկդոտները թափվում էին շտադտրատի գլխին, ինչպես խաղալիքները տոնածառի ձմեռ պապու զամբյուղից. այլանդակ, գունազարդված, աղավաղված, կրկեսային։ Շտադտրատը դանակով սրեց կարմիր մատիտն ու սուր տառերով դրոշմեց երկնագույն կաղմի վրա։

Սույն տետրում հավաքած հոդվածները ռազմական կամ պետական գաղտնիք չեն պարունակում, քանի որ տպագրված են մամուլում։ Սակայն լրագրային հաղորդագրությունների միտումնավոր ընտրությունը վկայում է Գերմանիայի հանդեպ հավաքողի թշնամական զգացումների մասին և պատեհ հանգամանքներում կարող էր պիտանի լինել թշնամուն։ Ուստի անհրաժեշտ եմ համարում բելգիական քաղաքացի Պերսիին հանձնել ռազմական իշխանությանը։

Խմբակային երգեցողության ընկերությունում վարսավիր Պաուլ Գեննիգը երգում էր բասը։ Բասերը Եվրոպայում հազվագյուտ են, և Պաուլ Գեննիգը հիմք ուներ իրեն արտակարգ մարդ համարելու։ Այդ գիտակցությունը նրան դարձրել էր անհանգիստ, իսկ անհանգստությունը նրան մղել էր դեպի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը։ Այստեղ նա վերջնականապես հավատացել էր իր հաջողությանն ու դարձել Բիշոֆսբերգի ամենաազմկոտ մարդը։ Երբ երեկոները, վարսավիրանոցը փակելով, Գեննիգը մտնում էր Անդրեյի մոտ քաղաքականությունից զրուցելու, այդ սենյակում, որ նման էր մանեժի, խղճուկ կահույքի յուրաքանչյուր առարկան վայրկենապես վերափոխվում էր մեխանիկական հաստոցի։ Շուրջն ամեն ինչ գվվում էր, ճարճատում, զնգում, ցնցվում արձագանքելով վարսավիրի բասի շաչյունին, մռնչոցին, որոտին։ Գեննիգն իրմով լցնում էր ողջ մանեժը։

— Այդ ամենը դատարկ բան է, դատարկ բան։ Պարոնայք յունկերները չեն հասկանում, որ մենք գնում ենք սոցիալիզմին ընդառաջ։ Չեն հաս-կա-նո՞ւմ։

— Ինչպե՞ս թե,— հարցնում էր Անդրեյը։

— Օհո՞։ Դուք էլ չե՞ք հասկանում, սիրելի Անդրեաս։

— Ես տեսնում եմ, որ ապրում ենք առաջուց կուտակածի հաշվին։

— Անդրեա՞ս, Անդրեա՞ս։ Պատերազմ է։ Հասկանո՞ւմ եք։ պատերազմ։

— Ի՞նչ կապ ունի...

— Սպասեցեք, սպասեցեք։ Գեննիգն իր միտքը կպարզաբանի ձեզ համար։ Դուք մտքի դիսցիպլին չունեք, դուք՝ ռուսներդ։ Լավ տղաները եք։ Ասում եմ՝ լ-լավ տ-ղաները եք դուք՝ ռուսներդ։ Բիսմարկն իրավացի էր, ծերուկը, իրավացի էր։ Նա ասում էր. ռուսակների հետ մի գժտվիր, ռուսակները՝ բնական, հասկանո՞ւմ եք, գերմանացիների բնական դաշնակիցներն են։ Գեննիգը զարգացնում է ծերուկի միտքն ու ասում՝ լավ տղաներ են։ Բայց դուք մտքի դիսցիպլին չունեք։ Խմբակային երգեցողության ընկերությունում, որտեղ ես գանձապետ եմ, ուղղակի ասացի՝ գնում ենք դեպի սոցիալիզմ։

— Պատերազմո՞վ։

— Օ-օ՞։ Պատերազմով։ Անդրեաս, դուք սկսում եք դիսցիպլինով մտածել, դա իմ շնորհիվ է։ Հա՞-հա՞-հա՞, մի զայրացեք, Անդրեաս։ Հենց՝ պատերազմով։ Ինչպե՞ս։ Պատերազմը մեզ կսովորեցնի բաշխել՝ օ՞, բ-բաշխել մթերքները, օ՞, անկախ կապիտալիստական ապարատից։

— Հացի գրքույկները։

— Օ՞-օ՞։

— Իսկ մյուս երկրնե՞րը։

— Մյուս երկրնե՞րը։

Պաուլ Գեննիգը աթոռից վեր թռավ ու ձայնը երկու տոն էլ բարձրացրեց։ Անկյուններում կանգնած հաստոցներն սկսեցին դղրդալ ու զնգալ ամբողջ ուժով։

— Մյուս երկրներին մենք կսովորեցնենք բաշխել մթերքներն անկախ կապիտալիստներից։ Իսկ դրա համար նախ կշարրդենք, կշարրդենք դրանց, մենք՝ գերմանացիներս։

— Էհ, իսկ եթե...

— Ի-ի՞նչ։

Գեննիգը ձայնը երկու տոն էլ բարձրացրեց։

Սակայն այդ պահին դուռը բացվեց, ու երկար, ներկված ձողը սենյակ մուտք գործեց։ Սկզբում այն տատանվեց՝ աջ թե ձախ գառնալ, փորձեց սեղմվել հատակին, հետո՝ առաստաղին և մի կոնագիծ գծելով, սկսեց հանդարտ սենյակ խուժել։

— «Իսկ եթե՞», ասում եք,— բարեհոգաբար դրդռաց Գեննիգը, ձայնն իսկույն չորս տոն իջեցնելով։

Այդ պահին ձողի ետևից, այն թևատակին ամուր սեղմած, ներս ընկավ վարսավիրի ենթավարպետը՝ շիկավուն-վարդագույն, գզգզված և շոգեշարժի պես փնչացնող։ Նրա ետևից սիրամարգի նման քարշ էր գալիս կիսով չափ բացված գրոշակը։

— Հը՞, Էրիխ, ո՞ւմ դնգսեցիք։

— Ռուսներին, վարպետ։

— Ա՜խ, խեղճեր,— ասաց Գեննիգը, փայտը ձեռքն առնելով ու ծայրը մոտեցնելով պատուհանին։— Ինչպես դրանց բախտը չի բանում... Ահա, Անդրեաս, մյուս երկրները։ Բանն, իհարկե, Ռուսաստանը չէ, մեր սոցիալիստական գործն է։ Սակայն ես Ռուսաստանի մասին չեմ էլ խոսում...

Ենթավարպետը շրջանակը բացեց, ուղղեց ու լուսամուտից դուրս փռեց դրոշակը, հետո սկսեց փայտը դրսում հարմարեցնել։ Այն երկար էր ու ծանր և պատուհանի տակի երկաթյա օղակի մեջ մտցնելը դժվար էր։ Ենթավարպետը դանդաղ իջեցնում էր փայտը, իսկ Պաուլ Գեննիգը, կարմրած, փքված, փորձում էր ճարպկորեն ձողի հաստ ծայրը մտցնել օղակի մեջ, հետն էլ մեկ-մեկ կտրուկ, զորավոր փաստարկներ էր դուրս նետում։

— Թվում է, թե մենք՝ սոցիալիստներս, օգնում ենք իմպերիալիզմին, մինչդեռ իրականում նա է մեզ օգնում... Սա սոցիալիզմի լ-լավ կտորն է՝ բ-բաշխումը... Էրիխ, ավելի աջ, աջ... մի քիչ իջեցրու... Մենք ամենաբազմանդամ կուսակցությունն ենք... պատերազմից հետո մեզ մոտ կլինի սոցիալիստական... Էրիխ, թող, ահա, պատրաստ է... սոցիալիստական փորձ...

Պատուհանից ցուրտ փչեց, ու թերևս այդ պատճառով Անդրեյը սարսռաց։ Նա խցկվեց սենյակի հեռավոր անկյունը։

— Հասկանում եմ։ Բայց չէ՞ որ ձեր բաշխումը չի դադարեցնի պատերազմը։

— Մենք պետք է ջ-ջարդենք թշնամուն, այն ժամանակ պատերազմը կդադարի։

— Դեհ, իսկ եթե...

— Ոչ մի «եթե», Անդրեաս։ Պետք է ջ-ջարդենք։ Մնացածը՝ դ-դատարկ բան է։

Գեննիգը Անդրեյի ուսը թփթփացրեց, բերանից վատ բրանտվեյնի հոտ փչեց ու ասաց.

— Դուք գիտե՞ք կարգապահությունն ինչ բան է։ Անդրեաս, դուք՝ ռուսներդ, չգիտեք, թե դա ինչ բան է...

Անդրեյի ձեռքը սեղմեց ու դուրս եկավ ենթավարպետի ետևից։

Երբ հաղարավոր, հարյուր-հազարավոր, միլիոնավոր աղնիվ բյուրգերներ իրենց հյուրասենյակներում նստած գովերգում էին կարգապահությունը, նրանք չգիտեին, թե դա ինչ բան է։ Այն ժամանակից, երբ նրանք դեռ պատանի լինելով ուրախությամբ ճաշակել էին կարգապահության համը, անցել էր տասնհինգ-քսան տարի։ Այդ ընթացքում նրանք հասցրել էին քնել երկտեղանի մահճակալներին, փետրաներքնակների վրա, աճեցնել կիսամեռ կակտուսներ, կոնֆիրմացիայի ենթարկել իրենց աղջիկներին և ձեռք բերել ոսկեզօծ կոնակով հրատարակված Գյոթեի ստեղծագործությունները։

Հազարավոր, հարյուր-հազարավոր, միլիոնավոր աղնիվ բյուրգերներ այդ տարի կազմեցին լանդշտուրմ։ Հորթի կաշվից ուսապայուսակները, որ լանդշտուրմը կրում էր մեջքին, նրան չափազանց ծանր էր թվում, իսկ մսուտ ուսերի մեջ խրված փոկերը՝ չափազանց սուր։ Լանդշտուրմը ետևից քարշ էր տալիս երկտեղանի անկողինները, կակտուսները, աղջիկների կոնֆիրմացիային բերված նվերները և Գյոթեի ոսկեզօծ երկերը։ Դա չափազանց ծանրաբեռնվածություն էր պատերազմի համար։

— Պատերազմին պետք են ոսկորներ և մկաններ,— ասաց մի զորապետ։

Բիշոֆսբերգի լանդշտուրմին վարժեցնող ֆելդֆեբելը լավ հասկացավ այս ասույթը։ Նա լանդշտուրմին սովորեցնում էր զորաշարք կանգնել։ Քայլել, քայլել, քայլել։ Վազել, ընկնել, սողալ, կրկին՝ վազել, ընկնել, սողալ։ Հետո կարելի է փոխել՝ քայլել, քայլել, քայլել։

Պետք է հալեցնել լանդշտուրմի ճարպը՝ հետևները, փորը, մեջքերը։ Դա պիտանի չէ պատերազմին։

Զինվորի շորեր հագած քրտնակոլոլ, լիկած հաստափորները քաղաքից հեռու կատարվող վարժություններից հետո երեկոյան վերադառնում էին զորանոցները։

Ֆելդֆեբելը հիշում է, որ ազնիվ բյուրգերները հարմարավետության մեծ հակում ունեն։ Նա լսում է, ինչպես նրանց ուսապայուսակների մեջ չխկչխկում են սովորությունները։ Նա նրանցից յուրաքանչյուրին տեսնում է փափուկ բազմոցին մեկնված, հենված բարձիկին, որի վրա ասեղնագործած է.

Nur ein viertelstündchen![1]

Պատերին կախված են գիպսից սարքված պատկերներ, պատշգամբի դուռը կիսաբաց է, և այնտեղից ներս են նայում տանձենու կտրտված ճյուղերը։ Մխախոտի ծուխը բարակ շիթով ձգվում է դեպի ճյուղերը։

— Ջոո՛կ,— հրամայում է ֆելդֆեբելը։

Օ՜, այդ բոլոր պատկերները պետք է դուրս գցել ազնիվ բյուրգերների հիշողությունից՝ նրանց գիրուկ հետույքների, փորերի և մեջքերի ճարպի հետ միասին։

— Եր-գե՛լ։

Լռություն։

— Ջոոկ, կա՛նգ առ։

Լանդշտուրմը կանգ է առնում։

— Ինչո՞ւ չեք երգում։

Լռություն։

— Ջոո՛կ, զգա՛ստ։ Աջ դա՛րձ, ետ դա՛րձ, քայլով մա՛րշ։

Եվ նորից քաղաքից դուրս, դաշտ։ Կրկին վազել, պպզել, ընկնել, սողալ։ Հետո՝ քայլել, քայլել, քայլել։ Հետո՝ տուն։

Լանդշտուրմն անխոս է։

Քաղաքում, նույն տեղում, հենց այն տեղ, ուր առաջին անգամ հրամայված էր.

— Եր-գե՛լ։

Լռություն։

— Ջոկ, կա՛նգ առ։ Աջ դա՛րձ, ետ՝ դա՛րձ, քայլով մա՛րշ։

Եվ նորից դաշտ։

[1] Միայն քառորդ ժամ (ննչել) (Գերմ.)։

Լանդշտուրմը հոգնածությունից վայր է ընկնում, սակայն լանդշտուրմն անխոս է։

Եվ քաղաքում, արդեն գիշերվա մթության մեջ, նույն տեղում.

— Եր-գե՛լ։

Եվ այնժամ խռպոտ մի ձայն կտրվելով ու պայթելով ձոր է տալիս, ու նրան են միանում նույնպիսի կտրտվող ձայներ։

— I-ic hatte ein Kama-ra-aden...[1]

— Ոչ մի «եթե», Անդրեաս։ Դուք՝ ռուսակներդ, չգիտեք կարգապահությունն ինչ բան է։

Յոթ լճակների պուրակը

Արդեն երկրորդ ձմեռն էր անցնում այն օրից, երբ Մարին իմացավ, թե ինչ է պատերազմը։ Պատերազմ՝ նշանակում է անդադար գործունեություն, որն արյունը լցնում է տենդային ուժով, նշանակում է՝ երթ վիհի վրա կապված ճոպանի վրայով, վիհ, որ լցված է ծածանվող դրոշներով, ջահերի երերուն կրակներով, փողերի ձայներով և հաղթանակի ճիչերով։ Պատերազմ՝ նշանակում է հաղթանակ։ Այդ է նրա իմաստը։ Ի դեպ, պատերազմի իմաստի մասին գրված են հսկայական գրքեր, որոնք բաց վիճակում դրված են ֆրաու Ուրբախի հյուրասենյակի կլոր սեղաններին։ Այդ գրքերում ամեն ոք կարող էր միանգամայն ստույգ բացատրություն գտնել, թե ինչու ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է պատերազմ սկսել՝ պոզիտիվ փիլիսոփայության կամ քրիստոնեական ուսմունքի կամ էլ Դարվինի թեորիայի տեսանկյունից։ (Mesdames, կարդացե՞լ եք «Տեսակների ծագումը»։ Ա՜հ, գոյության պայքարը, բնության օրենքը՝ շատ պարզ է)։

Մարին ոչ մի անգամ չնայեց մոր հյուրասենյակի սեղաններին դարսված գրքերին։ Սակայն եթե պատահմամբ հայտնաբերեր, որ այդ գրքերի մեծ մասի թերթերը կտրված, անջատված չեն, բնավ չէր զարմանա, քանի որ պատերազմը նախ և առաջ անդադար գործունեություն է, և ամեն ինչ բա-

[1] Ես մի ընկեր ունեի... (Գերմ.)։

ցաստրում ու արդարացնում է ինքնին, առանց զրքերի և մեկնաբանությունների։ Այդպես է դերասանը, որը երբ յոթ դեր է կատարում երեք գործողության մեջ, չի մտածում, թե ինչ բան է թատրոնը, այլ միայն զգեստափոխվում է։

Պատերազմ՝ նշանակում է գործունեություն։ Երբ տասը օրվա ընթացքում Լեհաստանում տասներկու ամրոց և քսանութ քաղաք գրավեցին, Բիշոֆսբերգի վրա ջահերից և լապտերիկներից գոյացած մրի ամպ էր լողում։ Գիմնազիստներից կազմված հանձնաժողովը, որ ղեկավարվում էր ուսուցչական միության կողմից, հաշվում էր այդ օրերին հասարակական շենքերն ու մասնավոր տները զարդարող դրոշները։ Երբ հանձնաժողովն աշխատանքն ավարտեց ու պարզեց, որ միջին հաշվով Բիշոֆսբերգի յուրաքանչյուր բնակելի շենքին ընկնում է $9^1/_{37}$ դրոշակ, հևասպառ ներս վազեց տարեց մի մարդ ու աղաղակեց. «Սխալ եք հաշվել, սխալ եք հաշվել»... Բանից պարզվեց, որ այդ մարդը հանձնաժողովին ստուգելու նպատակով ինքը մենակ հաշվել է քաղաքը զարդարող բոլոր դրոշները և ստացել է $9^1/_{29}$ թիվը։ Բիշոֆսբերգի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն այդ կապակցությամբ, իհարկե, չզլացավ խայթել, հայտարարելով, որ հանձնաժողովը Բիշոֆսբերգի հայրենասիրական արժանապատվությունը գցել է $^8/_{1073}$-ով։

Եթե չհաշվենք աշխատանքը, որ պատերազմի ժամանակ կատարվում է գործարաններում, դաշտերում և հանքահորերում այն մարդկանց կողմից, ովքեր այդ գործով զբաղվում են նաև խաղաղ ժամանակ, ապա ուրեմն պատերազմն ինչպիսի զարմանալի եռանդ է առաջացնում այնպիսի մարդկանց մեջ, որոնք սովորաբար փոքր մասնակցություն են ունենում արտադրական աշխատանքում։ Էլ ինչ խոսենք բանակների մասին, որոնք ամեն վայրկյան զբաղված են մարդկային առավել ուժեղ անհատականություններին առաձին-առանձին կամ խումբ-խումբ ոչնչացնելով։ Գործունեության այս ձևը միշտ ուշադրություն է գրավել։ Ցավելի ուսանելի է, օրինակ, հայացքներն ուղղել հյուրանոցներ պահողների բեռլինյան միությանը, որը մի քանի գործնական ժողովներ է նվիրել այն հարցի քննարկմանը, թե ինչպես պետք է «հոթելները» վերանվանել «իջևանատներ»։ Կրակոտ վիճաբանություններից հետո

վերանվանումը մերժվեց, քանի որ, օգտվելով անսասան լեզվագետների բացակայությունից, հյուրանոցատերերն ընդունեցին, որ հոթելը գերմանական ծագում ունեցող բառ է։

Էմենդինգենի բուժարանում գիտակ անձանց ցույց էին տալիս այն մարդուն, որ նախագիծ էր կազմել ռազմական գործունեությունից հարուցվող խորհրդակցությունների հաշվառման վիճակագրական բյուրոյի համար։ Այդ մարդու ժողոված նյութերի թվում էր գտնվում գերմանական հրուշակագործների միության ժողովի արձանագրությունը, որտեղ վիճարկվում էր այն հարցը, թե արդյոք հայրենասիրակա՞ն արարք է պիրոժնի ուտելը։ Այդ հարցը լուծվեց դրականապես, քանզի հրուշակագործները որոշեցին, որ հրուշակեղենը պատրաստվում է գլխավորապես շաքարից, ձվից, քիշմիշից և նուշից, առանց իշխանության կողմից բռնագրավված ցորենի ալյուրի։ Հայտնի է, որ երբ այդ վճիռը հրապարակման ենթարկվեց, վեց հազար գերմանական հրուշակարանները լցվեցին ուրախ հայրենասերներով...

Ֆրաու Ռուրբախի հյուրասենյակի մուտքի դռան վրա կաղնեփայտե մի տախտակ էր կախված, վրան փորագրված երկտողանի բանաստեղծություն.

> Wir stehen in Ost und West
> Wie Fels und Eiche fest. [1]

Բանաստեղծությունը համապատասխանում էր իրականությանը։ Նրա ուժը, սակայն, այդ չէր։ Այն գործողությունների ցուցակն ծրագիր էր, պարզ, հասկանալի «սկեռք» են։ Նրա իշխանությունը մարդկանց վրա թաքնված էր անտեսանելի հրամանի մեջ, որ թափանցում էր կաղնեփայտե տախտակի միջով։ Տախտակը հրամայում էր գործունեություն։ Դա զգում և հասկանում էր ամեն ոք։ Դա զգաց և հասկացավ Մարին պատերազմի առաջին իսկ ժամից։ Եվ նա ենթարկվեց հրամանին, որ ոչ թե վիրավորում է ինքնասիրությունը, այլ, ընդհակառակը՝ շոյում։ Նա անձնատուր եղավ գործունեության։

[1] Արևելքում և արևմուտքում մենք կանգնած ենք ամրակուռ, ինչպես ժայռն ու կաղնին։ (Գերմ.)։

Նա Բեռլինից դուրս գրեց տասնմեկ հատ առանձնահատուկ դրոշակաձողեր, որ ամրացվում էին լուսամուտագոգերին, և դրանց համար երեք մետրանոց դրոշակներ։ Կամաց-կամաց պարզվեց, որ Գերմանիան պատերազմում ամենաքոստ դաշնակիցներին էլ ավելի թանկ էր գնահատում, քան այդ կուզեին երազող շտանդարտ-յունկերները։ Կայսերական քաթանների հավաքածուն հարկ եղավ լրացնել դաշնակիցների ազգային գույներով։ Դա ժամանակ էր խլում, չխոսելով արդեն այն մասին, որ գրեթե ամեն օր պետք էր տասնյոթից տասնմեկ դրոշակների զուգակցություն ընտրել՝ դրանցով տների ճակատները զարդարելու համար։

Ֆրաու Ուրբախը Բիշոֆսբերգի կայարանի սենդակայանի հովանավորուհին էր։ Զինվորների էշելոնները ամեն երկու-երեք օրը մեկ անցնում էին Բիշոֆսբերգով։ Զինվորներին ծաղիկներ և բրիստոլյան թղթի վրա տպած հուշաթերթեր բաժանելը, հարյուր, երբեմն երկու-երեք հարյուր վատ դաստիարակված մարդկանց սուրճ հրամցնելը, սիգար բաժանելը ու հետն էլ ժպտալը, հայրենիքի մասին որևէ հաճելի բան ասել՝ այդպիսի գործը միայն դաղափարին իսկապես նվիրված մարդը կարող էր անել։

Մարին օգնում էր Ֆրաու Ուրբախին։ Այստեղ, կայարանում, անբեղ, լայնաբերան տղաների հրհրոցի, մետաղահընչուն ձայների աղմուկ-աղաղակի, ամրապինդ ճակատների և ծոծրակների մեջ Մարին այնպիսի զգացում էր ապրում, ասես մի լավ ձեռնամարտի մեջ ընկած լիներ։ Արմունկների իրար դիպչելը, գրեթե շոշափելի կպչուն հայացքները, ժպիտների սորուն, անորսալի ժապավենը, և այդ մշտական կրկներգը.

— Էհ, ինչ սիրուն են Սաքսոնիայի աղջկերքը։

Այս հոսանքի մեջ ո՞վ կարող է մնալ անկարեկից և սառնարյուն։ Ո՞վ չի ըմպի նրա ցայտող, խլթխլթացող փրփուրը։

Եվ հանկարծ Մարին տխրեց։ Դա պատահեց վաղ գարնանը, հազիվ երեկոները ջերմացան և ծառերը տաքացան։ Մեկ և կես տարվա ընթացքում առաջին անգամ Մարին կայարան չգնաց։ Կայարանում զինվորներին սուրճ լցնող ընկերուհիները ամբողջ խումբը քաղաքի բոլոր ծայրերից վազեցին եկան նրա մոտ՝ անհանգստացած, աչքերը լայն բացած, կաշաղակների պես կչկչան Մարին առողջ էր, նրա կյանքում ոչինչ չէր փոխվել, նա նախկին Մարին էր։ Սակայն Մարին տխրում էր։ Նա չգիտեր՝ ինչու։ Կաշաղակները կչկչում էին, ուղղում իրենց շրջազգեստները, թախանձում, հորդորում էին, ի վերջո ամաչեցրին ու ծաղրեցին Մարիին։ Նա իրենն էր պնդում.

— Տխուր է։

Տարօրինակ բան, նա ինքն էլ չէր կռահում այդ տխրության պատճառը։ Իր սենյակում նստած և մտքում վերջին օրերի իրադարձությունները փորփրելով, Մարին վճռեց, որ ըստ էության ոչ մի իրադարձություններ էլ չկան, և որ բանը հենց այդ է։ Նա հիշեց, որ էշելոնները, որոնց կայարանում սուրճ և հուշաթերթեր էին բաժանում, անգունացել ու սսկվել են։ Բաժանողների կողքին ձգված գորշ հերթում ծիծաղ չէր լսվում։ Վերջերս մի կարճահասակ լանդշտուրմիստ դիմեց Մարիին այս խոսքերով.

— Աղջիկս, ինչքան կարելի է տաքը լցրու։

Մարիի ձեռքը դողաց, ավելի սևեռուն նայեց նրան։ Զինվորը ուռած դեմք ուներ, կարճ բեղերին ճերմակ մազեր էին փայլփլում։ Մարին մի հայացք նետեց գորշ շինելների հերթին։ Մոայլ, կնճիռներով ակոսված դեմքերը անտարբեր երերում էին գազի լույսի տակ։ Այն ժամանակ նա մտածեց, որ այդ մարդիկ մնացել են այնտեղ, որտեղից եկել են, այստեղ՝ կայարանում, լոկ նրանց արտաքին թաղանթներն էին երերում։

Այս դեպքն այնքան չնչին էր, որ զարմանալի է, թե ինչպես հառնեց հիշողության մեջ այժմ, երբ Մարին ուզում էր պարզել, թե ինչու է տխուր։

Նույնքան անսպասելի հիշեց կանանց դեղին դեմքերը, որ լցվել էին ուսումնարանի միջանցքը՝ հացի քարտեր ստանալու։ Մարին ամիսը երկու անգամ քարտեր էր բաժանում և ոչ մի անգամ մտքով չանցավ՝ ուշադիր նայել միջանցքներում խռնված մարդկանց։ Եվ դարձյալ վերջերս, երբ նա ինչ-որ մեկին ասաց.

— Չի՞ կարելի արդյոք ավելի սիրալիր լինել,— հեռավոր անկյունից ճղճղացին.

— Դուք սիրալիր եք, որովհետև կուշտ եք։

Այն ժամանակ Մարին գլուխը բարձրացրեց ու հանդիպեց մի տասնյակ վախեցած, ծռմռված աչքերի։ Սեղանը շրջապատած կանայք տարօրինակ կերպով դեղին էին, ասես մաշկները գունավորված էր ոչ թե արյունով, այլ լեգիոնի։ Դրանց մեջ կային և երիտասարդ աղջիկներ, սակայն նրանց երիտասարդ լինելը կարելի էր հասկանալ միայն աչքերից։

— Էհ, ինչ սիրուն են Սաքսոնիայի աղջկերքը։

Սա նույնքան չնչին բան էր, ինչքան կայարանի դեպքը, և նույնպես ոչինչ չէր բացատրում։ Նիհարած կանանց և ուռած, մռայլ դեմքերով տղամարդկանց երկար շարքը մերթ ընդհատվում, մերթ նորից հառնում էր հիշողության մեջ, սակայն պարզ էր, որ այդ ամենը հիշում էր միայն այժմ, երբ Մարին սկսել էր մտածել իր տխրության մասին։

Ուրիշ հիշողություն վաղուց արդեն նրանից ոչ մի քայլ չէր հեռանում, բայց մի՞թե հնարավոր է, որ այն տխրություն բերի։

Սակայն չի՞ փորձի արդյոք Մարին ամեն ինչ մանրամասն հիշել։

Նախագարնանային ամսին ձյունոտ մի օր եղավ, սառնամանիքի ուժով պահված ձմռան վերջին օրը՝ ցածր կանգնած արևի կարմրավուն լույսով լուսավորված։ Փողոցներով մի քաղցրավուն հոտ էր լողում, ասես թարմ զամբյուղի հոտ, և մարդիկ հնչեղ ձայն էին տալիս իրար, մանրաքայլ վազելով մայթերով.

— Օհ, ո՞նց է կծում։

— Ըհը, ըհը։

Հրապարակում երևացին սահնակներ, որոնց դիմավորեցին հախուռն ճիչերով։ Փոքրիկ տղաները խմբով վազեցին դրանց ետևից։ Ռատուշայի վրայի հսկայական ջերմաչափը սովորականից ավելի բծախնդիր էր. առավոտյան վաղ այն մաքրել էին բենզինով։ Այսպիսի արևի տակ, արագ քայլերով տրորելով թեթև, բուրավետ ձյունը, ուզում ես մտածել, որ աշխարհը խաղաղ է և անհիշաչար, որ մարդիկ հավաքվել են ուրախ քաղաքներն ու գյուղերը, որպեսզի նայեն միմյանց աչքերի մեջ, իրար ձեռք սեղմեն, իրար ուրախացնեն ձայն տալով.

— Ֆրոյլայն Մարի՛։ Ձեր քիթը պոմիդորից կարմիր է։

— Ֆրոյլայն Մարի, Weberstrasse-ում զգույշ եղեք, որ վայր չընկնեք, այնտեղ իսկական սահադաշտ է։

Օ, ոչ, Մարին Weberstrasse-ում վայր չի ընկնի։ Մարին ցրտից չի վախենում։ Նա այնպիսի թափով էր սլանում, որ թվում էր, թե կհաղթահարեր ամենաանմատչելի սառցադաշտը։ Ծակող սառնամանիքին ընդառաջ, կտրելով այն տաքացած դեմքով, ձեռքերը խոր գրպանների մեջ թաղած, նա վազեց մինչև կայարան։ Նեղլիկ, ձյունով ծածկված կառամատույցին կանգնած տեղում ոստոստում էին երկու-երեք ուղևորներ։ Խաղալիքային սառցակալած շոգեքարշիկը շփոթված փնչացնելով դուրս թռավ ոլորանից։

— Լա՜ուշե, Լա՜ուշե։

Աշխատանքային օր էր, վագոնները դատարկ էին։ Շրջակայքը անծանոթ էր թվում, ու թերևս դրանից էր, որ հեռվից այնքան շուտ երևաց ձյունածածկ Լաուշեն։ Երեք Միանձնուհիների կնգուղները միացել դարձել էին մի հսկայական գդակ, որ կուրացուցիչ գնդի նման կախվել էր ժայռերի վրա։

Լաուշեի գագաթը տանող զառիթափ արահետին դրոշմված էին մի տղամարդու ոտնահետքեր։ Մարին մագլցեց մինչև լեռան առաջին զառիվայրն ու կանգնեց շունչ առնելու։ Տղամարդու ոտնահետքերը մի կողմ էին դառնում, իսկ արահետը բարձրանում էր վեր, մտնում անարատ ձյունածածկոցի տակ, և այն տրորելը նույնքան հաճելի էր, ինչպես նոր ճանապարհ բանալը։ Ձյունե ծածկոցից ծանրացած սոճիների ամուր, բարձր շարքերի մեջ զգացվում էր խեժի սառած բույրը, և Լաուշեին պատած խաղաղ լռությունը Մարիի հոգուն ուրախ, թեթև ուժ տվեց։

Զարմանալի ճարպկությամբ, որ մի ժամանակ այնքան տհաճություններ էր պատճառել Ֆրաու Ուրբախին, Մարին ելուստից ելուստ էր մագլցում։ Հանկարծ ոտքը ծալվեց, սահեց քարի վրայից, և նա մի տասներկու քայլի չափ ցած սահեց։ Ընկնելիս մեջքով մի փափուկ ձյունակույտ առաջացրեց, որն անմիջապես մեծանալով գլորվեց նրա վրա ու ծածկեց դեմքը, կուրծքը, ձեռքերը։ Մարին ուրախացած բարձր ճչաց, ինչպես լողալիս սառը, փաղաքշող ջրացայտերի հպու-

մից։ Նույն պահին, կարծես սառած սոճուն հասցված մի հարված, նրա վրա հնչեց ամուր մի ձայն.

— Զգո՛ւյշ։

Մարին վեր թռավ, ձյունը վրայից թափ տվեց։ Ծառի ետևից նրան էին նայում երիտասարդ աչքեր, Մարիին թվաց, թե այդ աչքերի մեջ ավելի շուտ ուրախություն, քան անհանգստություն կար։

— Այդ ձե՞ր հետքերն էին այնտեղ, արահետի վրա,— հարցրեց Մարին։

— Այո։ Ուզում էի ավելի կարճ ճանապարհ գտնել, դրա համար թեքվեցի։

— Գագա՞թն եք բարձրանում։

— Այո։

— Սա ամենակարճ ճանապարհն է։

— Սակայն և ամենադժվարը։ Վնասվեցի՞ք։

— Դատարկ բան է։

Այլևս խոսելու բան չկար։ Պետք էր հեռանալ։ Ի դեպ, կարելի էր նաև կողք-կողքի քայլել։

— Այսօր լավ եղանակ է,— ասաց երիտասարդը։

— Այո։

— Դուք նույնպե՞ս վերև եք գնում։

— Նույնպես։

Այսպիսով պարզվեց, որ նրանց ճանապարհը մեկ էր և որ գնում էին ամենակարճ ճամփով։

— Սարից ցած սահնակո՞վ եք իջնելու,— հարցրեց Մարին։

— Չգիտեմ։

— Վախենալի՞ է։

— Երբեք չեմ իջել։

Մարին դարձավ նրա կողմը։ Երիտասարդի ոտքերին կիպ, հաստ գուլպաներ էին և քայլում էր համաչափ ու ուժեղ՝ հանգիստ, բարձր շնչառությանը ներդաշնակ։ Գլուխը բարձր էր պահում, առանց ոտքերի տակ, գետնին նայելու։ Նա Մարիին գարձրեց բաց, շիտակ հայացքը։

— Այսօր լավ զգացում ունեմ։ Ես հազվադեպ եմ քաղաքից դուրս գալիս,— ասաց նա։

— Այստեղացի չե՞ք։

Երիտասարդը ծիծաղեց։

— Չե՞խ եք,— հարցրեց Մարին այնպիսի մի թեթև շեշտով, որն այդ խոսքը վիրավորական էր դարձնում։

— Ավելի վատը։

— Այդպես էլ գիտեի։ Ձեզ նմանները պետք են պատերազմում։ Իսկ դուք ձեզ համար շրջում եք, կարծես ոչինչ չի եղել։ Ռո՞ւս եք։

Երիտասարդը կրկին ծիծաղեց։

— Այո։

Մարին քայլերն արագացրեց։ Մի քանի բոպե լուռ էին։ Հետո երիտասարդն ասաց.

— Դրությունը բավական անհարմար է դառնում։ Այն կարող էր կարգավորել միայն ոստիկանական աստիճանավորը, այնպես չէ՞։

— Դա կոպտություն է։

— Չէի ուզում ձեզ վիրավորել։

— Մեր մեջ ավելի ասպետություն կա, քան կարծում են օտարերկրացիները։

Մարին հանկարծ կանգ առավ։

— Ո՞վ է ձեզ իրավունք տվել մեզ բոլորիս մատնիչներ համարելու։ Դուք ձեզ վա՞տ եք զգում մեզ մոտ, դո՛ւք՝ մեր թշնամին։

Նա նորից առաջ շարժվեց։ Մարիի ուղեկիցն ասաց.

— Ցավալի է, որ ետ ենք սովորել պարզ, հասարակ ձևով ապրելուց։ Իսկ գուցե երբեք էլ չե՞նք կարողացել այդպես ապրել։ Միջնորմների և լրացուցիչ կառուցվածքների ետևում ոչինչ չի երևում։ Ձեր ինչի՞ն էր պետք հարցնել, թե ես ով եմ։ Մի՞թե առանց այդ հնարավոր չէր քայլել կողք-կողքի, ինչպես քայլում ենք հիմա։ Շուրջը ձյուն է, սոճիներ, լռություն։ Մենք ուրիշ ոչնչով կապված չենք, բացի այս ձյունից, այս լռությունից և մեկ էլ այն ճանապարհահատվածից, որ միասին պիտի անցնենք։ Կանցնենք և կմոռանանք։ Պատահականություն։ Ինչո՞ւ դրա մեջ փնտրել այն, ինչ չկա։ Եթե ես ավստրիացի կամ ձեր հայրենակիցը լինեի, դուք ինձ այլ կերպ կնայեիք։ Իսկ դրանից արդյոք որևէ բան կփոխվե՞ր մեր շուրջը։ Ամեն ինչ նույնքան պարզ կլիներ։

Նրանք կանգ առան լեռան վերջին ելուստին։ Այստեղից արդեն մեծ բարձրություն չէր մնում մինչև գագաթը։ Դեպի

արևմուտք, կարծես թելով, ձգվում էր լայն կածանը։ Դրա միջով երևում էր ինչպես է եռանկյան կողմերից դեպի հիմքը գնում հովտի ձյունակապույտով ծածկված սոճուտներին փոխարինող թեք լեռների շղթան։ Երկինքն ամբողջ տարածությունը ծածկում էր խաղաղ կապույտյամբ։

— Ես այստեղ եմ մեծացել,— ասաց Մարին։— Ահա այն բլրակին մի սոճի է կախվել սունկի նման։ Դա առաջին ծառն է, որի վրա բարձրացել եմ։ Այդ սունկի ետևն է գտնվում Շենաու ամրոցը։ Տեսնո՞ւմ եք սև կտուրները։ Դեպի աջ խճուղին է, այնտեղ սահմանն է։

— Սահմա՞նը,— հարցը կրկնեց նա։— Այդքան մո՞տ։

Մարին աչքերը կկոցեց նրա վրա.

— Մի հարազատ բա՞ն զդացիք։

— Այնտեղ չեխեր են։

— Օ, այո, համատարած չեխեր։

— Ուրիշ կերպ չի՞ կարելի։

Մարին նրա կողմը շարժվեց, սակայն իսկույն կանգ առավ, ասես ստիպեց իրեն չլսել նրա խոսքերը։ Հետո հանկարծ հնչեղ բղավեց.

— Դեհ, դեպի վեր, շուտ,— և, բռնելով հանդիպակաց ծառաբներից, թեթև ու կառչուն, այծյամի նման վեր ելավ։

Գագաթի կարգավորված հարթակին կանոնավոր կերպով շարված էին ցածր երկար սահնակները։ Մոայլ, ժայռակտորի նման ահռելի պահակը դանդաղորեն դուրս եկավ նեղլիկ պահատնակից ու նայեց հյուրերին։ Անպատեհ ժամ էր, պահակից բացի, լեռան վրա ոչ ոք չկար։ Հարթեցրած, մաքրած ճանապարհը դեպի ոլորանն էր գնում մի կտրուկ դարձումով։ Կողքերից այն պաշտպանված էր ձյունե պատնեշով։

Եվ դարձյալ հնչեղ ձայնով, ծակելով սառած օդը, Մարին բղավեց.

— Բավական է մտածեք։ Գնա՛նք։

Նա սահնակ ընտրեց, ոտքով հրեց դեպի վայրէջքը, նստեց վրան ու բռնեց սահակողերի օղերից։

Նրան շրջապատեց այն օդը, որ շնչել էր մանուկ ժամանակ։ Մանրատված և անկանոն թափթփված ժայռեր, ինչպես ջարդած կահույք. կոճղանման, չոր արմատներով ծառեր, որոնց ամեն մի ճյուղը կարծես հին բարեկամ լիներ. ներքևում

ճանապարհների և կածանների աղավաղված տամայատախտակը։ Այս լեռներում ամեն մի քար Մարիին ծամածռություն էր անում, և նա հիշում էր այդ քարի մականունը, գիտեր նրա դաղտնիքները։ Ինչ ափսոս է, որ նրա կողքին չկային իր շաբաթվա արարքների մասնակիցները՝ լայնաթիկունք, մեծաչքանի գյուղացի տղաները։ Որքան լավ կլիներ նրանց հրամայել, բղավել վրաները, կարգադրություններ անել։ Ո՞ւր են հիմա նրանք, այդ սիրելի դմբլոները...

Մարին արագ նայեց իր ուղեկցին.

— Պահակին վճարեցեք և նստեք։ Շո՛ւտ... Նստեցեք ինձ ավելի մոտ։ Ոտքներդ առաջ մեկնեցեք։ Ահա այսպես։ Ձեռքերով փաթաթվեցեք ինձ։ Ինչպես պետքն է։ Պի՛նդ, ավելի պի՛նդ, թե չէ դուրս կընկնեք։ Վարում եմ ես։ Գնացի՛նք։

Ահա մի հրոց, ևս մեկը, ահա արագացող սահումը, ահա արագ վազքը՝ և ահա հենց նրանց առջև, գլխավերևը ոլորանի սառած ձյունե պատնեշը, որ մի ակնթարթ առաջ սարսափելի հեռու էր թվում։ Ձյունը թափվում է գլխներին, ծակող սպիտակ փոշին կուրացնում է աչքերը, ինչ-որ տեղ գետնի կտակից խփում է անսանձ շատրվանի նման և հանկարծ կըտրվում. և սրած պողպատի նման հավասար քամին խփում է երեսներին ու ձգվում վեր, դեպի երկինք խոյացող լեռը։ Ոլորանն արդեն վաղուց անցել են, սահնակն արդեն վաղուց պոկվել է գետնից, ուղիղ վայրէջքը, որ մի պահ թվում էր անվերջանալի, արդեն հասել է մի նոր ոլորանի, և ձյունե կուտակները թափվեցին գլխներին։

— Պինդ կացեք,— բղավում է Մարին ու լսում, թե ինչպես է իր մեջքին ձուլվել սառած լայն մի մարմին ու կրծքին՝ իրար միացրած ձեռքերի սառցե մի օղակ։ Եվ մեկ էլ՝ ասես հեռավոր գագաթից, ձնափոշու ցրտի ու սուլոցի միջից, պողպատյա կտրող քամուն ընդդեմ և ընդառաջ, հենց իր ականջի մեջ է լցվում ջերմ մի շշունջ.

— Ինք-ներդ պինդ կա-ցեք։

Եվ այդ ժամանակ նա տեսնում է, ինչպես կողքից, տղամարդու ուժեղ ոտքից ակոսվող ճանապարհի վրա բարձրանում է սպիտակ պտուտահողմը, որ ավելի բարձր և կատաղի է, քան իր ոտքերի բարձրացրած կասկադը... Ահ, միևնույն է։

թող կարծի, թե ինքն է վարում։ Ցած, ցած, լեռն ի վար, դեպի անդունդ...

Հետո Լաուշեի թեք լանջին նրանք թափ են տալիս իրենց, մաքրում մալերը, օձիքները, ականջները՝ հալվող, կպչուն ձյունափոշուց, ծիծաղում են։

Հավանաբար այստեղ էլ նրանք խոսում էին ինչ-որ բանի մասին, ինչպես խոսում էին մի հյուրանոցի փոքրիկ սենյակում, որտեղ նրանց հյուրասիրեցին բուրավետ գրոգով և բուխարու ուրախ կրակով։ Սակայն Մարին այդ խոսակցություններից ոչ մի բառ չէր հիշում։ Ասենք, մի բառ՝ ծիծաղելի, անսովոր մի բառ մնացել էր հիշողության մեջ։ Կայարանից հեռու, իր ընկերակցից բաժանվելու պահին նա հարցրեց.

— Ձեր անունն ի՞նչ է։

— Անդրեյ Ստարցով։

— Ստար-ցո՞վ։ Դա ինչպե՞ս է գրվում։

Քամին տաքացավ, և ծառերը ջերմացան։ Այսպիսի եղանակին կիսաբաց պատուհանը շնչառությունը չի թեթևացնի։ Ու եթե մշտապես չշարժվես, չթռչես պոկված քարի ուժով, մարտյան թանձր օրերը կոկորդդ կսեղմեն, կխեղդեն։

Թախիծը եկավ տաք քամու հետ, անսպառելի, գործունեության եռուն պահին, և ժամեժամ դառնում էր ավելի անտանելի։ Եվ քանի որ Մարին չէր հասկանում իր թախծի պատճառը, պարզապես ձանձրույթից գրեց Անդրեյին, որ ուզում է նրան տեսնել։

Անդրեյը նրան սպասում էր Յոթ լճակների պուրակում։

Ձնհալից պուրակը կեղտոտվել էր, տրամվայի վագոնները այնտեղ էին հասնում դատարկ, ամայի ծառուղիները միապաղաղ սևին էին տալիս։ Սակայն ձյան հալոցից և ինչ-որ էակների անորոշ, վախվորած խշխշոցից գետնի երեսին կենդանության հոտեր էին թափառում, և դրանք ներշնչելը նույնքան տանջալից էր, որքան անդունդի եզրից ցած նայելը։

Անդրեյը կանգնել էր երկու ծառուղիների ուղղանկյուն կցատեղում։ Դրանցից մեկով պետք է գար Մարին։ Դա Բիսմարկի ծառուղին էր՝ չորս շարք լորենիներով, որոնք խուզված էին շրջած սրճագավաթների նման։ Կեգելբանի նման ուղիղ ճանապարհով, այն քաղաքը միացնում էր պուրակին։

Մյուս ծառուղին պուրակը շրջապատում էր կորագծի ձևով, ու նրա ոլորանը երևում էր Անդրեյի կանգնած տեղից մի հիսուն քայլ հեռավորությունից։

Նա Մարիին տեսավ պայմանավորված ժամին։ Մարին քայլում էր արագ, ծառաբների ուղիղ գծին այնքան մոտ, կարծես ուզում էր թաքնվել նրանց ետևը։ Երբ նրա դեմքն արդեն նշմարվում էր, Անդրեյին թվաց, թե նա ժպտում է։ Անդրեյը քաշվեց պուրակը բոլորող ծառուղու ներսի կողմը։ Մինչ այդ, հազիվ լսելի խշխշոցները հանկարծ միացան և վերածվեցին մի որոտալից թնդյունի։ Այն մեծանում ու տարածվում էր գետնի տակ ինչ-որ տեղում, ասես սառույցից ազատված արմատներն էին կատաղորեն հողը փեռեկում։ Անդրեյը տեսնում էր, ինչպես էին արագանում Մարիի քայլերը։ Նա գրեթե վազում էր դեպի պուրակը։ Մի՞թե նրան էլ էին հասել հողի այդ ողն ու թնդյունը, որ Անդրեյի հոգին լցրել էին անհասկանալի տագնապով։ Այն գնալով տարածվում էր, այդ ստորգետնյա թնդյունը, վերածվել էր պարզ, որոշակի լսելի աղմուկի, ընդգրկել ու երերել էր ոչ միայն հողը, այլև օդը, գլորվում, մեծանում էր անտեսանելի ձյունակույտի նման, այն բոպե առ բոպե պետք է ջախջախեր Անդրեյին։

Հասկանալի չէ, թե ինչու Անդրեյը տեղից չշարժվեց։ Նա սպասում էր Մարիին անշարժ կանգնած, մի տեսակ փայտացած հետևելով նրա մոտենալուն։

Եվ ահա, երբ Մարին արդեն նրանից հեռու չէր, նա տեսավ այդ ձյան հյուսը։ Այն դուրս սողաց ծառուղու ոլորանից, նրա կանգնած տեղից մի հիսուն քայլի վրա։ Հողն ալեկոծած թնդյունն առաջացել էր հարյուրավոր ծանր ոտքերից։

Մարիին մնում էր միայն ճանապարհն անցնել, որպեսզի ձեռքը մեկնի Անդրեյին։ Այդ պահին ձյան հյուսը հասավ ծառուղիների կցատեղին։ Անդրեյը հասցրեց նկատել, թե ինչպես Մարիի աչքերը կանգ առան մոտեցող թափորի վրա։ Հետո թափորը նրանց բաժանեց։

Թափորը գլխավորում էին զինված լանդշտուրմիստները, որոնք քայլում էին վհատ ու դանդաղ, խոժոռադեմ, մռայլ։ Նրանց ետևից շարժվում էին զինվորների հոծ շարքերը։ Առաջին շարքում չորսը բռնել էին լանդշտուրմիստների շինելները

ախլակներից։ Ետևից քայլողները ձեռքները դրել էին առջևինների ուսերին։

Երկնագորշագույն ճմրթված շինելները կարված էին միևնույն դերձակի կողմից, մահուդե գլխարկները միևնույն կաղապարի վրա էին ձգվել։ Սակայն երերացող երկնագորշագույն զինվորական զանգվածի քայլերը զինվորների քայլեր չէին։ Ոտքերը քարշ էին տալիս պատռված ծանր ոտնամանները, և չլսվում էին գետնին գրեթե առանց նրանից պոկվելու։ Մարդիկ այս ու այն կողմ էին օրորվում, խմբվում էին, իրար վրա ընկնում։ Նրանց ձեռքերը շարունակ ձգվում էին, շոշափում տարածությունն ու հենվում առջևից քայլողների մեջքերին, արմունկներին։

Անդրեյի աչքն ընկավ մի զինվորի։ Վերջինիս գլուխը մի կողքի էր կախվել ու ցնցվում էր երկար վզի վրա, ինչպես թելից կախված։ Նա ասես ուշադիր ականջ էր դնում այն բանին, ինչ ամեն քայլի հետ մոտենում էր։ Դեմքը ծամածռված էր, բերանն այնպես պինդ էր սեղմել, որ ծնոտի մկանները ցցվել էին այտոսկրերի նման։ Թերթերունքների սև շրջագծի մեջ ապակիացել էին կանգ առած աչքերը։ Դրանցում լողում էին ծառուղիների վրա կախված ճյուղերի հանդարտ ստվերները։

Զինվորը կույր էր։

Այն ժամանակ Անդրեյը մի անասելի կարճ հայացքով ընդգրկեց իր առջևից սողացող այդ ամբոխին։

Տասնյակ, հարյուրավոր մարդկանց դեմքերը նրան թվացին միևնույն դեմքը։ Ու երբ նայեց այդ դեմքին, բղավեց։

Դա Կաուլ Էբերսոկսի դեմքն էր, ինչպիսին նրան տեսել էր Էլանգենի թանգարանում, իսկ հետո՝ երազում, երբ կապտակարմիր գլուխը մոմտում էր՝ արդյոք ընկնի՞, թե մնա սանդուղքի վրա։ Սակայն, օ՜ սարսափ, սարսա՜փ, այդ մարդասպանի դեմքով, որը բաց աչքերով բարձրացել էր կառափնարան, որպեսզի անհվանից հետո անամոթաբար նայի մարդկանց՝ թանգարանային իր սպիտակ բանկայի միջից, այդ դեմքով արցունքներ էին հոսում։

Անդրեյն արդեն չէր տեսնում ամբոխին։ Նրա առջև, ինչպես տեղ շատ մոտ, այնպիսի տարածության վրա, որ մարդու շունչը կհասնի, երերում էր Էբերսոկսի դեմքը։ Մահապատժի

ենթարկվածի կապույտ շրթունքները ցնցվեցին, բացվեցին, և ինչպես երազում, Էբերսոկսն ասաց.

— Իտալացիներ են։ Գերվել են Տրիեստի մոտ։

Հետո աչքով արեց արցունքների միջից ու ավելացրեց.

— Գազը կոչվում է «Դեղին խաչ»։ Հիանալի տեսակ է։

Զայնը Անդրեյին տխուր թվաց։ Արդյոք պատճառն այն չէ՞ր, որ խոսում էր կույրերի վախտ ուղեկցորդը։

Նա կանգ առավ Անդրեյի կողքին, որպեսզի ծխամորճը վառի և մի քանի խոսք ասաց կարեկցանքից ու զրուցասիրությունից դրդված։ Հետո վազեց իր տեղը, ուսին սեղմելով երկար՝ ռուսական տիպի հրացանը։

Իսկ լուռ թափորը շարունակ ընթանում էր ծառուղիով ու անհամար ձեռքեր շոշափում էին տարածությունը։ Վհատ լանդշտուրմիստները, որ վերջափակում էին երթը, թեթևակի բոթում էին ետ մնացողներին, և այն ժամանակ արանք տրոբում էին առջևից քայլողների կրունկները և գլուխները ետ գցում, ասես ականջ դնելով, թե ամեն քայլի հետ ինչ է նրանց մոտենում։ Հավանաբար նրանք արդեն լսում էին կացնի հարվածները, որ ավարտում էր ճամբարային բարաքների կառուցումը։

Արցունքներով ողողված Էբերսոկսի դեմքը ճապաղվեց մարտյան մթնշաղային օդում։ Մաշված ոտնամանների քստքստոցը դադարեց, վերածվեց ստորգետնյա թնդյունի, հետո տարածվեց դարձավ գարնանային զարթոնքի խշխշոց։ Յոթ Լճակների պուրակն սպասում էր երեկոյին։

Այն ժամանակ Անդրեյը շուրջը նայեց։

Ծառուղու մյուս կողմում, ծառին հենված, աչքերը փակ կանգնել էր Մարին։ Նա կարծես ծառաբնին կապված լիներ, թևերը կախվել էին անօգնական։ Անդրեյը նետվեց դեպի նա, ուժով պոկվելով հողակտորից, որ նրան պահում էր փայտացած վիճակում։ Մարին աչքերը բացեց։ Անդրեյը բռնեց նրա ձեռքերը։ Դրանք սառն էին ու ցնցվում էին, ինչպես ուժեղ դողից։

— Մեր հանդիպումը...— սկսեց Անդրեյը։

Մարին ուզում էր ժպտալ։

— Ես չեմ կարող,— պատասխանեց նա,— այսօր... ,

Հետո պոկվեց ծառից, ուսերը շտկեց։

— Այսօր չեմ ուզում խոսել... չեմ կարող։

Նա սեղմեց Անդրեյի ձեռքը։

— Գուցե նորից ձեզ գրեմ։

Մարին շրջվեց ու քայլեց դեպի այն կողմը, ուր կանգ էին առնում այդ ժամին դեռ դատարկ տրամվայի վագոնները։

Անդրեյն ուղեկցեց նրան հայացքով։

Ծաղիկներ, դեռևս ծաղիկներ

Այդ ամռանը ծովային երկու տերություններն առաջին անգամ հանդիպեցին բաց ծովում։ Նավերը, որ ստեղծվել էին կործանելու և կործանվելու համար, որ տառապում էին անգործությունից և գերզինվածությունից, միևնույն օրն ու միևնույն ժամին, ինչպես այլանուն մագնիսային սլաքներ, հեռացան իրենց բներից։ Հանդիպման տեղը Սկագերրակ ծոցի ելքն էր դեպի Հյուսիսային ծովը։ Հանդիպման ժամը՝ ճակատագրի այն ժամը, երբ քամիները դադարում են փչել և մոլորակները կանգ են առնում, երբ մարդիկ մաքուր շապիկներ են հագնում։ Հաղթանակն ապահովված էր երկու էսկադրաների համար էլ, որովհետև երկու էսկադրաներն էլ համարվում էին աշխարհում ամենաուժեղը, և որովհետև երկու տերություններն էլ, որոնց էսկադրաները պետք է հանդիպեին Սկագերրակի մոտ, համարում էին իրենց ամենաուժեղ տերությունները։

Բոլոր տերություններն էլ միշտ իրենց համարում են ամենաուժեղը. այդ նրանց համար անհրաժեշտ է, որպեսզի ժանգոտած խոհանոցը դեկդիկալով քարշ տվող վաշտի ամեն մի յարու իրեն թամերլան ղգա։

Սկագերրակի մոտ ծովային Անգլիան հաղթեց ծովային Գերմանիային և ծովային Գերմանիան հաղթեց ծովային Անգլիային։ Այս պայքարում պարտված դուրս եկավ տրամաբանությունը՝ ամենանվաղ զորեղ տերությունը։ Նրա նկատմամբ տարած հաղթանակը տոնում էին հաղթանակած երկու կողմերն էլ՝ և՛ Անգլիան, և՛ Գերմանիան, բացառությամբ այն անգլիական և գերմանական ծովայիններից, որոնց ջուրը Սկագերրակից տարավ Նորվեգական ծով։

Գերմանական բնակչությանը դիագրամաներով բացատրվեց, որ Մեծ Բրիտանիայի ծովային հզորությունն անդառնալիորեն խախտված է և որ այդ պատահեց արտակարգ հաջողությամբ, քանզի Գերմանիայի զոհերն աննշան են։ Անգլիական թերթերն իրենց հերթին քարտագրամներով ապացուցեցին, որ կարելի է համարել, թե գերմանական նավատորմիղ գոյություն չունի, և որ այդ բանին հասել են ըստ էության Մեծ Բրիտանիայի կողմից չնչին կորստի գնով։

Այսպիսով, Սկագերրակի օրերին Բիշոֆսբերգը բոլոր հիմքերն ուներ տոնակատարության համար։ Բիշոֆսբերգն այդ հիմքն ուներ, մանավանդ որ սպասում էր նորին մեծություն Սաքսոնիայի թագավորի ժամանմանը։ Դա հաճախ չէր պատահում և պատմական երևույթ էր Բիշոֆսբերգի համար։ Այդ բարձր այցը պետք էր կազմակերպել արժանապատվորեն և շքեղ։ Եվ քանի որ ամեն մի բարձր այց հարմարեցվում է որևէ իրադարձության, իսկ նորին մեծություն Սաքսոնիայի թագավորը Բիշոֆսբերգ էր եկել պարզապես լեռներում այծյամ խփելու համար, ուստի բնական է, որ նրա գալուստը կապեցին ծովային Մեծ Բրիտանիայի դեմ տարած հաղթանակի հետ։ Եվ նրան սկսեցին պատվել ու մեծարել որպես Յուտլանդական ճակատամարտի իսկական հանճարի...

Սակայն դա մի ամբողջ գլուխ է Բիշոֆսբերգ քաղաքի պատմության մեջ, իսկ այն գլուխը, որ մենք գրում ենք, նվիրված է ծաղիկներին։ Ծաղիկները քիչ են մեր վեպում, դրանք սիրում են աղջիկները, որոնք դժգոհում են այն գրողներից, ովքեր պատմում են լանդշտուրմի և պատերազմի, գործադուլների և թագավորների մասին, փոխանակ խոսելու դավաճանությունների և գրկախառնությունների, սիրո և ծաղիկների մասին։ Տխուր է մտածել, որ ոչ մի աղջիկ մինչ վեպի այս տեղը չի կարդա, որպեսզի հանդիպի մեր կարեկից խոսքերին։ Սակայն եթե զինվորական էշելոններից, հեղափոխականներից, սոցիալ-դեմոկրատներից վերջնականապես տանջահար քնքուշ հոգին հանկարծ բացի գրքի այս էջը, այստեղ կգտնի մեր երդումնավոր խոստումը՝ ամբողջ գլխում խոսել միայն ծաղիկների, միայն և միայն ծաղիկների մասին, բուրավետ, մաքուր շաղով թրջված, ողջախոհ, կենդանի ծաղիկների մասին...

Կայարանում թագավորին դիմավորեցին ռազմական իշխանավորները։ Այնտեղից նա պիտի գնար ռատուշա և ընդուներ քաղաքացիական աստիճանավորներին։ Երկու ժամ հետո նորին մեծությանը պետք է ներկայացվեին բարեգործական ընկերությունները։

Պետք է խոստովանել, որ բիշոֆսբերգցիները այդ պատմական օրը որոշ հիասթափություն ունեցան։ Անսահման շատ օսլա էին գործածել ներքնաշրջազգեստները, կրծկալները, բազկակալները և օձիքները հանդիսավոր տեսքի բերելու համար։ Սպասում էին նորին մեծությանը տեսնելու շքանշաններով, ժապավեններով ու աստղերով զարդարված, իր շքախմբի և պալատական պահակախմբի ուղեկցությամբ։ Սակայն թագավորը եկավ բաճկոնով, գլխին ցախաքլորի փետուրով մի տիրոլյան թաղիքե գլխարկ։ Կայարանում նրան հրամցրին բավական ընդարձակ մի հնաձև կառք, որին երկու դմբռ ձիեր էին լծված։ Թագավորը նստեց օբեր-բյուրգերմայստերի կողքին և նավթով լվացված երկաթյա անվադոտիները դղրդացին գլխավոր փողոցում։ Մայթերը գրաված օսլայված հպատակները նմանօրինակ մուտքը տեսնելով, մոռացան գլխարկները հանել։ Դպրոցականները կառքը շրջապատած սլանում էին փողոցով գոռում-գոչյունով։ Նորին մեծությունը բարեհոգաբար սիգարի մոխիրը թափ էր տալիս նրանց քթերին, խրախուսելով, որ բարձրանան կառքի ոտնակին, կախվեն գսպանակներից։

— Նայիր,— ասաց մի բյուրգեր կնոջը՝ տեսնելով յուր արքային,— նրա հագին այնպիսի բաճկոն է, ինչպես մեր փեսա Հանսինը...

Այսպես, հերոսը նսեմացավ իրեն խորապես նվիրված քաղաքացու աչքում։

Մովսիսն Մեծ Բրիտանիայի դեմ տարած հաղթանակի և թագավորի Բիշոֆսբերգ ժամանելու այդ օրը, այն պահին, երբ ավարտվում էր վերջին օձիքների արդուկումը, մաքրվում էին կոշիկները, Ֆրաու Ուրբախը փաղելով անցնում էր հյուրասենյակով ու բղավում.

— Մարի՛, Մարի՛, Մարի՛։

Նա այնքան հուզված էր, որ մոռացել էր վերցնել ռետինե

ծայրով իր փայտը և շատ նկատելի կաղում էր։ Նա գրեթե շնչասպառ էր լինում բղավելով.

— Մարի՛, Մարի՛։

Եվ երբ ներս ընկավ դստեր սենյակը, վրա տվեց առանց շունչ առնելու.

— Մարի, մեր դրոշակներն ո՞ւր են։ Սա ի՞նչ է նշանակում։ Ո՞ւր են դրոշակները։

Մարին ձեռքերը ետ տարած, զգեստի կոճակներն էր կոճկում, այդ դիրքը նրա համար անհարմար էր, ուստի ոչ անմիջապես արձագանքեց հարցին։

— Ի՞նչ է պատահել։

— Դրոշակները, դրոշակները։ Մեր դրոշակները կախված չեն։

— Ինչո՞ւ եք այդ հարցով ինձ դիմում։

Ֆրաու Ուրբախը ձեռքը գցեց աթոռի թիկնակին։

— Ես սխա՞լ լսեցի, Մարի,— մոթմոթաց նա։

— Ես ասում եմ, որ չգիտեմ, թե մեր դրոշակներն ինչու կախված չեն։

— Գուցե դուք չգիտեք նաև, թե ինչո՞ւ պետք է կախվեին։

Մարին մորը նայեց անտարբեր հայացքով.

— Ճիշտն ասած, չգիտեմ։

Այն ժամանակ Ֆրաու Ուրբախը փլվեց աթոռին։ Անհավատալի է։ Ընդամենը մի կես ժամ առաջ այս անմիտ մարդը նրա հետ միանգամայն ողջախոհ էր խոսում։

— Մենք հենց նոր պայմանավորվեցինք, Մարի...— սկսեց Ֆրաու Ուրբախը, թոքերում ավելի շատ օդ հավաքելով և ավելի հարմար տեղավորվելով։ Հարկավոր էր վերականգնել խախտված հավասարակշռությունը։

Սակայն Մարին ընդհատեց.

— Հավատացնում եմ, որ ոչինչ չի պատահել։ Պատրաստվում եմ կայարան գնալ, հետո կգամ ռատուշա։ Ձեր հանձնարարությունը ճշտիվ կկատարվի։ Դուք պետք է հագնվեք, այլապես կուշանաք։

— Սակայն դրոշակնե՛րը, դրոշակնե՛րը,— բացականչեց Ֆրաու Ուրբախը։

— Ինչ վերաբերում է դրոշակներին, խնդրում եմ, այդ գործը մի ուրիշին ևս հանձնարարեք։

Մարին հանկարծ քրքջաց.

— Դեհ, հանձնարարեցեք, օրինակ, հայրիկին։ Ճիշտ եմ ասում։ Հայրիկը դրոշակները ուրախությամբ կկախի, նույնիսկ ամեն առավոտ։ Դա հոյակապ կլինի։

Ֆրաու Ուրբախը դանդաղ եկավ տեղից, գլուխը ետ էր ընկել, աչքերը քարացել էին։ Նրա կեցվածքը մոնումենտալ էր՝ ներքևում լայնացող ծանր զգեստ, աջ ձեռքը բարձրացրած և քարացած։ Պարզորոշ շշունջ դուրս հոսեց նրա գունատ, լարումով սեղմված շուրթերից։

— Մեկընդմիշտ հիշեցեք. ես թույլ չեմ տա ինձ վրա ծիծաղել ոչ միայն ձեր հորը, այլև ձեզ։

Նա շրջվեց ու դուրս եկավ դռնից, ինչպես վիրավորված հերոսուհին կինոյի էկրանում՝ վեհապանծ և գրեթե նույնպես անձայն։

Իր սենյակում ֆրաու Ուրբախը մի քիչ ժամանակ նստեց բազկաթոռին, թաշկինակով իրեն հով անելով։ Հետո զանգահարեց սպասուհուն և հրամայեց դրոշակները կախել։ Հետո սկսեց հագնվել։

Այն, ինչ տեղի ունեցավ մի երեք ժամ հետո ռատուշայի մեծ դահլիճում, որտեղ բարեգործական և մյուս ընկերությունները ներկայացվում էին թագավորին, արժանի է ամենամանրամասն նկարագրության։ Այսպիսի նկարագրություն տվեց «Բիշոֆսբերգի առավոտյան թերթը», որտեղ հետաքրքրասեր ընթերցողը կարող է գտնել ամբողջ արարողությունը և ի միջի այլոց, մի հիանալի ճառ, որ ազդարարել էր ցեխերի անունից Վարսավիրների Միության անդամ և խմբակային երգեցողության բարեկամների ընկերության գանձապետ Պաուլ Գեննիգը։ Այստեղ կպատմվի միայն մի անշշան մանրամասն, որ դիվանագիտորեն լռության էր մատնել «Առավոտյան թերթի» խմբագիրը՝ իսկապես արժանի գտնվելով իր պատասխանատու դիրքին։

Այն պահից քիչ առաջ, երբ Նորին մեծությունը օբերբյուրգերմայստերի, շտադտրատների և համհարզի ուղեկցությամբ, մի պատվիրակությունից անցնելով մյուսին, մոտենում էր ֆրաու Ուրբախին, վերջինս նայեց շուրջն ու մեկ անգամ ևս համոզվեց, որ Մարին կանգնած է իր ետևում։ Դրանից մի քանի բոպե առաջ նա տեսել էր, ինչպես դուստրն

իրեն էր մոտենում պճնված ֆրոյլայնների և ֆրաուների մեծ խմբի հետ։

Եվ ահա նորին մեծությունն թագավորը կանգնած է ֆրաու Ուրբախին դեմ-հանդիման։

Օբեր-բյուրգերմայստերը առանձնահատուկ հաճույքով արտասանում է.

— Ֆրաու Ուրբախ, ծնյալ ֆոն Ֆրեյլեբեն, սենդակայանի հովանավորուհին, նախագահ...

Ֆրաու Ուրբախը անշարժանում է խոր ռևերանսով։

Նորին մեծությունը ձեռքը մեկնում է տիկնոջն ու ընդհատում օբեր-բյուրգերմայստերին.

— Տիկին, ձեր մասին ինձ արդեն զեկուցել էին աթոռանիստումս։ Ֆրիդրիխ-Օգոստոսի մեդալը ձեզ է սպասում Դրեզդենում։

— Majestät,— արտասանում է ֆրաու Ուրբախը և կրկին անշարժանում ռևերանսով։ Ապա բարձրանալով ու տեսնելով, որ Նորին մեծությունը շարունակում է հաճությամբ ժպտալ, ֆրաու Ուրբախը կամացուկ ասում է.

— Majestät, թույլ տվեք ներկայացնել ձեզ դստերս, ֆրոյլայն Մարի Ուրբախին։

Նա գլուխը դարձնում է աջ ու հանդիպում մեկի զարմացած ու շփոթված հայացքին։ Գլուխը ձախ է դարձնում՝ տեսնում օտար վախեցած դեմք։ Ու հանկարծ ետևից նրա դեկոլտեն այրում են ինչ-որ խենթ խոսքեր.

— Ֆրոյլայն Մարին այստեղ չէ։

— Դուք ձեր աղջկան չե՞ք կարողանում գտնել,— լսում է նա։ «Տեր աստված, մի՞թե սա թագավորն է ասում»։

— Majestät,— շշնջում է ֆրաու Ուրբախը։

— Ոչինչ, ոչինչ,— ծիծաղում է Նորին մեծությունը,— այսօր ինձ հետ ավելի վատ բան պատահեց. այստեղ իմ անունը դրեցին ծովային գայլ, իսկ իմ սիրտը խառնում է նույնիսկ էլբայի վրայի կամուրջով անցնելիս...

Ֆրաու Ուրբախը դեռևս իր մեջ ուժ է գտնում ժպտալու թագավորական կատակի վրա, ուժ է գտնում ձեռք տալու Նորին մեծությանը։ Հետո նա դառնում է պճնված ֆրոյլայններին և ֆրաուներին, մի կարճատև հայացք նետում նրանց վրա, ու նրան գրեթե դուրս են տանում դահլիճից...

Եթե Ֆրաու Ուրբախի աչքն ընկներ այն ծաղիկներին, որոնց մասին պետք է խոսվի այս գլխում, ծաղիկները կարմիր գունքից կթառամեին։

Այն ժամը, երբ պատերազմն սկսվեց, ծնվել էր կայսրանների նշանի տակ։ Լեռնանման, փորփրված ստորերկրյա անցքերով, կամուրջներով ու անցումներով պատված, ռելսերի երկաթյա կծիկներով ծածկված, մշտական ցնցումով, ողբ ու լացով լի կայսրանները պատերազմ էին անում։ Հսկա փոշեծծիչների նման նրանք իրենց մրոտ երախն էին ներքաշում անթիվ-անհամար փոշեհատիկներ, հավաքում էին դրանք գեներատորների մեջ, խողովակներով անցկացնում և դուրս թքում, նետում պատերազմ։ Մի անգամ կյանքի կոչված լինելով, նրանք ոչ մի վայրկյան չէին դադարում շնչել իրենց հառաչող պողպատյա կրծքով, և նրանց յուրաքանչյուր հառաչը ներծծում ու դուրս էր նետում մարդկային փոշի։

Կայսրանների նշանի տակ ծնված ժամին մարդիկ հավաքվում էին քարածխի փոշով ծածկված, նավթով ու քսայուղերով կեղտոտված ճանապարհներին, այն ճանապարհներին, որ տանում էին դեպի պատերազմ։ Եվ մարդիկ այդ ճանապարհները ծածկում էին ծաղիկներով, կարմիր վարդի թերթերը թափում ռելսերի երկաթյա կծիկներին այնպես, որ չերևար ոչ քարածխի փոշին, ոչ քսայուղը, ոչ էլ նավթը։ Երթային համազգեստով զինվորները վարդերը խրում էին հրացանների փողերի մեջ, փամփշտակալների վրա, ուսապայուսակների կափարիչներին, և ծանր, հաստակաշի սապոգներով տրորում կառամատույցին ու ռելսերի վրա թափված վարդերը։ Հնարավո՞ր է արդյոք հավաքել այն բոլոր ծաղիկները, որ հայրենիքը թափում է երթային համազգեստով բանակի ճամփին։

Երթային համազգեստով բանակը լցվում էր գեներատորների մեջ ու օդի հետ խառնված գազի նման անցնում խողովակներով, որպեսզի այրվի պատերազմում։ Եվ զինվորները կայսրանների երկաթյա հառաչից շիկացած, ամբոխի խելահեղությունից բորբոքված, հրճվալից, երիտասարդ՝ գրոհում էին վագոնները, դրանց պատերը նախշելով ծիծաղելի գրերով.

— Ահա Ֆրանսիացին՝ տիեզերքի նվաճողը։

— Ահա սերբերի Պետրոսը՝ Վիեննա կատարած արշավանքից հետո։

Եվ յուրաքանչյուր վագոնի վրա հաստ, պարզորոշ գրերով սպիտակին էին տալիս աչքի զարնող տառերը.

Դեպի Փարի՛զ։

Դեպի Փարի՛զ։

Դեպի Փարի՛զ։

Դա այն ժամն էր, երբ վարդերի բույրը խլացրեց նավթի գառնահամն ու քարածխի գարշահոտությունը...

Երբ Մարին Ֆրաու Ուրբախի հանձնարարությամբ եկավ կայարան, այն հենց նոր էր դիմավորել թագավորին և պատրաստվում էր սկսել իր սովորական կյանքը. ապրել պատերազմի համար։ Լանդշտուրմի երթային վաշտը մեկնում էր ռազմաճակատ, մեկ էլ մի խումբ նորակոչիկներ, ուղեգրի սպասելով, ցրվել կանգնել էին անցումների, թունելների, ռելսերի վրա։ Ինչպես միշտ, զորախաղեր էին անցկացվում, և կայարանը դղրդում էր պողպատյա ցնցումից։

Կանանցից ու երեխաներից բաժանվող լանդշտուրմը հրացանները զարդարել էր ծաղիկներով։ Դրանք թառամած փոքրիկ մեխակներ և բույրը կորցրած կանաչ ոլոռներ էին, որովհետև երթային համազգեստ հագած բանակի ճանապարհը մի ժամանակ զարդարող վարդերն այլևս չկային և որովհետև վարդերը չափազանց թանկ էին կանանց համար, որոնցից հեռանում էր լանդշտուրմը։

Սպասումից ձանձրացած, հոգնած նորակոչիկը, անբեղ, տափակ դեմքով տղան թափառում էր պահեստային գծերի վրա։ Այստեղ ամայի էր, կայարանն իր մեջ էր ներծծել կենդանի ամեն բան, կայարանը հենց նոր դիմավորել էր թագավորին։ Պահեստային գծերին քստքստում էին անհանգիստ լոկոմոտիվների դետքերը։ Նորակոչիկը ձանձրույթից կանգ առավ ապրանքատար վագոնի մոտ, ձանձրույթից բարձրացրեց գետնին ընկած կավճի կտորը, ձանձրույթից սկսեց կավճով գրել վագոնի պատին.

Դեպի Փար...

Շչակի նման սուր մի ձայն մտրակից նրա ձեռքը.

— Ի՞նչ ես այդտեղ խզմզում։ Ո՞վ պիտի քո արածը մաքրի։

Տղան շրջվեց։ Գծերի վրայով գալիս էր վագոնների հավաքարարուհին։ Նրա դեմքը քսայուղից փայլփլում էր, ձեռքերը սև էին։ Տղան ուզեց մի բան պատասխանել։ Վերջ ի վերջո նա զինվոր է, նրան կբշեն ռազմաճակատ, նա կկռվի, իսկ այս կեղտոտ կնիկը առաջվա պես պետք է կեղտոտվի կայարանում, ու վատ չէր լինի սրան լավ հայհոյել մի ֆելդֆեբելական խոսքով։ Բայց նորակոչիկը ձանձրանում է, հոգնել է սպասումից, և նրա շուրջը օդն էլ տնքում է երկաթե հառաչներից, ու արևն ինքն էլ տառապում է, ինչպես նորակոչիկը։ Ուժեղ հարվածից կավիճը կպչում է վագոնին, սպիտակ բիծ դառնում, ու նորակոչիկը կրունկներով ակոսում է ճանապարհի ավազը, ոտքերը քարշ տալով դեպի կայարան։

Հավաքարարուհին վագոնը սրբում է յուղալաթով, շուրթերն ինչ-որ բան են շշնջում, սակայն բառերը հնարավոր չէ ջոկել լոկոմոտիվների քստքստոցի մեջ։ Գուցե նա խղճա՞ց նորակոչիկին։ Գուցե նրա ամուսինը մեկնել է աչքի զարնող՝

մակագրությամբ վագոնով և տուն չի՞ վերադարձել։ Գուցե նա նույնիսկ ատո՞ւմ էր Փարիզը։

Կայարանն այդ չգիտի, կայարանը պատերազմ է անում։

Մարդկային փոշեհատիկները լողում են թունելներում, անցումներում և սրահներում։ Նրանց մեջ է Մարին։ Նա կատարել է մոր հանձնարարությունը և պատրաստվում էր քաղաք վերադառնալ, որպեսզի ոատուշա գնա։ Սակայն կառամատույցում, որ դեռ լի էր թագավորական հանդիպման հանդիսավոր շնչով, նրան ուշացրին ռազմաճակատ մեկնող լանդշտուրմիստները։ Ահա թե դա ինչպես պատահեց։

Վագոններ նստելու հրաման տվեցին։

Օրհնանքներից և լացից առաջացած աղմուկը, սվինների զրնգոցն ու հանդերձանքի ճռճռոցը բարձրացավ դեպի կայարանի ապակե ծածկն ու ընկավ ցած, ասես քամու պոռթկումից գլորված։ Գորշ մարդիկ հեռացան դեպի վագոններն ու ցուռ շարք կանգնեցին դրանց երկայնքով, աչքերը չկտրելով այն մարդկանց աչքերից, որ մնացին կայարանի պատուհանների մոտ։ Կառամատույցի վրայով, վագոններից դեպի կայարան ձգվեցին հարյուրավոր կանգ առած աչքերի հայացքներ։ Դա հրաժեշտ էր։ Ու եթե չլիներ մարդու բնածին հատկությունը, որի շնորհիվ նա նկատում է միատարր զանգվածի մեջ տեղի ունեցող չնչին իսկ խախտումը, այդ հրաժեշտը հիշողության մեջ կարող էր տպավորվել ինչպես որևէ այլ մասսայական գործողություն.

«Անցնում է ամբոխը»։

«Հասարակությունը ծափահարում է»։

«Ժողովուրդը աղոթում է»։

«Մոբիլիզացվածները հրաժեշտ են տալիս կանանց»։

Սակայն մասսայի միատարրությունը խախտված էր, և մարդիկ հանկարծ կատարվածը տեսան այնպիսի լույսով, որ առաջ չէին տեսել։

Թխադեմ, ծանրաշարժ մի լանդշտուրմիստ հրամանը չէր կատարել և մնացել էր ուղեկցողների բազմության մեջ, կայարանի շենքի մոտ։

Նա կանգնել էր երկար թևերը դրած գունատ դեմքով մի կնոջ ուսերին, չոր աչքերով շաղափելով կնոջ հոգնած հայացքը։ Նա բացահայտորեն առավելություն ուներ իր ընկերների նկատմամբ, որովհետև նրա կնոջ աչքերը ուղիղ իր առջև էին, և որովհետև վերջին համբույրը դեռ սպասում էր նրան, մինչդեռ նրա բոլոր ընկերների համար դա արդեն անցած էր։ Թերևս նախանձից, մեկը բղավեց.

— Դեհ, համբուրվիր էլի, քառասուներկուսանտիմետրանոց։

Եվ նա համբուրվեց։

Նա թևերը ծալեց, և կնոջ գունատ դեմքը անկիրք ու մեղմ մոտեցավ նրա կրծքին։ Նա գլուխը թեքեց, շինելի օձիքը սապատի նման ցցվեց մեջքին, ուսապայուսակը ծանրորեն ցած սահեց դեպի գոտկատեղը, սև բեղերը դիպցրեց կնոջ քրտնած ճակատին։

Եվ կինը հարցրեց.

— Ի՞նչ ասեմ մեր փոքրիկ աղջկան։

— Մեր աղջկան ասա...— սկսեց նա շտկվելով։

Ձեռքերը ցած սահեցին կնոջ ուսերից, կախ ընկան ու օրորվեցին օդում, հետո դժվարությամբ սկսեցին բարձրանալ դեպի գլուխը։

— Մեր փոքրիկին ասա...— ավելի բարձր ասաց նա։ Եվ ծնկներն սկսեցին կամացուկ ծալվել։

— Մեր փոքրիկին ասա...

Հանկարծ նրա ձեռքերը բռնեցին գլուխը, սաղավարտը վեր թռավ, ընկավ մեջքին, ինչպես ուսապայուսակը, ապա գլորվեց ցած։ Նա պպզեց, ձեռքերով ծնկները գրկած և աղաղակեց.

— Մեր փոք-րի-կի՜ն...

Եվ դարձյալ ավելի բարձր և ավելի երկար.

— Մեր փոք-րի-կի՜ն...

Ենթասպան շտապով մոտ վազեց ու բղավեց.

— Անցիր տե՛ղդ։

Լանդշտուրմիստը արագ տեղից բարձրացավ և, առանց կնոջը նայելու, առանց սաղավարտը վերցնելու, գլուխը բաց քայլեց դեպի վագոնը։

— Գլուխդ ծածկի՛ր,— բղավեց ենթասպան։

Սակայն արդեն ուշ էր։

Կայարանի շենքի մոտ խմբված բազմությունից հարյուրավոր ձեռքեր կառամատույցի վրայով մեկնվեցին դեպի վագոնների մոտ շարված գորշ մարդիկ, և հարյուրավոր աղաղակներ վեր նետեցին տղամարդկանց անուններ.

— Պաո՜ւլ։ Կա՜ռլ։

— Ռոբե՜րտ։ Պաո՜ւլ։

Եվ նրանց պատասխանեցին տղամարդկանց կոպիտ, խրոպոտ, խզված ձայները։

— Մարիա՜։ Աննա՜։

— Լիզբե՜տ։

Եվ շենքի մոտ շարված բազմության մեկնած ձեռքերը հանդիպեցին վագոններից մեկնված ձեռքերին։

Այն ժամանակ հրամանատարները ձևացրին, թե դեռ վագոն նստելու հրաման չեն տվել։

Այն սենյակում, որն առաջ monsieur Պերսին էր զբաղեցնում, ապրում էր մի ենթասպա, հոժարակամ զինվոր։ Նա

monsieur Պերսիից ավելի զրուցասեր և աղմկոտ էր, զարմանալի բարձր օձիք էր կրում, իսկ գոտու վրա, սվինի փոխարեն՝ փոքրիկ ֆիննական դանակ։ Ֆիննական դանակը մոդայիկ էր, իսկ ենթասպան հետևում էր մոդային, շատ քաղաքավարի էր, չափավոր հայրենասեր, թարգմանությամբ կարդացել էր Ուայլդին և, ինչպես բոլորը, նրան անվանում էր Վիլդե։ Իրեն՝ ենթասպային, Դիտրիխ էին կոչում։

Այդ օրը նա իր ֆելդֆեբելին մոտը թեյի էր հրավիրել։ Մի գավաթ թեյի հրավիրելը օտարերկրյա ծագում ունեցող սովորություն է, դրա մեջ մի քիչ անգլիական, մի քիչ ռուսական բան կա. հենց «թեյ» բառի մեջ էլ Դիտրիխը ինչ-որ լիբերալ բան էր լսում, հատկապես այդ օրը, անգլիական նավատորմիղի ջախջախման օրը։ Հրավեր մի գավաթ թեյի Անգլիայի դեմ տարած հաղթանակի առթիվ. այդպիսի ժեստը կարող էր դուր գալ և Բեռլինում՝ Ֆրիդրիխշտրասսեում։

Դիտրիխի հյուրերն էին, ֆելդֆեբելից բացի, Պաուլ Գեննիգը, նրա կենվոր Անդրեյ Ստարցովը և Ֆրոյլայն Լիսին։

Դիտրիխը երկտակ ծալվում էր, հերթով դիմելով հյուրերին և խմորեղեն առաջարկելով։ Ֆելդֆեբելը կարճ մատներով պոկոտում էր ցիտրայի լարերը, գործիքը նվնվում էր, թընգթընգում, երաժշտի դեմքը՝ չեչոտ, ինչպես մեղրաբլիթը, տխուր ժպտում էր։ Ֆրոյլայն Լիսին՝ կլորիկ, թմբլիկ, թխահեր մի աղջիկ, կոտրատվում էր, ջանալով բոլորին միանգամից դուր գալ։

Պաուլ Գեննիգը, ըստ երևույթին, ցնցված էր և ինչպես հենց նոր արտակարգ մի բան ապրած մարդ, մի տեսակ ինքն իրեն նման չէր. սսկվել էր, ձայնն իջեցրել, կծկվել։ Սակայն նրա թեթևակի քրտնած և պղնձե թասի նման փայլփլող դեմքի վրա թափառում էին հպարտության շողերը։

— Ինտերնացիոնալի գաղափարն ինքնին,— արտասանեց նա երկար դադարից հետո,— իր մեջ պարունակում է տարբեր ազգությունների գոյությունը, այո՛։

— Շատ ճիշտ է, շատ ճիշտ է։ Խմորեղեն վերցրե՛ք,— ասաց Դիտրիխը։

— Ես գիտեմ ինչ եմ ասում։ Դա գրված է Բիբլիի մոտ։

— Մի՞թե նա այդքան երկար խոսում էր ձեզ հետ, հերր Գեննիգ,— հազիվ լսելի հարցրեց Ֆրոյլայն Լիսին, և նրա

թմբլիկ արմունկներն ու ուսերը ծածկվեցին մանր, շեշանման փոսիկներով։

— Նա հարցրեց. դուք վարսավիրական ցեխի կողմի՞ց եք,— և ձեռքը մեկնեց։ Ես պատասխանեցի՝ ճիշտ այդպես, ձերդ մեծություն, վարսավիրական ցեխի կողմից, ու սեղմեցի նրա ձեռքը։ Դուք ուժեղ ձայն ունեք, ուղերձը լավ կարդացիք, ասաց նա։ Ես պատասխանեցի, որ խմբային երգեցողության ընկերության անդամ եմ և ռատուշայում այսօր երգել եմ «Wacht am Rhein»[1]։ Այն ժամանակ նա հարցրեց. գուցե դո՞ւք ևս որևէ ընկերության անդամ եք։ Ես ուղղակի ասացի. ձերդ մեծություն, ես սոցիալ-դեմոկրատ եմ։

— Իսկ նա ոչինչ չասա՞ց,— բղավեց Ֆրոյլայն Լիսին։

— Նա ոչ մի նախապաշարում չունի, մեր թագավորը,— ներողամտորեն նկատեց հերր Գեննիգը։— Ուղղակի գլուխ տրվեց և հեռացավ։ Ես էլ նրան գլուխ տվեցի։ Հետո գնացի տղաների հետ խմելու, և նրանք հավանություն տվեցին, որ հենց այդպես, ուղղակի թագավորին ասել էի, թե ով եմ։

— Շատ լավ է,— ասաց Դիտրիխը։— Հերր ֆելդֆեբել, մի բան էլ նվագեցեք։ Ֆրոյլայն Լիսի...

— Ահ, նվագեցեք, նվագեցեք,— խնդրեց թխահեր աղջիկը։

— Իհարկե, լավ է,— ասաց հերր Գեննիգը բալկաթոռին թիկն տալով։— Ես ասում եմ, որ մեր ազգային գիծը ազնվությունն է։ Ես ազնվորեն հայտարարեցի՝ սոցիալ-դեմոկրատ եմ։

— Որքան հասկացա,— տխուր ասաց ֆելդֆեբելը, հայացքը կտրելով ցիտրայից և նայելով Անդրեային,— հերր Ստարցովը խոսում էր այն մասին, որ սոցիալիստները բնավ չպետք է ներկայանան թագավորին։ Այնպես չէ՞։

Գեննիգի ձայնը մի քիչ ամրացավ.

— Անդրեասը լավ տղա է, սակայն չի հասկանում, որ ազնվությունը մեր ազգային գիծն է։ Անդրեասը նիհիլիստ է, այո, նիհիլիստ. նա չի ընդունում տակտիկան, տակ-տի-կան, այո՛։

[1] Հռենոսի պահապանը (Գերմ.)։

— Խնդրեմ խմորեղեն,— ասաց Դիտրիխը վարսավիրական բասի կատաղի ալիքից անհանգստացած։

Սակայն հերր Գեննիգը հանկարծ անցավ կարեկցական տոնի.

— Ռուսները շատ սիրառատ են։ Վաղուց էի ուզում այդ ասել։ Սակայն սիրուց ի՞նչ օգուտ։ Տակտիկա, Անդրեաս, տակտիկա։ Ինչո՞ւ ենք սիրում հայրենիքը։ Որովհետև ատում ենք նրա թշնամիներին։ Սերը գալիս է ատելությունից հետո։ Ատելությունը ցեմենտում է սերը, այո՛։ Երբ մարդիկ ատում են միևնույն բանը, այդ ժամանակ սկիզբ է առնում սերը։ Անդրեասն ուզում է սիրել, բայց չի կարողանում, չի կարողանում, գրողը տանի։ Դա ես վաղուց եմ նկատել։ Ինչո՞ւ։ Որովհետև նա սիրելու բան չունի, որովհետև ամեն ինչ միանման է սիրում։ Նիհիլիստ է։ Նա չի հասկանում, որ մարդկային արարքները պետք է ատել դրանք կատարողների հետ միասին...

Հերր Գեննիգը հառաչեց ու ձգվեց, ինչպես լավ խոզի կոտլետ ուտելուց հետո։ Նա զոհ էր ճառի ոճից և աչքերը կկոցեց իր փիլիսոփայության թափանցիկ որոշակիությունից։

Անդրեյը կրծքում օդ հավաքեց ու աչքերով ընդգրկեց բոլորին։ Դիտրիխի դեմքը ծռմռվեց աղերսական ժպիտից. նա տառապում էր այն նախազգացումից, որ մի գավաթ թեյը կմթագնվի անախորժությամբ։ Ֆելդֆեբելը մռայլորեն գլուխը կախ զցեց ցիտրայի վրա։ Թխահեր աղջիկը հոգնած շարժեց կոպերը, և նրա հայացքը խոսում էր ավելի պարզ ու գեղեցիկ բաների մասին, քան վեճերն էին։

Ախ, դրանք շատ լավ մարդիկ էին՝ ենթասպա Դիտրիխը, նրա ֆելդֆեբելը և Ֆրոյլայն Լիսին։ Ի՞նչ կարելի էր ասել այդ մարդկանց, եթե իրենց յուրաքանչյուր շարժումով նրանք լռություն էին աղերսում։ Մի՞թե նրանք չէին հասկանում Անդրեային։ Լավ մարդիկ են, լավ մարդիկ...

Անդրեյը կրծքից դուրս մղեց ծանր օդը, որ հավաքել էր ճիչի համար, և տեղից վեր կացավ։

— Ներեցեք,— ասաց կամացուկ,— հիմա կվերադառնամ։

Մութ միջանցքներով նա գնում էր կծկված, գլուխը ուսերի մեջ քաշած։ Եթե որևէ մեկը նրան այստեղ տեսներ, կկարծեր, թե բաղում դարերի տառապանքի բեռը քարշ տվող ծերուկ է։

Նա չանդրադարձավ այդ բանին, որ իր սենյակի դուռը երկկին բացված է։ Դուռը ծածկեց ու քայլեց դեպի անկողինը, երբ անկյունից, բազմոցի վրայից նրան հասան հաղիվ լսելի խոսքերը.

— Ձեզ ի՞նչ է պատահել։

Անդրեյը շրջվեց ու երկար ժամանակ կանգնել էր, ուշադիր նայելով անկյունի մութ կետին, որ նման էր ինչ-որ մեկի գեմքին։

— Հիվա՞նդ եք,— լսեց նա կրկին։

— Ոչ, ոչինչ,— պատասխանեց Անդրեյը։

— Ինչո՞ւ եք ձեր գլուխը բռնել։

— Մի՞թե բռնել եմ,— հարցրեց, ձեռքերը ցած գցելով, ևվ հանկարծ բղավեց.

— Դո՞ւք եք։

Այդ ճիչը կտրած լռությունը անասելի ծանրությամբ ճնշեց Անդրեյին։ Նա ավելի կռացավ և անկախ իր կամքից կարճ, խզճուկ տնքաց։ Եվ նույն պահին լռությունը պատռեց մի հրնշեղ, գրեթե կատաղի ձայն.

— Այո՛, այո՛, այո՛։

Եվ Անդրեյը նետվեց դեպի բազմոցը, նետվեց ընդառաջ ոպիտակ զգեստին, նետվեց ընդառաջ իրեն մեկնված նուրբ թևերին, ընդառաջ հանկարծ ճանաչելի, որոշակի դարձած գեմքին։

— Մարի՛։

Անդրեյը նրա ձեռքերը բռնեց ու այնպես ամուր սեղմեց, որ Մարին ցավից աչքերը կկոցեց, ու շրթունքը կծեց, որպեսզի չբղավի։

— Այո՛, այո՛, ես եմ,— շշնջում էր Մարին, ջանալով նրան նստեցնել իր կողքին, իսկ Անդրեյը տրորում էր նրա ձեռքերը անշնորհք, դաժանորեն, և ուժգնացած շնչառության աղմուկից հնարավոր չէր հասկանալ, թե ինչ է ուզում ասել։ Հետո նստեցին բազմոցին։

— Ես պետք է գայի։

— Պետք է գայիք, իհարկե, պետք է գայիք,— կրկնում էր Անդրեյը, ու նրա խոսքերը թոչող տաշեղիկների նման խառն էին, ցիրուցան։

— Ես գիտեի, ես սպասում էի... պետք է գայիք, իհարկե, սպասում էի...

— Վաղուց էի ուզում։ Չէի կարող գալ...

— Չէիք կարող, ես ձեզ սպասում էի... Լավ է, լավ է...

— Գիտե՞ք ինչու։

— Իհարկե, իհարկե։

— Բայց ինչո՞ւ։

— Ես սպասում էի ամեն օր։

— Ամիսներ շարունակ մտածում էի, որ կգամ։ Դուք անբախտ եք, դուք ինձ դժբախտություն բերեցիք։

— Ե՞ս։

— Այն օրից, ինչ հանդիպեցինք, ինձ հետապնդում է դժբախտությունը։ Կրնկակոխ։ Բավական է տնից դուրս գամ, անպայման որևէ բան եմ տեսնում, որն ինձ հետո հանգիստ չի տալիս։ Ինչպես այն ժամանակ, պուրակում։ Այդ կույրերն ինձ քնից զրկեցին։ Նրանք բոլորն անցնում էին կողքովս, հենց որ աչքերս փակում էի։ Հիշո՞ւմ եք, ինչպես էին իրար բռնել։ Ինչպես էին ձեռքներն առաջ մեկնել։ Իսկ գլուխներն էլ վեր։ Հիշո՞ւմ եք։

— Նրանք շարունակ ինչ-որ բանի էին ականջ դնում։

— Այո, այո։ Ես էլ այն ժամանակից շարունակ ական եմ դնում, ասես կուրացել եմ, ասես աչքերս փոխել են, ու չեմ կարողանում տեսնել այդ ուրիշի աչքերով։ Գիտե՞ք, ինչ եմ մտածում։

Մարին լռեց։

— Ուրիշի աչքե՞ր,— կրկնեց Անդրեյը։

— Ձեր աչքերը,— ասաց Մարին, սևեռուն նայելով նրան, ասես իր միտքը ստուգելու համար։

— Ի՞մը։ Գուցե։

— Ես համոզված եմ։ Դա անպայման այդպես է։ Ես կարծես մի բան կորցրած լինեմ։ Առաջ ամեն բան այնքան պարզ էր... և անհրաժեշտ... Լեռներում մեր հանդիպումից հետո... միայնություն... Եվ ոչ մի բոպե հանգիստ։ Ամեն քայլափոխում։ Հիմա ես թափառում էի քաղաքում, փողոցներում, չգիտեմ որտեղ։ Կայարանում տեսա, թե ինչպես են ռազմաճակատ մեկնում։ Հարյուր անգամ ճանապարհ էի դրել զինվորների և երբեք գլխի չէի ընկել, որ դա նշանակում է ճանա-

պարհել դատապարտվածների։ Երբ զինվորները ոտքերը դրեցին վագոնների ոտնակներին, ինձ թվաց, թե նրանք կառափնարան են բարձրանում։

Անդրեյը կամացուկ ասաց.

— Ահա երրորդ տարին է, որ նայում եմ այդ մահապատիժներին։ Ամեն վայրկյան մարդիկ են մահանում։ Մենք բոլորս էլ հերթի ենք կանգնել կառափնարան ելնելու։ Եվ ես գնալով ավելի շատ եմ մտածում դահճի մասին։

— Ճակատագի՞րն է։

— Մարդիկ, ոչ թե ճակատագիրը։

— Ի՞նչ մարդիկ։

— Մենք, ես և դուք։ Բոլորը։

Նա ավելի մոտ նստեց Մարիին, վերցրեց նրա ձեռքը, շոյեց, զգաց նրա ջերմությունն ու մաշկի հարթությունը և ավելի կամացուկ ասաց.

— Ինքներս ենք մեզ դատապարտել։

— Մե՞նք։

— Պետք էր մտածել այն մասին, թե ինչպես ենք աշխարհը կառուցել։

Մարին շարժվեց դեպի նա ու մանկականորեն պարզ, վստահությամբ ու պոռթկուն հարցրեց.

— Ինչպես ենք աշխարհը կառուցե՞լ...

Այստեղ ահա եկավ ժամանակը հանդիսավոր կերպով կատարելու մեր երդումնալից խոստումը և այս գլխում խոսելու ծաղիկների մասին։ Դա պետք է անել, դա անհրաժեշտ է անել, չկորցնելով զուր ոչ մի խոսք, ոչ մի տող։ Որովհետև այս ժամին Մարին ոտնակոխեց սիրող կնոջ ուղին։ Եվ որովհետև մենք շատ էջերով անջատված ենք երիտասարդ, միշտ հանկարծահաս ու հուզող զգացմունքների կամ քնքուշ թախծի, կամ հրապույրով լի բառերի նկարագրությունից, որոնց իմաստը նույնքան հեռու է իրենց նշանակությունից, որքան պատերազմն է հեռու սիրուց։

Անդրեյն ու Մարին խոսում էին պատերազմի մասին։ Նրանք խոսում էին պատերազմի մասին, և նրանց ձեռքերը միացել էին ջերմ սեղմումով, շոշափում և շոյում էին իրար մատները, ձեռնափերը, դաստակները, նրանք խոսում էին այն մասին, որ կյանքը ճմլում, տրորում է մարդկանց, որ

մարդիկ իրենք են մեղավոր դրանում, և նրանց դեմքերը վառվում էին ընդհատվող, անհավասար շնչառությունից։ Նրանք ասում էին, որ աշխարհը ողողված է արյունով, որ արյունը երակներով հոսում է անվերջանալի գետի նման, որ մինչև ծնկները արյան մեջ թաթախված մարդկանց միջև քայլում է մահը, և նրանց շուրթերն իրենք իրենց հանդիպում էին, խոնավ, աղահամ՝ դուրս տված արյունից։ Նրանք խոսում էին ամեն ինչ կործանող, ոչնչացնող վերջի մասին, ու գնում այն սկիզբը, որից ծնվում է ամեն ինչ։ Նրանք երիտասարդ էին, նրանք ուժեղ էին, և այն ամենից, ինչ խոսում էին, հիշեցին միայն մի բան՝ սիրում են միմյանց։

Անդրեյը վեր կացավ՝ արագ, ձգված, ցնցվող, ինչպես գարնանային մերկ գետնի վրա անցկացրած գիշերից հետո, և պտտեց դռան բանալին։

Գուցե Պաուլ Գեննիգն իրավացի՞ էր, ասելով, որ երբ մարդիկ ատում են միևնույն բանը, այն ժամանակ սկսվում է սերը։

Նորին արքայական մեծությունը ողորմածաբար թույլ էր տվել օբեր-լեյտենանտ ֆոն ցուր Մյուլեն-Շենաուին փափուկ գլխարկ կրել ամեն ժամանակ, նույնիսկ զորատեսներին և շքերթներին։ Օբեր-լեյտենանտի գանգը վիրահատել էին և հանել գանգոսկրի մի մասը։ Վիրահատությունը երեք անգամ էր կատարվել, օբեր-լեյտենանտը տառապանքը կրում էր իսկական զինվորի նման. գրեթե կես տարի նրա գիտակցությունը գտնվում էր լույսի և խավարի եզրագծին, սակայն բժիշկները հմուտ էին, երիտասարդությունն ուժեղ էր, և օբեր-լեյտենանտը առողջացավ։ Ծոծրակից մինչև աջ ականջն էր ձգվում փայլփլուն-վարդագույն սպին, սակայն օբեր-լեյտենանտի դեմքին շողում էին արևածագի երանգները, ասես արտացոլելով համազգեստը զարդարող ժապավենների գույները։ Նա Բիշոֆսբերգի ամենաերևելի մարդն էր, ամենաերևելին՝ Ադոլֆ Ուրբախից հետո, որը շքանշան էր ստացել pour le mérite։ Սակայն վերջինիս բախտը բերում էր. Ադոլֆ Ուրբախն անցել էր ամբողջ Բելգիան, Մոբեժ մտնողներից առաջիններից մեկն էր եղել, եղել էր Սեդանում, կռվել Վերդենի մոտ ու նույնիսկ մի ճանկռվածք էլ չէր ստացել։ Ֆոն Շենաուն բարեհաջող կերպով հասել էր մինչև Հյուսիսային Շամպան, ֆրանսիացի-

ներին դուրս մղել ամբացրած տեղամասից և հենց այդտեղ, առաջին իսկ գործում, առաջին իսկ փոքր-ինչ հերոսական մարտում չնչին մի բեկոր նրան շարքից դուրս էր հանել, և անմիջապես լազարեթներ, բուժարաններ, առողջարաններ, կոնսիլիումներ՝ փափուկ, սորուն, ձանձրալի մրուր։ Սպայի համար վիրավորական են վիրակապումները, անկողնու սպիտակեղենը, ջերմաթերմոցները և հոգնաները։ Սպան հրամայում է, կոտորում, մտնում ամրոց, պայթեցնում զինանոցները, զորատեսներ սարքում, շքանշաններ ստանում։ Օբեր-լեյտենանտ Ուրբախը Բիշոֆսբերգի ամենաերևելի մարդն է, որովհետև ունի pour le mérite շքանշան։ Օբեր-լեյտենանտ Ֆոն ցուր Մյուլեն-Շեննաուն միայն երկու երկաթյա խաչ ունի՝ առաջին և երկրորդ կարգի։ Սակայն Ուրբախը ոչ մի անգամ արձակուրդ չի եկել, իսկ Ֆոն Շեննաուն զբոսնում է Բիշոֆսբերգի երեկոյան փողոցներում, և նրան տեսնում են, նրան, որ վիրավոր է, որ շքանշանակիր է առաջին և երկրորդ կարգի երկաթե խաչի և այլ շքանշանների, որոնց ժապավենիկները զարդարում են նրա համազգեստը արևածագի գույներով։

— Աղջիկնե՛ր, աղջիկնե՛ր։ Նա թեքվեց դեպի անկյունը։

— Նա մտավ սրճարան։

— Առաջարկում եմ գնալ կուխեններ գնել։

— Իսկ եթե նա սո՞ւրճ խմի։

— Նստել հարևան սեղանին։

— Նա այնպիսի աչքե՛ր ունի։

— Հապա բերա՛ն...

— Ինչ երջանի՛կն է...

— Ո՞վ։

— Մարին։

— Եթե որ նրա տեղը լինեի՛...

— Նա նայում է։ Նա ժպտում է։ Գնա՛նք։

Երեկոյան քաղաքը թվում է անծանոթ, խորհրդավոր, մարդաշատ։ Խանութների լույսերը ամեն քայլափոխում կարծես կենդանանափոխում են մարդուն։ Ահա նա մռայլ է և անհասկանալի, ահա քնքուշ է ու անկեղծ, ահա ոխսուր է, ահա՝ ուրախ։ Եթե ուզում ես երջանկություն լցնել մկանների և ոսկրների մեջ, եթե ուզում ես այն զգալ, շոշափել ձեռնափով, դուրս եկ փողոց այն ժամին, երբ լապտերներն ու կրպակները նոր են լուսավորվել, վազիր մայթերին վխտացող զբոսանքի դուրս եկած աղջիկների միջով, հանդիպիր կնամոլների, խրախճասերների, անբանների, հեռու մնա զբաղված մտահոգ մարդուց, ու քեզ կթվա, որ ամբողջ կյանքը բռիդ մեջ է, ու քո կամքն է խմել այն միանգամից, մի շնչով, թե դուրս թափել...

Երբ Մարին գաղտագողի, պրոմենադներով տուն վերադարձավ Անգրեյի մոտից, օբեր-լեյտենանտ Ֆոն ցուր Մյուլեն-Շեննաուն զբոսնում էր ռատուշայի հրապարակում։ Սովորական զարձած հաճույք էր իր շուրջը լսել շշնջոց, զգալ ինչպես են անցորդներն իր կրծքին սեռեռում հայացքները, պատասխանել գիմնազիստների նուանդուն գլուխխոնարհումներին և գինվորների պատիվ տալուն, գիտենալ, որ դիմացից եկողները շրջվում ու նայում են քո ետևից։ Համազգեստն օգնում էր հեշտությամբ և ուղիղ պահելու տաքացած մարմինը, սվինը մեկ էլ տեսար ետ էր թռչում ձիգ ազդրից, ու այն թեթևակի երկու մատով բռնելը հաճելի էր։ Հանդիպական աչքերի յուրաքանչյուր տասը-տասներկուերորդ հայացքը նրան թվում էր կանչող, քնքշալի, և քունքերում ինչ-որ տեղ, ինչպես գինուց, լողում էին շրջաններ, որ մերթ սև էին ներկած թերթերունքների պես, մերթ՝ ալ, ինչպես շուրթերը։

Նա մտավ խանութ, որի պատուհանին նկարներ էին ցուցադրված, քայլեց շարված կտավների և շրջանակների առջևով, աչքերն ուրախ կկոցեց ռեֆլեկտորների լույսի և տնաբույծ նկարիչների աշխատանքների վրա, թերթեց և կարգադրեց առանձնացնել փորագրանկարները։

Խանութից նա ոչ թե դուրս եկավ, այլ դուրս թռավ՝ կարմրած, եռանդուն, օծանելիքով նոր թարմացրած համազգեստի հոտով պարուրված։ Սվինը շրխկաց դռանը, կպավ խթանին, ոտքերը կարծես զսպանակով շարժվեցին ասֆալտի վրա, և ահա նա դարձյալ երեկոյան ժամի մեղմ թմբիրի մեջ է, ժպիտներով, շշունչով և հայացքներով շրջապատված։

Մորուքով, կորամեջք մի լանգշտուրմիստ սպայական համազգեստի տեսքից շփոթված, որ հանկարծ փայլկտաց ամբոխի միջից, անշնորհք թափ տվեց թևը։

— Սերուկ, դուք քիչ մնաց քիթս պոկեիք,— ժպտալով

ասաց Ֆոն Շենաուն զինվորին կանգնեցնելով։— Ձեզ պետք է զորանոցում պահել։ Պատիվ տվեք ըստ կարգի։

Լանդշտուրմիստը շրջվեց, մի քանի քայլ ետ գնաց։ Անցորդները կանգ առան։ Մորուքավորը, ներքաները ասֆալտին գրոշմելով մոտեցավ սպային, արմունկը վեր նետեց։ Մեկը բարձր ծիծաղեց։

— Ե՛տ,— բղավեց Ֆոն Շենաուն։

Երկու կողմերից արագ մարդիկ խմբվեցին, կազմելով մի միջանցք, որտեղ ազատ կարող էր ետ ու առաջ քայլել զինվորը։ Սա ակներևորեն վատ, գուցե ամենավատ շարայինն էր, նրա շարժումներն էլ խղճուկ էին, քայլում էր ինչպես թրուշուն, ամեն քայլափոխին քիթը առաջ ցցելով։ Այս ամենը նման էր օպերետի։

— Ե՛տ,— հրամայեց Ֆոն Շենաուն հանկարծ խռպոտելով։

Գիմնազիստները հոհոացին, ստորաքարշությամբ նայելով սպայի երեսին։ Մի օրիորդ հիացմունքով ձեռքերն իրար զարկեց։ Լանդշտուրմիստը երրորդ անգամ սապոգները դղրդացրեց և ավելի այլանդակ ձևով ձեռքը վեր տարավ։

Ֆոն Շենաուի կոկորդը սեղմվում էր ինչ-որ բանից։ Օձիքի տակ երակները ուռել էին, նա ամբողջովին պրկվել էր լարումից։

Այդ պահին մեկը թնդաձայն բղավեց ետևից.

— Ամո՛թ։

Ֆոն Շենաուն ցնցվեց ու հանկարծ տեսավ իրեն՝ Շամպանի հերոսին, երկաթի խաչի շքանշանակրին, սաքսոնական բանակի սպային՝ ամբոխի առջև կանգնած, որն սպասում էր նրա համազգեստին, տիտղոսին, շքանշաններին վայել լուծումի։ Մի րոպե հետո ամբողջ քաղաքը կիմանա, թե ինչպես վարվեց սպան, երբ սսկված ամբոխի գլխին ապտակի նման կախվեց «ամոթ» խոսքը, այո, ամբողջ քաղաքը կիմանա։ Մի ժամից բոլոր թերթերը, մի օրից ամբողջ երկիրը կիմանա։ Հիմա, առանց վայրկյան իսկ կորցնելու, լռության մեջ, բոլորի աչքի առջև, հարյուրավոր աչքերի և ականջների համար պետք է վճռել, թե ինչ անի, պետք է ելք գտնել։

Ֆոն Շենաուն մոտեցավ լանդշտուրմիստին, որ կանգնել էր ձեռքը գլխին սեղմած, և պարզորոշ արտասանեց.

— Դուք լսեցի՞ք, թե ժողովուրդն ինչ անուն տվեց ծառայության նկատմամբ ձեր վերաբերմունքին։ Լավ դաս էր։ Գնացե՛ք։

Հետո շրջվեց և ամբոխը ճեղքելով, խրվելով նրա հավանություն տվող աղմուկի մեջ, արագ, զսպանակաքայլ սահեց մայթով։

Նա գնում էր Մարիի մոտ։

Թվում էր, երեկոյան լույսերն աղոտացան, խամրեցին, պաղեցին, թե մարդիկ նայում էին նրան՝ Շամպանի հերոսին, դժգոհությամբ, և զինվորները պատիվ էին տալիս զուսպ, դժկամությամբ։

Նա ափսոսում էր, որ անմիտ տեսարան էր սարքել, ու զայրանում վիրավորանքի զգացումից։ Նա չէր կարողանում ազատվել ականջների մեջ մնացած թնդաձայն ճիչից՝ «Ամոթ», և չէր կարողանում մոռանալ այն պահը, երբ զգաց, որ այդ ճիչն իրեն էր վերաբերում։ Իհարկե, դա այդպես չէր, այդպես չէր կարող լինել։ Այն մարդը, որ բղավեց — ահ, միայն թե տեսներ նրա դեմքը, հետաքրքիր է ինչպիսի՞ն է,— ըստ էության նույն զգացումն էր ունեցել, ինչ-որ ինքը՝ օբերլեյտենանտը. այդպիսի զինվորը, այդպիսի լանդշտուրմիստը խայտառակում է բանակը։ Ամո՛թ, ամո՛թ։ Սակայն տե՛ր աստված, որքան տաղտկալի է այս փոքրիկ քաղաքի փողոցներում։ Եվ որքա՜ն ձանձրալի, գորշ, տհաճ են այս բյուրգերները։ Եթե Մարին չլիներ, նա ոչ մի ժամ այստեղ չէր մնա։ Իսկ Մարիի հետ, Մարիի հետ լավ է։

Նա մտնում է Մարիի սենյակը, դուռը կամացուկ փակում ետևից և, նայելով խավարին, ասում է.

— Դուք զբաղված չե՞ք։

Մարին վեր է թռչում բազմոցից, շտապով ուղղում զգեստն ու լռում է։ Խռովահույզ խոսքեր են գալիս սեղմվում կոկորդում, սակայն դրանք արտասանելու ուժ չունի։

— Ինչպիսի հիմար պատմություն,— բացականչում է Ֆոն Շենաուն և, զգուշորեն շոշափելով մթությունը, նստում է բազմոցի ծայրին։ Նա պատմում է տխուր լանդշտուրմիստի մասին և այն մասին, որ բանակը բարոյալքվում է, կարգապահությունն ընկնում, որ ծուռթաթ և ծուռոտն մորուքավորները նույնիսկ խոհարարության էլ պիտանի չեն։

— Սակայն չէ՞ որ հենց դա է Գերմանիան,— ընդհատեց նրան Մարին, և նրան թվաց, թե հանկարծ ամբողջ կահույքն ականջները սրեց, կանգնեց ոտքերի ծայրերին, զգուշացավ։

— Հը՞-մ... հը՞-մ... շատ հավանական է։ Բ-բայց ես խոսում եմ բանակի մասին... Դա բոլորովին նույն բանը չէ։ Երբ այդ անկյալն իր շենք ու շնորհքը ցուցադրեց, ամբոխից մեկը բղավեց՝ «Ամո՛թ»։

— Դա զինվորի՞ն էր վերաբերում։

Մարկգրաֆը տեղից վեր թռավ, հայացքը գցեց դեպի դուռը. այն պինդ փակված էր։ Այն ժամանակ նա ձեռքերը ծալեց կրծքին ու սկսեց քայլել սենյակում։

— Կարծեմ, քեզ հասկացա, ինչպես դու էիր ուզում։ Սակայն մի՞թե կարծում ես, որ այդ դեպքում տեղնուտեղը չէի սպանի այն սրիկային, որ համարձակվեր ի դեմս ինձ վիրավորել...

— Օ՞-օ, իհա՞րկե։ Բնավ չեմ կասկածում։ Չէ՞ որ սպան ուրիշ ելք չունի։

— Ուրիշ ե՞լք... Ի դեպ, թողնենք։ Դու այսօր վա՞տ տրամադրության մեջ ես։

— Այո։

— Ափսոս...

Նա մոտեցավ բազմոցին, ձեռքերը մեկնեց գրկելու Մարիին։ Մարին կծկվեց անկյունում։

— Ափսոս։ Ուզում էի քեզ հիշեցնել, որ պետք է շտապենք...

— Ինչո՞ւ «պետք է»։

— Մարի՛։

— Ներիր։

— Հանձնաժողովը գտավ, որ ես առողջ եմ։ Նշանակում եմ ստացել արևելյան ռազմաճակատ։

— Այդ դեպքում ինչո՞ւ շտապել։

— Երկու տարի առաջ...

— Ահ, երկու տարի... Դեռևս երկու ժամ առաջ ես կարծում էի, թե դա անհրաժեշտ է։

Նա հանկարծ աղջկա գլուխը սեղմեց իր ձեռքերի մեջ։

— Մարի, ի՞նչ է պատահել երկու ժամ առաջ։

Հնարավո՞ր էր արդյոք գիշերվա անկյուններում թանձրացած խավարի մեջ տեսնել, թե ինչպես Մարիի աչքերում տեղաշարժվեցին երկու վճիռների ցոլքերը։ Խավարը դարձավ մթություն, տեսողությունը դրան հարմարվեց, սակայն հաղթահարել չկարողացավ, և հայացքը ձգվեց դեպի պատուհանը, որ սպիտակին էր տալիս խոր փողոցների միաձույլ լույսերից։

Մարին ենթարկվեց իր գլուխը սեղմած ձեռքերի շարժումներին, կամացուկ ծիծաղեց և այնպիսի ձայնով, որ հնազանդեցնում է տղամարդուն, ասաց.

— Հիմար։ Ես ինքս էլ չգիտեմ, թե ինչու եմ այսքան գիժ։

— Ուրեմն ե՞րբ։

— Ոչ, ոչ։ Ես միայն վերջին հարցիդ պատասխանեցի։

— Բայց ինձ ամեն օր կարող են քշել։

— Մի՞թե միևնույն չէ, մատանին մատիդ կգնաս, թե առանց մատանու։

— Ինձ համար, հասկանո՞ւմ ես, Մարի, ինձ համար միևնույն չէ... Դե՞հ։

Մարին վեր կացավ։ Ֆոն Շենաուն ձգվեց, ուզեց հասնել նրան, և հանկարծ հավասարակշռությունն ու ձիգ կեցվածքը կորցնելով, օբեր-լեյտենանտը մի կծիկի նման կախվեց բազմոցի ծայրից։

— Դե՞հ։

— Չեմ կարող։

— Մարի՛։

— Քեզ անհանգստացնում է անորոշությո՞ւնը։ Դուք անհարմա՞ր եք զգում ուրիշների մոտ։

— Ես քեզ սիրում եմ։

— Գիտեմ։

Լեյտենանտը վեր կացավ, նոր, ձիգ համազգեստը նրան շտկեց, նա գլուխը խոնարհեց.

— Տեսնում եմ, այսօր ձեզ հետ հնարավոր չէ խոսել։ Ցտեսություն։— Դռան մոտ նա շրջվեց։— Գուցե դո՞ւք կգայիք Շենաու։

— Գուցե։

Եվ ահա Մարին կրկին մենակ է։ Նրա ձեռքերը վեր են նետվում, ձգվում գլխավերևում. նա կանգնում է ոտնաթաթե-

ի ծայրին՝ նուրբ, թեթև, անլսելի, և նրա շնչառությունը տարածվում է խաղաղ, ներդաշնակ գիշերվա շրշյուններին։ Նա պառկում է, նրան շրջապատում է մթության մեջ անշմարելի, անխոս կահույքը, և սենյակը նրան տարօրինակ կերպով նման է թվում Անդրեյի կացարանին...

Օբեր-լեյտենանտը գնում է կայարան։ Շուրջն իրար են հաջորդում հայացքներ, ժպիտներ և շշնջոց, նրա կուրծքն առաջվա պես կրում է առաջին և երկրորդ աստիճանի երկաթյա խաչերը, սակայն նա մրսում է, սվինը խանգարում է, ընկնում ոտքերի արանքը, շուրջը լույսերը աղոտ են և խղճուկ։ Նա տոմս է վերցնում մինչև Լաուշե և փնտրում դատարկ կուպե։

Փախուստ

Միջնաբերդը լուռ էր ու անառիկ։ Նրա հին քարերը բոսորագույն կապույտ էին, նեղլիկ շավիղով հիմքը բոլորող սալաքարերի արանքից դուրս էր գալիս բորբոսի և անկերի կանաչը. մարդկային ոտքն այդ սալաքարերը չէր կոխել։

Հնաոճ տնակները վախեցած իրենց պատուհանիկներն էին չոել միջնաբերդի վրա և ետ-ետ էին գնում, ընկրկում նրա ճնշող մռայլությունից՝ առաջացնելով ընդարձակ օղաձև մի հրապարակ։ Սակայն մարդիկ ընտելացել էին միջնաբերդին։ Մանուկ հասակում նրա մոտ արծիվ թե գիր էին խաղացել, հիմքի աստիճանից իրար մեջքի էին բարձրանում, պատերի հնագույն քարերը կեղտոտում կավճով և ներկերով։ Այն ժամանակ միջնաբերդում դրված էր քաղաքի կշեռքը, այնտեղ էին խոտանոցները, և բոսորագույն-կապույտ ամրոցը նմանվում էր արևի տակ տաքանալու համար կուչ եկած անատամ ծեր արջի։

Պատերազմի ժամանակ միջնաբերդից կշեռքը վերցրին, խոտը դուրս տարան, տանիքի տակի պատուհաններին վանդակներ դրեցին, մուտքի մոտ մի շերտավոր պահատնակ սարքեցին, և նեղ շավղից մի տասը քայլ հեռավորությամբ, ամրոցի շուրջ պարան քաշեցին։ Սկզբնական շրջանում բիշոֆսբերգցիները խեթ-խեթ էին նայում իրենց ձեռնասուն արջին, որ դարձել էր անմատչելի, մռայլ մի գաղան։ Հետո

ընտելացան այն բանին, որ միջնաբերդի մոտերքը չի կարելի քարշ գալ, որ ամեն վեց ժամը մեկ պահակատանը պահակները փոխվում են և որ վանդակապատ այդ տանիքի տակ հանցագործներ են նստած։ Ամրոցը դադարեցին նկատել։

Արևից խոնջացած մի օր, երբ կյանքը քարշ էր գալիս, ինչպես դրոգը ավազոտ գետնի վրայով, հրապարակի գլխին կախվեց երկարաձիգ մի ոռնոց.

— Ա-ա-ա՜յ։

Անցորդները կանգ էին առնում, գլուխները շրջում, հոնքերը վեր քաշում և դիմում իրենք իրենց.

— Այ քեզ բա՜ն։ Սա ի՞նչ կարող է լինել։

Ոռնոցը կրկին ընկավ հրապարակի վրա, գլորվեց ահազդու քամու նման։

— Ա-ա-ա՜յ։

Պարզ էր, որ ձայնը միջնաբերդից էր գալիս։ Մի բյուրգերը մայթից պոկվելով, ձեռքը բարձրացրեց ու բղավեց.

— Ահա՛, պատուհանում է։

Բոլոր գլուխները դարձան միջնաբերդի կողմը։

— Ո՞ւր է, ո՞ւր։

— Տանիքի տակ։

Մարդիկ անսպասելիորեն արագ հավաքվեցին։ Դուրս էին թռչում տներից, նետվում դեպի ամրոցը պատնեշող պարանը, խմբվելով բազմություն էին կազմում և մեկ-մեկ հեռանում՝ գլուխները ետ գցած, ձեռքերով արևից պաշտպանվելով, առանց աչքները միջնաբերդի տանիքի տակ եղած պատուհանից կտրելու։

— Ա-ա-ա՜յ։ Ա-ա-ա՜յ։

Ջարդված ապակու միջով, վանդակից դուրս պրծավ մի ձեռք։ Մատները մեկ բացվում էին, մեկ կծկվում, բռունցք դառնում, և արևի տակ երևում էր ինչպես են քերծվածքներից սպիտակ մաշկի վրայով հոսում արյան շիթերը. բռունցքը ճանկռտված էր և կապույտ ղինվորական մահուդից թևքը պատռված կախվել էր արմունկի մոտ։

Վանդակի ետևից դուրս էր պրծնում չհանդարտվող ոռնոցը։

— Ա-ա-ա՜յ։

Բազմության մեջ մեկը ճանաչեց համազգեստի ծոպավոր Սապավենն ու բղավեց.

— Գերմանական զինվոր է։

Եվ անմիջապես գլխավերևներին սկսեց ճախրել ու թեերը թարտացնել տագնապած խոսքը.

— Զինվոր է։ Զինվոր։ Գերմանական զինվո՛ր։

Մեկի ականջ ծակող ճիչը, գրեթե ծղրտոցը վեր թռավ մինչև միջնաբերդի տանիքը.

— Ի՞նչ է պատահել, ընկեր։

Սակայն ի պատասխան հրապարակում տարածվեց նորից նույն հուսահատական ոռնոցը.

— Ա-ա-ա՜յ։

Անդրեյը կանգնել էր ամբոխից քիչ հեռու, ատամները սեղմած, ամբողջ մարմնով վեր, դեպի միջնաբերդը ձգված։ Նրան թվում էր, թե ոռնացող մարդուն մի ինչ-որ սարսափելի ուժ շարունակ ետ է քաշում պատուհանից, ձեռքը կառչում է օդից, լույսից, մերթ թաքնվելով վանդակապատի ետևում, մերթ դուրս սողոսկելով։ Նա տեսավ մատներ, որ ամուր կառչել էին դուրս սողոսկած ձեռքի տակի վանդակից։ Նա պարզորոշ տեսնում էր, կարծես նրա առաջ պատը ետ քաշված լիներ, ինչպես բանտարկված զինվորը աջ ձեռքով կախվել էր վանդակապատից և ձախ ձեռքով՝ ազատ ձեռքով որսում էր լույսն ու օդը պատի ետևում, ազատության մեջ։ Հանկարծ նրան թվաց, թե ինչ-որ մարդիկ կախվել են զինվորի ոտքերից, խփում են նրա մեջքին, ջանալով նրան վանդակապատից պոկել։ Նա քիչ էր մնում բանտարկյալի հետ ոռնար հրապարակով մեկ։

Այդ պահին Անդրեյի հենց ականջի տակ լսվեցին կարճ, զնդուն հնչյուններ.

— Bonjour, bonjour, bonjour!

Անդրեյը շրջվեց։ Ցածրիկ կոտեջոկը մի փոքր բարձրացել էր կնճռոտ, դիմակի նման անշարժ դեմքի վրա։

— Monsieur Պե՞րսի։

— Այո, monsieur, ես եմ։ Ինձ վճռեցին փակել այս պարկում։

Monsieur Պերսին մատը տնկեց միջնաբերդի կողմը։

— Ինչպես երևում է, այնտեղ ուրախ է,— ավելացրեց նա ու աչքերը կկոցեց ամրոցի տանիքի տակ ոլորվող ձեռքի վրա։

Անդրեյը շուրջը նայեց։ Monsieur Պերսի կողքին քարացած կանգնած էին հրացանները բռնած երկու զինվոր։ Բերանները բացած, նրանք նայում էին միջնաբերդին։ Ամբոխի շփոթմունքը համակել էր նրանց, և ապշած, շփոթված, մոռացել էին իրենց պարտականությունը։ Monsieur Պերսի կողքին, ձեռքերը մեջքին դրած, երևվում էր գործած բաճկոնակով մի մարդ։ Բեղերի և մորուքի ճերմակավուն սահմանները, որ վաղուց չէին սափրվել ու փայլփլում էին ճարպից, նրա ժպիտը դարձնում էին մեղմ ու քնքուշ։ Ժպիտը ընդարձակվում էր, երանգ տալիս բաց գույնի աչքերին, բացում դեղին, մաշված ատամները, ու հանկարծ մի կամացուկ ձայն Անդրեյի կեմքին քնքուշ ջերմություն փչեց.

— Ջե՞ք հիշում։

— Վարպետ Մայե՞ր։ Դո՞ւք եք։

Վարպետ Մայերը Անդրեյի ձեռքը բռնեց ու կամացուկ թափահարեց՝ բարյացակամորեն, ինչպես երեխայինը։

— Ոչ թե վարպետ Մայեր,— ասաց նա առաջվա պես կամացուկ,— այլ հայրենիքի թշնամի։ Ի՞նչ արած։ Ես միշտ էլ ասում էի, որ խոզություն է տեղի ունենում։ Ինձ մեղադրում են քաղաքականության մեջ։ Գուցե քաղաքականությունը հենց այն է, որ ես դե՞մ եմ պատերազմին։ Դուք ի՞նչ կասեք։

— Այդ ամենն ինչպե՞ս պատահեց, վարպետ։ Դուք ինչպե՞ս այստեղ հայտնվեցիք։

— Շատ պարզ։ Բանն այն է, որ շուրջդ միայն խոզություն է։ Դուք ինչպե՞ս եք ապրում, սիրելի հերր Ստարցով։

— Ավելի լավ է ասեք Կուրտն ինչպե՞ս է։

Հրապարակի անհանգստությունը հանդարտվեց, սակայն բազմությունը չէր ցրվում։ Բանտարկյալի ձեռքն անհայտացավ, վանդակապատի ետևի ջարդված պատուհանը բացել էր սև դատարկ երախը, ողբն այլևս չէր լսվում։ Ուղեկցող պահակները հանկարծ ուշքի եկան, և նրանցից մեկը, որ ավելի Էրիտասարդ ու եռանդուն էր, բղավեց Անդրեյի վրա։

— Ձխոսե՛լ։

— Ինչո՞ւ եք կանգ առել,— ասաց մյուսը monsieur Պերսիի արմունկը հրելով։

— Adieu,— ասաց սա, կոտելոկը բարձրացրեց, ու շարժվեց դեպի միջնաբերդը։

Վարպետ Մայերը հասցրեց Անդրեյին գլխով անել և ասաց.

— Հերը Վանը արդեն մի տարի է գերի է Ռուսաստանում։

Հետո զինվորի նման քայլը շտկեց ու շարժվեց monsieur Պերսիի հետ ուս-ուսի։ Ուղեկցող պահակները հրացաններն ավելի հարմար բռնեցին։

Անդրեյը տեսավ, թե նրանք ինչպես մոտեցան միջնաբերդի դարբասին, ինչպես կանգ առան պահակների մոտ։ Դարբասի մեջ փորված ցածր, դանդաղ բացվող դռնակը կուլ տվեց monsieur Պերսիին, վարպետ Մայերին, զինվորներին։ Դռնակը երկար ժամանակ չէր փակվում։ Այնտեղից դուրս եկավ մի սպա, հատու քայլեց միջնաբերդը բոլորող շավղի սալաքարերի վրա, կանգ առավ բազմության առջև, մետաղյա մի բղավոցով մտրակեց նրան, ձեռքը բարձրացրած՝ ի նշան, որ ուզում է խոսել.

— Խնդրեմ ցրվեք։ Առանձնապես ոչինչ չի պատահել։ Բանտարկյալը հոգեկան հիվանդություն է ստացել և ուղարկվեց հիվանդանոց։

Մարիի և Անդրեյի գլուխները խոնարհվել են ցած, կլոր սեղանի վրա։ Սեղանին փռված է Ուրբախ վիլլայի և հարևան կալվածների պլանը։ Մարին մատիտը շարժում է պլանի վրա։ Նրա մազերը խճճված փնջերով ընկել են պլանի վրա և գլխավերևը կախված լամպի դեղին լույսը անցնում էր մազերի միջով ու տարածվում աղոտ բծերի ցանցի պես։ Բծերը երերվում են ձեռքերին և պլանի ներկված գծանկարի վրա, մատիտը մեկ անշարժանում է որևէ կետում, մեկ սողում կոտրտված գծերով։

— Այստեղից մի քսան րոպեի ճանապարհ է,— ասում է Մարին,— ու դուրս կգաս համար յոթ Անտառային պահակետը։ Դրանից դեպի ձախ պետք է անցնել, դեպի արևմուտք, ճանապարհով։

— Սպասիր նշեմ։

Թղթի կտորի վրա Անդրեյը մի աղեղ է գծում ու հատում այն հաստ գծով։

— Դեպի արևմուտք։ Հետո՞։

— Մի տասը րոպեից հետո աջ կողմից խանդակը կտեսնես։ Դա հենց սահմանն է։ Սակայն այդտեղ այն չի կարելի անցնել. միշտ մարդիկ կան։ Դու գնում ես ուղիղ մինչև ճանապարհների խաչմերուկը, ահա տեսնում ես։ Սա սահմանային պահակակետ է։ Այստեղ մեր զինվորներն են։ Եվ շարունակում ես՝ ուղիղ, ուղիղ։ Այստեղ սահմանը ճանապարհից դեպի հյուսիս է շեղվում։ Կարծում եմ, որ մի երեք քառորդ ժամից կարող ես շրջվել մտնել անտառը և սահմանն ահա այդտեղ անցնել։ Ես գիտեմ, գյուղացիները միշտ այդտեղից են անցնում։ Սա խուլ տեղ է, պետք է միայն որքան կարելի է զգույշ գնալ։

Անդրեյը վեր է կենում ու սկսում սենյակում քայլել։ Երբ մոտենում է լամպին, երևում է, որ նրա դեմքը ճմլված է հոգսից։

— Մարի, ասա, ես ճի՞շտ եմ։

— Այո՛, դու իրավացի ես։

— Դու հասկանո՞ւմ ես, որ այստեղ ոչինչ չի կարելի անել։

— Հասկանում եմ։

— Այստեղ իմ ամեն մի քայլը կաշկանդված է։ Ես ուղղակի ի վիճակի չեմ որևէ բան սկսել։ Ես օտար եմ։ Այլևս չեմ կարող առանց գործելու մնալ։ Ես պետք է փախչեմ, պարտավոր եմ։

— Սակայն չէ՞ որ դա արդեն վճռված է, Անդրեյ։

Նա նետվում է դեպի Մարին, նրան սեղմում կրծքին, նայում է աչքերին, ու նրա հայացքը ծանր է անվստահությունից ու ինչ-որ թախծալի վախից։

— Ինձ համար դժվար է բաժանվել։ Այս աշխարհում առաջին անգամ հարազատ մարդ եմ գտել։ Մարի, լսո՞ւմ ես՝ հարազատ, սիրելի։ Վախենում եմ, որ եթե քեզ թողնեմ, դու կմտածես...

— Լռիր։

— Բայց չեմ կարող այլևս մնալ այս միջնաբերդում։ Ինձ խեղդում են մարդիկ, մարդկանց ձայները, նույնիսկ մարդկանց բարին...

— Վճռված է, Անդրեյ։ Վճռված է։ Չէ՞ որ հետո մենք կհանդիպենք։

— Այո՛, այո՛։

Նրանք կրկին խոնարհվում են սեղանին, գրկախառնված, և մատները շարժում պլանի վրա։ Հետո Անդրեյն ասում է.

— Հիմա Կո՞ւրտն ինչպես է։ Երևի շատ բան է զգացել, ապրել։ Կարծում եմ, որ փոխված պիտի լինի։

— Հավանաբար,— պատասխանում է Մարին,— դատելով քո պատմածներից, նա լավ տղա է...

— Ուրեմն վճռվա՞ծ է,— կրկին հարցնում է Անդրեյը։

— Վճռված է...

Որքան լավ է հիշողության մեջ վերակենդանացել ուսումնասիրած ճանապարհների և արահետների յուրաքանչյուր ոլորանը, պատմել անտառի պահակների, ժայռերի, սոճիների մասին, որոնք պետք է հանդիպեն Անդրեյին։

Սարսռացնող սարսափ է պատում Մարիին, երբ թվարկում է Բոհեմիայի՝ սահմանից մինչև Ռեյխենբերգ ձգվող կիսակայարանները։ Կարծես մի նոր շարություն է մատնեղացել մանկության իր ուրախ քնկերների հետ։ Կարծես պիտի կախարդված գանձի որոնումներն սկսեն։ Կարծես հոր առանձնասենյակից գողանում են Ուրբախ վիլլայի և հարևան կալվածների պլանները։ Կյանքում ինչո՞վ կարելի է փոխարինել այն քաղցր հուզմունքը, որ գաղտնիքն է պատճառում...

Սակայն մութ սանդուղքին, մանեժի նմանվող սենյակով այդ անհեթեթ, հին տնից հեռանալուց առաջ, Մարին հենվում է խոնավ, զով պատին։ Պետք է թողնել սառչեն շրթունքները, որոնց վրա դեռ պահպանվում է համբյուրների համը։ Պետք է թողնել, որ սիրտը խաղաղվի, հանգստանա։ Պետք է իր համար մեկընդմիշտ որոշել, թե ինչո՞ւ, ինչո՞ւ հենց հիմա, երբ նոր միայն սերը եկավ, երբ դեռ չի բթացել նրա առաջին անտանելի ցավը, ինչո՞ւ է Անդրեյը հիմա փախչում։

Անտառային համար 7 պահակակետի մոտ օրորվելով մանեն գալիս հաստափսիպ բադերը։ Անդրեյը նրանց ղղլացող կոկոցը շատ ավելի վաղ լսեց, քան արահետի ծայրին երևաց պահակակետի դարչնագույն պահատնակը։ Որքան խորանում էր լեռների մեջ, այնքան նրա լսողությունը սրվում էր։ Նա

առաջ անտառի աղմուկը պիտեր որպես անընդհատ գլորվող և միաձույլ աղմուկ։ Հիմա այն մասնատվում էր անհամար թվով աղմուկների։ Կեղևի ճաքոցը, ճյուղի ընկնելը՝ վրան նստած թռչունի ծանրությունից, սոճու հասունացած կոնների շրթոցը, շորացած, հին ծառաբների ճռճռոցն ու հառաչները, շրխտես էլ ինչ շատ նուրբ խշխշոցներ դարձել էին պարզորոշ և հնչեղ, ասես նրանցից յուրաքանչյուրը հնչում էր խորին լռության մեջ։ Լսողությունը ասես բացում էր ծառերի, քարերի և թփերի ծածկոցները, և Անդրեյը տեսնում էր այն, ինչ փակ էր նրա աչքերի համար։ Նրա դեմքը հանգիստ էր։ Քայլում էր համաչափ, ծանրորեն, ինչպես քաղաքից տուն վերադարձող գյուղացի։ Մեջքին դցած տանում էր մի այն քաթանե պայուսակը և ձեռքին մի փայտ կար։

Օրքրիկ երեխային խնամող աղջիկը կանգնած էր պահանակի դռան մոտ։ Նա աչքերը կկոցեց, նայելով անցորդին, ոտքից գլուխ շափեց նրան աչքերի մի հայացքով, ինչպես նայում են մարդուն ամայի, հուլ վայրերում, և կնոջ նման երեխային հարմար դիրքով գրկեց։

— Բարի օր,— ասաց աղջիկը։

— Բարի օր,— պատասխանեց Անդրեյը և դարձավ ձախ, քայլեց հարթեցրած ուղիղ ճանապարհով։

Քառորդ ժամից նրա ականջին հասավ երգեհոնիկի հաղացող հառաչը։ Անդրեյն իրեն ստիպեց առաջվա պես հսմաչափ և ծանր քայլել։ Նա չգիտեր, թե իրեն ինչ է սպասում խաչմերուկում, որին մոտենում էր, սակայն մի քանի գիշեր արդեն քնում էր այն մտքով, որ փախուստի ժամանակ պետք է միշտ հանգստությամբ ընդունել ամեն մի անակնկալ։

— Պետք է պատրաստ լինել, պատրաստ լինել,— կրկնում էր նա մտքում, հանառորեն գետնի մեջ խրելով հաստ, շծալվող կոշկատակերը։

Սառների ետեր երևաց լանդշտուրմիստի գորշագույն դեմքը։ Հետո կարմրավուն ծառաբների ֆոնի վրա հայտնվեց ու ամբողջ հասակով որոշակիորեն երևաց հսկայամարմին պահակը՝ հրացանը ոտքերի մոտ։ Մյուս գլխվորը նստել էր հարթ սղոցված կոճղի վրա, գլխը կողքի ծառին հենած։

Անդրեյի առաջը կտրող ճանապարհին, սյանը խփած սև մոգիլատիպ, կոշտ փնտուքներով թռչունի մոտ երգեհոնիկի

կանքն էր պատում կույր ծերուկը։ Երգեհոնիկը ուղղված էր Գերմանիայի կողմը, իսկ նրա փայտե ոտքը հենվել էր Ավստրիայի պետական հողին։ Դա օրենքի շատ հուզիչ շրջանցում էր, որն արգելում էր Սաքսոնիայում ողորմություն մուրալը, անողոք կարգի դեմ աղքատների բողոքարկությունը։ Ո՞ր ողջախոհ և ազնիվ հայրենասերը չի ժպտա, լսելով երախտապարտ Վիեննայի կողմից թեթևամտորեն կատարվող երգը։ Թեթևամտությունից բացի, ի՞նչ կարելի է սպասել այդ անհոգ Վիեննայից։ Քանի որ Վիեննան չի խախտում ուրիշների սովորություններն ու օրենքները, այն հաճելի է և սիրելի։

Անդրեյը կանգ առավ երգեհոնիկ նվագողի մոտ։ Նայում էր անտարբերությունից բթացած նրա դեմքին, ճաղատ գանգին, որ փայլփլում էր կլոր արևի նման, կիպ փակված ցնցվող կոպերին։ Սակայն սահմանապահ զինվորը, որ կանգնած էր տեսադաշտից դուրս, նրա հիշողության մեջ ավելի ամուր և մանրամասն տպավորվեց, քան երգեհոնիկ նվագողը, չնայած ուշադիր նայում էր վերջինիս։ Նա չէր կարող ասել, թե այդ զինվորի դեմքն ինչպիսին էր, ձեռքերն ինչպիսին էին։ Դա սահմանապահ զինվոր էր, որ բարձր կանգնել էր փախբստականից երկու քայլ հեռավորության վրա։ Անդրեյը չէր տեսնում ոչ նրա հայացքը, ոչ շարժումները, սակայն նրան կճանաչեր հազարավոր ուրիշ, երբեք չտեսած զինվորների մեջ։ Մի՞թե կարելի է մոռանալ այն մարդուն, որի ձեռքին է եղել ճակատագիրդ։

Անդրեյը գրպանից հանեց դրամապանակը, վերցրեց մի պղնձադրամ, դանդաղ մոտեցավ սյանը, դրամը գցեց գդակի մեջ, որ շրջած դրված էր երգեհոնիկի վրա, ու ետ դարձավ։ Թռուցիկ մի հայացք նետեց կոճղին նստած մյուս զինվորին։ Առաջ նրան չէր նայել, բայց գիտեր, որ զինվորը ոչ մի շարժում չարեց, մինչ ինքը դիտում էր երգեհոնիկ նվագողին։ Նա այնպիսի զգացում ուներ, ասես մեջքով էլ էր տեսնում։

Առանց ոչ մեկին դիմելու նա ասաց.

— Բարի օր։

Եվ շարունակեց ճամփան։

Ետևից հասավ ծանր մի ձայն.

— Բարի օր։

Հասկացավ, որ կոճղին նստած զինվորն էր պատասխանել։

Եվ հանկարծ ուրախ, անզուսպ և ծիծաղելի մի քայլերգ ճղփաց նրա ետևից՝ դեմ առնելով ծառերին ու ետ թռչելով քարերից։

Նա քայլերը փոխեց, և երաժշտությանը համաքայլ արագ և ազատ առաջ շարժվեց։

Ճամփի եզրից ձգվող ոչ խոր փոսը, որ մամուռով ու հավամրգու թփերով էր ծածկվել, կամաց-կամաց դեպի աջ էր թեքվում, շարունակ ավելի ու ավելի խորանալով անտառում։ Ճամփան մտնում էր լեռան տակ, թեթև և ուղիղ։ Շուրջը խաղաղ էր, օդը՝ թափանցիկ։ Երեք քառորդ ժամ հետո Անդրեյը, առանց շուրջը նայելու, դեպի աջ շրջվեց, և խիտ սոճիները նրան ծածկեցին։

Նա գիտեր, որ ավստրիական կողմից սահմանապահ պահակախումբը հանված է։ Տերը միշտ զգուշանում է ծառայից, իսկ ծառա՞ն ինչու պիտի տիրոջից զգուշանա։ Ծառայի շահերն ինքնին ոտնահարված են այն իրավիճակով, որ ստեղծել է տերեր և ծառաներ։

Անդրեյի անցած սահմանից մինչև երկաթուղու մոտակա կայարանը վեց կիլոմետրից ավելի չէր լինի։ Անդրեյի ծրագիրը շատ պարզ էր։ Նա պատրաստվում էր անցնել Պրագա, այնտեղից՝ Զալցբուրգ և Ինսբրուկ, հետո՝ ոտքով մինչև շվեյցարական սահմանը։ Այդպիսի ճանապարհորդության համար մի բան էր պետք՝ վճռականություն։ Այն Անդրեյի մեջ կուտակվել էր երկու տարվա ընթացքում, և վերջինս իրեն արդեն ազատ էր զգում կայարանի շինությանը մոտենալիս։

Նա տոմս վերցրեց մինչև Ռեյխենբուրգ։ Վագոնում ազատ էր, գնացքը քարշ էր գալիս դժվարությամբ, ինչպես բոլոր մերձքաղաքային գնացքները, որ գառամում են անընդհատ կարճ, ձանձրացրած տեղամասում թափառելուց։ Պատուհաններից ներս էր փչում կայտառ, նախաիրիկնային քամին, Անդրեյի ականջին հասնող բառերը հնչում էին նոր ձևով, տարօրինակ կերպով միաձուլվելով ինչ-որ հարազատ, գրեթե միանգամայն հասկանալի մի բանի հետ։

Եվ մարդիկ թվում էին զարմանալի մոտ, այնքան պարզ ու հասկանալի, որ նրանց մտքերը թափանցում էին փրչոտ հոնքերի միջով։ Եվ նրանց ամենափոքր շարժումներն իսկ տար-

օրինակ կերպով աչքի էին ընկնում կոպիտ, մի տեսակ անշնորհք պարզությամբ։

Ահա հնաձև խուզված մազերով գյուղացին նստեց պատուհանի մոտ և թաշկինակով սրբեց թեք, սպիտակ ճակատի քրտինքը։ Ահա պարզամիտ տեսքով հորանջեց աննշմարելի հիվանդ ծերուկը։ Ահա կուպեի դուռը բացեց և ներս մտավ ամրակազմ, խստատես մի տղամարդ, որի խոր աչքերը շեշտակի և ծակող հայացք ունեին։ Նրա մեջ մի շիտակ և պատվարժան բան կար։ Նա մոտեցավ Անդրեյին։ Ուզում է հավանաբար նստել Անդրեյի կողքի նստարանին, սակայն աչքը չի կտրում վերջինիս երեսից. դրանք, այդ աչքերը թերևս իրոք սարսափելի են, նրանք վանում են։ Ինչպիսի գոռող և չարագուշակ հայացք։ Այս մարդն ուրիշ տեսակի է, ուրիշ ոսկորներ ունի, նա անմատչելի է ու դաժան։ Վտա՜նգ, Անդրեյ, վտա՜նգ։ Անդրեյն ամեն վայրկյան պատրաստ է ամեն տեսակի անակնկալի, նա վաղօրոք գիտեր, թե ինչպես է ընդունելու անակնկալը, երբ այն դեմհանդիման կանգնի իր առաջ։ Սակայն մի՞թե այսքան վաղ, այսքան անողոքորեն կերպով վաղ և հեշտությամբ։

— Ձեր փաստաթղթե՞րը։

— Փաստաթղթե՞րը։ Ես վերադառնում եմ տուն, Ռեյխենբերգ։ Գնացել էի մինչև կայարան...

— Ձեզ հետ ոչ մի փաստաթուղթ չունե՞ք։

— Հետս չունեմ, մոռացել եմ։ Ռեյխենբերգում ձեզ համար դժվար չի լինի պարզել...

— Ինձ համար ընդհանրապես ոչինչ դժվար չէ։ Ես իմ պարտքն եմ կատարում։

Դռան մեջ երկու բարձրահասակ զինվորներ են հայտնվում։ Նրանք նիհար են, բարակոտն, նեղլիկ փոկերով ձգված։ Շերթունքները սեղմված են փոկերի պես։ Ամրակազմ մարդը աչքերը Անդրեյից դարձնում է զինվորներին և շարունակում առաջ գնալ վագոնում։

Վե՛ր։

Մի՞թե այսքան շուտ, այսքան անողոքաբար շուտ և հեշտությամբ։

Օ, ո՛չ։ Անդրեյը սահմանը չի անցել։ Շուրջը այն նույն մարդիկ են, որոնց ձայներից ու ծիծաղից էր փախչում. պինդ, մարմնի յուրաքանչյուր մասնիկը ողողող թանձրություն։ Նա

կարող է ձեռքերը մեկնել, գլուխը շրջել կամ պատին հենվել։ Սակայն ուսերը շտկել, որպեսզի ամբողջ կրծքով շունչ քաշի, չի կարող։ Այն փոքրիկ խողովակը, որի միջով նրան թույլ են տվել շնչել, ավելի է երկարել, օդը նրա միջով ավելի դանդաղ է առաջ մղվում, և կուրծքն ստիպված է ամբողջ ուժով աշխատել։ Ո՛չ, սրանք այն նույն մարդիկ են, նույն երկիրը, որտեղ ամեն ինչ անփոփոխ է և հաստատուն, ինչպես հողի մեջ խրած և ցեմենտով պնդացրած երկաթաձողը՝ Գերմանիա։

Ի դեպ, պետք է ավելի ճշգրիտ մտածել և ընդհանրացումների գայթակղությանը չենթարկվել այնտեղ, ուր ընդհանրացումներն իրենք իրենց են մեջտեղ գալիս։ Խելքի մոտ բա՞ն է արդյոք, որ Գերմանիայում տեղի ունենան այնպիսի բաներ, ինչպիսին էր այն, ինչ Անդրեյին սպասվում էր Ռեյխենբերգի կայարանում։

Անդրեյին գնացքից իջեցրին և տարան կայարան։ Աղմուկի և իրարանցման մեջ երկար ժամանակ փնտրում էին ռազմական պարետին։ Գտան միայն նրա օգնականին, որ պատրաստվում էր քաղաք գնալ։ Վճռվեց, որ ուշ ժամի պատճառով գնացքում բռնած մարդու հարցաքննությունը հետաձգեն մինչև առավոտ։ Կայարանի բանտարկյալների սենյակը զբաղեցված էր գերիներով, և մի ժամ կորավ, մինչև տեղ գտան նոր բանտարկյալի համար։ Տեղ գտան մաքսատան պահեստում, կայարանից ոչ հեռու։

Դա մի փոքր սենյակ էր, ցածլիկ տան մեջ, որի պատուհանը նայում էր նոսր, խղճուկ պարտեզին։

Բանտարկյալին փակեցին կախովի կողպեքով, և պահակը հրաման ստացավ հսկել պատուհանը այգու կողմից։

Մութ և մեղմ գիշեր էր, ինչպես լինում է միայն օգոստոսին, երբ հասունանում են ցորենը, ու խնձորենիները ճյուղակոտոր են լինում հասած պտուղների ծանրությունից։ Լայն պատուհանի մեջ երևում էր պահակի անշարժ սապատը, սակայն նրա ետևում բոսորագույն էին դարձել նշանասյան լույսերով լուսավորված ծառերի կատարները. ծառերի գլխին, սև անդունդում դողում էին պղտոր աստղերը. նրանց փայլը աղոտացել էր դեռևս գետնին չնստած ծխի և փոշու ամպից։

Պահակը երկար ժամանակ կանգնել էր անշարժ։ Հետո սկսեց պատուհանի առջև ետ ու առաջ քայլել։ Կայարանի աղ-

մուկը հանդարտվեց, և զինվորի քայլերը պարզ լսվում էին։ Աստիճանաբար դրանք դարձան համաչափ, խլանալով և դադարելով, երբ զինվորը հասնում էր իր սահմանած երթուղու վերջին, և դառնալով հնչեղ, երբ անցնում էր պատուհանի մոտով։

Անդրեյը ձեռքով շոշափեց շրջանակը։ Այն անձայն բացվեց։ Հավանաբար պատուհանը վաղուց բաց էր մնացել։ Նա գլուխը դուրս հանեց և նայեց զինվորին։ Վերջինս հեռանում էր մինչև տան անկյունը, պատուհանից մի տասնհիգ քայլ, և, նայելով անկյունից, որտեղից լսվում էին կայարանի աղմուկները, ետ էր դառնում։ Անդրեյը պատուհանը ծածկեց, թողեց որ պահակն անցնի և կրկին դուրս նայեց։ Դեպի աջ, մինչև տան ծայրը, տասը քայլից ավելի չէր լինի, և դեպի պարտեզ թփուտածածկ մի թմբիկ էր ձգվում։

Անդրեյը մի անգամ էլ ականջ դրեց զինվորի քայլերին։ Կարևորն այն էր, որ նա շարժումների մեթոդականությունը չխախտի։ Այնուհետև պետք է օգտվեր այն կարճ պահից, երբ պահակը նայում էր կայարանին։ Ուրիշ բան չկար նախատեսելու։ Պատահականությունը կարող էր նույն հաջողությամբ և՛ փրկել, և՛ կործանել։

Այն փրկեց։

Անդրեյը պատուհանը բացեց, երբ զինվորը մի հինգ քայլ հեռացավ դեպի երթուղու վերջը։ Անդրեյը նստեց լուսամուտագոգին, կամացուկ ցած սահեց փորի վրա և ցած կախվեց ձեռքերով կառչած։ Մնում էր միայն հաշվել թռիչքի պահը, որ պետք է համընկներ պահակի վերջին քայլերից մեկին։ Թռիչքը դժվար չէր լինի, մինչև գետին կես մետրից ավելի չէր։ Եվ հանկարծ շոգեքարշի ականջ ծակող մի սուլոց լսվեց պատուհանին մոտ ինչ-որ տեղից, սուլոցը վեր խոյացավ ու տարածվեց գիշերվա մեջ։

Անդրեյը ձեռքերը թողեց, ընկավ գետնին ու նետվեց թփուտների մութ խորքը։ Դրանց այրվածքները սոսկալի էին, հարվածների և ճանկռվածքների ցավը՝ դաժան, սակայն երկաթը միայն կարող էր կանգնեցնել այդ վազքը։

Սուլոցը դեռևս խլացնում էր այդ շրջանը՝ փոթորկի պես շամփրող և ընկճող սուլոց։ Եվ երբ նրա արձագանքները տեղավորվեցին գիշերվա անտեսանելի գաղտնարաններում, Անդրեյն արդեն երկաթուղային թմբին հարող հսկայական պարապուտում էր։ Նա վազելով կտրեց այն ու քայլեց երկաթուղու պաստառի երկարությամբ...

Իհարկե, դա, ուր Անդրեյն ընկել էր, ուրիշ երկիր էր՝ սրբատաց, անդյուրաշարժ, մտերիմ, գրեթե հարազատ մարդկանց երկիրը...

Սակայն այդ երկրում փախչելը ավելի հեշտ և անվտանգ չէր, քան որևէ այլ երկրում։ Եվ հետո, մի՞թե ընդհանրապես հեշտ ու անվտանգ բան է փախչելը։ Փախուստներ հերոսներն են անում, իսկ հերոսներն այնքա՜ն քիչ են այս աշխարհում։ Փախչելը հեշտ է ծանոթ ճանապարհներով։ Անծանոթ ճանապարհները դժվար են ու դաժան։

Անդրեյն այս երկրում միայն մի ճանապարհ գիտեր՝ այն ճանապարհը, որ նրան այստեղ բերեց։ Եվ նա այդ ճանապարհով ետ վազեց դեպի սահմանը։

Օբեր-լեյտենանտ ֆոն ցուր Մյուլեն-Շենաուն դպրոցում սովորել էր օրագիր վարել։ Նա սովորել էր ամեն օր մի քանի խոսք գրել իր տետրերում, որ հետո իրար վրա շարում էր պահարանում, որտեղ պահվում էին գովասանագրերը, նվիրագրերը և կանաչ ֆոլիանտը՝ «Ֆոն ցուր Մյուլեն-Շենաու տիրակալ մարկգրաֆների զինանիշագիտության ու տոհմագրական ծառը»։

Օբեր-լեյտենանտը նոր տետրը բացեց այսպիսի գրանցումով.

«Դարձյալ հրաժեշտ եմ տալիս պենատներին։ Անցյալի մեջ անհաղթահարելի մի ուժ կա։ Ականջ եմ դնում իրերի լռությանը։ Այն ինձ համար ավելի հասկանալի է, քան հրամանատարի հրամանը։ Համոզված եմ, որ շուտ չեմ մահանա։ Ինձ վիճակված է ինձնով փակել մեր տոհմը։ Այն պետք է քայքայվի։ Ես նրա քայքայման ենթակա վերջին հյուսվածքն եմ։ Ինձ պետք է բազկաթոռի մեջ նստեցրած մահ տան, կերակրեն, լվանան, մինչև որ լրիվ քայքայվեմ-վերջանամ։ Ճակատագիրը դիտմամբ օգնեց իմ պապին հարստանալու։ Տոհմը, որ այն ժամանակ դեռ բազմանդամ էր, դատապարտ-

ված է աստիճանական մահացման։ Պապիս հարստությունն ինձ հնարավորություն կտա կենդանի-կենդանի փտել։ Ես հարուստ եմ ճիշտ այնքան, որպեսզի ոչինչ չխանգարի իմ միայնակ մահվանը, որպեսզի ես մահանամ ավերակների, անցյալի լռության մեջ, ինչպես խորհրդանշան։ Այդ է նախասահմանված տոհմին։ Մահացու վերքը, որ ստացա Շամպանում, մահացու ամեն մի ուրիշ մարդու համար, ինձ համար միայն ծանր եղավ։ Սակայն այդ վերքը բավական է, որպեսզի կյանքիս վերջում ապուշ դառնամ։ Ես կլինեմ ապուշ, անոտք, զազրելի, ինձ ման կտան բազկաթոռի մեջ։ Իրերն են այդ կամենում։ Դարավոր իրերը, որ սնուցել են իմ տոհմը, կտեսնեն և նրա վերջը։

Այս օրերս դարձյալ ռազմաճակատ եմ մեկնում։ Այն միտքը, որ իմ մահվանը պետք է նայեն հարազատ պատերը, հոգիս անվախությամբ է լցնում։ Համոզված եմ, որ պատերազմն իմ կյանքին վտանգ չի սպառնում։ Իսկ այդ համոզվածությունը տանջալիորեն տխուր է։

Այսօր, ուշ երեկոյան պուրակում զբոսնելիս հանդիպեցի մի մարդու, որ ճանապարհն էր փնտրում։ Երբ ինձ նկատեց, փորձեց թաքնվել ծառերի ետևը, սակայն ես հասա նրան։ Նա տանջված տեսք ունի, հավանաբար մի քանի օր արդեն փախստական է։ Պահանջեցի, որպեսզի հայտնի իր անունը։ Նա ասաց, որ գերի է և այլևս ոչինչ չի ասի։ Այդ մարդուն փակել եմ մեր գերեզմանոցում։ Թող ուշքի գա։ Առավոտյան կհարցաքննեմ։ Հավանաբար խոշոր թռչուն է»։

Անդրեյն արթնացավ ցրտից, ասես նրան հանկարծ սառցածակն էին մտցրել։ Նա դժվարությամբ ձեռքերը դուրս քաշեց գլխի տակից։ Ամբողջապես փայտացած էր, ինչպես ծառից պլոկված կեղևը։ Այն պահից, որ նրան գցեցին նկուղը, քարե սալիկների վրա, նա քնեց գիտակցությունը կորցրածի նման։ Արթնանալով, սկսեց շոշափել սալիկները։ Դրանք հարթ մակերեսով խորանում էին մթության մեջ։ Նա սողաց այս ու այն կողմ, մերթ ձեռքերն առաջ մեկնելով, մերթ բարձրացնելով գլխավերևը։ Հետո տեղից վեր կացավ։ Ձեռքերը դիպան քարին։ Ուղղանկյուն սալիկները, որոնցով պատած էր հատակը, վերևից կախված էին թեք կամարի նման։

Անդրեյը ձեռքերով մի քանի կտրուկ շարժումներ արեց, որպեսզի տաքանա։

Ետևում անհասկանալի աղմուկ լսվեց։ Նա դադարեց շարժվել և ականջ դրեց։ Թնդյունը մոտենում էր համաչափ, ասես հեռվում հսկայական քարեր էին գլորվում։ Հանկարծ այն դադարեց, մթության մեջ խուլ արձագանքներ արձակելով։ Ծանր, հատու քայլերը, որ փոխարինեցին թնդյունին, լռեցին Անդրեյին շատ մոտ։ Ապա որոտաց ժանգոտած երկաթը, հին ժամացույցի նման զնգզնգաց փականքը, և կայծակնանման լույսը ծակեց Անդրեյի աչքերը։ Ցածր ձայնից առաջացած թնդյունի նոր ալիքի միջով Անդրեյը լսեց հետևյալ խոսքերը.

— Խնդրե՛մ, պարոն։

Նա փայտացած ոտքերը դժվարությամբ ծալեց, ելավ բարձր աստիճանին։ Երիտասարդ զինվորը, որ նման էր սպասյակի, մինչև արմունկները ծալած թևքերով և փափուկ տուֆլիները հագին, Անդրեյին երկար միջանցքներով ու սանդուղքներով բերեց խաղաղ ու կիսամութ սրահները, որտեղ կախված էին զենքեր, նկարներ, ասպետական հանդերձանք։ Հետո բախեց մի ցածրիկ դուռ և բարձրաձայն հարցրեց.

— Կհրամայե՞ք ներս բերել։

Անդրեյը կանգ առավ մի ընդարձակ սենյակում, գրասեղանի առջև, որի վրա լցված էին շրջանակներ և ապակե մանր-մունր զարդարանքների ամբողջ մի կույտ։ Շուրջբոլորը նկարներ էին կախված, ինչպես թանգարաններում, երեքչորս շարք, սպիտակ պատերի երկայնությամբ ձգվող երկաթե ձողերի վրա։

Օբեր-լեյտենանտը համազգեստի մեջ ձգված նստել էր սեղանի առջև, դեմքը դեպի դուռը դարձրած։

— Դու կարող ես գնալ,— ասաց նա սպասյակին։

Հետո բաց գույնի լայն բացված աչքերով նստեցրեց Անդրեյին։

— Հիմա դուք հանգստացել եք,— ասաց նա ժպտալով,— ու թերևս ձեր մասին ավելի մանրամասն պատմեք։

Անդրեյը ուսերը թոթվեց։

— Կարծում եմ,— շարունակեց օբեր-լեյտենանտը,— որ

այս տանը ձեր հանդեպ ցուցաբերված հյուրընկալությունը պարտավորեցնում է ձեզ որոշ չափով սիրալիր լինել։

— Այս տան հյուրընկալությո՞ւնը,— բացականչեց Անդրեյը։— Դուք հավանաբար ուզում էիք ասել նկուղի՞ հյուրընկալությունը։

— Պետք է ինձ ներեք այդ փոքրիկ խորամանկությունը։ Այն առաջացավ ձեր ներկայությունն այստեղ, այսպես ասած, ավելի երկարաձգելու և հաստատուն դարձնելու ցանկությունից։

— Ես չէի կամենա ձեզ նեղություն տալ իմ ներկայությամբ,— ասաց Անդրեյը սևեռուն նայելով օբեր-լեյտենանտին։ Պետք էր ստիպել նրան, որ խոսելու եղանակը փոխի։ Այլապես հնարավոր չէր լինի նրա մտադրությունները հասկանալ։

— Ասենք, ես անհանգստանալու բան չունեմ,— ասաց Անդրեյը, գլուխը դեպի պատը թեքելով,— հյուրընկալությունը հատուկ է միայն վայրենիներին։ Ես եթե ցանկանայի էլ, ձեզնից ժամանակ չէի կարող խլել։

Օբեր-լեյտենանտը հոնքերը շարժեց և սեղմեց միշտ քիչ կիսաբաց շրթունքները։ Սակայն իսկույն էլ նախկին ժպիտը հարթեց նրա դեմքը։ Նա իրեն թարմացած և առողջ էր զգում։ Օրն անամպ էր։ Արևն արդեն բարձրացել էր ծառերի գլխին և մեղմիկ տաքացնում էր բաց պատուհանից։ Սպիրտայրոցով արճամանը կլթկլթում էր օբեր-լեյտենանտից քիչ հեռու դրած կլոր սեղանին։

— Հը՞մ, ես երեկոյան արդեն նկատեցի, որ դուք ներծրծված եք վիճելու թույնով։ Հավանաբար ձեռնարկության ձախողվելո՞ւ կապակցությամբ։ Սակայն պետք է ձեր մասին ավելի մանրամասն տեղեկություններ տաք ձեր իսկ շահերից ելնելով։

— Դուք հարցուփորձ եք անում հետաքրքրասիրությունից,— ասաց Անդրեյը,— միևնույն է, ոչինչ չի փոխվելու. իմ բախտը կորոշի ուրիշ որևէ մեկը։

— Ահա բանն էլ հենց այդ է,— բացականչեց օբեր-լեյտենանտը, ասես ուրախանալով, որ խոսակցությունը դարձավ ամենագլխավոր նյութի շուրջ։— Ո՞վ պետք է որոշի ձեր բախտը, բանն էլ հենց այդ է։ Ուրեմն, ես ձեզ հարցուփորձ

եմ անում ըստ էության, ոչ թե հետաքրքրասիրությունից... Այդ ի՞նչ եք նայում։

— Նկար,— ասաց Անդրեյը։

— Ինձնից է կախված, թե ձեր բախտն ինչպես կորոշվի,— սառնորեն ասաց օբեր-լեյտենանտը։

— Ինչպե՞ս թե։

— Ինչպե՞ս,— սպառնալից կրկնեց օբեր-լեյտենանտը և սկսեց ազդեցիկ կերպով խոսքերը երկարաձգել։— Ես կարող եմ ձեզ հանձնել իշխանությանը որպես փախստական ռազմագերու կամ լրտեսի։ Դուք ինձ միամիտ մարդ չեք թվում։ Փախստականն ու լրտեսը ելակետային նրբերանգներ են, այնպես չէ՞։ Դա՝ առաջինը։ Երկրորդ՝ ես կարող եմ ձեզ հանձնել ռազմական կամ քաղաքացիական իշխանություններին։ Դուք տարբերություն զգո՞ւմ եք։ Ի՞նչ եք այդպես նայում։

— Ես այս նկարը գիտեմ։

— Դուք չեք կարող այդ նկարը տեսած լինել,— բղավեց օբեր-լեյտենանտը։— Խնդրեմ նայեցեք ինձ, երբ ձեզ հետ խոսում եմ։

Անդրեյը հայացքը նրան ուղղեց։

— Ես ճանաչում եմ այդ նկարչին։

— Դուք չեք կարող ճանաչել ոչ այդ նկարչին, ոչ էլ այդ նկարը,— բղավեց օբեր-լեյտենանտը և ձեռքը խփեց սեղանին։— Ես ձեզ շատ լավ եմ հասկանում։ Ինձ չեք կարող խաբել։ Հաջող բան չընտրեցիք. այդ նկարչին միայն ես եմ ճանաչում։

— Նրա անունը Կուրտ Վան է,— կամացուկ ասաց Անդրեյը։

Օբեր-լեյտենանտը տեղից վեր թռավ և սեղանի վրայով կախվեց դեպի Անդրեյը։

— Կուրտն այս նկարի վրա էր աշխատում պատերազմն սկսվելուց ամիսներս առաջ։ Կարծում եմ, որ նա այն չի ավարտել։

— Դուք ծանո՞թ եք Կուրտ Վանին,— հարցրեց օբեր-լեյտենանտը, և նրա շրթունքները բացվեցին մի տեսակ երեխայանման։

— Ես շաբաթներով նրա ձեղնահարկում էի լինում։ Մենք բարեկամներ էինք։

Օբեր-լեյտենանտը ուշքի եկավ զարմանքից։

— Նստեցեք խնդրեմ,— ասաց նա, ցույց տալով կաշվե բարձր աթոռը և ինքը նստելով իր տեղը։

— Կուրտը պատրաստվում էր այս նկարը նվիրել Նյուրընբերգի մագիստրատին։ Այն ինչպե՞ս ձեր ձեռքն ընկավ։

Օբեր-լեյտենանտը լռեց և նայեց նկարին։

— Տարօրինակ է,— ասաց Անդրեյը,— երկրորդ դեպքն է հիշեցնում ինձ Կուրտին այն բանից հետո, երբ երկու տարի ոչինչ չեմ լսել նրա մասին։

— Դուք գիտե՞ք նրան ինչ է պատահել։

— Նա գերի է ընկել, Ռուսաստանում է։

Օբեր-լեյտենանտը վեր կացավ և երկու մեծ քայլ արեց դեպի պատուհանը։ Հետո, շրջվելով, կամացուկ հարցրեց։

— Իսկ դուք ո՞ւս եք։

— Այո։

— Դուք բարեկամներ էիք,— ասաց օբեր-լեյտենանտը, ինչ-որ բան մտածելով,— և ճակատագիրը ձեզ բաժանեց։ Դա տխուր բան է։ Մենք հարգում ենք բարեկամությունը։ Այդ զգացումը մեզ մոտ զարգացած է։ Եվ թախծի զգացումը։

Նա շրջվեց, նայեց Անդրեյին, նայեց Կուրտի նկարին, մոտեցավ սեղանին և անսպասելիորեն սիրալիր առաջարկեց.

— Մի գավաթ սուրճ կուզե՞ք։ Ես շատ անսիրալիր էի, մոռացա հարցնել քաղցած չե՞ք արդյոք։ Դուք շատ հոգնատանջ տեսք ունեք։ Դուք, հավանաբար... վաղո՞ւց եք փախել։

— Ես կուշտ եմ,— ասաց Ստարցովն ու նստեց աթոռին,— բայց վաղուց չեմ խմել, և սուրճն ինձ կտաքացնի։ Մինչև հիմա չեմ կարողանում տաքանալ։

Օբեր-լեյտենանտը սուրճ լցրեց գավաթը, որին դեռ ձեռք չէր տվել, և առաջարկեց.

— Պանիր վերցրեք։

«Խմորեղեն, խնդրեմ, խմորեղեն անուշ արեք»,— հիշեց Անդրեյը երկտակ ծալվող, ժպտուն Դիտրիխին։ Նա մի մեծ կում սուրճ կուլ տվեց և շունչը պահեց, զգալով, ինչպես տաք հեղուկը տարածվում է մարմնի մեջ, ցավեցնելու աստիճան այրելով իր ճամփան։

Օբեր-լեյտենանտը քայլում էր պատուհանից մինչև պատը և խոսում.

— Ես Վանին մեծ տաղանդի տեր եմ համարում։ Նա հաստատակամ է, համառ, անողոք իր նկատմամբ։ Նրա յուրաքանչյուր նոր նկարը մի քայլ առաջ է։ Եվ վճռել եմ դրանք հավաքել ու հետո միանգամից Գերմանիային ցույց տալ գերմանական նոր նկարչին։ Ճիշտ է, նրա վրա չափազանց ուժեղ են ազդել ֆրանսիացիները։

— Լավ ազդեցություն է,— միջամտեց Անդրեյը։

— Գերմանացիներին դա քայքայում է,— ասաց օբեր-լեյտենանտը։— Մեզ հատուկ է միայն թեման։ Այդ երևում է մեր գրականությունից, ինչպես նաև մեր արդյունաբերությունից։ Մենք մշակում ենք միայն միտքը։ Ֆրանսիացիները հրապուրվում են ձևերով։ Դա գալիացիների էությունն է։ Նրանք կարողանում են մանևրել, սակայն հարձակում կազմակերպել կամ նույնիսկ նահանջել չգիտեն։ Նրանց հեղափոխությունները դարձել են դասական։ Իսկ ի՞նչ դարձավ Ֆրանսիան այդ դասական հեղափոխությունների հետևանքով։ Իրավազուրկ օլիգարխիա։ Ֆրանսիացիների հեղափոխությունը մանևր է, ձև։ Ֆրանսիացիները կարող են ունենալ Սեզան, սակայն երբեք չեն ունենա Բյոկլին։

— Բյո՞կլին,— բացականչեց Անդրեյը, կոկորդը բռնելով։— Բյո՞կլին։ Սակայն չէ՞ որ դա խայտառակություն է։

— Համաձայն եմ, որ նա վատ նկարիչ է։ Ես նրա մասին խոսում եմ որպես թեմայի լավագույն արտահայտչի։ Ոչ մեկը չի կարողանում նրա նման դիտողի առաջ մեկնել միտքը։

— Այդ բանն ավելի լավ անում է Կլինգերը,— ասաց Անդրեյը,— և սակայն դա նրան չի խանգարում Բյոկլինից ավելի ապաշնորհ լինել։

— Մինչդեռ այդ նույն ունակությունը Լենբախին հանճարեղ է դարձնում,— բղավեց օբեր-լեյտենանտը։

Նա խոսում էր և մի ձեռքով կտրուկ շարժումով բացել էր համազգեստի բարձր օձիքը, որպեսզի գլուխն ավելի հարմար կարողանա շրջել նկարից դեպի Անդրեյը։

— Ես խորապես համոզված եմ ազգային բնավորությունների այս հիմնական տարբերության մեջ։ Ուստի ասում եմ, որ ֆրանսիացիները կարող են վնասել Կուրտ Վանին, ոչ թե օգնել։ Իր թեմայի համար նա պետք է գտնի սեփական ձևեր, և ոչ թե դրանք ընդօրինակի ֆրանսիացիներից։ Նա իր ճա-

նապարհն ունի։ Նայեցեք ահա, այս պատին ամբողջ նրա աշխատանքներն են։

Օբեր-լեյտենանտը նետվեց դեպի նկարները, վերցրեց հղկված ցուցափայտը և ինչպես դպրոցում սկսեց բացատրել Կուրտ Վանի նկարելու եղանակը՝ մի կտավից մյուսն անցնելով։ Նա Անդրեյին ստիպեց մոտենալ նկարներին և ձեռքից բռնած ման էր տալիս սենյակում, որպեսզի իր որևէ միտքը ակնառու ցուցադրի գեղանկարչական պատկերում։

Հետո նստել էր մի քիչ հոգնած և մտախոհ, ձեռքերը սեղանին մեկնած և նայելով դրանց դանդաղասահ հայացքով։

— Կուրտ Վանն ինձ չէր հասկանում,— ասաց նա տխրորեն։— Նրան թվում էր, թե խանգարում եմ իր փառքին։ Նա համոզված էր, որ իր նկարները զուր կորչում են մեր գյուղակում։ Ես նրան գրում էի, որ հասարակությանը չի կարելի գրգռել հաճախակի հայտնվելով։ Նկարչի յուրաքանչյուր հայտնությունը պետք է անակնկալ լինի։ Նա չէր հավատում իմ անկեղծությանը։ Սա ճակատագրական բան է։

Օբեր-լեյտենանտը դարձյալ մտասուզվեց։

— Ճակատագրական է,— արտասանեց նա կամացուկ,— քանի որ իմ նկատմամբ նրա անվստահությունը բնազդային էր։ Մենք տարբեր էության մարդիկ ենք։

Նա փորձող հայացքով նայեց Անդրեյին։

— Դուք նրա բարեկամն եք։ Ուստի դուք էլ ինձ չեք վստահում։

Անդրեյն ուզում էր մի բան ասել, սակայն օբեր-լեյտենանտը գլուխը շարժեց և աչքերը փակեց։

— Դա մեր կարողությունից վեր է։ Երբեմն ես նախանձում եմ այնպիսի մարդկանց, ինչպես Վանն է կամ գուցեև դուք։ Նրանք իրենց հորից այն կողմ ոչ մեկին չեն ճանաչում։ Միայնակ մարդիկ են։ Երևի նրանց համար շատ հեշտ է։ Նրանք միշտ վճռում են իրենց փոխարեն, միայն իրենց փոխարեն։ Իսկ այնպիսիների փոխարեն, ինչպես մենք ենք, ամեն ինչ վաղուց արդեն վճռված է պապերի, պապի պապերի, պատմության կողմից։

Օբեր-լեյտենանտը ձեռքերը շփեց, ասես լվանալիս լիներ։

— Պետք է վերջացնել,— ասաց նա։— Ես կարող եմ թեթևացնել ձեր վիճակը։ Ձեզ հետ փաստաթղթեր չունե՞ք։

Անդրեյը կողքի գրպանից հանեց չորս տակ ծալված մի դեղին թերթիկ։ Դա միակ թուղթն էր, որ վերցրել էր հետը։ Օբեր-լեյտենանտը այն բացեց։

Նատարատ
Ք. Բիշոֆսբերգ

ՎԿԱՅԱԿԱՆ

Ռուսական հպատակ պարոն Անդրեյ Ստարցովին, ծնված 17/IX-ի 1890 թ., թույլատրված է 1916 թ. օգոստոսի 23-ին զբոսանել Լաուշհում։

Նատարատ
Ոստիկանապետ-նախագահ։

— Դուք չեք կարող գանգատվել, թե ձեր նկատմամբ անմարդկային վերաբերմունք է եղել,— ժպտալով ասաց օբեր-լեյտենանտը։— Ուրեմն ինչո՞ւ ձեր զբոսանքն այդպես ձգձգվեց։ Ո՞ւր էիք ամբողջ երեք օր։ Փորձում էիք փախչե՞լ։

Օբեր-լեյտենանտը ծիծաղեց։

— Ավստրիայով դեպի հայրենի՞ք։ Հա՜-հա՜։ Ես ձեզնից շուտ կընկնեմ Ռուսաստան. շուտով ինձ ռազմաճակատ են ուղարկում։

Նա կրկին լռեց, հենվելով բազկաթոռի թիկնակին և նայելով Անդրեյին։

— Ուզո՞ւմ եք ձեզ փրկեմ,— հարցրեց աչքերը կկոցելով։

Անդրեյը հանկարծ հիշեց Մարիի հետ անցկացրած վերջին ժամը, մեղմ, լուռ մթության մեջ թաքնված սենյակում։ Այդպիսի ժամի, երբ չկա ոչինչ, բացի զգացողությունից, երբ ամբողջ աշխարհն ամփոփված է մարդկային ջերմության մեջ, այդպիսի ժամի նա սպասում էր ամբողջ կյանքում։ Եվ հիմա, կրկին հայտնվելով Մարիին շատ մոտ, ինչպե՞ս նրան չտեսնել, չհպվել նրա դեմքին։

— Օգնեցեք ինձ,— ասաց նա դողացող ձայնով,— եթե հնարավոր է։ Ես ամաչում եմ այս տղայական պատմությունից։

— Էհ, ինչո՞ւ,— ծիծաղեց օբեր-լեյտենանտը,— դա հերոսական պոռթկում է։

Նա վերցրեց գրիչն ու սրածայր տառերով մի քանի խոսք գծեց թղթին։

Հավաստում եմ, որ ռուսական հզոր բաղաքացի Անդրեյ Ստարցովը գտնվել է անգիտակից վիճակում ցուր Մյուլեն-Շենաու ամրոցի մոտ և առողջության թույլության պատճառով ինձ մոտ պահվել է երեք օր, որի հետևանքով և չի կարողացել ներկայանալ հարկ եղած իշխանությանը:

Օբեր-լեյտենանտ
Հոն ցուր Մյուլեն-Շենաու:

Նա թուղթը տվեց Անդրեյին, և հրաժեշտ տալիս ձեռքը պահեց.

— Ըստ էության ես պարտավոր էի ձեզ հանձնել իշխանությանը: Ես իմ պարտքը խախտեցի: Դուք գիտե՞ք, թե ինչ կնշանակի, երբ գերմանացին իր պարտքը չի կատարում: Ծտեսություն:

Նա ղանգը տվեց և հրամայեց սպասյակին.

— Պարոն Ստարցովին ուղեկցիր մինչև կայարանի ճանապարհը:

Մեկնելու օրը օբեր-լեյտենանտը գրանցեց.

«Երեկ անսպասելի կերպով եկավ Մարին: Ես զարմացել էի, տեսնելով նրա կենսուրախությունը, և ասացի այդ նրան: Նա շարունակ ինչ-որ բանի համար ինձ շնորհակալություն էր հայտնում, նույնիսկ այն բանից հետո, երբ նրան հայտնեցի, որ մեկնում եմ: Այդպես էլ չհասկացա, թե բանն ինչ է: Զբոսնեցինք պուրակում, և նա դարձյալ, ինչպես մի ժամանակ, քաջ էր խոսում մեր ապագայի մասին: Ես ափսոսում էի նրան բաց թողնել: Սակայն նա շտապում էր և վերադարձավ նոր գնացող գնացքով: Այսօր հրաժեշտ էի տալիս նկարներիս և օգնում էի դրանք ծածկոցների մեջ դնել»:

Եվ՝ ահա օբեր-լեյտենանտ: Նա ծածկոցների մեջ էր դնում իր նկարներն ու չգիտեր, թե դրանք երկա՞ր են արդյոք մնալու ծածկված: Նա նայում էր Մարիի ուրախությունից ճառագայթող աչքերին ու չէր հասկանում, թե նա ինչու է իրեն շնորհակալ:

Իսկ եթե հանկարծ նրան ասեինք, թե Մարին ինչպես արձագանքեց Անդրեյի պատմությանը այն սպայի մասին, որն այդպես արագացրեց նրանց հանդիպումը:

— Ցուր Մյուլեն-Շենաու՞,— կրկնեց Մարին Անդրեյի ասածը:— Այո, լսել եմ: Նա մեր հարևանն է: Բայց ես նրան չեմ ճանաչում...

Ի՞նչ կլիներ, եթե այդ խոսքերը հաղորդեինք:

Մի՞թե այդ դեպքում էլ մեր վեպը ստիպված պիտի լիներ հաղթահարել նահանջների խոր փոսերն ու պատերազմի շուրջ ասված երկարաբանությունների մռայլ անապատները:

ԳԼՈՒԽ
ԻՆՉ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՅՈԹ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ում ցկատի ուներ գեներալ-ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը

Այս տունը բարեբախտ էր:

Այն չէր կարող բարեբախտ չլինել: Նրա պատուհանները արևի տակ այնպես էին վառվում, ասես ոչ թե ապակիներից, այլ բազմանիստ բյուրեղապակիներից լինեին: Այն չափավոր գորշ էր, որովհետև ցեմենտապատ էր, չափավոր վարդագույն, որովհետև ցեմենտին սուսր էր խառնված, չափավոր սպիտակ, որովհետև ճակատամասի ցցուն մասերը և ծեփանկարները մաքուր սվաղված էին:

Այդ տունը՝ հարյուրավոր վառվող պատուհաններով, տաճարի մուտքի նման ծանր դռնով, որ ծածկված էր աղյուսեկարմրագույն կղմինդրի հարթ թեփուկներով, այդ տունը չափավոր հաճելի էր:

Ամեն մի չափավոր հաճելի տուն, հարկավ, բարեբախտ է: Ինչպես մարդը, երբ կանգնած է իր տեղում, փողկապը կապած, բազկակալներով, հարթուկած շալվարով, կանոնավոր սանրված մազերով, նոր կոշիկներով և պատեհաժամ ժպիտը դեմքին:

Այսպես էր այս տունը:

Տունը կանգնած էր այն տեղում, որտեղից սկսվում էր Բիսմարկի ծառուղին, հենց այն տեղում, ուր նրան դրել էր շտադտրատը և որտեղ կամեցել էր տեսնել նրա ճակատամասը Գերմանիայի միակ քաղաքային իրավասու հրեա հերոս Օտտո-Մոզես-Միլիխը: Այն տեղում, որի մոտով ամեն կիրա-

կի, կեսօրից հետո՝ չորս անց կեսին, Բիշոֆսբերգ քաղաքի ամենապատվարժան բյուրգերներն էին անցնում, դիմելով դեպի Ցոթ Լճակների հիանալի պուրակը՝ ռազմական կապելլայի երեկոյան համերգը լսելու։

Ամենապատվարժան բյուրգերներն անցնում էին չափավոր հաճելի տան մոտով, և ամեն կիրակի, կեսօրից հետո՝ չորս անց կեսին, աչքները հառում էին աղյուսե կարմրագույն կղմինդրի թեփուկին, որտեղից նայում էին չափավոր խոշոր տառերը՝

Քաղաքային իրավատու
Օտտո-Մոզես-Միլխի
ա ն վ ա ն
Քաղաքային վիրաբուժական
հիվանդանոց

Եվ այն ժամանակ բյուրգերները՝ այցագնեստ, բաց գույնի ժիլետ, կոտելոկ հագած, կիպ փակված հովանոցները ձեռքերին, սկսում էին խոսել, որ համաշխարհային պատերազմում հաղթողը կլինի նա, ում նյարդերը ավելի ամուր են, ինչպես իրավամբ ասել է գեներալ-ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը։

— Սակայն սպասեցեք, հերր ասիստենտ, մենք խոսակցությամբ տարվեցինք և քայլում ենք այն ճանապարհով, որտեղ միայն հեծանիվով կարելի է անցնել։

— Ախ, այո, հերր հոֆրատ, դուք միանգամայն իրավացի եք։

Եվ նրանք ետ էին դառնում ու թեքվում ոտքով գնացողների ճանապարհը։ Բիսմարկի ծառուղին բաժանվում էր երեք թևի, իսկ ամեն թևի սկզբում ամուր սյուների վրա կախված էին ցուցանակներ.

Միայն հեծանիվների համար
Միայն հետիոտների համար
Միայն հեծյալների համար

Այդ ընկնում էր հենց ծառուղու սկզբին, մանր քարերով ծածկված արահետի դիմացը, որ նեռի նման ձգվում էր դեպի վիրաբուժական հիվանդանոցը։ Եվ երեք ամուր սյուներին ընկերակցում էին ոչ պակաս ամուր երկաթե ձողերը, որոնց վրա փակցված էին տախտակներ հետևյալ մակագրություններով.

Արգելվում է թուղթ և մրգերի կճեպներ թափթփել
Ճներին մանր տալ միայն պարանով կապած
Երեխաների հետ զբոսնող դայակներին արգելվում է նստել նստարաններին
Ծյուղերը չկոտրտել Տերևները չպոկել
Ծավիղները հովանոցներով և փայտերով չփորփրել
Հեծանվորդնե՛ր, արագությունը 12 կիլոմետրից ոչ ավելի
Հեծյալնե՛ր, Ընթանալ միայն քայլքով և մանր վարգով։

Եվ ապա ևս մի քանի շատ մանր գրված հայտարարություններ՝ պարագրաֆներով, կետերով, հաստ տպատառերով, շեղատառերով։ Դրանց տակ շտադտրատների, ոստիկանապետ-նախագահի, բույսերի պաշտպանության միության ստորագրությունները։

Բյուրգերները այցեզգեստներով, կիպ փակված հովանոցները ձեռքերին, քայլում էին հետիոտների ճամփով և խոսում այն մասին, թե համաշխարհային պատերազմում հաղթանակողը կլինի նա, ում նյարդերն ավելի ամուր են։

Հավասար, կլոր, շրջած սուրճի գավաթների նման լորենիները, միանման շորս շարք կազմելով, լցվում էին Յոթ Լճակների կապտավուն պուրակը։ Ձափավոր հաճելի, իր պատուհանների բազմանիստ բյուրեղապակիներով շողում էր ցմենտապատ տունը։ Բյուրգերները քայլում էին հետիոտների շավղով, գնդի համհարզը մանր վարգով անցավ հեծյալների ճանապարհով, հեծյալների խճուղով ժամում տասներկու կիլոմետր արագությամբ անցավ Օտտո-Մոդես-Միլխի անվան վիրաբուժական հիվանդանոցի ավագ օրդինատորը։

Ռազմական կապելլայի երեկոյան համերգը լսելու գնացող բյուրգերների առջևից քայլում են նրանց կանայք՝ փաթեթներն ու պայուսակները ձեռքներին։ Փաթեթների և պայուսակների մեջ դրված են կուխեններ և թխվածք, որ կուտվեն սուրճի հետ՝ Շումանի և Մոցարտի երաժշտության տակ։

Այդպես էր մի տարի առաջ, այդպես էր երեք տարի առաջ, այդպես էր տասը տարի առաջ և հավանաբար այդպես էր նաև քառասուն տարի առաջ, երբ ի պատիվ իշխան Բիսմարկի՝ շորս շարք լորենիներ տնկեցին։

Աշխարհը հաստատուն է, աշխարհն ամուր է, և ծերուկ Արքիմեդը մեծ կատակասեր էր իր լծակով հանդերձ, որով կարելի է շուռ տալ ամբողջ երկիրը։

Ում նկատի ուներ գեներալ-ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը, երբ խոսում էր նյարդերի մասին։

Բյուրգերները այցազգեստներով, կիպ ոլորված հովանոցները ձեռքերին, քայլելով Բիսմարկի ծառուղով, հիշում էին միանգամից տասը կանոն, որոնցից կամովին և գիտակցաբար պայմանավորել էին այս ծառուղում իրենց գտնվելը։ Ու եթե մեկը մոռանում է որևէ կանոն.

Հովանոցներով և փայտերով շավիղները մի փորփրեք

մյուսը հիշեցնում է այդ։

— Հերր քարտուղար, ես հասկանում եմ, որ Ռուսաստանում հեղափոխություն է, սակայն ինչպե՞ս կարելի է թույլ տալ, որ մինիստրներին բանտ նստեցնեն։

Ի՞նչ նկատի ուներ գեներալ-ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը։

Աշխարհը հաստատուն է, աշխարհն ամուր է, աշխարհը բարեհաջող է։

Սակայն բյուրգերների առջևից քայլում են նրանց կանայք։ Փաթեթների, պայուսակների մեջ նրանք դեռ երեք տարի առաջ տանում էին վեստֆալյան ապուխտով բուտերբրոդներ, հարած սերուցքով նուշի պիրոժնիներ և ամենանուրբ սալյամին, որ ապուշի մեկն անվանել էր իտալական։ Դեռևս երկու տարի առաջ կարելի էր լսել Մոցարտին, երաժշտությունն ըմպելով քաղցր սուրճով, ուտելով փխրուն շտրեյզել-կուխեն։ Եվ մի տարի, ընդամենը մի տարի առաջ քո առատ հացաբաժնին կարող էիր ուզածիդ պես իսկական մրգեղենի մարմելադ քսել։

Սակայն այդ մասին կարելի է խոսել միայն հին բարեկամների հետ։ Եվ խոսել կամացուկ, շատ կամաց, որպեսզի չլսեն նույնիսկ ամուսինները, որպեսզի ոչ ոք, ոչ ոք չլսի։ Ահա այսպես, շշուկով.

— Ֆրաու Էյզենբոկ, դուք լսե՞լ եք։

— Ի՞նչ, Ֆրաու Բուշ։

— Այն ծաղկել է...

— Ծաղկե՞լ է։

— Այո։

— Ե՞րբ։

— Ես երեկ իմացա։

— Դա հաստա՞տ է։

— Այո, Ֆրաու Բուշ։

— Ասում են այն չէր ծաղկել քառասունհինգ տարի։

— Այդ մասին է խոսում ամբողջ քաղաքը։ Դուք գիտե՞ք նրա պատմությունը։ Նա շորս հարյուր տարեկանից ավելի է։ Այն ժամանակ Աննաբերգում ապրում էր մի ծերունի իր որդու հետ։ Որդին անառակի մեկն էր։ Նա հասել էր այն աստիճանին, որ ասում էր, թե աստված չկա։ Հայրը վճռեց ապացուցել, որ աստված կա։ Վիճում էին երկու տարի շարու-

նակ։ Վերջապես հայրն ասաց. ես մի մատղաշ լորենի կվերցնեմ ու կտնկեմ արմատները դեպի վեր, եթե կպչի՝ աստված կա։ Այդպես էլ արեց։ Եվ լորենին կպավ ու սկսեց աճել արմատները դեպի վեր՝ վեր ու վեր, և դարձավ այնպիսին, որ իրմով ծածկեց Աննաբերգի ամբողջ հին գերեզմանատունը։ Վերջին անգամ այն ծաղկել էր յոթանասունմեկ թվականին։

— Ուրեմն շուտո՞վ։

— Սո՜ւս-սս...

— Ֆրաու էյզենբոկ, դուք ի՞նչ սանրվածք եք անում։

— Իհարկե, բոլորովին հարթ։

— Ուրեմն ա՞յդ էլ ճիշտ է։

— Սո՜ւս-սս։ Վերջերս թատրոնում էի և ցած նայեցի. գրեթե բոլոր կանայք այդպես էին սանրված։

— Ես էլ նույնը տեսա եկեղեցում։

— Սակայն երբ բոլորը, բոլորը մինչև վերջինը, ամբողջ Գերմանիայում։

— Միայն ա՞յն ժամանակ, ֆրաու էյզենբոկ։

— Միայն այդ ժամանակ, ֆրաու Բուշ։ Եվ չմոռանաք՝ բոլորովին հարթ և մեջտեղը մազաբաժանով։

— Այո՜, այո՜, մեջտեղը մազաբաժանով։

Այդպես բյուրգերների առջևից քայլում են նրանց կանայք, կիրակի օրերը, կեսօրից հետո՝ շորսն անց կեսին, Բիսմարկի ծառուղիով դիմելով դեպի Յոթ Լճակների պուրակը։

Գուցե բյուրգերները չգիտե՞ն այն ամենը, ինչ նրանց կանայք գիտեն։

Սակայն ո՛չ, աշխարհն ամուր է, աշխարհը հաստատուն է, և ծերուկ Արքիմեդը՝ պարզապես կատակասեր։

Նայեցե՛ք, նայեցե՛ք, բյուրգերներ՝ այցաղգեստ հագած, կիպ ոլորած հովանոցներով բյուրգերներ, նայեցե՛ք, թե որքան չափավոր հաճելի է ցեմենտապատ տունը։

Այդ տունը բարեբախտ է, այն չի կարող բարեբախտ չլինել, չի կարող, իրավունք չունի, չի համարձակվի խանգարել այն կանոնները, որ նրա համար մեկընդմիշտ հաստատել են ժողովրդական առողջության մինիստրը, շտադտրատը, ավագ բժիշկն ու մյուս պատշաճ օրինական իշխանավորները։

Չի համարձակվի։

Ի դեպ, հանգստացեք։ Ում նկատի ուներ գեներալ-ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը, երբ ասաց, որ համաշխարհային պատերազմում հաղթող կլինի նա, ում նյարդերն ավելի ամուր են։

Բյուրգերների առջևից քայլում են նրանց կանայք։

— Սո՜ւս-սս։

Նամակը գրում էր երիտասարդ հիվանդապահուհին։ Նրա ձեռքերը դողում էին, նա իրեն հաշիվ չէր տալիս, թե ինչ է անում, չէր տեսնում, թե ինչ է գրում, միայն ցնցվում էր այն ճիչից, որ կախված էր հիվանդասենյակում և ձախ ձեռքով անդադար զգուշորեն, երկյուղածությամբ թեթևակի խրփում էր վիրավորի շիկացած այտին, վախենալով աչքերը նրան դարձնել։

Եվ հիվանդապահուհին գրում էր, որ վիրավորի կինը գա նրան տեսնելու, և նշում քաղաքը, որտեղ վիրավորը պառկած էր, հիվանդանոցի անունն ու հիվանդասենյակի համարը։ Այդ ամենն արեց հիվանդապահուհին, որպեսզի չլսի ճիչը, արեց ճիչից խելակորույս, մոռանալով հրահանգների, կանոնների, բացատրությունների և հրամանների պարագրաֆները, կետերը, հաստ տպատառերը և շեղատառերը։

Եվ կինը եկավ։

Եկավ երեկոյան, ներս մտավ դռնից, որի վրա փակցված էր պարզորոշ մակագրությամբ տախտակը.

Կողմնակի մարդկանց մուտքն արգելվում է

անցավ ինչ-որ սանդուղքներ՝ մութ, լուսավոր և կիսամութ, ու հայտնվեց հերթապահ քրոջ սենյակում։ Եվ քանի որ քույրը կատարում էր այն պարագրաֆը, համաձայն որի պետք է բացակայեր սենյակից, կինը միջանցք դուրս եկավ։

Այստեղ նրան կուրացրեց մաքուր բետոնե հատակը, սպիտակեցրած պատերի և բազմանիստ բյուրեղապակու նման շողացող անթիվ ապակիների լույսը։ Նրա համար ավելի հեշտ էր ամբողջ միջանցքի միջով նայել պատուհանից դուրս, որտեղ երևում էին երկինքն ու լորենիների կլոր կատարները։ Եվ նա նայում էր այնտեղ ու չտեսավ, թե ով իրեն ցույց տվեց

այն հիվանդասենյակը, ուր ամուսինն էր պառկած։ Նա լսեց միայն, որ մարդու ձեռքը երբ բարձրացավ, որպեսզի ճանապարհը ցույց տա, զնգաց ու չխկաց, ինչպես ավտոմատը՝ մեջը մետաղադրամ գցելիս։ Եվ նա միջանցքով նետվեց այն կողմը, ուր ցույց տվեց ձեռքը։

Կնոջը հանդիպեցին պատգարակ տանող սանիտարներ։ Նրանց հետևից արագ քայլում էին սպիտակ հագած մարդիկ, ձուլվելով բետոնի, պատերի և առաստաղի լույսին։

Կինը լսեց, ինչպես նախ բարձրաձայն ասացին, ապա բղավեցին.

— Դուք ո՞ւր եք գնում։

— Ո՞ւր եք գնում։

Եվ հետո կարծես նաև՝

— Է՜յ, ետ դարձեք։

Սակայն նա արդեն անհետացավ դռան ետևում, որ փնտրում էր, իսկ սպիտակ հագած, բետոնի, պատերի և առաստաղի լույսի մեջ ձուլված մարդիկ առաջ էին սլանում պատգարակի ետևից։

Դա առաջին կինն էր, որ պատերազմի ընթացքում տեսակցություն ունեցավ ամուսնու հետ չափավոր-հաճելի տանը, որը չէր կարող բարեբախտ չլինել։

Նա կանգ առավ դռան մոտ։

Հիվանդասենյակը մեծ չէր։ Երկու մահճակալ դրված էին պատերի տակ՝ աջից և ձախից։ Պատուհանը նրանց միջև փայլում էր խստաբարո և նոր, իսկ պատուհանից դուրս, շատ հեռվում երևում էր երկինքը՝ պատուհանից ավելի պղտոր և թախծալի, և ամպերը՝ սպիտակեցրած պատերից գորշ։

Ձախ մահճակալին վերմակի տակից դուրս էր նայում այլանդակ պեպենոտ, կանաչադեղնավուն, սեխի նման մի դեմք։ Աչքերը փակ էին և հոնքի բարակ անգույն անկյունը վեր ու վար էր թռչում ճակատին։

Աջ մահճակալի բարձին սևին էր տալիս լայն, կլոր ծոծրակը։ Այն անշարժ էր։

Կինը բղավեց.

— Ալբե՛րտ։

Այն ժամանակ սեխի նման դեմքը ջղաձգվեց, աչքերը բացեց և հոնքերը շարժեց արագ ու դժվարությամբ, ասես անհրես ճանճից ազատվելով։ Հետո շարժեց թրթուրանման ճաքճքված շուրթերը։

— Չի լսում։ Նա խուլ է։

Եվ հապաղելով, ափսոսանքով լի մի հառաչ.

— Ինչպե՞ս է... հը, ձեր կարծիքով... մարդու բերանը...

Սակայն կինը, աչքերը չկտրելով կլոր ծոծրակից, կրկին բղավեց.

— Ալբե՛րտ։

Կնոջ մարմինը օրորվեց դեպի առաջ, իսկ ոտքերը, ասես բետոնին պտուտակված, մնացին տեղում, և մի պահ նա կանգնած մնաց առաջ հակված, ինչպես պինդ կապված մարդը, որին բռթում են։ Սակայն ոտքերն իսկույն պոկվեցին ու սահեցին բետոնի վրայով՝ առաջ, մարմնի ետևից, որ նետվում էր դեպի մահճակալը։

— Ալբե՛րտ։

Կլոր, լայն, սև ծոծրակը դանդաղ սահեց բարձի մեջ, և նրա տեղը, ինչպես պտտվող շրջապատակերի մեջ՝ երևաց դեմքը։

— Ալբե՛րտ, Ալբե՛րտ, Ալբե՛րտ։ Ալ-բե՛-երտ։

Կնոջ առջև թափառում էին աչքերը՝ առանց բիբերի, սև-կապտավուն, բարակ կապտավուն երակներով, ինչպես հնությունից ճաքճքած արծնապատ պնակը։ Բացված, կլոր, աչքերը թափառում էին, նման երեխայի աչքերի, որը դեռ չի սովորել տեսնել, պատրաստ է ահա ուր որ է բռնելու հարկավոր կետն ու կանգ առնելու, որպեսզի տեսնի։

Կինը ձեռքերով բռնեց ամուսնու գլուխն ու ճչաց.

— Ալ-բե՛երտ։ Դու ինձ տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես ինձ։

Այն ժամանակ վիրավորը բացեց բերանը, ատամները չխկացրեց, կարծես օդը կծելով, և կրակված խռպոտ ձայնով ոռնաց.

— Գրեցեք կնոջս, գրեցեք կնոջս։ Մարթա Բիրմանին, Թեյֆելսմյուլե Լաուզիցում, կնոջս։ Գրեք, որպեսզի կինս գա։ Մա՛րթա, Մա՛րթա։

— Ալբե՛րտ։ Ալբե՛րտ։ Ես այստեղ եմ, Ալբե՛րտ։

— Կնոջս։ Մարթա Բիրմանին, Թեյֆելսմյուլե, Լաուզիցում։

— Ալ-բե՛-երտ։ Դու ինձ լսո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես ինձ։ Ալ-բե՛-երտ։

— Կնոջս գրեք, լսո՞ւմ եք, Մարթա Բիրմանին, Թեյֆելսմյուլե...

Կինը առաջ նետվեց, ծնկի եկավ, շոյում էր նրա գլուխը, կուլ տալիս արտասուքները, որ բերանն էին լցվում, խեղդվելով, հազալով, զկոտալով բղավում էր.

— Ալբե՛րտ։ Ես այստեղ եմ, ես քո Մարթան եմ։ Քո Մերխենն եմ, քոնը, ես այստեղ եմ, այստեղ...

Վիրավորը ոռնում էր ճիչից կտրատված ձայնով, պտտեցնելով լայն բացած սև-կապույտ, հին էմալի նման աչքերը, որ բիբեր չունեին։

— Կնոջս, կնոջս գրեցեք։

Այն ժամանակ կինը թաց շրթունքները հպեց նրա դեմքին ու լռեց։

Եվ վիրավորը, բոլորովին ուժասպառ, շշնջում էր նրան.

— Մութ է, բոլորովին մութ։ Չեմ տեսնում։ Գրեցեք կնոջս, խնդրում եմ, կնոջս՝ Մարթա Բիրմանին, ես կասեմ նրա հասցեն։ Գրեցեք, որ գա։ Մահվանից առաջ։ Եթե համաձայն եք ինձ երկու անգամ կսմթեք, որպեսզի գիտենամ, երկու անգամ։ Ես ոտքեր չունեմ, ձեռքեր չունեմ։ Մահվանիցս առաջ, խնդրում եմ ձեզ, կնոջս... Կսմթեցեք ինձ երկու անգամ...

Կինը ոտքի ցատկեց, ամուսնու վրայից արագ քաշեց վերմակը։ Նա պառկած էր բինտերով կիպ փաթաթված, կարճլիկ, կլոր, ինչպես տակառիկ։

Կինը մի կողմ նետվեց, դեպի մյուս մահճակալը, դեմքը ծածկելով սեղմված բռունցքներով։

Կանաչա-դեղնավուն մարդը, որի դեմքը սեխի էր նման, ասաց.

— Որքան մեղք է, հը՞... Ինչպես է սա ձեր կարծիքով...

Եվ այդ պահին իրար ետևից արագ հիվանդասենյակ լցվեցին սպիտակ, առաստաղի նման սպիտակ, մարդիկ։

— Այստեղ է։

Ու երբ կնոջը թևատակերից բռնեցին, նա ինչ-որ խոսք բղավեց։

Եվ արդեն չէր լսում ողբը.

— Կնոջս, Մարթա Բիրմանին, Թեյֆելսմյուլե, Լաուզիցում...

Եվ ոչ ոք չլսեց, ինչպես ճաքճքած, թրթուրանման շուրթերով մարդը, որի դեմքը սեխի էր նման, շշնջաց.

— Ճիշտ է...

Այդ երեկո քաղաքային իրավասու Օտտո-Մոդես-Միլխի անվան վիրաբուժական հիվանդանոցի ավագ օրդինատորը, ինչպես միշտ, մտավ ծխախոտի խանութ և երկու սիգար գնեց։ Հետո, ինչպես միշտ, նստեց Բիսմարկի ծառուղում և մի սիգարը ծխեց։ Հետո, տուն գալով, ինչպես միշտ, հանեց բաճկոնը, օձիքը, հագավ վարդագույն խալաթը, լցրեց ճենապակյա ծխամորճն ու նստեց սեղանի առջև։ Բացելով հաստ, կազմած տետրը, նա մանրատառ գրեց.

Փորձել հաղորդակցության սիստեմ գտնել պատերազմի հաշմանդամների հետ, որոնք կորցրել են։
1) բոլոր ծայրանդամները,
2) տեսողությունը,
3) լսողությունը։

Ապա հենվեց բազկաթոռի թիկնակին կախված բարձին, ծուխ արձակեց, փակեց աչքերը։

Մարդու ինձին են պետք այս
խղճուկ օրերն ու ժամերը

Սալարկն այսպես են լվանում։

Կարճոտն մարդիկ բրեզենտե անդրավարտիքներ, բրեզենտե բաճկոններ հագած, ջրի լայն շիթով, որ կայծկլտուն Հովհարի նման դուրս է ժայթքում բրանդսպոյտի սփռիչից, առատորեն ողողում են հարթ քառակուսի քարերը։ Հետո պողպատյա մետաղալարից սարքված խողանակով երկար ու պինդ տրորում են յուրաքանչյուր քառակուսին։ Խողանակով քերած կեղտը լվանում են հովհարաձև նոր ուրախ անձրևով։ Փայտերին ամրացված երկաթյա կեռերով փորփրում քերում են քարերի արանքում մնացած կեղտը։ Ջրի ուժգին և բարակ շիթով, առանց սփռիչի, լվանում են ճեղքերը։ Հետո սալարկով մայթից մայթ են քաշում խիտ և ուժեղ ցնցուղը, ինչպես ցաքանելիս՝ մի շերտը մյուսի դիմաց, և այսպես շարունակ, շարունակ, բրեզենտե անդրավարտիք ու բաճկոններ հագած

մարդկանց ետևից, որոնք քարշ էին տալիս կուշտ վիշապօձի նման տոզած հաստ աղիքը։ Եվ հետո, երբ լվացված, փայլատ ճեղքերի և անցքերի մոտ մի փոքր խոնավ սալարկը ձգվում է մի երկու-երեք թաղամաս, հաստահետույք, փրչոտ սմբակներ ունեցող ձիերով սալարկի վրայից գլորում են ծանր խոզանավոր գլանը և այն տրորում, կոկում է քառակուսի քարերը, ինչպես վարսավիրի կլոր խոզանակը՝ կարճ խուզված ծոծրակը։

Օ, ճանապարհներն այդպես են լվանում նաև փոքրիկ, ոչ հարուստ Բիշոֆսբերգում։ Եվ այդ փոքրիկ, ոչ հարուստ Բիշոֆսբերգն ունի խիտ ցնցուղով ցիստեռն, շատ կոշտ գլանխոզանակ, և՛ երկաթե կեռիկներով փայտեր, և՛ հաստ աղիք՝ ամբողջապես փայտե օղերով պատած, որոնք այն պահպանում էին վնասվելուց։

Բետոնապատ արահետները, որոնք բակերով տանում էին դարբասից դեպի տուն և որոնց վրա հախճասալերով տարեթվերն են.

ANNO 1898

լվանում են փեշերը վեր քաշած հաստ ոտքերով կանայք, հագներին առանց կրնկամասի փայտե բոտեր։ Լվանում են օճառաջրով և ճիլոպով ու լավ չորացնում քաթանե շվաբրով։

Փեշերը վեր քաշած, հաստ ոտքերով կանայք տաք ջրով ողողում են տների պատերը՝ հիմքից մինչև մի մարդահասակ բարձրությամբ։ Եվ այդ նույն կանայք էլ արտոնագրված քսուքով մաքրում են դռների բռնակներն ու օղակները, դարբասներին կպցրած ցուցանակները՝ բնակիչների անուններով, և ցանկապատերի ու վանդակապատերի ձողերի պղնձե ելունդները։

Օ՜, այդպես լվանում ու մաքրում են արահետները, տները, վանդակապատերի ելունդները՝ փոքրիկ, ոչ հարուստ Բիշոֆսբերգում։

Եվ ահա առավոտյան, երբ Լաուշեի մշուշապատ բարձունքից վեր է ձգվում ծերուկ, բարի արևը, Բիշոֆսբերգը վարդագունում է, ինչպես քնից նոր արթնացած ու սառը գետակի ջրով թարմացած աղջիկը։ Գուցե օրվա մեջ միայն մի ժամ,

միայն առավոտյան այդ մի ժամն է ձգվում-մեկնվում, գրգռանք վայելում Բիշոֆսբերգը՝ ծույլ, դանդաղկոտ, սակայն արդեն արթնացած, ձգվում-մեկնվում է ու աչքերը կկոցում Լաուշեի վրա։ Այդ ժամին վարդագունում են լվացված սալարկները, վարդագունում են արահետների հախճասալերը, դռների բռնակները, վանդակապատերի և ցանկապատերի ելունդները, տների պատերը, տանիքների սայթաքուն կղմինները։ Այդ ժամին երկնքում երևվում է Հովհաննես Ավետարանչի ամբողջապես վարդագունած կիրկան, և հանկարծ բացվում է մռայլ ռատուշայի ատամնավոր աշտարակը։ Նրա հին ժամացույցի թվատախտակի սև թավշի վրայով բարձրանում է ոսկեփայլ սլաքը՝ վեր, շարունակ վեր, իր փայլուն սուր ծայրով ավելի ու ավելի մոտենալով վերևի ոսկե կետին։ Ահա գրեթե վեր մագլցեց, արդեն շտկվեց, կանգ առավ։ Եվ քաղաքի վարդագույն, լողացած մարմնի մեջ, ասես երկնքից, լցվում են քնատ-անշտապ զողանջներ.

Զ-զոն-նէ,
Զ-զոն-նէ,
Զ-զոն-նէ,
Զ-զոն-նէ։

Արև։

Եվ ահա, եթե այդ ժամին, օրվա այդ միակ ժամին, երբ Բիշոֆսբերգը գգվում ու ձգվում-մեկնվում է, աչքերը կկոցելով Լաուշեին, եթե այդ ժամին Հովհաննես Ավետարանչի կիրկայի մեծ զանգը զողանջի՝ ո՞վ չի բացականչի, թե Գերմանիան կենդանի է, ո՞վ չի շշնջա, թե նա գեղեցիկ է, ո՞վ չի մտածի, որ՝

Գերմանիան չի կարող այլ լինել։

Եվ հանկարծ...

— Լսեցե՛ք, լսեցե՛ք, թանկագին հերր խմբագիր։ Մեր վիճակն ի՞նչ կլինի, ինչպե՞ս կլինի, Գերմանիան ի՞նչ կլինի, եթե այսպես շարունակվի։

— Հանգստացեք, հերր դոկտոր։ Հանգստացեք։ Մենք անում ենք ամեն բան, ինչ ներում են մեր ուժերը։ Մենք պետք է դիմանանք և կդիմանանք, մենք գերմանացի ենք։

— Սակայն հերը խմբագիր...

— Հերը դոկտոր, արդեն տասներկուսից քառորդ է պակաս։ Գնանք ռատուշա։

Հրապարակի վրա է իջել գազաեղջյուրիկների աղոտ լուսագոտին։ Նրանք դետնի վրա էին սփռում լույսի սպիտակ սփռոցներ։ Ահա այնտեղ, անկյունից դուրս լողաց լանդշտուրմիստի գորշ շինելը ու ձուլվեց մթության մեջ։ Գույնզգույն ապակիներով զուգված պատուհանիկով նկուղից դուրս թռան օպերետային նվագի պատառիկները։ Ինչ-որ տեղ դուռ շրխկաց։ Լռություն է։

Եվ ահա ծանոթ հինավուրց կերկերահնչուն արպեջիոները գիշերվա մեջ թաքնված ռատուշայի աշտարակից։ Քառորդը, մյուսը, երրորդը, չորրորդը։ Ահա դադար, մեռյալ, ինչպես հրապարակը։ Ահա զսպանակի խզխզոցը։

Եվ ահա քնատ-անշտապ զողանջները.

Զ-զոն-նէ,
Զ-զոն-նէ.

Կեսգիշեր։

Եվ հանկարծ կրկին քառորդը, մյուսը, երրորդը, չորրորդը։

Դադար։ Զսպանակի խզզոց։

Եվ անշտապ, տանջալից, միայնակ.

Զզ-զզոն-նէ։

Բժիշկն ասաց.

— Մութ է։

Եվ մի քիչ անց.

— Ոչ ոք չկա։

— Ժամը երկուսն է,— պատասխանեց խմբագիրը,— ուշ է։ Սլաքի տեղափոխումն արդեն բազմություն չի հավաքում։

— Մենք... մենք կարծես շտապում ենք, կարծես շտապում ենք... Պատերազմից ժամանակ ենք խլում...

— Այսինքն՝ ինչպե՞ս։

— Այս մեկ ժամվա ընթացքում ոչ ոք չի սպանվել։ Այս մի ժամով մոռանում ենք... խաղաղությանը։

— Ես հաշվում էի, հերը դոկտոր, հաշվում էի, որ ժամացույցի սլաքի հետ կապված այս միջոցառումով պետությունը խնայում է տարեկան վեցից մինչև վեց և կես տոկոս վառելիք։ Դուք գիտե՞ք, թե բացարձակ թվով դա ինչ է կազմում։

— Ձեզ չի՞ թվում արդյոք, որ մենք... հուզված ենք, մենք՝ գերմանացիներս։

— Արդեն ուշ է, հերը դոկտոր։ Ցտեսություն։

Լռություն։ Լապտերավառը քայլում է երկար փայտը ձեռքին, գետնից հավաքելով մի լապտերից ընկած լույսի կլոր սփռոցները։ Երկու սև, կծկված կերպարանքներ հալվում են հրապարակի հակադիր ծայրերում։ Ռատուշայի աշտարակը չի երևում։ Սակայն այն այստեղ է։ Այն այստեղ է...

— Սլաքի տեղափոխումն արդեն բազմություն չի հավաքում,— ասաց խմբագիրը գիշերը, ռատուշայի մոտ։ Սակայն նա չասաց, թե ինչ պատահեց կիրակի օրը պատարագից հետո, հրապարակում, Հովհաննես Ավետարանիչի կիրկայի մոտ։ Նա այդ մասին հոդված գրեց և տեղավորեց լրատուի սկզբում. և այն կարդացին բոլորը, և ովքեր եղել էին կիրկայի մոտ, և ովքեր չէին եղել։ Սակայն լավ է, միշտ ավելի լավ է տեսնել, քան կարդալ։

Զանգակատան կողմից կիրկան ցանկապատված է բացգույնի խեժոտ տախտակներով։ Կարճ թիկնոցներով շուցմանները, ցանկապատից տասը քայլ ետ քաշվելով, լուռ գծերով նշում են արգելված դաշտը։ Նրանց անձայն, թեք մեջքների ետևը երևվում են կոտելոկներ, սև կրեպով կանացի գլխարկներ, զինվորների խունացած անհովար գլխարկներ, սպայական սաղավարտների պաշտպանական ծածկոցներ։ Ամենից շատ են կանացի գլխարկները։ Ամենից շատ սև կրեպն է։ Սև կրեպը ծածանվում է քամուց, ծածկույթի պես իջնում գետնին, մռայլ թևերով թռչում կոտելոկների, անհովար գլխարկների և սաղավարտների վրայով, ծածկում ուսերը, գլուխները և մեջքերը, ծածկում դեմքերը, կառչուն ձեռքը, նակապանքի նման գրկում է թևքերը. ծածանվում է, ելներում, լողում է օդում սև կրեպը։ Ահա այն լայն հոսանքով դուրս թափվեց կիրկայի դռնից, ահա այդ խաղաղ կույտը գլորվում է գլխավոր մուտքով, տարածվում հրապարակում, ողողում

այն հավասարաչափ, մոայլ, սառն, ինչպես դամբարանը։ Դեմքեր՝ շրթունքները բաց, դեմքեր՝ կնճռոտ, մագաղաթյա և հողագույն, ծալքերով, խլերով, սպիներով. դեմքեր՝ ճերմակ մազափնջերով երիզված. դեմքեր՝ փափուկ, կլոր, ինչպես արևածաղիկը— սև կրեպի պարարտ դաշտի վրա դեմքերի մի ամբողջ արոտատեղի նետվեց դեպի Հովհաննես Ավետարանիչի զանգակատունը։

Այնտեղ, պատուհանից դուրս հանված կարճ ծպեղների վրա դրված է կանաչագորշավուն մեծ զանգակը՝ պարաններով փաթաթված, որոնցից կառչում են փոքրիկ դանդաղկոտ մարդուկները։

Գլխավոր մուտքից դուրս գլորվեց սև կրեպի կույտը, դռան մեջ երևաց քահանան և նրա կողքին՝ շտադտրատն ու քաղաքի մյուս աստիճանավորները, քաղաքի պարետն ու ռազմագերիների ճամբարի պարետը, սպաները, միությունների պրեզիդենտները՝ այն անձինք, որոնց միշտ հարգել է Բիշոֆսբերգը և որոնց չի կարելի չհարգել։

Եվ այն ժամանակ Հովհաննես Ավետարանիչի կիրկայի զանգակատանը, ինչ-որ տեղ հեռվում աննկատելի թպրտաց փոքր զանգակի բարակ, անհանգիստ կանչը, փոքր զանգի, որ երբեք չէին խփում կիրակի օրերը, իսկ մեծ զանգի կանաչագորշավուն իրանը հանգիստ մեկնվել էր ծպեղների վրա՝ լայն երախը բացած դատարկ երկնքին հանդիման։

Հետո այդ երախը մոտեցավ ծպեղների եզրին, փոքրիկ մարդուկները թաքնվեցին զանգակատան խորքում, անձինք, որոնց միշտ հարգում էր Բիշոֆսբերգը, գլխավոր մուտքից իջան և կանգնեցին շուցմանների լուռ թիկունքների ետև։ Շտադտրատը թաշկինակը դանդաղ բացեց ու թափահարեց իր գլխավերևում։ Մեծ զանգի լայն երախը թեքվեց մինչև ծպեղների ամենածայրը ու մի պահ կախ ընկավ անդունդի վրա։

Իսկ փոքրիկ զանգը քամուն էր խառնում իր անհանգիստ, ականջ ծակող կանչը, խեղդվելով, խառնելով, կտրատելով իր հարվածները, ասես մահամերձի սարսափով գթություն էր աղերսում։ Եվ այնժամ մի սև ստվեր վերևից վար սահեց զանգակատնով ու ցած նետվեց դեպի ցանկապատը։

Եվ եղավ այնպես, կարծես գետինը բացվեց ու աշխարհը փլվեց։

Եվ տիրեց լռություն. լսվում էր, թե ինչպես էին սուլում

ջրածիծառները Հովհաննես Ավետարանիչի կիրկայի վրա, քանի որ փոքրիկ զանգի կանչը լռեց, և բոլորը լուռ էին...

Այդ օրը Բիշոֆսբերգում տղամարդիկ հանում էին դռների բռնակներն ու փականքները, հանում էին վանդակապատերի և ցանկապատերի վրայի պղնձե ելունդները և կղմինդրե տանիքների զարդաձիերին ամրացված շանթարգելները, իսկ կանայք խոհանոցում ու նկուղներում մի անկյունում կուտակված էին արույրե գավաթներն ու կաթսաները, պղնձյա թասերն ու սրճամանները։

Օրն անցավ։ Եվ անցավ գիշերը։ Լաուշեի միդամած կատարից գլուխը բարձրացրեց ծերուկ բարի արևը, և Բիշոֆսբերգը վարդագունեց, ինչպես քնից նոր արթնացած ու դեռատակի պաղ ջրում լողացած աղջնակը։

Սակայն ո՞վ տեսավ, ո՞վ տեսավ, որ այդ ժամին, այդ միակ ժամին, երբ Բիշոֆսբերգը գգվանք է ապրում, ձգվում-մեկնվում, աչքերը կկոցում Լաուշեի վրա, ինչպես այդ ժամին Հովհաննես Ավետարանիչի կիրկայի զանգակատունը ցնցվեց, ու դողաց ծերուկի կնճռոտ, սափրված դեմքը. նա կանգնել էր այն ցցագերանների տակ, որոնք դեռ երեկ պահում էին մեծ զանգը։

— Ձեզ չի՞ թվում արդյոք, որ մենք... հուզված ենք, մենք՝ գերմանացիներս։

Համերգից հետո կցուցադրվեն պրոտեզների նորագույն կատարելագործությունները՝ հետևյալ ծրագրով.

1) Հեծանիվ վարելը, սանդուղքներով իջնել և բարձրանալ («Ֆենիքս» արտոնագրով պրոտեզներ՝ ծնկից վեր անդամահատված ոտքերի համար)։ Կատարում է՝ եֆրեյտոր Մաքս Ֆիշերը։

2) Գրամեքենայով աշխատել («Ֆորվերտս» արտոնագիր՝ անդամահատված դաստակներով ձեռքերի համար)։ Կատարում է՝ ենթասպա Ֆրանց Դ։

3) Աշխատել՝ բահով, կացնով, փոցխով, մուրճով, ռանդայով և սղոցով («Deutsche Würde» արտոնագիր՝ արմունկից վեր անդամահատված ձեռքերի համար)։ Կատարում են՝ շարքայիններ Հանս Լեբենը, Հանս Ֆորստը, Էրիխ Յոչկեն։

4) Սիգար փաթաթել («Deutsche Würde» արտոնագիր՝ մինչև ուսը անդամահատված մեկ ձեռքի համար)։ Կատարում է՝ շարքային Օտտո Բախը։

Վերջում առողջացողների խումբը կկատարի հայրենասիրական

երգեր և կներկայացնի «Օրհնյալ լինես, Գերմանիա» կենդանի պատկերը։

Տեր իմ,
պատժիր
Անգլիային

Ծրագրի ամենածայրը՝ սև-սպիտակ-կարմիր զարդերիզով շրջանակված ուղղանկյունիով, բացվել ու ցցվել էր սեղանին, թերթերի խայտաճամուկ սյունակների միջև։ Ուղղանկյունին ճշգրիտ էր, ինչպես երկրաչափության դասագրքերում, և զարդերիզի ներկերն էլ ճիշտ էին, ինչպես ակնաբուժարանի աղյուսակի վրա՝ բոլորովին սև, բոլորովին սպիտակ, բոլորովին կարմիր։ Եվ ուղղանկյան մեջ հավասար շարվում էին ստույգ, ինչպես մաթեմատիկայում, բառերը.

Տեր իմ,
պատժիր
Անգլիային

Շղարշե վարագույրների միջով սեղանատուն էր հորդում արևը, խառնվում սեղանին բացված ու թափթփված լրագրի թերթերին, խայտաճամուկ խաղ անում աթոռների հյուսակեն մասում, ընկնում ամանեղենի, սեղանի ոտքերի վրա, և սև-սպիտակ-կարմիր զարդերիզը վառվում էր նրա փայլի տակ, ինչպես շքանշանի մետաքսե ժապավենը։

Ֆրաու Ուրբախը պումպերնիկելի բարակ կլորիկ շերտին էր քսում Շվեյցարիայից ուղարկված կամամբերը, լցնում էր սուրճն ու կկոցած աչքերը սահեցնում լրագրերի վրայով։ Նա արդեն պատմել էր այն մասին, թե ինչպես հիվանդանոցում, հասարակական բարեգործների համար կազմակերպված համերգում, անոտ ու անձեռն մարդիկ հայրենական տեխնիկների և օրթոպեդների օգնությամբ փայլուն կերպով հերքեցին տարածում գտած այն մոլորությունը, թե իբր ծայրանդամները կորցրած մարդը աշխատանքի համար ոչ պիտանի հաշմանդամ է։ Պատմել էր և այն մասին, թե ինչպես առողջացողները ոգևորությամբ երգեցին պրուսական անթառամ

հիմնը՝ «Հռենոսի պահպանը», որն անտարակույս ապացուցում է հասարակ ժողովրդի ինչպես հայրենասիրական զգացմունքները, այնպես էլ երաժշտական ընդունակությունները։

— Ինչ-որ մեկը շատ ճիշտ ասել է, որ այդպես երգող ժողովուրդը չի կարող բարբարոս ժողովուրդ լինել։ Նրանք հիանալի երգեցին։

Հերր Ուրբախը փոթկաց ու ասաց.

— Ես կարդացել եմ տաժանակիրների մասին։ Նրանց երգերն առանց արտասուքի լսել չի լինում։

— Դա մի որևէ ռո՞ւս է գրել։

— Չեմ հիշում,— պատասխանեց հերր Ուրբախն ու նայեց աղջկան։

Խոսակցությունը դրանով ավարտվեց, և ֆրաու Ուրբախն զբաղվեց իր պումպերնիկելով, կամամբերով և լրագրերով։

Հանկարծ նա սևեռուն նայեց մի փոքրիկ հայտարարության։ Հետո վերցրեց լրագիրն ու սեղանի վրայով մեկնեց այն.

— Ֆրոյլայն Մարի, ընդգծեցեք, խնդրեմ, մատիտով ահա այս։

Մարին կարդաց.

ՀԵՐԻԵԳՍԴՈՐՖ։

Մովայինն և արևի լոգանքներ։ Հիանալի թավ անտառով ճարուստ գերմանական ծովափի առողջարանը բաց է, ինչպես խաղաղ ժամանակ։

Հիվանդանոցներ այստեղ չկան։

Մանրամասն պլանները ուղարկում է առողջարանի վարչությունն, անվճար։

Սեզոնը հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը

Հերր Ուրբախը Մարիին նետեց մատիտը։ Մարին ժպտաց։ Խաչիկով նշեց հայտարարությունը, տեղից ելավ.

— Մայրիկ, եթե դուք կուրյոզներ եք հավաքում, կարող եմ ձեզ օգնել։

— Կուրյոզնե՞ր։ Լավ չեմ հասկանում, Մարի։

Հերր Ուրբախը գլուխը բարձրացրեց լրագրերից։

— Որևէ հետաքրքիր բա՞ն է։

— Առանձնապես ոչինչ։ Մայրիկն ուզում է մի քիչ հանգստանալ հերոսներից։

— Ա՜,— արտասանեց հերը Ուրբախը,— հասկանալի է, հասկանալի։

— Ֆրոյլայն Մարի, իմ կարծիքով վերջերս ձեզ վատ է հաջողվում հարկ եղած բառերը գտնել։

— Ես այդ չեմ զգում, մայրիկ։ Շնորհակալություն։

Եվ դարձյալ կնիկսենը, որից հետո ուզում ես դուռը շըխկացնել, նետվել անկողին ու բարձը կրծոտել, ինչպես մի ժամանակ միսս Ռոնիի պանսիոնում։

Միջանցքում կամացուկ զանգ է լսվում։ Արդեն երկու տարի է, ինչ Մարին հետևում է այդ զանգերին։ Նա ուսումնասիրել է դրանք ու հատկապես լավ է ճանաչում առավոտները, կեսօրին և երեկոները տրվող զանգերը։ Վատ չի լինի մյուսներից շուտ նայել փոստը։ Մարդ հո մի՞շտ չէ այնպիսի նամակներ ստանում, որոնք չի շտապում բացել։ Միշտ չեն այնպիսիները, որոնց մասին երկար մտածում ես։ Կամ էլ ահա ինչպես սա՝ լայն, առանց նամականիշի, դրոշմակները, կնիքները, մակագրություններն ամբողջապես ծածկել են ասեղների նման սուր տառերը.

Ձերդ գերազնվություն Ֆրոյլայն...

Փողոցն ինչո՞ւ լռեց, և պատի ժամացույցը դադարեց վայրկյանները խփել։ Անիծյալ՝ կնիկսենը։ Այդ կապիկավարի ծնկածալումից արյունը խփում է քունքերն ու այրում, ինչպես շիկացած պողպատը։ Եվ ինչո՞ւ միայն մոր առջև։ Ուրիշ ոչ մեկի, երբեք, միայն մոր առջև։ Զզվելի է, հիմար, գարշելի։ Պետք է դուռը փակել, պատուհանը լայն բանալ, լուռ ու հանգիստ ծխախոտ ծխել։ Որքան հիմար բան է։ Սակայն վերջ ի վերջո մի՞թե միևնույն չէ։ Դեհ, կենդանի է, հետո ի՞նչ։

Այստեղ միսս Ռոնին ի՞նչ գործ ունի, մայրն ի՞նչ գործ ունի։ Հիմարություն է։

27 ապրիլի 1917 թ., Ռուսաստան։

Մեծարգո Ֆրոյլայն Մարի, դուք, իհարկե, հասկանում եք, որ ես ի վիճակի չեմ հայտնելու ձեզ այն բոլոր հանգամանքները, որոնք ինձ բերին այստեղ, որտեղից վերջապես գրում եմ ձեզ, և այն բոլոր զգացումները, որ կուտակվել են մեջս այստեղ գալուց հետո։ Ես ջանում եմ ներկա վիճակում էլ արժանավոր զբաղմունք գտնել ինձ համար, թեև դա միշտ չի հաջողվում։ Սեփական անձիս վրա աշխատելու ցանկությունը և ձեր մասին մշտական հիշողությունը, Ֆրոյլայն Մարի, երբեք ինձ չեն լքում, իսկ այդ, դուք գիտեք, միշտ կենարար աղբյուր է եղել ինձ համար։ Սկսել եմ ուսումնասիրել ռուսերենը և կարծում եմ, որ դա ինձ կօգնի ավելի լավ ճանաչելու այն ժողովրդին, որ շրջապատում է ինձ, և որի ուսումնասիրությունը, համոզված եմ, շատ արժեքավոր կարող է լինել քաղաքակրթված մարդու համար։ Առայժմ ուշադրություն գրավել է ռուսների մի գիծը, որ հենց իրենք բնորոշում են մեր «բարությունը» կամ դրան շատ մոտ հասկացողությամբ։ Ոժբախտաբար տեղի տեսակետից կաշկանդված եմ ձեզ ավելի մանրամասն գրելու։ Ուսումնասիրում եմ նաև մի փոքրիկ ժողովրդի, դրանք կոչվում են մորդվացիներ, ֆիննական ծագում ունեն։ Ճամբարը, որի հասցեն կգտնեք ծրարի վրա, գտնվում է խուլ տեղում և շրջապատված է մորդվացիներով բնակեցված գյուղերով։ Ես չեմ հիշում, թե մեր գիտնականները մանրամասն կանգ առած լինեն այդ կիսահեթանոսական ցեղի ուսումնասիրության վրա։

Այստեղ ձյունը տեղ-տեղ դեռ չի հալվել։ Իմ մի բարեկամիս օգնում եմ հերբարիում կազմել, որին նա ձեռնամուխ եղավ ձնծաղիկների դուրս գալուն պես։ Տոն օրերին նկարչությամբ եմ զբաղվում և կարող էի ձեզ գծանկարների մի ամբողջ հավաքածու ցույց տալ, դրանք շատ նման են այն նկարներին, որ միասին էինք անում Շենաուում։ Չէի՞ք կամենա արդյոք մեկնել Շենաու և գրել ինձ ձեր տպավորությունները։ Հատկապես նկարների մասին։ Շատ եմ խնդրում, Ֆրոյլայն Մարի։ Սրտագին ողջույն հաղորդեցեք ձեր ծնողներին։ Թույլ տվեք համբուրել ձեր ձեռքը։

Խորապես ձեզ նվիրված, ձեր Մաքս ֆոն Շենաու։

Եվ ստորագրությունը՝ թեք ու հաստ, պինդ նեցուկ սրածայր տողերի շարքին։

Երբեմն այլ նամակներ են գալիս, բոլորովին այլ...

— Մարի, ինչո՞ւ եք փակվել։ Դուռը բացեք։

— Մայրիկ, գլուխս ցավում է։

— Այդպե՞ս։ Ես տեղեկանք եմ ստացել Կարմիր խաչից։ Մարկգրաֆը գտնվում է սպայական ճամբարում... Նայեցեք, այս հիմար խոսքը չեմ կարողանում կարդալ... Հավանաբար ինչ-որ տեղ, Սիբիրում։ Սակայն... դուք մի՞թե այդքան դաժան եք...

— Սոսկալի գլխացավ ունեմ։

— Իրոք, այս դարակին մի ամբողջ կույտ նոր գրքեր եմ տեսնում։ Ստիպված եմ նույն բանը ձեզ մի քանի անգամ ասել... գուցե դուք, համենայն դեպս, գրեի՞ք մարկգրաֆին։ Ահա տեղեկանքը։

Անձայն, ինչպես կինոյի էկրանի վրա, շարժվեց ֆրաու Ուրբախի զգեստը և, ինչպես էկրանի վրա, նա իր ետևից փակեց դուռը։

Այո, մի ամբողջ կույտ նոր գրքեր։ Հենց դրանք են, դրանք՝ անդավաճան, խորհրդավոր, դրանք են կողոպտում կյանքը, և դեռ բոլորն ասում են, իբր գրքերը հարստացնում են կյանքը։ Սակայն ինչ երջանկություն է, երբ քեզ ամայացած ես զգում նրանց չտեսնող ու անշարժ հայացքից։ Որքան ուրախալի է, երբ ժամեժամ, օր-օրին տրվում ես նրանց, քանի որ մարդու ինչի՞ն են պետք այդ ողորմելի օրերն ու ժամերը։

Չէ որ այն ժամը, որի համար ապրում է Մարին, այնքան հազվադեպ է գալիս, և դրանից հետո եկող օրերը խավար են, տափակ ու դատարկ։ Այդ ժամը գալիս է մինչև գազաեղջյուրիկների վառվելը, երբ Բիշոֆսբերգի քարե նեղ անցուղիներում դժվար է տղամարդուն կնոջից տարբերել։

Այն ժամանակ Մարին սահելով անցնում է հին տների խավար-գորշ ճակատամասերի առջևով, մութ փողոցներով, որոնք ռատուշայից սև հնգամատի նման ձգվում են դեպի լոտպրոմենադները։ Ճանապարհները կտրելով, նա շրջանցում է կրպակների և ռեստորանների նարնջագույն և կաթնաներկնագույն պատուհանները, կանգ է առնում, նայում մթության մեջ, հանկարծ ետ է դառնում, թաքնվում ծառի ետևը։ Հետո

քայլում է կամացուկ, հետո գրեթե վազում է, նորից սահում է հարթ պատով։

Հերկուլեսի հրապարակում, շատրվանի դիմաց, ծանր դուռ է՝ բարոկկոյի դանակով և տարիներից փորփրված։

Դռնից ներս։ Հետո սանդուղքով՝ վաթսունչորս աստիճան, եթե զույգ-զույգ բարձրանաս՝ երեսունչորս քայլ։ Եթե դաս ճիշտ ժամին՝ ուղիղ ութին՝ ռատուշայի ժամացույցով, բացարա չորրորդ հարթակի մուտքը։ Ներս մտիր։ Միջանցքով։ ուղիղ։ Այնտեղ է։

Միայն երեկոյան ճի՛շտ ութին, ռատուշայի ժամացույցով Մարի՛։

Միայն ճի՛շտ ժամին, Մարի՛։

Ֆյոդոր Լեպեշինսկի

Երբ կնոջը թևանցուկ արեցին, նա սուր ճչաց ինչ-որ խոսք։

Նրանցից, ովքեր կարող էին այդ խոսքերը հասկանալ, ոչ մեկը չլսեց, չհասկացավ։

Եվ միայն սեխանման գլխով, թրթուրի նմանվող խորդուբորդ շրթունքներով մարդը շշնջաց.

— Ճիշտ է...

Նա գլուխը թեքեց և երկար նայում էր հարևանի կլոր ծոծրակին։

Աչքերն սկսեցին թարթել, անդույն հոնքերը անհանգիստ շարժվեցին, ակոսելով ճակատն ու շարժելով ականջի ծայրը։ Նա հառաչեց։ Հետո վերմակի տակից ձեռքերը հանեց, դրեց գլխատակը և սկսեց շշմած հայացքը պտտեցնել բարձր առաստաղի քիվերով։ Հետո ննջեց։

Եղե՞լ էր արդյոք այդ։ Եվ եթե եղել էր, ապա ե՞րբ։

Նստել էր նա թախտին, բոբիկ ոտքերը տակը ծալած։

Խրճիթը լավ տաքացրած էր՝ հաց էին թխում առաջին աղացվածքից. սպիտակ դռնակի և ձողի վրա տաքանում էին աշնանային շշմած ճանճերը. դարակի վրա հացերը ծածկած էին գորշ սրբիչների վրայով սողում էին ուտիճները։ Տաքթանե

կալսած հացահատիկ, վերադարձավ ուշ, երկար նստեց սեղանի մոտ՝ ոչխարի մսով ապուրն էր խմում, ոսկորները ծծում, հաց կտրում։ Երբ կշտացավ, նստարանից ելավ նստեց անկողնուն, ծածկոցի տակ, և մայրն օգնում էր նրան սապոգները հանել։ Հետո հայրը ազատ փռվեց մահճակալին, քորվեց ու կոնչաց։ Կանչեց մորը.

— Հայդա, հը՞...

Քիթը վեր քաշեց։

— Լա՞վ է...

Մայրը կանգնած էր մեջքով դեպի անկողինը, սեղանին կոթնած, մատները թքոտելով թերթում էր երգարանը։ Երգեց։

— Կաց, հիմի...

Սոճու մահճակալից, առաստաղից կախված օրորոցից և պատերից թունդ բուրում էր, ինչպես ազնվամորու թփերից։ Առաստաղը ցածր էր, սև, և նրա տակ նստելը հուսալի էր, այն պինդ փակել էր խրճիթի հոտերը. դրանք դուրս գալու, շարժվելու տեղ չունեին, մնացել էին թանձր, կիպ, ճխտված՝ փայտոջիլի, հացի, ուտիճների, վառարանի, ֆատանաֆտելի հոտերը։

Հայրն ասաց թավ ձայնով.

— Էյ, լսո՞ւմ ես, մի կես մանեթ վար դրի էնտեղ...

— Փա՞ռք աստծու,— արձագանքեց մայրը, լամպը հանգցրեց ու սկսեց հանվել։

Եղե՞լ էր դա արդյոք։ Իսկ եթե եղել էր, ապա ե՞րբ, Ֆյոդոր Լեպենդինը տարածեց ուռած ձեռքերը։

Նրա հարևանին՝ կլոր սև գլխով, դրեցին պատգարակը, սավանով ծածկեցին ու— հանգուցյալին— հիվանդասենյակից դուրս տարան իր անկողնու սպիտակեղենի հետ։

Լեպենդինը խաչակնքեց։

Եվ ահա հանկարծ նրա ձեռքերը վեր նետվեցին։ Մի քիչ պառկեց, ասես ինքն իրեն չհավատալով։ Հետո մատներով բռնեց մահճակալի գլխավերևի երկաթյա ձողերն ու ձգվեց։ Ձեռքերը արմունկների մասում ճրթճրթացին, շապիկը ուսերին ծալքերով խրվեց մարմնի մեջ։ Լեպենդինը կոնչաց...

Այսպես պատահեց։

Երբ թույլ գրոհը ետ մղեցին ու սկսեց լուսանալ, պրապորշչիկը հրամայեց ջոկապետ Ֆեոդոր Լեպենդինին ուղղել շրջադիտակը։ Հարկավոր էր գործիքը բարձրացնել, նեցուկ տալ տաշած փայտերով, ուղղել գերմանացու կողմը։

Եվ ահա երբ Լեպենդինը, գլուխը գետնին հավասարեցրած, բահով փորում էր խրամատի հողաթումբը, իր առջև, մի հարյուր քայլի վրա տեսավ հողակոշտի վրա ցցված ոտքեր։ Դրանք մկրատի նման էին, ծայրերը դեպի երկինք տնկած, իսկ մարմինը, որին պատկանում էին չէր երևում հողաթմբի ետևում։

Խրամատում լռություն էր, զինվորները գորշ, կպչուն կույտերով սեղմվել էին ծղոտե փոցներին, քնած էին։

Լեպենդինը հրացանը հենեց շրջադիտակին, վեր մագլցեց, հողաթմբից այն կողմ անցավ և սողաց։

Բացատում, խրամատի առջև, այս ու այնտեղ դարնանային թութ գոլորշիներ էին բարձրանում, ինչպես հանգած խարույկներից։ Լեպենդինը շուտով սրդաց մինչև հողաթումբը։ Ուղիղ նրա առջև ցցվել էին ոտքերը։ Սապոգները զինվորի էին, կարճ, դեղնավուն կաշվից՝ կրունկներին պայտեր, կոշկատակին մի մատի հաստության ժանգոտած մեխեր։

Առանց գետնից բարձրանալու, հողաթմբով պաշտպանված, Լեպենդինը երկու ձեռքով բռնեց մի ոտքը ու ցած քաշեց։ Ոտքն սկսեց դժվարությամբ ենթարկվել, ինչպես չօգտագործվող, լքված ջրհորի բարձրացնելու սարքը։ Զինվորի ոտնաթաթը վեր էր ծռված, և սապոգը դուրս չէր գալիս։ Լեպենդինը ծունկը հենեց կրունկին և սեղմեց ոտքի քթամասը։ Սապոգի մեջ մի բան ճրթաց։

— Վահ, չլինի՞ սպանված պրծած չես։

Լեպենդինը սողալով շրջանցեց հողաթումբը, նայեց դրա ետևը։ Նրան ժպտաց մի սպիտակ, անբեղ-անմորուք դեմք՝ դուրս պրծած երկնագույն աչքերով։ Քունքի մոտ, սուր ծայրով հողի մեջ խրված, շրջված ընկել էր սաղավարտը։

Լեպենդինը սողաց հողաթմբի ետևը, թքեց ձեռքերի մեջ ու սկսեց սպանվածի սապոգները հանել։ Երկար շարչարվեց, քրտնեց, կրունկի պայտից մատը քերծվեց, արյունոտվեց։

Ավարը ծոցը խրելիս հողաթմբից կախված ոտքերին գուլպաներ տեսավ։ Դրանք էլ հանեց, կոխեց գրպանը։ Երբ նկատեց անգլիական քորոցները, որոնք խանգարում էին գուլպաները հանել, բացեց դրանք։ Մի քորոցը վայր գցեց, մյուսը կպցրեց շինելին, Գեորգիևյան շքանշանի տակ։

Ետ սողաց։

Սակայն իսկույն էլ կանգ առավ, սապոգները դուրս քաշեց, զինվորական բլուզի գրպանից հանեց մատիտը, սապոգի ճիտքը ետ ծալեց, լավ թքոտեց և, հարմար պառկելով, գրեց.

Բրանդենբուրգյան 137-րդ հետևակ գնդի 4-րդ վաշտի 2-րդ ջոկապետ Ֆյոդոր Լեպենդինին։

Եվ հանկարծ, անսպասելի կերպով, երբ սողալով արդեն գրեթե հասել էր խրամատին, ոռնոցով նրա վրա նետվեց հողակոշտերի մի տարափ, և ծածկեց ոտնաթաթերը։

Լեպենդինի ծնկները ուղղվեցին, նա գլուխը ետ գցեց, արմունկներն սկսեց արագ աշխատեցնել։ Սակայն ոտքերը, ասես գետնին կպած, չէին շարժվում, և նա պտտվում էր տեղում, ինչպես հողի մեջ խրած սոնու անիվը։

Երկնքում արագ ճախրում էր ագռավների խառնիխուռն մի երամ։

Եվ վերջին բանը, որ Լեպենդինը հասկացավ, հետևյալն էր՝ աշխատում էր միայն մի ձեռքը, մի արմունկը։

Լեպենդինն ուշքի եկավ հավասարաչափ ցնցումներից։ Նրա առջև երերում էր մի կլոր մեջք։ Բաց գույնի շինելի կիսագոտին երկտակ էր, մեջտեղում մուգ գույնի կոճակով։ Սայլապանի անհովար գլխարկի բոլորքը նեղլիկ էր, գագաթամասը՝ կարճ։

Լեպենդինը բղավեց։

Սայլապանը շրջվեց, մի շատ երկար խոսք ասաց։ Լեպենդինը նրան չհասկացավ, ուրիշ բան հասկացավ, հառաչեց։

Հետո ուշքի եկավ հոսպիտալում։ Մարմնով մեկ հոգնություն էր տարածվել, սակայն լավ էր, ուտելու ցանկություն էր զգում։

Ընտրեց մի դեմք, որ իրեն դուր եկավ, հարցրեց.

— Թույլ տվեք հարցնել, ձերդ բարեծննդություն։ Ես հա-

գուստունեի, սապոգները էլ, բոլորովին նոր, մեխերով։ Դրանք կա՞ն, թե ոնց է։

Հաստապոռը՝ բժի՞շկ էր թե բուժակ, արնաբծերով կեղտոտված խալաթով, աչքերը կկոցեց և, ասես լեզուն մի բանի դիպցնելով, պատասխանեց.

— Իֆան գլխարկ ի՞նչ պետք, թե Իֆան գլուխ չունի։

Եվ այդ էր բոլորը։

Լավ հիշում էր, ինչպես դաշտային հոսպիտալում նրա ոտնաթաթերը կտրեցին։ Ձեռքը շուտ լավացավ. ուսն էր վիրավորվել, փափուկ միսը, վեցերորդ օրը վիրակապը հանեցին։ Երբ սկսեցին էշելոն կազմել, ճամբար ուղարկելու համար, Լեպենդինի ողջերոցքը բռնեց։ Այդ էշելոնով, ապրանքատար վագոններով գնացին նրա գնդի մարդիկ, դրանց թվում նաև այն պրապորշչիկը, որը Լեպենդինին կարդարեց ուղղել շրջադիտակը։ Այստեղ Ֆյոդորը հասկացավ, որ այդ պրապորշչիկն էր ամեն ինչում մեղավոր՝ և որ իր՝ պրապորշչիկի վաշտի ջոկապետի ոտքերը կտրեցին, և՝ որ գերմանացիները գողացել էին նրա՝ ջոկապետ Լեպենդինի կաշվե սապոգները՝ մեխերով ու պայտոզ։

Լեպենդինին ճամբար ուղարկեցին սանիտարական վագոնով, էշելոնի մեկնելուց մի օր հետո։ Վագոնում նրա երկրացիներն էին պառկած, բոլորը ծանր վիրավորներ, և Լեպենդինը, թեև ոչ մի ցավ չէր զգում, սկսեց տնքալ, վախենալով, թե գերմանացիները գլխի կընկնեն ու իրեն ցած կգցեն սանիտարական գնացքից։ Լեպենդինին այնքան էլ հարմար չթվաց, որ կողքին սպաներ էին՝ ճիշտ է, անգիտակից վիճակում, նիհարիկ, նույնպիսի հիվանդանոցային սպիտակեղենով, ինչպիսին իր հագին էր։ Նրանք տնքում էին ոչ ինչպես պետքն է՝ ընդհատումներով ու անձայն շնչեղությամբ, և Լեպենդինի համար հաճելի էր, որ ինքը նրանցից լավ է տնքում։

Առավոտները գալիս էին բժիշկները, նրանց ետևում կանգնած քույրերը գրքույկների մեջ գրանցում էին բժիշկների ասածը։ Օրական մեկ-երկու անգամ վիրավորներին դուրս էին տանում վագոնից, ապա ետ բերում իրենց հին տեղը, իսկ երբեմն էլ տեղը դատարկ էր մնում։ Գնացքը ինչ-որ հեռու տեղ էր գնում, կարճ, արագ անցուրդներով, երկար կանգ առնելով կայարաններում։

Մի անգամ լուսաբացին Լեպենդինը դադարեց տնքալ։ Առավոտյան շրջայցից հետո նրան տարան հարևան վագոնը, մի ժամից ետ բերեցին, իսկ իրիկնադեմին ուշքի եկավ։

Տենդը նրան այլևս չէր ցնցում, և տնքալը ձանձրալի էր։ Շուտով Լեպենդինն իմացավ, որ իր ոտքերը կտրել են մինչև ծնկները։

Այդ օրը՝ մռայլ ու երկար այդ օրը, գնացքը կանգնել էր գորշ քարե պատի մոտ, բոլոր պատուհանները պատին դեմ արած։ Ճաշից հետո վագոնում հայտնվեց բուժքույրը՝ ծալավոր գլխաղարդիկը դրած։ Նրա ետևից գալիս էր սանիտարը՝ մատուցարանը ձեռքին, որի վրա գոլորշի էր բարձրանում տաք սուրճի գավաթներից։ Բուժքույրը գավաթները դրեց մահճակալների կողաստեղանիկներին։ Լեպենդինն էլ սուրճ ստացավ և հենց առաջինը, հազիվ էր սանիտարի ետևից դուռը փակվել, սկսեց խմել։ Նա ընդամենը երկու կում էր արել՝ տաք, թանձր, քաղցր, երբ պատի ետևում անհանգիստ ձայներ լսվեցին, և վագոն ներս ընկան բուժքույրն ու սանիտարը։ Բուժքույրը, պղտոր աչքերը չռած, Լեպենդինի ձեռքից խլեց սուրճը, դրեց սանիտարի մատուցարանին ու վազեց վագոնով՝ սեղանիկներից հավաքելով սուրճի գավաթները։ Նրա գլխաղարդը ցնցվում էր, ինչպես ցատկելու պատրաստվող հավի կատարը։ Սանիտարը չէր հասցնում գավաթները մատուցարանին դասավորել, գայթում էր, ծնկները կպչում էին մահճակալներին, սուրճը թափթփվում էր։ Հետո դուռն այնպես չխկաց, ինչպես դեռ չէր չխկացել ամբողջ ճանապարհի ընթացքում, և տիրեց լռություն։

Երեկոյան Լեպենդինին տեղափոխեցին սանիտարական սայլակ, և նույն գիշերը նա արդեն պառկած էր Բիշոֆսբերդ քաղաքի ռազմագերիների ճամբարի հոսպիտալում։

Նա առողջանում էր, և արդեն անկողնում նստած՝ իր կտրած ոտքերին էր նայում, ինչպես առաջին անգամ տեղում նստած մանուկն է սեփական ոտքերն ուսումնասիրում, երբ «Բիշոֆսբերգի առավոտյան թերթ»-ի լրատուի բաժնում «R» ստորագրությամբ (իսկ այդպես ստորագրում էր միայն ինքը՝ հերր խմբագիրը) «Դատարան» վերնագրի տակ այսպիսի մի հոդված երևան եկավ.

Ֆրաու դոկտոր Նյորելը իր ուժերն ամբողջապես նվիրել է ռազմական էշելոնների հոդացողությանը։ Նրա գործունեությունն ընթանում էր կայարանում, ավագ բուժքույր Նայմանի հսկողության տակ։ Այդ բուժքույրը սանիտարներից լսել է, իբր ֆրաու դոկտոր Նյորելը մտադիր է եղել մանել Բիշոֆսբերգով անցնող այն գնացքը, որտեղ գտնվում էին նաև ռուս վիրավոր սպաներ, և նրանց սուրճ առաջարկել թարմանալու համար։ Ասում են, որ ի պատասխան իրեն արված նախազգուշացումների, բժիշկը հայտարարել է. «Տեր աստված, չէ՞ որ նրանք էլ մարդիկ են»։ Ավագի հետևանքը եղավ այն, որ սննդակայանի խնամակալուհի ֆրաու Ուրբախը առաջարկեց բուժքույր Նայմանին՝ հայտնել ֆրաու դոկտոր Նյորելին, որ կայարանի սննդակայանը հրաժարվում է նրա հետագա բարեգործությունից։ Ավագ բուժքույր Նայմանը, սակայն, չբավարարվեց այդ առաջարկի սոսկ հաղորդումով և, իր զայրույթն արտահայտելով, ավելացրեց նաև վիրավորական խոսքեր «հայրենասիրության պակասի» և այլնի մասին, որի պատճառով էլ նա դատի տրվեց։ Գործի կապակցությամբ վկաներ կանչվեցին, որոնց հարցաքննելու հարկ չեղավ, քանզի դատավորին հաջողվեց հաշտություն կայացնել։ Այն բանից հետո, երբ հայցվորուհին հայտարարեց, որ իր խնամքն ուղղված է եղել բնավ ոչ ռուսների, այլ պահակների և սանիտարական անձնակազմի նկատմամբ, մեղադրյալը հայտարարեց, որ այդ հավաստիացումից հետո ինքը զղջում է իր ասած խոսքերի համար և ետ է վերցնում դրանք։ Գործը կարճված է, իսկ դատական ծախսերը կգանձվեն մեղադրյալից։

Իհարկե, ճամբարային հոսպիտալի ռազմագերիներն այդ հոդվածի մասին գաղափար չունեին, և դա էլ, ամբողջությամբ, բացահայտ շեղում է Ֆեոդոր Լեպենդինի մասին մեր պատմությունից։ Սակայն չէ՞ որ հենց Ֆեոդոր Լեպենդինն էլ շեղում է մի այլ պատմությունից՝ ավելի սարսափելի ու դաժան, քան նրանը։

Նա պատրաստեց երկու կարճ հենակ և բարձիկներ կճատ ոտքերի համար, ու սկսեց սպասել, թե իրեն երբ թույլ կտան անկողնուց իջնել։

Սակայն երկար չքաշեց։ Մի շաբաթ հետո գիշերները նորից տենդ սկսվեց, և կտրած ոտքերին կանգնելն արդեն անհնարին էր, թեև ինչքան ասես թաղիք էր մտցրել բարձիկների մեջ։

Եվ ահա հենց այդ ժամանակ քաղաքային իրավասու Օտտո-Մոդես-Միլխի անվան քաղաքային հիվանդանոցի ավագ բժիշկը փորձեր էր անում տեղային անզգայացումով վեր-

ջուլիաների անգամահատման նոր մեթոդներ մշակելու ուղղությամբ։

— Ռազմագերիների ճամբարից ուղարկվեցին չորս զինվոր, որոնք կարիք ունեին ընդամահատության։

Լեպենդինի ոտքերի մնացորդներն էլ կտրեցին։

Ավագ բժիշկը միանգամայն գոհ էր տեղային անզգայացման նոր եղանակից, և վիրահատության օրը ծխեց ոչ թե երկու, ինչպես միշտ, այլ՝ երեք սիգար։

Եթե ջոկապետ Ֆյոդոր Լեպենդինը ավելի երկար հիվանդ մնար, թերևս ուրիշ մի ծառայություն էլ մատուցեր գիտությանը։ Սակայն նա առողջացավ, և այլևս պետք չէր։

Եթե Լեպենդինը սաքսոնական, բավարական կամ պրուսական բանակի ջոկի հրամանատար լիներ, նրան հավանաբար կհագցնեին «Ֆենիքս» արտոնագրի մետաղյա պրոտեզներ, և հայրենական օրթոպեդներն ու տեխնիկները կսովորեցնեին հեծանիվ վարել ու սանդուղքներով բարձրանալ։ Սակայն նա ռուսական բանակի ջոկապետ էր, ուստի առաջարկեցին սեփական միջոցներով յոլա գնալ։

Եվ նա յոլա գնաց։

Նա իր համար մի կողով հյուսեց, մոտավորապես այնպիսին, ինչպիսին դնում են թխսի տակ, հատակին լաթեր գցեց ու նստեց դրանց վրա, իսկ կողովը փոկերով կապեց գոտկատեղից։ Հետո կեչուց թիակալներ սարքեց, որ նման էին կիրգիզական ասպանդակների՝ կլորացրած ծայրերով։ Ձեռքերը մտցրեց թիակալների աղեղիկների մեջ, դրանցով հենվեց գետնին, ձեռքերով բարձրացրեց մարմինը և մի ամբողջ քայլ առաջ գլորվեց։ Ճխլտված, ջարդված, նա ճակատի քրտինքը սրբեց ու ասաց զինվորին, որը նայում էր, թե այդ մարդն ինչ ճիգ ու ջանք է թափում։

— Բա, տղաս, հիմի թեկուզ մինչև Կիև կգլորվեմ...

Ծիծաղեց ու սկսեց ապրել ճամբարային կյանքով։

1

Բիշոֆսբերգ քաղաքի ռազմագերիների ճամբարի
պարոն պարետին

Բժշկական ֆակուլտետին տեղեկություն է հասել, որ ձեզ վստահված ճամբարում ներկայված է ռուսական դիվիզիոնային բժիշկ Սիդորկինը, որն իր գերության ընթացքում հավաքել է զանազան վարակներ տարածողների (pediculus et pulex irritans) առանձնահատուկ հիանալի հավաքածու։ Ներկա նամակով, պարոն պարետ, խնդրում ենք ձեզ թույլ տալ վերոհիշյալ ռուս գերուն նամակային փոխհարաբերություններ ունենալ բժշկական ֆակուլտետի հետ՝ վերջինիս կողմից նշված հավաքածուն ձեռք բերելու ուղղությամբ։

Բժշկական ֆակուլտետի դեկան—
Համալսարանի գործերի կառավարիչ—

2

Նորին բարձր բարեծնողություն
Ճամբարի պարոն պարետ
մայոր Բիդաուին

Ռուս թարգման, ջոկի հրամանատար
ռազմագերի, ենթասպա Սերգեյ Գորկայից

Զեկույց

Պարտք եմ համարում զեկուցելու ձերդ բարձր բարեծնողությանը, որ 7-րդ և 8-րդ բարաքների, ինչպես նաև լվացքատան ռազմագերիների, որոնց մասին ինձ հայտնել էին, հուզմունքը սաստկանում է։ Համարձակվում եմ Ձեր հատուկ ուշադրությունը հրավիրել բժիշկ Սիդորկինի վրա, որը օգտագործում է բարաքները և լվացքատունը շրջելու բարեհաճ թույլտվությունից և գիտական նպատակներով մարմնի միջատներ հավաքելու պատրվակով ժամանակը փաստորեն օգտագործում է ագիտացիայի համար, ասելով, որ Ռուսաստանը պետք է պատերազմի մինչև Գերմանիայի հանդեպ լիակատար հաղթանակը և որ ռուս ժողովուրդը գահընկեց է արել ցարին, որը կողմնակից էր հաշտության։ Ու թեև ագիտացիան հաջողություն չունի, քանի որ ռուս զինվորները հաշտություն են ուզում Գերմանիայի ու նրա հավատարիմ դաշնակիցների հետ, սակայն լսվում են ուրիշ, անհեթեթ ձայներ, որոնք կամենում են, որպեսզի Գերմանիայում հեղափոխություն սկսվի, ու իբր այն ժամանակ հաշտություն կլինի բոլոր ազգերի հետ։ Սակայն դոկտոր Սիդորկինը հետևորդներ ունի։ Հիշյալ ձայ-

ների մասին զեկույց կներկայացնեն, եթե լինի ձերդ բարձր բարեծննդության կարգադրությունը։

Պատրաստ Ձեզ ծառայելու՝ Սերգեյ Գորկա։

3

Նորին գերազանցություն
բժշկական ֆակուլտետի պարոն դեկանին

Բժշկական ֆակուլտետին հետաքրքրող ռազմագերի ռուս բժիշկ Սիկորկինի հավաքածուի մասին Բիշոֆսբերգ քաղաքի ռազմագերիների ճամբարի պարետատունը ոչինչ չի կարող հայտնել, քանի որ հիշյալ ռազմագերին տեղափոխված է Գայդհեյմ ամրոցը (Սաքսոնիա)։ Ռազմագերու հետ փոխհարաբերության մեջ մտնելու թույլտվության համար պետք է դիմել համապատասխան օկրուգի զորքերի հրամանատարին։

Ճամբարի պարետ—
Համեստ—

4

Բիշոֆսբերգ քաղաքի համակենտրոնացման ճամբարի պարետ
Նորին բարձր բարեծննդություն
մայոր Բիդաուին։

Կարգադրում եմ բոլոր միջոցները ձեռք առնել ձեր ճամբարում եղած ռազմագերիների 70 տոկոսին շտապ կերպով կալվածքներում և գյուղական տնտեսություններում տեղավորելու ուղղությամբ։ Միաժամանակ հանձնարարում եմ գերապատվությունը տալ մանր տնտեսություններին և խուսափել մի տնտեսությունում տասից ավելի ռազմագերի կուտակելուց։

Սպասում եմ ձեր զեկույցին։

Ի/ս զորքերի հրամանատարի—
Համեստ—

Եվ այդ ժամանակ, այդ տարիներին լինում էին օրեր, երբ երկնքում լողում էին փետրավոր ամպեր, երբ քամին խառնշտորում էր խոտն ու գրկում լորենու ծաղիկը։ Լինում էին գիշերներ, երբ վճիտ, սառցե ցող էր նստում, լինում էին երեկոներ, երբ ամեն ինչ մարում էր, ու միայն լուսատիկներն էին թափառում մթության մեջ։

Փշալար, սվին ու կոթ, մաուզեր, նագան, սմիտ-վեսսոն, հրասանդներ, նռնակներ, ռումբեր, կտրված ձեռքեր, սղոցած ոտքեր, այրված աչքեր, ճեղքված ճակատներ, ծակված կրծքեր—և նորից փշալար, նորից սմիտ-վեսսոններ, նորից նռնակներ, ռումբեր, ֆուգասային ռումբեր։

Խրամատներ, գետնափոր տներ, բլինդաժներ, բարաքներ, ճամբարներ, զորանոցներ, հոսպիտալներ, լազարեթներ, հիվանդանոցներ, գժանոցներ, խելագարների ավաններ, խելագարների քաղաքներ—և նորից խրամատներ, նորից ճամբարներ, նորից զորանոցներ։

Թարախապալարներ վզներին, էկզեմայի վերքեր թևատակերին, կաշվեթեփ ծնկներին, մկնատամ, վերքեր, լորձոտ ցան որովայններին, հերաթափ գլուխներ ծածկված թարախաբշտիկներով, որոնցից թարախը հոսում է, ինչպես նեխած պանրից.

ՄԱՐԴԻԿ, ՄԱՐԴԻԿ—

այդ ժամանակ, այդ տարիներին լինում էին օրեր, երբ զգացվում էր ինչպես է բարձրանում գարնանացանը, իսկ չէ՞ որ ամեն առավոտ, ամեն առավոտ լուսաբաց էր լինում...

Կողովը, որի մեջ նստել էր Լեպենդինը, ճռճռում էր, փոկերը խշխշում, գոտին ճրթճրթում էր լարումից։ Սակայն ձեռքերն ու փորն ամրացան, և թիակներով գետնին հենվելն ու մարմինն առաջ ու ետ նետելը հեշտացավ։

Չգիտես այն բանից, որ հողը դեմքին շատ մոտ էր, թե նրանից, որ շարունակ ձեռքերով շոշափում էր այն՝ տաք, ինչպես մարմինը, Լեպենդինը զվարթանում էր, ուժ առնում։

Դուր եկավ Լեպենդինը բանջարանոցապանին՝ չգիտես իր զվարթությամբ թե խեղանդամությամբ, բանջարանոցապանը հաշմանդամին վերցրեց իր մոտ որպես մարդ մշակող։ Գործի դրեց, որ խնամի բանջարեղենը, վերաշինի ջերմոցի տաշտակներն ու պատուհանիկները։

Լեպենդինը քաղհանում էր, բուկլից անում, իր կողովով պտտվում էր մարգերի միջև առավոտից գիշեր՝ կանաչի, տաքացած հողի քաղցր բուրմունքով պարուրված ու երգում էր.

Նեմշիկները եգերներին բռնեցին,
Եգերներին ճամբարները դրեցին։
Եգեր-մեգերիկ,
Ռուս կարմրակուրծիկ,
Ընկար ճամբարիկ։
Նեմշիկները բաղուկ տնկեցին,
Բաղուկով ռուսներին կշտացրին։
Այ թե կուռչեն
Ռուսները
բաղուկից։
Այ, շունչները պիտի փչեն
Կանաչից
Իմ երկրացիք։

Մի անգամ Լեպենդինը ճաշից հետո դուրս սողաց իր ջերմոցից, գլորվեց բանջարանոցով ու նստեց դռան մոտ։ Նրա առջև վառվում էր բարձր, թեք ու հարթ տանիքի աղյուսե, կարմրագույն կղմինդրը։ Նա աչքերը կկոցեց այդ փայլից, գլուխը բարձրացրեց։ Երկինքը մաքուր էր, կապույտ։ Մեջքը շրջեց դեպի տանիքը։

Նրա առջև փռվել էր դաշտը ցանքի բաղմագույն շերտերով կտրատված։ Հեռվում ցցված էին անցյալ տարվա ծղոտի երկու դեզ, արդեն գզգզված, գորշագունած։ Նա երկար նայում էր դեզերին։

Մի տեղ աքաղաղը կանչեց։ Քիչ հետո նրան պատասխանեց մի ուրիշը։

Լեպենդինն աչքերը կկոցեց։

Արևն ուժեղ այրում էր, դաշտից հացահատիկի շրշյուն էր գալիս՝ այնտեղ ցցված էին ցածր, գզգզված, գրեթե սևացած դեզեր։ Դռան ետևը ծորակից հնչեղ կաթիլներով տակառի մեջ էր լցվում ջուրը։

Այո, եթե աչքերդ փակես, ինչպես Ստարիյե Ռուչյիում՝ նավաստաններից կաթկթում է, ինչպես Սանիշինում, կեսօրին՝ աքաղաղներն են կանչում, հացահատիկն է շրշում, անպետք դեզեր են ցցված...

Սակայն եթե աչքերդ բանաս, մի՞թե կտեսնես դարուփոսերի մեջ խրված հաստատուն ձիուն՝ երկար բաշի վրայի շարժափոկով ու լծաղեղով։ Կամ աղջկան, որ ազդրերին հավաքած փեշերը շարժելով, ճկուն ոտքերով անվահետքերի փոշին է տրորում։

Դաշտը հատող ճանապարհով շտապ բանջարանոցի դռնակին էր մոտենում մի փոքրիկ մարդկային կերպարանք։ Նա դեռ աղոտ էր երևում, թեթև, ասես ճանապարհին չէր էլ դիպչում, և երկնքի, արևի ու կանաչի լույսից հնարավոր չէր որոշել՝ փոքրիկ աղջի՞կ է, օրիո՞րդ, թե՞ կին։ Այնտեղ, ուր ճանապարհը բաժանվում էր ճյուղերի, և մի ճյուղը գալիս էր դեպի բանջարանոցի դռնակը, նա կանգ առավ։ Փխրուն, արևով ողողված, նա կանգնել էր փոքրիկ բլրակին, դեմքը Լեպենդինին դարձրած։ Հանկարծ տեղից շարժվեց նրան ընդառաջ, մոտեցավ, գրեթե վազեց, շրջազգեստի գրպանից հանեց մի տուփ ծխախոտ, մեկնեց հաշմանդամին ու դժվարությամբ արտասանեց.

— Պապիոսա։

Ու ժպտաց այնպես, կարծես ներողություն էր խնդրում։

Լեպենդինն ատամները բաց արեց, հոնքերը շարժեց։ Այն ժամանակ աղջիկը կրկին ձեռքը գրպանը սահեցրեց, ու նրա նուրբ մատների մեջ փայլեց կլորավուն ծխախոտատուփը, նա այն բացեց։

Սակայն—

Նույն պահին ճանապարհով անձայն գլորվեց մի հիծանիվ, փայլեցրեց օդում տնկված առաջին անիվի անվաճաղերը, և ժանգարմի սև մոտոցիկլետը ծանրորեն խրվեց հողի մեջ։

Նա ուղղեց մեջքին գցած կարճփող բերդանը, ձեռքը սահեցրեց համազգեստի կոճակների ուղիղ շարքով և ոչ բարձր, ասես վերջակետ դնելով հաջող ավարտված մանրքի առաջին մասին, արտասանեց.

— Այդպե՞ս։

Հետո նայեց Լեպենդինի ծոցից ցցված ծխախոտի տուփին, աղջկան, որ դեռ կանգնած էր նրա կողքին բաց ծխախոտատուփը ձեռքին, և հարցրեց զուսպ-սպառնալի ձայնով.

— Ձեր անձնական վկայակա՞նը, ֆրոյլայն։

— Ինձ մոտ չէ։

— Ինչպես է ձեր անունը։

— Մարի Ուրբախ։

Ժանդարմի բեղերը կախ ընկան։

— Ֆրաու Ուրբախի ազգականուհի՞ն ենք։

— Դուստրը։

Ժանդարմը գլխարկը բարձրացրեց, ճաղատը փայլեցրեց, ձեռքի ափով սրբեց քրտինքը, հետո գլխարկն ավելի խոր քաշեց գլխին։

— Միևնույն է։ Գնա՞նք։

Մարին քայլեց նրա կողքով։ Հետո հանկարծ հիշելով ծխախոտատուփը, այն՝ բացած, ծխախոտով լի, մեկնեց ժանդարմին։ Վերջինիս ձեռքն արդեն դողաց, բեղը վեր ցցվեց, երբ Մարին, ոչ այն է երեխայի նման, ոչ այն է խորամանկորեն պարծեցավ.

— Իսկական ռուսական են։

Ժանդարմի կոկորդին կարծես մի բան դեմ առավ, հաղաց, ձեռքը ձգվեց դեպի հեծանիվի պտտվող ղեկը, հովարն իջավ քթին։

Այն ժամանակ Մարին շրջվեց։

Լեպենդինը դեռևս նստած էր նախկին տեղում։ Տեսնելով որ աղջիկը շրջվեց, նա անհանգստացավ, դեպի առաջ երեբաց, հետո ձեռքը բարձրացրեց գլխավերևն ու օդում թափահարեց իր թիակները։

Լեպենդինին թվաց աղջիկը,— օրիո՞րդ էր թե կին,— ժըպտաց նրան։

— Ա՜յ դու... ա՜յ աղջիկ...

Անքաղաքավարի ֆելիետոն

Մարին մտավ շտաղտրատի առանձնասենյակը։

Լայն պատուհանի բազմագույն ապակիների ուրախ շողքերը փլվեցին նրա գլխին։ Ապակիներից թափանցող լույսն ուրախ էր, հարբած, հնչեղ, ինչպես դիմակահանդեսի լապտերների նախշուն պատառները։ Այնտեղ, ցինկե միջադիրների խառը ցանցի մեջ ծեփվում էին սուտակե, զմրուխտե, փիրուզե թասակներ, բերետներ, գլխարկներ, բաճկոնակներ, կեղծամներ, գուլպաներ, վարտիքներ, գոտիներ, պայուսակներ, կոշիկներ և ժիլետներ։ Գույնզգույն, խայտաբղետ, հարբած զգեստներով էին զուգվում մարդիկ։ Գույնզգույն, խայտաբղետ, հարբած խմբերով կուտակվում էին մարդիկ հիանալի տակառագործի ձեռքով սարքված դարեջրի պինդ տակառի շուրջ։ Քաշում են՝ հարբած, ճղճղան, գարեջուր կոնծած, ծիծաղից պայթող, հաստափոր, հաստլիկ այտերով, այս ու այն կողմ են քաշքշում գարեջրի տակառը։ Կրունկները խրել են հողի մեջ, ձեռքերով կառչել իրարու, ձեռքերն ընկել են փորերին, իսկ փորերը ուր որ է ծիծաղից կպայթեն։ Գիրուկ մարդկանց մի խայտաբղետ կույտ ընկած է տակառի աջ կողմում, մի այլ խայտաբղետ խումբ՝ ձախ կողմում։ Հապա՞։ Ո՞վ ում։ Հա՞-հա-հա՞։ Հապա՞։ Եվ ձախ կողմի գուլպաների գույնից և աջ կողմի վարտիքների ձևվածքից ամեն մեկի համար էլ պարզ է, որ այնտեղ նիդերբախցիներն են, իսկ այստեղ՝ բիշոֆսբերգցիները։ Եվ հարցը դատարկ բանի չի վերաբերվում, հարցը պատվավոր առաջնությանն է, առաջին տեղինը, թերևս, ամբողջ հայրենիքում։ Հիանալի հայրենիքիդ առաջին հարբեցողի պատվավոր կոչմանն արժանանալուն։ Հապա՞, ո՞վ կքաշի։ Նիդերբա՞խը թե՞ Բիշոֆսբերգը։ Ո՞վ ում։ Հա՞-հա՞-հա՞։ Քաշիր, քաշիր։ Դրանցից շատ ավելի լավ քաղաքներին էլ հաճելի կլինի հայրենիքի առաջին հարբեցողը կոչվել։ Արբեցուցիչ, խայտաբղետ, բազմագույն է շտաղտրատի առանձնասենյակում։

Սակայն պատուհանի երկայնությամբ ձգվել է աշխատասեղանի մուգ կարմիր անապատը։ Անապատի մեջտեղում կապույտ բաժակի մեջ հուսահատական մերկությամբ ցցված էին գրիչներն ու մատիտները, ինչպես չորացած օազիսում մեռնող արմավենիների բներ։ Քիչ հեռվում հողի մեջ խրվել էր մի ջրհոր՝ տրտում այդ լայնարձակությունների միակ անսպառ աղբյուրը՝ թանաքամանը։ Անապատի եզրերին գործերի շարժում էր տեղի ունենում։ Կապույտ, սպիտակ, կանաչ թղթասլանակներով, համարներով, լիտերներով և ամսաթվերով, դրանք, անապատի արևմուտքից, ուր դնում էր ղեկուցողը, շարժվում էին դեպի արևելք, որտեղից արդեն վերցնում էր քարտուղարը։ Անապատի խորքն էին թափանցում միայն շատ սակավաթիվ գործեր, և այդ դեպքում դրանք երկար դաղար էին առնում մեռնող արմավենիների ժլատ ստվերի տակ՝ մատիտներով բաժակից դեպի արևմուտք։

Շտադտրատը նստել էր բազմոցին, գարեջրի համար վիճողների ուրախ բազմության և իր սեղանի մուգ կարմիր անապատի միջև։ Սակայն բիշոֆսբերգցիներն ու նիդերբախցիները հոհոում և ճիգ էին թափում նրա ետևում, իսկ առջևում ձգվում էր անապատը, ու շտադտրատը պատկանում էր նրան, ոչ թե ուրախ հարբեցողներին։ Չոր էր, անուրախ, անտրամադիր։

— Ֆրոյլայն Ուրբա՞խն եք,— հարցրեց նա փոքրիկ դանակով կտրելով սիգարի ծայրը։— Չեմ զարմանում, որ դուք ինձ մոտ եք ընկել այն առիթով, որի մասին զեկուցեց ոստիկանության քարտուղարը։ Նստեցե՛ք։

Շտադտրատը սիգար ծխեց։

— Ես ճանաչում եմ ձեր հարգարժան ծնողներին, և ձեզ էլ եմ ճանաչում։ Այնուամենայնիվ, համարձակվում եմ ասել, որ չէի զարմանա, եթե ստիպված լինեի ձեզ հետ զրուցել ձեզ պետական դավաճանության մեջ մեղադրող գործի առիթով։ Հասկանո՞ւմ եք, թե ինչ եմ ասում։

Շտադտրատը լռեց։

— Հավանաբար գիտակցում եք ձեր արարքի ծանրությունը։ Ես խոսում եմ ոչ այն մասին, ինչ այսօր է տեղի ունեցել։ Դա ձեր նախկին ողջ վարքագծի բնական հետևանքն է։ Ես խոսում եմ... Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչի մասին եմ խոսում, ֆրոյլայն։

Շտադտրատը դեղին ծուխն աղմուկով բաց թողեց քթից ու ձեռքը մեկնեց անապատի խորքում ընկած գործին։

— Ոստիկանության տրամադրության տակ վաղուց տեղեկություններ կան ռուսի հետ ձեր ունեցած հարաբերության մասին։

Նա վեր բարձրացրեց չոր, անգույն աչքերն ու հառեց Մարիին։

— Լսո՞ւմ եք։ Ռուսի հետ ունեցած ձեր հարաբերությունների մասին։

Շտադտրատը ամուր ներս քաշեց սիգարի ծուխը։

— Ձեր լռությունը, ֆրոյլայն, նախ և առաջ անքաղաքավարություն է։ Այդ բանում էլ ես տեսնում եմ այդ, ինչպես է կոչվում... այդ մարդու հետ շփվելու պտուղները։

Շտադտրատը գործը թերթեց։

— Նրա ազգանունը... Դուք մտադի՞ր եք ինձ պատասխանել... Ես այսպես եմ խոսում միայն այն պատճառով, որ հարգում եմ ձեր ծնողներին և ամենից առաջ՝ ձեր մորը՝ ֆրաու Ուրբախին։ Այլապես միջոցներ կգտնեի ստիպելու ձեզ, որ պաշտոնական անձի հետ ձեզ պահեք այնպես, ինչպես հարկն է...

Շտադտրատը ձայնն իջեցրեց և մեղմացրեց.

— Մի՞թե չեք հասկանում, որ ձեր վարքագիծն անտանելի է։ Մտածեցեք, ֆրոյլայն, թե ինչ դրության մեջ եք դնում ձեր ծնողներին։ Ձեր մայրը՝ ֆրաու Ուրբախը, բոլորի կողմից հարգված անձնավորություն է, ընդունելություն է գտել նորին մեծության արքունիքում, շքանշանների ասպետ է, միությունների պատվավոր անդամ։ Ձեր եղբայրը... Դեհ, ձեր եղբոր մասին լրագրերում գրում են, ինչպես ազգային հերոսի։ Նա միակ սպան է Բիշոֆսբերգում, որ ստացել է pour le mérite շքանշանը։ Միակն է Բիշոֆսբերգում։ Նա աչքի է ընկել Վերդենի մոտ։ Առաջիններից մեկն է մտել Մոբեժ։ Մի մտածեցե՛ք։ Եվ հանկարծ... Ոչ, դա անվայել է, դա զզվելի է։ Ըստ ծառայական պարտականության ես պարտավոր եմ... Սակայն սպասեցեք, մի՞թե ձեր խիղճը չի տանջում։ Մի՞թե դուք չեք զղջում։

Շտադտրատը ետ քաշվեց սեղանից, բացականչեց.

— Օ, սա հրեշավոր բան է, հրե-շա-վոր։

Հետո վեր կացավ, քայլեց առանձնասենյակում, նորից նստեց և խոսեց միալար։

— Պահանջում եմ, որպեսզի ինձ պատասխանեք. դուք ընդունո՞ւմ եք, որ գերմանացի կնոջ պատիվը, ձեր տան պատիվն արատավորող քայլ եք արել, և ինձ, իբրև իշխանության ներկայացուցչի, խոստանո՞ւմ եք, որ այսուհետև նման բան այլևս չեք անի։ Պատասխանեցեք, ի՞նչ է նշանակում այդ լռությունը։ Լսեցեք, դուք...

Շտադտրատը բռունցքը խփեց սեղանին ու բղավեց.

— Լսեցեք, աղջիկ։ Ինչպե՞ս եք համարձակվում լռել, երբ ես պատասխան եմ պահանջում։ Ինչպե՞ս եք համարձակվում։ Ես ձեզ կպատժեմ, կբանտարկեմ, ձեր անունը կհրապարակեմ, կխայտառակեմ ձեզ։ Ձեզ տնից կվտարեն, քաղա-

քից կվտարեն, ձեզ մատով ցույց կտան, լսո՞ւմ եք, մատով, է՛յ։ Մատո՛վ, մատո՛վ։

Շտադտրատը վազվզեց գույնզգույն պատուհանի առջև Նրա դեմքին, բռունցքի պես կծկված, ջղուտ ու հարթ այդ դեմքին թրթռացին ապակիների խայտաբղետ շողերը։ Նա ոռնում էր.

— Կարծո՞ւմ եք ձեզ կխնայե՞մ։ Կարծում եք կհանդուրժե՞մ, որ իր ընտանիքը խայտառակող անպետք աղջիկը անպատիժ կերպով խայտառակի նաև գերմանացի կնոջ պատիվը։ Գրողը տանի, ես ձեզ ետ կսովորեցնեմ անիծյալ ռուսի մոտ քարշ գալուց։ Դուք, դուք... Գիտե՞ք դուք ով եք։ Դուք պոռնիկ եք, դուք ավելի վատն եք, պոռնիկը ձեզնից հայրենասեր է և իրեն թույլ չի տա...

Եվ հանկարծ, ասես ջարդված ապակու մի ամբողջ կույտ խլացուցիչ զնգոցով փլվեց շտադտրատի գլխին.

— Լռեցե՛ք։ Լսո՞ւմ եք, լռեցե՛ք։

Նա գրեթե ընկավ բազկաթոռին ու քարացավ։

Իսկ Մարին ուղիղ, ձիգ կանգնած, ասես պողպատե կաղապարի մեջ էր առնված, հատու քայլերով դիմեց դեպի դուռը, բացեց այն, անցավ միջանցքներով, սրահով, ուր գրասեղանների միջև պտտվում էր ոստիկանության քարտուղարը, անցավ ընդունարանով և դուրս նկավ փողոց։ Եվ այնտեղ, առանց մեջքը ծռելու, նույնքան հատու քայլվածքով, գլուխը բարձր պահած, անցավ մարդկանց մոտով, ասես նրանց գլխավերևով, առանց թաքնվելու—

առաջին անգամ այս տարիների ընթացքում, առանց թաքնվելու, ուղիղ կտրեց հրապարակն ու դիմեց դեպի բարոկկոյի ոճի փորագրազարդված ցածրիկ դռնակը և ապա սանդուղքով վերև, վերև, ոչ մի անգամ—

— ոչ մի անգամ ետ չնայելով,

դեպի դռնակը, որի մոտ այնպես բաբախում էր սիրտը։

Շտադտրատի առանձնասենյակում, ուր անտեսանելի քաղաքավարի ոգի էր խուժել, երևաց ոստիկանության քարտուղարը։

— Հերր շտադտրա՞տ։

Շտադտրատը սթափվեց, վերցրեց ձեռքի տակ եղած գոր-

ծը, դրեց սեղանի մեջտեղը՝ մատիտներով բաժակից արևմուտք, ասաց.

— Նրան առայժմ բաց թողեցի, հերր քարտուղար։ Հիմա աչքի կանցկացնեմ լրագրերը։

Եվ քարտուղարը անձայն հալվեց, ինչպես գոլորշու փոքրիկ քուլան սառնամանիքին։ Իսկ շտադտրատը կարդաց.

ԳՅԻՐ 10 ՊՖԵՆԻԳ՝ ԿՏԵՍՆԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ։

Բեռլինում, «Մետրոպոլ» թատրոնի պասաժում կա ավտոմատ պանորամա։ Կապույտ սերթուկ և կարմիր վարտիք հագած ֆրանսիացիները պաշտպանում են ամրոցը։ Նրանց դիմաց խրամատների և խրամուղիների միջև ցրվել են գորշ հաստլիկ գաճաճները։ Հիանալի է, աստված վկա։ Մանավանդ երբ մտածում ես, որ ամեն մի անցորդ հեշտությամբ կարող է համոզվել, թե ինչ հաճելի բան է համաշխարհային պատերազմը։ Ի դեպ, էլ ի՞նչ ավտոմատ, եթե այն շատ ավելի մեծ հաճույքներ չպատճառի։ Վերևում ավտոմատը անցք ունի, օ, դա որքան կարոտ է նիկելի։ Անցքի վերևում մակագրություն կա.

ԳՅԻՐ 10 ՊՖԵՆԻԳ՝ ԿՏԵՍՆԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԸ։

Բեռլինում հոգ կտանեն բոլորի մասին։ Տասը պֆենիգով ամեն մեկը կարող է ունենալ իր սեփական փոքրիկ պատերազմը։ Անցքի մեջ գՅիր նիկելե փոքրիկ դրամը (հակառակ դեպքում դրամը կարող է և երկաթից լինել) և նույն պահին, ինչպես բեռլինցիներն են ասում, կրպակը կաշխատի. գնդացիրները կթխկացնեն իրենց խցանները, զինվորները կսկսեն ծեծել, ջարդել, կրակել. ուղղակի հիասքա՜նչ է։ Դեռ չես հասցնի շուրջդ նայել, ֆրանսիացիներն արդեն սպանված, գերի վերցված կլինեն, իսկ գերմանացիները կտմնեն ամրոց։ Իսկ հետո՝ դեհ, թե չէ էլ ի՞նչ ավտոմատ, նորից ամեն ինչ իր տեղը կգա։ Հաճելի է, որ այդ պատմությունը կարող է միշտ նորից սկսվել։ Մեկ էլ փող գՅիր՝ անմիջապես հրանթները կդղրդան, զինվորները կսկսեն ծեծել, ջարդել... իսկ վերջ ի վերջո՝ նորից ամեն բան, ինչպես առաջ էր։ Եվ այսպես շարունակ, մինչև ամբողջ նիկելը վերջանա։ Այդպես էր, այդպես կարող էր շատ երկար ժամանակ լինել։ Փարիզում էլ, հավանաբար, այդպիսի ավտոմատ կա, որովհետև պատերազմի ժամանակ լավ ճաշակը ինտերնացիոնալ է։ Միայն թե այնտեղ, իհարկե, ամեն ինչ հակառակն է. այնտեղ գնդակահարում ու գերի են վերցնում գերմանացիներին, իսկ հետո նորից ամեն բան իր տեղն է ընկնում։

Նորերս ռազմաճակատից եկած մի զինվոր անցնում էր Բեռլինի պասաժով։ Նա նայեց ավտոմատը, և քանի որ ռազմաճակատում

սովորել էր թունդ խոսքերի, հայհոյեց։ Սակայն քանի որ, բացի դրանից, նա ժուռնալիստ էր, ուրեմն ըստ մասնագիտության՝ հետաքրքրասեր մարդ, ու դեռ խելքին էլ փչել էր թերթին մի բան գրել այդ մասին, ուստի ավտոմատի մեջ նիկելե դրամ գցեց։

Ու պատահեց հրաշք։ Մարտը... չսկսվեց։ Թնդանոթները լուռ էին, զինվորները մտադիր չէին ոչ ծեծել, ոչ ջարդել, ոչ կրակել ցնցում, հարվածներ։ Ոչինչ չշարժվեց։ Ավտոմատը ջարդված էր։

Մի անցորդ, որ ուրախացել էր ձրի ներկայացման համար և խորապես խարվել էր սպասումներում, կամենում էր ինչ գնով էլ լինի կանչել դռնապանին։ Նա պնդում էր, համառում տեսնելու իր փոքրիկ, ուրիշի կողմից վճարված պատերազմը, ուզում էր անպայման արյուն տեսնել։ Սակայն փող գցողը հրաժարվեց։

Քանզի թեև նա ժուռնալիստ էր, այսինքն ըստ մասնագիտության հրաշքի չհավատացող մարդ, այնուամենայնիվ ուշադիր նայելիս նրան թվացել էր, թե ֆրանսիացիներն ու գերմանացիները շատ բարեկամաբար էին իրար նայել։

— Թողե՛ք,— լրջորեն արտասանել էր նա,— չէ որ երբեք այդ պետք է լինի։

Ասել էր «մնաք բարով» ու հեռացել։

Շտադտրատը թերթը ծալեց, զանգը տվեց։

Ներս մտավ ծառայողը։

— Ահա թե ինչ,— ասաց շտադտրատը,— այս թերթը, տեսնո՞ւմ եք, ա՛յ այս թերթն այլևս ինձ չբերեք։

ԳԼՈՒԽ
ԻՆՉ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ճանապարհ

Ներ, կատաղած շունը, որ մոլուցքի մեջ ինքն իրեն էր կրծոտում, վերջին շունչը փչելով, գետին տապալվեց։ Ջոր լեզվով սկսեց լիզել իր ազդրերի վերքերը և արյունոտված մուրթով փորի մեջ լցնել դուրս թափված աղիքները։

Եվ շան կողքին խունկ էին ծխում, և՛ բուրվառների զանգակները զողանջում էին նրա ականջների վերևը, և՛ գորովագութ պատերները, կարդինալները, կայսրները քայլում էին հանդիսավոր համերաշխությամբ, և՛ ռաբբիները փսփսում

էին իրենց հազարամյա նզովքները, և՛ հրեշտակների ձայնը լցնում էին սառած օդը.

և խաղաղություն երկրին...
բարեհաճություն մարդկանց...

Իսկ շունը ոռնում էր հոգեվարքի ցավից, ու նրա կույր աչքերը մշուշվել էին պղտոր արցունքով։

Այդպես դիմավորեցին մարդիկ հաշտությունը։

Այն վրա հասավ հանկարծակի, թեև նրան սպասում էին ամեն րոպե՝ ցերեկ թե գիշեր, քնած թե արթուն։ Հաշտությունն իր հետ բերեց այն ամենը, ինչ կարող էր բերել Անտվերպենից, Մարնայից, Շամպանից հետո, Տրիեստից, Կարպատներից և Մազուրյան ճահճուտներից հետո։ Այն նույնքան բարեսիրտ էր, որքան Վերդենը, և նույնքան մեծահոգի, որքան Բրեստ-Լիտովսկը։

Սակայն այն իրենով եղրափակում էր որոշ ժամկետներ և սկիզբ դնում այլ ժամկետների։ Թափվում էին Սարաևոյում արձակած կրակոցից գոյացած օրացույցի թերթերը, և սկսվել էր հրաժեշտների ու անջատումների ժամը։

Անդրեյի համար այդ ժամը վրա հասավ հաշտությունից քիչ առաջ, երբ նրան հայտարարեցին, որ կարող է հայրենիք վերադառնալ։ Դառն էր, դառն այդ ժամը, ամբողջովին ներծծված թախիծով, ինչպես տափաստանի քամին՝ օշինդրի բույրով։ Սակայն այն իր մեջ թաքցնում էր մի անորսալի թարմություն, ինչպես տափաստանի հեղձուցիչ քամին իր մեջ ծովի գրգռիչ զովություն է թաքցնում։

Ինչո՞ւ չի կարելի խոսել մանկան թոթովանքի նման հուզիչ ու պարզամիտ զգացմունքների մասին։ Ո՞վ է արգելք դրել քնքշանվաղ հառաչների, անմոռուկների, մաքուր, ջերմ համբույրի վրա։ Ով է համարձակվել ասել, թե զգայականությունը դաժանությունից գռեհիկ բան է, և դա այն ժամանակ, երբ սիրահարված շշունչ սակավ ենք լսում, քան սպանվածի հառաչ...

Մարին հրաժեշտ էր տալիս Անդրեյին։

Նրանք գրկախառնված նստել էին այն սենյակում, որը նրանց համար բանտից դարձել էր ազատություն, և որն ընդ-

միշտ թողնելը նրանց համար նույնքան սարսափելի էր, որքան անջատման մասին մտածելը։

Նրանք կանգ առած աչքերով նայում էին տեսած, ուսումնասիրված առարկաներին, և ամեն ինչ ճապաղվում էր հայացքների առջև, դառնում դատարկություն, ինչպես նրանց սպասվող ապագան։

Եվ որպեսզի իրենցից քշեն ամենասարսափելին, նրանք կրկնում, ասում էին միմյանց անհասկանալի, անհասկանալի խոսքեր.

— Իհարկե կհանդիպենք։

— Իհարկե, Մարի։ Չէ՞ որ ամեն ինչ շատ լավ է դասավորվում։

— Ես ոչ մի բոպե չեմ կասկածում, Անդրեյ։

— Մարի, ես վստահ եմ, միանգամայն վստահ։

Հետո նրանց տաք այտերն իրար էին քսվում, մատները շոյում էին խառնիխուռն մազերը, և սսկված սենյակը երկրորդում էր նրանց զուսպ, համերաշխ շնչառությունը։

— Դու ճանապարհից գրիր։

— Անպայման, անպայման։

— Հենց որ տեղ հասնես։

— Հենց որ տեղ հասնեմ։

Բաց պատուհանի տակ հեռվում ճողփում էր շատրվանի մեն-միակ ջրաշիթը, հին, կանաչած, ջրից մաշված, ժամանակից ճաքճքված շատրվանի։ Ջրի զնգոցը արձագանքում էր հրապարակի հեռավոր անկյուններում և տանջալիորեն համաչափ էր ու թախծոտ։

— Ես անմիջապես կգամ, հենց որ դու տեղավորվես։

— Ես շուտ կտեղավորվեմ, շատ շուտ, Մարի։

— Ի՞նչ ես կարծում, մի կես տարուց, թե...

— Ի՞նչ ես ասում, Մարի։ Երկու ամիս, ամենաշատը...

— Ուրեմն երկու ամսից կարելի է պատրաստվե՞լ։

— Մարի, դու պետք է պատրաստ լինես ամեն օր։ Չէ՞ որ դա շուտ կկարգավորվի, և ես քեզ հեռագրով կհայտնեմ։

— Հեռագրո՞վ։

— Իհարկե։

— Ես միշտ պատրաստ կլինեմ...

Եվ կրկին նրանք լուռ նայում էին իրենց առջև, և վաղուց

ծանոթ իրերը կորչում էին դատարկության մեջ, և ձեռքերը շոշափում, քաշքշում էին բազմոցին, ոտքերի միջև ընկած ծաղիկները։

Հանկարծ Մարին պոկվեց բազմոցից, դեմքը դարձրեց Անդրեյին, ձեռքերի մեջ առավ, սեղմեց նրա գլուխն ու կարճ ասաց.

— Ժամանակն է։

Անդրեյը ձգվեց դեպի աղջիկը, գրկեց նրան, ուզում էր վեր կենալ, սակայն չկարողացավ հավասարակշռությունը պահել և աղջկան գցեց իր վրա։ Ու այսպես նրանք շարժվում էին մի քանի բոպե. Մարին՝ ձեռքի ափերով սեղմած նրա դեմքը, իսկ Անդրեյը՝ քարացած մեծ ձեռքերով նրա մարմինը գրկած։

Հետո Անդրեյը ձեռքերը թողեց, դեմքն ազատեց ու նայեց Մարիի աչքերին։ Աղջիկը կարծես նրան չէր տեսնում։ Անդրեյը խեղդված ձայնով ասաց.

— Մարի, գուցե... գուցե ավելի լավ է չմեկնե՞մ... մնամ քեզ հետ։

Նա Անդրեյից ետ քաշվեց այնպիսի ուժով, ասես ուզում էր վերջինիս սթափեցնել, և հայացքում վայրկենաբար իրար հաջորդեցին երկյուղ և ուրախություն։

— Անդրեյ,— գրեթե բղավեց նա,— դու այնքան երկար ես սպասել այս ժամին։

— Օ, այո... Անսահման երկար։ Սակայն Մա-րի։ Քեզնից հեռանալ...

— Ինչպե՞ս թե հեռանալ,— ընդհատեց Մարին։— Չէ՞ որ մենք շատ շուտով կհանդիպենք...

— Իհարկե, հիմարություն եմ դուրս տալիս,— արագ ասաց Անդրեյն ու մի տեսակ անմիջապես սկսեց շարժվել, շտապել, կարծես միանգամից վրա հասավ ինչ-որ տեղ շտապելու ժամանակը։

— Իհարկե հիմարություն է։ Փոքրոգություն։ Հասկանո՞ւմ ես, մի պահ ինձ թվաց, թե մենք... որ ես երբեք...

Նա նայեց Մարիին։

Մարիի կոպերը կիպ սեղմված էին և փայլուն մի թելիկ ասես կապարի նման զոդել էր նրա արտևանունքները։

Անդրեյը նետվեց նրա մոտ։

— Մարի-ի՜։

Գրկեց նրան, տարավ դրեց բազմոցին, պառկեց կողքը և ուզում էր համբուրել, սակայն գլուխն ընկավ Մարիի դեմքին, ու նրանց արցունքները՝ հորդ, արագ, միախառնվեցին։

Տրորված ծաղիկները թափվում էին բազմոցից, և նրանց ետեից դանդաղ հատակին էին թռչում պոկոտված ծաղկաթերթիկները։

Պաուլ Գեննիգը ներս մտավ սովորականից ավելի աղմկոտ, և ձայնն էլ սովորականից բարձր էր։

— Անդրեաս, պետք է ասեմ, որ ձեր հավատարմությունն ինձ ապշեցնում է։ Սակայն ոչ մի բան հավերժական չէ աշխարհներից ամենալավ այս աշխարհում, թեկուզ դա հարյուր անգամ լինի... Andere Städtchen — andere Mädchen[1] ինչպես ասում են... Ուրիշին կգտնեք։

— Վերջ տվեք, հերր Գեննիգ...

— Եթե մենք քաղաքական տարբեր հայացքներ ունենք, ուրեմն, բնական է, որ կանանց հարցում էլ տարբեր ենք մտածում, հա՜-հա՜... Սակայն, Անդրեաս, ասեմ ձեզ, մի քիչ տխրում եմ, որ մեկնում եք։ Ո՞ւմ պետք է տանջեմ։ Եվ բացի այդ, աշխարհը քանի գնում ավելի ու ավելի անհանգիստ է դառնում։

— Դուք գտնում էիք, որ ամեն ինչ բարեհաջող է զարգանում։

— Անդրեաս, Անդրեաս։ Առաջինը, դուք մեկնում եք, և ես պատճառ չունեմ ձեզնից թաքցնելու, որ... դեհ, այո, որ ես որոշ իմաստով բաժանում եմ ձեր հայացքները։ Երկրորդ, ես տեսնում եմ, որ...

Գեննիգը կոնչաց և խփեց իր աղդրերին։

— Եկեք պարզ խոսենք։ Ձեր հայրենասիրությունը սարքովի բան է։ Գրողը տանի, դա, իհարկե, ապավորություն է գործում։ Սակայն...

— Ինձ համար դա զզվելի է։

— Ժողովրդի սերը...

— Ոչ թե ժողովրդի սերը։ Ես հարյուր անգամ ասել եմ ձեզ այդ։ Ոչ թե իմ ժողովրդի հանդեպ ունեցած սերը, այլ ատելությունն օտարների նկատմամբ։

— Դա ես երբեք չեմ հասկանա։ Սակայն հարգում եմ ձեր տեսակետը։ Թեև այն գործնական չէ։ Դուք կհամոզվեք, որ որևէ մեկին ատելը մարդկային գոյության պահանջն է։ Սակայն ես հարգում եմ... Հարգում եմ ձեզ, Անդրեաս։ Արդեն ձեր իրերը դասավորե՞լ եք։ Ամբո՞ղջ հարստությունը։ Հա-հա՜։ եկեղեցու մկնիկ Անդրեաս, հը՞։

— Այո, պատրաստ եմ։

Պաուլ Գեննիգը հառաչեց։

— Ուղեկցելն ընդհանրապես վատ է։ Դիմավորելն ավելի լավ է։

Նա շրջվեց, ու հանկարծ այնպիսի մի մռնչոց արձակեց, որ սեղանի վրայի ջրամանը զնգզնգաց.

— Երբ այս սենյակը դատարկ մնա, ես ո՞ր գրողի ծոցը պիտի գնամ քաղաքականության մասին խոսելու։ Ուղղակի մարմինս սարսռում է։

Մի պահ լռեց, ոտքերով թմբկահարեց հատակին ու գրպանից թերթը հանեց։

— Այն էլ հենց հիմա, երբ այսպես անհանգիստ ժամանակներ են։ Առաջ այսպես չէր։ Առաջ այլ կերպ էր։ Մենք պետք է դիմանանք, և մենք կդիմանանք, մենք՝ գերմանացիներս։ Այո՜։ Ահա թե առաջ ինչպես էր։ Հիմա սկսել ենք նվնվալ։

— Ես այդ բանն արդեն երկու տարի է ասում եմ ձեզ։

— Հիմարություն է, Անդրեաս։ Դուք էլ ինձ նման կույր եք։ Դուք պնդում եք... Ավելի լավ է կարդամ ձեզ համար...

Հետո Գեննիգը թերթը բացեց և մոտեցավ լամպին։

— Կկարդամ մի հայտարարություն, ամենահասարակ մի բան, ինչպես լրագրողներն են գրում, նոնպարելի տողը երեսուն պֆենիգ։ Լսեցեք։

Լավ ընտանիքից սերված մի գերմանական զինվոր, որ պատերազմում կորցրել է ոտքը և դրա հետևանքով լքվել հարևանցուի կողմից, կյանքի ընկեր է փնտրում իր նման մի դժբախտ։ Մեծապես խնդրում ենք այն տիկնանց, ում ստորին վերջույթները վնաս-

[1] Նոր քաղաք, նոր աղջիկներ (գերմ.)։

[1] Նոնպարել—մանր տպատառ (ծ. բ.)։

ված են կամ անդամահատված, և ովքեր բարի սիրտ ու լավ բնավորություն ունեն, կարեկցել խեղանդամված մարմնի մեջ ամփոփված այդ փշրված, ազնիվ հոգուն և լիակատար վստահությամբ՝ նշելով սեփական ընտանեկան դրությունն ու առողջական վիճակը, դիմել «Բիշոֆսբերդի առավոտյան թերթ»-ի հայտարարությունների բաժնին E—8155 ծածկագրով։

Հերր Գեննիգը մի հանդիսավոր դադար տվեց ու տեղից նլավ ձեռքի թերթն առաջ մեկնած, թափահարելով այն վսեմ գայրույթով։

— Համաշխարհային այս վիթխարի իրադարձությունն քրոք որ բավական է կյանքի նոր ձևերով։ Խեղանդամված զինվոր, դավաճան հարսնացու, անհայտ կաղ կին, որը պետք է թերթևացնի դժբախտ արարածի տառապանքները և մեղմացնի դավաճանության դաժանությունը. որպի՞սի անապատ նյութ շնորհալի դրամատուրգի համար։

Նա անշարժացավ բաց թերթը գլխավերևը բռնած։

— Դա դատարկ բան է, հերր Գեննիգ,— ասաց Անդրեյը։

— Բայց ինձ հուզեց։ Ես սիրտ ունեցող մարդ եմ, Անդրեաս, հասկանում եմ նուրբ զգացմունքները։ Ես դեռ ոչ մի անգամ ձեզ չեմ ասել, որ չեմ կարողանում մոռանալ monsieur *Պերսիին։ Նա անվնաս մարդ էր և հարմոն էր նվագում, իսկ նրան բռնեցին ու բանտարկեցին բերդում։ Դա հուզիչ է։ Քաղաքականություն է՝ շատ լավ հասկանում եմ։ Սակայն քաղաքականությունից զատ գոյություն ունի մարդկային՝ կարելի է, և մարդկային՝ չի կարելի։ Մենք սկսել ենք նվնվալ, ուրեմն հասել ենք մարդկային՝ չի կարելիին...*

Անդրեյը մոտեցավ Գեննիգին ու բռնեց նրա ձեռքը։

— Իմ գնալու ժամանակն է։ Ցտեսություն, հերր Գեննիգ։ Շնորհակալ եմ ամեն ինչի համար, շնորհակալ եմ։ Ես էլ եմ ախրում ձեզնից բաժանվելուս համար։

Նա Գեննիգին քաշեց պատուհանի մոտ։ Լուռ կանգնել նայում էին հրապարակին։

— Չորս տարի այստեղ, երկուսն՝ այնտեղ, երեք տարի՝ որևէ ուրիշ տեղ. այսպես գոյանում է մարդու կյանքը։ Մեզ միշտ թվում է, թե ահա ուր որ է կսկսենք իսկապես լավ ապրել, այ միայն թե այս մի բանին էլ սպասենք, այստեղ էլ հասնենք։ Իսկ հետո հետադարձ մի հայացք՝ պարզվում է, վաղուց արդեն ամեն ինչ ետևում է, ամեն ինչ անցել ենք։ Բանից պարզվում է այստեղ, խոսքերիս վրա չղայրանաք, հերր Գեննիգ, այստեղ, այս բանտում ես ապրել եմ ինչպես պետքն է։ Եվ հիմա այստեղ թողնում եմ հարազատ մարդուս։

— Գիտեմ, Անդրեաս։ Ցանկանում եմ, որ նորից հանդիպեք նրան։ Ցտեսություն։

Հերր Գեննիգի ձայնը կտրվեց, կարծես կոկորդը բան ընկավ, դեմքը դարձրեց պատին ու հազաց։

— Գ-գրողը տանի... այս հազը և... խոպոտությունը... քհա՛, քհա՛.. Երեկ իմ պարտիան կատարելիս պետք է վերևի E-ն վերցնեի, ձայնս կտրվեց, քհա՛, քհա՛...

Անդրեյը մոտեցավ սեղանին, գլխարկը դրեց, պայուսակը դցեց մեջքին, վերցրեց ճամպրուկն ու նայեց շուրջը։ Հատակին, բազմոցի մոտ ընկած էին թառամած, տրորված ծաղիկները։ Նա արագ կռացավ, վերցրեց մի ծաղիկ ու դրեց գրպանը։

— Նա՞ էր բերել,— հարցրեց հերր Գեննիգը։

— Այո,— պատասխանեց Անդրեյը,— նա է բերել։ Հաջողություն ձեզ, հերր Գեննիգ։

Լեհական փոքրիկ մի վայրում, պատերազմից ջնջված ռուսական սահմանին, էշելոն էր կազմվում հիվանդ և վիրավոր գերիներից։ Ճամբարներից և հիվանդանոցներից ընտրում ու այստեղ էին քշում աշխատանքի համար ոչ պիտանի մարդկանց, քշում էին առանց շտապելու, ինչպես հոգնած անասունների նախիրը։

Օրերը ձգվում էին երկար, մռայլ, և մարդիկ հոգեմաշ էին լինում շչակների ձայնից, ճանապարհներին այդ ալարկոտ երկաթաղնգոցից, սպասումից։ Կարո՞ղ է արդյոք լինել ավելի ձանձրալի մի բան, քան գնացքից անջատված և պահեստային գծով փակուղի նետված ապրանքատար վագոնը։ Շատ հին կառուցվածքի, մրոտ շոգեքարշերը ամբողջ օրերով գծերի վրա քարշ էին տալիս վագոնները, մի տեղից մյուսը տեղափոխում, միացնում ու անջատում, և հարյուրավոր աչքեր անտարբերությամբ սահում էին վագոնների ետևից, ինչպես հողմացույցը՝ քամուց։

Թախիծը ժամանակ առ ժամանակ մի քիչ ընդհատվում,

թարմանում է, գերիների նոր խումբ ժամանելիս։ Այն ժամանակ սկսում էին երկար-բարակ հարցուփորձը, հետո ծաղրը.

— Տեսա՞ր, ո՞նց եկան։ Միանգամից Ռասստան պիտի գնան։ Չէ, ախպերս, հլա մի լեհական ոջիլին ապրեցրու, հետո կտեսնենք։ Միգուցե մինչև Ռասստան հասնելդ մեռնո՞ւմ ես։

— Դու ես, որ հեշտ ու հանգիստ էստեղ ես ընկել։ Մի հատ չէիր էլ փոշտացել, արդեն գերմանացու ֆերմայումն էիր։ Հիմի էլ ետ գնալը չե՞ս ուզում...

— Իսկ դու ո՞նց էստեղ ընկար, չլինի թե հրեատասյակով, հը՞։

— Ախպերս, իմ ու քո ոեխը միասին են ջարդել։

— Ռասստանը հեռու է, վազելով չես հասնի։ Հիմի չորս կողմը գերմանական կալվածքներ են, լեհն էլ հիմի գերմանացու ձեռքի տակ է։

— Զզվելի տեղ է սա։ Գրողի ծոց է, մի խոսքով։ Նստել ենք, երեք շաբաթ է ոչ մի շարժում։

Կամաց-կամաց համակերպվում էին, ընտելանում միմյանց, սպասում նոր խմբի։

Շաբաթական երկու անգամ արևելքից քշում էին լեհերի և հրեաների բազմություն՝ քրքրված շորերով, կեղտոտ, քշում էին՝ շրջապատած պահակախմբի սվիններով, ինչպես վանդակապատով։ Այդ վանդակապատի միջով երևում էին հալածված, տանջված աչքեր, ծնոտներ, որ շարունակ շարժվում էին, կարծես ծամոն էին ծամում։

— Խեղճ ժողովուրդը ուղղակի սևացել է, փտել։

— Ախպերս, հիմի սրանց վերջը կտան։ Քշում են հենց Հռենոսի ափը, ածուխ հանելու, հանքահոր են քշում։ Էնտեղի հանքահորերը քսան վերստ խորություն ունեն, ամբողջ օրը պիտի գնաս։ Շոգ է, շատ շոգ է Հռենոսում, էնպես, որ ձուն կեփվի։ Պարզ բան է, դրա համար էլ ածուխը միշտ վառվում է։

— Մերոնցից ում որ էնտեղ քշեցին, իսկի չեն երևում։

— Վերջ։ Որովհետև ուրիշ տեսակ չի լինի, կրակ է։

— Սուտ ես ասում, այ տղա, հենց ինքս եմ հանքահորում եղել, ոչ մի էդպես բան չկա։

— Դու որտե՞ղ ես եղել, ո՞րտեղ։ Գուցե մեր Դոնո՞ւմ ես եղել, իսկ ես Հռենոսի մասին եմ ասում։ Ֆրանսիացին գերմանացուց հանքահորը խլել է, իսկ առանց ածուխի գերմանացու վերջը կգա։ Դե նա էլ մտել է գետնի խորքը, Հռենոսի տակը։ Էդ տեսակ գործի մեջ իր մարդուն խղճում է դնի ու քշում է էնտեղ ամեն տեսակ պրոլետարների, մեր ժողովրդին էլ, եթե հաշմանդամ չեն։ Ախպերս, ճիշտ եմ ասում։

Նրանք, ում քշում էին արևելքից, դողում էին, ասես ցրտից, խղճալի նայում, թե ինչպես են գերիները ծամում եփած ճակնդեղը, և նրանց հետ շարժում իրենց ծնոտները, լիզում չորացած շրթունքները։ Սակայն նրանց երկար չէին պահում, քշում տանում էին արևմուտք։

Էշելոնի մեկնելու օրը ժամանած խմբի մեջ էին Անդրեյը և Լեպենդինը։

Անդրեյին և նրա հետ եկած քաղաքացիական երեք գերիներին դիմավորեցին լռությամբ։

Լեպենդինն անմիջապես ծանոթացավ, հարմարվեց, գլորվելով շարժվեց հաշմանդամների միջև, համերկրացի մեկին գտավ։

— Մե՞զ, մե՞զ,— բղավում էր նա իր կողովը ճռճռացնելով և թիակները թխկացնելով,— մեզ իսկույն տեղից կշարժեն, խոսքս հիշիր։

— Գուցե քեզ պես ճղճղանին շարժեն։ Իսկ մենք հաշվի որ մի ամիս է տրորվում ենք տեղներումս։

— Խոսքս հիշի՛ր։ Իսկույն կշարժվենք։ Ախպերս, վերջ մեր տանջավայրին, վե՛րջ։ Կար՝ ու չկա։ Հիմի կգնանք տուն, մեր հողը բոլ, որն ուզում ես, վերցրու։ Ով ուզում է՝ թող մարգագետին վերցնի, ով կուզի՝ անտառ, ով կուզի՝ հող փորի ինչքան որ պետքն է, արդարությամբ։ Աշխատիր, ապրիր, տնտեսությունդ պահիր, հերդ անիծած։

— Ախր քեզ պես անոտի ինչին է պետք հողը։

— Ա՜յ քեզ հիմար։ Ոնց թե հողն իմ ինչին է պետք, էդ ի՞նչ ես ասում։ Դու գյուղացի՞ ես, թե արհեստավոր, հը՞։

— Մենք Պենզայից ենք։

— Հաստակրունկ։ Իսկույն երևաց։ Ախր գյուղացին հիմի ո՞նց կմնա առանց հողի։

— Իսկ դու ո՞նց պիտի առանց ոտների, քամակովդ վար անես։

— Ա՜յ քեզ հիմար։ Ես ինչո՞ւ պիտի վար անեմ։

Լեպենդինը թափ տվեց իր համերկրացուն.

— Այդ հաստակրունկին մի ասա, թե ինչպես է մեզ մոտ Սանչինոյում, Ռուչյիում, ասա։

— Մենք սեմիդոլցի ենք,— ասաց համերկրացին,— մեզ մոտ ավելի շատ հատապտուղներ են, այգիներ, բանջարանոց էլ, դեհ վար ու ցանք էլ կա, քիչ ու միչ...

— Է՜հ,— գլուխը բռնեց Լեպենդինը։— Է՜հ, ախպերս։ Ինչ զիլ հատապտուղներ կան մեզ մոտ։ Բալը՝ ինչքան ասես։ Սալորը թափած, խոզերն էլ չեն ուտում։ Իսկ մարգերի վրա, մարգերի վրա, ախպերս, մարգերը կարմրած են ֆիամորուց, ֆիամորին էլ, ըհը, ամեն մեկը մի բռունցքիս չափ։ Վիկտորիա է, ինչ է, էդպես մի վաղահասը կա՝ ըմ-մ-մ։ Իսկ էդ խնձորներն էլ ամբողջ ձմեռն ուտում ենք. և՛ թթու ենք դնում, և՛ չորացնում, ոչ մի կերպ չի վերջանում, էնքան որ շատ է։ Մեր Սեմիդոլի շուկային նայում ես, հենց սարսափում ես, մարդն էդքան խնձորը ինչ կարող է անի։

— Իսկ ինչպիսի՞ խնձոր է,— հուզվեց, աշխուժացավ համերկրացին։— Ամեն խնձոր հո մեկ չի։ Մեր խնձորն էնպիսին է, որ հենց մի թեթև խփես, իսկույն տեղը կմնա, բայց դե էդպես, էդ ջարդված տեղն էլ վրան թե դնես պահարանը, ամբողջ ձմեռը կդիմանա։

— Չի՞ նեխի,— հարցրեց դուրս պրծած աչքերով տղան։

— Ի՞նչ ես ասում, տեր ասածած, երբեք չի նեխի,— շտապով պատասխանեց Լեպենդինն ու ոգևորվեց։— Խնձորն ուղղակի երկաթից է, հեչ պետքը չէ։ Այ թե տեսակներ են մեզ մոտ։ Է՛լ ցարսկի շիպ, է՛լ սպիտակ սունկ, է՛լ ապորտ։

— Բարգամոտ ունե՞ք,— հարցրեց տղան։

— Բարգամոտ զիբիլը մեզ մոտ չեն ուտում։ Դա բաղուկի նման է, ավելի շատ շիլաշփոթի մեջ են գցում։

— Այ թե մեզ համար այստեղ մի քիչ բարգամոտ խառնեին,— ծիծաղեց մեկը։

— Այստեղ կխառնեն։

Տղան տխուր հառաչեց։

— Իսկ մեր տեղերը շոգ են, տափաստանային, ամեն ինչ այրվում է։

— Շոգը եթե շատ չի, նույնպես օգտակար է,— արձագանքեց սեմիդոլցին։

— Ոչինչ, ախպերս, մի տխրիր, արի մեզ մոտ, մեր մարգերը,— ասաց Լեպենդինը։— Հիմա հող ինչքան ասես կա, ինքդ ընտրիր ինչքան կուզես։ Դուրդ չի գա՝ գնա։ Դուրդ կգա՝ օգտագործիր, ինչ ուզում ես ցանիր։ Ես, ասենք, անոտ մնացի պատերազմից։ Բայց դե բանջարանոցին հարմարված եմ։ Նանր գործ է, կնիկը որ կնիկ է, էլի չի դիմանում։ Իսկ ինձ ի՞նչ։ Ձեռքս կես արշին հողի մեջ է մտնում, իսկ մեջքս չեմ կռացնում։ Հեշտ ու հանգիստ։

— Տեսա՞ր ինչ ուրախն է։

— Բա ի՞նչ, լա՞ց լինեմ։ Էհ, սիրելիս, տուն ենք գնում, ազատություն, ազատությունը մեր գյուղական։

— Էս ովքե՞ր են ձեր խմբի հետ։

— Կուլտուրականներից են։

— Պարոնների՞ց։

«Ոնց ասեմ,— մտածեց Լեպենդինը։— Ճիշտ է, կրթված մարդիկ են։ Բայց ոչինչ...»։

— Ասում են հիմի մեզ մոտ դրանցից չկան։

— Դե, ոչ թե չկան, բայց գյուղացիների հետ գործ չունեն։

— Հը-ը՜մ։

Լեպենդինն իր հետ հաջողություն էր բերել. երեկոյան էշելոն կազմեցին և սկսեցին մեկնելու պատրաստություն տեսնել։

Անդրեյի կողքին տեղավորվել էր մի հաստամարմին մորուքավոր, ոչխարենու կիսամուշտակով ու գդակով։ Նա իր արտակարգ հագուստով շատ աննկատաշնակ տեսք ուներ զինվորական մաշված վերնաշապիկների և գլխարկների միջև։ Նրա մազերն ու զորեղ խարտյաշ մորուքը պարուրաձև գալարվում էին սոճու տաշեղիկների նման, դեմքը տարօրինակ կերպով փոքր էր այդ առատ մազերի մեջ, թափանցիկ կոպերը կիսով չափ ծածկում էին վառվռուն, սև աչքերը։ Գյուղացին շատ բարձրահասակ էր, ուսերն էլ լայն էին, թեք, սակայն նա դժվար էր ոտքի վրա մնում և վագոն մտնելուն

պես անմիջապես ձգվեց նստարանին, կիսամուշտակը դնելով գլխատակը ու գդակն էլ թաքցնելով կիսամուշտակի մեջ։

— Հիվանդ ե՞ս, ինչ է,— հարցրեց Լեպենդինը, երբ տեղավորվեցին, և նա սկսեց պտտվել վագոնում, հարևաններին ուսումնասիրել, զրույցի բռնվել։

Գյուղացին, հառաչելով, բարձրացրեց տափակ կուրծքը, այն ճռճռաց պատռված փուքսի նման, և նա մատով ցույց տվեց կուրծքը։

— Հը՞մ,— ասաց Լեպենդինը,— կուրծքդ է հիվանդ, հասկացա...

— Արյուն եմ խխում,— ասաց գյուղացին բարալիկ ձայնով, որպիսին չէր կարելի սպասել նրա հասակի, թիկունքի, այդքան փարթամ դյուցազնական մորուքի տեր մարդուց։

— Ո-չինչ,— անհոգ ծոր տվեց Լեպենդինը։— Դա գերությունից է առաջացել։ Հենց որ տուն հասնես, իսկույն կանցնի։ Դու ո՞նց այստեղ ընկար։

— Բերեցին աշխատացնելու լաստանավերի վրա։

— Որտեղի՞ց բերեցին։

— Հայրենիքից, Մինսկի մոտերքից, էնտեղ տնտեսություն ունեմ։

— Ճիվաղներ, տե՞ր աստված։ Տնտեսությունի՞ց։

Գյուղացին զգուշորեն հաղաց, առանց բերանը բանալու, հետո փակեց հավի կոպերի նման նեղլիկ կոպերը։

— Նրան հանգիստ է պետք,— ասաց Անդրեյը։

— Հանգիստ նա սիրում է,— լսվեց ծաղրալի մի ձայն։

Գյուղացին անհանգստացած ուղղեց ոչխարենու կիսամուշտակը և նորից զգուշորեն հաղաց։

Լեպենդինի շուրջը հավաքված զինվորների ետևը Անդրեյը տեսավ այտոսկրոտ, ասես քարերից ծեփված մի դեմք։ Սուր ուղիղ մի գիծ հատում էր նրա ճակատը։

— Նա հենց հանգստի համար գերմանացիների մոտ աշխատանքի վարձվեց։ Իսկ գերմանացին նրա փողը չտվեց, ու հիմա դրա համար է տանջվում։

Գյուղացին, առանց աչքերը բանալու, ասաց.

— Տնտեսությունս ավերեցին, ինչպե՞ս ոտքի կանգնեի։

— Դու քո տնտեսության համար հոգիդ սատանին կծախես։

Լեպենդինը բոթբոթեց զինվորներին։

— Հապա մի թողեք, տղերք, տեսնեմ էդ ո՞վ է, որ տնտեսության մասին այդպես է խոսում... Հա՜, այ թե դու ով ես երևում է արհեստավորներից ես։ Ախր դու ո՞նց կարող ես տնտեսության մասին խոսել, հը՞, մի ասա, հասկանանք։

Այտոսկրոտը աչքերը կկոցեց Լեպենդինի վրա և ձեռքերն իրար շփեց։

— Իսկ ինչո՞ւ չեմ կարող խոսել։

— Ախր մարդ ոնց տնտեսության համար չտանջվի, հը՞։ Բա գյուղացին առանց տնտեսության կարո՞ղ է ապրել։

— Սպասիր, սպասիր, մի թարսվիր, լավ է լսիր, տես, թե ինչ եմ ասում։ Տնտեսությանը տարբեր կերպ կարելի է նայել։ Ռուսաստանում գյուղացին իր տնտեսությունը միանգամից կարգավորեց. դարերով աշխատեց տերերի համար, իսկ հետո գլխի ընկավ, որ եթե աշխատանքն իրենն է, ուրեմն տնտեսությունն էլ իրեն է պատկանում, ուրիշ ոչ մեկին։ Վերցրեց ու տերունական հողերը միացրեց իրենցին, ուրեմն և ամբողջ տնտեսությունը դարձավ գյուղացունը։ Այ այսպիսի տնտեսություն արժե ունենալ։

— Ճիշտ է,— լսվեց ետեից։

Շուրջը բոլորը լռել էին։ Զինվորները կասկածանքով նայում էին այտոսկրոտին,— նա, երևում է, օտար էր գրանց մեջ,— ամրակազմ, քարից ծեփված, բաճկոնով, նեղլիկ կարտուզը ծոծրակին։ Ոչ ոք չէր նկատել, թե նա որ խմբի հետ էր եկել և երբ էր խառնվել էշելոնին։ Իսկ այտոսկրոտը կկոցած աչքերը սահեցնում էր զինվորների գլխների վրայով և, չափանիշի նման, կարճանում ու երկարում էր նրա ճակատի սուր լայնակի գիծը։

— Արժեք ունի այն տնտեսությունը, որն օգտակար է ամբողջ գյուղացիությանը։ Իսկ այն, որից գյուղացիությանը միայն վնաս է հասնում, այդպիսին պահել էլ չարժե։ Ահա այս գյուղացին մարդկայնորեն մեղք է, հիվանդ է, թոքախտավոր, մի խոսքով։ Սակայն ջղայնությունդ գալիս է նրա վրա։ Իր կամքով վարձվել է գերմանացուն, որպեսզի փող կուտակի, վարտիքին կարկատան գցի։ Իսկ մեղ մոտ Ռու-

ասստանում վարտիքները ձրի են բաժանում, բոլորին էլ կհասնի։ Նա միայն թե այնտեղ գնար, որտեղ մարդիկ նոր կերպ են սկսել ապրել, իսկ գնացել է ստրկության, կոպեկ կուտակի։ Չի հավատում, որ հիմա մեզ մոտ գյուղացիներին ունեցվածքը ձրի են բաժանում։

— Ձրի՞,— կասկածեց մեկը։— Մի քիչ շատ չասի՞ր։

— Դու ինչ է, չե՞ս լսել։

— Լսելը՝ լսել ենք, բայց դու ինչ է, էնտեղ եղե՞լ ես։ Ինչոր շատ չե՞ս ամեն ինչ բաժանում։

Այտոսկրոտը աչքով արեց ու ձեռքերը շփեց։

— Եղել եմ, թե չեմ եղել, ո՞ւմ ինչ գործն է, բայց դե որոշ բաներ գիտեմ...

Նրան սեղմեցին ուսերի, կրծքերի և թևերի հոծ շրջանի մեջ, ու տասնյակ աչքեր վազվզում էին նրա շարժուն հայացքի ետևից։ Նա հանկարծ ծիծաղեց։

— Այդ գյուղացու անունը Կիսել է, քեռի Կիսել։ Դրան մի քիչ շոշափեցի, իսկապես էլ ջրջրիկ է։

Հիվանդը տեղում շարժվեց ու գլխատակին ուղղեց կիսամուշտակը։

Զինվորներից մի քանիսը ծիծաղեցին։

— Տղերք, նրան իղուր եք խղճում։ Խղճալով գործին չես օգնի, հիմա այդպիսի ժամանակ չէ։ Ձեզ էլ պետք է խղճալ. մեկը հիվանդ է, մյուսը անձեռք, մեկը ոտք չունի։ Մենք ինքներս էլ էդքան խելք ունենք։ Դու մի քիչ ասա, տեսնենք, թե ի՞նչ գիտես Ռուսաստանի մասին։

— Ռուսաստանի մասի՞ն։ Մենք... կարելի է։

Այտոսկրոտը գլխով արեց և կամացուկ ասաց.

— Գնանք ահա այստեղ, ավելի ընդարձակ է տեղը։

Նա դուրս պրծավ իր շուրջը սեղմված մարմինների միջից, ճարպիկ, ճկուն շարժումով նետվեց վագոնի դատարկ անկյունը։ Սուր-սուր ուսերով, հազիվ ոտքի վրա մնացող, խեղանդամված զինվորները նետվեցին նրա ետևից, դիպչելով նստարաններին և պատերին։

Լեպենդինն անշարժ նստած էր իր կողովի մեջ։

Քեռի Կիսելը կոպերը մի քիչ բացեց, վառվռուն աչքերը փայլեցրեց Անդրեյի, Լեպենդինի վրա և հաղաց։

— Ինչ է, ճի՞շտ են ասում,— հարցրեց նա կամացուկ,— թե հիմի մեր հայրենիքում բոլորը շատ փող ունեն։

— Փողի գինն ընկել է, դա ճիշտ է,— ասաց Անդրեյը։

Քեռի Կիսելը բարակ մատները սահեցրեց ոչխարենու կիսամուշտակի վրայով և նորից աչքերը փակեց։

Լեպենդինը հանկարծ թիակալները խփեց հատակին, ձեռքերի վրա ձգվեց ու չարությամբ ասաց.

— Երևի էդ կիսամուշտակիդ համար միանգամից մի հազար մանեթ տան։

Մարմինը ճռճեց, տեղը փոխեց, նորից թիակալները թափով զարկեց հատակին ու շարժվեց դեպի անկյունում սսկված զինվորները։

Քանի աչքդ կտրեր, դաշտը ծածկված էր մարդկանցով և կապոցներով։ Ծանր աղմուկ էր բարձրանում կիսակայարանի վրա։ Գնացքները շարժվում էին կարծես խարխափելով և ուղեղաքների մոտ երկար հապաղում էին, փորձելով ռելսերը, ինչպես մարդիկ՝ խրուտ ճանապարհը։ Խարույկներից գլխավերևներում նոսր, կծու ծուխ էր տարածվում։

Սոճու փոքրիկ անտառակում ճամբար էր։ Արգելափակոցներից պոկված և ծառաբներին փաթաթված մետաղալարի ետևը թրև էին գալիս զինվորները փայտե կոշիկներով, և այդ կոշիկները դղրդում էին գետնին տակառիկների նման։

Ավանում, հրեական խցիկներում և կրպակներում սնդիկի գնդիկների պես վազվզում էին կարճլիկ մարդիկ, մերթ ցրվելով, մերթ կուտակվելով, գլուխ-գլխի, ուս-ուսի։

— Դուք հարա՞վ եք մեկնում։ Երբեք խորհուրդ չէի տա։

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ։ Ես ձեզ ասում եմ՝ իսկական ոսկու հանք է, ոսկու հանք։

— Ի՞նչն է գնում։

— Ֆալբերգի սախարինը։

— Երբեք չեմ հավատա։ Ֆալբերգը Մոսկվայում է գնում։

— Ահա խնդրեմ, խնդրեմ կենդանի մարդ է Կիևից...

— Մոսկվայում կարող եք երկու օրում գործը գլուխ բերել, ազնիվ խոսք։ Ինձ հավատո՞ւմ եք։ Հավատո՞ւմ եք։

— Հարկավոր է ճանապարհը նկատի առնել։

— Ճանապարհը, ճանապարհը, ճանապարհը, գլուխներդ

Եք գցել այդ ճանապարհը։ Հիմա ամեն տեղ նույնն է, հավատացեք ինձ։ Ես քառասուն հազար վերստ եմ կտրել։

— Պետք է ռիսկով լինել։

— Մոսկվայում բոլորն էլ ռիսկով են։

— Դուք որտե՞ղ եք մեկնում։

— Վարշավա։

— Այնտեղ Օստ-մարկան ինչպե՞ս է։

Հին խրամատներում, որոնց վրա խոտ էր աճել, ապաստանել էին մարդիկ, որ նման էին գնչուների, ապաստանել էին երեխաներով, պառավներով, իրենց կլայեկած քաստանեբով, կոտրտված ամանեղենով։

Գետնափոր տնակում բղավում էր ծննդկանը, եռանիվ սայլի տակ զառանցում տիֆով հիվանդը, նրա վերևը, ծղոտի մեջ, խաղում էին երկու տարեկան պստլիկ կեղտոտ աղջիկները։

Կիսամերկ մի կին, կրծքերը դատարկ պարկերի պես կախված, իր լաթերի վրայից միջատներ էր հավաքում։ Անոտ դինվորը մոխրի մեջ կարտոֆիլ էր եփում և մի ոստոտ ճիպոտով քշում էր երեխաներին։

Մարդիկ խղճուկ ճտերի նման խմբվել էին խարույկների շուրջը. և խրամատներով կտրտված, պայթած արկերից փորփրված գետնի վրա,— աղտոտված, պղծված հողի վրա,— ծնվում էին, մահանում, սիրում, թախիծով ու զայրույթով որոնում նոր, մաքուր հող։

Արևելքից, լուսաբացների և մթնշաղների մեգից խարխափելով գալիս էին գնացքները՝ դերիներով լեփ-լեցուն, որոնց աչքերը հույսով ու թախիծով սևեռվում էին դեպի արևմուտք, դեպի տուն, դեպի հայրենիք։ Ռուսական լավ կարված զինվորական վերնաշապիկներով, կլորերես, ասես վրաներից. սիբիրյան հացի հոտ էր բուրում, գերի գերմանացիները խումբ-խումբ մտնում էին կարանտինային բարաքները։

Արևմուտքից, մյուս գերությունից, քարշ էր գալիս հյուծված ռուս գերիների բազմությունը աչքերը հառած արևելք, իրենց հայրենիքին, իրենց տանը։ Նրանց էլ էին բարաքներ տանում, կիսակայարանի մյուս կողմում, բարձր պատնեշի ետևը։

Սակայն կտրելով մետաղալարերը, ցանկապատերը և

պատվարները, մարդիկ հանդիպում, կանգնում էին դեմ-դիմաց, և լուրերն արևելքի մասին, լուրերն արևմուտքի մասին, լուրերը վշտի, կարիքի ու հույսերի մասին տարածվում էին խարույկի անկշիռ ծխի նման։

Երբ վագոնի պատուհանում Անդրեյի առջև բացվեց մարդկային այդ արոտավայրը, նրան մեկը բոթեց։ Անդրեյը շրջվեց։ Ետևում կանգնած էր նեղլիկ հովարով գլխարկը ծոծրակին դրած այտոսկրոտ տղան։ Նրա ճակատը հարթ էր, գիծն անհետացել էր, աչքերն աշխույժ վառվում էին և բերանը ջղաձգվում էր գոհ ծիծաղից։

— Այս խառնաշփոթը մենք ենք եփել,— ասաց նա, գըլխով անելով դեպի մրջնանոցը և ձեռքերը շփելով։

Նրանից քունն առած մարդու թարմություն էր բուրում, և ինքն էլ լավ պինդ ճմլկոտում էր, ճրթճրթացնելով ծուռումուռ ձեռքերի հոդերը։

— Լավ թթխմոր ստացվեց։ Տեսնո՞ւմ ես, ոնց է պղպջում։ Ես կարծում եմ,— ասաց նա հոնքերը շարժելով,— լավ կլիներ շատ էսպիսի կաթսաներ լինեին։

Եվ կրկին, ձեռքերը շփելով, բացատրեց.

— Ժողովուրդը եղբայրանում է։

Հետո Անդրեյը տեսավ, թե ինչպես դաշտում նա խցկվեց մարդկանց խմբի մեջ, այս ու այն կողմ ընկավ, դուրս սահեց, վազեց մտավ մյուս խմբի, երրորդի մեջ։ Նրա ետևից շրջվում էին մերթ ծիծաղելով, մերթ լուռ։ Նա ամբոխի մեջ ինչ-որ հնարովի մտքեր էր տարածում և կարծես աղբիկ լիներ, որ գցել էին ջրով լի շշի մեջ և շիշը թափահարել. ահա արագ դեսուդեն է վազվզում, ահա կանգ կառնի, ահա դարձյալ տեղից կպոկվի, ինչպես հրոցից։

Երբ ճամբար տեղափոխվեցին, քեռի Կիսելը գնաց մարդկանց մեջ թափառելու։ Այստեղ նրա գլխին հակասական լուրեր տեղացին՝ սարալանջից թափվող քարերի նման, և նա սկսեց դաշտում այս ու այն կողմ վազվզել, ինչպես մի վախեցած գաղանիկ։

— Քեռի, էնտեղ հանգիստ կյանք չկա։ Գալիս է էդ գվարդիան՝ դեհ, ձիդ տուր։ Գյուղացին էլ, հո ինքդ էլ հասկանում ես, անպաշտպան մարդ է, ուրեմն տալիս է։

— Հիմի մեղ մոտ գյուղացիք ոնց որ ավազակներ լինեն,

ամեն տանը ռումբեր են պահում, խրճանոցում՝ գնդացիրներ, մոտներն էլ միշտ դանակ ունեն։ Ուրիշ կերպ չեն ապրի։

— Բավական է այս վայրահաչությունը լսես։ Իմ անասունը սատկել է, հենց դրա համար էլ հեռացա։ Իսկ կյանքը լավ է, ամեն ինչ էլ բոլ է։

— Թե որ կյանքը էդքան վատ չլիներ, մենք ինչի պիտի էս տեսակ տանջանքներ քաշեինք։ Էլ ուժ չկա։

— Ամեն մարդ իր գլխի տերն է։ Ինչ կուզի, էն էլ ֆվերցնի։ Ասում եմ քեզ, իսկի մի կասկածիր, գնա, չես փոշմանի։

Ռուսական զինվորական վերնաշապիկներով գերմանացիները անհասկանալի ժպտում էին ու կոտրված ռուսերենով ասում.

— Ռուսաստան լավ, Գերմանիա լավ, ամեն ինչ լավ, թե գլուխ կա։

Կարճլիկ մարդուկը ճղճղում էր ու ձեռքերը զայրալից թափահարում։

— Ինչպե՞ս կարողացաք մեկնել։ Ասում եք ծանր է, իսկ ես ձեզ ասում եմ, որ Ռուսաստանը վերջացել է, ամբողջապես վերջացել, այլևս չկա։ Ռուսաստանում շուտով միայն շները կմնան, որ ոսկոր կրծեն։ Այնտեղ ոչ մի գործ չի կարելի անել։

Մարտիկների միջից բարեսես մի զինվոր ամաչեցնում էր.

— Հողը աստծու պարգևն է մարդուն։ Աստված քեզ դրել է ռուսական հողում, ուրեմն, այն քո մայրն է։ Ընդունիր նրա բոլոր վիրավորանքները, թե պատժի էլ, պատիժդ կրիր։ Ավելի մեծ մեղք չկա, քան մորդ լքես տանջավայրում...

Մթնշաղին քեռի Կիսելը ճամբար վերադարձավ օրորվելով, ինչպես քամուց։ Ամբողջ գիշերը շուռումուռ էր գալիս ծղոտի վրա, տրորվում ինչպես զառանցանքի մեջ։ Առավոտյան, հենց որ զինվորներն սկսեցին շարժվել իրենց տախտամածների վրա, նա կանգնեց բարաքի մեջտեղում ու ասաց երկար ու ձիգ։

— Եղբայրներ, ա՜յ եղբայրներ։ Մի ինձ լսեք, եղբայրներ։ Ես հիվանդ մարդ եմ, չորս կողմն էլ ամեն մեկն իր մասին է մտածում։ Ձեղնից խորհուրդ եմ խնդրում, ասեք ինձ, եղբայրներ, հիմի ես ո՞ւր գնամ։

Ոչ ոք նրան չպատասխանեց։

Նա դանդաղ կռացավ, հատակին հենեց մի ծունկը, հետո մյուսը։

— Քրիստոսի սիրույն, եղբայրներ, խնդրում եմ, մի խորհուրդ տվեք, հիմի ես ո՞ւր գնամ։

Լեպենդինը հաղաց, հայացքը պտտեցրեց տախտամածներով և ասաց.

— Ես հետևում էի քեզ, ախպերս, ճամփին, քանի դեռ գալիս էինք։ Քեզ շատ չի մնացել ապրելու, մեկ է, թե որտեղ կմեռնես։ Իսկ գնացքի մեջ տեղ ես գրավում, պառկում ես։ Էդ ժամանակ նրա համար, ում պետք է տուն հասնել, կարող է քո պատճառով տեղ չլինի գնացքում...

Առանց ծնկները հատակից կտրելու, քեռի Կիսելը հարցրեց.

— Հայրենի հողի վրա մեռնելը ավելի հեշտ է, հը՞, եղբայրներ։ Մեռնելը, հը՞։

Լեպենդինը նորից նայեց տախտամածներին։ Ոչ ոք չպատասխանեց, ասես բոլորը դեռ քնած էին։

— Մենք քեզ էսպես խորհուրդ կտանք,— ասաց Լեպենդինը։— Էստեղ մնա, որովհետև հիմի մարդու համար ոչ մի տեղ էլ լավ մահ չկա։

Նա իր տակ ուղղեց կողովը, գոտին ձգեց, երեսը շրջեց։

Քեռի Կիսելը դեռ մնաց ծնկաչոք, աչքերը փակ, երերալով։ Հետո վեր կացավ, մոտեցավ իր տախտամածին, գլխատակից հանեց կիսամուշտակը, ծալեց ու սկսեց խնամքով կապել պարանով։ Այդ գործը վերջացնելուց հետո մտասուղվեց։

Տախտամածներից սևեռուն հայացքներով հետևում էին նրան, ինչպես օտարի։ Նա կանգնել էր անշարժ, գլուխը թեքած, փարթամ մորուքը խրվել էր կրծքի մեջ, ձեռքերը չովել էին, ասես մի գործ էր ձեռքից գցել։

Լեպենդինի հաղը հանկարծ բռնեց։

Այն ժամանակ քեռի Կիսելը գլխարկը դրեց գլխին, կիսամուշտակը գցեց շալակը, վերցրեց պարկն ու երերալով, ոտքերը գյուղացիավարի լայն-լայն դցելով քայլեց դեպի ելքը։

Նրա ետևից դուռը փակվելուց հետո մի երկու րոպե լռություն էր տիրում։ Հետո գերիները մեկը մյուսի ետևից իջան տախտամածներից ու խմբով, առանց իրար նայելու, դուրս

եկան բարաքից, շրջանցեցին ճամբարի դարբասն ու դաշտ դուրս եկան։

Քեռի Կիսելը երերում էր կապոցների, զանազան իրերի կույտերի, խարույկի նոսր ծխով պարուրված մարդկանց վրա։ Դեղին ոչխարենին սապատի նման ցցվել էր նրա մեջքին, և նա կքվել էր դրա տակ, ինչպես ուժից վեր բեռան տակ։

Նա գնում էր ետ, գերության։

Այտոսկրոտ տղան չգիտես որտեղից մոտ վազեց զինվորների խմբին, որոնք աչքերով ուղեկցում էին քեռի Կիսելին, և լռությունը ճեղքեց սեպի պես ամուր խոսքերով.

— Այ թե բանն ինչ է։ Ես ասում եմ, որ ով ուզում է մենակ լինել, էնպես, ինքն իրեն համար, էգիպիսի մարդը մեր ժամանակ ապրելու բան չի։ Ժողովուրդը հիմի ապրում է հաշտ, համերաշխ, հավասար իրավունքով։ Էգիպիսի մարդիկ մեզ պետք չեն։

Եվ տղան ձեռքը մեկնեց այն կողմը, ուր արդեն աչքից հեռացել էր քեռի Կիսելը։

Լեպեդինը հլու ձայնակցեց։

— Եւ նրան այդպես էլ հայտարարեցի. ասացի՝ քեզ նմանները մեզ պետք չեն, գնա, տեր ընդ քեզ...

Ճանապա՜րհ, ճանապա՜րհ։

Կրով ծածկված դիակափոսերի վրայով, գետնի վրա ցամաքաջրային արարածների նման սողացող խեղանդամված մարմինների վրայով, լաց ու կոծի, հառաչների միջով, մահ սերմանած հողի վրայով՝ ճանապարհ դեպի կյանք։

Գնացքի պոչին կցված վագոն-հոսպիտալում, ոտքերի ու ձեռքերի հյուծված մնացորդների մեջ բարակասեղ սրսկիչներով դիգալեն և մորֆի էին սրսկում, և հանգուցավոր ուռած երակների մեջ աղաջրի լուծույթներ ներարկում։ Սահմանված զարկերը խփող զարկերակները նորից լցվում էին մածուցիկ արյունով, շրթունքները մի անգամ էլ սկսում էին շարժվել և դարձյալ շշուկ էին արձակում.

— Քույր, հա-սա-սա՞նք...

— Շուտով կհասնենք։

— Մենք ո-ո՞ր... նա-նա-հան-գում ենք։

— Սմոլենսկի։

— Մինչև Տամ-բո-բովը հեռո՞ւ է։

— Շուտո՛վ, շուտո՛վ։

Առջևի վագոնները վերից վար լցված մարդկանց թմբադեղ չէին սրսկում։ Սակայն նրանք էլ երերում էին հարբածների պես, ասես ծիծաղեցնող գաղ կուլ տված լինեին, պատուհաններից դուրս էին կախվել և հացահատիկի բուրմունք բերող քամուն ընդառաջ անկապ երգեր էին գոռգոռում։ Հանկարծ արթնացել էր խոր քուն մտած բարությունը, և մարդիկ միմյանց առջև բացվել էին գարնանային պատուհանների պես, իրար օգնում էին պարկերը կապել, կիսում էին մոտներն ունեցած բաղուկը, տախտամածները զիջում էին հիվանդներին ու նվազներին, այդ ամենն անում ծիծաղով և անտաշ պարզությամբ։

Գնացքը զգուշորեն շարժվում էր իրար խառնված ռելսերի վրայով, օձի նման գալարելով իր կանաչ հոդերը և ներս սողացնելով ջարդված վագոնների միջև եղած ճեղքերը։ Գնացքի ընթացքը շարունակ ավելի էր դանդաղում, շուրջը գնալով ավելի շատ էին կուտակվում մեռած գնացքներ, և ահա այն կանգնեց։

Այտոսկրոտ տղան հասավ ընկավ Անդրեյի վրա ու պարզորոշ շշնջաց.

— Հապա նայիր։

Հարևան գծին կանգնած դատարկ վագոնում, գերմանական զինվորը, չորսբոլորը նայելով, գրպանից արագ հանեց ծալովի դանակը, կտրեց պատուհանի փոկերը, կոլոլեց, դանակի հետ խոթեց գրպանը և ցլկեց վագոնից։

— Հը-ը՛մ,— ծոր տվեց այտոսկրոտը,— ըս-կըս-վում է։

Նա անմիջապես ցնցվեց սոսոռուն, անձայն ծիծաղից, ու աչքերը շրջապատվեցին սարդոստայնի նման բարալիկ կընճիռներով։ Սակայն հանկարծ շտկվեց։

Ինչ-որ տեղ հեռվում ջարդված ապակու ձայնով ճայթեց մի կարճ կրակոց։

Այտոսկրոտը դարձավ զինվորներին, հովարով գլխարկը հանեց և բարձր, պարզ ու հստակ արտասանեց.

— Թանկագին ընկերներ, շնորհավորում եմ ձեզ բարեհաջող կերպով հայրենիք վերադառնալու առթիվ։

Այս սահուն խոսքերից գնացքն ասես տեղից պոկվեց, և վագոնում ամեն բան ուրախ-ուրախ ետ ընկավ։

Անդրեյը բռնեց այտոսկրոտի արմունկը և ցած ընկնելիս նայեց նրա դեմքին։ Այն լուսավորվել էր մանկական ուրախությամբ, և այդ դեմքին կնճիռների հետք էլ չկար։

— Վեր կաց, վեր կաց, ընկեր,— ասաց նա Անդրեյի ձեռքերից վեր քաշելով։

Եվ այդ պահին Անդրեյի դեմքին մի տապ փչեց, նա այն ներքաշեց իր մեջ, ինչպես խեղդվողն է օդը ներքաշում, ու անմիջապես արտաշնչեց վայրի մի ճիչով։

Եվ ամբողջ վագոնը հարյուրապատկված միացավ այդ ճիչին, և տասնյակ վագոններում, հարյուրավոր կրծքերից դուրս թռավ այն գլորվող երկաթի նման, դուրս թռավ պատուհաններից ու դռներից, տրորեց, կոտրեց, խեղդեց գնացքի դղրդոցը, և պողպատի ու քարե կույտերի վրայով սլացավ դեպի դաշտ, դեպի լայնարձակություն։

Եվ վագոն-հոսպիտալում, գնացքի պոչին, դիգալենի սրբոկումով վերստին կյանքի կոչվածը հարցրեց շշուկով.

— Քույր, մինչև Տամ-բով շա՞տ կա։

— Շուտո՛վ, շուտո՛վ։

Այստեղից Տամբովը շատ մոտ էր։ Յարոսլավլն էլ մոտ էր, Օմսկն էլ հեռու չէր։ Այստեղից ամեն ինչ հասանելի էր, պարզ, հնչուն։ Այստեղ հայրենիքն էր։

Զինվորները հոտոտում էին քամու անորսալի շարժումները և, չգիտես ինչ կռահողությամբ, զգում էին այգիների, դաշտերի, ձորակների հարազատ հոտերը։

Աստիճանաբար, ժամեժամ կայարանը դատարկվում էր։

Մարդիկ հետևում էին պատահական գնացքների, բարձրանում վագոնները, մտնում տախտամածների տակ, բարձրանում պարկերի վրա, տեղավորվում վագոնների ոտնակներին և շղթայակցումներին ու փախչում էին, փախչում դեպի լայնարձակությունները, դեպի դաշտերը, Ռուսաստան։

Ու երբ Ֆեոդոր Լեպենդինը զգաց, թե որտեղից է փչում իրենց այգիների հոտերը՝ սպիտակ սունկի, անիսոնի հոտերը, ու հասկացավ, որ հիմա ինքն է իր համար պատասխանատու, ավելի պինդ ձգեց կողովի փոկերը, և իր ամուր կաղնեփայտե ձեռքերին հենված, թռավ դեպի այն վագոնը, որ գրոհում էին զինվորները։

— Ախպեր տղերք, օգնեցեք հաշմանդամին,— բղավեց նա

ուսերով խփելով զինվորների ծնկներին և խցկվելով դեպի վագոն։— Տեղ տվեք հաշմանդամին, գթացեք անոտ դժբախտին, ախպեր-ընկերներ...

Մեկը նրան բարձրացրեց սանդուղքին, և նա հացահատիկի պարկի նման ընկավ վագոնի հարթակը։ Նրա վրայով սկսեցին կոշտ ոտքեր անցնել։

Անդրեյը նայում էր կառամատույցում և գծերի վրա այս ու այն կողմ նետվող գերիներին։ Նա աշխատում էր որսալ որևէ մեկի հայացքը։ Սակայն բոլորի աչքերն էլ փախչում էին այս ու այն կողմ, ինչպես մարդիկ ճանապարհին՝ հոնքերով սեղմված, ճնշված, անհասկանալի աչքեր։ Ուրախության առաջին ճիչի հետ իրար դեմ բացված զարնանային պատուհանները հանկարծ փակվեցին խուլ փակոցափեղկերով։

Ամեն ինչ մնաց ետևում։ Կրով ծածկված դիափոսերը, սովը, բղավոցները, հրամանները, բարաքների խեղդուկ օդը, ժանդոտած փշալարը և պատուհանի վանդակապատը՝ այն ամենը, ինչ մարդկանց վերածում էր խոնարհ հոտի։

Մարդիկ անցան ճանապարհը, մարդիկ դուրս եկան լայնարձակություն։ Եվ ամեն մեկն սկսեց ապրել իր համար նոր ճակատագրի հույսով՝ ազատության մեջ, հայրենիքում, Ռուսաստանում։

Անդրեյն իր թիկունքում լսեց մի տխուր երգ, որ համեմված էր հոգնաբեկ ձայների խռպոցներով.

> Ախ, տեր աստված, երկնային մեր հայր,
> Հան ռազմիկի երկաթե-փշե պատկը,
> Հանգցրու, քշիր պատերազմ ու հոգս։
> Տուր խեղճ գեղջուկին հաց ու աշխատանք։

Երեք կույր, թևերը միմյանց ուսերի դրած, դանդաղ շարժվում էին կառամատույցով։ Նրանց տանում էր պստլիկ մի աղջիկ, նիհարիկ թևով մի կողմ հրելով դիմացից եկող զինվորներին։

Կույրերի գլուխները վեր էին բարձրացված, և ամեն քայլի հետ ցնցվում էին բարակ պարանոցների վրա, կղակներն առաջ տնկելով։ Աչքերը բաց էին և, կաթնա-սպիտակ, անընդհատ պտտվում էին կեղտոտ, չթարթվող կոպերի մեջ։ Այդ

մարդկանց հայացքը կարելի էր տեսնել։ Աչքերի վրա հոնքեր չէին կախված։ Սակայն այն դատարկ էր։

Անդրեյը հիշեց Յոթ Լճակների զբոսայգին և կույր իտալացիներին՝ նրանց աչքերը, որոնց մեջ արտացոլվում էին ծառերի ճյուղերը, հիշեց Մարիին, որն իրենից անջատվել էր կույրերի հոսանքով։

Եվ հանկարծ պարզորոշ տեսավ Մարիին ծառին հենված, ասես կապված, տեսավ նրա անզոր կախ ընկած թևերը, նրա պինդ փակված աչքերը։ Նա մոտեցավ պատին, հենվեց, և նրա թևերն անզոր կախ ընկան, ինչպես այն ժամանակ Մարիինը։

Եվ հիմա, և՛ այն ժամանակ Անդրեյին Մարիից բաժանում էր միայն ճանապարհը։

Առանց սև ու սպիտակի

Իհարկե, այստեղ ամեն ինչ օտար էր։

Մի ժամանակ հեռավոր, հեռավոր Բավարիայում աշխարհագրության ուսուցիչն այս քաղաքի մասին պատմում էր, սահուն ճոճանակի նման ճոճվելով դասարանում.

— Այն զարմացնում է իր վայրիությամբ, որը շատ ճանապարհորդներ հակված են գեղեցկություն համարելու։ Ռուսական կյանքի բոլոր հակասությունները, ռուս ժողովրդի հայացքների ողջ քաոսը դրսևորվել է մռայլ ու պարզամիտ Կրեմլի ճարտարապետության մեջ։ Իտալական միջնադարն այնտեղ խառնվել է ուշ շրջանի Բյուզանդիայի հետ և այդ խառնուրդը հեշտ չէ զանազանել մոնղոլական փարթամ զարդարանքների և վերաշինվածքների ծածկույթի տակ։ Ներկայումս բարբարոսական կենցաղի այդ հուշարձանը շրջապատված է ասիական շուկայով և եվրոպական տներով, որ կառուցել են գերմանական տների օրինակով, գերմանական ինժեներները։ Մոսկվան՝ ռուսականի հարազատ տարերքն է, սակայն քաղաքակրթված օտարերկրացին տառապում է այդ քաղաքում նրա տարբեր մասերի աննյութաշնակությունից և կառույցների ջղայնացնող շքեղությունից։ Կուրտ Վան, դուք ի՞նչ կարող եք ասել Մոսկվա քաղաքի մասին։

Կուրտ Վանը տեղից վեր է թռչում ու ասում.

— Մոսկվան զարմացնում է քաղաքակրթված ճանապարհորդին իր վայրի գեղեցկությամբ։

— Ես ասացի իր վայրիությամբ, որը շատերը հակված են համարելու գեղեցկություն։

Իհարկե, այս քաղաքում ամեն ինչ օտար էր՝ եկեղեցու գմբեթներից, որ նման էին ճակնդեղների, մինչև կառապանների թեթև երկտեղանի կառքերը։

Սակայն երեկոները, մայրամուտի ժամին, հնարավոր չէր մինչև հոգնելու աստիճանի չթափառել ամայացած փողոցներում։

Տների պլոկված սյուները, բարեհոգի կիսաայուծ-կիսաշները փոշեծածկ տների վրա, վաղուց դատարկված նկուղների ութաձև ոլորված վանդակները անչար կերպով նայում էին ամբարների ձևով վեր խոյացող տուփերին, որոնց վրա անթիվ պատուհաններ կային։

Ամեն երեկո Կուրտը քայլում էր ամայի նրբանցքներով, և ամեն անգամ դրանք նրան ուանում էին իրենց թաքուն ոլորտները, ինչպես գաղտնի ստորգետնյա ճանապարհն է խճճում իր պտույտներում։ Եվ կրկին ու կրկին նա կանգ էր առնում, տեսնելով ոչ մեկի կողմից և ոչ մի տեղ չկրկնված գծերի անակնկալ զուգակցում։

Այդ ժամին նրբանցքները ողողում էր զանգակի ղողանջը և տների խաղաղությունն այդպիսով խորանում էր մինչև ստորջրյա խոր հեղեղատի լռության։ Եվ ինչպես հեղեղատում, ամեն ինչ սկսվում էր թվալ մահաբեր, անշարժ, մեծ լոքոյի հայացքի նման, և արևամուտից բոսորագույն դարձած եկեղեցիները թվում էին ջրասույզ եղած թագավորություն։

Այն ժամանակ Կուրտը դուրս էր գալիս նրբանցքներից ու գնում այնտեղ, որտեղից երևում էին Կրեմլի աշտարակները։ Նրանք դուրս էին լողում Կուրտի առջև մռայլ, որպես գետնի տակ անհետացած քաղաքի պսակը, և նրանց չբացահայտված վեհակեցության տակ Կուրտի աչքին երևում էր կիսամոռացված բուրգը, որը որպես դարերի կոթող բարձրանում էր Նյուրնբերգի վրա։

Սակայն Կուրտը ճանաչում էր մի այլ Մոսկվա, հեղեղատում ջրասույզ եղած թագավորությանը միայն արևամուտի ժամն էր նվիրում։

Գտնվի՞ արդյոք աշխարհում այնպիսի մի քաղաք, որը հարյուր-հազարավոր փութ մթերքները պահեր պալատներում, ձիու վարսակը՝ ունիվերսալ խանութներում, ցեմենտի տակառները՝ ֆաբրիկանտների բնակարաններում ու երկաթի հումքը՝ գլխավոր փողոցում։

Այն ամենը, ինչ հաջողվում էր հավաքել ամբողջ Ռուսաստանում Մոսկվայի համար և գալիս էր նրա կայարանները, տեղափոխվում էր քաղաքի կենտրոնը և մեծագույն դժվարություններով տեղավորվում ռեստորաններում, պարասրահներում և վաճառականների առանձնատներում։ Քաղաքի կենտրոնում բեռները նորից կշռվում էին, ստուգվում, քրքրվում, և մանրագույն բաժինների վերածված՝ կաթիլներով, հատիկներով, դրանք տեղափոխում էին ծայրամասերի պահեստներն ու էլեվատորները, որտեղ ավելի շատ մկներ կային, քան ապրանք ու հացահատիկ։

Խճճված փողոցների սալարկներով, փոսերի վրայով առավոտից փղերի նման անցնում էին բեռնատար ավտոմեքենաները, և նրանց քայլքից ցնցվում էին քարե տներն ու կոտրվում պատուհանների ապակիները։ Լուբյանկա հրապարակի շրջանում, Մյասնիցկայա դարբասից ու Պոկրովկայից, Տեատրալնի պրոյեզդի վայրէջքով և Տրետյակովսկի անցքում փղերն իրար վրա էին ընկնում մռնչալով և ցնցելով իրենց մեջքների բեռները, և դրանց նայելիս թվում էր, թե Մոսկվա էր տեղափոխվում մի անհայտ, վառված մոլորակ։

Եվ Տեատրալնի հրապարակով, Մոխովայայով ու այնուհետև Վոլխոնկայով, Օստոժենկայով շտապում էին փղերից վախեցած, անհայտ մոլորակի հրդեհի ճարակ դարձած մարդիկ, շտապում պարկերն ուսերին գցած, անվերջանալի շարանով, փողոցների այն մասով, որն առաջ քաղաքը զիջել էր տրամվային։

Օստոժենկայի վրա, Կրիմսկի մոստի մոտ, շարանը լցվում էր սպիտակ տունը, և այդ տան շուրջը հրդեհից տուժածների միայնակ կերպարանքները քարշ էին գալիս պլակատների, տախտակների և ցուցափեղկերի առջև։

Զբոսայգում, այն կրպակի մոտ, որտեղ կեղծած օճառ և քացախի էսենցիա էին վաճառում, դրված էր մի ապակյա արկղ՝ մեջը մարդու ներքին օրգանների նմուշօրինակներ, և

մանր տառերը բացատրում էին մարդկությանը երիկամների ու փայծաղի դերը։

Թուջե վանդակապատի ետևից, մի սաժեն դուրս թռած, երեսով դեպի ռազմական պահեստն էր դարձել այն պլակատը, որի վրա թվերի սյուներ էին, և տասնյակ մարդիկ հաշվում էին, թե որքան հանրաքաղաքացի ու հզոր է նոր Ռուսաստանի գիտությունը։

Նոր Ռուսաստան։

Այդ նա էր երկար շարանով եկել սպիտակ տունը, որտեղ դեռ նորերս հանդիսավոր կերպով բացված էին լիցեյի համագգեստները, և անդադրում լցվել սրահները, միջանցքները, սանդուղքների վրա, ձեղնահարկերում, խցիկներում։ Եվ այդ իրարանցման մեջ սպիտակ տանը օրեր շարունակ գրվում էր դաշնակցային պայմանագիր երկու զորեղ կողմերի՝ գիտության և Ռուսաստանի միջև։ Այդ կետը անվերջանալի երկար էր, այնպես որ գրասենյակում առանց շունչ առնելու աշխատում էր մեքենագրուհիների մի ամբողջ զորաբանակ, և ամբողջ տանը չկար մի անկյուն, որտեղ չլսվեր ունդերվուդների զրզոցը, կարծես թիթեղյա տանիք էին նորոգում։

Նկուղային հարկում անդադար պտտվում էին ռոտատորները, և տպագրիչների արտելը քափ ու քրտինք էր կտրել հազարավոր, այդ հարյուր-հազարավոր թերթիկների վրա, որոնք աղդարարում էին լլսված դաշնակցային պայմանագրի մասին։

Միջանցքներում և նախասրահներում ունդերվուդների զրզոցից և ռոտատորի ներկի հոտից կայտառություն էր բռնկվում, և մարդիկ վազվզում էին խելքները կորցրած այն թվերից, որոնցով չափվում էր գիտությունը, երջանկությունը, մարդկությունը, Ռուսաստանը։

Այն սրահում, որտեղ պատերի տակ ոսկեզօծ կահույք էր դրված, պարկետին ձգված կտավների վրա թռչկոտում էին կանայք և տղամարդիկ։ Կտավի վրա փռվել էր կապտամաշկ մի մարդ երկու հարկի բարձրության հասակով, խակ նրա ետևը կիտվել էին գրանիտե շենքերի ավերակները։ Այդ յուզանկարը նայելու համար նկարիչները բարձրանում էին ծալովի սանդուղքով մինչև առաստաղ և այնտեղ երերում էին, ինչպես էլեկտրամոնտյորները։

Կուրտ Վանը մինչև արմունկը մերկացրած թևով օդն էր տողում.

— Ես ասում էի։ Կապույտ խորանարդը պետք է վերացնել։ Կանաչը՝ երկու անգամ փոքրացնել։ Ուսը կախ է ընկել։ Հաշմանդամ է դարձել։ Ինչո՞ւ։

Փոքրիկ կինը դահլիճով մեկ թարգմանում էր.

— Ինչո՞ւ է հաշմանդամ ստացվել... Այսինքն պետք չէ, որ հաշմանդամ ստացվի, պետք է վերացնել կապույտ խորանարդը և կանաչը փոքրացնել։ Այն ժամանակ ուսը էլի... ուսը կկանգնի... Հասկանո՞ւմ եք։

Կանայք և տղամարդիկ ատամների արանքում սեղմում էին գլանակները և, կեղտոտ խալաթների փեշերը հավաքելով, սանդուղքից իջնում էին հատակին։

Կուրտը վրձինը ձեռքին վազվզում էր կտավների վրայով և բղավում.

— Ընկեր, ռուսերեն ինչպե՞ս ասեմ. խորացրեք ճակատոսկրի տափակությունը։

Փոքրիկ կինը թարգմանում էր.

— Ընկեր Վանն ասում է, որ պետք է աշխույժ ճակատ սարքել։

Այն ժամանակ որևէ մեկի վրձինը մոտենում էր կապտամաշկ մարդուն և ճակատին կոբալտի մի վրձնախազ դնում։

Արդեն մթնով, ձեռքները թերթերով սրբում և իջնում էին սանդուղքից ու սելյոդկայի ափսեների առջև նստած ժամանակ թարգմանչուհին ծիծաղելով պատմում էր Կուրտին, թե ինչպես են կարողանում խորամանկորեն ճաշի մի կտրոնով երկու բաժին սուպ ստանալ։

Կուրտն էլ ծիծաղում էր, ծամելով կպչուն հացը, ու ասում ծիծաղելով.

— Արտակարգ ժողովուրդ է։ Զարմանալի։ Սուպն, իհարկե, ծիծաղելի է։ Իսկ ընդհանրապես։ Ինչպես խիզախեց այս ամենն անել։

Նա հայացքը սահեցնում էր ափսեների մեջ խրված դեմքերի վրայով և կրկին ծիծաղում։

— Այստեղ սուպից էլ մոմաթղթի և ռոտատորի հոտ է փչում։ Ինչքա՜ն են գրում։ Զարմանալի ժողովուրդ է։

Նա թեքվում էր դեպի հարևանուհին և, ձայնն իջեցնելով, խորհրդավորությամբ ասում.

— Այս ամենի մեջ ես մեծ իմաստ եմ տեսնում։ Շատ մեծ, առողջ միտք։

Մի ժամանակ Կադաշիի արվարձանում ապաստանել էին ցարական ջուլհակները՝ նույնքան համբերատար մարդիկ, ինչպես և վարպետները։ Արվարձանից հեռանում էին միայն հրդեհի դեպքում, իրենց ունեցած-չունեցածն ու քաթանը տարհելով մոտակա ամայի տարածությունները։ Հրդեհներից հետո կառուցում, նորոգում էին դաղգահները և սկսում գործել։ Հրդեհի տեղերում մնում էին լեշերը, դրանք ոչ ոք չէր հավաքում, իսկ նրանց գլխին պտտվում էին ագռավները, հանգստանալով վառարանների մերկացած խողովակների, ածխացած սյուների, նոր, չծածկված կտուրների վրա։ Ջուլհակները գտնում էին, որ հրդեհները, լեշերն ու ագռավներն իրենց ճակատագիրն է, օրեցօր, արևածագից արևածագ նրանք մեջք էին կորացնում ցարական ծառայանու համար սփռոցներ գործելով, վառվում էին, կառուցում, իրենց երեխաներին ու թոռներին ջուլհակություն էին սովորեցնում։

Այդ ժամանակներից հետո Կադաշիի արվարձանը շենացավ քարով, նրանից դեպի հարավ աճեց քաղաքը, իսկ ջուլհակների հիշատակը մոռացվեց։ Սակայն գուցե նրանց թոռների թոռները դեռ գնում էին երեկոյան ժամասացության Կադաշիում գտնվող Հարություն եկեղեցին։ Ինչպես հեղաբարո Ալեքսեյ ցարի օրոք, նրանք շարժվում էին նեղլիկ փողոցներով և խաչակնքում, երբ անկյունից ագռավների երամ էր երևում։ Եվ, ինչպես անցած-մոռացված ժամանակներում, հրդեհներից հետո, տեղ-տեղ խաչմերուկներում երևում էին վառարանի մերկ խողովակները։

Կադաշիում, Կանավայի մոտ, ուխտավորների, թերևս ցարական ջուլհակների հետնորդների հետ կողք-կողքի ապաստանել էին բեռնասայլորդները՝ կովարար, դժվար բնավորության տեր մարդիկ։ Կեսգիշերին նրանք Օրդինկայով դուրս էին տանում սատկած ձիերին ու լեշը գցում նրբանցքում, որևէ մի նախկին վաճառականական տան շքամուտքի մոտ։ Լույսը բացվելուն պես տան տանիքին, մուտքի թիթեղ-

յա հովանոցի վրա էին նստում ագռավները, կռկռում էին, իջնում լեշերի վրա, ձիերի գանգերը ծակոտում իրենց պինդ կտուցներով։

Առավոտյան բեռնասայլորդները, ոտները սայլերի մեջ չռած կանգնած՝ սլանում էին դեպի կայարանները։ Անիվների և պայտերի դղրդոցի միջից նրանք կատաղորեն բղավում էին տրամվայի գծերով շարժվող մարդկանց վրա։

— Զգո՜ւյշ։

— Արա՜գ անցեք, ծա-ռա-յող-ներ, ա-րա՜գ։

— Նո-օ՜ օ՜։

— Ծա-ռա-յող-նե՜ր...

Անդրեյը Մոսկվան այդպիսին տեսավ հենց առաջին օրը Կազաշիում տեղավորվելուց հետո, և այդպիսին էլ այն շարունակում էր տեսնել ամեն առավոտ։

Նա գիտեր, որ այդ քաղաքում, նրա սրտից ոչ հեռու ինչոր տեղ, ոչ բարձր մի տան վրա, թռչունների երամին դարանակալած գիշակերի թևերի նման ծածանվում է եռագույն —

Schwarz — weiss — rot —
Սև — սպիտակ — կարմիր —

դրոշը։

Այն անդադար հետապնդում էր Անդրեյին, կախվում նրա գլխին Ռոզենաուի խաղաղ զովության մեջ, ներս էր խուժում նրա բիշոֆսբերգյան ձեղնահարկը և հիմա կրկին հետապնդելով հասել էր նրան՝ անողոք, գիշատիչ —

Schwarz — weiss — rot.

Եվ ահա մի անգամ, զով կեսօրին Անդրեյը հայտնվեց նրբանցքում, որտեղ ծածանվում էր այդ դրոշը, ու հայացքը գցեց ոչ բարձր տան տանիքին։

Գերմանական դեսպանատան դրոշաձողի տակ մի մարդ էր կանգնել ու դրոշի քուղն էր արձակում։

Անդրեյը կանգ առավ։

Մարդը դրոշակն իջեցրեց, նստեց տանիքի եզրին, նրա ձեռքին մի բան փայլեց։ Նրբանցքի լռության մեջ մի կտրտված երկարաձիգ հրթռց լսվեց, ասես թիթեղյա տանիքին մի բուռ սիսեռ լցրեցին և այն թեքությամբ սահեց լցվեց ջրհորդանները։ Ձայնը կրկնվեց մեկ, երկու անգամ։ Մարդը վեր կացավ ու սկսեց արագ քանդել քուղը։

Այն ժամանակ տանիքին ընկած եռագույն քաթանից անջատվեց նեղ կարմիր շերտիկը և վեր ձգվեց դրոշաձողի վերայով։

Գերմանական դեսպանատան կայմի վրա կարմիր դրոշ էր բարձրացված։

Մարդը հավաքեց դրոշի սև-սպիտակ մնացորդը, ճմռթեց, մտցրեց թևատակը և պպզած ծածկվեց տանիքի զարդաձիու ետևը։

Բակում, ասես շղթայից պոկված, դոդոաց շարժիչը, և նույն պահին մոտակա անկյունից նրան պատասխանեց մեկ ուրիշը։ Երկու ավտոմեքենա զրեթե ընդհարվեցին դարբասի մոտ։ Փայլփլուն, մաքրած լիմուզինը դուրս էր գալիս դեսպանատան բակից, իսկ փոշոտ, հալից ընկած տորպեդոն հանքափորի վագոնիկի նման նրբանցքից գլորվեց դեսպանատան մոտ։

Անդրեյը հասցրեց մոտենալ դարբասին։

Փոշոտ ավտոմեքենայի դռնակները չէին բացվում, և մեջը նստած մարդիկ մեքենայից դուրս թռան թափքի կողերից։ Գերմանացիների գորշ բաճկոններն ու ռուսների խունացած շինելները հանկարծ միախառնվեցին մի հոծ կույտի, և պարզապես անհասկանալի էր, թե այս բոլորն ինչպես էին տեղավորվել մի ավտոմեքենայում։ Փայլուն մեքենայի դուռը դանդաղ բացվեց, ոտնակին կանգնեց նիհար, կոկիկ մի մարդ։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց նա ու մի հոնքը վեր բարձրացրեց։

Կարճլիկ զինվորը խունացած անհովար գլխարկը ետ տարավ ծոծրակին, և պարզորոշ հայտարարեց գերմաներեն.

— Մոսկվայում գերմանական գերիներից կազմվել է Գերմանական զինվորների դեպուտատների խորհուրդ։

Կոկիկ մարդը հոնքը ցած բերեց։

— Ի՞նչ գործն է, թե Մոսկվայում ինչ է կազմվել։ Ենդրում եմ ճանապարհ տաք մեքենայիս։

— Մոսկվայի գերմանական զինվորների դեպուտատների

խորհուրդը որոշել է ստանձնել նախկին գերմանական կայսրության դեսպանատան բոլոր գործերը։

— Կրկնում եմ, ձեր ասած խորհուրդի որոշումներն ինձ չեն վերաբերում։

Կոկիկ մարդը թեթևորեն ձեռքը բարձրացրեց ու կարգադրեց հրացանը ձեռքին կանգնած դեսպանատան զինվորին։

— Ինձ համար ճանապարհ մաքրեցեք և դարբասը փակեք։

Կարգադրությունը կատարելու փոխարեն զինվորը հրացանով ցույց տվեց տանիքը։

Կոկիկ մարդը գլուխը դանդաղ բարձրացրեց.

Այն ժամանակ նոր եկածներից մեկը բղավեց.

— Ե՛տ։

Կոկիկ մարդուն ետ հրեցին լիմուզինի մեջ, դուռը շրխկացրին, կարծես հրամանով ուսերը դեմ տվեցին մեքենայի ոգդիատորին և թևերին ու այն ետ գլորեցին բակ։ Վարորդը գլխով օգնում էր մեքենան ետ քշելուն և նրա հողմահար դեմքով հագիվ նկատելի խեթ մի ժպիտ էր սահում։

Անդրեյը թեքվեց դեպի հրացանը ձեռքին կանգնած զինվորը։

— Ի՞նչ է պատահել։

Քարացած սառը հայացքը մխրճվեց Անդրեյի դեմքին ու բարակ շրթունքները չանաղրաբար արտասանեցին աղավաղված բառերը.

— Ընքեր չի գիտի։ Գերմանիա քազմաքերպի սովյետ։ Գերմանիա Ռուսաստան միասին։

Անդրեյը մինչև վերջ չլսեց զինվորին։ Նա նայում էր դեպի բակ, որտեղ ավտոմեքենայից դուրս եկած կոկիկ, նիհարավուն մարդու առջև խմբվել էին գերմանական բաճկոններն ու ռուսական շինելները։

Ինչ-որ մի զինվոր ամբոխին այս ու այն կողմ հրեց, մոտեցավ կոկիկ մարդուն, նրա ոտքերի տակ գցեց դրոշակի սև-սպիտակ շերտիկը։ Կոկիկ մարդը ոչ մի շարժում չարեց, և կտորն ընկավ նրա ոտքերի մոտ՝ սգաժապավենի նման։

Անդրեյը նայում էր այն զինվորին, որը բերեց ու շպրտեց դրոշակի կտորը։

— Կո՛ւրտ,— բղավեց նա ու նետվեց դեպի դարբասը։

Զինվորը ուշադիր նայեց նրան, մինչ սա վազում էր բակով, հետո մի քայլ ետ գնաց ու կամացուկ հարցրեց.

— Անդրե՞յ։

— Կո՛ւրտ, Կո՛ւրտ։

Այն ժամանակ զինվորը նետվեց դեպի Անդրեյը, նրա գլուխը սեղմեց իր համաչափ, ուղիղ ձեռքերի մեջ ու ավելի կամաց ասաց.

— Անդրեյ, սիրելի բարեկամս...

— Եթե ես այս ամբողջ ժամանակ նստած լինեի որևէ տեղ արհեստանոցում, թերևս աշխարհն ինձ առաջվա նման ամբողջական մի բան թվար, ինչպես ասում ու հասկանում էինք մի ժամանակ՝ մարդկություն, աշխարհ, այդ ամենին նայելով վերևից։ Իսկ ես նստեցի նեքևում, հատակի տակ, տեսա, թե ինչպես է այդ ամենը կառուցված։ Մի խոսքով՝ թատրոն։ Ոչ մի ամբողջական բան։ Մարդկությունը կեղծիք է։

Կուրտը ծխեց բարալիկ այրված ծխամորճիկը, ոտքերը մեկնեց, հետո սահուն, համաչափ շարունակեց.

— Առաջ ամեն ինչ կազմալրված էր, ինչպես երթային վաշտը։ Մարդը հարմարեցված է մարդուն, ինչպես դռան փայտը փայտին։ Հիմա ամեն ինչ ցրիվ է եկել։ Տախտակների միջև ճեղքեր են։ Կույրն էլ տեսնում է, որ ամեն ինչ անջատվել է։

Նա ծիծաղեց։

— Դու երբեք չե՞ս փորձել գրել։

— Ոչ, չեմ փորձել,— ասաց Անդրեյը։

— Ես էլ չեմ փորձել։ Սակայն մի անգամ մտածում էի, որ վեպերը գրում են այնպես, ինչպես արկղ են շինում։ Անհրաժեշտ է, որ ամեն մի տախտակ իր բոլոր կողմերով հարմարվի մյուս տախտակներին։ Մինչև պատերազմը, համենայն դեպս, վեպերն այդպես էին գրվում։ Հիմա հավանաբար վեպերում էլ հնարավոր չէ մի տեղում միանգամից երկու մարդուց ավելի իրար միացնել։ Սոսինձը բանի պետք չէ, չի պահում։

— Հի՞ն սոսինձ է,— հարցրեց Անդրեյը։

— Իհարկե հին է։ Խրամատների փշալարերի ետևից, ինչպես խոշորացույցով, պարզ երևում է։ Այդ ամբողջ երաժշտ-

տությանմասին սոսկումով ես մտածում. ռումբերը, երեք-գծանի հրացանները, հատկապես հաուբիցները։ Սակայն կարծում եմ, որ եթե այդ որոտը չլիներ, մենք դեռ երկար ժամանակ խելքի չէինք գա։ Իսկ հիմա մեր գլուխը պայծառ է ու սրտերս օդափոխված։

Կուրտը լուցկին սեղմեց, զգուշորեն մոտեցրեց ծխամորճին, նորից ծխեց։

— Ահա իմ պատմությունը և իմ եզրակացությունները։ Այն տախտակները, որ դեռ կպած են իրար, պետք է բաժանել, գուցեև ջարդել, որովհետև դրանք արհեստականորեն են միակցված և այդպիսի սոսինձով չի կարելի մարդկանց միակցել որպես մարդկություն։ Իսկ ի վերջո դա է մեր նպատակը։ Համաձա՞յն ես։

— Համաձայն եմ,— պատասխանեց Անդրեյը։

Կուրտը մոտեցավ և նրա ձեռքը բռնեց։

— Ահա։ Լավ է։ Իսկ հիմա խնդրում եմ ինձ ասես, ուղղակի ասես, որ ես անասուն էի. Նյուրնբերգում, տրամվայում։

Անդրեյը գրկեց նրան ու ծիծաղեց։

— Ո՛չ, ո՛չ,— բղավեց Կուրտը ետ քաշվելով։— Դու ինձ պետք է ասես, թե այն ժամանակ ինչ էիր մտածում։

— Ես սարսափում էի։ Ես գրեթե լաց էի լինում քեզ հիշելիս... թե ինչպիսին էիր դու այն ժամանակ...

Կուրտը բռունցքով խփեց իր գլխին։

— Օ՜-օ՜-օ՜։ Օ՜-օ՜-օ՜։ Իսկական ապուշ։ Ա-պո՜ւշ։

— Բանն այդ չէ,— ընդհատեց նրան Անդրեյը։— Դու այն ժամանակ կարող էիր այլ կերպ մտածել։

— Ես անասունի պես էի մտածում։

— Հիմա դու ուրիշ կերպ ես մտածում։ Սակայն ոչ այն ժամանակ, ոչ էլ հիմա քեզ պատերազմը չի վախեցնում։ Մի՞թե քո մեջ մի բան փոխվել է։ Ես նույնն եմ մնացել. պատերազմ խոսքն իսկ զզվելի է ինձ համար։

— Սպասիր,— ասաց Կուրտը, սպասիր։ Ես քեզ հասկանում եմ... Բայց մի՞թե կարծում ես, թե ես չեմ մտածել այդ մասին։ Տարբեր պատերազմներ կան։ Եվ դու ինչո՞վ կարող ես պատերազմը ոչնչացնել, եթե ոչ հենց պատերազմով։ Հապատերազմին դիմադրելով չե՞ս կարող։ Չէ՞ որ ուրիշ ճանապարհ չկա, չկա՛, չկա՛, չկա՛։

Նա ոտքը դոփեց ու բղավեց.

— Արյո՛ւնը, արյո՛ւնը, ահա թե ինչն է քեզ վախեցնում։ Եվ այդ մշտական վախը, թե չարիքը չարիք է ծնում։ Իսկ ի՞նչ կարող ես դու ինձ առաջարկել չարիքի փոխարեն։ Ինձնից դուրս են քաշում ջլերս, թել առ թել, առանց դադար տալու, ամբողջ կյանքումս։ Եվ հենց ինձ էլ առաջարկում են այդ կյանքս կառուցել բարու հիմքերով, քանի որ չարիքը չարիք է ծնում։ Ես բարին որտեղի՞ց գտնեմ, եթե շուրջս չարիք է։ Ապացուցիր ինձ, որ չարիքով չի կարելի բարու հասնել։

— Ես այդ չեմ կարող ապացուցել։

— Ուրեմն ճամփան մե՞կն է։

— Ուրեմն՝ այո։

— Այն դեպքում ի՞նչ ես ասում։

— Ասում եմ, որ սարսափելի է և... ստորացուցիչ,— արտասանեց Անդրեյն այնպիսի ջանքով, կարծես արտասուքները խեղդում էին նրան։

Կուրտը նրա ձեռքերը սեղմեց։

— Սիրելիս, սիրելի բարեկամս։ Դու իրոք չես փոխվել. Հաճախ էի քեզ հիշում ահա հենց այսպիսին, այս բարի, շվարած ժպիտով։ Ես նույնիսկ կափսոսեի, եթե դու այն կորցնեիր։ Եվ լսիր, ես քո իսկական բարեկամն եմ, հավատ։ Հիշո՞ւմ ես Նյուրնբերգը, բլրից։ Ես այն ժամանակ երջանկություն զգացի։ Գիտե՞ս, ես երբեք չեմ ապրել կնոջ հետ, այսինքն՝ երկար ժամանակ և լավ։ Սա ի՞նչ զգացում է։ Եթե լինի այնպիսի զգացում, ինչպես այն ժամանակ, բլրի վրա, և այդ լինի մշտապես, հավանաբար մարդ պետք է ի ծնե հատուկ օժտված լինի, որպեսզի դիմանա։ Ես խոսում եմ այն հիացմունքի մասին, հիշո՞ւմ ես։ Դա պետք է որ հյուծի... Դու ինձ լրացնում ես։ Ես լավ եմ զգում, երբ գիտեմ, որ դու ահա այսպիսին ես, սիրելի բարեկամս, քո այդ շվարած ժպիտով։ Հիմա այստեղ, Մոսկվայում, այն ամենից հետո, ինչ տեղի ունեցավ, ուզում եմ, որ կրկնենք մեր երդումը։ Եվ որպեսզի դու մոռանաս այն, ինչ պետք է մոռանալ։

Անդրեյը Կուրտին սեղմեց իրեն, գրկեց նրա լայն մեջքը։

— Ես միայն մի բան եմ հիշում, Կուրտ. ինչպես մենք միմյանց ասացինք՝ հավետ։

— Մինչև մահ,— ասաց Կուրտը, մի տեսակ խիստ սեռոուն նայելով Անդրեյին։

Հետո ժպտաց, և խոսքերն անշնորհք դասավորելով, ինչպես գիրք կարդացողը, որի ձեռքից գիրքն ընկել է, ավելացրեց.

— Չգիտեմ իսկապես երեխայական թե ինչ զգացում ունեմ քո նկատմամբ։ Բարեկամություն, միստիկական ինչ-որ բան։ Սակայն չեմ ուզում քո նկատմամբ ունեցած քնքշությանս դեմ պայքարել։ Թեև ենթագիտակցականը՝ ծիծաղելի է։

Նա լռեց։ Հետո շտկվեց և կրկին խոսեց, ինչպես գրքում կարդար։

— Իմ կարծիքով, անըմբռնելի զգացումներ չպետք է լինեն։ Եվ, իհարկե, բոլոր զգացումները պետք է մեկընդմիշտ ենթարկել գիտակցությանը։ Միայն այդ դեպքում ես անիմաստ բանի մեջ տեսնում իմաստ, տառապանքի մեջ՝ ուրախություն։

— Սակայն ահա թե ինչ,— ընդհատեց Կուրտն ինքն իրեն։— Ես պատմեցի այն ամենը, ինչ զգացել եմ, իսկ քո մասին ոչինչ չգիտեմ։ Պատմիր։ Լուռ կմնամ։ Այլևս ոչ մի խոսք։ Ինչո՞ւ ես տխուր։

Անդրեյը գլխով պատուհանը ցույց տվեց։

Դեղնավուն մթնշաղի մեջ մթին էր տալիս տերևաթափ Նեսկուչնի պուրակը, երերվում էին Ղրիմյան կամուրջի ասես թղթե ձողակառույցները, կամրջի տակով հոսում էր սև Մոսկվա գետը։ Եվ պուրակի, կամրջի, գետի վրա, աչքի համար անտեսանելի մի ծածկույթով պտտվում էր ադամավների երամը։

— Սարսափելի է։ Այս ուրվականը ծածկում է ամեն ինչ։ Սով։ Դրա վրայից անցնելու համար պետք է շատ համարձակ լինել։ Իսկ ի՞նչ կլինի դրանից հետո։

— Է՛յ դու հեղափոխական։ Ամոթ է, Անդրեյ։

— Ես՝ հեղափոխակա՞ն։ Ես մինչև հիմա էլ ամաչում եմ անցնել աղքատի կողքից ու ողորմություն չտալ։

— Այնուամենայնիվ, այսօր ձեռքերդ դողում էին, երբ զինվորները դեսպանատանն ասում էին, որ dem oberen Zehntausend[1] ճաշը կեփեն Գերմանիայում։

— Ահ, Կուրտ, Գերմանիան... Որքան կուզեի հիմա այնտեղ լինել...

Կուրտը լարված նայեց Անդրեյին ու չոր ասաց.

— Այնտեղ դու անելիք չունես։ Դա հոգնածությունից է կամ նրանից, որ չես հասկանում, թե քո տեղն այստեղ է, Ռուսաստանում։ Գլխովս մի միտք անցավ... Լսիր։ Ինձ նշանակում են տալիս խուլ մի տեղ, գերիներին տեղափոխելու, նրանցից խորհուրդ կազմելու գործի։ Դա Սեմիդոլում է, ամայի, խուլ վայր է։ Եկ ինձ հետ։ Այնտեղ բոլորի համար էլ աշխատանք կճարվի։ Կգա՞ս։

— Քեզ հետ՝ այո,— պատասխանեց Անդրեյը, առանց աչքը կտրելու պատուհանից դուրս, տարածության մեջ ինչ-որ կետից։

— Հիանալի է, բարի հոգի։ Մենք հիանալի կյանք կունենանք, լեռներ տեղից կշարժենք։ Բավական է ագռավներին նայես։ Ծիծաղելի մարդ։ Մնա ինձ մոտ գիշերելու, որպեսզի ավելորդ անգամ գլխավերևդ չլսես այդ շարագուշակ կռկռոցը։ Հիմա՛ր։ Եվ խոսիր, պատմիր ամեն ինչ, ամենասկզբից, շուտ արա։

Նա բռնեց Անդրեյի ուսերից, պատուհանից ետ քաշեց և նետվեց մրոտված նավթավառը վառելու, այս ու այն կողմ շպրտելով ոտքի տակ ընկած անպետք իրերը։ Կուրտի սենյակն այստեղ, Մոսկվայում՝ նախկին լիցեյի ձեղնահարկում, հիշեցնում էր նրա Նյուրնբերգյան անհարմար ձեղնահարկը։

Եվ գիշերը, երբ Կուրտն ու Անդրեյը շինելներով ծածկված պառկեցին նեղլիկ, կալենկորե թախտին, որ նման էր հիվանդների ընդունարաններում դրվող թախտերին, մոսկովյան այդ լուռ գիշերին Անդրեյն իր բարեկամին պատմեց Մարիի մասին, պատմեց այն խոսքերով, որ այնպես հեշտությամբ էին տրվում Նյուրնբերգում։

Նա պատմեց ձմռանը Լաուշեում իրենց հանդիպումը, Յոթ

[1] Վերին տասը հազարի, այսինքն՝ հասարակության «վերնախավի» (գեռմ.)։

Լճակների պուրակում ունեցած հանդիպումները, այն, թե ինչպես էր պայմանավորված ժամին բացում իր սենյակի դուռը, և ինչպես Մարին շոգ գիշերներին, թաքնվելով, նրա մոտ էր գալիս պրոմենադներով։

Նա հասավ վերջին հանդիպմանը, իր խոստմանը, որ տրվել էր Մարիին վերջին պահին։

Այն ժամանակ Կուրտը ձեռքը դիպցրեց նրա կրծքին, և նույնքան կամացուկ, ինչպես Անդրեյն էր խոսում, գրեթե շշուկով ասաց.

— Հասկանում եմ, թե ինչու ես ուզում այնտեղ գնալ։

Եվ քանի որ Անդրեյը լռել էր, մի քանի րոպե անց հարցրեց.

— Ուրեմն այս տարիներին քո կյանքում ամենամեծ բանը սե՞րն էր։

Անդրեյն ասաց.

— Այո՛։

Եվ դարձյալ մի քանի րոպե լռելուց հետո, Կուրտը այդ քարացած գիշերով, մթության մեջ ասաց.

— Իսկ իմ կյանքում՝ ատելությունը։

Հատապտուղներ

Միտք չունի ընթերցողին շփոթության մեջ գցել այս գլխի վերնագրի վերաբերյալ։ Մաղիկներին նվիրված գլուխներն առանձին կապ չունեն հետագայում նկարագրվածի հետ։ Բոլորին հայտնի է, իհարկե, որ ծաղիկներից հետո սկսվում է հատապտուղների շրջանը, այս խոսքերի համադրությունն արդեն կարող է միտք հղացնել վեպի տենդենցիոզության մասին։

Սակայն մենք հեռու ենք որևէ միտումնավորությունից, և այդ առթիվ ամեն մի կասկած վերացնելու համար անմիջապես մեջբերում ենք մի փաստաթուղթ, որը մեզ դրդեց այդքան երկիմաստ վերնագրելու այս գլուխը և որը միանգամայն անհրաժեշտ է մակերեսային հայացքից թաքնված նրպատակների համար։

Ամռան կեսերին, բոլորի կողմից հարգված «Բիշոֆսբերգի առավոտյան լրագրում» հայտնվեց հետևյալ կոչը.

ԲՈԼՈՐՍ ԴԵՊԻ ԱՆՏԱՌ՝ ՀԱՏԱՊՏՈՒՂ ՀԱՎԱՔԵԼՈՒ։ ՄԻ ԹՈՂԵՔ, ՈՐ ԲԱՐԻՔԸ ԿՈՐՉԻ։

Գերմանացի կանա՛յք։ Թող այս խոսքը լսի ամեն մի խելամիտ հայրենասեր կին։ Բոլորը պիտք է օգնեն մեծ գործին։

Մեր կոչը վերաբերում է հատկապես փոքրիկ քաղաքների տնային տնտեսուհիներին և կանանց միություններին ու միավորումներին։ Մշտական կապ հաստատեցեք գյուղերի ու գյուղական համայնքների հետ, տեղի աղքատ բնակիչներին ստիպեցեք անտառի հատապտուղներ հավաքել։

Գյուղական համայնքները պետք է հոգ տանեն, որ հատապտուղներ հավաքելու գործը, անտառապետության համաձայնությամբ, միանգամայն սիստեմատիկ բնույթ կրի։ Այդ մեծ գործը ոչ մի դեպքում մի հանձնարարեք երեխաներին։ Հետևեցեք, որպեսզի հատապտուղները թփերից ոչ թե պլոկեն, այլ մեկ-մեկ հավաքեն ձեռքերով։ Պլոկելը վնասում է հաջորդ տարիների բերքին, և, օրինակ, հապալասը դրանից հետո մի քանի տարի անց է միայն բերք տալիս։ Այս խորհրդին խստիվ հետևելը նաև շատ աշխատանք կխնայի հատապտուղները եփելուց առաջ տերևներից մաքրելու ժամանակ։

Հատապտուղներ հավաքելու այն սիստեմը, որ կիրառվել է Ֆոգտլանդում, մեզ ամենանպատակահարմարն է թվում։ Մեծահասակ, փորձված և տեղանքը լավ իմացող կանայք այնտեղ դեկավարում են երեխաների խմբերին։ Հատապտուղ հավաքելու համար, անտառապետությունից թույլտվություն ստանալուց հետո, այս խմբերը ցրված շարքերով սկսում են աշխատել, գտած հատապտուղները նախօրոք պատրաստված զամբյուղների մեջ տեղավորելով։ Հավաքելու գործն սկսում են վաղ առավոտյան և ավարտում կեսօրին մոտ, մինչև շոգն ընկնելը։ Այնուհետև հատապտուղները վաճառվում են քաշով։ Աշխատանքը վարձատրվում է ըստ բերքի։ Միանգամից մեծաքանակ վաճառքը խնայում է ժամանակը, որ սովորաբար ծախսվում է մանր բաժիններ կշռելու վրա։ Դեկավարող կանանց փող է տրվում, որպեսզի հարկ եղած դեպքում երեխաների հետ մեկնեն երկաթուղով։ Դա շատ մեծ նշանակություն ունի՝ հոգնեցուցիչ ճանապարհի գոնե կեսը գնացքով գնալ։

Կարգավորեցեք պահանջն ու առաջարկը։ Սակայն խնայեցեք ավելորդ աշխատանքը։ Եթե անհատական տնտեսությունների, լաստարեթների և այլն պահանջն արդեն բավարարված է, հատապտուղներն ամենակարճ և շահավետ ճանապարհով ուղարկեցեք հարևան մեծ քաղաքները։ Ամենալավն այն է, որ հատապտուղները միանգամից վաճառեք որևէ մեծածախ վաճառականի կամ պահածոյի ֆաբրիկայի, քանի որ միայն համապատասխան հատուկ փաթեթավորման դեպքում կարելի է դրանք անթերի տեղափոխել։

Հիշեցե՛ք, որ մեր հայրենական անտառներում ոչ մի հատապտուղ չպետք է փչանա։ Հատապտուղներից պատրաստված ուտելիքները էժան են և սննդարար։

Գերմանացի հայրենասեր կանայք, այդ գործը ձե՛զ է սպասում։

Լաուշեից սառը և ծակող քամի էր փչում, քարերի և ասֆալտների վրա տերևներն աղմկոտ շուրջպար էին բռնել։ Նոյեմբեր ամիսն էր։

Այս ամսի իններորդ օրն անցավ մռայլ ու հասարակ, ինչպես և նրանից առաջ բոլոր օրերը՝ սուղության, աղքատության մեջ։ Փողոցները վազում էին իրենց անվերջանալի վազքով, ոչինչ չէր խանգարում աշխատաժամերի կարգը։

Եվ մի պահ միայն, մի տեղում՝ ռատուշայից ոչ հեռու, նեղլիկ, զառիկող նրբանցքում, կյանքը թրթռաց ու կանգ առավ։

Այդ նրբանցքում էր գտնվում գումարտակի խոհանոցը, և զինվորները, ստանալով իրենց կերակրաբաժինն ու հացը, կաթսայիկները ձեռքներին վազում էին ամեն մեկն իր ջոկը, որ տեղավորված էին հարևան տներում։ Մի դանդաղաշարժ զինվոր, ծանրորեն քայլելով և երերալով, մռայլ նայում էր իր կաթսայիկին, որ ծածկված էր գոլորշու գորշավուն քուլայով։ Նրանից առաջ էին անցնում արագաշարժ, ժիր երիտասարդները, բղավելով խոսում միմյանց հետ, սուլում։ Զինվորը քայլում էր անշտապ։ Հանկարծ նա կանգ առավ, կաթսայիկը մոտեցրեց դեմքին, մտածեց, հետո ձեռքը բարձրացրեց ու ամանը շպրտեց ցած, ընդհատ և զիլ բղավելով։

— Ա՜։

Եվ անմիջապես ամբողջ նրբանցքը պապանձվեց՝ երիտասարդ զինվորները, երեխաներին գրկած կանայք։ Բոլորը նայեցին կաթսայիկին, որ օրորվում էր կլոր կողի վրա, նայեցին դեղին ջրիկ խյուսին, որ ծորում էր քարերի միջև, գորշավուն գոլորշուն, որը բռնեց ու ցրեց քամին։ Հետո հայացքները դարձան զինվորին ու սառեցին նրա վրա։

Զինվորը քայլեց դեպի դատարկ կաթսայիկը, դանդաղ կռացավ, վերցրեց այն, ու նույնպես անշտապ ու ծանրորեն, ինչպես առաջ, գնաց իր ճամփով։

Այդ ընթացքում ոչ մեկը ոչ մի ձայն չհանեց, յուրաքանչյուրը քայլեց իր ճամփով լուռ, ասես ոչինչ չէր պատահել, ու

նրբանցքն սկսեց ապրել նախկին ձևով, թերևս միայն մի քիչ ավելի դանդաղ։

Այդպես անցավ նոյեմբերի ինը Բիշոֆսբերգում։

Սակայն հաջորդ օրը քամին կտրուկ փոխեց իր ուղղությունը։

Հաջորդ օրը երկաթե խաչի ասպետի այրի Մարթա Բիրմանը Թեյֆելսմյուլեից եկավ իր ամուսնու գերեզմանին։ Նա հավաքեց գերեզմանաթումբը ծածկած չոր տերևները, գերեզմանին հավամրդուց հյուսած պսակ դրեց ու ծունկի իջավ։ Սկզբում աղոթում էր, հետո սկսեց նայել շուրջն ու կարդալ սև խաչերին կպցրած անվանատախտակները, որ ռազմական կարգով, ուղիղ շարվել էին զինվորների գերեզմաններին։ Միայն մի քար էր բարձրանում այդ խաչերի շարքի վրա՝ մահացած ռազմիկների եղբայրական հուշարձանը։ Քարի վրա փորագրված էր.

Ննջեցեք խաղաղությամբ, հերոսներ։
Մենք երախտագիտությամբ հիշում ենք ձեզ։

Մարթա Բիրմանը կարդաց այդ մակագրությունը, բարձրաձայն կրկնեց, և բառերն այդ խուլ հարվածների նման արձագանքում էին նրա ներսում.

— Մենք երախտագիտությամբ հիշում ենք ձեզ։

— Մենք հիշում ենք ձեզ։

— Մենք հիշում ենք։

Նա դուրս եկավ գերեզմանատնից ու դարբասի մոտ քայլերը դանդաղեցրեց, որպեսզի մտածի, թե ուր է գնալու։

Քաղաքից լայն, ուղիղ փողոցով մի խումբ կանայք էին գալիս՝ սգազգեստներ հագած։ Նրանք քայլում էին իրար սեղմված, ճամփի մեջտեղով, քայլում արագ, ու քամին քշում էր նրանց, ուռցնում փեշերը, քաշքշում երկար, սև քողերը։

Կանանց խստաձայն խոսակցությունը շուտով հասավ Մարթա Բիրմանին, սակայն քամու միջոցով իրեն հասած ձայներից նա ոչ մի որոշակի խոսք չհասկացավ, ու սկսեց սպասել, մինչև որ կանայք մոտենան։

Քամին բռնում էր նրանց խոսքերը, վեր նետում, և, ասես դարձյալ քամուց, կանանց գլխավերևն էին բարձրանում

նրանց ձեռքերը, սպառնում էին չգիտես ում ու ցցված մատներով ցույց տալիս դեպի առաջ։

Խոսքի պատառներ, կիսատ-պռատ բառեր պոտվեցին Մարթա Բիրմանի գլխավերևը։

— Նրանց բոլոր գործերն էլ բարեհաջող են...

— Դրանք մի պատասխան գիտեն, ամեն ինչին մի պատասխան են տալիս։

— ... վերջը չի երևում։

— Միևնույն է։

— Թող լինի՛, թող լինի՛։

— ... բարեհաջող թաքցրեցին...

— ... հանգստություն։ Իսկ մենք ի՞նչ է, մեռելներ ե՞նք։

— Սպանդի անասուն։

— Թաքցնե՞նք։

— ...այն ժամանակ կտեսնենք...

Մարթա Բիրմանն սպասում էր, որ այդ աղմկոտ թափորը կմոտենա գերեզմանատան դարբասին։ Նա կանգնել էր ձրգված, ասես կապված լիներ, ջանում էր այդ կիսատ-պռատ խոսքերի իմաստը հասկանալ։ Սակայն կանայք, քայլերն ավելի ու ավելի արագացնելով, գերեզմանատան կողքով անցան դեպի Բիսմարկի ծառուղին։ Հանկարծ ձայների քաոսի միջից լսվեցին պարզորոշ բառեր.

— Է՛յ, աստծո այրի։ Երևում է, ամուսնյակդ ապահո՞վ տեղում է պառկած։

Մեկի ձեռքը ցույց տվեց գերեզմանատան դարբասը, և կրկին նույն պարզ ձայնը կանչեց.

— Եկ մեզ հետ գնանք մեռյալներին հարություն տալու։

Եվ, ասես կտրեցին Մարթա Բիրմանին կապված պահող պարանը, ու նա տեղից պոկվեց, վազեց միացավ այդ բազմությանը։

Մեկը քայլելով նրան հարցրեց.

— Ռազմիկի՞ այրի ես։

— Այո,— պատասխանեց նա, վազքից ու անսպասելի հուզմունքից հևասպառ,— երկաթե խաչի ասպետի այրի եմ։

— Դժբախտ կին,— լսվեց մի ձայն։

— Իրենց խաչերը թող շների վզից կախեն,— լսեց Մարթան։

— Մենք գնում ենք հիվանդանոց, հաշմանդամների ետևից,— բղավեցին նրանք։

— Միդուցե մեր ամուսինները կենդանի՞ են։

— Նրանք հաշմանդամներին փակի տակ են պահում, որպեսզի ոչ ոք չտեսնի։

— Գուցե նրանք մեր ամուսինների՞ն են այնտեղ պահում։

— Որպեսզի մեր նյարդերը չփչանան։

— Այն ժամանակից, ինչ մեր ամուսիններին խլեցին...

— Ժամանակն է, պետք է վերջ տալ պատերազմին։

Մարթա Բիրմանն առաջ նետվեց, սեղմ բազմության առաջը կտրեց, կանգնեց դեմքով դեպի կանայք ու լարված, բարձր բղավեց.

— Կանգնեցե՛ք, կա՛նգ առեք։ Ես գիտեմ, թե ինչ կա այդ հիվանդանոցում։ Կանա՛յք, դժբախտ կանայք։ Իմ ամուսինն էլ զինվոր էր։ Նրա ձեռքերն ու ոտքերը կտրվել էին, նա կուրացել էր և խլացել, նա ինձ չճանաչեց, երբ գնացի մոտը, հիվանդանոց, նրա մահվանից առաջ։ Հիմա նա պառկած է ահա այնտեղ։ Ամբողջ հիվանդանոցը լցված է անոտ, անձեռք մարդկանցով։ Թող նրանց թողնեն, թող մեզ ցույց տան։

Նրան ընդհատեցին սուր ճիչեր.

— Վիրավորներին տանենք տնե՛րը։

— Հաշմանդամներին փողո՛ց հանեցեք։ Թող բոլորը տեսնեն։

— Մենք նրանց ման կտանք զբոսայգիներում, թատրոններում։

— Թո՛ղ տեսնեն։

Մարթա Բիրմանը ցույց տվեց գերեզմանատունը.

— Ահա այնտեղ մի քաղաք լիքը տղամարդիկ են։ Այնտեղ է իմ ամուսինը՝ Ալբերտը։ Իմ ամուսինը։ Եվ այնտեղ գրված է. «Մենք հիշում ենք ձեզ, հիշում ենք»։

Հանկարծ նրա բերանը ծռվեց, ու ճիչը խլացրեց մյուս բոլոր ճիչերը.

— Ես քեզ հիշում եմ, Ալբերտ։ Կանա՛յք, կանա՛յք։

Քամին պոկեց ու վեր նետեց այդ վայնասունը, ողբը, պոկեց կրեպի երկար քողերը, ու սգազգեստով կանայք սկսեցին վազել։

Քամուց գալարապտույտ նրանց սգավոր բազմության ետևից մեկ-մեկ, խումբ-խումբ սլանում էին կանայք, որ չգիտես որտեղից էին հայտնվել, քշվում էին, ինչպես տերևները տերևաթափին։

Քամին փչում էր դեպի Բիսմարկի ծառուղին։

Եվ երբ սուրճի գավաթի նման խուզված լորենիների մերկացած շարքերի ետևից բազմանիստ բյուրեղապակու նման փայլփլեցին հիվանդների պատուհանները, մեկ-մեկ ու խմբերով քայլող կանայք միացան ու դարձան գլուխների միաձույլ մի լիճ, ու լճի վրա սև կատարներով վեր էին խոյանում կրեպե քողերը։

— Կանայք, կա-նա՜յք։

Բարեբախտ տունը նայում էր կանանց հուզումին, լսում նրանց ճղճղոցն ու աներեր հաճությամբ ցույց տալիս ազյուսե-կարմրավուն կղմինդրե տանիքի տակ կանգնած իր սվաղած պատերը։

Կանայք խմբվեցին մուտքի առջև, և տաճարի դռան նման ծանր դուռը սահուն ու լայն բացվեց։

Մի մարդ ճեփ-ճերմակ խալաթը հագին դուրս վազեց բազմությանն ընդառաջ, հուսակտուր բղավեց.

— Խնայեցեք վիրավորներին, վի-րա-վոր-ների՛ն, խելագարնե՛ր։

Եվ ի պատասխան հարյուրավոր ձայներ բղավեցին մորմոքով.

— Մենք կխնայե՛նք։

— Մենք գիտե՛նք։

— Մե՛զ խնայեցեք։

— Կխնայե՛նք։

— Կխնայե՛նք։

Ո՞ւր անհետացան արգելիչ մակագրությունները, պարագրաֆները, բաժիններն ու կետերը։ Ո՞վ թաքցրեց այդ ցուցանակները, որոնց վրա փակցված էին որոշումները, հրամանները, կանոններից վերցրած քաղվածքները։ Ո՞ւր կորան ճերմակ հագած մարդիկ, որոնց պարտքն էր պահպանել պարագրաֆները, որոշումները և կարգուկանոնը։

Մաքրած բետոնի, սպիտակ առաստաղների և պատերի փայլով ողողված միջանցքները ներխուժեցին սևազգեստ կանայք։ Նրանց հետ հիվանդասենյակներն ու սրահները լցվեց փողոցի մոլեգնությունը, իսկ կանանց առջևից, նրանց գլխավերևով, միջանցքների ընդարձակությամբ տասնապատկված սավառնում էին Մարթա Բիրմանի աղեկտուր ճիչերը.

— Ես հիշում եմ, Ալբե՛րտ։ Հիշում եմ։

Եվ ապա.

— Ահա այստեղ պառկած էր իմ ամուսինը, իմ ամուսինը, կանայք։

Ու կրկին.

— Ես հիշում եմ, Ալբե՛րտ, հիշո՛ւմ եմ։

Այն ժամանակ տղամարդկային խոր ձայները խառնվեցին կանանց լաց ու կոծին.

— Մեզ փողոց դուրս տարեք։

— Մեզ ցույց տվեք մարդկանց։

— Ինձ բազկաթոռով տարեք, թող տեսնեն պատերազմն ինչ է։ Նայեցե՛ք, ահա նայեցեք, թե պատերազմն ինչ բան է։

— Վերցրեք բոլորին, ում կարելի է անկողնուց հանել։

Եվ ամբողջապես բինտերով փաթաթված մի խրտվիլակ թնդաձայն բղավում էր մառլյայի մեջ երևացող սև ծակից, որտեղ կարող էր բերանը լինել։

— Ինձ ցույց տվեք, ես կարող եմ քայլել։ Ինձ ցույց տվեք, ես քայլում եմ։

Արձակված խալաթներով, բինտերով կապկպված, կալանդներով, դիպսե վիրակապերով, անթացուպերին և փայտերին հենված վիրավորները կաղալով ու մի ոտքի վրա թռչկոտելով հիվանդասենյակից հիվանդասենյակ էին անցնում ու կանչում։

— Ով կարող է՝ դեպի հրապարակ, քաղաք։

— Ով կարող է՝ ոտքի ելեք։

Իսկ հիվանդասենյակներից այդ կանչին պատասխանում էին անլռելի հառաչանքներ ու անեծքներ։

Եվ ահա կանայք ճիչ ու ողբով գլխավերևները բարձրացրին բազկաթոռն ու քայլեցին դեպի դուռը։ Բազկաթոռի մեջ բարձիկի վրա կիսապառկած էր ամբողջապես բինտապատված հետույքով մի մարդ։ Բազկաթոռի ոտնակը բաց էր ու դատարկ։ Հաշմանդամի ձախ ձեռքը վիրակապի մեջ կախված էր պարանոցից։ Աջ ձեռքը նա թույլ թափահարում էր, մերթ

ցույց տալով վիրակապից հաստացած մարմինը, մերթ չգիտես ում սպառնում։

Հիվանդանոցի ճակատամասի առջև թափորը երկար ժամանակ տատանվում էր, շարունակ ավելի շատ բազմություն էր հավաքում։ Կանայք փողոց էին գլորում բազկաթոռներ, սայլակներ, աթոռներ, վիրավորներին նստեցնում էին դրանց մեջ, և վիրավորները թափահարում էին հենակներն ու ինչ-որ բղավում անլսելի խռխռոցներով։ Երիտասարդ զինվորը, համազգեստը մի ուսից ցած գցած, բարձրացրեց նիկելից ու լաքից փայլփլող թևը, ու նրա հետևից, այն բոլոր վիրավորները, որ ոտքի վրա էին առանց կանանց օգնության, բացեցին իրենց պողպատյա, ստվարաթղթե, կաշվե ձեռքերն, ու արտոնագրերը զարկվեցին, ճռճռացին, նվնվացին իրենց զսպանակներով և լծակներով։

Այնժամ բազմությունը կատաղի, բազմաձայն մի ոռնոց արձակեց ու հաշմանդամներին իրենց բազկաթոռներով, աթոռներով, պատգարակներով, ձեռքերի պրոթեզներով առավ ուսերին, շարժվեց Բիսմարկի ծառուղով, ապա անցավ առաջ՝ փողոցով, գերեզմանատան առջևով, և այնուհետև՝ ռատուշայի հրապարակը։

Իսկ ամբոխի առջևից, քամուց վեր խոյացող կրեպե քողով, ասես դրոշակ բռնած, քայլում էր երկաթե խաչի ասպետի այրին՝ թեյֆելսմյուլեցի Մարթա Բիրմանը։

Դա տարօրինակ օր էր։

«Բիշոֆսբերգի առավոտյան լրագիրը» անսպասելիորեն կորցրեց իրեն հատուկ պերճախոսությունն ու մեծ դժվարությամբ, ինչպես խիստ կակազող մարդը, մի բան մոթմոթաց կայսերական մայրաքաղաքում տեղի ունեցող հուզումների մասին։ Խմբագիր՝ [illegible] աք-տաք ապացուցում էր փոստային տարիֆը բարձ[illegible] անհրաժեշտությունը, և ֆելիետոնիստը նկար[illegible] գաղութային զորքերի կողմից Կամերունի հերոսական պաշտպանությունը։ Համարի մնացած ամբողջ մասը լցված էր աստվածային անհեթեթություններով։

Ֆրաու Ուրբախը առավոտյան բարերարությունից հոգնած (առավոտները նա սիգարների փաթեթիկներ էր կապում հիվանդների և վիրավորների համար), նստեց հրապարակին

նայող պատուհանի առջև։ Ժամը երկուսի մոտերքը ռատուշայի շուրջն սկսեցին մարդիկ հավաքվել, և փոքրիկ տղաները բարձրացան շենքերի ելուստների, լապտերների ու տրամվայի սյուների վրա։ Ֆրաու Ուրբախը սպասուհուց հարցրեց, թե արդյոք ի՞նչ կարող էր նշանակել այսպիսի աշխուժությունը։ Ու քանի որ սպասուհին ոչինչ չգիտեր, նա վճռեց.

— Հավանաբար որևէ նոր հաղթանակ է։

Ապա նշեց դժգոհությամբ.

— Սովորական բան է. իրադարձությունների մասին իշխանությունը միշտ բոլորից ուշ է իմանում։ Ամբողջ պատերազմի ընթացքում ռատուշան երբեք ժամանակին դրոշները չկախեց...

Հրապարակը համաչափորեն լցվում էր մարդկանցով, որոնք թափվում էին բոլոր փողոցներից, դռներից, դարբասներից։ Բազմությունը գնալով ստվարանում էր, ու մարդիկ դեմքները դարձնում էին դեպի այն փողոցը, որը Ֆրաու Ուրբախին տեսանելի չէր։

Այն ամենը, ինչ հետո տեղի ունեցավ, կատարվեց զարմանալի, գրեթե աներևակայելի արագությամբ։

Ինչ-որ տեղից թռավ հասավ լրագրավաճառների երամը, ցրվեց հրապարակով մեկ, և ժրաջան, զրնգուն ձայնով վաճառողները վաղվզեցին ամբոխի մեջ։ Ժողովուրդը ալիք տրվեց։ Փոքրիկ, սպիտակ թերթիկներ ծփացին մարդկանց գլխավերևներում ու արագ ձեռքից ձեռք անցան։ Խուլ գվվոցի որոտմունքը գլորվեց հրապարակի մի ծայրից մյուսը։

Ֆրաու Ուրբախը կանչեց սպասուհուն.

— Շուտով վազեցեք ցած ու հեռագիր գնեցեք։ Մի բացառիկ բան է տեղի ունեցել։

Ու երբ դուռը փակվեց, նա ասաց ինքն իրեն, մի բան, որ նրա հետ շատ հազվադեպ էր լինում.

— Գուցե խաղաղությո՞ւն է։

Այդ ժամանակ ամբոխը շարժվեց դեպի փողոցը, որ տեսանելի չէր Ֆրաու Ուրբախին, և այնտեղ կուտակվելով, եռ նետվեց մարդկային մարմիններից հյուսված հոծ պատի հնչման տակ։ Այդ պատի վերևը երերում էին բազկաթոռներ, որոնց վրա գունդ ու կծիկ անհասկանալի բաներ էին, և այդ անհասկանալի բաները շարժում էին գլուխների, ձեռքերի

նման ինչ-որ մասեր։ Հանկարծ այդ ամենը խճճվեց թղթե թերթիկների, գլխարկների, փայտերի, հովանոցների հողմապտույտի մեջ։

Սենյակ ներս ընկավ սպասուհին և վախեցած ֆրաու Ուրբախին մեկնեց ճմրթված մի թերթիկ։

Սպիտակի վրա սևով, նույնիսկ ոչ թե հասարակ սևով, այլ կապտավուն-սևով, գրված էր.

Ճեղափոխություն։

Ու ոչ թե որևէ տեղ Ռուսաստանում կամ Չինաստանում, որը ոչ մի արտակարգ բան չէր լինի, այլ՝

Գերմանիայում,

որն արդեն ոչ միայն արտակարգ էր, այլ նույնիսկ

գերբնական։

Թերթիկը արտակարգ կերպով բաց էր թողել սոցիալ դեմոկրատական լրագիրը։

Աջ կողմի սյունակում հաղորդվում էր կայսեր հրաժարականի և փախուստի մասին։ Ներքևում, երկու սյունակի երկայնությամբ ձգվում էր մի մակագրություն, որի իմաստը դատարկ բան էր կայսեր փախուստի և հանրապետության հռչակման համեմատ։

Սակայն բառերը թռչկոտում էին ֆրաու Ուրբախի աչքերի առջև, ու դրանց իմաստը խճողվում էր։ Նա մի հաղորդագրության պատառիկները միացնում էր մյուսի կտորների և երրորդի բացականչությունների հետ։ Ստացվում էր հենց այն խառնաշփոթը, որը պետք է բացատրեր տեղի ունեցողը, սակայն չէր բացատրում. հրաժարում... ընտրություններ... հանրապետություն... ժողով... վերջ... հաստատություն... փախուստ... խաղաղություն...

Նրա աչքերը պատահմամբ կանգ առան լանդտագի կամ որևէ նոր ռայխստագի, կամ էլ սահմանադրային ժողովի,— միևնույն չէ՞, արդյոք, մի՞թե դա կարևոր է,— ընտրության կարգը նկարագրող տողերի վրա։ Բառերի այդ ցրիվ շարված-քի, այդ դատարկաբանության մեջ նա կարդաց՝ Ուրբախ։ Եվ քանի որ այդ ամբողջ ժամանակ, մինչ թերթիկը դողում էր

ձեռքերում, նա մտածում էր միայն իր, իր անվան, իր ապագայի մասին, հանկարծ սկսեց ոչ միայն տեսնել, այլև հասկանալ։ Նա արդեն իմաստավորված կերպով սկսեց կարդալ.

> *...Մեր կոմիտեն, ի թիվս մյուսների կառաջադրի կուսակցության անդամ Ուրբախի (Լաուշեից) թեկնածությունը, որը քսան տարի շարունակ օգնել է սոցիալ-դեմոկրատական շարժմանը ոչ թե խոսքով, այլ գործով։ Մենք չպետք է մոռանանք, որ կուսակցության անդամ Ուրբախը, որը երբեք հրապարակայնորեն իրեն չի գրսևորել, արել է...*

Ֆրաու Ուրբախը ետ ընկավ բազկաթոռի թիկնակին և աչքերը ձեռքերով փակեց։ Ճմրթված թերթիկը սահեց ընկավ հատակին։

Ահա, հատուցումը... Այն չի կարելի կանխել, նրանից չի կարելի խուսափել, հատուցումն իր ժամը գիտե։

Հիմա, հիմա միայն, իր կյանքի վերջին հասկանալի է դառնում այդ մարդը, պահարաններում թաքցրած նրա նախագծերը, նրա փակ գրադարանը, տնից նրա անհասկանալի բացակայությունները։ Այդ ամենն արվում էր ֆրաու Ուրբախից թաքուն, նրա տանը, նրա փողերով։

Հիմա, հիմա միայն հասկանալի է դառնում և իր դուստրը, նրա դուստրը, Ուրբախի դուստրը՝ Մարին, Մարիի գռեհիկ արարքները, համառությունն ու սլլեբեյի ինքնակամությունը։ Հիմա արդեն կարելի է հավատալ և Մարիի շուրջը տարածված վատ լուրերին։ Այդ աղջկանից ամեն ինչ կարելի է սպասել։ Չէ՞ որ նա Ուրբախի դուստրն է։ Նրա մեջ ֆոն Ֆրեյլեբենի մի կաթիլ արյուն էլ չկա։

Հիմա ամեն ինչ հասկանալի է։ Հատուցում...

Օ՜, այս անարդված անունը՝ ֆոն Ֆրեյլեբեն։ Ինչպես կարող էր ինքը իր առաջնեկի, իր միակի, իր արյան վերջին ժառանգորդի, իր հպարտության՝ Հայնրիխ-Ադոլֆի պատիվն ու արժանապատվությունը կեղտոտել Ուրբախ անվամբ։

Փախչել, փախչել, ինչպես կայսրը... հրաժարվել տնից՝ Ուրբախից։ Վերջ... հատուցումն է...

Ֆրաու Ուրբախը տեղից վեր կացավ, որպեսզի հրամայի իրերը դասավորել, որպեսզի պատրաստվի մեկնելու։ Պետք էր շտապել։ Նա շտկվեց, ուղղվեց պողպատյա ձողի նման,

հագուստը կարգի բերեց, ձեռքն առավ ռետինե ծայրապանակով ձեռնափայտը։

Այդ պահին ներս մտավ սպասուհին, ֆրաու Ուրբախին մի հեռագիր մեկնեց և շրջվեց, որպեսզի դուրս գա։

— Սպասեցեք, դուք հիմա ինձ պետք կլինեք,— ասաց ֆրաու Ուրբախը, և գործնական մարդու նման սովոր շարժումով բացեց հեռագիրը։ Տեքստը կարճ էր.

Օբեր-լեյտենանտ Հայնրիխ-Ադոլֆ Ուրբախը նոյեմբերի 1-ին զոհվեց հերոսի մահով Անկոշի մոտ տեղի ունեցած ճակատամարտում։

Գնդի շտաբի ճամբարզ։

Ֆրաու Ուրբախը հեռագիրը եղունգներով պատռեց, դանդաղ կծկվեց ու նստեց բազկաթոռին։ Հետո ամբողջ մարմնով ցնցվեց, ասես մի բան տակից հարվածեց նրան, և նա առաջ նետեց շագրենի կաշվի կոշիկի մեջ ամփոփված հիվանդ ոտքը։

Նրա աչքերի մեջ, որ ուղղված էին դեպի պատուհանը, մի պահ արտացոլվեց հրապարակի իրարանցումը, ու նա անշարժացավ։

Դա ամբոխ էր։

Ցույցերը, որ սարքում էին Բիշոֆսբերգի միությունները, լապտերիկներով ու նվագախմբերով այդ ցույցերը հավասարվում դառնում էին շարքեր, վաշտեր, գումարտակներ, և երեխաները քայլում էին խաղալիքային գնդերով, կանայք՝ հոծ շարքերով, ինչպես տուրնդալում։ Սակայն դա ամբոխ էր։

Երեխաներն ու կանայք, զինվորներն ու բյուրգերները, հաշմանդամները, աղքատները, աղբահավաքները, բանվորները, ղերձակուհիները, որ դուրս էին վազել արհեստանոցներից, և ֆերմաներից եկած բատրակները, բոլորը վազվզում էին տների միջև, ինչպես քամուց ցաք ու ցրիվ եղած խաղաթղթերի կապերը։

Դրանց գլխավերևը ոչ մի դրոշ չէր ծածանվում, ոչ մի փող նրանց չէր կոչում երթի, սակայն մի անտեսանելի, խնդալից ու սարսափելի դրոշ ձգում, տանում էր նրանց հրապարակներով, պրոմենադներով, փողոցներով։

Խաղաղարար մարդիկ, որոնցից հաղարավորները ճանաչում էին միմյանց դեմքով և որոնցից հարյուրավորները միևնույն սեղանի շուրջ խմում էին իրենց առավոտյան մի գավաթ գարեջուրը, հանկարծ դարձան պարիաներ, ու նրանց առջև շխկացնում էին դռները, փակում էին խանութները, թաքցնում շուկայի վաճառարկղերը, զամբյուղներն ու սայլակները։

Մի բյուրգեր, դեռևս հավատալով սահմանված իրակարգի ուժին, ինչպես հայրն է դեռ հավատում սեփական իշխանությանը, մինչ որդին առաջին անգամ առանց վախենալու ցույց կտա իր անհնազանդությունը. այդ բյուրգերը իր ծխախոտի կրպակը փակել ու դռանը մի ստվարաթղթի կտոր էր կպցրել՝ հետևյալ հայտարարությամբ.

ԱՅՍՏԵՂ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՀՆՂԱՓՈՆՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼ։

Եվ իրավ, հո չէի՞ն կարող մարդիկ հանկարծ նոյեմբերի 10-ին արթնանալով խելագարվել։ Ու եթե նրանք վազվզում էին ճանապարհներին, մայթերին, առանց ակնհայտ մի իմաստի, ապա, իհարկե, միայն այն պատճառով, որ ոչ ճանապարհին, ոչ էլ մայթերին չէր գրված.

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԽԱԽՏԵԼ ԿՅԱՆՔԻ ՆՈՐՄԱԼ ԸՆԹԱՑՔԸ։

Մունիցիպալիտետի այդ անշրջահայացության պատճառով քաղաքային շարժումն այնքան խախտվեց, որ ոտքով քայլող բոլոր մարդիկ, ուր էլ գնալու լինեին, շրջվում էին մի կողմ և, թափված տերևների նման, ասես քամուց, քշվում դեպի միջնաբերդը։

Եվ ահա ծեր գեներալի նման մռայլ, լիկած միջնաբերդը բացվեց ամբոխի աչքին։ Նրա ճերմակած տանիքը խոժոռված էր, իսկ դարբասը կողպված բոլոր փականքներով։

Ամբոխը վազքը դանդաղեցրեց, ամբոխը գրեթե կանգ առավ։

Սակայն բազմությունը հավաքել էին կանայք, և նրանց ձայները աղդանշանային եղջերաշեփորից էլ սուր էին։

— Կանա՛յք։ Այստեղ թաքցնում են գերմանական զինվորներին, որոնք չեն ուզում մսաղացի մեջ մտնել։

Աղդանշանը դիպավ միջնաբերդի տանիքին և, ետ թռչելով, ընկավ ամբոխի մեջ։

Այն կուլ տվեց դղրդաձայն մի բաս.

— Զինվորնե՛ր։ Այստեղ ձեր բարեկամներն են նստած։

Պաուլ Գեննիգը, գլուխներից վեր բարձրացնելով հովանոցը, նրանով զայրացած ցույց տվեց վանդակապատ պատուհանները, դուրս պրծավ ամբոխից և, առանց հովանոցն իջեցնելու, վազելով կտրեց հրապարակը։ Այն ժամանակ մի երիտասարդ զինվորիկ, դառնալով դեպի ամբոխը, ուրախ հրամայեց.

— Վա՜շտ։ Առա՛ջ կապիտանի ետևից։ Հովանոցներով առնենք միջնաբերդը։

Այդ հրամանով բազմությունից դուրս վազեցին զինվորները, դեռևս ուսուցում չանցած զորահավաքի խակ երիտասարդները, ծիծաղից ճապաղված դեմքերով։ Նրանք դժժացող երամով շրջապատեցին հրամանատարին ու նետվեցին դեպի միջնաբերդի դարբասը՝ վսեմ, հանդիսավոր Պաուլ Գեննիգի ետևից։

Վազելը նրանց ուրախություն էր պատճառում, ինչպես ոչ հեռավոր մանկության օրերին, երբ միջնաբերդում կեր էր կշռաբաժանվում, և այն բարեհայաց նայում էր իր պատերի շուրջ կատարվող մանկական չարություններին։

Մուտքին մոտ վազելով, զինվորներն սկսեցին դարբասը բռունցքներով ծեծել, բղավել, սուլել, ծաղրել։ Պաուլ Գեննիգի աչքերը կայծեր էին արձակում, կուրծքը հաճախ ու բարձր վեր էր ելնում. զինվորներից մի գլուխ բարձր, նա նայում էր նրանց գրեթե ոգեշնչված և հովանոցով համաչափ խփում դարբասին։ Նա նման էր չարաճճի դպրոցականներով շրջապատված ուսուցչի՝ սև հագուստով, փրչոտ ու զայրալից, այդ անբեղ-անմորուք, ուրախ զինվորների գորշ բաճկոնակների մեջ։

Թերևս միջնաբերդի առջև տեղի ունեցող իրադարձությունները հենց այդ դպրոցական խելահեղություններով էլ ավարտվեին, եթե մի բոպե անց դարբասի դռնակը չբացվեր։

Դա այնքան անսպասելի էր, որ զինվորները, ասես պայթյունից ետ ցատկեցին։

Դռնակը ծածկեց մի հսկայամարմին սպայական մոնումենտ։

Նա ասես ոտքով խրվել էր հողի մեջ, ասես վերևից ինչոր բան սեղմում էր նրա ուսերը, ու նա պարզ հայացքը սևեռել էր տարածության մեջ, զինվորների անհովար գլխարկներից վեր։ Հանկարծ այդ մոնումենտի ստորին քառակուսի ծնոտը ցած ընկավ, պրկված փորը ցնցվեց, շչականման մի ոռնոց կախվեց հրապարակի վրա.

— Ըղ-գա՜ստ։

Սակայն այդ պահին դեպի միջնաբերդը վազող բազմության առջևի ալիքը սեղմեց զինվորներին, նրանց գետնից կտրեց ու նետեց սպայի վրա։ Պարզվեց, որ մոնումենտը բնավ այդպես պինդ խրված չէր հողի մեջ. մարդկանց ճնշման տակ նա անճոռնի կնրպով շրջվեց իր առանցքի շուրջ ու մի կողմ ընկավ։ Այդ հրմշտոցի մեջ նա փորձեց ատրճանակի պատյանը բացել, սակայն մի սուր բանով հարվածեցին ձեռքին, մոնումենտը ծանրացավ, թուլացավ, ու ամբոխը նրան պարկի նման իր ոտքերի տակ առավ։

Պաուլ Գեննինգը գլուխն իջեցրեց, որպեսզի դռնակից ներս մտնի, երբ նրա կողքից մի ճարպիկ աղջիկ ներս սողաց։ Զինվորների ճնշման տակ Գեննիգն էլ աղջկա ետևից ներս ընկավ դռնակից և իսկույն զգաց, ինչպես բարալիկ մի թև գրկեց իր պարանոցն ու ցած քաշեց։ Դարբասի ետևում ամբոխի բարձրացրած աղմուկի մեջ նա լսեց ընդհանուր մի ձայն.

— Լսեցեք, Գեննիգ։ Մենք պետք է ազատենք monsieur Պերսիին։

Աղոտ լույսով, որ մարդիկ մեկ ծածկում էին իրենցով, մեկ բաց թողնում դռնակից, նա նկատեց ծանոթ դիմագծերը։

— Ֆրոյլայն Մարի՜։ Դուք այստե՞ղ եք։

— Հարկավոր է դարբասը բացել,— բղավեց Մարին։

Մեկը չիկչիկացրեց փականքը, մի ուրիշը բղավեց. «Խցիկների բանալիները»։ Մեկը Մարի բանալիները։ Ուր են խցիկների բանալիները»։ Մեկը հեռվում դոփդոփեց քարե սալիկներով, փախչելով դեպի մթությունը։ Իսկ դռնակից անընդհատ մարդիկ էին ներս լցվում, ինչպես նավաստիները նավակ են լցվում հրացանագրության տակ՝ արագ, միանման։

Եվ-ահա դարբասը ծանրորեն բացեց իր փեղկերը, ու լույսի հետ միատեղ միջնաբերդ ներխուժեց, թնդաձայն, խիտ մարդկային հոսանքը։

Զինվորները, որ առաջինն էին միջնաբերդ ներխուժել, կամա թե ակամա առաջ էին շարժվում քարե կաթսայի խճճված

մութ անցումներով։ Այդ կաթսայի խորքում, ինչ-որ տեղ, որ փոքրիկվում էր խուլ ձայներից, մերթ վեր էր նետվում, մերթ ցած ընկնում երկաթե մի զնգոց, ասես կտոր-կտոր էին անում բանալիների հսկայական մի կապուկ։ Հետո բացված դռնից պայծառ լույս ընկավ մարդկանց վրա, և անմիջապես մեկը մյուսի ետևից փականքները զնգզնգացին։ Խցիկները փորձված ձեռք էր բացում։

Երբ առաջին բացված խցիկից անհաստատ քայլերով դուրս եկավ մի մարդ, երիտասարդ, կերկերուն մի ձայն բղավեց.

— Ու-ռա՜։

Ամբոխն անմիջապես միացավ այդ ճիչին։ Եվ այդ պահից, մինչ բացվում էին խցիկները, ամբոցի միջանցքներով անընդմեջ գլորվում էր բազմաձայն մի աղմուկ.

— Ուռ-ռա՜։

Բազմությունն ավելի ու ավելի էր բարձրանում, նրան ավելի խորքն էին տանում միջնաբերդի խճճված անցումները, սակայն մարդկանց առջևից գնացող խումբը, որ դռներն էր բացում, միջանցքի յուրաքանչյուր ոլորանից հետո նոսրանում էր. ազատված գերիների հետ մարդիկ շտապում էին դեպի հրապարակ։

Մարին, Պաուլ Գեննիգը ու երեք-չորս զինվոր հասել էին մինչև շենքի տանիքի տակի նեղ փակուղին։

Բանտապանը սովոր ճարպիկ շարժումով բացեց դուռը. փականքներն ամեն տեղ միևնույն տեսակի էին, նոր, ինչպես և ամեն ինչ միջնաբերդում, պատերի և հատակի քարերից բացի։

— Վերջինն է,— արտասանեց բանտապանը։

— Հիմա դուք կարող եք պետական թոշակ խնդրել,— ասաց Պաուլ Գեննիգը։

— Գուցե դուք կմիջնորդեք ինձ համար,— արձագանքեց բանտապանը։

Մարին ուշադիր նայեց խցիկի մեջտեղում կանգնած մարդուն։

— Դուրս եկեք, դուք ազատ եք,— բղավեց զինվորներից մեկը։

— Ուռ-ռա՜,— միացավ նրան մյուսը։

Փակուղու կիսախավարը ինչպես դանակով կտրեց այդ բացականչությունը։ Այստեղ խաղաղ էր, ու թվում էր, թե առաստաղը դանդաղ իջնում է գլխներին։ Ամեն ինչ լռեց։

— Սա նա չէ,— ասաց Մարին։

— Ասում եմ ձեզ,— ասաց բանտապանը,— որ Պերսի անունով բանտարկյալ մեզ մոտ չի եղել։

Զինվորները թևանցուկ դուրս բերին խցիկից այն մարդուն։

— Պերսի՞,— հանկարծ կամացուկ հարցրեց նա։

— Այո, մենք փնտրում ենք բելգիացի Պերսիին, որին այստեղ բանտարկեցին նախանցյալ տարի,— ասաց Պաուլ Գեննիգը։

— Իսկ ես ձեզ ասում եմ, որ մեզ մոտ այդպիսին չի եղել։ Էլ ո՞վ կարող է այստեղ այդ բանն իմանալ,— վիրավորվեց բանտապանը։

— Դա այնքան էլ ստույգ չէ,— նույնքան կամացուկ ասաց խցիկի մարդը։— Monsieur Պերսին բելգիական քաղաքացի էր, ես նրան ճանաչում էի։ Նրան մի երկու շաբաթ պահեցին այստեղ, հետո անհետացավ։ Նա դեմ էր պատերազմին։

— Նրան սպանել են, Գեննիգ,— բացականչեց Մարին։

— Շատ հավանական է,— ասաց խցիկի մարդը։— Նա դեմ էր պատերազմին և, բացի այդ էլ, օտարերկրացի էր։

— Ա՜խ, գրողը տանի,— մռնչաց Պաուլ Գեննիգը։

— Որևէ բա՞ն է պատահել, թե պատերա՞զմն է վերջացել։

Մարին նետվեց դեպի խցիկից դուրս բերված մարդը.

— Դուք նյուրնբերգցի վարպետ Մայե՞րն եք։

Քիչ հապաղելով, խցիկի մարդը մի կողմ քաշվեց։ Բարձր, փոքրիկ պատուհանից թափանցող լույսը, որ տողվել էր վանդակապատից, ընկավ Մարիի դեմքին, և մարդը խեթ-խեթ նայեց աղջկան։

— Միանգամայն ճիշտ է։ Ես նյուրնբերգցի վարպետ Մայերն եմ, ժողովրդի թշնամին։ Ես դեմ եմ պատերազմին։

— Վարպետ Մայե՞ր...

Մարիի ձայնը խզվեց, նա ավարտեց հաղիվ լսելի.

— Գնանք,— ու մեղմորեն թևանցուկ արեց Մայերին։

Մթության մեջ, սսկված քարե լաբիրինթոսներում, Մայերը հարցրեց.

— Սա ի՞նչ կնշանակի։ Ես ձեզ չեմ ճանաչում, ֆրոյլայն։

— Ձեր մասին ինձ պատմել է Անդրեյ Ստարցովը։

— Ռուս է, շատ լավ տղա,— թնդաց Մայերի ծոծրակին Պաուլ Գեննիգը։

Փողոցի լույսը կուրացրեց վարպետ Մայերին, ու թերևս լույսից կամ գուցե մարդկանց խայտաճամուկ իրարանցումից, նա գլուխը բռնեց, աչքերը փակեց ու կանգ առավ։

Պաուլ Գեննիգը զգուշությամբ բացեց Մայերի թևերը։

Այն ժամանակ նա պատասխանեց.

— Անդրեյ Ստարցով, հիշում եմ։ Նա՞ էլ էր պատերազմին գեմ։

— Ախ նա, նա... այնպիսին էր... Նա այնպիսին...— սկսեց Մարին, շնչասպառ լինելով ու Մայերի արմունկը սեղմելով,— նա այնպես էր ձեզ սիրում, վարպետ Մայեր։

Պաուլ Գեննիգի աչքերը լցվեցին։ Նա հազաց, խլացնելով ինչ-որ երգիչների, որոնք անծանոթ մի երգ էին սկսում։

— Անդրեասը լավ տղա էր, խելոք, ես նրան միշտ էլ հասկանում էի,— հուզված ասաց նա։

Մարին դավադիրի նման ժպտաց նրան.

— Անդրեյը հիմա մեզ հետ կլիներ, Գեննիգ։

Այս ու այն կողմ վազվզող, անդադրում մարդկանց միջև նա կանգնել էր պայծառ, երջանիկ և մատղաշ ծառի նման թեթև։

Պաուլ Գեննիգը նայեց նրան հպարտ, քաջալերող հայացքով, քիթը մաքրեց ու ավելի պինդ հազաց։

— Դուք ո՞ւր կուզեիք գնալ, վարպետ Մայեր,— հարցրեց Մարին։

Վարպետ Մայերը ուշադիր նայեց հրապարակը։ Երերացող գլուխների լճի վրա նա իր ծեր աչքերով տեսավ մաշված տաներով ցուցանակը.

Bauernschenke[1]

Նա շրթունքները կրծոտեց, ասես ավելի հարմար ծամելով չիբուխը, մորուքի ճերմակավուն ստվերները շարժվեցին, վեր սողացին այտերով, նա ջերմ ժպիտով նայեց Մարիին, Պաուլ Գեննիգին, և նրա խոսքերը նույնքան ջերմ էին ու մեղմ.

[1] Գեղջկական գարեջրատուն (գերմ.)։

— Եթե իմ ցանկությունն՝ եք հարցնում, ապա ես կխմեի մի գավաթ մուգ... Հիմա, կարծում եմ, շատ տեղին կլինի։

Եվ նա շոշափեց իր գործած բաճկոնակի գրպանը, որտեղից առաջ փորի վրայով շղթայիկ էր ձգվում։

Ժամանակն է Բիշոֆսբերգ քաղաքին վերջին հրաժեշտը տալու։ Այն դեռ շատ անգամ կհիշատակվի, սակայն մենք այլևս հոգնած ոտքերով չենք դիպչի նրա լվացած սալարկնեերին, չենք տեսնի նրա նեղ, սակավամարդ փողոցները, չենք լսի ռատուշայի ժամացույցի քնատ զողանջը.

Son-ne,
Son-ne,
Son-ne!..

Մենք իսոր թախիծով կբաժանվենք նրանից՝ վաղ առավոտ դետակի մեջ ցողված վարդագույն աղջկա այդ միակ տեսլյքից։

Մենք հիշում ենք փողոցային լապտերների շուրջ դալի լույսի տարածած սփռոցիկները, և Յոթ Լճակների պուրակի գարնանային շրշյունները, և՛ ծյունածածկ, սառած խեժի բուրմունքով պարուրված Լաուշեի գագաթը։ Մենք հիշում ենք նույնիսկ անշար մորաքույր Մայերին, որ հսկում էր ոստիկանատան մոտի հասարակական զուգարանը։ Արդյոք դեռ երկա՞ր պետք է հյուսի նա իր մշտական գուլպան։

Բիշոֆսբերգում մենք սիրով թողնում ենք վարպետ Մայերին, որը դեմ էր պատերազմին։ Նա վերջին մարդն էր, որին իր կարճ ողջույնն էր հղել monsieur Պերսին՝ bonjour, bonjour, bonjour! Բիշոֆսբերգում, իհարկե, շարունակում է թնդալ ու գոռալ խմբակային երգեցողության բարեկամների միությունը գանձապետ Պաուլ Գեննիգի բասը։ Մենք չգիտենք, արդյոք նա դո՞ւրս է եկել սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից, ուստի նրա մասին շատ զուսպ ենք խոսում, թեև համակրում ենք նրան վեպի հերոսների նկատմամբ ունեցած ուշադրության համար։

Սակայն աղնիվ լինենք։

Մեզ բնավ չի հետաքրքրում ոստիկանության քարտուղարի ճակատագիրը, նույնիսկ ոստիկանատան շենքի վիճակը, մենք

միանգամայն անտարբեր ենք «Բիշոֆսբերգի առավոտյան լրագրի» խմբագրի, վարսավիրի ենթավարպետ Էրիխի, ավագ քույր Նայմանի կամ մայոր Բիդաուի, կամ նույնիսկ նորին մեծություն Սաքսոնիայի թագավորի նկատմամբ։ Սրանք բոլորը մանրուքներ են, որ լցվում են ամեն մի վեպի մեջ, ինչպես ճանճերը՝ քաղցր թեյի։

Մենք թեթևություն ենք զգում այն մտքից, որ գաղտնի սոցիալիստ Ուրբախի մասին միայն մեկ անգամ պետք է խոսենք։ Մենք նրան չենք կարեկցում, որովհետև ամուսնացել է ապօրինի որդի ծնած կաղ արիստոկրատուհու հետ, որպեսզի օգնի անպետք քաղաքական կուսակցությանը։

Վերջապես, սոսկ եսասիրական նկատառումներից, որ վերաբերում է վեպի կառուցվածքին, մենք դառնում ենք ֆրաու Ուրխաբին՝ ծնյալ ֆոն Ֆրեյլեբեն։ Նա չէր մահացել, նրան կաթված էր խփել, և նա պառկել էր ննջարանում, երբ Ուրբախի տանը տեղի ունեցավ այն դեպքը, որ պահված է սույն գլխի վերջաբանի համար։

Անցնենք այս մարդկանց կողքով, առա՛ջ, առա՛ջ։

Սակայն քաղա՞քը։

Ներիր, եթե տհաճ մի խոսք տառապանք է պատճառել քո ինքնասիրությանը։ Ների՛ր։

Դու արժանի ես գովերգի, ինչպես մարդու ձեռքով կառուցված և մարդկային սրտով սիրված ամեն մի քաղաք։

Դու հաստատուն ես։

Քո մեջ մարդիկ են ապրում։ Դու նրանց հավատարիմ ես։

Դու նրանց հետ նետվեցիր նոր ուղիներ որոնելու։

Եվ դու ավելի սխալներ չես արել, քան արել են Հռոմը, Աթենքը կամ Փարիզը։

Դու՝ համեստ, անհայտ Բիշոֆսբերգ։ Ներիր...

Նոյեմբերի տասի երեկոյան պանդոկապանը, որ հաջողացրել էր ամբողջ օրն առանց ընդմիջման առևտուր անել, հանգիստ շոյում էր իր փայլուն, տափակ գանգի վրայի տասնչորս մազը։ Այն ծխախոտավաճառի նման, որն արգելել էր իր խանութի առջև հեղափոխություն անել, նա հավատում էր գոյություն ունեցող իրակարգի հաստատունությունը։ Նրա ճաշարանում առաջվա պես կախված էր իշխան Օտտո ֆոն Բիսմարկի ինքնագիրը, որով երկաթյա կանցլերը շնորհակալություն էր հայտնում Münchnerbräuerei[1] իրեն ուղարկված մի տակառ մուգ գարեջրի համար։ Նրա ճաշարանում առաջվա պես փչացնում էին գարեջրի ծորակները և անդադար աղմուկ էր։ Նա քիչ էր ականջ դնում այդ աղմուկին, դա սովորական բան էր նրա համար, և զրուցում էր պանդոկի մշտական այցելուի հետ։

— Ես նրան ասացի. ի՞նչ է փոխվել, աղավնյակս։ Ահա դուրս եկար մի ոտքովդ հոսպիտալից, ձեռնափայտդ թափահարեցիր ռատուշայի դեմ, խայտառակություն սարքեցիր միջհարեցիր ռատուշայի դեմ, խայտառակություն սարքեցիր միջնաբերդում։ Իսկ վերջիվերջո վերադարձար հոսպիտալ գիշերելու։ Նա իրենն է ոռնում. սպասեցեք, կփոխվի։ Ասում եմ, ախր ի՞նչը պիտի փոխվի։ Հո ոտքդ չի՞ բուսնելու...

Պանդոկի մեջտեղում դրված կլոր սեղանի շուրջ խցկված նստած էին զինվորները։ Քրտնած, կարմրատակած, նրանք արձակել էին օձիքներն ու բաճկոնները։ Ձայները խոպոտ էին, սակայն զինվորները չէին դադարում վիճելուց։

— Ինչպե՞ս,— սպառնալից բղավում էր պեպենոտ նորակոչիկը։— Զինվորներն այդպես միանգամից գործ չունե՞ն։ Կուսակցությունն ամբողջը իր ձե՞ռքն է առել։

— Ոմանք հրամանի են սպասում նստավայրից...

— Նստավայր այլևս չկա։

— Ուռ-ռա՞-ա։

— ...հրամանի, մայրաքաղաքից, մյուսներն ամբողջ օրը խորհրդակցում են, ուրիշներն էլ...

— Գրողի ծոցը կուսակցությունները։

— Սպասեցեք, սպասեցե՛ք,— թիկունքնում էր սեղանին ակնոցավոր լանդշտուրմիստը։

— Հարկավոր է հասկանալ հեղաշրջման բնույթը։ Սա ի՞նչ է։ Ժողովրդական ապստամբությո՞ւն։ Դասային հեղափոխությո՞ւն։ Դասակարգային պայքա՞ր։

— Աբրահամ ծնավ զԻսահակ, Իսահակ ծնավ զՅակովբ...

— Զինվորների խռովություն։

— Զինվորները խաղաղություն են ուզում։

Մեկը մեջ ընկավ անկյունից.

[1] Մյունխենի գարեջրի գործարանին (գերմ.)։

— Հենց որ զինվորը խաղաղություն ուզեց, նա այլևս զինվոր չէ։ Զինվորը պետք է պատերազմ ուզի։

— Կոր-չի՛ պատերազմը։

— Կո-որ-չի՛։

— Գործի կեսն արված է։ Ռատուշան մեր ձեռքին է, միջնաբերդը՝ նույնպես, ամենուրեք մեր պահակակետերն են դրված։ Ուրեմն էլ ի՞նչ է մնում։

Պանդոկը հանկարծ սկսվեց։

Եվ այդ վայրկենական լռության մեջ լսվեց անսպասելիորեն բարձր մի ձայն.

— Մնում է իշխանությունը, որ պետք է կառավարի ձեր պահակակետերը, ռատուշան, քաղաքը։ Մնում է զինվորների իշխանություն ունենալ։

Գլուխները ձգվեցին դեպի ելքի դուռը, որտեղից լսվում էր այդ ձայնը։

— Ես կարծեմ ճանաչում եմ այդ աղջնակին,— ճաղատը ջոյելով ասաց «Bauernschenke»-ի տերը։

Մարին կանգնել էր աթոռին՝ նրբիրան, աղեղալարի պես ձգված։ Նրա դեմքը վեր էր տնկված, մազերը թափթփվել էին, քիչ բարձրացրած ձեռքը դողում էր։

Անգլիական ամսագրում, որ արգելվում էր կարդալ միսս Ռոնիի պանսիոնում, մի ժամանակ զետեղվել էր Հայդ պարկում տեղի ունեցող միտինգում ճառ արտասանող սուֆրաժիստուհու լուսանկարը։ Սուֆրաժիստուհու դեմքը վեր էր տնկված, մազերը թափթփվել էին, և նա ամբողջապես նուրբ էր ու ձգված աղեղալարի նման։

Սակայն, Մարի, Հայդ-պարկի այդ հռետորուհու քիչ բարձրացրած ձեռքը երևի չէր դողում, և, Մարի, մի՞թե հիմա, այս պահին կարելի էր մտածել պատկերազարդ ամսագրերի մասին։

— Ճիշտ է,—դուրս թռավ պեպենոտ նորակոչիկի բերանից։

— Մենք հասկանում ենք, որ մնում է իշխանությունը...— սկսեց ակնոցավոր լանդշտուրմիստը, սակայն իսկույն էլ լռեց անդուսպ հառաչների տարափից.

— Զինվորների իշխանությո՛ւն։

— Զինվորների խորհո՛ւրդ։

— Խորհո՛ւրդ։ Խորհո՛ւրդ։

Եվ այդ տարափի վերջում, հուսահատորեն դուրս մագլցելով աղմուկից, խոխոցաց մեկի ձայնը.

— Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս, ինչպե՞ս։

Այն ժամանակ Մարին, ասես բռնելով շարունակ փախչող խոսքը, ձեռքը բարձրացրեց ուսի հավասարությամբ ու բղավեց.

— Ընկեր-ներ։ Երրորդ անգամն է գալիս եմ այստեղ ու լսում, թե դուք ինչպես եք դուխում նույն տեղում։ Ամեն բոլսեն թանկ է։ Պետք է պայմանավորվել։ Ես առաջարկում եմ դրա համար գնալ ուրիշ շենք։ Ով ուզում է իր ձեռքն առնել Բիշոֆսբերգի զինվորական խորհուրդ հիմնելու պատիվը, թող հետևի ինձ։

Նա գրեթե դուրս թռավ փողոց՝ կրծքերի, ուսերի և ձեռքերի ճնշումից։ Եվ հառաչների նոր տարափի տակ, որից պատուհանը դղրդաց, լսեց միայն մի կրկներգ, վաղուց մոռացված, հուզիչ և անհոգ կրկներգը՝

— Է՛խ ինչ լավն են Սաքսոնիայի աղջկերքը։

Մի քանի զինվոր նրա հետ մինչև տուն հասան։

Նա զինվորներին առաջնորդեց ֆրաու Ուրբախի հյուրասենյակը, սենյակի մեջտեղը քաշեց լայն սեղանը, բերեց թուղթ, թանաք և գրիչներ։ Հանեց պատին կախված կաղնեփայտե տախտակը՝ վրան փորագրված երկտող բանաստեղծությամբ.

> Wir stehen in Ost und West
> Wie Fels und Eiche fest.

Տախտակի եռևը գրեց՝ մի ոլորած թղթիկով, որը թաթախեց թանաքամանի մեջ.

Բիշոֆսբերգ քաղաքի
Զինվորների դեպուտատների
Ճախնական խորհուրդ։

Ապա իջավ ցած և տախտակը կախեց փողոցում, շքամուտքին։

Ու երբ սեղանի շուրջը տեղավորված հինգ զինվորը հաշվում էին, թե քանի դեպուտատ պետք է ուղարկեն Բիշոֆս-

բերդում բնակավորված ստորաբաժանումները, Մարին կանգնել էր պատուհանի մոտ, հյուրասենյակի մի անկյունում անձայն, ինչպես ստվեր։

Եվ ապա յուրաքանչյուր րոպեն, որ այնուհետև մտնում էր Բիշոֆսբերգի նոր պատմության մեջ, ավելի ու ավելի հաստատուն էր դարձնում զինվորների ձայները, բառերն՝ ավելի հատու, դրանց իմաստն՝ ավելի պարզ։

Այդ ժամանակ դուռը դանդաղ բացվեց, և սև վերարկու հագած, կիպ ոլորած հովանոցը ձեռքին՝ հյուրասենյակ մտավ մի բյուրգեր։ Նա հանեց կոտելոկը, կանգ առավ, ուշադիր նայեց պատերին, քիվերին, պատուհաններին։ Հետո, առանց կռանալու, մոտեցավ սեղանին, սակայն կանգնեց ոչ թե կիպ սեղանի մոտ, այլ մի քիչ հեռու, այնպիսի հեռավորության վրա, որ չէր կարող նսեմացնել նրա ակնհայտ արժանապատվությունը։ Թե ո՞ւր էր նայում, հնարավոր չէր հասկանալ։

— Դո՞ւք եք խորհուրդը,— արտասանեցին նրա փայտացած շուրթերը։

— Այո՛,— պատասխանեցին նրան։

— Ռատուշայի մոտ չգիտեմ ում կողմից զինվորական պահակակետեր են դրված։ Ներս մտնել կամեցողներից նրանք խորհրդի տված անցաթղթեր են պահանջում։ Քաղաքում ոչ ոք չգիտե, թե այդ խորհուրդը որտեղ է գտնվում։ Ես մի ամբողջ ժամ փնտրեցի։ Այստեղից եզրակացնում եմ, որ խորհուրդը վարչական հմտություն չունի։

— Խորհուրդը հենց նոր է կազմակերպվել։

— Ուրեմն այն ժամանակ, երբ ռատուշայի մոտ խորհրդի տված անցաթղթեր էին պահանջում, քաղաքում դեռևս ոչ մի խորհուրդ գոյություն չունե՞ր։

— Զինվորները հեղափոխական նախաձեռնություն են ցուցաբերում։

— Իսկ դուք՝ խորհո՞ւրդն եք։

— Այո՛։

— Ինձ ռատուշա մտնելու անցաթուղթ տվեք։

Զինվորներն իրար նայեցին։

Բյուրգերն անշարժ էր, նրա աչքերը չգիտես ուր էին նայում։

Այն ժամանակ պատուհանից, հյուրասենյակի անկյունից պոկվեց անձայն ստվերը։

— Ես գիտեմ սա ով է,— ասաց Մարին։— Սա հերը շտադտրատն է։ Ինձ թվում է, նրան կարելի է անցաթուղթ տալ, եթե ասի, թե ինչ գործ ունի ռատուշայում։

Փայտացած շուրթերն արտասանեցին.

— Մինչև սահմանադրության փոխվելը քաղաքում իշխանությունը պահպանում է մունիցիպալիտետը։ Եթե իշխանությունը ուժով խլել են, մունիցիպալիտետի պատասխանատվության տակ, այնուամենայնիվ, մնում է քաղաքային տնտեսությունը։ Ես պետք է լինեմ ռատուշայում. երեկոյան ես նայում եմ տնտեսական բաժնի թղթերը։

— Ես կգրեմ,— ասաց զինվորներից մեկը։

Նա մի թերթիկ թուղթ պոկեց և մի քանի խոսք գրեց, ամրացնելով դրանք հաստ ստորագրությամբ։ Անցաթուղթը սեղանի վրա ձեռքից ձեռք անցավ, ծանրացավ ստորագրություններով։ Երբ դրվեց վերջին ստորագրությունը, ստորագրողը հայտարարեց.

— Լավ կլիներ... որևէ կնիք դնել։

— Կնի՞ք,— բացականչեց Մարին ու դուրս վազեց հյուրասենյակից։

Վերադառնալով, նա վերցրեց անցաթուղթը և ստորագրություններից դեպի աջ ուժեղ թխկացրեց փայտե կնիքը։ Անցաթղթի վրա դրոշմվեցին մանուշակագույն չորս բառ.

EX LIBRIS
MARI URBACH[1]

Հերը շտադտրատը Մարիի ձեռքից ընդունեց անցաթուղթը առանձնասենյակը մտնելու համար, առանց մեջքը կռացնելու հասավ մինչև դուռը և կոտելոկը հագավ։

Մարին վազեց նրա ետևից, աղջնակի նման շուտ-շուտ ոտքերը ծալելով։ Նա ուզում էր տեսնել, թե շտադտրատն ինչպես է իջնելու սանդուղքից։

Սակայն միջանցքում, դռան ետևը տեսավ հորը։ Մարին կանգ առավ։

[1] Մարի Ուրբախի գրքերից (լատ.)։

Հերը Ուրբախը նրան էր նայում, ասես չճանաչելով։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Մարին։

— Մարի, դու գիտե՞ս, քո մայրը ծանր հիվանդացել է։ Նրան կաթված է խփել։

Մարին լռում էր։

— Եվ եղբայրդ էլ սպանվել է, մարտի...

— Այո՛,— պատասխանեց Մարին,— սպասուհին ինձ ասել է այդ մասին։

Նա մի պահ անշարժ կանգնեց, հետո շրջվեց, մտավ հյուրասենյակ և դուռը ետևից ծածկեց։

Տիգնական ցեղի ժողովուրդ

Ահա հատվածներ սաքսոնական բանակի օբեր-լեյտենանտ Ֆոն ցուր Մյուլեն-Շենաուի գրառումներից, որ նա կատարել է ռուսական գերության մեջ։ Այս գրառումները պարունակող պոկոտված տետրը գտնվել է Սեմիդոլում տեղի ունեցած դեպքերից շատ ժամանակ անց։ Վատ, հավանաբար ինքնաշեն թանաքը ծծվելով տարածվել է, թուղթը թրջվել է։ Պահպանված էջերը հաջողվել է վերականգնել և գրեթե ամբողջությամբ թարգմանել։

19 փետրվարի։

Արհեստական փոշոտումից ստացված թելախոտի սերմերը առաջին ծիլերը տվեցին։ Ֆրեյը քայլում է հպարտ ու երջանիկ։

27 փետրվարի։

Այսօր մի տարի է։

Այս ընթացքում ոչ մի նամակ հայրենիքից։ Ես գրել եմ բոլորին, ում կարող էի հիշել։

Հիմա, երբ Մարին այդքան անհուսալիորեն հեռու է, նրա մասին մտածելիս խեղդվում եմ թախծից։ Ռազմաճակատում այդպես չէր։ Այնտեղ ամեն ինչ շատ պարզ էր թվում. պատերազմը վերջանում է, վերադառնում եմ Շենաու, ամուսնանում եմ։

Ես մտածում եմ տոհմիս, տոհմիս և իմ ճակատագրի մասին և Մարիի հետ ամուսնանալն ինձ համար պահանջ է դառնում։ Այդ զարմանալի էակն ինձ զգալ տվեց, որ իր մեջ է տոհմիս փրկությունը։ Մենք հինգ ճյուղ ենք ունեցել, բոլորը տղամարդկային։ Դրանցից չորսը վերացել են իմ օրոք, ես ինքս հիշում եմ։ Ես՝ վերջինն եմ։ Ամուսնությունը պետք է տեղի ունենա ինչ-որ առանձնահատուկ հիմունքներով, որպեսզի տոհմիս մեջ դարձյալ ապրելու ցանկություն արթնանա։ Ես հիմա միայն կյանքս ապրելու-ավարտելու ցանկություն ունեմ։ Չեմ տեսնում, թե ինչի համար պետք է ապրեմ։ Նկարնե՞րը։ Իսկ հետո՞։ Ամենը իմ մեջ է, կյանքի այն մասնահատվածում, որ ինձ սահմանված է։ Դրանով ամեն ինչ վերջանում է։ Ես չեմ կրկնվում, չեմ ապրում, ես լրացնում եմ, չափում ինձ սահմանված ժամանակահատվածը։ Ես պետք է ուզեի, որ ապագայում իմ առջև դարերը փռվեին, ճիշտ այնպես, ինչպես նրանք ընկած են իմ ետևում, անցյալում։ Ես պետք է ուզեի կրկնվել։

Ֆրեյն անդադար ֆիզիոլոգիայի մասին է խոսում։ Ինձ համար տհաճ է մտածել Մարիի մասին, երբ գլխումդ այդպիսի տերմիններ են պտտվում։ Իմ նախահայրերը սիրում էին նախ ամուսնական գիշերվա իրավունքով, հետո՝ փողով։ Հազիվ թե նրանցից որևէ մեկը սիրեր իր կնոջը։ Կանայք մի կողմ էին մնում, նրանց պարտականությունն էր տոհմը շարունակել։ Տոհմը ծագում էր նախահայրերի հիմնական կյանքից մեկուսացված։ Եթե նրանք սիրեին տոհմի գծով, այն ամուր կլիներ, ու ես հիմա մի հարյուր տարով առաջ կնայեի, և ոչ թե կմտածեի իմ ժամանակահատվածն ապրել, ավարտել։

Դրանում համոզված եմ։

Ֆրեյն այդ մասին այսպիսի խոսքերով է խոսում. պետք է սիրել, ամուսնանալ, երեխաներ աշխարհ բերել, և այն ժամանակ ամեն ինչ ինքնին հասկանալի կլինի։

Մարին իր մեջ կրկնվելու, շարունակվելու կամք ունի։ Ես փակում եմ աչքերս ու տեսնում նրան, ինչպիսին էր նա վերջին անգամ Շենաուում։ Ես պատրաստ եմ բղավել, այնքան այդ ինձ զայրացնում է։

30 ապրիլի։

Ճամբարում հայտարարվել է, որ մենք կարող ենք անարգել տեղավորվել գյուղերում և ըստ համաձայնության վարձվել գյուղացիներին։

...քաղաքից մի զինվոր էր եկել, ժողով կազմակերպեցին։ Զինվորը խոսում էր խաղաղության մասին և այն մասին, որ իբր Ռուսաստանը...

16 հունիսի։

Մեզ այստեղ պահում է, իհարկե, ոչ իշխանությունը։ Իշխանություն վաղուց արդեն չկա։ Ճանապարհներն անանցանելի վիճակում են։ Ֆրեյը մոայլ է։ Երբ Պիչեուրից տեղափոխվում էինք, հերբարիումի արկղը ցած գլորվեց, ընկավ անիվի տակ։ Հերբարիումի հարյուր թերթից ավելին տրորվել և կոտրվել են։ Ֆրեյը ծեծեց սայլապան մորդվացուն, ես ոչնչով չէի կարող...

...Երեսունյոթ վերստ (40 կիլոմետր) է մինչև Սեմիդոլ։ Ճամբարի համեմատությամբ մոտ է 23 վերստով. սակայն դրանում շատ ուրախալի բան չկա։ Քաղաքից մեկնել չի կարելի, գնացքներ չեն գնում։ Փոխանակության մասին ոչ ոք ոչինչ չի լսել և չգիտեն, թե գերիներին ուր ուղարկեն։ Ասում են այնտեղ հաղարից ավելի մարդ է հավաքվել և ողորմությամբ են ապրում։ Ֆրեյը գտնում է, որ անհրաժեշտ է մորդվացիներին ավելի ուշադիր հետևել։ Դրանց մեջ է մեր փրկությունը։ Փրկությո՞ւնը։

...Ոչ մի տպագրված տող չեն տեսել։ Ֆրեյն իր կազմաբանությանը վերջ է տվել, շարունակ լուռ է։

Երեկ Պիչեուր եկավ պարենային ջոկատը։ Վաղը ժողով է կանչված, պետք է հաց հավաքեն քաղաքների համար։ Մորդվացիները սոսկալի վախեցել են, թաքնվում են խրճիթներում։

28 հունիսի։

Մորդվացիներն անհասկանալի կերպով ինձ հարգանքով են վերաբերվում։ Երեկ եկավ հեքիմ-մորդվինուհին, կաթ բերեց, հրավիրեց ինձ աղոթածեսի։ Հեռանալիս մինչև ոտքերս խոնարհվելով գլուխ տվեց։ Ֆրեյը խնդրեց դրանցել.

Կարին-Պազ — անտառի աստված, լոշենու և տրեխի համար մատղաշ կեղևի պահպանիչը։

Կալմա-ապիր-ավա — գյուղական գերեզմանատան պահապան, որ պահպանում է գերեզմանատան դարբասը։

Յուրտավա — օջախի աստվածը, փոփոխական է՝ մեկ կատու է, մեկ նապաստակ։

«Գուցե պետք գա»,— ասաց Ֆրեյը։

29 հունիսի։

Արևածագի հետ մորդվացիներն իրենց ընտանիքները գյուղից դուրս էին տանում։ Մեզ մոտ մտավ հեքիմ կինը։ Ճանապարհ ընկանք։ Երկու ժամ տասը րոպե ճանապարհ էինք գնում։ Սկզբում քայլում էինք դաշտով, հետո՝ անտառով, ձորակներով։ Ձորակներն այստեղ սարսափելի են, եթե տեղանքը չիմանաս, հեշտությամբ կմոլորվես։ Մարդիկ հավաքվել էին խուլ վայրում մի կես մետր վեր ցայտող աղբյուրի մոտ։ Աղբյուրի ջուրը արտակարգ մի բան էր՝ սառցասառն, երկաթի պարունակությունից դեղնած։ Քարերը, որոնց վրայով ջուրը հոսում էր, ծածկվել էին դարչնագույն, բարակ շերտով, ինչպես ժանգից։ Աղբյուրն ամբողջ ձմեռը խփում էր։ Մարդիկ նստել էին ընտանիքներով, ամեն ծուխ մի շրջան կազմած։ Ետնախորշի խորքում, աղբյուրի ետևը շորս խարույկ էին վառում։ Մարդկանց ամեն մի շրջանակի մեջտեղում դրած էին Պիչեուրից բերված շիլայի պուտուկները։ Երբ մեզ նկատեցին, անհանգստացան, սկսեցին շուրջները նայել։ Հեքիմը վաղեց անցավ շրջանիկով և շշուկով մի բան հաղորդեց։ Դրանից հետո հանգստացան, հավանություն տալով նայեցին մեզ և գլուխները տմբացրին։ Ֆրեյը մոտեցավ նստեց մի շրջանիկի մոտ, որտեղ գրեթե միայն ծերուններ էին։ Ես նստեցի նրա կողքին։ Շուտով լռություն տիրեց։ Տոհմավագը աղբյուրի առջև աղոթք ասաց։ Այն կրկնեցին ավագները՝ ամեն մեկն իր շրջանիկում։ Դրանից հետո ետնախորշի խորքից շորս ոչխար դուրս բերեցին։ Ավագները մոտեցան խարույկներին, սկսեցին ինչ-որ հմայախոսքեր երգել։ Հետո ոչխարներին մորթեցին, կաշիները քերթեցին, նստեցին խարույկների շուրջ ու սկսեցին միս խորովել։ Տոհմավագը շարունակում էր աղոթքը։ Այդ ժամանակ եկավ ռուս տերտե-

բը։ Նրան հարգանքով ընդունեցին։ Նա հավանաբար գոհ էր, անմիջապես իր կապոցը բացեց, հագավ շքեղ ոսկեկար զգեստը և սկսեց ռուսական մաղթանքը, հենց որ տոհմավագ մորդվացին ասաց, որ մորդվական աղոթածեսը վերջացավ։ Ռուսական մաղթանքի և մորդվացիների աղոթքի ծիսակատարման տարբերությունները չնչին են։ Սա քարոզչի հետաքրքիր տիպ էր՝ ռուս տերտեր, որ հաշտ ու խաղաղ հարմարվել էր հեթանոսության հետ։

Ֆրեյն ինձ պատմեց, որ տերտերն էլ, ինչպես տոհմավագ մորդվացին, աղոթում էր, որ անձրև գա և բարեհաջողություն լինի։ Ֆրեյը մորդվացիներից լավ չի խոսում ռուսերեն, շատ ծիծաղելի է բացատրվում, սակայն նրան հիանալի հասկանում են։ Մեսը վերջանալուց հետո միսը բաժանեցին ընտանիքների միջև։ Կավե ամանների մեջ լցրեցին պուրե՝ արբեցնող խմիչք, որ մեղրից են եփում։ Առաջինը խմեց տոհմավագը։ Նրանից հետո, չգիտեմ ինչու, ինձ տվեցին, հետո՝ տերտերին։ Տերտերը, խմելով, նայեց ինձ և ամանը բարձրացրեց։ Պուրեն շատ թունդ է, զգացի, որ հենց առաջին կումերից հարբում եմ, գուցեև պատճառն այն էր, որ մեկուկես տարի ոչինչ չէի խմել։ Պուրեն մատուցվում էր միայն տղամարդկանց։ Մսի մի մասը և շիլայով պուտուկները կանայք հետները տարան անասնանոցները, որտեղ և կերան իրենց ուտելիքը։ Վերադարձանք ամենաշոգ ժամին։ Ֆրեյը քայլում էր ծերունիների հետ։ Ես՝ մենակ, առջևից։

Աղոթածեսը կոչվում էր «Բաբան հաշա»։

... արդեն սովորել եմ ապրել կարծես յոթերորդ դարում։ Առավոտները կավե ամանով մեզ համար բերում են մածուն և հաց։ Մեղնից ոչինչ չեն վերցնում։ Հագիս քաթանե վերնաշապիկ է՝ դեղին խաչերով ասեղնակարված։ Ասում են, այն ասեղնակարել է Պիչեուրի գեղեցկուհին։ Ես նրան չեմ տեսել։ Ընդհանրապես այստեղ գեղեցիկների չեմ տեսել։ Երբ մտածում ես նրանց մասին՝ շունչդ կտրվում է, բայց բավական է շուրջդ նայես, ամեն ինչ անցնում է։

Ֆրեյը պատմեց, որ մի տասներկու տարեկան աղջկա նստեցրել են ճախարակի առաջ, որ գյուղի շրջագծի երկարությամբ խամ թել գործի։ Այդ թելով նա կեսգիշերին կշրջափակի Պիչեուրը, որպեսզի այն պահպանի վարակից։ Մանողը

պետք է անպայման կույս լինի։ Մինչև նա մանում է, մոտը միայն պառավ կանայք կարող են մտնել։ Այլապես թելը զորություն չի ունենա։

Քաղաքից մեզ մոտ տիֆի վարակ բերեցին։

Ֆրեյի պատմածից հետո ամբողջ գիշերը չէի կարողանում քնել։

7 սեպտեմբերի։

Ամեն ինչ շարժվո՞ւմ է։ Ոչ։ Ամեն ինչ կանգնած է։ Դուրս պրծնել անիծյալ...

... Տեղ չես հասնի նույնիսկ լող տալով։ Ամբողջ շաբաթվա ընթացքում մեր բնից մի անգամ դուրս եկանք։ Գնում էինք կաղնիներից թանաքի կաղիններ հավաքելու։ Ֆրեյը դեռևս ինչ-որ բանի հույս ունի, ասում է, որ եթե մորդվացիները մեզ կերակրեն...

10 նոյեմբերի։

Ռուսաստանը ես տեսա հեղափոխությամբ բռնկված։ Ուրիշ վիճակում այն չեմ տեսել։ Սակայն իմ կարծիքով, այն ուրիշ չի էլ եղել։ Մտածում եմ այն միլիոնավոր կիլոմետրերի մասին, որ փռված են այսպես անօգտագործելի, ինչպես Պիչեուրը։ Յոթերորդ դար։ Նոյեմբերից ձյուն է գալիս։ Մարդիկ թաքնվում են որջերում, քուն մտնում կես տարով։ Եթե սա հեղափոխությունն է, հապա ուրեմն ի՞նչ է եղել մինչ այն։ Ֆրեյն ասում է, որ Ռուսաստանը չենք տեսել։ Իմ կարծիքով՝ ընդհակառակը։ Ռուսաստանը հենց այն է, ինչ տեսնում ենք. ձյուն, անանցանելի ճանապարհներ, քուն։ Այստեղ՝ ձորակներ, քիչ հեռու՝ տափաստաններ, ավելի հեռու՝ անապատ, մյուս ծայրում՝ անտառներ, ճահիճներ, մամուռ։ Այդ նախնադարյան հոյատեսության մեջ՝ բնակավայրեր, որոնք կոչվում են քաղաքներ, և տեղ-տեղ դաշտեր։ Այս հողատարածությունները պիտանի են գաղութացման համար։ Գաղութը դեռևս պետք է անցնի լուսավորյալ բռնապետության ուղին։ Այն ժամանակ թերևս նա ապագա ունենա։ Այստեղ պետք են ֆեոդալներ, ոչ թե սոցիալիստներ։ (Եվ պե՞տք են արդյոք որևէ տեղ սոցիալիստներ)։ Ֆեոդալները կհարկադրեն վարժվել խելամիտ աշխատանքի։ Ուրիշ միջոց,

որով կարողանա ստիպել եգիպտացորեն ցանեն այնտեղ, ուր տարեկանն այրվում է տապից, չկա։ Քաղաքներում արդեն սկսվել է քաղաքացիական պատերազմը... ինչ հեղափոխություն...

... ձյուն, միայն ձյուն։ Տե՛ր աստված։

Գիշերն արթնացա ուժաթափ վիճակում։ Դարձյալ Մարին, աշխույժ, տաքուկ։ Հանուն այն բանի, որ տեսնեմ նրան...

20 դեկտեմբերի։

Սահնակի տեղ հասնելու առաջին իսկ հարմար առիթով քաղաքից լուր եկավ, թե իբր Գերմանիան հաշտության պայմանագիր է ստորագրել, և Նորին մեծություն կայսրը փախել է։

Որպիսի՞ անհեթեթություն։ Եվ ինչպիսի ողորմելի սրիկաներ պետք է լինեն այդ լրպարտության տարածողները։ Մտածելն իսկ զզվելի է։

Ֆրեյը դարձել է մռայլ ու ծայրահեղ լռակյաց։ Ես հաշվեցի. այսօր նա յոթ բառ ասաց. բարի լույս, դարձյալ ձյուն է, այո, բարի գիշեր։ Նա միշտ ամուր է քնում, երազ չի տեսնում։ Արդեն մի շաբաթ կլինի դարձյալ խորասուզվել է իր կազմաբանության մեջ, նստած է խոշորացույցը ձեռքին։ Ես նրան օգնում եմ ճահճային բույսերը ամանների մեջ աճեցնելու գործում։ Փորձեցի ածխով նկարել։ Մորդվացիները հիանալի այրված ածուխ են ստանում։ Սակայն թուղթ չկա։

Երկու օր բակում աշխատեցի, ձյունն էի մաքրում։

... չգիտես որտեղից են։ Մեկը բավարացի է, մյուսը՝ չեխ։ Ֆրեյը բավարացուն համոզեց գնալ քաղաք և ամեն ինչ մանրամասն իմանալ։ Խոստացավ փոխարենը ամբողջ ձմեռ նրան կերակրել։ Բավարացին գնաց։ Ֆրեյը ուղեկցեց նրան մինչև գյուղից դուրս։ Երեկոյան հանկարծ զրուցասեր դարձավ և վերջապես պատմեց իր պլանը, որն ինձ ֆանտաստիկ է թվում։ Մեկնակետերը, սակայն, ճիշտ են։ Մորդվացիներն ուզում են այդ ամբողջ այսպես կոչված հեղափոխությունը, իրենց համար մեկնաբանել որպես ազգային ազատագրություն։ Որևէ ազատագրություն սպասել, իհարկե, չի կարելի։ Սակայն մորդվացիների համակրանքը ոչ ռուս ազգությունների կողմն է։ Մենք՝ ռուսների դեմ պատերազմողներս, ավելի հեշտ ընդհանուր լեզու կգտնենք մորդվացիների հետ, չնայած նույնիսկ Ֆրեյի ռուսերեն խոսելուն։ Մեր թշնամին նույնն է։ Ֆրեյը շատ բան է հասցրել անել։ Մեզ իրոք որ զուր չեն կերակրում, ու հիմա եմ հասկանում, թե ինչու են մորդվացիներն ինձ ակնածանքով նայում։ Պիշեուրը նախապատրաստված է։ Եթե Մարիին պատմեի, չէր հավատա։ Սա կարծես «Հազար ու մեկ գիշերից» լինի։ Կեցցե Ֆրեյը։

Սիլվեստրի երեկոն

Անցյալ տարի ճամբարում Ֆրեյը գուշակում էր, թե որտեղ և ինչպես կդիմավորենք նոր, 1919 թվականը։ Որտեղ՝ մենք գրեթե գուշակել էինք. ճամբարից հեռացել ենք մի քսանչորս կիլոմետր և առաջվա պես աշխարհից կտրված ենք ձյունե անապատով։ Սակայն ինչպես կարող էինք մտածել, թե մեր երկրին այդպիսի անարգանք է սպասում։ Գերմանիա՛, հայրենի՛ք։ Ի՞նչ ուժեր էին, որ քեզ ընկճեցին։

Առավոտյան բավարացին վերադարձավ Սեմիդոլից։ Ճշմարիտ է, որ Նորին մեծություն կայզերը փախել է հայրենիքից։ Գերմանիան հանրապետություն է։

Իշխանության գլուխ են անցել մի խումբ անհայտ պառլամենտականներ։ Հաշտությունը խայտառակ է։ Բանակը, նավատորմիզը, սպայական անձնակազմը հանձնվել է հակառակորդի ողորմածությանը։ Նորին մեծություն Սաքսոնիայի թագավորը... Ոչ, չեմ կարող։ Ֆրեյը, երկաթյա, աներեր Ֆրեյը հեկեկում էր։

... Մահ, ահա մեր միակ խոսքը։ Մենք՝ ես, Ֆրեյը, բավարացին և չեխը նոր տարուն մեր զենքերով երդվեցինք, որ. չենք ների մեր հայրենիքի խայտառակությունը։ Թող այդպես լինի։

Բավարացին քաղաքից վեց ատրճանակ էր բերել։ Ֆրեյը հանդիսավոր կերպով դրանցից ամենալավը ինձ տվեց։ Բավարացին քաջ, խելացի զինվոր է, երևք անգամ վիրավորվել է, երկաթե խաչի ասպետ է։ Չեխն ինձ այնքան էլ դուր չի գալիս, սակայն Ֆրեյը երաշխավորում է նրա համար։ Բացի զենքից ու թերթերից, բավարացին բերել էր նաև հետևյալ տեղեկությունները. Սեմիդոլում գտնվում է գերմանական

բուշեկ-գնդակների խորհուրդ, որոնք ագիտացիա են անում այն գերիների շրջանում, ում պետք է տեղափոխեն հայրենիք։ Գերիների ճամբարը լեփ-լեցուն է։ Տիֆը մոլեգնում է։ Գերիները շարունակում են գալ, իսկ հայրենիք ուղարկելը գեռևս գրեթե անհնարին է, քանի որ ճանապարհները չեն գործում և փոթորկում է քաղաքացիական պատերազմը։ Այդ ամենը բարենպաստ է մեզ համար։ Չեխերն անցնում են Սիբիր, որպեսզի շրջանցիկ ճանապարհով, ամերիկյան և ճապոնական նավերով իրենց հայրենիք ընկնեն։ Դավաճան էին, դավաճան էլ կմնան։

Ցերեկը մորդվացիները երկու սպանված գայլ բերեցին ու դրեցին ոտքերիս մոտ։ Հիանալի գաղաններ են։ Ես նվերն ընդունեցի, հրամայեցի տանել և մորթիները հանել։ Երբ մորդվացիները գնացին, Ֆրեյը ձեռքս սեղմեց։

— Այսպես լավ է, —ասաց նա։— Դու պետք է հիշես, թե ով ես այդ մարդկանց համար։

Օ՜, այս մարդիկ մինչև հիմա չեն կորցրել ռազմատենչ բարբարոսների բնազդը։ Միգուցե նրանց առասպելներում գեռևս ապրում է ռուս իշխաններին ջախջախող տիրակալի ուրվականը։ Այդ բնազդը կարելի է արթնացնել։ Վերջ ի վերջո ֆոն յուր Մյուլեն-Շենաու մարկգրաֆների մի տոհմը միայն մորդվացիների ողջ իշխանական պատմությունից ավելին արժե։

Ֆրեյն իրավացի է։ Ամբողջը միայն ժամանակի և ժամկետների հարց է։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԻՆՉ ՀԱՐՑՈՒՐ ՏԱՍՆԻՆՉ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆԱԽՈՐԴՈՒՄ Է ԱՌԱՋԻՆ ԳԼԽԻՆ

Շաբաթ օր Սեմիդոլում

Գատցուկի «Մկրտության օրացույցում» «Սեմիդոլ» բառի առաջ ցցված էր բարակիրան մի գավաթ, իսկ դրա վերևը կախված էր փոստային եղջյուրիկ։

Եվ իրոք, Սեմիդոլի կայարանի բուֆետում նույնիսկ սընձեռնու թրմողի կար, իսկ փոստա-հեռագրային գրասենյակը հաստիքով պահում էր ինը պաշտոնյա և յոթ նամակատար։

Ռուսական լայնարձակության մեջ բաղում քանակությամբ այդպիսի Սեմիդոլներ էին փռված։ Դրանք՝ բոլորն էլ նման էին իրար, ինչպես հավերը, և կյանքն էլ նրանցում հավային էր՝ լուսաբացից լուսաբաց, թառից թառ։

Սեմիդոլցիները թափառում էին փոշոտ, փետրաներքնակների նման փափուկ փողոցներով, որոնց մայթերը փտել էին, սնվում էին, կոթկոթացնում, ճաեր հանում և վախով նայում վեր, որտեղից տեղում են ամեն տեսակի աղետները, ու վազում առանց ետ նայելու, հենց որ լսվում էր աքաղաղի թևի մարտական թպրտոցը։ Աքաղաղները, ինչպես կարդն է, տրորում էին սեմիդոլցիներին, պահպանում նրանց բարոյականությունը, կենաց-մահու կռիվ մղում իրենց ծխի համար։

Սեմիդոլում նոր ժամանակը վաղուց անցած ժամանակներից զանազանելու համար պետք էր ամենաքիչը մարդկային մի կյանք ապրել այնտեղ։ Այդ դեպքում միայն դիտող աչքը կարող էր նկատել, որ Վանքի փողոցում նոր լապտերասյուն է դրված, մեկ էլ որ զեմստվոյի դիմացի ցանկապատը փլվել է, կամ թե հրշեջ խմբի վերնակը նոր է ներկվել։

Սակայն եթե Սեմիդոլի խաղաղ գոյության մեջ որևէ իրադարձություն էր ներխուժում, ապա այն սարսափելի արագ էր տարածվում։ Ինչպես թռչնանոցի բարբրությունն է վերածվում իսկական դժոխքի, երբ նրա սահմաններն է ներխուժում կապից փախած շունը։

Մեզ համար դժվար է դիմանալ գայթակղությանն ու հետաքրքիր մի հայացքով չնկարագրել մի ժամանակ թռչնանոցի նմանվող այս քաղաքը։ Ի՞նչը կարող է թխսի կոթկոթոցից ավելի գորովական լինել, ի՞նչը կարող է լինել ավելի հուզիչ, քան դեղնափետրիկ ճաեր ծվծվոցը կամ աքաղաղի ոգեշնչված կանչը։ Սակայն մենք հաստատապես հիշում ենք, որ այդ հովվերգական հավանոցը բաղում ռուս վիպասանների է կործանել։

Ահա թե ինչու մեր պատմությունն սկսում ենք հենց այն օրից, երբ թռչնանոցի գլխով անցան հյուսիսափայլի առաջին ճայթյունները և դեպի վեր, որտեղից տեղում էին բոլոր աղետները, դեպի վեր խոյացավ պոչից պոկված մի փետուր։

Շուտով այդպիսի փետուրներ Սեմիդոլի գլխին պտտվեցին անթափանցելի խուռներամներով, իսկ հինգ օր հետո, ընդամենը հինգ օր հետո, օդը նորից թափանցիկ դարձավ։

Ընկեր Գոլոսովը երիտասարդ մարդ է, և արժե՞ արդյոք ասել, որ նրա տարիքում ամոթ բան չէ աղջկան թևանցուկ արած երևալ փողոցում։

Սակայն ընկեր Գոլոսովը գործկոմի նախագահ է, և Սեմիդոլում նրան անվանում են քաղաքագլուխ։ Հարմա՞ր բան է միթե, որ գլուխը փեշերի ետևից քարշ գա։ Եվ հետո ինչպե՞ս բացատրես գործկոմի նախագահի փողոցում հայտնվելը տերտերի աղջիկ Ռիտոչկայի հետ։ Ճիշտ է, Ռիտոչկան գործկոմի գործավարն է, և այդպիսով ներգրավված է աշխատանքի մեջ։ Ճիշտ է, Ռիտոչկային կոչում են ընկեր Տվերեցկայա։ Սակայն սեմիդոլցիները մանրախնդիր մարդիկ են, բամբասանք էլ շատ ու շատ են սիրում, դեհ, ուրեմն, գնա ու դրանց գլուխը մտցրու, որ Սեմյոն Իվանովիչ Գոլոսովը՝ այդ հռետորն ու մասնավոր սեփականության թշնամին, որոշ իմաստով ոչնչով չի տարբերվում քսաներկու տարին լրացրած ուղածդ սեմիդոլցուց։

Է՜հ, սատանան դրանց հետ։

Քաղաքում պետք է քայլես արագ, ներբաններդ դրոշմելով տրորված մայթերին, ցնցելով ու շարժելով վերին շրթունքդ, ճակատդ կնճռոտած և նայելով ամենաքիչը մի կես վերստ առաջ։ Իսկ երբ քեզ հանդիպող մարդիկ բարևում են, պատասխանել արագ և կարճ.

— Բա-րև, ընկե՛ր։

Եվ սլանաս առաջ, նայելով առջևդ, ամենաքիչը մի կես վերստ։

Իսկ եթե գնում ես սայլակառքով, ուրեմն միայն և միայն ատամներդ պինդ սեղմած, ձեռքերդ գրպաններումդ և աչքերդ հառած կառապանի մեջքին։ Այն ժամանակ բոլորի համար էլ պարզ է, որ ընկեր Գոլոսովը շտապում է պետական կարևորություն ունեցող գործով, այլ ոչ թե առանց անհրաժեշտության զբոսնում է սովետական ձիերով։

Սակայն ի՞նչ մարդ պիտի լինես, որ շաբաթ օրը աշխատանքից հետո ընկեր Գոլոսովին տեսնես գործկոմի սայլակառքում տերտերի աղջիկ Տվերեցկայայի հետ կողք-կողքի նստած, ու մտածես պետական նշանակություն ունեցող գործերի մասին։

Իհարկե, բանն այստեղ պարզապես սեմիդոլցի քաղքենիների հետամնացությունն է, որոնք հեղափոխության երկրորդ տարում էլ դեռևս խորապես համոզված են, թե գարունը հակասում է կոմունիստական մանիֆեստին, իսկ սերը՝ ամենախսկական, ամենաբուրավետ, նավակներով զբոսանքի ելնող, թփուտների մեջ կարճ գրկախառնություններով, այգու դռնակների մոտ աղահամ համբույրներով այդ իսկական սերը արգելվել է ինչ-որ համագումարում։

Ասենք, եթե քաղքենիներն այլ կերպ մտածեին...

Է՜հ, սատանան դրանց հետ։

Ընկեր Գոլոսովը հենց այդպես էլ ասաց, ժպիտը կլոր ձեռնափով ծածկած։

— Է՜հ, սատանան դրանց հետ։ Կգնամ Պոկիսենի հետ...

Անդրեյը խոժոռվեց։

— Դու կարծես դիտմամբ աշխատում ես այնպես անել, որ ես մենակ մնամ...

— Ընկեր Տվերեցկայայի՞ հետ,— նրա խոսքը շարունակեց Գոլոսովը։— Դատարկ բան է։ Ինքդ էլ տեսնում ես, որ այլ կերպ չի ստացվում։ Եվ հետո... — Գոլոսովը քաշքշեց վերին շրթունքը.— մի քիչ ավելի մարդկային պետք է լինել, Ստարցով։ Մի՞թե չես նկատում։

— Քո գործը չէ։

— Իմ շահերը պահանջում են պահպանել գործկոմի գործավարի աշխատունակությունը։ Ընկեր Տվերեցկայան սկսել է թղթերը խառնել։ Ես նրան կանչեցի, հարցուփորձ արեցի, նրա աչքերը այս ու այն կողմ դարձան, բայց աչքերի մեջ՝ Անդրեյ Ստարցովն էր։

— Հասկանում եմ,— ասաց Անդրեյը ժպտալով,— քո տարիքում մարդիկ իրենց անհարմար են զգում սիրահարվելիս։

— Դատարկ բան է։

— Բնավ։ Զուր մեղքդ ուրիշի վրա ես գցում։ Շաբաթ օրերը քեզ կարծես փոխեն։ Դա տեսակցության նախազգացումից է։ Չէ՞ որ այսօր էլ գնում ես Ստարիյե Ռուչյի, որպեսզի...

— Վերջ տուր։ Ինձ ո՞ւմ տեղն ես դրել։ Գնում եմ շենք որոնեմ մանկատան համար։

— Ի՞նչ ես ասում։ Մանկատան համա՞ր։ Այս ձմեռ ժամանա՞կ։

— Այո՛, այո՛, ձմեռային մանկատան համար,— բղավեց Գոլոսովը,— և հետո պետք է փորձեմ նոր մասուզերս։

— Ու դրա համար տասը վերստ ճամփա ես կտրո՞ւմ։

Ընկեր Գոլոսովի դեմքը դաժանացավ, նա պատրաստվեց ինչ-որ չոր մի բան ասել, սակայն հանկարծ ձեռքը ձգվեց դեպի բերանը և մի կայտառ ծիծաղ, չհասցնելով թաքնվել ափի մեջ, սահեց դեպի Անդրեյը։

— Դրա համար մարդ հարյուր վերստ էլ կգնա...

Նա կտրուկ դարձավ ու քայլեց բակով, ձգելով վերնաշապիկն ու բղավելով դեպի երկհարկանի տան բաց պատուհանը.

— Դայա՛կ։ Ճաշելու։

Եվ ինչպես միշտ, Անդրեյը մի պահ սառեց այդ հատու՝ դայակ բղավոցից։

Դռան մեջ Գոլոսովը շրջվեց.

— Ուրեմն, կգա՞ս։

— Կգամ։

— Դեհ, լավ է։

Սա էր Անդրեյի և Գոլոսովի ամբողջ խոսակցությունը Սեմիդոլի «Իզվեստիայի» խմբագրության բակում։

Երեկոն խաղաղ էր, և երկինքը, վարդագունած, գլորվում էր վանքի ետևը։ Ձվի կճեպի նման սայլը ճռճռալով անցնում էր երկաթուղու գծանցով։ Ընկեր Պոկիսենը նստել էր ծղոտին, փայտե թափքիկի մեջտեղը, ոտքերը մեկնած, և կախված վիճակում բռնել էր մանկական կինեմատոգրաֆը։ Գոլոսովը մի ոտքը գցել էր առաջամասի վրայով, մյուսը ծալել էր տակը ինչպես իսկական, օ՜, այո, իսկական, փորձված կառապան։

Մինչ այդ, նրանք ճռճռան կճեպի մեջ նստած անցնում էին խորդուբորդ փողոցներով, տրորելով չոր ցեխագնդերը և ետևներից քարշ տալով ալարկոտ դեղնաթափանցիկ փոշին։

Պոկիսենը ոսկե ակնոցի միջով խստիվ նայում էր տաշած տախտակե տնակներին և հաստ բարավորների կիսափտած, տարօրինակ գմբեթիկներին։ Ամեն մի ցնցման ժամանակ նա զգուշորեն, վախենալով գլխավերևն էր բարձրացնում կինեմատոգրաֆը, ասես մասնատուփ էր տանում։ Գոլոսովը պարալից ճպպացնում էր լեզուն ու օդում պտտում պարանե սանձերի ծայրերը։

Եվ թվում էր կողմնակի մարդկանց, նրանց, ովքեր դեմքով չէին ճանաչում նախագահներին (իսկ Սեմիդոլում այդպիսիներ էլ կային), ահա հողաչափերը գնում են Սանշինոյի մարզը՝ հողը բաժանելու։ Իսկ նրանք, ովքեր ճանաչում էին, նրանք էլ մտածում էին, որ գործկոմականներն անպայման նոր ագիտացիա են մոգոնել հանուն Բավարիայի, կամ էլ թե չէ՝ ո՞վ գիտի, վճռել են շուկան հողին հավասարեցնել որևէ մանկական հրապարակ կառուցելու համար։

Այսպես հանգիստ ու վայելուչ սահում էին երկու նախագահները ներկած ու բաց լուսամուտափեղկերի առջևով, ջրառման ծորակների, պինդ փակված պարենային կրպակների առջևով, անկայուն տախտակե կամուրջներով և փետրաներքնակի պես փափուկ փողոցներով։

Հանգիստ ու վայելուչ՝ մինչև երկաթուղու գծանցը։

Իսկ դրանից հետո ընկեր Գոլոսովը ոտքը քաշեց սայլի մեջ ու նայեց շուրջը։

Թեք հողաթմբի ետևից երևում էին ճանապարհային արհեստանոցների կրկեսանման կլոր տանիքները։ Դրանց ետևում ամուր կանաչ կարկատանի պես երկնքին էր կպել տաճարի գմբեթը։ Հենց գծանցի մոտ բարձր ցցված էր մրոտված պահատնակը, իսկ նրանից դեպի աջ, թմբի ավազե լանջի երկայնքով ճամբարային վրանների նման ձգվել էին վանդակավոր գորշ վահանների դարսակները։

Ճանապարհի այս ու այն կողմերում մեկընդմեջ ընկած էին լրիվ խուզված դաշտերի ուղղանկյունները։ Դեռևս չքաղված երկայն արևածաղիկներն այս ու այնտեղ ցցվել էին մերկ շերտերի մեջ, ինչպես տեղ-տեղ սևին տվող պեպեններ։

Առջևում երևում էր սանշինյան անտառի սև շերտը։

— Գնացի՞նք, Պոկիսեն։

Գոլոսովը ոտքի կագնեց, գլխարկը ցած նետեց, ծղոտը ետ հրեց, մի ոտքը դրեց թափքին, մյուսը հենեց առաջամա-

սին։ Պոկիսենը իր տակ մի խուրձ ծղոտ տրորեց, ակնոցը հանեց Գոլոսովին և ասաց, ասես նրան փորձելով.

— Գնացի՞նք, Սյոմա։

Այն ժամանակ Գոլոսովը ձգեց սանձերը։

Երկաթուղու գծանցից մինչև Սանշինոյի պտղատու այգիների խորքը կտրուկ ոլորաններով ձգվում է Ռուչյիի ձայլուղին։ Ոլորանում՝ փոքրիկ պտույտ, այդ պտույտի մեջ էլ՝ ուղակ է, և օղակը ձգվում է անհավասար, ծռվում է բարալիկ օձի նման, պետք է շրջանցել ամեն մի փոսը, ամեն ելուստը, զգուշանալ քարերից։

Սակայն Սեմյոն Գոլոսովի համար չէր ասված շրջանցել, պտույտ գործել, զգուշանալ, Սեմյոն Գոլոսովն իրեն վարժեցրել էր քայլել ուղիղ և քայլելու կամ անցման վրա շատ ժամանակ չվատնել, քանի որ ամեն մի ճանապարհ, նույնիսկ ամենակատարյալը, նույնիսկ օդային ճանապարհը՝ ամեն ճանապարհ ժամանակի ավելորդ կորուստ էր։

Եվ մի՞թե մարդու շունչը չի հրդեհի, չի հարբեցնի, չի այրի հանդիպակաց քամին, որ սուլում է ականջների մեջ, գրզգրզում ու պոկում է մազերը, մտրակի նման հարվածում կրծքին։

Ձիուկը պինդ մտել էր խամութի թաց թաղիքի մեջ, նրա փրփրակոլոլ մեջքին ուրախ թոչկոտում էր պղնձաղրամներով զարդարված շրջափոկը, մեկ էլ տեսար սմբակը դեմ էր առնում, և Սյոման խփում էր փոքրիկ ձիու ազդրերին իրար ետևից, ավելի ու ավելի հաճախ, ավելի ամուր։ Սյոմայի ոտքերն ասես խրված լինեն սայլի մեջ, և ցնցումների ժամանակ նրա ծնկները մեղմորեն զսպանակում էին։ Սյոմայի բլուղը գոտու տակից դուրս էր եկել, կարմիր գնդակների պես ուռչում էր մեջքին, իսկ մազերն էլ քամին տափակացրել, իջեցրել էր դեպի ծոծրակը, կարծես մանր սանրով հարթ սանրած լիներ։

Խանդակներով, անվահետքերով, փոսերով և հողակոշտերով, մերթ մինչև թափքը հասնող արևածաղիկների միջով, մերթ փոշու շեկ ամպի միջով, փոսերի, թմբերի վրայով՝ ուղիղ, շարունակ ուղիղ, քամուն հանդիման, սուլոցով, դղրդոցով, հայ-հույով։

— Սյոմա։ Սյո՜մ-կա, Սյո՜մ-կա, ո՜։ Պահիր, սատանա, պահի՛ր։

Սակայն սանձերը զարնվում էին նիհարիկ ձիու կողերին, գավակին, և ահա նա մոռթը վեր տնկեց, մեջքն աղեղ սարքեց ու թափով ալացավ։

— Սյոմա՜, Սյոմկա՜։ Սա-տանա՜։

Ջուր չէր այդ ձին քշել հրդեհի ազդարարը։ Ջուր չէր մարդ վախենում նրան նայելուց, երբ գիշերով, սարսափից փոխված ձայնով, նավթի լապտերը բռնած նա աղաղակելով սլանում էր քաղաքով։

— Սյոմա՜, ս-սա-տանա՜։

Հնարավոր չէ կանգնեցնել։

Այն ժամանակ ընկեր Պոկիսենը հասակով մեկ փովեց սայլի երկայնքով, գլխից վեր բռնեց կինեմատոգրաֆը և հանկարծ՝ բարձր, երկաթաթերթի զնգոցի նման սուր ձայնով մի երգ երգեց։ Երգի բառերը պարզ էին, բայց Պոկիսենից բացի ոչ ոք դրանք չգիտեր։ Եվ նույնքան պարզ էր երգի եղանակը, սակայն եղանակն էլ, Պոկիսենից բացի, ոչ ոք չգիտեր։

Հե՜յ-լե-լելե,
Հե՜յ-լե-լելե,
Հե՜յ-լե,
Հե՜յ-լե,
Հե՜յ-լե-լե։

Գոլոսովը սանձերը թողեց, պպզեց։ Կլոր, փրշոտ դեմքը դարձնելով Պոկիսենին, նա նայում էր երկնքին։ Այդպես նրանք մոտ մի վերստ սլացան։ Քառարշավից փրփրակալած ձիուկը զսպանակի նման սեղմվում ու թուլանում էր։ Սայլը դեսուդեն էր ընկնում ու դղրդում երկաթի կտորտանքով լցված պարկի նման։

Երկաթե հեծկլտոցով լցրեց Պոկիսենը շրջապատը։ Եվ հնարավոր չէր հասկանալ՝ արդյոք Գոլոսովը լսո՞ւմ էր երգը, թե՞ պպզած, երերալով մտածում էր որևէ գործի մասին։

Հե՜յ-լե-լելե,
Հե՜յ-լե-լելե,
Հե՜յ-լե,
Հե՜յ-լե,
Հե՜յ-լե-լե-լե։

Ու երբ կանգ առան Ռուչյիի այգիների մուտքի մոտ և սկսեցին կարգի բերել թուլացած թաց լծասարքը, Գոլոսովը հարցրեց.

— Դու ֆիններե՞ն էիր երգում։

Պոկիսենը ժպտաց երեխայի նման։

Այդ ժամանակ Գոլոսովն էլ ժպտաց։

— Իսկ դուք, ինչ է, օպերանե՞ր ունեք։

Պոկիսենը մտածեց, հետո պարզապես ասաց.

— Հիմա՛ր։

Ռուչյիի այգիները ձգվում էին հարյուրավոր դեսյատինները։ Դրանք կիպ սեղմվել էին միմյանց ամուր, կավածեփ ցանկապատերով և այդ ցանկապատերի միջով իրար ձեռք էին սեղմում թավառատ բալենիներն ու սալորենիները։ Յուրաքանչյուր խրճիթի մոտ այգի կար և դեպի այգին էր տանում մի կածան, որով սայլը կարող էր անցնել սռնիները չխկչխկոցով քսելով ցանկապատերից դուրս ցցված շիվերին։ Երբ այդ ճանապարհին սայլեր էին հանդիպում, գյուղացիները մտածում էին, թե ո՞վ է ավելի մոտ այգու դարբասին, ձին ետ-ետ էին քաշում, սայլը դարբասից ներս տանում ու այդպես իրար ճանապարհ տալիս։ Միայն մեկ լայն ճանապարհ էր կտրում այգիները, և այն էլ դաշտերի կողմից անցնում էր Ստարիյե Ռուչյիի միջով դեպի Սանշինո։

Մարդիկ այստեղ ապրում էին վաղուց, հայրերի հայրերն ու պապերի հայրերն այստեղ տնկում էին և՛ սև ծառ, և՛ ցարսկի շիպ, և՛ բարդամոտ, իսկ դառը տորոնը իր խճճված թփերով ցից-ցից տնկվել էր անհիշելի ժամանակներից։

Խնձորենիների, բալենիների և ուրիշ զանազան մեծ ու մանր պտուղների հարյուր դեսյատինանոց խիտ այգիները ջրով հագեցնել կարելի էր միայն համերաշխության դեպքում։ Եվ այգիներն ապրում էին եղբայրավարի։ Ցանկապատերի մեջ եղած նեղ կածանները սկսած դարնանային օրերից մինչև գետնի սառչելը ճահճուտի էին նմանվում, և լորտուներն ու գորտերը ոչ մի տեղ այնպես լավ չէին ապրում, ինչպես այս ճանապարհներին։ Օդի միջով այգուց այգի էին ձգվում ջրհորդաններ, գետնի վրայով սողում էին փոքրիկ առվակներ, և երեկոները, երբ լռում էր աշխատանքի աղմուկը, արագ ընկնող կաթիլները ուրախ երգեր էին ղնգղնգացնում՝ ջրհորդաններից կաթկթելով ծառերի վրա։ Եվ հարյուրավոր դեսյատիններ՝ զանդրահեր, խիտ, գույնզգույն, հարյուրավոր դեսյատիններ՝ զարդարված մարդու ձեռքով, այն ժամանակ ականջ էին դնում ջրին։

Գոլոսովն ու Պոկիսենը Ռուչյի մտան լայն ճանապարհով։ Սակայն առջևից անցնում էր ոչխարների հոտը, և փոշու անթափանցելի ամպ էր բարձրացել, հարկավոր էր շրջանցել, մտնել այգիների արանքը, որպեսզի չխեղդվեին։

Այստեղ արդեն անիվները մինչև գոտեկապը խրվում էին անվահետքերի մեջ։ Պայտերը չլմփում էին ջարդված ցեխի մեջ։ Լծաղեղն իրարից հեռացնում էր հեշտ անջատվող միախառնված բալենիները, կռատուկներն իրենց լայն ափերով խփում էին սռնիներին։ Տասը սաժեն երկարությամբ մի ջրհորդան էր ձգվում ճանապարհի երկայնությամբ, և մինչ այդքան տեղն անցան, ձիու մեջքին ու սայլի մեջ խոշորակաթիլ սառն անձրև էր թափվում։ Ձին մռութը վեր տնկեց, աղմուկով կողերն ուռցրեց, փնչացրեց ու դանդաղ գնաց։ Գոլոսովը սրբեց դեմքից ջրի կաթիլները, նայեց Պոկիսենին և, կարծես անհարմար զգալով, ասաց.

— Լավ...

— Գործկոմի նախագահին հովեկի իրավունքո՞վ,— հարցրեց Պոկիսենը։

Հետո լռեցին, ականջ էին դնում ջրաշիթերի և կաթիլների քլքլոցին, կաթկթոցին, ղողանջին։

Ամառանոցում Պոկիսենի ավագ որդին՝ նեղուս, նիհար մի տղա, պտտվում էր կինեմատոգրաֆի շուրջը, շոշափում էր պտուտակները, անվակները, պտտում բռնակը։

Խոհանոցում, ռուսական վառարանի առջև, Պոկիսենի կինը ցախ էր կոտրում ու մի երգ մմռացնում այնքան լեզվով, որը Ստարիյե Ռուչյիում ոչ ոք չէր հասկանում և երբեք չէր լսել։

Եվ նույն անհասկանալի լեզվով ընկեր Պոկիսենը կիսաձայն երգում էր իր երեք ամսական տղայի համար այն մասին, ինչ Ստարիյե Ռուչյիում ոչ ոք չգիտեր։

Այն մասին, որ շուտով, շատ շուտով, երբ սոցիալիստական հեղափոխությունը հաղթի և կուսակցությունն ասի.

— Ընկեր Պոկիսեն, դուք ծառայեցրք հեղափոխությանը, ազատ տնօրինեցեք ձեր կյանքը։

Ահա այն ժամանակ նա իր փոքրիկ Օտտիին կտանի Խեպո-Յարվի լիճը։

— Օ՜, Խեպո-Յարվի։ Օտտի, փոքրիկ Օտտի, դու դեռ չես շնչել նրա դառնահամ հոտը, դեռ աչքերդ չես կկոցել նրա սուր քամուց։ Օտտի, փոքրիկ Օտտի, դու դեռ չես տեսել, թե ինչպես է Խեպո-Յարվիի քամին դեպի հյուսիս թեքել հսկայական սոճիները, և քո փոքրիկ ականջներին դեռ չի հասել ավազաբլուրներից քշված ավազի սուլոցը։

— Օ՜, Խեպո-Յարվի։ Զին ոչ մի տեղ այնպես արագ չի վազում, ինչպես Խեպո-Յարվիի սառույցի վրա, և ոչ մի տեղ դահուկներն այնպես չեն սահում, ինչպես նրա առափնյա սարերի լանջով։

— Եվ Խեպո-Յարվին ինչպե՜ս գիտե լռել։ Եվ ինչպե՜ս է բղավում, ոռնում ու սուլում Խեպո-Յարվին, երբ փոթորիկ է գալիս ժայռակղզիներից։

— Իսկ ինչպիսի՜ ճոճանակներ, Օտտի, ինչպիսի՜ ճոճանակներ են քաջ մարդիկ դրել Խեպո-Յարվիի ափին. այնքան բարձր ճոճանակ, որ մարդու սիրտ քիչ է մնում դուրս թռչի կրծքից, երբ ճոճանակը վեր է խոյանում ջրի վրա։ Հապա երգե՜ը, ի՜նչ երգեր են երգում մարդիկ այդ ճոճանակների վրա, գիշերները, երբ լուսինը նայում է Խեպո-Յարվիի հատակը։ Օտտի, փոքրիկ Օտտի, լսիր.

Հե՜յ-լե-լելե,
Հե՜յ-լե-լելե,
Հե՜յ-լե,
Հե՜յ-լե,
Հե՜յ-լե-լե։

Բարձր, սուր ճիչերը վազեցին խնձորենիների վրայով, խրվեցին այգու խորքում, անհետացան։ Պոկիսենը սեղմեց կրծքին ժանյակներով փաթաթված Օտտիին ու լռեց։

Կնոջը, որ եկավ երեխային կերակրելու, շշնջաց.

— Ես նրան պատմեցի Խեպո-Յարվիի մասին։

Եվ կինը հազիվ լսելի շնորհակալություն հայտնեց։

— Օ՜, դու։

Օդում սառնության շունչ զգացվեց, ինչպես լինում է հոկտեմբերին, խաղաղ, արևից տաքացած օրվանից հետո։ Այդ սառնությունից և այն բանից, որ մարդ ուզում էր արդեն նստել ձմեռավարի՝ բուրավետ նեղվածքի մեջ, կրակի շուրջը, ամառանոցի պատուհանները կիպ ծածկեցին։

Ռազմական օդաչու Շչեպովը՝ նիհար, կիպ ֆուֆայկայով, նեղ, մինչև ծնկները քուղակապված սապոգներով, քայլում էր սեղանի կողքին։ Սեմիդոլի թատրոնի հերոսուհին անկյունից հետևում էր նրան իր մեծ, մատիտով կեղտոտված աչքերով։ Նրան բոլորը կոչում էին անուն-հայրանունով՝ Կլավդիա Վասիլևնա, և Շչեպովը ծիծաղում էր նրա վրա. որպիսի՜ հանրաճանաչություն։

Ռիտան տեղավորվել էր բազմոցին ու չէր շարժվում։

— Դուք բորբոքված երևակայություն ունեք,— ասում էր Շչեպովն, իր խոսքերն ընդհատելով կարճլիկ քայլերով։— Եվ ձեր ջղային գրգռվածությունը վախից է, վախից, թե սխալվում եք։ Գրողը տանի, ախր Սեմիդոլում ի՞նչ հեղափոխություն է։ Զորս ձիթագործարան և մի ջրաղա՜ց։ Պրոլետարիա՞տ։

— Դու ոչինչ չես հասկանում,— բղավում էր Գոլոսովը աթոռին վեր-վեր թռչելով։— Մեր խնդիրն է...

— Թող վերջացնեմ։ Ահա դուք, ամենապատասխանատու բոլշևիկներդ, շաբաթ օրը հեռացել եք քաղաքից։ Գիտե՞ք այնտեղ ինչ է մնացել։ Եթե չհաշվենք ռազմական կոմիսարին, մնացել է Նոյի տարվա Սեմիդոլը՝ իր անաղարտ կուսությամբ։ Ամբողջ քաղաքը սողացել է երեկոյան ժամասացության սուրբ աստվածածնա տոնին։ Գործկոմում հերթապահ պահակ կնիկը ձեռնոց է գործում, հատուկ բաժնի առջև քնել է կարմիրբանակայինը, իսկ ժողովրդական կրթության բաժնի վարիչը ամանի մեջ կաղամբ է կոտորում կարկանդակի համար։ Դեռ լավ է, որ դուք «Իզվեստիան» տպում եք այնպիսի թղթի վրա, որը, ճիշտ է, վատն է, բայց ծխել լինում է։ Ահա և ձեզ հեղափոխություն։

— Մեր գործը շարունակ նոր կադրեր է ներգրավում...

— Գրողի ծոցը գնա այդ խոսքերիդ հետ։ Ես քեզ ասում եմ, թե այստեղ ինչ կադրեր են։

— Սպասեցեք,— միջամտեց Պոկիսենը,— եթե ես ձեզ

ճիշտ եմ հասկանում, դուք ասում եք, թե Սեմիդոլը հակահեղափոխակա՞ն է։ Դեհ, իսկ հակահեղափոխության դեմ պայքարը նույնը չէ՞, ինչ...

— Վահ, գրողը տանի, այստեղ ի՞նչ հակահեղափոխություն կա։ Ճահիճ է, գորտերով լեցուն ճահիճ, ուրիշ ոչինչ։ Կոկռում էին առաջ, կոկռում են նաև հիմա։

Շչեպովը կանգ առավ, ձեռքերը խաչեց։ Նրա հայացքը կայծկլտում էր ոգևորությունից, ձայնը սրված էր, լարված։

— Մարդ ձեզ կողմնակի աչքով որ նայի, իսկական ութսունականներ եք։ Սյոման ավելի նմանվելու համար նույնիսկ մազերն է երկարացրել։ Հավաքվել ենք երեկոյան մեր բարեկամի մոտ, խմում ենք կանոնադրությամբ թույլատրվող խմիչքները, տանտիրուհին պարծենում է իր սունկերով ու թթուներով...

— Օ՜, օ, օ՜,— բացականչեց Պոկիսենի կինը և զայրույթից նրա դեմքը սովորականից ավելի քարացավ։

— Իսկ ութսունականները քրտնում են սկզբունքային բանավեճից։

Գոլոսովը վեր թռավ խայթվածի նման։ Ձեռքերը թռչկոտեցին գոտու շուրջ։ Նա վերնաշապկի փեշերը ետ էր տանում, ծալքերով հավաքում մեջքի ետևը, ձգելով փորն ու կողքերը, և ետևում ստացվեց պոչիկանման մի բան, որ վեր-վեր էր թռչում շնչին իսկ շարժումից, ինչպես խաղատուտի պոչիկը։

— Դատարկ բան է,— բղավեց նա ոտքը գետնին զարկելով։— Ահա այնպիսիները, ինչպես դու ես կամ էլ Ստարցովը, հենց դուք եք շատախոսություն անում, որովհետև դուք անկյալ, փալաս մարդիկ եք։ Մեզ համար ամեն ինչ պարզ է, մենք գիտենք ինչ ենք կամենում, և ուզածդ ճահճում էլ գիտենք, թե ինչ պետք է անենք։ Տվեք մեզ թեկուզ ամենաշքշմած գորտերին, միևնույն է, մենք նրանց կդարձնենք այն, ինչ պետք է լինեն։ Իսկ եթե նրանց ոչինչ հնարավոր չէ դարձնել, ուրեմն կոչնչացնենք, այո, կոչնչացնենք։ Ճահիճը մեզ պետք չէ։ Այդ դուք՝ Շչեպովներդ, Ստարցովներդ եք շարունակ այս ու այն կողմ ընկնում ձեր այդ սուտ սկզբունքայնությամբ, շարունակ ուզում եք իդեալականը մոտեցնել իրականությանը։ Մենք գիտենք, որ դրանք չի կա-

ռելի իրար մոտեցնել, կարելի է միայն մեկը ենթարկել մյուսին։ Եվ մենք մեր մեջ ենթարկելու ուժ գտնում ենք։ Մենք ետ չենք նայում, չենք վախենում, թե դուք ինչ կասեք մեր մասին, և մեզ համար բոլորովին միևնույն է, թե ինչպես ենք ներկայանում Շչեպովների երևակայությանը։ Ութսունական՞ներ։ Թքա՜ծ։ Մենք չենք վախենում թթուներ ուտել և ամառանոց մեկնել։ Իսկ դուք մի քիչ մուրաբա լիզեցիք թե չէ, իսկույն սկսում եք մտածել, իսկ հեղափոխականն իրավունք ունի՞ մուրաբա լիզել այն ժամանակ, երբ... ու սկսվում է։ Ահա թե որն է ձեր գերազանցության զգացումը։ Ծիծաղո՞ւմ ես։ Ես արդեն քթիցդ տեսնում եմ, թե ինչ ես մտածում. իբր մեզ համար ակնհայտ են այն հակասությունները, որոնց մեջ խրվել են բոլշևիկները, և մեր մոութը մաքուր է։ Թքել ենք մենք ձեր մոութին։ Ինչ ուզում եք մտածեք։ Յոլա կգնանք և առանց մտավորականության ու նրա անարատ մտածողության արտոնագրի։ Դա էլ հո սպեցները չեն, որոնք գիտելիքներ ունեն, և որոնք...

Գոլոսովը կանգ առավ, նայեց բոլորին խոժոռ հայացքով, բղավեց.

— Դատարկ բա՜ն է,— ու նստեց։

— Ամբողջ մի դեկլարացիա,— ասաց Շչեպովը։

Պոկիսենն ակնոցն ուղղեց։

— Շչեպով, դուք ձեր հումորը դեռ չե՞ք կորցրել։ Արդյոք պատճառն այն չէ՞, որ Գոլոսովը ձեզ համար սողանցք թողեց։ Ձեր դեմքին մտավորականի գերազանցությունը փոխվեց սպեցի գերազանցության։

— Էհ, իսկ դո՜ւք, դո՜ւք,— հանկարծ բղավեց Անդրեյը, որ այս ամբողջ ժամանակ լուռ էր,— մի՞թե դուք այդ նույն մտավորականները չեք։

— Այն նույն թերուս ուսանողները չե՞ք,— լրացրեց Շչեպովը։

— Սկսեցին։ Նույնն են, նույնը միս ու արյունով։ Վե՜րջ տուր,— բղավեց Գոլոսովը։

Նա կրկին վեր թռավ, աչքերը կկոցեց Շչեպովի վրա և կամացուկ հարցրեց.

— Իսկ ճի՞շտ են ասում, թե իբր օդաչուն կարող է ինք-

նաթիոն այնպես ցած գցել, որ ապարատը ջարդուփշուր լինի, իսկ ինքը ողջ-առողջ մնա։

— Դա ինչո՞ւ ես ասում։

— Ոչ, դու ուղղակի հարցին պատասխանիր։

Շչեպովը ձեռքերը տարածեց։

— Տեսականորեն...

— Ո՛չ, ո՛չ, ոչ տեսականորեն,— պնդում էր Գոլոսովը։

— Որոշ սիստեմների հետ նման դեպքեր պատահել են։ Թևի վրա ընկնելու դեպքում, օդաչուն դուրս է նետվում, երբեմն մինչև մի քսան քայլ հեռու, մեքենան շրջվում է պրոպելլերի վրա, ջարդում է այն, երբեմն կոտրվում է և մյուս թևը։ Ընդհանրապես... Սակայն դա ծիծաղելի բան է։ Ապարատը դիտմամբ ցած գցե՞լ։

Շչեպովը ձգվեց՝ բարձրահասակ, նիհար, ոսկրոտ մատները դեմ տալով բարակ տաշած տախտակից առաստաղին։

— Վտանգավո՞ր է,— հարցրեց Գոլոսովը, ափի մեջ թաքցնելով աննկատելի ծիծաղը։

— Ես քեզ հասկանում եմ,— խուլ ձայնով ասաց Շչեպովը։— Վտանգը սակայն ոչ այնքան դիտավորյալ ընկնելն է, որքան բացատրությունը, որ հետո կպահանջվեր տալ։ Վթարը պետք է պարզ ու որոշակի լինի։

Նա ունկնդրեց իր վերջին բառերը,— ինչպես դրանք հատեցին օդը իր գլխի բարձրությամբ,— ու կրկնեց.

— Վթարը պետք է պարզ ու որոշակի լինի։

— Սակայն չէ՞ որ այստեղ հարյուրավոր վերստի վրա, քեզնից բացի, ոչ ոք բան չի հասկանում աերոպլանից, և ինչ վթար էլ լինի, դու ուզածիդ պես կարող ես բացատրել,— ասաց Գոլոսովը ափի մեջ։

Շչեպովը ծանր հայացքը սևեռեց նրան ու լռեց։ Բոլորը հանկարծ սսկվեցին, շունչները պահած նայում էին չգիտես ուր՝ օդաչուի ու Գոլոսովի արանքում։

— Օ՜հ, տխուր է,— վախեցած հառաչեց Կլավդիա Վասիլևնան։

Այն ժամանակ Շչեպովի դեմքն իսկույն հարթվեց ու զվարթացավ։

— Հետաքրքիր մարդ ես, Սյոմա...

Գոլոսովը վեր կացավ, վերնաշապիկի ծալավոր պոչիկը փութկոտ վեր ցցվեց ու դողաց, նա թափահարեց մազերը։

— Ձեզ հետ իրոք որ տխուր է։ Գնամ մաուզերս փորձեմ։ Ո՞վ կգա հետս։ Ռիտա, գնա՛նք։

Ընկեր Տվերեցկայան հայացքը մեղմորեն դարձրեց Անդրեյին։ Նա նստել էր կծկված, հոնքերի միջև մերթ կնճիռներ կուտակելով, մերթ հարթելով, կարծես ուզում էր շարունակ մտքից փախչող ու անորոշ մի բան հիշել։

Գոլոսովը նետվեց դեպի դուռը, զզվանքով ու ցավով մի կերպ իրենից դուրս մղելով.

— Ահ, դեհ ձեր Ստարցովին էլ քարշ տվեք։

Ռիտան հարցրեց.

— Ստարցով, ուզո՞ւմ եք։

Նա լուռ վեր կացավ։

Հավանաբար նրա համար բոլորովին միևնույն էր՝ որևէ տեղ գնար, թե մնար տեղում։

Նրա հետ այդ հաճախ է պատահում։ Հանկարծ կարծես խլանում է և այդ պահերին լսում է միայն այն, ինչ կատարվում է իր ներսում։ Այն ջանքերը, որ ստիպված է թափել նման բոպեներին վախից չճչալու համար, նրան փոխում են գրեթե անճանաչելիության աստիճանի։ Նրա դեմքը ծռմռվում է, ինչպես մագաղաթը ջրից, նա կրկնում է ինչ-որ վաղուց սովորած շարժումներ, չնկատելով դրանք, ինչպես կոնտուզիայի ենթարկվածը։ Նա ենթարկվում է այն ամենին, ինչի նրան դրդում են դրսից, ոչ ընդվզելով, ոչ համաձայնելով, թեև գիտակցությունն առաջվա պես սթափ է։ Նա չի կարողանում կտրվել միակ, անհաղորդելի, այն չգիտես ինչ վիթխարի մտքից, որ մի անգամ շշմեցրել է ուղեղը։

Նա քայլում է փոքրիկ, իրեն սեղմվող Ռիտայի կողքից։ Ռիտան նրան թևանցուկ է արել, և նա արմունկով զգում է աղջկա կրծքի փափուկ ջերմությունը և այդ կրծքի ետևում անհանգիստ բաբախող սրտի զարկերը։

Գոլոսովը քայլում է առջևից, ձեռքերով հեռացնելով ճամփան փակող ճյուղերը։ Ականակույր գիշեր է, տորոնի և բալենու թփուտները խիտ են ու փշոտ, սակայն Գոլոսովը

Համառորեն անցնում է այդ խիտ թփուտների միջով՝ առաջ և առաջ, դեպի սառը մթությունը։

— Գոլոսով, զգո՞ւշ,— ասում է Ռիտան։— Ճյուղերն այդպես մի շպրտեք, երևաս ամբողջովին ճիպոտահարեցիք։

— Իսկ ձեռքերդ ինչի՞ համար են։ Ստարցովից պոկվեցեք և ետ մի մնացեք, արագ քայլեք։

— Մենք երկուսով ենք, մեզ համար քայլելն ավելի դժվար է։

— Դեհ, ուրեմն, գրողը ձեզ տանի,— բղավում է Գոլոսովն ու ճկուն, կռացած մի կողմ է նետվում, պոկում և տրորում է անանցանելի մացառուտը, հետո թռնում է թփերի մարգերի վրայից, ոչինչ չտեսնելով, զայրացած ու տաքտաք, զառանցանքի նման մի բան մոթմոթալով։

Ռիտան Անդրեյին դուրս է բերում տորոնի խիտ մացառուտից դեպի խնձորենիների նոսր շարքերը, և նրանք ոտքերի տակ զգում են ծառաբների մոտի փխրունացրած հողը։ Անդրեյը դանդաղկոտ և առաջվա պես հնազանդ է Ռիտայի փաղաքուշ շարժումներին։ Աղջիկը նրան է սեղմվում գրեթե ամբողջ մարմնով, նա զգում է, ինչպես է դողում Ռիտայի ազդրը, ինչպես է ծալվում ամուր ծունկը։

— Դուք մրսո՞ւմ եք։

— Այո։

Աղջիկը ուսը սեղմում է նրա թիակին, հաճախակի ցընցվում է և քայլերը դանդաղեցնում։

Անդրեյն ուշադիր լսում է Ռիտայի ցաքուցրիվ խոսքերն ու երկար ժամանակ չի հասկանում։ Այդ խոսքերը թռչում են կարծես հեռվից, ինչպես այգիները ջրելու ջրհորդանների կաթիլներն ու ճողփյունը, և ճիշտ ինչպես կաթիլները, պարուրում նրան փաղաքուշ, մեղմ։

— Դուք այդ զգացե՞լ եք,— հանկարծ լսում է նա։

— Ե՞ս։

— Այո, դուք զգացե՞լ եք։

— Ի՞նչ։

— Երբ երկուսն էլ նույն բանն են զգում, բոլորովին միանման, այնպես, երբ չկա ոչ մի մտորում, ոչինչ, այլ միայն մի բան... Դուք այդ զգացե՞լ եք։

— Այո։

— Այո։

— Դա կյանքում մե՞կ անգամ է պատահում։

— Ի՞նչ։

— Դուք ինչի՞ մասին եք շարունակ մտածում,— լսում է նա կրկին։— Ինչո՞ւ է բախտն ինձ մղում այնտեղ, ուր ես ոչինչ չեմ փնտրում։ Գոլոսովն ինձ հանգիստ չի տալիս։ Դա մի՞շտ այդպես է լինում, այո՞։ Ոչինչ չեմ հասկանում։ Գիտեմ միայն, որ կյանքը մի փոքրիկ պատառ է։ Շատ փոքրիկ։ Եվ ափսոս է, եթե հենց այնպես անցնի...

Ռիտան գայթում է, ընկնում, Անդրեյին իր հետ ցած է քաշում։ Նա ուզում է աղջկան բարձրացնել, Ռիտան դիմադրում է։ Անդրեյը նստում է նրա կողքը։

Այստեղ կրկին սկսվում է տորոնի մացառուտը, և նրա տիպ բուրմունքը տարածված է շատ թանձր։ Գետնի վրա ցուրտն ավելի ուժեղ է ծակում, գետնի վրա այն ավելի ուժգին է և այրող, գետնի վրա մարդկային ջերմությունն ավելի ուժգին և ավելի քաղցր է։

— Կյանքում մի անգամ։ Ես միայն այդ եմ ուզում, Անդրեյ... Կուրծքս ամբողջապես այրվում է դրանով, ահա այստեղ։

Նա վերցնում է Անդրեյի ձեռքն ու նրա ծալած մատներն ուժով խրում իր կրծքի մեջ։

— Ցուրտ է, ցուրտ,— շշնջում է Ռիտան։

Անդրեյը լսում է, ինչպես են նրա ատամները չխկչխկում, ինչպես է նա ամբողջովին ցնցվում դողից, ինչպես ատամների չխկչխկոցի միջից լսվում է տաք մի շշունջ.

— Չէ՞ որ ես չեմ մտածում... Դու ինչ ես... ինչ ես, Անդրեյ...

Հետո տորոնի բուրմունքի նման տիպ մազերը պատում են նրա ականջները, պարանոցը, այտերը, նրա շարժումները կաշկանդվում են դողից, ցուրտն անտանելի է դառնում, և ատամները նույնպիսի անորոշ շշունջ են բաց թողնում, ինչպես Ռիտայի շշնջոցը.

— Ո՞վ է մտածում։ Մի՞թե կարելի է, երբ... Այսպիսի ցուրտ է... գետինը... Ռիտա...

Նա կտրվեց իր միակ, անհաղորդելի մտքից, վանեց այն իրենից, նա կրկին տեսնում է այն, ինչ իր առջևն է, իր մոտ,

իր հետ։ Եվ մի՞թե նա որևէ միտք է ունեցել։ Մի՞թե նրա շուրթերի առաջ չէր լողում տաք, խոնավ, փափուկ օղակը, որ նրանից փախել էր ահա արդեն մեկ ամբողջ տարի—տարուց ավելի—հենց այն պահին, երբ ինքը պատրաստ էր հպվել դրան իր շոր, այրվող բերանով։ Քնած թե հարթմնի այդ փափուկ, խոնավ օղակը երերում էր տարածության մեջ կարմիր փոքրիկ նշանակետի նման, և հիմա, նույնիսկ հիմա, այդ ականակույր գիշերին, Անդրեյը տեսնում է նրա տաք կարմրությունը։

— Յուրա է... Մարի... մի ամբողջ տարի... Ռիտա։

Օղակը մոտենում է, ավելի ու ավելի է մոտենում այրվող բերանին, ծորում է շուրթերին, կոկորդը խեղդում տոթից, և այդ տոթի միջով հաղիվ լսելի դուրս են մագլցում անիմաստ, բայց այնքան մարդկային խոսքեր.

— Դեհ... օ՜հ։ Ա՜խ դու... դո՜ւ, դո՜ւ։

Եվ այդ պահին այդու մյուս ծայրին, թերևս ուրիշ այգում, տտիպ տորոնի մացառուտի մեջ, որ ծածկված էր երկնքի անթափանցելի խավարով, կանգնած էր ընկեր Գոլոսովը, երեսը դեպի վեր, դեպի աստղերը։ Աստղերը երկիր էին թափում սառն արծաթ՝ կլոր և մեծ։ Գոլոսովը նայում էր աստղերին, կարծես նրանք արտացոլում էին այն իրադարձությունները, որ պետք էր տեսնել։

Հանկարծ նա ցցվեց, մաուզերը գրպանից դուրս քաշեց, երկայն փողն ուղղեց ամենապայծառ և ամենամեծ աստղին, ատամների արանքից ֆշշացրեց.

— Ախ դու... դու, դո՜ւ։

Եվ վերջին «դու»-ի հետ ձգանը քաշեց։

Կրակոցը պատռեց լռությունը և գլորվեց այգիների վրայով։

— Դում-դում-ո՜ւմ։

Գոլոսովն անշտապ բոլոր փամփուշտներն արձակեց դեպի աստղերը։

Մաուզերը լավ էր գործում։

Գյուղացիները մթության մեջ քայլում էին խիտ-խիտ և շատ վստահ։ Տեղանքը նրանց լավ ծանոթ էր, ամեն մի թուփը շոշափելով դիտեին։

Բոլորից առաջ, ձեռքերը թեթև և արագ շարժելով, իր կողովիկով սլանում էր Լեպենդինը։ Երբ ծառերը դարձան շիկավուն՝ ամառանոցի պատուհաններից լուսավորված, նա գլուխը շրջեց գյուղացիների կողմն ու հարցրեց.

— Պատուհա՞նը ծեծենք, թե դուռը։

— Այնտեղ կորոշենք։

Տանը մոտեցան կամացուկ, կանգնեցին մորու թփերի մոտ, պատուհանների առջև։

— Հապա մի, ով ավելի երկայնահասակ է, նայեցեք,— ասաց Լեպենդինը։

Նարնջագույն պատուհանին մոտեցավ սև, կլոր մի գլուխ։ Գյուղացիներն սպասում էին լուռ, առանց շարժվելու։

— Մի նիհարը ման է գալիս։ Ակնոցավորը նստած է տիրուհու հետ,— ասաց գլուխը։

— Իսկ նախագահն այնտե՞ղ է,— հարցրեց բարալիկ մի ձայն թփերի ետևից։

— Ընկերներից այստեղ երկուսն են։ Մեկ էլ երկու կնիկ։

— Նախագահը կարճլիկ է, երկար մազերով, նա այնտե՞ղ է։

— Նախագահն այնտեղ պետք է լինի։ Բախի՛ր,— ասաց Լեպենդինը։

Ապակու վրա երևաց կեռացրած մի ձեռք, պատուհանը երեք անգամ կամացուկ զնդաց։ Սպասեցին։

— Չեն լսում,— ասաց գլուխն ու շրջվեց դեպի թփերը։

— Գուցե առավոտյա՞ն դանք։

— Ինչ առավոտյան, էնպիսի գործ չէ, ծեծի՛ր,— բղավեց Լեպենդինը։

Ձեռքը կրկին բարձրացավ դեպի ապակին, պատուհանն ավելի տագնապալի զնգաց, և իսկույն ձեռքն ու գլուխը ետ քաշվեցին մթության մեջ։

Սենյակում պատուհանին մոտեցավ մի մարդ, ոսկե ակնոցը փայլեցրեց, փեղկը բացեց ու նայեց մթության մեջ։

— Սյոմկա, դո՞ւ ես,— հարցրեց նա։

Գյուղացիները լռում էին։

— Ստարցո՞վ,— կրկին հարցրեց մարդն ու, մի քիչ սպասելով, մեջքը դարձրեց մթությանը։

— Երևի Սյոման է կատակում։

Այն ժամանակ թփերի մեջ անհամարձակ հաղացին։

Ակնոցավոր մարդը նետվեց դեպի լուսամուտագոգը և բղավեց.

— Ո՞վ կա այստեղ։

— Ը՛հը, ը՛հը... մենք, ընկեր, այնպես որ...

— «Դուք» ո՞վ եք։

— Ընկեր գյուղացիները, ուրեմն, այսպես ասած, Ռուչյիի քաղաքացիները, ընդհանրապես։

— Ի՞նչ է պատահել, ընկերներ։

Լեպենդինը գլորվեց դեպի լույսն ու, պինդ հազալով, հայտարարեց.

— Մենք եկել ենք ընկեր նախագահի մոտ, ուզում ենք ընկեր նախագահին հայտնել ժողովի արդյունքը։

— Ընկերներ, ձեզ հետ խոսում է Պոկիսենը՝ նախագահը...

Նրան ընդհատեցին մթության միջից.

— Էդ մեկը մենք գիտենք։ Բայց թե ուզում ենք խոսել նախագահ Գոլոսովի հետ։

— Գոլոսովը հիմա այստեղ չի, գնացել է։

Թփերի վրայով մի խուլ ծիծաղ անցավ։

— Ընկեր, այդ մեկը դուք սխալ ասացիք։ Նա ձեզ հետ է, միասին։ Մենք լավ տեսանք, թե նա ինչպես եկավ։

— Ա՛յ քեզ տարօրինակ մարդիկ,— բացականչեց Պոկիսենը։— Ի՞նչ է, ես ձեզ հո սուտ չե՞մ ասում։ Գոլոսովը գնաց այգիները։ Ես նրան որտեղի՞ց գտնեմ։

— Ձեր կամքն է, իհարկե, բայց...

— Ժողովը վերջնական որոշում է ընդունել, որպեսզի...

— Ի՞նչ,— ասաց Պոկիսենը, պատուհանից դուրս կախվելով։— Ոչինչ չի երևում։ Դուք այստեղ շա՞տ եք։

— Եղածը հերիք է,— զոհունակությամբ ծոր տվեց մեկը։

Պատուհանին մոտեցավ Շչեպովն ու խիստ նետեց մթության մեջ.

— Ասացեք, ի՞նչ կա։

Թփերի մեջ իրարանցում առաջացավ.

— Թող Ֆյոդորն ասի...

— Ֆյոդոր։

— Հայտարարի, միանգամից...

— Հուպ տուր, ինչպես էն օրը...

— Ընկերներ,— բղավեց Պոկիսենը պարզ ու հատու, ինչպես միտինգում, և ձգվեց մատները հենելով լուսամուտագոգին։— Ընկերներ, եթե ուզում եք խոսել գործկոմի նախագահի հետ, եկեք վաղն առավոտյան։ Հիմա նա դուրս է եկել։ Մենք մինչև վաղը երեկո այստեղ ենք լինելու։ Սակայն դուք կարող եք ինձ հայտնել ժողովի վճիռը, ինչի մասին որ ասում եք, և ես կհայտնեմ ընկեր Գոլոսովին։ Միայն հիմա գիշեր է, մութ ու ես չեմ էլ տեսնում, թե ով է ինձ հետ խոսում։ Ավելի լավ է վաղը եկեք։

— Մութ գործ է, այդ ճիշտ է,— դարձյալ ծոր տվեց մեկը կողքից։

Թփերի մեջ կրկին խլթխլթոց առաջացավ։

— Ֆյոդոր, սրան բացատրի, որպեսզի գործը չխառնի...

Ներքևից, կարծես գետնի տակից, թափով մի ձայն թընդաց.

— Ինչպես, ընկեր, դուք մեզ ճառով դիմեցիք, մենք էլ ուզում ենք ձեզ տեղյակ դարձնել, թե ինչ դրության մեջ է մեր կողմերի գյուղացիությունը։ Շատ հայտնի բան է, որ նոր օրենքը հիմնովին փոխել է բանվորական-գյուղացիական դասակարգի քաղաքացիներից տուրքեր վերցնելու և նրանց հաց բաշխելու կարգը։ Հենց այդ օրենքը, որ ընկերները չգիտեն, թաքցնում և պահում են, չեն հայտարարում։ Այնպես որ Սանշինոյի վոլոստի ժողովը, չքավորներն ու մյուս գյուղացիները որոշեցին, որպեսզի ընկեր Գոլոսովից պահանջեն հայտարարել այդ օրենքը, և որպեսզի հացի բաշխումը հիմնովին փոխեն, ինչպես նաև հրամանով վերացնեն պարենաջոկատները։ Ի միջի այլոց...

— Սպասիր, ընկեր կամ չգիտեմ թե ով ես,— բղավեց Պոկիսենը։— Տեսնում եմ, որ ձեր գործը լուրջ է, միանգամից չի լինի հասկանալ։ Ես ձեզ մի բան կասեմ։ Հացի բաշխման օրենքը ոչ ոք չի փոխել և ներկայումս չի կարող փոխվել։ Սովետական բանվորա-գյուղացիական իշխանությունը...

Մթությունից պատուհանի վրա թափվեց բազմաձայն մի տրտունջ, որի մեջ էին խրվում սուր ճչոցներ.

— Լը-սել ենք։

— Տեսանք, որ եկավ։

— Հերիք է նախագահին թաքցնեք։

Պոկիսենն ամբողջ ուժով բղավեց.

— Դուք հո չե՞ք գժվել։ Ձեզ ձեր լեզվով ասում են, որ Գոլոսովը գնացել է։ Ինչու պիտի մենք մթության մեջ խոսեինք, եթե...

— Սպասիր, սպասիր, ընկեր,— բղավեց Լեպենդինը.— Այստեղ բոլորի խելքն էլ տեղն է։ Պետք է հաշտ ու խաղաղ խոսել, լուրջ կերպով, սա քեզ համար գործկոմը չի։ Դու լսիր, բանն ինչ է։ Մեր տեղերում հաց չի լինում, ավելի շատ բոստան, մեկ էլ այգի։ Փորձանք մեր տնտեսության մեջ ինչքան ասես կա. աղքատություն է՝ գազար, մեկ էլ կարտոֆիլ։ Հացի երես չենք էլ տեսնում։ Իսկ մեզնից պահանջում են, որ հաց հանձնենք։ Հիմա ի՞նչ անենք։ Հողը, բանից պարզվում է, ազատ է, գյուղացիներինը, իսկ գյուղացին ի միջի այլոց...

Շչեպովը Պոկիսենին մի կողմ քաշեց, բռնեց պատուհանի շրջանակից և բղավեց.

— Բարեկամներս, եկեք խոսակցությունը վաղվան հետաձգենք։

Նրան ընդառաջ նետվեց թնդաձայն մի աղմուկ։ Շչեպովն ուզում էր պատուհանը փակել, սակայն երկու կողմից շրջանակներին կառչեցին հաստ, ամուր մատներ։

— Այս ի՞նչ բան է,— բղավեց Շչեպովը իր սուր ձայնով։— Բռնությո՞ւն։

Պոկիսենը կնոջը մի անհասկանալի խոսք ասաց։ Կինը պատասխանեց ռուսերեն։

— Փակել եմ։

— Իսկ դա արդեն ձեր կամքն է,— բղավեց մեկը մթության միջից։

Եվ անմիջապես գիշերվա մեջ լուծված սև թփերը շարժվեցին դեպի պատուհանները, և պատուհաններից դեպի մթությունն ընկած աղոտ լույսի տակ փայլեցին մի քանի տասնյակ անշարժ աչքեր։

— Ժողովը հրամայել է՝ պահանջել նոր օրենքը, որպեսզի մեզնից չթաքցնեն, և ուրեմն պարենջոկատները վերացնել։

Ետևի սենյակում Օտտին տղտղաց, Պոկիսենի կինը նետվեց երեխայի մոտ։ Կլավդիա Վասիլևնան Շչեպովի արմունկը բռնեց և շշնջաց.

— Ալեքսեյ, գյուղացիներն են... նրանք մեզ...

— Վերջ տուր,— նրան դարձավ Շչեպովն ու գլխի շարժումով բազմոցը ցույց տվեց։

Պոկիսենը լսեց երեխայի տղտղոցը, նրա դեմքը քարացավ, բթացած հայացքով նայեց դեպի պատուհանը, հետո վճռականորեն առաջ շարժվեց.

— Քաղաքացի գյուղացիներ։ Դիմում եմ ձեզ վերջին անգամ։ Առաջարկում եմ անմիջապես ցրվել ձեր տները, իսկ վաղն առավոտյան գալ այստեղ՝ ընկեր Գոլոսովի հետ ձեր խնդիրները քննարկելու համար։

Նոր ուժով պատուհանից ներխուժած աղմուկի միջից մի սուր ձայն առանձնացավ.

— Մինչև օրենքը չտաս, չենք գնա։

— Ձե՛նք գնա։

Շչեպովը ետ քաշվեց դեպի սենյակի մութ անկյունը, բռնեց պատին հենած կինեմատոգրաֆը, մոտեցրեց պատուհանին և սկսեց ապարատը կարգավորել՝ օբյեկտիվն ուղղելով դուրս, դեպի այգի։

— Լռիր,— շշնջաց նա Պոկիսենին։

Աղմուկն սկսեց նվազել։ Մթության մեջ կարծես ավելի շատ աչքեր փայլփլեցին, և բոլորը սառել մեխվել էին Շչեպովի ձեռքերի վրա, որ ճարպկորեն կարգավորում էին ապարատը։ Պարզորոշ լսվեց ժապավենի անվակի մետաղյա ճռճռոցը։ Շչեպովի շարժումները կենտրոնացած էին և հմուտ։

Այդուց երկչոտ հարցրեցին.

— Այս ի՞նչ ես կարգավորում, ընկեր։

Շչեպովը հապաղեց պատասխանել։

— Սա, բարեկամներս, անթել հեռագիր է։ Լսե՞լ եք։ Այ այսպես։ Համենայն դեպս, ուզում ենք քաղաքի հետ կապվել։

— Ընկեր, դա քո ինչի՞ն է պետք։

— Ինչպես ասեմ...— ծամծմեց Շչեպովը։— Գուցե պետք գա... Մի որևէ ջոկատ պահանջենք... կամ էլ...

Հանկարծ լռության մեջ ծիծաղ պայթեց՝ լիաթոք, հնչեղ ծիծաղ, և տասնյակ աչքեր գետին խոնարհվեցին։ Ծիծաղում

էր Լեպենգինը՝ փայտե թիակները դոփելով և դրանք խփելով գյուղացիների աղդրերին.

— Ա՜յ թե ծիծաղեցրեց, ա՜յ թե ծիծաղեցրեց ընկերը։ Ախր, սա ի՞նչ հեռագիր է։ Մեզ մոտ ռաղմաճակատում էս տեսակ մեքենաներով կենդանի մարդկանց պատկերն էին հանում։

— Ուրեմն, նկարները, հա՞։

— Դե իհարկե նկարները։ Ա՜յ քեզ հիմար։

Մեկը ծիծաղեց, մի ուրիշը թնդաց.

— Ուզում են վախեցնել...

— Կարծում են կխաբեն...

Հետո ձայները մոայլվեցին, խլացան և համառ սպառնալիք հասավ պատուհանին.

— Միևնույն է, բաց չենք թողնի։

Փոքրիկ Օտտին, ասես այդ սպառնալիքը լսելով, բղավեց և սկսեց լալ։ Պոկիսենը նետվեց դեպի պատուհանը, ձեռքը տարավ գրպանը։

— Ցըր-վե-ցեք,— ասում եմ,— լը-սո՞ւմ եք։

Կլավդիա Վասիլևնան ճչաց ու դեմքը փակեց ձեռքերով։

— Ալեքսե՜յ։

— Լոի՜ր։

— Ա-ա՜խ, այդ-պես՜։ Դուք այդ-պես՜ս,— բղավեց Պոկիսենը, կախվելով մթության մեջ։

Եվ հանկարծ հեռվից լսվեց ընդհատուն մի հարված, և սառնությամբ պարուրված գիշերվա մեջ խլվեց թնդաձայն մի հառաչ.

— Դում-դում-դո՜ւմ։

Ու մի վայրկյան անց՝ կրկին.

— Դում-դում-դո՜ւմ։

Եվ կրկին՝ երեք, չորս... ևս, ևս... կարծես ինչ-որ տեղից, թիկունքից, քաղաքից հրացանաձիգներ էին գալիս։

Հազիվ լուսավորված թփերը շարժվեցին, մի սև բան պատուհանից ետ թռավ, հետո ամեն ինչ կանգ առավ։

— Դում-դում-ո՜ւմ։

Պոկիսենը ականջ դրեց. փոքրիկ Օտտին դադարել էր լալ։ Ճակատը սրբեց և ասաց.

— Կեցցե՜ս, Սյոմա, ճիշտ ժամանակին էր։

Նա ակնոցն ուղղեց, նայեց Շչեպովին և ժպտաց։

— Հը՜մ... Հեղափոխություն մեզ մոտ, թերևս, դեռ չկա։ Բայց ահա հակահեղափոխություն, ինչպես ասում են, քիչ ու միլ կա։

Լեպենգինի վախճանը

Քաղաք մտան ուշ գիշերով, ինչպես գաղթականներ, ունեցած-չունեցածը սայլերին բարձած, լացող երեխան ձեռքներին, սայլի մեջ ցնցվելուց և մթությունից հոգնած։ Ամառանոցը բաց թողեցին։

Գոլոսովն ուղեկցեց Պոկիսենի ընտանիքին, մտավ հրշեջների բակը, ձին հանձնեց և գնաց տուն։ Նախասենյակում, երբ դայակը դուռը բացեց, ինչպես միշտ, հարցրեց.

— Ոչինչ չկա՞։

— Մի հեռագիր է, ինչ է,— սվսվացրեց պառավը։

Մեծ սենյակում, որ կահավորված էր վաճառականական կահույքով, միշտ վառվում էր լամպը, և նրա լույսը երկչոտ կերպով լուծվում էր անկյուններում, ինչպես կանթեղի լույսը։

Հեռագիրը բացելիս Գոլոսովը հայացքը սահեցրեց հասցեի վրայով.

Արտաճերք Սեմիդոլ գործկոմի նախագահին
Պատճենը հատուկ բաժնի պետին պատճենը գինկոմին։

Նա մատիտով գրոտված թերթը մոտեցրեց լույսին։

Ստացված տեղեկությունների համաձայն Սեմիդոլի զավառի Պիշնուր գյուղի շրջանից դեպի Սեմիդոլ է շարժվում գերմանացիների և չեխերի նախկին գերիներից կազմված բանդա, որին միացել են մոբիլիզացիոն կուլակային մասը, ինչպես նաև գինված դասալիքներ։ Բանդան դեկավարում է գերմանական սպա, որը մոբիլիզացիոն ագիտացիա է անում դուրս գալ սովետական ֆեդերացիայից։ Ագիտացիան կարող է հող գտնել ոչ գիտակից տարրերի մոտ ճացի ճանձնումից կուլակների դժգոհության պատճառով։ Բանդան սույնը ստանալով առաջինը կազմակերպել ճեղեոյակ երկրորդ անմիջապես պարզել դրությունը տեղում։ Երրորդ ռազմա-հեղափոխական միջոցներ ձեռք առնել բանդան վերացնելու համար։ Չորրորդ այսուհետև մինչև նոր կարգադրությունը ամեն երկու ժամը մեկ հեռագրով հայտնել ճեղեոյակի գործողությունների մասին։ Բանդան ամբողջությունը պետք է գնա-

վին չախչախվի Սեմիդոլի ուժերով ճեղեռյակի անդամների անձնական պատասխանատվությամբ կետ գավգործկոմի նախագան:

Գոլոսովը կանգնել էր անշարժ:

Սենյակը, որ իր հին ձևով մաքրել-կարգավորել էր կես կյանքն այստեղ անցկացրած դայակը, շունչը պահել էր, սպասվել: Այստեղ ամեն բան շատ կանոնավոր տեսք ուներ, և այն համառությունը, որով իրենց պահպանում էին ծաղկամանները, կահույքի ծածկոցները, պատերի ծեփածո զարդարանքները, արտասովոր էր նույնիսկ Սեմիդոլի համար:

— Այսպե՞ս,— ասաց Գոլոսովն ու քաշեց վերնաշապիկը:

Նա հեռագիրը նետեց սեղանին, ծանրացած քայլերով գնաց մութ միջանցքով, շոշափեց գտավ խցիկի նեղլիկ դուռը և հարցրեց.

— Դայակ, քնա՞ծ եք:

— Ի՞նչ եք ուզում:

— Գնացեք մետրանպաժին կանչեցեք:

— Դա ի՞նչ բան է:

— Դեհ, գնացեք տպարան, այն, ոնց են ասում...

— Հա, գիտեմ: Էս գիշերով ի՞նչ եք իրար անցել:

— Հենց հիմա գնացեք:

— Դաղար չունեք, տե՞ր աստված, քո կամքը լինի:

Գոլոսովը մի անհասկանալի և զայրացած բան մլռտաց սպառնալից, սակայն այդ սպառնալիքի մեջ դայակը լսեց ծանոթ, քիչ ամաչկոտ ծիծաղը և հարցրեց.

— Իսկ դուռը ետևիցս ո՞վ կփակի:

— Դեհ, լա՛վ, լա՛վ:

Գոլոսովը վառեց սեղանի լամպը, մոտ քաշեց շերտ-շերտ կտրված թուղթը, կողքով նստեց սեղանի մոտ, կարծես մի բոպեով միայն, ծխախոտը վառեց և սկսեց գրել: Իրար կպած խիտ մազափնջերը աչքերին էին կախվել թխկու տերևի նման: Ձեռքը թղթի վրայով սահում էր արագ, տողերի վերջում վեր թռչելով, ասես ջանալով բոլոր տողերը շարել թղթի վերին անկյունում: Նա կրծում էր ծխախոտի ծայրը, սեղանին թքում թաց թղթակտորտանները, հետո մի շարժումով դրանք սեղանից հատակին էր շպրտում:

Քառորդ ժամից նրա սենյակ մտան Պոկիսենն ու զինկոմը:

Գոլոսովը թռուցիկ հայացք նետեց նրանց վրա, և նրա ձեռքն ավելի արագ վազեց դեպի թղթի վերին անկյունը:

— Ստացե՞լ ես,— հարցրեց Պոկիսենը:

— Այո: Հիմա կվերջացնեմ:

— Դա ի՞նչ է:

— Դիմում գյուղացիներին:

— Ճիշտ է,— ասաց զինկոմը փնչացնելով: Նա ծանրամարմին էր, լայնաթիկունք, կարմիր դեմքը պեպենոտ էր, ինչպես քիշմիշով ծածկված կուլիչ:

Գոլոսովը մատիտը նետեց, մի կողմ հրեց գրոտած թղթերը, ասաց.

— Պատրաստ է: Ամեն ինչ հասկանալի՞ է, ընկերներ:

— Անհասկանալի է, թե ինչպե՞ս է գավգործկոմը այդ պատմությունը մեզնից շուտ իմացել: Խայտառակություն է,— ասաց զինկոմը:

— Այն բանից հետո, ինչ այսօր ամառանոցում տեղի ունեցավ...— սկսեց Պոկիսենը:

— Հեղեռյակի նիստը հայտարարում եմ բացված,— ընդհատեց Գոլոսովը օտար ձայնով և շոշափեց վերին շրթունքը:— Ընկեր Պոկիսեն, խնդրում եմ քարտուղարություն անել: Առաջարկում եմ այսպիսի օրակարգ. պատասխանել գավգործկոմին, կազմակերպել հետախուզություն և պարզել կայազորի մարտունակության հարցը, քննել ճամբարում պահվող ռազմագետների ուժն օգտագործելու հարցը, այնուհետև կուսակցական մոբիլիզացիայի, կոչերի և այն բոլոր հարցերը, որ կծագեն սույն խնդիրները քննարկելիս: Ընդունո՞ւմ եք:

— Գերիների մասին լավ ես մտածել, միայն թե դա հետո, նախ կուսակցականների մասին,— հայտարարեց զինկոմը:

— Համաձայն եմ: Ընդունվա՞ծ է: Հարց առաջին: Առաջարկում եմ այսպիսի տեքստ. հեղեռյակը կազմված է, ձեռք առնված միջոցառումների մասին կհեռագրենք մի ժամից: Համաձա՞յն եք:

— Ես լրատար եմ բերել, նախասենյակում է:

— Ինչո՞ւ,— հարցրեց Գոլոսովը:

— Նրա համար, որ հեռագիրը հո օդի միջոցով չի՞ թռնի

փոստ, և ընդհանրապես կապ է,— պատասխանեց զինկոմն ու այնպես փնչացրեց, որ սեղանի վրայի թղթերն այս ու այն կողմ թռան։

Նա դուրս եկավ և վերադարձավ լրատարի հետ։

— Այնուհետև,— ասաց Գոլոսովը հեռագիրը տալով կարմիրբանակայինին,— առաջարկում եմ կազմել առաջիկա օրերի ռազմական գործողությունների պլանն ու խոսել ընդհանրապես Սեմիդոլում եղած ռազմական ռեսուրսների մասին։

Զինկոմը ձգվեց, մուգ կարմրությունը նրա պեպենները միացրեց-դարձրեց մի մութ կետ, նա հեռցից խեղդվեց, ասես մի շնչով իննհարկանի սանդուղք էր բարձրացել։

— Ռեսուրսները հայտնի են, իհարկե, ընկերներ... Համահավաք գունդը... մի յոթ հարյուր մարդ... կայազորի վաշտը... Գնդում կարող է մի հարյուր հիսուն սվին լինել... Սակայն... հանդերձանք... և սապոգներ... դա չկա... Այո-ո... Եվ հետո, ուսուցումն էլ... ուսուցումը նոր է սկսվել...

— Կա՛րճ, ընկեր, դուք ի՞նչ կարող եք դուրս բերել այսօր առավոտյան ժամը յոթին։

— Այդ ի՞նձ ես ասում։

— Իհարկե, քեզ։

— Էլ դուքդ ի՞նչ էր։ Առավոտյան յոթին... առավոտյան յոթին մի կես վաշտ կայազորից... պատրաստ կլինի երթի... կեսօրին մի ջոկ համահավաք գնդից... Մյուս կես վաշտը քաղաքին է ծառայում... Ընդհանրապես առաջարկում եմ հայտարարել ռազմական դրություն...

— Զինկոմի առաջարկն ընդունված է։ Հետո...

Մի ժամից սենյակը փակ էր, միջանցքում լսվում էին խեղդված ձայներ, պատուհանի տակ ձիու սմբակները փոքրոցի փափուկ փոշին էին դոփում, իսկ բակում ինչ-որ տեղ ճռճռում ու թխկում էր թուլացած դռնակը։

Դայակը ներս բերեց փայլեցրած ինքնաեռը և նախշած հաստ դավաթները։

Հեղեղյակի անդամները նստած էին սեղանի առջև իրենց նախկին տեղում, գլուխ-գլխի տված։

Զինկոմը տնքում էր հեռցից.

— Պար-ղեցեք... ընկերներ... Շարժակազմը... ենթակա չէ զինկոմին։ Շարժակազմը... ենթակա է...

— Դատարկ բա՞ն է,— ձեռքը թափ տվեց Գոլոսովը։

— Պատասխանատվություն կենտրոնի առջև,— խեղդվում էր զինկոմը։

— Չպետք է մոռանալ մյուս պատասխանատվությունը։ Դատարկ բան է։ Եթե նպատակահարմար է, ուրեմն կարելի է։ Ես պնդում եմ։

— Այն դեպքում երաշխիք տվեք։

— Ի՞նչ երաշխիք։ Նա ոչինչ չունի։

— Այն դեպքում պատանդներ։

— Նո՞րից նույն բանը։ Ասում եմ քեզ, որ Շչեպովը ոչ ոք և ոչինչ չունի։ Նրանից ի՞նչ պիտի վերցնենք։ Մենք պետք է ռիսկ անենք։

— Ռիսկ անենք Շչեպովի հետ... համաձայն եմ... բայց... հը... ապարատը... ինչպես կարող ենք վտանգել, հը... ապարա՞տը։

Պոկիսենը կտրուկ հայտարարեց.

— Ես Շչեպովին վստահում եմ։

— Դատարկ բա՛ն է,— բղավեց Գոլոսովը։— Ես սպեցնեերից ոչ մեկին չեմ վստահում։ Սակայն մենք իշխանություն ունենք, և նա հիմար չէ։

Այն ժամանակ զինկոմը գլխի ընկավ և ամբողջապես ցնցվելով օդը բռնելու փորձերից, շնչեց.

— Ներեցեք... իսկ-իսկ այն... իսկ... դերասանուհին... ինչպես է անունը... նա, որ Շչեպովի հետ...

— Հը՞։

— Պատանդ վերցնենք...

Պոկիսենը փոթկաց.

— Այն դեպքում... այն դեպքում, եթե Սեմյոնից երաշխիք պահանջվեր, պետք է պատանդ վերցնեինք Ռիտային — հա-հա։ Ռիտա Տվերեցկայային։

Գոլոսովը տեղից վեր թռավ, աթոռը նրա տակից դղրդոցով մի կողմ թռավ, նա բորբոքված աչքերը հառեց Պոկիսենին։

— Կատակներիդ վերջ տուր։ Նրան կարելի էր վերցնել, եթե Անդրեյ Ստարցովից երաշխիք պահանջվեր։

Նա աթոռը բարձրացրեց, նստեց և համառ, սառը ձայնով արտասանեց.

— Ես ընդունում եմ զինկոմի առաջարկությունը։ Շչեպովը ասաց։ Նրա նկատմամբ դա ճիշտ միջոց է։ Ընկեր Պոկիսեն, օրդեր գրեցեք Կլավդիա Վասիլևնային անմիջապես բանտարկելու համար։ Զինկոմին առաջարկվում է որոշել Շչեպովի մեկնելու ժամը և օդային հետախուզության առաջադրանքը...

Ու ես մեկ ժամ հետո արդեն բակում անդադար ճռռում էր դռնակն ու միջանցքում անդուսպ խոսակցություն էր լսվում. գերմանական զինվորների դեպուտատների Սեմիդոլի խորհրդի նախագահ Կուրտ Վանը, որպես չորրորդ անձնավորություն, նստել էր նախկին վաճառականի տան սենյակում։

Կուրտին լսում էին համբերությամբ, երկար սպասելով, մինչև որ ընտրի և արտասանի ռուսերեն բառը։ Աչքերը կկոցած, նա մինչ մտքում գերմաներենից կթարգմաներ ասելիքը։ Ճակատին մի երակ էր ուռչում։

— Ես չեմ պահում... չեմ հաշվի... ռացիոնալ... հետախուզություն անել... գերմանացի գերի... գերիի համար ես չեմ կարող... երաշխավոր լինել... ես մտածեմ հնարավոր... կամավորների խումբ հավաքել... կամավորներ վաշտ, եթե գործկոմ զենք տա... հետո այսօր միտինգ կազմակերպի... միտինգ ճամբարում... բայց միտինգ ես խոսել չի կարող... Միտինգ խոսի Անդրեյ Ստարցով... դա... ռացիոնալ...

— Դատարկ բա՜ն է,— բացականչեց Գոլոսովը։— Ստարցովը փալասի մեկն է։

— Ի՞նչ կնշանակի փալա՞ս։

— Դե փալաս էլի, թույլ մարդ... Ընդհանրապես, ինտելիգենտ։

Կուրտը գլուխն օրորեց։

— Ձեզ հայտնի չէ, թե ճամբար... ճամբարի տրամադրություն... ես կարծում, պետք է խոսի ռուս, ոչ գերմանացի... Անդրեյ Ստարցովը։

— Դուք վստա՞հ եք, որ նրա ելույթը մեզ օգուտ կտա։

— Ես Անդրեյ Ստարցովի բարեկամ։ Ես կարող... երաշխավոր լինել նրա համար...

Գոլոսովը ձեռքը մեկնեց Կուրտին։

— Այսպիսով, դուք խոսք տալի՞ս եք օգնել։

— Ես բոլշևիկ,— պատասխանեց Կուրտն ու վեր կացավ։

Կայաղորի կես վաշտը Սեմիդոլից դուրս եկավ առավոտյան ժամը յոթն անց կեսին։ Նրան ուղեկցում էր զանգի զիլ զողանջը, որովհետև կիրակի էր, և Սեմիդոլը, ինչպես անհիշելի ժամանակներից, տոնն սկսում էր աղոթքով։

Առավոտյան ժամը յոթն անց կեսին Ռուչյիի բակերից, կոատուկներով ծածկված կածաններով, ցանկապատերի, չափարների միջով դեպի լայն ճանապարհ էին դուրս գալիս զուգված կնիկները։ Ոմանք պատարագի էին գնում ձիերով, սայլերի մեջ լցրած երեխեքին ու ծծկեր երեխաներով ջահել կանանց։ Ճանապարհին փոշու քուլաներ բարձրացան, երևացին խայտաբղետ սարաֆաններն ու բլուզները։ Սակայն Սանշինո չհասած, կես ճանապարհին, երբ մերկ բլրի ետևից երևաց զանգակատան փիրուզագույն գմբեթը, Ռուչյիի աստվածապաշտները շփոթվեցին։ Ճանապարհով նրանց ընդառաջ էր գալիս զինված հեծյալների մի ջոկ։ Երևում էր, ինչպես ձիավորների մեջքներին վեր-վեր էին թռչում հրացանները։ Ռուչյիցիների առջևից գնացող սայլը կանգ առավ, զգուշորեն ճանապարհից ցած սողաց դեպի դաշտ, հետո վճռականորեն ետ դարձավ։ Երկու-երեք րոպե հետո բոլոր սայլերը ետ էին գլորվում դեպի Ռուչյի, իրենց թափքերը դղրդացնելով և փոշու սյուներ բարձրացնելով։ Գյուղացիներն ինչքան ուժ ունեին մտրակում էին ձիերին։ Միայն անպատասխանատու և անվախ կնիկները փոքրիկ խայտաճամուկ խմբերով շարունակեցին իրենց ճանապարհը դեպի զանգակատան փիրուզագույն գմբեթը։ Վախեցած գյուղացիներից մեկը, հավանաբար, նա, որ ջոկին հանդիպած հենց առաջին սայլում էր, ասաց ցարական ժամանակներից ի վեր չհիշված մի խոսք.

— Պատժիչնե՛ր են։

Եվ այն պտտվեց փոշու քուլաների մեջ, մեծանալով տագնապից, շփոթմունքից, վախից։

Ռուչյիում մեկի մտքով անցավ հարցնել.

— Սանշինոյում որտեղի՞ց պատժիչներ։

Սակայն վախը չէր նահանջում.

— Ի՞նչ է, նրանք հո հիմար չեն, որ Սեմիդոլով գան, շրջանցել են։

— Շրջանցել են։

Եվ տարածվեց ցանկապատերի և չափարների վրայով.

— Շրջանցել են։

— Շրջանցել են։

— Պատժիչնե՛ր։

Ստարիյե Ռուչյին սսկվեց։ Երեխաներին քշեցին խրճիթները, դարբասներն ու փեղկերը փակեցին։

Հեծյալ ջոկատը քայլատրոփ մտավ Ռուչյի և կանգ առավ ճանապարհին, գյուղի մեջտեղում։ Հեծյալները տարբեր ձևով էին հագնված՝ ով ինչ ուներ, նմանվում էին միաժամանակ և՛ գյուղացիների, և՛ զինվորների, ճիշտ ինչպես համահավաք գնդի զինվորները, որոնց ռուչյիցիները տեսել էին Սեմիդոլում։ Ձիերից իջնելով, նրանք հավաքվեցին հրամանատարի շուրջը, որ նման էր մի արտասովոր հավաքական համազգեստ հագած սպայի։ Նա երկար ինչ-որ բան էր նրանց բացատրում, ցույց տալով ճանապարհից դեպի այգիները տանող կածանները, հետո կրկին թռան ձիերին, զույգեր կազմեցին, և այգիները նրանց կլանեցին իրենց փարթամ ճյուղերով։

Հրամանատարը մի քանի զինվորների ուղեկցությամբ քայլատրոփ շարժվեց ճանապարհով դեպի Սեմիդոլ։

Եվ հանկարծ մի տեղ, այգիների խորքում կրակոց պայթեց։

Վայրկենապես դրան արձագանքեց մի ուրիշ կրակոց, և ամբողջ շրջանում, մացառուտների մեջ խրվելով տարածվեց ընդհատուն, շտապ-շտապ հրացանաձգություն։ Վախեցած, կրակոցին չընտելացած ձիերը հեծյալներին տանում էին որտեղով ասես, իրենց տակ տրորելով ցանկապատերը, թռնելով առուների վրայից։ Հնարավոր չէր ջոկել, թե կրակոցը որտեղից է գալիս, հեծյալները պատասխանում էին դրան անիմաստ կերպով, կրակելով օդի մեջ, տորոնի և բալենու խիտ թփուտներին։

Ճանապարհի վրա խմբվելով, նրանք մի քանի անգամ կրակեցին այգիների վրա ու խառնաշփոթ մի խումբ կազմած ետ սլացան Սանշինո։

Սեմիդոլի կայազորի կես վաշտը չպատասխանեց համազարկերին, Ստարիյե Ռուչյիից ետ քշվեց դեպի քաղաք և դիրքավորվեց թեք բլուրների վրա, երեսները դեպի Ռուչյի այգիները դարձրած։

Ստարիյե Ռուչյին սսկվել ու նույնիսկ շունչ չէր քաշում, մինչև որ արևը բարձրացավ, կեսօր դարձավ։ Երկինքն այդ պահին արդեն դարձել էր վճիտ, աշնանային օրը պարզվում էր ուժեղ այգացրտից հետո։ Եվ այնժամ կեսօրվա լռության ու վճիտության մեջ մխրճվեց սմբակների կատաղի դոփյունը, և գյուղում խրճիթից-խրճիթ, խառնիխուռն արահետներով և կածաններով մահացու տագնապ սլացավ։

Վախեցած գյուղացիները մոտ վազեցին սսկված խրճիթներին, բռունցքներով ծեծեցին դարբասներն ու փեղկերը, բղավում էին ինչ-որ տագնապալի խոսքեր և վազում առաջ։ Խրճիթներում կանանց անտանելի ճղճղոց էր բարձրանում, երեխաները ձայնակցում էին նրանց, բակերում մեկ երևում, մեկ անհետանում էին անհանգիստ, ժիր աղջիկները։ Մեկ-մեկ, կռացած, ցանկապատերից ու թփերից բռնած՝ գյուղից դուրս էին գալիս տղամարդիկ։

Ժողովը հավաքվեց Ռուչյիից դուրս, լերկացած տեղում, ուր լքված այգիներում ցցվել էին սոսկ միայնակ վայրի ծառեր, և շորացած, երկաթյա փշերով՝ հաղարջն էր ցածր, ծակող թփերով սողում գետնի վրայով։

Սանշինոյի կողմնուղուց քիչ հեռու, գաղտիկուրով ծածկված բարձունքի վրա ձիերից իջան մորդվական մուգ գույնի չապաններ հագած մի խումբ մարդիկ։ Խմբի մեջտեղում վայր գլորված խնձորենու վրա նստել էր մորդվական տոնական զգեստ հագած մի մարդ, որ դեմքով նման չէր մորդվացու, աչքերը բաց գույնի էին, երեսը սափրված։ Նրա կողքին երևում էր զինվորի խունացած գորշ բաճկոնակը։ Թամբած ձիերին սանձերից բռնած պահում էին քիչ հեռու։

Ռուչյիցի գյուղացիների հավաքը շրջապատեցին հեծյալ զինվորները, այն բարձունքից քիչ հեռու, որի վրա տեղավորվել էր մորդվացու շորեր հագած մարդը։ Հեծյալների հրամանատարն էր արտասովոր համազգեստով սպան։

— Ո՞վ պիտի խոսի ժողովի անունից,— բղավեց բեղավոր զինվորը, ձեռքերը կանթելով և ծուռ սուրը շարժելով։

— Դուրս եկ, շո՛ւտ։

Իրար կիպ սեղմված գյուղացիների խմբից անվստահորեն դուրս եկավ ցածրահասակ, փոքրիկ աչքերը հոնքերի

մեջ թաղված մորուքավոր մի մարդ։ Զինվորը շարժվեց դեպի նա։

— Դիմադրո՞ւմ եք, հա՞։

Մորուքավորը մի ոտքից մյուսին հենվեց և աչքերը թարթեց։

— Դի-մա-դրո՞ւմ եք, հա՞։

Մորուքավորը երերաց դեպի զինվորը և բարալիկ ձայնով ուրախացած վրա տվեց.

— Մենք միշտ, ընկեր, բոլշևիկների հետ ենք, անպայման, դա մեզ մոտ...

— Հըմ, անպայմա՞ն։

— Անպայման, ընկեր, մի մարդու նման, ամբողջ գյուղը, հիմի, բոլշակների հետ...

Այն ժամանակ զինվորը սուրը բարձրացրեց և, մորուքավորի գլխավերևը թափահարելով, բղավեց.

— Դե՛հ, ասա, ո՞վ է խառնակիչը։ Ո՞վ է խառնակիչը։ Դո՞ւ ես։ Ասա, դո՞ւ ես։

— Ընկեր, թող որ մի խոսք ասենք, ոնց էդ գործը մեզ մոտ...

— Հըմ, ընկե՞ր։

Միջգյուղյա ճանապարհից արագաշարժ, ամուր ձեռքերի վրա մարմինը ճարպկորեն առաջ նետելով, դեպի հավաքատեղին էր գլորվում Լեպենդինը։ Նա սողաց-անցավ գյուղացիներին շրջապատած ձիերի ոտքերի միջից և մոտեցավ մորուքավորին։

Բեղավոր զինվորը կարմրատակած, վիզը երկարացրած բղավում էր մարդկանց վրա.

— Թաքցնո՞ւմ եք խառնակչին։ Դիմադրո՞ւմ եք։

Հանկարծ գյուղացիները հուզվեցին, սկսեցին հաղալ, մի քանի ձեռք երկարեցին դեպի զինվորը, ոմանք գդակները հանեցին ու կրկին դրեցին գլուխներին։

— Ի՞նչ եք երկարացնում։ Պապանձվել ե՞ք,— բղավեց զինվորը։

Այն ժամանակ մի տասնյակ կոկորդներից միաժամանակ զինվորի վրա թափվեց մի կերպ.

— Լեպենդին...

— Լեպենդինն ամեն ինչ...

— Ֆյոդորը, նա կբացատրի, ուրեմն ոնց...

— Լեպենդինը...

Զինվորը սսկվեց ու հարցրեց.

— Ո՞րն է։

Գլուխներն ու ձեռքերը ցույց տվեցին Լեպենդինին։ Նրա լուված աչքերը երկյուղով զինվորից թռան բազմության վրա։ Գյուղացիները նրան չէին նայում, ու այդ մարդկանց դեմքերը Լեպենդինին թվացին իրար նման, տաշած տախտակների պես միանման։

Զինվորի ստորին ծնոտը պոկվեց ու կախ ընկավ, նա ապշած նայում էր գետնից դուրս ցցված այդ մարդկային կոճղին։

Լեպենդինի այտերին կանաչադեղնավուն բծեր դուրս տվեցին, դեմքը կնճռոտվեց և գլուխը սովորականից ավելի նմանվեց սեխի։

— Է՜հ,— կռնչաց նա, մի անգամ էլ շփոթված նայելով գյուղացիներին։

Հետո գլուխը թափահարեց և դարձավ զինվորին.

— Այ, ընկեր, թե ինչ բան է։ Ինչպես դուք ինքներդ հաճեցիք տեսնել...

Սակայն զինվորը նրա առաջին իսկ խոսքից սթափվեց։

Նա ոտքով բութեց Լեպենդինի կուրծքն, ու վերջինս կլորահատակ բադյայի նման շրջվեց գետնին։

— Սպասիր,— ասաց մինչ այդ լուռ կանգնած արտասովոր համազգեստով սպան։ Նա ձիու գլուխը շրջեց ու սլացավ դեպի բարձունքը, ուր ցած ընկած խնձորենու վրա նստել էր մորդվացու շորեր հագած մարդը։ Մարդը վեր կացավ նրան ընդառաջ, մոտեցավ ձիուն, կանգնեց սանձի մոտ և վերադարձավ դեպի ցած ընկած ծառը։ Սպան ետ սլացավ դեպի ժողովը։

— Տա՛ր,— ասաց նա բեղավոր զինվորին։

Լեպենդինը դեռևս պառկած էր շրջված բադյայի նման։ Զինվորը մոտեցավ նրան և սվինով հարվածեց։ Նա մեջքից շրջվեց փորին, արմունկները ծալեց, թիակալները ամրացրեց գետնի վրա և վեր կացավ, նստեց։

— Սողա, գարշելի,— բղավեց զինվորը։

Լեպենդինը կռացավ և ձեռքերը շարժեց։ Սակայն նախ-

քան մի քայլ առաջ նետվելը, ևս մի անգամ դարձավ գյուղացիներին, և կրկին նրանց դեմքերը թվացին միանման տաշած տախտակներ։

— Գնա՛։

Բարձունքում Լեպենդինը նստել էր բաց գույնի աչքերով, սոփրված մարդու դիմաց, որ մորդվացու շորեր էր հագել։ Նա տեսնում էր, ինչպես անհանգիստ շարժվում էր այդ մարդու կիսաբաց բերանը, լսում նրա ձայնը, սակայն ոչ նրա խոսքերը, ոչ էլ մուգ գույնի չապաններ հագած այդ մյուս մարդկանց խոսքերը, որոնք բղավում էին իր վրա և պատասխաններ պահանջում, նա չէր ջոկում։ Լեպենդինը միայն մեղավոր ժպտում էր ու գետնի վրա թիակալից թիակալի վրա հենվում, ջանալով ավելի հանգիստ նստել։

Գորշ, խունացած բաճկոնով զինվորն ու այն բեղավորը, որ քշում էր Լեպենդինին, մինչ վերջինս ելավ բարձունքը, արագ մի կողմ քաշվեցին։ Լեպենդինի վրա դեռևս բղավում էին և խոսքերի աղմուկն առաջվա նման անհասկանալի էր ու խառնաշփոթ, իսկ Լեպենդինը շարունակում էր պատրաստակամ և մեղավոր ժպտալ, երբ զինվորները վերադարձան։ Չապաններ հագած մարդիկ նրանց ճանապարհ տվեցին, և Լեպենդինը մարդկանց ետևում տեսավ միայնակ ծուռումուռ խնձորենու ճյուղից կախված մի պարան։ Մորդվացու շորեր հագած մարդը թափով վեր կացավ ցած ընկած ծառից, ձեռքը բարձրացրեց ուսին հավասար, առաջ տնկած մատով ցույց տվեց խնձորենին ու մի սուր խոսք ասաց.

Այն ժամանակ Լեպենդինը երերաց և բղավեց.

— Եղբայրնե՞ր։ Ախր սրանք գերմանացիներ են։ Եղբայր-նե՞ր։

Նա ընկավ կողքի և գլորվեց բլրակի տակ, գյուղացիների մոտ։

Սակայն նրան ոտքերով պահեցին, և ձեռքերից բռնած քարշ տվեցին խնձորենու տակ։

Եվ ահա նա սկսեց իր թիակալներով խփել իրեն քարշ տրվող մարդկանց ձեռքերին ու ծնկներին։ Թիակալները թևերի տակից դուրս քաշեցին։ Նա սկսեց կծոտել և հուսահատությունից ճչալ։ Սակայն մարդիկ նրան քարշ էին տալիս առանց կանգ առնելու, մի կերպ պոկելով հաղարջից, երբ

սրա երկաթյա փշերը խրվում էին նրա հագուստի և մարմնի մեջ։

— Եղ-բայր-նե՞ր։

Կողովիկը, որ Լեպենդինի համար ամուր, հարմար կոշիկ էր, պոկվել էր նրա կճատ ոտքերից և փոկից կապված քարշ էր գալիս մարմնի ետևից, թփերի մեջ թողնելով լաթերից սարքված իր փորոտիքը։

— Եղ-բայր-նե՞ր։

Լեպենդինին քարշ տվեցին խնձորենու մոտ, պարանը մոտեցրին ծառաբնին, որպեսզի ճյուղը ծանրությունից չկոտրվի, և մոտ մի բոպե չէր երևում, թե ինչ են անում ճյուղի տակ կռացած մարդիկ։

— Եղ-բայր...

Հետո նրանց գլխավերևում ճռճվեց մի անհեթեթ կճատ մարմին, և դրան կպցրած երկար ձեռքերը մեկ-երկու անգամ այս ու այն կողմ ձգվեցին, հանկարծ շտկվեցին ընկան մարմնի երկայնքով, և բռունցքները սեղմվեցին, կարծես Լեպենդինն ուզում էր մի վերջին անգամ ձեռքերով հենվել գետնին։

Մորդվացու շորեր հագած մարդը մատով դանդաղ սպառնաց նախ կախվածին, հետո ժողովականներին, որ լուռ կանգնել էին բլրակի տակ, հեծյալ ջոկով շրջապատված։

Այն ժամանակ գյուղացիների բազմության մեջ հաղիվ լսելի հառաչեցին.

— Անցած լինի, աստված... Դե, Ֆյոդորը, մեկ է, հաշմանդամ էր։

— Էհ, տղաս։ Ինչ պտուղներ կան մեզ մոտ։ Բալ՝ ինչքան ասես։ Սալոր կա, էնքան, որ իսկի խոզերն էլ չեն ուտում։ Իսկ մարգերը, մարգերը, տղաս, կարմիր են մորուց, մորին էլ գիտե՞ս, ըհը՞, բռունցքիս չափ։ Էլ Վիխտորիա կա, էլ վաղահաս խնձոր, ինչ ասես. էհ։ Իսկ էդ խնձորենիները, ամբողջ ձմեռն ուտում ենք, թթու ենք դնում, չորացնում, ոչ մի կերպ չի պրծնում, էնքան շատ է։ Մեր շուկան...

Այո՛, այո՛, Լեպենդին։ Այդ ամենից մինչև հիմա էլ ինչքան ասես կա Ստարիյե Ռուչյիում...

Ամենասարսափելի բանն է կանգ առնել որևէ դեմքի վրա, տեսնել օտար աչքեր։ Ամենասարսափելի բանն է հանկարծ զգալ, որ ամբոխը կազմված է իրար չնմանվող բազմաթիվ մարդկանցից և որ այդ մարդկանցից յուրաքանչյուրը ուրիշի մտքի անհաշտ թշնամին է, ուրիշի խոսքն ատող։ Այդպես՝ կնշանակի խայտառակվել։

Պետք է նայել միայն ուրիշի գլուխներից վեր, լսել միայն սեփական խոսքերը, և ոչ թե հիանալ այդ խոսքերով, այլ դրանք նետել կատաղությամբ, որպեսզի մտքին չխանգարեն։ Այդպես՝ կնշանակի հաղթանակ։

Ահա ինչպես հիմա, միայնակ, փակ սենյակում — հաղթանակ է։ Անդրեյը գտավ այն բոլոր բառերը, որ պետք էին տանջահար զինվորներին կրկին ի դեն կոչելու։ Անդրեյը կազմեց իր ճառը։ Ուսումնասիրեց այն։ Նա կշռեց յուրաքանչյուր դադարի ուժը։ Նա գիտե որտեղ և ինչպես պետք է ձեռքը բարձրացնի, որտեղ կանգ առնի և որտեղ ազատություն տա անզուսպ խոսքերին։ Անդրեյը պատրաստ է։

Սակայն ճամբարի նեղլիկ բարաքում ոչ թե ամբոխ է, այլ բազմաթիվ մարդիկ։ Ամեն մեկն իր աչքերն ունի, և այդ աչքերի վրա մոայլ կախված են խունացած, գնդակներից ծակծկված անհովար գլխարկները։ Աչքերը կասկածոտ են, աչքերը հոգնած են և դատարկ։ Ի՞նչ է թաքնված այդ դատարկության ետևը։ Բլինդաժների ցուրտ խավարը և հոսպիտալների խեղդուկ քաղցրահոտը, քրքրված մսից դուրս ցցված սպիտակ ոսկորները, փշալարից կաթկթող արյունը և խրամատների մգլած խոնավությունը։ Ինչո՞վ կղարմացնես այդպիսի աչքերը։ Նրանք տեսել են ամեն ինչ, դիտեն ամեն ինչ, նրանց ոչինչ պետք չէ, նրանց համար անսահման դատարկ է այս աշխարհը։ Բլինդաժների, խրամատների և հոսպիտալների աշխարհը դեռևս այնպիսի բառեր չի հորինել, որոնք լցնեին այս աչքերի դատարկությունը, և այս աշխարհում ոչ մի բան չի վերացնի արյունոտ քամիներից հողմահարված այս դեմքերի անշարժությունը։

Ահա նրանք խմբվել են ցածր, նեղլիկ բարաքում՝ ամբացած, պատերազմի հաստոցի վրա տաշված դեմքեր։ Հարյուրավոր տարբեր տրամաչափի ծխամորճներ են խրված նրանց բերաններում, և դեղնավուն, գորշ, կապտավուն քուլաները, պոկվելով դեմքերից, թանձրացնում են անհովար գլխարկների վրա կախված ծխածածկույթը։ Այդ ծածկույթը կարծես գոյացած լիներ այրվող բալենու տերևից, և թվում էր, թե մոտերքում այգիներ են այրվում։

Գերիները թափ են տալիս իրենց ծխամորճները և ծուլորեն ճանապարհ բացում Անդրեյի համար։ Նա շտապում է հասնել նստարանին, որտեղից Կուրտը հայտարարեց, թե պետք է ռուս մարդ խոսի։

Պետք է ռո՞ւս խոսի։ Միևնույն չէ՞ արդյոք։ Թող խոսի։ Երևի պիտի շաղակրատի հեղափոխության և ժողովուրդների եղբայրության մասին։ Գրողը տանի, եղբայրություն։ Տիֆի ոջիլներից չեն կարողանում ազատվել, իսկ արդեն կես տարի է ամեն օր խոստանում են հայրենիք ուղարկել։ Ի դեպ, թող խոսի։ Կարելի է լսել։ Երբեմն ռուսներն այնպիսի հիմարություն են դուրս տալիս, որ ծիծաղելի է։ Իսկ ծիծաղելու առիթ հազվադեպ է լինում, պետք է գնահատել։ Թո՛ղ խոսի։

Այդ խոսքերն են այն ծուռ զինվորի մտքին, որ՝ կանգնած է ուղիղ Անդրեյի դիմաց։ Նրա դեմքը բրոնզագույն է, և առողջ աչքի ծանր կոպը մեկ դանդաղ իջնում է, մեկ էլ շտապով վեր թռչում, կարծես ուզում է աչքով անել և ամեն անգամ վարանում է։

Միայն թե ճառիդ սկիզբը չմոռանաս, Անդրեյ, միայն թե չտեսնես ուրիշի աչքը, որն ահա աչքով կանի և կհիշեցնի, որ իր դատարկության ետևն են բլինդաժներն ու հոսպիտալները, խրամատներն ու փշալարերը։ Իսկ ի՞նչ է Անդրեյի վախով լցված աչքերի ետևը։ Նա պետք է կոչ անի պատերազմել։ Իսկ ինքը տեսե՞լ է գոնե մի բլինդաժ։ Պատված ծնկով պառկե՞լ է հոսպիտալի մահճակալին։ Գոնե մի գիշեր քնե՞լ է խրամատում։ Գուցե նա մկրատով արգելափակոցնե՞ր էր կտրում, մինչ իրենց գլխին արճիճ էին թափում։ Նա՞ պետք է կոչ անի պատերազմի։

Եվ ահա սկսված բարաքում, ծխածածկույթի տակ, որից այրված տերևի հոտ էր փչում, լսվում է խրախուսիչ մի ձայն.

— Լռեցեք, սատանեք։ Չի լսվում, թե ռուսն ինչ է ասում...

Կարծես զինվորները ծիծաղո՞ւմ են։ Սա ի՞նչ է։ Մեկը Անդրեյի ոտքն է քաշում։ Մի՞թե նա վաղուց է բարձրացել նստարանին։ Ինչպես է սկսվում լավ սովորած ճառը։ Բրոն-

զարդարուն դեմքով զինվորը կարծես աչքով արեց իր դատարկ աչքով։ Նա ի՞նչ է ծամում։ Թխվա՞ծք է, ինչ է։ Ավստրիական թխվածք։

— Ավստրիական թխվածք,— կամացուկ ասում է Անդրեյը։

— Համեղ բան է,— արձագանքում է մի զինվոր։

Եվ կրկին ծիծաղ։ Ծիծաղելու առիթ հազվադեպ է լինում, պետք է գնահատել։

— Ավստրիական թխվածք,— ավելի բարձր ասում է Անդրեյը։

Կուրտն արագ և խեղդված ձայնով մի բան է ասում։ Անդրեյը կրծքով մեկ ծուխ է ներքաշում. ծածկույթը տարածվել է նրա գլխին հավասար. նստարանին կանգնած՝ նա այն պահում է, ինչպես սարի կատարը՝ ամպը։

— Ընկերներ, նորերս մեզ բաժանեցին խորհրդում կուտակված ծանրոցները, քանի որ հնարավոր չէր եղել գտնել այն գերիներին, որոնց համար ուղարկված էին։ Այդպիսի ծանրոցներ ամենից շատ Ավստրիայից էին ստացվել։ Հիմա հիշեցի այդ, որովհետև մի ընկեր ավստրիական թխվածք էր ծամում։ Ավստրիացիները թխվածքի իսկական վարպետներ են։

— Ճիշտն ասած, մեզ մոտ՝ Սաքսոնիայում էլ...— սկսեց մի զինվոր։

— Զայնդ կտրիր, սուրճի մրուր,— խորհուրդ տվեց նրան մի ուրիշը։

— Ես հիշեցի ավստրիական մի թխվածքի պատմություն և ուզում եմ ձեզ պատմել։ Այստեղի խորհրդում մի քանի գերիներ էին աշխատում։ Հանգստի ժամին նրանք իրենց համար սուրճ էին եփել։ Պահեստից նրանց տվել էին մի ծանրոց, որ հասցեագրված էր ոմն Շմիդտի։ Զինվորներն այն կիսել էին իրար մեջ։ Եվ ահա գերիներից մեկին այնպիսի չոր թխվածք էր բաժին հասել, որ նա քիչ մնաց ատամները կոտրեր։ Թխվածքը փշրվեց, բայց զինվորը չկարողացավ կրծել։ Այն ժամանակ նա թխվածքը թրջեց սուրճի մեջ և խմորի մեջ հայտնաբերվեց երկու թիթեղիկներից սարքված մեդալիոնի նման մի կլոր բան։ Զինվորը դանակով բացեց մեդալիոնը և մի նամակ գտավ։ Ես այդ նամակը պահել եմ։

Ահա այն, ինչպես որ եղել էր, թիթեղյա մեդալիոնի մեջ։ օրը մի փոքր ժանգոտել է։ Ես ձեզ կկարդամ այդ նամակը։ Ահա։

Սիրելի Գուստավ.

Վեց ամիս է արդեն քեզնից ոչ մի լուր չկա, և Լիզբեթն ասում է, որ կարող է պատահել դու արդեն կենդանի չես։ Բայց ես չեմ ուզում դրան հավատալ։ Գուստավ, չէ՞ որ առանց քեզ ես չեմ կարող ապրել։ Անցյալ շաբաթ Հայնրիխ Մեներտը վերադարձավ գերությունից, նրա թևը մինչև ուսը կտրել էին, և նա պատմում էր, որ Սիբիրում իսկի էլ այնքան սարսափելի չէ, որ՝ ամռանը նույնիսկ շոգ է և որ Ռուսաստանում դեռ շատ հաց կա։ Նա ասում է, թե լավ է, որ դու Ռուսաստան ես ընկել, որովհետև գերությունը քեզ կպահի մեզ համար, իսկ ռազմաճակատում բանն ավելի վատ կվերջանար։ Ես աղոթում եմ միայն աստծուն, որ պատերազմը շուտ վերջանա, որովհետև շատ ծանր է։ Սիրելի Գուստավ։ Ես շարունակ մտածում եմ, թե մեր գյուղակն ինչպես կերևա աշքիդ, երբ վերադառնաս։ Զրաղացպան Թոմասի ավագ որդին սպանված է, իսկ կրտսերը՝ Պաուլը, ռազմաճակատից կուրացած է վերադարձել, և Թոմասն այլևս չի աշխատում, այնպես որ, մենք Լյուկենդորֆ ենք տանում աղալու։ Փառք աստծո, դա հիմա շատ հազվադեպ ենք անում, թե չէ մեր Գորշուկը զատկից առաջ սատկեց, և հիմա ամեն բանի համար ստիպված ենք ձի վարձել։ Այս գարնանը Գորշուկի պատճառով մենք չցանեցինք, մեկ էլ՝ որովհետև հայրիկը անկողնուց վեր չէր կենում։ Այսօր հոգիների օրն է, իսկ երեկ՝ հոգեգալստյան տոնին, պատարագի ժամանակ մորաքույր Աննան խելագարվեց։ Դրանից առաջ նրա նկարը տարել էին մեր թերթում, այն առիթով, որ նրա վեցերորդ որդուն՝ Հանսին, նույնպես սպանել էին ռազմաճակատում, ինչպես մյուս հինգին, իսկ նա էլ հենց վեց տղա ուներ, որի մասին ես քեզ մի երկու անգամ գրել եմ, չգիտեմ ստացե՞լ ես թե ոչ։ Նա խելագարվեց հենց այն պահին, երբ պատերն ասում էր, որ Աննան հայրենիքի զոհասեղանին է դրել այն ամենը, ինչ աստված պարգևել էր նրան, ու ամբողջ գյուղը լալիս էր։ Ներիր ինձ, սիրելի Գուստավ, ես էլ էի լալիս քո

և քո շատ սիրելի եղբոր՝ Ավգուստի համար, որի մասին քեզ գրել էի, թե կրծքից վիրավոր է, և հայրիկի համար, որն այնպես էլ չապրեց մինչև քո վերադարձը։ Լիզբեթն ասում է...

Սակայն ընթերցանության այս տեղում բարաքի լռության մեջ Անդրեյին հասավ դողդոջ մի ձայն.

— Ուրեմն հորս թաղե՞լ են։

Անդրեյը լռեց։

— Գուցե Ավգո՞ստն էլ է մեռել,— ավելի խիստ և ավելի բարձր դողաց ձայնը։

Զգված երկար մատներով մի ձեռք գերիների գլուխների վրայից երկարեց դեպի Անդրեյը։

— Նամակն ինձ տվեք։ Չէ՞ որ դա Էլզան է գրում։

— Այո, Էլզան է գրում,— ասաց Անդրեյը։— Ահա այստեղ ստորագրված է՝ Էլզա։

Ծխամորճների ծուխը ավելի թանձր ու արագ սկսեց բարձրանալ անհովար գլխարկներից դեպի ծխածածկույթը, տանիքի տակ։ Գերիները համախմբվեցին նստարանի շուրջ՝ հանկարծ միանալով և դառնալով անդեմ, սպասողական ամբոխ։

Եվ այն ժամանակ մի սառը բան կարծես բռնկվեց Անդրեյի մեջքին՝ ծոծրակից մինչև կրունկները, և նա հիշեց իր սերտած ճառը, հիշեց նոր ձևով, այնպես, ինչպես երբեք չէր մտածել։ Եվ չտեսնելով ոչ դեմքերը, ոչ դժբախտ աչքերի ետևի դատարկությունը, ոչ ծխածածկույթը և ոչ էլ բարաքը, միայն ողողվելով չգիտես որտեղից բռնկված անհասկանալի ցրտով, Անդրեյը՝ դաժան կատաղությամբ լցված դեպի իր խոնքերը, որոնք խանգարում էին մտքին, բղավում էր գլուխների և գնդակներից ծակծկված անհովար գլխարկների վրայով, բղավում այն մասին, թե ինչ պետք է անել, որպեսզի կորած նամակները զուր չփնտրեն աշխարհում կորսված Շմիդտներին...

Հետո Անդրեյն ու Կուրտը խաղաղ մթնշաղին կանգնել էին բարաքի բակում, սպասելով գերիներին։ Ու երբ բոլորովին մթնեց, բարաքի դուռը բացվեց։ Անդրեյին մոտեցավ զինվորը և նրա երեսին փչեց բալենու տերևի հոտը։ Ծխամորճը լուսավորեց նրա բրոնզագույն միաչքանի գլուխը։ Զինվորը կարճ ասաց.

— Կարող եք հայտնել ձեր խորհրդին. գերիները վճռեցին պաշտպանել բոլշևիկներին։

Կյանքում առաջին անգամ

Ինքնաեռը սեղանից չէր իջնում։ Խողովակը մի երկար արմունկով մտցրել էին բուխարու մեջ, ածխի զամբյուղը դրված էր կպչուն, կեղտոտ մատնահետքերով ծածկված աղյուսե կողքին։ Թեյը հերթով եփում էին պանդոկից վերցված երկու թեյամանների մեջ ու խմում թունդ, սև, ինչպես յոդը։ Վերջանում էր երկրորդ գիշերը՝ անքուն և առանց հանգստի։

Գոլոսովի կոպերն ուռել էին, բիբերը կատվի բիբերի նման լայնացել, սակայն խամրել էին, հայացքն անհնազանդ էր ու թոշնած։ Նա գլուխը բռնել էր ձեռքերով, արմունկները հենած սեղանին, և պղտոր հայացքը սևեռել Պոկիսենին։

— Ես կգնամ,— խռպոտ ասաց նա։

Պոկիսենը գունատ էր, քունքերի կապույտ երակները տագնապալի խփում էին, նա դժվարությամբ էր հանգիստ խոսում.

— Քաղաքն ու գավառը քո վզին են։ Զինկոմն այդ գործերից բան չի հասկանում։ Թերթը քեզ վրա է, ամեն ինչ քեզ վրա է։ Ե՞ս կգնամ։

— Ո՞չ, ե՞ս կգնամ։

— Գիտեմ, որ ավանակ ես։ Սովորական ժամանակ դա լավ հատկություն է։ Հիմա պետք է հաշվով շարժվել։ Կգնամ ես։

— Դա դեռ կտեսնենք։

— Կտեսնենք։

— Ե՞ս եմ գնում։

— Ո՞չ, ե՞ս եմ գնում։

Պղտոր հայացքը մոտենում է ոսկե շրջանակով հաստ ապակիներով ակնոցին։ Հաստ ապակիների միջից սառը փայլում են սպիտակ աչքերը։ Դեմքերը մոտենում են դանդաղ և

անսասան, դեմքերը համառ են և մռայլ, դեմքերը ամուր են քարի նման։

— Ե՛ս։

— Ոչ, ե՛ս։

— Ինչ եք... ոչխարների նման,— ֆսֆսացրեց զինկոմը՝ սենյակ ընկնելով։

Նա առաջվա պես փնչացնում էր, հևում և քրտինքից փայլփլում, խոսում էր շնչահեղձ լինելով, երկար ժամանակ բերանով որսում օդը։ Նա մեկընդմիշտ հոգնել էր կյանքում և այլևս ոչ մի նոր հոգնածություն, ոչ մի աշխատանք և ոչ էլ անքուն գիշերները նրա տեսքը չէին կարող փոխել։

— Մի ժամից ջոկը պատրաստ կլինի երթի,— ասաց նա՝ թեյ լցնելով։— Համահավաքի վաշտը նրան սպասում է Ստարիյե Ռուչյիի մոտ։ Առաջադրանքն է՝ առավոտյան ժամը տասին գրավել Սանշինոն։

Նա թեյից մի կում արեց և շրջվեց։

Գոլոսովն ու Պոկիսենը չէին շարժվում։ Արյունով լցված նրանց ճակատները գրեթե իրար էին կպչում, շրթունքներն անձայն ցնցվում էին, չոված աչքերի մեջ էր ընկել լամպի դեղին լույսը։

— Փո՛ւհ, փո՛ւհ, ս-սատանա։ Ձեզ ի՞նչ է պատահել,— փնչացրեց զինկոմը։

Այն ժամանակ Գոլոսովն ու Պոկիսենը նետվեցին նրա կողմն ու, իրար հերթ չտալով, բղավեցին.

— Սրա գլուխը մտցրու, խնդրեմ, որ քաղաքում իմ ներկայությունը բոլորովին էլ անհրաժեշտ չէ։

— Հիմարություն է, դատարկ բան։ Այսպիսի ժամանակ թողնել հատուկ բաժինը...

— Սպասիր։

— Եթե խոսքը վերաբերեր...

— Սպասիր, ես ասում եմ, որ...

Զինկոմը ձեռքերը թափահարեց։

— Բավական է։ Հասկացա, հասկացա։

Նա մի կողմ քաշվեց, նստեց բազկաթոռին և գրպանից հանեց ծխախոտատուփը։

— Ձեր վեճով զբաղվելուց առաջ,— ասաց նա ֆսֆսացնելով և ծխախոտը ծխելով,— ընկերներ, ես ձեզ պետք է

հաղորդեմ մի որոշում։ Ըստ իմ զեկույցի, կոմիտեն ջոկի կոմիսար է նշանակել ընկեր Պոկիսենին...

Գոլոսովը ետ թռավ դեպի պատուհանը և մեջքը դարձրեց զինկոմին։ Պոկիսենն ուղղեց ակնոցը։

— Ասում ես՝ ջոկը մի ժամի՞ց է դուրս գալու։

— Գրողը տանի,— բղավեց Գոլոսովն ու նետվեց դեպի դուռը։— Ես տպարանում կլինեմ։

Կրունկները չխկացնելով ընդուն հատակին, նա թափով քաշեց դռան բռնակն ու դուռը բացեց։ Հետո մի պահ կանգ առավ, կտրուկ շրջվեց և մոտեցավ Պոկիսենին։

— Հաջողություն, Պոկիսեն,— ասաց նա։

— Ցտեսություն, Սյոմա։

Նրանք երկու անգամ ամուր սեղմեցին միմյանց ձեռք, և Գոլոսովը դուրս թռավ սենյակից։

Նախասենյակում դիպավ դայակին։ Սա գնում էր մոմը բռնած, և թրթռուն լույսը դողդողում էր նրա կնճռոտ այտերին։ Դայակը բռնեց Գոլոսովի թևքից և ծերունական շշունջով հարցրեց.

— Ինքնաեռը եփո՞ւմ է։

— Ի՞նչ է որ։

— Ուզում եմ ասել՝ դու շո՞ւտ կվերադառնաս, տաքացնեմ, թե ոչ։

— Է՜հ,— ձեռքը թափ տվեց Գոլոսովը։

Դայակը շտապով ձգվեց դեպի նա և հին դավադիրի նման, որ տեղյակ է բոլոր գաղտնիքներին, խստությամբ հարցրեց.

— Գլուխ կհանե՞ք, հը՞։

Այն ժամանակ Գոլոսովի դեմքին ջերմ ժպիտ երևաց, և նա այն ծածկեց ձեռքի ափով՝ իր սովորական ամաչկոտ շարժումով։

— Գլուխ կհանենք, դայակ,— ասաց նա և բակ վազեց։

Լուսաբացին, լամպերից ծխով լցված տպարանում ընկեր Գոլոսովը ավարտում էր «Բանվորներին, գյուղացիներին և Սեմիդոլի բոլոր աղնիվ քաղաքացիներին» ուղղված հեղեղյակի կոչի շարվածքի ընթերցումը։

Ճակատից կախ ընկած մազերն ավելի ու ավելի էին թափվում թղթի վրա։ Մատիտը դողում էր նավթի հոտ արձակ

ձակուղ հասաս, ծուռ տառերի շարվածքի վրա։ Կոշի վերջին բառերն այսպես էին շարված.

Կե՞ցցե բանվորների և գյուղացիների հաղթանակը ամբողջ աշխարհում։

Գոլոսովը մատիտի բթացած ծայրը ուղղեց «ծ» տառին, սակայն երկար ուղիղ մազերը ծածկեցին հանկարծ իրար խառնված տողերը, և գլուխն ընկավ ձեռքին։ Գոլոսովը մի բան մոթմոթաց և գլուխը գցեց սեղանին։

Մետրանպաժը զգուշությամբ շարվածքը դուրս քաշեց գործկոմի նախագահի փրչոտ, անշարժ գլխի տակից։

Իրարանցման երրորդ օրը, երկուշաբթի, անձրևոտ մթնշաղին Սեմիդոլից վերադարձան ռազմական օդաչու Շչեպովն ու դիտորդը։ Նրանք եկան ոտքով, թրջված, պատռտված շորերով։

— «Նյուպորն» ո՞ւր է,— մի կերպ արտաբերեց զինկոմը, հենց որ սրանք երևացին խմբագրությունում։

Շչեպովը փլվեց աթոռին, սկսեց սապոգներն արձակել։

— Ես ասում էի, որ հետախուզություն չի կարելի սկսել, առանց երկրորդ փորձնական թռիչքի։ Այդ հին կրկնակոշիկը...

— «Նյուպորը», «Նյուպորը»,— շնչահեղձ էր լինում զինկոմը։— Դուք այն այրեցի՞ք։

— Մտքովս էլ չանցավ։

— Խելագարվե՞լ եք, ինչ է, գրողը տանի...

— Ընդունեցեք զեկույցը։

— Խոսեցեք, գրողը...

Այն ժամանակ դիտորդը ուղղելով աջ ձեռքի կեղտոտ վիրակապը, ձախով ծոցից հանեց տեղանքի գծագիրն ու դրեց սեղանին։ Զինկոմը փնչացնելով կռացավ ճմրթված թղթի վրա։

Հետախուզությունը պարզել էր, որ հակառակորդը կուտակվել է Սանշինո գյուղի շրջանում, ոչ անտառոտ տեղանքում։ Հակառակորդի ուժը բաղկացած էր ոչ մեծ հետիոտն ջոկերից, որոնց թիվը երեք-չորս վաշտից ավելի չէր։ Պահակետերը հրաձիգների ընդմիջվող շղթայի ձևով ձգվում էին ճանապարհի երկայնքով մինչև Ռուչյիի այգիները։ Ստա-

ռիյե Ռուչյիի շրջանում զորամասերի դիրքերը հետախուզությունը չէր կարողացել որոշել։ Ըստ դիտորդի ենթադրության, այգիներում թշնամիներ չկային, քանի որ Սանշինոն ընկած էր տեղանքի վրա իշխող բարձունքի վրա։ Պարզել էին, որ անմիջապես դրա ետևը գտնվում է թշնամու գումակը։ Հեռավոր թիկունքի հետ թշնամին կապ չուներ, և Սանշինոյից հետո՝ տասնհինգ-քսան վերստ հեռավորությամբ, ոչ ճանապարհին, ոչ էլ նրան հարող արահետների վրա ոչ մի շարժում չէր նկատվում։ Հակառակորդը հրետանի չուներ, և ամբողջ գումակը կազմված էր պարենային սայլերից։ Հակառակորդի թևերը պաշտպանված չեն։ Թռիչքի ժամանակ հետախուզության համար նպաստավոր լուսավորություն էր։ Հետախուզությունը կատարվել է չորս հարյուր մետր բարձրությունից, կիրակի օրը, ցերեկվա ժամը երկուսի մոտերքը։

— Այսինքն, հիմա մեզ համար ոչ մի արժեք չունի,— ասաց Գոլոսովը։

Զինկոմը փնչացրեց.

— Ընկեր, դուք այստեղ հազար ու մի ենթադրություններ եք անում Ռուչյիի կապակցությամբ։ Դա մեր գործը չէ։ Մնացածում զեկույցը չի հակասում այլ ճանապարհներով ստացված տվյալներին։ Դեհ, հետո՞։

— Կզեկուցի օդաչուն։

— Ա՞յդ է բոլորը,— բացականչեց Գոլոսովը։

— Ոչ բոլորը,— ասաց Շչեպովը, արձակելով կաշվե գոտին և բաճկոնը։

Նա շապիկի տակից հանեց չորս տակ ծալած թղթեր, նետեց սեղանին, սակայն իսկույն էլ ծածկեց ափով։

— Սպասեցեք, ընկերներ, մի րոպե համբերեք։ Ուսումնասիրելով հակառակորդի դիրքավորումը, դիտորդն ինձ նշան արեց վերցնել ութ հարյուր մետր բարձրություն և ընթանալ ճանապարհի ուղղությամբ։ Մոտավորապես քսան կիլոմետր անցնելուց հետո շարժիչը պայթեց։ Ես բենզինը փակեցի և սկսեցի սահասավառնել։ Մի րոպեից փորձեցի բենզինը բացել, և շարժիչը միացրի։ Չորս պայթյուն, մեկը մյուսի ետևից։ Բենզինը փակեցի և սկսեցի իջնել, ուղղությունը բռնելով ճանապարհից դեպի աջ։ Սավառնելով իջա մի բացատում, որ ճանապարհից ծածկված է մատղաշ կաղ-

նուտով։ Շարժիչը դարձրի հակառակ կողմը, որպեսզի ստուգեմ սեղմումը։ Երկու գլանի մեջ բաց թողնող փականներ բանի պետք չէին։ Բանն այն է, որ փորձնական թռիչքը հենց պարզել էր, որ...

Գոլոսովը դեմքը ձեռքերով ծածկած հռհռում էր։ Նա ցնցվում էր ծիծաղից, ինչպես անտանելի ցավի նոպաներից, և նրա լապշայի նման իրար կպած մազերը ցնցվում էին ու խփվում ձեռքերին։

Շչեպովը շտկվեց և բղավեց.

— Ի՞նչ է պատահել, Սյոմկա։ Ես գործի մասին եմ խոսում...

— Գործի մասին... հա-հա...գործի մասին, որից շուրջ հարյուր վերստի վրա քեզնից բացի ոչ ոք բան չի հասկանում։ Վթարի մեջ պետք է պարզություն լինի, հը՞։ Հա-հա...

— Իսկ «Նյուպորը», «Նյուպորն» ի՞նչ եղավ,— կրկին անհագստացավ զինկոմը։

— Այսպիսի վերաբերմունքի դեպքում ես չեմ կարող, ընկեր...

— Ոչինչ, մի զայրացեք, Շչեպով,— ասես ուժասպառվելով, հառաչեց զինկոմը։

Շչեպովը մոթմոթաց.

— Ծաղրուծանակ է։ Չգիտես ինչ մոգոնեց Կլավդիա Վասիլևնայի գլխին, հիմա էլ...

— Հա-հա։ Հիմա՛ր։ Պարզ խոսիր։

— Մի խոսքով... Դեհ, մի խոսքով հո ես չէի կարող պահեստային փականներ ստեղծել։ Շարժիչից հանեցի այնպիսի մի մաս, էհ, գրողը տանի, այնպիսի մաս, առանց որի շարժիչն ընդհանրապես,— մի խոսքով մենք ապարատը թողեցինք վայրէջքի տեղում։

— Որպեսզի թշնամին այն այրի՞։

— Թշնամին կարող է և չայրել, որովհետև այնտեղ ոչ մի թշնամի չկա։ Իսկ եթե մենք այրեինք, ապա մեզ մոտ...

— Հետո, հետո՞։

— Մենք շրջանցեցինք, անտառով գնացինք Լեբեժայկա։ Բանդան շարաթ գիշերն այնտեղ էր անցկացրել, բռնագրավել էր ձիերն ու շարժվել դեպի Սանշինո։ Գյուղացիները թաքնվել էին խրճիթներում։ Մարզային գործկոմը փակ էր

և դռանը մի թուղթ էր փակցված, ստորագրված... Ահա, նայեցեք։

Շչեպովը բացեց թուղթը։

Կոչը գրված էր ձեռքով, վատ, հավանաբար ինքնաշեն թանաքով, տպագիր տառերով։

Ռուս գյուղացինե՛ր.

Մորդվական ժողովուրդը, որ դարեր շարունակ տառապել է ցարական սատրապների լծի տակ, ապստամբել է հանուն իր անկախության և ազատության։ Ռուսական հեղափոխությունը, որ ազդարարեց ճնշված ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, փաստորեն որոգայթ էր դյուրահավատ հասարակ մարդկանց համար։ Հեղափոխությունից հետո էլ, ինչպես մինչև այն, պետական պաշտոնյաները զինվորների օգնությամբ ստրկական ենթակայության վիճակում են պահում այլազգի ցեղերին։

Մորդվացիների հացը խլում են, ուժով զորահավաք են անում, բռնագրավում են անասուները, հաշվի չառնելով ոչ ժողովրդի կամքը, ոչ էլ այն աղետալի վիճակը, որ գոյություն ունի մորդվական գյուղերում։

Ռուս գյուղացինե՛ր։ Բոլորդ գիտեք, թե որքան խաղաղ ու աշխատասեր հարևան է մորդվական ժողովուրդը։ Այն անմռունչ դիմացել է ցարական դրածոների բոլոր ծաղր ու անարգանքին, գիտակցելով, որ ռուս մեծ գյուղացիությունը նույնպես իր հետ միասին դիմանում է ցարական լծին։ Սակայն մորդվական ժողովրդի համբերությունը սպառվել է։ Նա հասկացել է, որ եթե ազատությունն ուժով չխլի կեղեքիչներից, ապա իր վիճակը սոսկալի կլինի։ Եվ ժողովուրդն ապստամբել է։

Մորդվական ժողովուրդը տեսնում է, որ ռուս մեծ գյուղացիությունն էլ խաբված է հեղափոխականների կողմից այնպես, ինչպես ռուսական արյունարբու ցարի տիրապետության տակ գտնվող մյուս բոլոր ժողովուրդները։ Մորդվական ժողովուրդն ուրախությամբ կօգներ իր եղբայրներին՝ ռուս մեծ գյուղացիությանը, սակայն նա թույլ է, և ինքը կարիք ունի օգնության։ Նա կոչ է անում ռուս գյուղացիներին եղբայրաբար միասին ապստամբել ճնշման դեմ և հավատում

է, որ համատեղ ուժերով դժվար չի լինի հողագործի և աշխատավորի ուսերից դեն նետել բոլշևիկյան լուծը։

Մորդվական ժողովուրդը պայքարում է իր բախտն ազատ տնօրինելու իրավունքի համար։ Նա չի խառնվում ռուս մեծ ժողովրդի գործերին, սակայն զենքի ուժով պահանջում է, որպեսզի բոլշևիկյան իշխանությունն ընդունի նրա իրավունքը հողի, հավատի, անկախության և մյուս ազատ ժողովուրդների հետ իրավահավասարության հարցում։ Մորդվական ժողովրդի ազատագրությանն օգնում են անշահախնդիր բարեկամները, որոնք կազմել են մորդվական աշխարհազոր՝ բոլշևիկների դեմ պայքարի համար։

Ռուս գյուղացինե՛ր։ Օգնելով մորդվական աշխարհազորին, դուք օգնում եք ինքներդ ձեզ, քանի որ նա պայքարում է ձեզ ճնշողների դեմ։

Մորդվական ժողովուրդը ձեզ կոչ է անում՝ համախմբվել իր դրոշի ներքո, որը խաղաղություն է բերում բարեկամներին և մահ՝ նրա թշնամիներին։

Մորդվական ժողովրդի ազատության բարեկամ, աշխարհազորի հրամանատար

մարկգրաֆ ֆոն ցուր Մյուլեն-Շենաու։

— Սրիկա՛,— ֆշշացրեց զինկոմը, կարծես շոգից իրեն հով անելով թերթով։

Գոլոսովը մազերը խառնշտորեց, հետո աչքերը կկոցեց, կծկվեց, ասես պատրաստվելով թռիչքի։

— Այս թղթերը ամեն մի հետախուզությունից թանկ են։ Հիմա մենք նշանակետ ունենք։

— Լեբեժայկայից մենք գնացինք...— ուզեց շարունակել Շչեպովը, սակայն Գոլոսովը նրան թույլ չտվեց խոսել։

— Դատարկ բան է։ Ամեն ինչ պարզ է։ Մնացածը՝ ռազմական օդաչուի արկածները քաղաքացիական պատերազմում։ Դու մեզ այդ մասին մի օր կպատմես, երբ նստենք սունկ և թթու անուշ անելու...

Նա ափով ծածկեց ժպիտը, հայացքը հառեց Շչեպովին և անսպասելիորեն հոգատար լրջությամբ հարցրեց.

— Առո՞ղջ ես։ Ինչո՞ւ ես դողում։

— Սառել եմ,— ասաց նա։— Ուզում էի հետդ խոսել այն...

— Գիտեմ,— Գոլոսովը նրա խոսքը կտրեց։

Սեղանից մի թղթի կտոր վերցրեց ու մատիտով մի քանի խոսք գրեց։

— Սրա՞ մասին,— հարցրեց նա, թուղթը տալով Շչեպովին։

Շչեպովը նայեց, խնամքով այն ծալեց ու դրեց գրպանը։

— Այո։ Համաձայնիր, որ դա հիմարություն էր։

— Դատարկ բա՛ն է։ Գնանք, քեզ բան տամ տաքանաս,— ասաց Գոլոսովը։

Նրա շուրթերին արդեն ժպիտը պիտի ցնցվեր, սակայն ինքն այն աղավաղեց համառ ծամածռությամբ, բռնեց Շչեպովի և դիտորդի թևքերից ու քարշ տվեց դռան մոտ։

Հազիվ էին մոտեցել դռանը, երբ այն բացվեց։ Ցեխոտված լրաբերը նրանց ընդառաջ եկավ։

— Ի՞նչ է պատահել, ընկեր,— հարցրեց Գոլոսովը, մի տեսակ վրա տալով։

— Համահավաք վաշտի կոմիսար ընկեր Պոկիսենը գրոհի ժամանակ... Սանշինոյի վրա գրոհելիս...

— Հը՞։

— Ընկեր Պոկիսենը սպանվեց։

Շչեպովն զգաց, ինչպես իր թևքից, որից բռնած նրան քարշ էր տալիս Գոլոսովը, մի բութ ծանրություն կախ ընկավ։

Այդ ժամին ընկեր Պոկիսենի կինը նստել էր սայլակի մոտ, որի մեջ պառկած էր փաթաթված փոքրիկ Օտտին։

Օտտին երկար ժամանակ չէր քնում և նայում էր մորը իր հսկայական կաթնագույն աչքերով։

Գուցե նա հասկանո՞ւմ էր, թե մայրն ինչ է երգում։

Մոր դեմքը քարացած էր, սառած, ծնոտներն ու այտոսկրերը տափակ, և միայն երկար բերանն էր շարժվում, ցույց տալով ամուր, դեղին ատամները։

— Փոքրիկ Օտտի, դու դեռ չգիտես, թե ինչ պարեր են թռչկոտում աղջիկները Խեպո-Յարվիի ափին։ Դու դեռ չես քնել նրանց երգերի տակ, և նրանք դեռ քեզ համար սոճու կոներ չեն բերել, դու դեռ շատ, շատ պստլիկ ես, Օտտի։

— Պստլիկ Օտտի։ Դու այդպես էլ չես տեսնի Խեպո-Յարվի լճի աղջիկներին։ Եվ նրանք քեզ համար երգեր չեն երգի ու

սոճու կոներ չեն բերի, ու դու չես օրորվի նրանց հետ ճոճանակում, երբ մեծանաս, դառնաս մեծ Օտտո։

— Պստլիկ Օտտի։ Դու դեռ չգիտես, որ հայրդ բոլշևիկ է, և որ բոլշևիկներն ավելի լավ է կին ու երեխաներ չունենան, որովհետև նրանց Խեպո-Յարվին հեռու է, և ով դիտե՝ կտեսնե՞ն դա արդյոք նրանց կանայք, կհասնե՞ն դրան նրանց երեխաները։

— Պստլիկ Օտտի, դու դեռ չգիտես, որ մայրդ դժբախտ է, որովհետև քո հայրը պատերազմում է, և որովհետև պատերազմի վերջը չի երևում, ու ոչ ոք չգիտի՝ հայրդ ետ կգա՞ թե ոչ։

— Սակայն, պստլիկ Օտտի, եթե հայրդ պատերազմից ետ չգա, ու եթե մայրդ էլ մեռնի վշտից ու կարիքից ու ոչ ոք այլևս քեզ համար չերգի Խեպո-Յարվիի մասին, խոստացիր ինձ՝ հենց օրորոցիցդ, խոստացիր պստլիկ Օտտի, վրեժխնդիր լինել հորդ և մորդ համար։

— Որովհետև նրանք սիրում էին քեզ, պստլիկ Օտտի, որովհետև նրանք սիրում էին իրենց Խեպո-Յարվին։

— Խոստացիր վրեժխնդիր լինել։

Նա դադարեց երգել ու քարացած դեմքը կախեց սայլակի վրա, սպասելով պատասխանի։

Փոքրիկ Օտտին աչքերը փակեց։

Փոքրիկ Օտտին քնած էր։

Նկուղից, որտեղ նստած էր Սեմիդոլի թատրոնի հերոսուհին, երկու ճանապարհ կար։ Մեկը տանում է դեպի Սեմիդոլի փողոցները, Սեմիդոլի կցաշենքերը, ինքնաեռները, պատկերախորշերն ու ծալովի սրբապատկերները, և Սեմիդոլը նկուղից թվում էր անսահման մի լայնարձակություն, իսկ նրա խրճիթներն իրենց սրբապատկերների դարակով՝ ավետյաց ապաստարան։

Մյուս ճանապարհն անցնում էր բանջարանոցով, այնուհետև ճահճի վրայի ուռենու թփուտներով, ձիթագործարանի մոտով և հետո՝ ցաք ու ցրիվ քուսպերի վրայով, ամայի տեղով դեպի հեղեղատը, իսկ դեպի հեղեղատ ավելի շատ մարդկային ոտքեր էին քայլում, քան ետ էին գալիս այնտեղից։

Այդ պահին Կլավդիա Վասիլևնային հանձնեցին մի տոպրակ, մեջը՝ հաց, յուղ, խնձոր, մի կտոր եփած խոզի միս, մի

տասը հատ սալոր։ Այդ նվերը դերասանուհիներն էին հավաքել և չէին մոռացել տոպրակի մեջ դնել մի տուփ ծխախոտ և մի տուփ էլ լուցկի։

Երկու աչք՝ փայլփլուն, աշխույժ, վառվեցին նկուղի մթության մեջ, և տոպրակը ճոռաց տախտակամածին, Կլավդիա Վասիլևնայի ծնկների մոտ։

— Շնորհավորում եմ ձեր ստացածը, քաղաքացուհի։ Ծխախոտ չէի՞ք հյուրասիրի։

Կլավդիա Վասիլևնան լուցկին շոշափեց, շրթացրեց։ Տուփի վրա լուսավորվեց կանաչավուն հետքը, կապտագույն բոցը ֆշշաց ու ոստոստաց լուցկու վրա։

— Ահա, ծխախոտը վերևում է,— ցույց տվեց ժիրաչյանը։

Կրակը դեղնեց, մեծացավ և լուսավորեց դարչնագույն նեղլիկ դեմքը, հետո արագ հանգավ։

— Շնորհակալություն։

Ետևից դուռը փակելով, ժիրաչյան մխիթարելով ծոր տվեց.

— Ոչինչ, քաղաքացուհի դերասանուհի, քիչ մնաց...

Քի՞չ։

Իսկ հետո՞։

Մի՞թե ծնկները կսկսեն դողալ, ինչպես բեմում, երբ երկու փորձից հետո նոր դեր ես կատարում, և մի՞թե ուժ չի ունենա ժպտալու մթության մեջ, ինչպես բեմից, որպեսզի նայեն դեմքին, ոչ թե ծնկներին։ Ի դեպ, Կլավդիա Վասիլևնան բեմեղրից լուսավորված չի լինի, և ոչ ոք չի նկատի, թե որքան անհաստատ են նրա քայլերը։ Գիշերը մութ կլինի, և նա կգնա բանջարանոցով, հետո ուռենուտներով կանցնի ճահիճը, կանցնի ձիթագործարանի մոտով, և հետո՝ ցաք ու ցրիվ քուսպի վրայով և ամայի տեղերով։ Հեղեղատից ոտքերի տակ կսողոսկա ցուրտը, և Կլավդիա Վասիլևնան կդողա հեղեղատի եզրին, ինչպես հիմա նկուղում, ավելի ուժեղ, քան հիմա։

Ո՛չ, ո՛չ։

Մի՞թե քիչ է մնացել։

Քիչ է մնացել մինչ այն պահը, երբ դուռը կբանան, ես մի դուռ, ևս, ու հետո հրացանը ձեռքին պահակի մոտից դուրս կթողնեն դեպի Սեմիդոլի փողոցները, տների և խրճիթների ծուռտիկ շարքերը։ Կլավդիա Վասիլևնան կնետվի այն կողմ, ուր քամին կտանի, գուցե իր փոքրիկ սենյակը՝ պատկերա-

խորշով, գուցե թատրոն, դերասանների մոտ, որոնք չէին մոռացել ծխախոտ և լուցկի ուղարկել, գուցե Շչեպովի մոտ։

Շչեպովը նրան կդիմավորի իր հոգնած ժպիտով, ու նրա աչքերում թախիծ կերևա։ Նա կծիծաղի, լսելով, թե ինչպես Կլավդիա Վասիլևնան դողացել նկուղի խոնավության մեջ, դողացել այն մտքից, որ նշանակետ է լինելու հեղեղատի եզրին։ Նա տասներորդ անգամ կխոսի այն մասին, որ հեղափոխությունից հետո մարդիկ դադարել են սովորական կյանքով ապրելուց, որ նրանք ամեն րոպե պատրաստվում են մահվան և որ հեղափոխության միակ պահանջը հենց այդ է՝ մշտապես պատրաստ լինել մեռնելու հանուն հաղթանակի։ Որ հարկ չկա մտածել հեղափոխության ու ճակատագրի մասին, պետք է միայն պատրաստ լինել մեռնելու, քանի որ մահացածների տեղը կգան կենդանի մարդիկ, հանուն որոնց հաղթում է հեղափոխությունը։ Նա կխոսի այդ մասին, հոգնած կժպտա, և նրա աչքերում կլինի թախիծ, և երբ Կլավդիա Վասիլևնան աղերսող ձայնով կանչի.

— Շչեպո՛վ —

Նա Կլավդիա Վասիլևնայի ուսին կթփթփացնի, ինչպես մի շնիկի, ու կմնա առաջվա պես սառը, ժլատ և տխուր։ Իսկ Կլավդիա Վասիլևնան կսկսի մտածել, որ ինքը՝ Սեմիդոլի թատրոնի հերոսուհին, միայնակ է, ոչ մեկին պետք չէ, և որ Շչեպովը ձանձրացել է նրա աղերսող ձայնից ու մատիտով կեղտոտված աչքերից, որ այդ ամենը խղճուկ է, ստորացուցիչ, ընչին և որ ավելի լավ էր նշանակետ լինել հեղեղատի եզրին։

Որովհետև Կլավդիա Վասիլևնայի ամբողջ կյանքը տոգորված է չսիրված, իրեն ավելորդ զգացող կնոջ վշտով։ Ահա նա երկու օր է սառչում է այս նեխած մթության մեջ, և այն մարդը, որ նրա համար նույնն է, ինչ շան համար տերը, մտքով էլ չի անցկացնում նրան ուրախացնել մի տուփ ծխախոտով ու լուցկիով։ Այդ մարդու համար զզվելի է խղճալ Կլավդիա Վասիլևնային՝ ծիծաղելի, ավելորդ կնոջը, և նա երբեք այդ մարդուց չի զգա նույնիսկ այն տիպ քաղցրությունը, որպիսին է ծծմբային լուցկու քաղցրությունը։

Կրծել այդ լուցկիների փխրուն գլխիկները, կուլ տալ իրար ետևից, ավելի ու ավելի շտապ, որպեսզի հասցնի կուլ տալ

ամբողջ տուփը, քանի դեռ ցավերը չեն սկսվել, քանի դեռ լեզվի տակից դուրս է գալիս և կոկորդը լցվում քաղցրավուն թուքը, քանի դեռ բերանը չի ջղաձգվել և չի անցել այս ողորմելի խղճահարությունը իր նկատմամբ, Շչեպովի նկատմամբ, թատրոնի, Սեմիդոլի նկատմամբ, հանգուցյալ մոր, Ռուսաստանի, ամբողջ աշխարհի նկատմամբ։

Թող այդպես լինի։ Շո՛ւտ, շո՛ւտ։

Եվ երբ ձեռքից ընկավ լուցկու դատարկ տուփը, ու հատակին թափթփվեցին կրծոտված լուցկիները, մի սուր ցավ զգաց այնտեղ, որտեղ Կլավդիա Վասիլևնան չէր սպասում, թե կցավի. ցավն սկսվեց կրծքի տակ, ուսերում, թիակներում, կարծես թույնը տարածվել էր ամբողջ թոքերում։

Եվ իր նկատմամբ զգացած անտանելի խղճահարությունից ու ամբողջ աշխարհի դեմ ինչ-որ ցնծագին ցասումով լցված, Կլավդիա Վասիլևնան նետվեց դեպի բացվող դուռն աղաղակելով.

— Շչե-պով, ես թունա-վոր-վեցի՛։

Շչեպովը նրան գիրկն առավ, բարձրացրեց և վազեց նկուղի կամարների տակով, լապտերի դողդոջ դեղին լույսով լուսավորված։

Նեղ դեմքով, դարչնագույն մարդը, լապտերը բռնած, ժիր-ժիր շարժում էր աչքերը թղթի կտորի վրայով, որը, ստորագրված էր.

Հեղեղյակի նախագահ Գոլոսով։

Կուրտն իր փոքրիկ սենյակի մի անկյունից մյուսն էր վազվզում և մերթ խառնշտորում էր կարճ խուզված մազերը, մերթ ձգում վերնաշապկի օձիքը։ Նրա ձեռքերը ոչ մի վայրկյան չէին հանգստանում, շարժվում էին Անդրեյի առջև, ինչպես փոթորկից երերվող ճյուղեր։

— Հը՞մ։ Նրան հուզել է մեր բարեկամությո՞ւնը։ Նա զգայուն է եղբայրական փոխհարաբերությունների նկատմա՞մբ։ Ի՞նչ։ Ի՞նչ ասաց, երբ քեզ ազատեց։

— Նա հարցրեց. արդյոք ես հասկանո՞ւմ եմ, որ նա իր պարտքը չկատարեց։

— Ուզում էր ասել, որ հանուն ի՞նձ այդպիսի զոհողություն արեց։

— Ինձ թվաց, թե նա իրոք քեզ գնահատում է։

— Հը՛մ։ Գնահատում է։ Գնահատում է։ Քեզ չի՞ թվում, որ շափազանց ներողամտաբար ես նրա մասին խոսում։ Այն մի ժամվա մեջ, որ նրա հետ ես անցկացրել, չես հասցրել հասկանալ, որ նա կեղծ մարդ է։ Քեզ շլացրել է այդ վիժվածքի սենտիմենտալ քա՞յլը։

— Ես թերևս նրան եմ պարտական իմ կյանքով։

— Հետո ի՞նչ։ Կարող ես կյանքդ պարտական լինել ծառի մի ճյուղի, որից կառչել ես անդունդ գահավիժելիս։ Մի՞թե այնուհետև ամբողջ կյանքումդ պետք է երկրպագես այդ ճյուղը։

— Կուրտ, ես նրան չեմ երկրպագում։ Ասում եմ, որ նա ինձ օգնեց, որովհետև քո բարեկամն էի։ Հավանաբար դու մի քանով թանկ ես նրա համար։

— Ա՛յ։ Չես հասկանում, Անդրեյ։ Նա անպայման պետք է իրեն բարերար զգա։ Բարերարությամբ նա թաքցնում է իր դաժանությունը։ Նա ինքն իր առջև սեփական գոյությունն արդարացնում է բարերարության այդ չնչին ողորմություններով։ Քեզ համար զզվելի պետք է լինի այդպիսի ձեռքից ստացված ամեն մի ողորմություն։ Դու պետք է...

— Լսիր, Կուրտ,— ընդհատեց նրան Անդրեյը։— Դու, կարծեմ, կասկածում ես, թե ես համակրո՞ւմ եմ այդ մարդուն։ Ես նրան չեմ կարող ատել այնպես ուժգին, ինչպես դու։ Անձամբ ինձ համար իբրև մարդ նա պարզապես գոյություն չունի։ Դատարկ տեղ է։ Իսկ հիմա, երբ այսպես անսպասելիորեն դարձավ իմ թշնամին...

— Դեհ, հիմա ի՞նչ։

— Հասկանո՞ւմ ես, նա հիմա ինձ համար ավելի ևս անդեմ դարձավ։ Նա թշնամի է, հարյուրավոր, հազարավոր, գուցե միլիոնավոր ուրիշ թշնամիների նման։ Մի մարդ, որին պատահմամբ ճանաչել եմ, և որը մտավ թշնամիներիս շարքը։ Ուրիշ ոչինչ։

Կուրտը դադարից քայլել և ձեռքերը դրեց մեջքին։

— Անդրեյ, դա բարդ է։

— Ոչ, շատ պարզ է։

Կուրտի դեմքը սառեց, հայացքը սրվեց, նա ասես գազատոգի մատեցավ Անդրեյին և ձայնը ցածրացրեց.

— Ոչ, Անդրեյ, դա շատ բարդ է։ Թե մարդվական ժողովրդի այդ անկոչ բարեկամը, հոյակապ մարկգրաֆական ցեղի այդ արժանավոր ժառանգը հանկարծ քո ձեռքն ընկներ...

— Հետո՞։

— Դու նրան կսպանեի՞ր։

Անդրեյը կռացավ, ձեռքը սահեցրեց ճակատով, հանդիպեց Կուրտի հայացքին և աչքերը կախ գցեց։

— Ես հավանաբար ոչ մեկին չէի կարող սպանել։ Այսինքն՝ այնպես մի որևէ մարդու։ Որպեսզի հետո գիտենայի, թե ես եմ նրան սպանել։ Հենց ես։ Հենց այնինչ մարդուն։

Կուրտը կրկին ձեռքերը թափահարեց ու սկսեց վազվզել սենյակում։

— Անդրեյ, դու սարսափում ես վախից, սարսափում ես վախից։ Դա սոսկալի է։ Անհրաժեշտ է հաղթահարել վախը, ապրել և հաղթահարել։

— Կուրտ, ես քեզ հետ գալիս եմ ռազմաճակատ։

— Դա ուրիշ բան է։

— Ես կարող եմ այնտեղ մառուղեր բանեցնել Գոլոսոլիից ոչ պակաս։

— Դա այն չէ, այն չէ, բարեկամս։

— Գուցե հենց ես սպանեմ մարկգրաֆին։ Սակայն... միայն թե դա հաստատ չիմանամ։ Չտեսնեմ։

— Դա այն չէ, այն չէ, սիրելիս։ Ինչպե՞ս եմ ատում այդ վիժվածքին։ Լսի՛ր, Անդրեյ։ Ես ինձ զգում էի, էհ, չէ, ինչ եմ ասում, ես մի իր էի դարձել այդ բարերարի ձեռքին։ Քնում ու արթնանում էի այն մտքով, որ նա ինձ գնել է, որ ես ինձ չեմ պատկանում։ Նրան հայտնի էր իմ ամեն մի քայլը, նա լրտեսում էր իմ մտահղացումները, թույլ չէր տալիս, որ իմ սենյակից կտավի պատառիկ էլ դուրս գա։ Նրա գործակալը կաշառում էր վարպետ Մայերին, որպեսզի գիտենա այն ամենը, ինչ անում էին ահա այս ձեռքերը։ Շուրջս ամեն ինչ ինձ հիշեցնում էր իմ ստորացումը, ինչպես թոքախտավորին ամեն ինչ թոքախտն է հիշեցնում։ Գրողը տանի։ Հանուն ինչի՞ էր այդ արվում։ Ինքնասիրահար տղայի խելքին փչել էր նոր փա՞յլ տալ մոռացության մեջ խամրած մարկգրաֆների անվանը։ Նա ուզում էր, որ այդ տոհմի սասին խոսեն, որպեսզի այն հիշեն։ Ողորմելի լեյտենանտիկը, որին իր ծառայած

գնդից դուրս ոչ ոք չէր ճանաչում, հանկարծ նոր նկարիչ է հայտնագործում։ Ա՜խ այդ մարկգրաֆն է։ Մարկգրաֆը, հա՜-հա՜։ Բանը նկարիչը չէ, այլ մեկենասը։ Առանց մեկենասի նկարիչ էլ չէր լինի։ Սատանա։ Նա իր պլանն իրագործում էր սարդի զգուշությամբ։ Ա՜խ։ Այդպիսի վիժվածքին պետք է փակի տակ պահել։ Իսկ դու հավատացիր, թե նա նկարնե՞ր էր սիրում։ Հավատացիր, հա՜-հա՜։ Նկարներ է սիրում, հա՜-հա՜-հա՜։ Հիմա նրբագեղ արվեստագետի այդ հովանավորը դեմ չէ իր վերանորոգված տիտղոսը զարդարել նոր դափնիներով։ Նրա աչքերը երևի մթագնել են. մարկգրաֆը գրավում է Սեմիզոլը, մարկգրաֆը հաղթականորեն արշավում է Մոսկվա, մարկգրաֆը վերականգնում է միապետությունը, մարկգրաֆ ֆոն ցուր Մյուլեն-Շենաուն մորդվական ժողովրդի բարեկամն է։ Միայն թե ձեռքս ընկնե՞ր, մորդվական աղատության բարեկամ, հա՜-հա՜։

Կուրտը նետվեց դեպի պատուհանը, բացեց այն, հենվեց լուսամուտագոգին։ Բակում խուլ ձայներ էին լսվում, մեկը վազում էր անձրևից փափկած գետնի վրայով, ձիերի սմբակները շլմփում էին ցեխի մեջ, անիվները դիկդիկացին կառանոցի ջարդված հատակին։

— Ֆրանց, պատրաստ է,— բղավեց մեկը պատուհանի տակ։

— Գնա կանչիր։

Կուրտը շտկվեց և կոճկեց վերնաշապկի օձիքը։ Նրա շընչառությունը հանդարտվեց, շարժումները դարձան ավելի որոշակի ու համաչափ։

— Անդրեյ, մեր գնալու ժամանակն է։

Այն ժամանակ Անդրեյը ցնցվեց, արագ ելավ և քայլեց դեպի սեղանը։ Տոզած դաշտային պայուսակի կողքին դրված էր երկփողանի կապտասև մաուզերը։ Անդրեյն այն վերցրեց ու մեկնեց Կուրտին։

— Կուրտ, ցույց տուր, թե ինչպես պետք է լցնել,— կամացուկ խնդրեց նա։

Քաղաքում հատուկենտ կարճ խոսքեր էին փոխանակում, ոմանք ետ էին մնում, որպեսզի ուսապայուսակներն ուղղեն կամ ոտքերի փաթաթանները ձգեն։ Սակայն երբ երկաթուղու

դծանցը վերջացավ, լռություն տիրեց, և շարքը չէր խախտվում։ Երթը դժվար էր։ Կեսօրից ի վեր մանրամաղ անձրևը ծծվել էր հողի մեջ։ Սապոգների շուրջ կարծես ցեխի կոշիկներ էին գոյանում, և քայլերը դժվարանում ու սահում էին, ինչպես սառույցի վրա։ Սակայն ոտքերը քայլում էին համառորեն, և մարմինները օրորվում ծանր ու համաչափ, զանգի լեզուների նման։

Ռուսաստանում կորսված խուլ մի ճանապարհով, աշնանային գիշերվա ծածկույթի տակ, անվերջանալի և անծայրածիր խղճուկ դաշտերով քայլում էին չգիտես ուր՝ հեսսենցիները, ջարմշտադտցիները, նյուրնբերգցիները։ Երթի սովոր լինելով, նրանք հեշտությամբ լսեցին երթային խստաշունչ երաժշտությունը և օտար երկրում, օտարի կույր երկնքի տակ երգեցին չմոռացված երգը.

I-ich hatte ein kamara-aden... [1]

Այս երկրում այդ քաղցր-մեղցր երգը դարձավ սպառնալի, և Անդրեյն իր ձայնը չէր լսում դարմշտադտցիների, հեսսենցիների և նյուրնբերգցիների ձայների մեջ։

Սակայն նա երգում էր, և նրա խոսքերը համընկնում էին երգի խոսքերին, թեև իմաստն իրեն այլ էր թվում։ Ու թեև ամեն րոպե երթի համաչափ քայլքը գետնի վրա ավելի ծանր էր հնչում, քայլելը հեշտացել էր։ Անցյալն անցնում էր մի դատարկության մեջ, և ամբողջ ապագան այն երկրորդ քայլի մեջ էր, որ արվում էր առաջինից հետո։ Այդպես աննկատելիորեն չքացան թանձրության մեջ մարկգրաֆի, Կուրտի, Ռիտայի, Մոսկվայի, Պաուլ Գեննիգի հսկայական սենյակի աղոտ տեսիլքները, և ինքը Պաուլ Գեննինգը, որ դղրդում էր հավասարականության մասին սոցիալիզմի մեջ։ Չհուզող բառերի պատառիկները բռնկվում ու մարում էին հիշողության մեջ, ինչպես հեռվում մնացած կիսակայարանի ազդանշանային լույսերը։

Զինվորներից ոչնչով չտարբերվելով, նրանց հետ ոտք ոտքի, ուս-ուսի քայլում էր Անդրեյը խավարին ընդառաջ, և օտար երգը դուրս էր հորդում նրա բերանից հեշտ ու ակամա.

---

[1] Ես մի ընկեր ունեի... (գերմ.)։

In der Heimat, in der Heimat
Da gibt's ein Wiedersehen... [1]

Նա հանդիստ ու ամուր էր զգում իրեն, նա երգում էր Մարիի հայրենիքի մասին, նրա հետ տեսակցության մասին։ Նա հավատում էր, որ Մարին՝ ապագան է, որ նա այն երկրորդ քայլն է, որը պետք է անել առաջինից հետո։

Նա քնեց գետնին, երբ ջոկը տեղավորվեց Ռուչյիում գիշերելու...

Լուսաբացն ուշացավ, անձրևը չէր դադարում, այգիները մերկացել էին այդ քամոտ գիշերից։ Առավոտյան խոնավ մշուշի մեջ Անդրեյն առաջին անգամ տեսավ զինվորներին։ Նրանց դիմագծերը տարօրինակ կերպով միանման էին, կարծես բոլորը մի հաստոցի վրա տաշված և միևնույն ներկով ներկված լինեին։ Նրանց շարժումները դանդաղոտ էին ու ժլատ, ու բերաններն էլ բացվում էին սոսկ հաց կծելու կամ ծխամորճը ատամներով ավելի հարմար բռնելու համար։

Երբ հաղորդեցին Սանշինո մտնելու հրամանը, զինվորները սկսեցին ծխամորճներով զբաղվել. մեկը թափ էր տալիս, մյուսը կրկին լցնում էր, անշտապ ու ջանացողաբար, կարծես հրամանը կատարելու համար դա էր ամենակարևորը։ Հետո հրացանները վերցրին, շարք կանգնեցին և գնացին։ Այգիների վերջում մի հրաման տվեցին, որն Անդրեյը չհասկացավ։ Շարասյունը վերակազմվեց, դարձավ երկար մի շարք, իսկ շարքը կտրտված շղթայով շարժվեց լքված այգիների նոսր, թախծալի մնացորդներով ծածկված բլուրներով։

— Թշնամու հոտ է փչում,— փնթփնթաց Անդրեյի հարևանը։

Անդրեյը նայեց նրան։ Զինվորը ծուխ էր փստացնում կարճլիկ ծխամորճից ու նայում ոտքերի տակ։ Նրա կարճ խուզած բեղերը մի կողմից սկսել էին ճերմակել։

— Ես մարտակարգ չեմ անցել,— ասաց Անդրեյը,— չգիտեմ ինչ պետք է անել։

— Պետք է գնալ,— պատասխանեց զինվորը։

— Ես ձեր կողքից կքայլեմ։

[1] Հայրենիքում, հայրենիքում
Սպասում է մեզ տեսակցություն... (գերմ.)։

— Միևնույն է։

Եվ նրանք գնացին լուռ, թռչում էին հաղարջի գետնատարած ճյուղերի վրայով և շրջանցում վայրիացած խնձորենիների վտիտ ծառաբները։

Սայլուղու ոլորանի ետևը, թեք բարձունքի վրա Անդրեյը տեսավ միայնակ ցցված մի ծառ, որի ճյուղից ինչ-որ շիկավուն գունդ էր կախված։ Ավելի ուշադիր նայեց այդ գնդին։ Ծառից պարանով կախված էր անշարժ, հաստ մի մարմին, որ հեռվից նմանվում էր վզից կախված մորթած սագի։ Անդրեյը չնկատեց, թե ինչպես փոխեց ուղղությունն ու խառնեց, արագացրեց քայլերը։ Նա գնում էր ուղիղ դեպի ծառը։

— Այս ի՞նչ է,— ասաց նա ձեռքը ետ տանելով, որպեսզի բռնի իր հարևանին։— Մա՞րդ,— հարցրեց ավելի կամաց։

Արմունկը խրվեց մեկի կրծքի մեջ, Անդրեյը ետ նայեց։ Նրան շրջապատում էին մի խումբ զինվորներ, որոնք իր նման շտապել էին մոտենալ ծառին։ Շարքը խախտվել էր։ Մեկի ձայնը հարցական խռխռաց.

— Նրա ոտքերը սղոցե՞լ են։

Անդրեյը պոկվեց ու նետվեց դեպի բլրի գագաթը։ Զինվորները վազեցին նրա ետևից։

Կախվածի գլուխը ծանրորեն ու անզոր կողքի էր թեքվել, սատկած թռչունի գլխի նման։ Դեմքը կապտել էր, և մի աչքը՝ դեղին, հսկայական, շռվել էր ակնախոռոչից, ասես դուրս պրծած լիներ։ Զգված երկար վզից տարօրինակ կերպով կախվել էր մի մարդահասակ երկարություն ունեցող լայնաթիկունք, հսկայական մարմինը։ Թվում էր, եթե դրա տակ ոտքեր դնեին, կքայլեր։ Սակայն ոտքերի փոխարեն, պատռտված լաթերի տակից, երևում էր վարդագույն, ասես կենդանի կտրած ոտքերի կծկված մաշկը։ Հինգ մատները պարզած ձեռքերը կառչել էին օդից, թվում էր, մարմինը պահվում էր ձեռքերով, գլխից անջատ, որը կապված էր պարանով։ Զինվորները շրջապատեցին կախվածին։

Անդրեյը նայում էր այդ դուրս պրծած աչքերով կապույտ դեմքին։ Նա մի տեղ տեսել էր այդ գլուխը՝ սեխանման, խոշոր պեպեններից չեչոտ։ Լայնաթիկունք այդ կոճղը ճոճվում էր, հասնում մինչև խմբված զինվորների գոտկատեղը և ու-

բախացած, ատամները բացած ձայնակցում անմիտ աղմուկին.

— Բարի գալուստ, եղբայր-ընկերներ։ Կարելի է ասել, հասանք այն օրվանը, որ խաղաղություն տեսանք, հայրենիք...

Սակայն Անդրեյը չէր կարողանում հիշել, թե երբ է հանդիպել այդ գլխին, ու այն նրա հիշողության մեջ աղոտ կերպով միաձուլվում էր մի ուրիշ, նույնպիսի կապույտ գլխի հետ, որ հանկարծ շարժել էր մեռյալ շուրթերը. Adieu, Frau Mama, adieu...

— Նրան պետք է հանել ծառից,— խուլ հնչեց Անդրեյի հետևում։

Անդրեյը շրջվեց։ Խոսում էր շարքի նրա հարևանը։ Ճերմակած բեղով նրա դեմքի կեսը մի արագ ցնցվող պար էր՝ թուչկոտում։ Մարդը գունատ էր։ Անդրեյը հայացքը պտտեցրեց մյուս զինվորների վրա։ Բոլորն էր տարօրինակ կերպով նման չէին իրարու, մինչդեռ ընդամենը մի րոպե առաջ Անդրեյին թվում էր, թե միևնույն դեմքերն ունեն։

Մի քանիսը շարժվեցին դեպի ծառից կախված այդ մարդկային կոճղը ու բարձրացրին այն։ Անճարպիկ, դողդոջ ձեռքեր քաշքշեցին կախվածի վզին ձգված պարանը։

Սակայն այդ պահին չգիտես որտեղից գլխներին պայթեց կարճատև, չոր մի ճայթյուն, կարծես ծեր ճյուղը կոտրվեց։ Անդրեյը աչքերը հառեց խնձորենուն։ Զինվորները շտապով այս ու այն կողմ նետվեցին, ցրվեցին բլուրով մեկ, և գետնին էին փռվում, ինչպես սովարաթղթե խաղալիքները քամուց։ Չոր ճայթյունը կրկնվեց։ Եվ հանկարծ իրար հաջորդող կարճ պայթյունների անհավասար հարվածները գլորվեցին բլրի վրայով, կարծես մի տեղ կտոր-կտոր պատռում էին հաստ կտավը։ Եվ սայլուղուց հեռու ընկած բլրի վրա, ինչպես կտավից՝ վեր-վեր թռան թեթև, փափուկ ծվենները։

Մի բան դիպավ Անդրեյի կողքին։ Նա ծառից հեռու թռավ և ընկավ։ Աջ արմունկին պառկած, նա ձախ ձեռքով գոտուց արձակեց մաուզերի փայտե պատյանը։ Հետո ատրճանակի կոթը դանդաղ հարմարեցրեց պատյանից սարքած թեթև կոթին, պահպանիչը բացեց, պառկեց կրծքի վրա և կզակը հենեց բռունցքին։

Անգույն, բաց երկինքը ծածկվել էր մոխրագույն ծխի քուլաներով։ Դրանք նոսրանում էին, տարրալուծվում, և նրանց տեղը առաջանում էին նորերը, որպեսզի նույնպես ներծծվեն ու տեղ տան ուրիշներին։ Անդրեյը երկար նայում էր դրանց։ Հետո գլուխը բարձրացրեց։ Իրենից մի քառասուն քայլի վրա պառկած էր նրա հարևանը՝ կարճ խուզած բեղերով զինվորը։ Հրացանն ընկած էր նրա կողքին։ Զինվորը խնամքով, անշտապ ծղոտով մաքրում էր ծխամորճը։ Դեպի ցած, բլրի թեք լանջին նոսր օղակներով տարածվել էր հրձիգների շղթան։ Նրանք բոլորը անշարժ էին ու լուռ։ Անդրեյը նայեց ծառին։ Կախվածը, որ տեղաշարժվել էր զինվորների ձեռք տալուց, դեռ համաչափ օրորվում էր ճյուղի վրա։ Անդրեյն անտարբերությամբ երեսը թեքեց։

Տարօրինակ հանգստություն տարածվեց նրա մարմնում։ Առաջին անգամ այս տարիների ընթացքում, գուցե ամբողջ կյանքի ընթացքում, նա ինչ-որ անհոգության զարմանալի թեթևություն զգաց։ Այնպիսի մի զգացում ուներ, կարծես ոչընչով կապված չէր աշխարհին, որն անսպասելիորեն և զարմանալի կերպով պարզ բացվեց նրա առջև ու ընդունեց նրան։ Նա աշխարհում զգում էր միայն իրեն, և ժամանակը հանկարծ դադարեցրել էր իր ընթացքն, այնպես որ չկային այլևս ոչ ապագան՝ Մարիի մասին մշտական մտածմունքով, ոչ էլ ներկան՝ խեղանդամված, մահապատժի ենթարկված մարդու իր թախիծով և վախով։

Անդրեյը հետևում էր հսկայական շեկ մրջյունին, որ գետնի վրայով քարշ էր տալիս չորացած թրթուրը։ Մրջյունը հերոսաբար հաղթահարում էր թառամած շյուղերից և ցեխագրնդերից գոյացած արգելքները։ Մի սև, պստլիկ մրջյուն, որս փնտրելով, վազեց շեկի կիսադաշտը, և ստ մեջքն աղեղնաձև բարձրացնելով, հարձակվեց այդ քաջի վրա և նրան փախուստի մատնեց։ Հետո վերադարձավ դեպի թրթուրն ու սողաց իր ճամփով։

Գուցե այն պատճառով, որ հողը մոտ էր նրա դեմքին, այդ ընչին հողակտորը, որ ակոսված էր որդերի և բզեզների հետքերով, մեծանում, դառնում էր ամբողջ մի աշխարհ, և այդ

աշխարհը լցնում էր Անդրեյի հոգին ավելի ու ավելի խորացող, աներեր լռությամբ։

Նրա ականջին հասավ հեռավոր, անհասկանալի մի հրաման։ Երկնակամարում մոխրագույն ծխերն անհետացան, կրակոցները դադարեցին։ Անդրեյը նայեց բլրի լանջին։ Զինվորները ծալովի սաժենաչափի նման թեք գծով, հրացանները ձեռքներն առած՝ վազեցին դեպի հովիտը։

Անդրեյը հեշտությամբ վեր կացավ, վերցրեց մաուզերը և վազեց սարի տակ։ Գետնին զարկվող ամեն մի քայլի հետ նրա մեջ մեծանում էր երբեք չզգացած տարօրինակ թեթևության զգացողությունը, կարծես հագուստն ատիճանաբար ընկնում էր վրայից, և նա վազում էր մերկ։ Իսկ երբ բլրալանջը միացավ հովտին, և հարկավոր էր վազքը չափավորել, որպեսզի ուրիշ բլուր բարձրանա, Անդրեյն այլևս չէր զգում իր շնչառությունը, և թեթևությունը փոխվեց կարծես մարմին չունենալու զգացումով, որը նրան աննկատելիորեն վեր էր սլացնում։

Նա ուշքի եկավ, երբ բարձունքը, որի վրա դեռ քիչ առաջ մոխրագույն ծուխ էր բարձրանում, մնաց ետևում։ Անդրեյը քամու գալարապտույտից պոկված թղթի կտորի նման ընկավ այդ բարձունքի ետևում գտնվող նոսր, մատղաշ կաղնուտը։

Նրա գլխին կրակոց պայթեց։ Կարճ, կտրտված հրացանային համազարկեր լսվեցին ամեն կողմից։

Այն ժամանակ Անդրեյը ուսին հենեց մաուզերի դատարկ կոթը և սկսեց սեղմել շնիկը անհաշիվ-անհամար անգամ, առանց ընդմիջման, մինչև որ փամփշտակալը դատարկվեց։ Հետո, առանց շարժվելու ականջ դրեց, թե ինչպես է կրակոցից առաջացած աղմուկը գլորվում շրջապատում։ Կաղնու նոսր ճյուղերի արանքից նա իր աջ և ձախ կողմերում տեսավ ժպտացող զինվորներին ու նոր միայն հասկացավ, որ մաուզերն ուղղել էր վերև, դեպի երկինք։

— Հը՞, ինչպես է,— հարցրեց մեկը հնչուն ծիծաղելով։

Անդրեյը կոթը ուսից պոկեց և նայեց ատրճանակին։ Այն ծածկված էր վառոդի կապտավուն այրուքով։

— Լավ է աշխատում,— պատասխանեց Անդրեյը և ինքն էլ ծիծաղեց։

Առավոտյան ժամը տասին նշանակված էր հավաք ճամբարում, ուր մինչ այդ ամբողջ օրը բերում էին գերի վերցված մորդվացի աշխարհազորականներին։ Հատուկ բարաքում բանտարկված էին գերի ավստրիացիներն ու գերմանացիները, որոնց մեջ պետք էր ճանաչել «մորդվական ազատության բարեկամին»։

Սեմիդոլը հանդարտվում էր այդ իրարանցումից հետո, և կանայք անկտիներից կախ տված դույլերով արդեն խոսք ու զրույցի էին բռնվել աղբյուրների մոտ։ Սակայն Անդրեյը որքան մոտենում էր ծայրամասին, այնքան շուրջն ամայի էր դառնում, և տներն իրենց կիսակույր պատուհանիկները թաքցնում էին պոկպկված փեղկերի տակ։

Հանկարծ խղճուկ նրբանցքի ծայրին Անդրեյը տեսավ մի աղջկա, որ նրան թվաց օտար, ոչ տեղացի՝ անձրևներից սևացած այս տաշած խրճիթների, ցանկապատերի և դարբասների միջև։ Նա քայլերը դանդաղեցրեց, ավելի սևեռուն նայեց և, ասես դիպչելով ճանապարհին լայնակի քաշված պարանի, կանգ առավ։

Աղջիկը կանգնել էր փողոցի մյուս կողմում, մեջքով դեպի նա, և նայում էր դարբասի սյունին ամրացված ժանգոտ երկաթե ցուցանակին։ Հետո դանդաղ քայլեց դեպի հարևան տունը, և սկսեց փնտրել վաղուց անհետացած համարի հետքերը։ Մի քիչ կանգնելով, աղջիկն առաջ անցավ անհաստատ և կամացուկ քայլերով, մի մարդու նման, որը կասկածում է, արդյոք ճի՞շտ է սկսել իր որոնումները։ Կարդալով զունաթափված կամ պոկոտված ցուցանակները, նա աջ ձեռքի ափը սեղմում էր քունքին, ինչպես Մարին, երբ ուզում էր ուշադիր նայել որևէ անծանոթ, անորոշ բանի։ Հետո աղջիկը ձեռքը հեռացնում էր դեմքից, սակայն իսկույն ցած չէր գցում, այլ մի երկու-երեք վայրկյան շարունակում էր այդպես պահել, կարծես պատվի բռնած։ Այդ փոքրիկ շարժումը, շարժման այդ անչափ փոքրիկ մասնիկը պատկանում էր միայն նրան՝ Մարիին։ Նրանից՝ Մարիից բացի, չէր կարող և չպետք է այս աշխարհում այլևս որևէ մեկին պատկաներ։

Օ՜, իհարկե, դա Մարին էր։

Յուրաքանչյուր շարժումը՝ և թե նա ինչպես էր առաջ գնում իր բարակ, թերևս չափազանց բարակ ոտքը, որպեսզի քայլի, և թե ինչպես էր ոտքերը գցում, գրեթե առանց մարմինը շարժելու, ծնկները առաջ տալով, կարծես շարունակ սար էր բարձրանում, շարժումների այդ բոլոր մանր առանձնահատկությունները, որ հայտնի էին միայն իրեն՝ Անդրեյին, հենց կազմում էին նրա քայլվածքը՝ Մարիի քայլվածքը։

Իրոք, դա Մարին էր։

Նրա հագին մի զգեստ էր, որ Անդրեյը շատ լավ հիշում էր. դարշնագույն ծանր աշնանային զգեստ, գոտու շուրջը լայն ծալքերով և դաստակներին կիպ կոճկվող թևքերով։

Ահա նա գլուխը բարձրացրեց, որ ինչ-որ տուն նայի։ Մազերը դուրս թափվեցին ճամփորդական գլխարկի տակից, այդ մազերի արանքից թափանցում է սպիտակավուն երկինքը, և Անդրեյը պարզ տեսնում է մազերի գույնը՝ Մարիի մազերի գույնը։

Կասկած չկա, նա է։

Սակայն ինչպե՞ս է նա հայտնվել այստեղ, այս խուլ վայրում, ծայրամասում, այսպիսի ժամի։

Տե՞ր աստված, նա նոր է գնացքից իջել, առավոտյան գնացքից։ Նրա ձախ ձեռքին փոքրիկ ճամպրուկ կա։ Գուցե Անդրեյը հիշի՞ այդ ճամպրուկը։ Բաց կանաչավուն, պիստակի գույնի կաշվից, գրեթե քառակուսի, մեջտեղից մի փոկով կապվող։ Մի՞թե Բիշոֆսբերգում նա քիչ այդպիսի ճամպրուկներ է տեսել։ Մի՞թե Մարին այդպիսի ճամպրուկ չունի։

Մարի՛։

Գերմարդկային ջանքերով աղջիկը հասել է Ռուսաստան, նա հետաքրքրվել է, թե Անդրեյը որտեղ է ապրում, գետնի տակից հայտնաբերել է այդ անհայտ Սեմիդոլը, նա եկել է և ահա հիմա թափառում է այս խուլ տեղում, փնտրում նրան՝ Անդրեյին։

Մարի...

Օ՜, լինում են պահեր, երբ երևակայությունը մեր գլխով անհամեմատ ավելի շատ հիշողություններ, ենթադրություններ, փաստարկներ և պատկերներ է անցկացնում, քան մրտքերի այն չնչին պատառիկները, որ կուրացրին Անդրեյին, մինչ նա ճանապարհի մյուս կողմից նայում էր աղջկան։ Հանկարծ նրա մեջ այլևս ոչ մի կաթիլ կասկած չէր մնացել, երբ կտրեց հանկարծ իր ճամփան փակած անտեսանելի պարանն ու վազելով անցավ ցեխոտ փողոցը։

Սակայն նա ընդամենը երկու քայլ արեց։ Աղջիկը, որ մի բան էր փնտրում դարբասին, շրջվեց Անդրեյի կողմը։ Վերջինս տեսավ ուրիշի և, ինչպես նրան թվաց, տհաճ, զզվելի դեմք։

Անդրեյը կուրծքը բռնեց ու ետ դարձավ։

Նա քիչ մնաց ցած գլորեր ինչ-որ մեկին և կանգ առավ։ Շատ կամացուկ արտասանված գերմաներեն բառերը նրան սթափեցրին։

— Տարօրինակ է... տարօրինակ...

Նրա առջև կանգնած էր գերի գերմանացի զինվոր, և առանց Անդրեյին ուշադրություն դարձնելու, նայում էր փողոցի մյուս կողմը, աղջկան։

— Ի՞նչն է տարօրինակ,— հարցրեց Անդրեյը։

Գերին շրջվեց և շտապ շուրջը նայեց։ Նրա ուռած, կեղտոտ դեմքը դանդաղ փոխվեց անհասկանալի մի ժպիտից։

— Դատարկ բան է,— ասաց նա,— ահա այն լավ ֆրոյլայնը ինձ հիշեցրեց իմ մի ծանոթ աղջկա...

— Իսկապե՞ս։ Տարօրինակ է... Ասենք, պատահում է...

— Պատահում է,— համաձայնեց գերմանացին։— Դուք ճամբա՞ր եք գնում,— հարցրեց իսկույն։

— Այո։

Գերին ձեռքերն ավելի խոր մացրեց շինելի գրպանները։ Շինելը քրքրված էր արշավներից ու վատ եղանակից, ոտքերին ցցվել էին կրակի վրա չորացրած ավստրիական երկնագույն փաթաթանները, և աչքերին էր ընկել բարձր, ոչ իր գլխի չափի անհովար գլխարկը։ Գերին ցնցվում և կծկվում էր ցրտից։

— Պատահմամբ չգիտե՞ք, մեզ դեռ շա՞տ պետք է պահեն այս կեղտաջրի հորում,— և նա գլխով արեց ճամբարի կողմը։

— Դուք Գերմանիայի՞ց եք։

— Այո։

— Քիչ-քիչ ուղարկում են։

— Այն աշխա՞րհ,— քմծիծաղեց գերին, և Անդրեյը տեսավ նրա բերանը։

Նրանք վայրկենապես ճանաչեցին միմյանց՝ գերմ-գերմանացին և Անդրեյ Ստարցովը։ Նրանց բերաններից միաժամանակ դուրս թռավ խեղդված.

— Դո՞ւք...

Նրանք աչքները գամեցին իրարու և վախից փայտացան։ Սակայն դա մի կարճ պահ միայն տևեց։ Վախը նրանց սթափեցրեց, ինչպես սառը ցնցուղը, և նրանք կանգնել էին՝ պատրաստ կռվի։ Ու թերևս այն պատճառով, որ Անդրեյը չգիտես ուր հառեց շտապ, փնտրող հայացքը, գերին առաջինը հարձակվեց նրա վրա, հարձակվեց արագ և դիպուկ։

— Ո՛չ, ո՛չ,— ասաց նա քիչ մոտենալով Անդրեյին և ձեռքը գրպանից հանելով,— դուք այդ չեք անի, դուք չեք կարող այդ բանն անել։

— Խելագարվե՞լ եք, ինչ է,— բացականչեց Անդրեյը։

— Դուք այդ չեք անի, որովհետև ձեր անմտածված մի քայլից է կախված հարյուրավոր անմեղ մարդկանց կյանքը։ Անմեղ մարդկանց։

— Լսեցեք...

— Ո՛չ, ո՛չ։ Մի շտապեք, որպեսզի հետո ամբողջ կյանքում չղղջաք։ Մի շտապեք, աղաչում եմ ձեզ։ Ես իմ մասին չեմ ասում։ Իմ մասին... ինձ համար միևնույն է...

— Հապա ո՞ւմ մասին։ Ի՞նչ մարդիկ։

— Աղաչում եմ։ Խնդրում եմ ձեզ։ Լսեցեք։ Եթե դուք ինձ մատանեք, եթե ինձ բռնեն...

— Ես գիտեմ, թե ինչ պետք է անեմ,— բղավեց Անդրեյն ու շուրջը նայեց։

Վատ եղանակներից խարխլված խրճիթները առաջվա նման խումբ-խումբ վայրիացած սեղմվել էին խորդուբորդ փողոցում։ Ամայի ճանապարհները տաղտկալի կերպով ձգվում էին դեպի դաշտ։ Ոչ մի մարդ չկար։

— Ես գիտեմ,— կրկին բղավեց Անդրեյը, և նրա ձայնը կտրվեց ու խլացավ։

Այն ժամանակ գերին մի քայլ գցեց դեպի նա, վստահորեն երկու ձեռքով բռնեց նրա արմունկները և խոսեց.

— Լավ։ Ես հիմա կարող եմ վազել, դուք կնստվեք իմ ետևից, կբղավեք, մարդիկ փողոց կվազեն, ինձ կբռնեն։ Ահա արդեն այն կողմից երկու զինվոր են գալիս։ Դուք մենակ չեք։

Դուք կարող եք ինձ բռնել։ Սակայն ես ձեզ ասում եմ. դրա փոխարեն իրենց կյանքը կտան քսան, երեսուն, հիսուն մարդ, որոնց ամբողջ մեղքն այն է, որ ուզել են շուտով հայրենիք ընկնել։ Ինձ բռնեցին իմ զինվորների հետ։ Դրանք բոլորը գերիներ են և միայն ես եմ մեղավոր, որ նրանք կռվի դուրս եկան։ Սակայն նրանք ազնիվ, հասարակ մարդիկ են և ինձ փրկեցին։ Նրանք ինձ ուրիշ շորեր հագցրեցին դեռ այնտեղ, Սանշինոյի մոտերքը, անձնատուր լինելուց առաջ։ Ես նրանց հետ բանտարկված էի այնտեղ, այն բարաքում, ինչպես շարքային։ Լուսաբացին նրանք օգնեցին ինձ, որ փախչեմ։ Նրանց բախտը ձեր ձեռքին է։ Վճռեցեք։ Ես պատրաստ եմ։ Ես մահից չեմ վախենում։ Հինգ տարի է մահվան հետ նույն հարկի տակ եմ ապրում։ Եթե դուք...

— Այդ ամենը հիմարություն է,— ձեռքը թափ տվեց Անդրեյն ու հոնքերը կիտեց։

Ուշ է, Անդրեյ։ Այդ հիմարությունը չպետք է լսեիր, չպետք է թույլ տայիր, որ նա մի բառ անգամ ասի, ոչ մի վայրկյան չպետք է կորցնեիր։ Այն ժամանակ երկու զինվորը չէին տեսնի, ինչպես ընկեր Ստարցովը, որին ճանաչում է ամբողջ Սեմիդոլը, վազ առավոտյան, ճամբարի ճամփին կանգնել էր քրքրված շինելով և ավստրիական փաթաթաններով մի գերու հետ, և ինչպես գերին ջերմորեն ինչ-որ բան էր խնդրում ընկեր Ստարցովից, նրա արմունկները բռնած։ Այն ժամանակ քունը գլխին գյուղացին, դուրս գալով խրճիթից, որի մոտ Անդրեյը խոսում էր գերու հետ, չէր նկատի, թե ինչպես շփոթված ցնցվեց ընկեր Ստարցովը, կարծես ուզում էր օգնություն կանչել, և անմիջապես զսպեց իրեն ու սկսեց լսել գերու շտապ շշնջոցը։

— Ես ձեզ խնդրում եմ ոչ ինձ համար, հավատացեք, ինձ համար միևնույն է։ Ես նույնիսկ հույս չեմ էլ կապում, թե դուք կհիշեք, ինչպես մի ժամանակ պարտքս չկատարեցի ձեզ փրկելու համար, գուցե և մահվանից։ Տեսնում եմ, որ դուք հիշում եք այդ, դուք չէիք կարող այդ մոռանալ, այնպես չէ՞։ Ձեր դրությունն այն ժամանակ իմից շատ լավ չէր։ Այնպես չէ՞։ Հիշո՞ւմ եք։

Եվ ահա գերու ցնցվող, թեք ուսի վրայով Անդրեյը կրկին տեսնում է Մարիին։ Մի՞թե աշխարհում հնարավոր է այսպի-

ի նմանություն։ Անկարելի է։ Մարի՛։ Նա դուրս եկավ դարբասից, կանգ առավ, ձեռքը դրեց քունքին՝ նայելով հեռուն, հետո վճռաբար և թեթև քայլեց սարի տակ, քաղաք։ Եվ որքան հեռանում էր նա, այնքան սարսափելի էր դառնում այն միտքը, թե նա կարող է ընդմիշտ հեռանալ, որ նրան՝ Անդրեյին վիճակված չէ թերևս երբեք նրան վերադարձնել և որ հանկարծ այդ աղջկա դեմքը ամենևին էլ զզվելի չէ, որովհետև դա Մարիի դեմքն է, Մարիինը։

Մի պահ, ևս մի պահ, ու աղջիկը ծածկվեց թեք անկյունային տան ետևում։

Եվ իսկույն էլ պարզորոշ, տարօրինակ կերպով սրտին մոտ մի խոսք, որ արտասանվեց օտար, ընդհատուն ձայնով, ավարտեց Անդրեյի միտքը.

— Բիշոֆսբերգ...

— Բիշոֆսբե՞րգ,— հարցնում է նա զարմացած։

Եվ գերին շտապում է ավարտել մի շատ կարևոր բան՝ ավսվացող, շոր լեզվով.

— Երդվում եմ, ես այլևս ոչ մի բանի մասին չեմ մտածում, ուզում եմ միայն վերադառնալ Բիշոֆսբերգ։ Պատրաստ եմ ձեզ հատուցելու ինչով կամենաք։ Վերադառնալ Բիշոֆսբերգ, Լաուշե։ Մի՞թե դուք հանուն այն բանի, որ ես մի ժամանակ արեցի ձեզ համար...

— Դուք ուզում եք Բիշոֆսբե՞րգ վերադառնալ,— ընդհատում է նրան Անդրեյը։

— Այո՛, այո՛։

Շուրջը դարձյալ ոչ մի մարդ չկա, ամայի, խուլ վայրը ծածկված է մարդկանց աչքերից։

— Այդ մասին խոսելը խելագարություն է,— բացականչեց Անդրեյը, և հանկարծ լռելով ու թեքվելով դեպի գերին, արագ շշնջում է.— Եկեք ինձ մոտ այսօր հենց որ մթնի, ես ապրում եմ անկյունում...

Նա իր հասցեն ասում է ստույգ և կարճ, սեղմում է գերու մեկնած ձեռքը և լսում հուզված, խեղդված, մի քիչ ծաղրալի բացականչություն։

— Օ՜, որքան ազնիվ եք։

Հետո առանց ետ նայելու նետվում է ամայի փողոցներից

դեպի դաշտ և լքված աղյուսե մառանների, ջրափոսերի, կածանների կողքից գրեթե վազում դեպի ճամբար։

Նա, իհարկե, կասի, թե ում է այսօր տեսել փողոցում, ում է կանչել իր մոտ մութն ընկնելուց հետո։ Նա իր սենյակում դարան կսարքի, նա կհանձնի, կմատնի փախստականին։ Կմատնի՞։ Ոչ, նա իր պարտքը կկատարի։ Պա՞րտքը։ Սակայն մի՞թե արդեն չի խախտել։ Չէ՞ որ եթե փախստականը...

Անդրեյը կանգ է առնում հանկարծ, ասես դաժան լույսից կուրացած, և կրկին առաջ է նետվում...

Հետո նա կանգնում է բարաքում, Կուրտի և Գոլոսովի միջև, և նրա առջևով անցնում են Սանչինոյի մոտերքը գերված գերմանացիներն ու ավստրիացիները։ Գերիներին կանգնեցնում են, ստիպում գլխարկները հանել, ձեռքերը ցույց տալ։ Կուրտը կարճ հարցեր է տալիս և գլխարկը տարուբերում։

— Հաջորդը։

Անդրեյի վրայից անդադար քրտինք է հոսում, նա հաճախակի սրբում է ճակատը թացացած թաշկինակով և գլուխը տարուբերում, ինչպես Կուրտը։

— Հաջորդը։

Գոլոսովը կամացուկ ասում է.

— Ստարցով, վաղը ճամբարում միտինգ է։ Դու պետք է շնորհակալություն հայտնես գերիներին, որոնք կովեցին մեր կողմից։ Նրանց հայրենիք կուղարկեն առաջին էշելոնով։ Մենք միայն այդ կարող ենք անել նրանց համար։ Մենք նրանց շատ պարտական ենք։

Գոլոսովը անխռով ծածկում է ժպիտը։

— Եվ քեզ, իհարկե...

— Լավ,— պատասխանում է Անդրեյը,— հաջորդը։

Նրա առջևից անցնող մարդկանց շարքում մնացել են հինգ, երեք, երկու հոգի։ Ահա վերջինը։

— Ախ, գրողը տանի,— խռխռացնում է Կուրտը։

— Տեր աստված, տեր աստված,— արձագանքում է Անդրեյը։

— Այդպես էլ գիտեի. փախել է սատանան...

Եվ Անդրեյը.

— Փախել է։ Այո, այո, փախել է։ Տե՛ր աստված...

Նա աչքերը փակեցնում է, և նրան թվում է, թե շուրջն ամեն ինչ շղարշված է ծանր, սև ծխով։

Երազ

— Եթե պաշարված ամրոցում մեկ ամիս մնալը հաշվում են մեկ տարի, ապա գերության մեկ ամիսը պետք է երկու տարի հաշվել։ Իմ կյանքն ըստ էության անցել է։ Գերությունը՝ գազազ է։ Նրա հատակն ու պատերը ձյուն են, կափարիչը՝ ձյունե ամպերով փակված երկինք։ Ողջ-ողջ դագաղ դրված։ Երբեմն հուսահատությունից ընկել եմ հատակին ու գլուխս խփել գետնին։ Ես խելագարվում էի ձյունից, խելագարվում այն մտքից, որ շուտով նորից ձյուն կգա։ Չեմ կարող տեսնել, թե ինչպես է այն թափվում, շարունակ թափվում, թափվում... Մազերս բիզ-բիզ են կանգնում։ Ուզում եք գիտենալ, թե ինչով եմ զբաղվել այս խղճուկ խարդախությունը ձեռնարկելիս։ Թե՞ ձեզ համար դա միևնույն է, ինչպես ինձ համար։ Սակայն ես ձեր առջև արդարանալու պահանջ եմ զգում։ Չէ՞ որ իմ ճակատագիրը ձեր ձեռքին է, իսկ դուք ներողամիտ եք նրա հանդեպ, թերևս՝ ոչ ըստ արժանվույն։

— Դուք դարձյալ բարձր եք խոսում։ Կամաց,— շշնջում է Անդրեյը։

— Ներեցեք։ Ես դժվարությամբ եմ ինձ զսպում, որպեսզի չհեծկլտամ։ Չեմ կարողանում առանց արցունքի ձեզ նայել։ Չեմ կարողանում իմ մեջ միատեղել այս բանը։ Որքան վիթխարի ու անհեթեթ է մեր կյանքը։ Դեռևս նորերս թշնամիներ էինք, մենք...

— Կամաց խոսեցեք և շուտ։ Շուտ ասացեք։

— Ես այնքան հուզված եմ, չգիտեմ ինչի մասին պետք է խոսեմ։ Մեն մի բարեկամ ունեի, որի հետ այդ դագաղի մեջ ապրեցի երկու ու կես տարի։ Նրա անունը Ֆրեյ էր։ Նրան սպանեցին երեկ չէ անցյալ օրը, վերջին մարտի ժամանակ, որը և ամեն ինչ վճռեց։ Նա գերմանական սպա էր, և նրան սրախողխող արեց գերմանացի զինվորը։ Նրա մահվամբ ես հասկացա, որ հիմար գործ եմ ձեռնարկել։ Մորդվացիներին ապստամբեցնելը նրա գաղափարն էր։ Նա ինձ կոչեց մորդվական ժողովրդի ազատության բարեկամ, իմ մասին մի

առասպել տարածեց, կարգին չգիտեմ, թե նույնիսկ ինչպիսի։ Նա ատում էր բոլշևիկներին և արհամարհում ռուսներին։ Ինձ համար հետաքրքիր են և մեկը, և մյուսը։ Սակայն ես ձանձրանում եմ։ Վերջ ի վերջո քաղաքականությունը միայն ձանձրույթ է։ Սկեսուրը միշտ հարսին համարում է շռայլող, հորը թվում է, թե որդիները ձրիակերներ են, իսկ զավակները տընքում են ծնողների լծի տակ։ Սակայն այդ ամենը քո ընտանիքն է։ Ձանձրալի է։ Ես ոչ մի քաղաքականության մասին չեմ մտածել։ Ես պարզապես հիանում էի Ֆրեյով, այն բանով, թե նա ինչպիսի խանդավառությամբ էր հյուսում իր նախշը, որը մեզ հայրենիք պետք է հասցներ ու վերջ դներ գերությանը։ Դուք հո ձեր փորձով գիտե՞ք, թե գերությունն ինչ բան է։ Դուք գիտեք, թե ինչ խելահեղությունների կարող է մարդուս մղել գերությունը։ Դուք հիշո՞ւմ եք։

— Դեհ, շո՛ւտ ասացեք։

Անդրեյը փաթաթվում է լայն, կոշտ շինելի մեջ, ասես կիպ վարագուրված պատուհանից, որին նա հենվել էր, ցրտի ծակող հոսանք է թափանցում։ Սենյակում լռություն էր։ Սեղանին դրված մոմի երկչոտ լեզվակը չէր երերում, թեև մի մեկնած ձեռքի հեռավորության վրա ջղաձգորեն ցնցվում էին օբեր-լեյտենանտի շշնջացող շրթունքները.

— Ես հույս ունեմ, ես գրեթե հավատացած եմ... Ամեն ինչ ձեզնից է կախված, բարի բարեկամ։ Կարո՞ղ եմ ձեզ այդպես-կոչել։

— Ինչպե՞ս սիրտ արեցիք ինձ մոտ գալ։

— Օ, ես ոչ մի բոպե չէի տատանվում։ Դուք ինձ կհասկանաք։ Ես այնքան դժբախտ եմ, այնպես եմ զզջում, այնպես դաժանորեն զզջում եմ...

— Ի՞նչ հույս ունեք։ Ասացեք վերջապես։

Օբեր-լեյտենանտը արմունկներով հենվում է սեղանին և դեմքը մոտեցնում մոմին։ Այն անշարժ է, տանջահար, և միայն բերանն է լցված լարված կյանքով։

— Սպասում եմ, որ դուք ինձ կօգնեք, ինչպես մի ժամանակ ես ձեզ օգնեցի։ Սպասեցեք, սպասեցեք։ Հասկանում եմ, որ դա ձեր խղճին դեմ է։ Սակայն մի՞թե ես ձեզ Շենաուից բաց թողեցի ոչ հակառակ իմ խղճի։ Տեսնում եմ, թե ինչ եք ուզում ասել. դուք անվտանգ էիք Գերմանիայի համար։

Սակայն նայեցեք ինձ։ Ես եկել եմ ձեզնից ողորմություն խնդրելու, ներողամտություն հայցելու, և դուք կարող եք ինձ հետ վարվել ինչպես որ կամենաք։ Մի՞թե ես իրոք դեթ որևէ չափով վտանգավոր եմ ձեր երկրի համար։

Անդրեյը շինելը հանում է վրայից ու վեր կենում։ Հսկայական ստվերը շտկում է առաստաղին ձեռքերն ու անկյունից անկյուն նետվում։ Անդրեյը ծիծաղում է։

— Ի՞մ երկրի համար։ Երկրի՞ համար։

Օբեր-լեյտենանտը արձագանքում է նրան կամացուկ, մտախոհ ծիծաղով և մոթմոթում.

— Իհարկե ծիծաղելի է։ Մեծ երկրի համար, մեծ Ռուսաստանի համար... մորդվական ազատության բարեկամը։ Սակայն նույնիսկ Սեմիդոլի համար, ձեզ համար, այն գործի համար, որին ծառայում եք։ Մի՞թե վտանգավոր եմ։ Ես շրջապատված եմ դատարկությամբ, ես միայնակ եմ։ Իմ բարեկամն սպանված է։ Ես երբեք չեմ մոռանա, ինչպես երկու տարի շարունակ նրա հետ հերթարիում էինք հավաքում։ Խե՜ղճ Ֆրեյ։ Ի՞նչ պետք է անեմ առանց նրա։ Պատկերացրեք, որ ես ազատության մեջ եմ և համակված չարությամբ։ Տեսա՞ք, թե գերիներն ում կողմն էին։ Ես հատուկենտ, պատահական մարդիկ ունեի։ Ես անվտանգ եմ, անօգնական, ես ոչնչություն եմ։ Եթե օգնեք ինձ այստեղից դուրս պրծնելու, ոչ մեկին վնաս չեք տա, ինչպես և ոչ մեկին օգնած չեք լինի, եթե ինձ նրանց ձեռքը տաք։ Ո՛չ, ո՛չ։ Ես այդ մտքովս էլ չեմ անցկացնում։ Ուզում եմ ասել, որ դուք կարող է և չունենաք այն բարեկամական զգացմունքները, որոնք ինձ դրդեցին ձեզ փրկել այն ժամանակ Շենաուում։ Սակայն ես հավատում եմ ձեր մարդկայնությանը։

— Դուք այն ժամանակ ինձ ազատեցիք որպես Կուրտ Վանի բարեկամի,— շշնջում է Անդրեյը սեղանի վրա կռացած։— Իսկ գիտե՞ք, որ ես, իբրև Կուրտ Վանի բարեկամ, պարտավոր էի... ձեզ հանձնել։

Օբեր-լեյտենանտը թիկն է տալիս աթոռի մեջքին, աչքերը շռվում են, նա ուժով է զսպում շնչառությունը և ափերի մեջ տրորում է ձեռքերի չոր, բարակ մատները։

— Ինչի՞ համար է Կուրտ Վանն ինձ այդպես ատում,— փնթփնթում է նա հազիվ լսելի։

— Դուք գիտե՞ք,— շարունակում է շշնջալ Անդրեյը։— Կուրտ Վանն այստեղ է, Սեմիդոլում։ Գերիների էվակուացիան նա է անցկացնում. նա գերմանական զինվորների խորհրդի նախագահն է։

Օբեր-լեյտենանտը աչքերը փակում է և բռնում քունքերը։ Անշարժ, դեղնած, նա լռում է գլուխը բռնած, և նրա կիսաբաց բերանը ցնցվում է ջղաձգորեն։

— Ճակատագիր է,— վերջապես արտասանում է նա և կոպերը բացում։ Նրա հայացքը պղտոր է, անկենդան։

— Ճակատագիր... Ինչո՞ւ է նա ինձ ատում,— կրկնում է նա։— Իմ հույսը, թե կարող էի խորհրդում մի բան անել... միակ հույսը...

Նա հանկարծ վեր է թռչում, սեղանը շրջանցում, մոտ է վազում Անդրեյին ու հառաչում.

— Ես մարդկայնություն եմ խնդրում, միայն մարդ-կայնու-թյուն։

Այն ժամանակ Անդրեյը բռնում է նրա փափուկ, դողդոջ դաստակը, ցած քաշում, ասես ձեռնասեղմումով, և խոպոտած ասում նրա երեսին.

— Կա-մաց։ Մարդկայնություն։ Մարդկայնություն։ Հապա խնձորենուց կախված հաշմանդամը՝ մարդկայնությո՞ւն էր։ Հապա այն դժբախտ ապուշների արյունը, որոնք հավատացել էին ձեր ծիծաղելի նախաձեռնությանը՝ մարդկայնությո՞ւն է։

— Օ՜, դաժան մի լինեք։ Օ՜...

— Դաժա՞ն։

— Աղերսում եմ ձեզ։ Ֆրեյը մեր մեղքը քավեց իր մահվամբ։ Երդվում եմ, որ ամբողջ կյանքում...

Անդրեյը նրա ձեռքը բաց է թողնում և հեռանում։

— Ուրիշ ոչնչով չեմ կարող ձեզ օգտակար լինել։ Ձեզ հաջողվեց փախչել։ Ուրեմն փախեք։ Թաքնվեցեք։ Ես ձեզ չեմ խանգարում։ Մենք քվիտ ենք։ Մենք քվիտ ենք, ՏՐեր լեյտենանտ,— հանկարծ խիստ բղավում է Անդրեյը։

— Ես ձեզ հասկանում եմ։ Դուք անցնում եք ցանկապատի տակ մեռնող մարդու կողքով...

— Սակայն ի՞նչ եք ուզում ինձնից։ Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար։

Օբեր-լեյտենանտը կծկվում է, անսպասելիորեն ամոթ շփում ձեռքերն ու արագ շշնջում.

— Ինձ որևէ անուն է պետք։ Ուրիշ ոչինչ։ Որևէ անուն...

Անդրեյը նրան էր նայում ապակու նման պղտոր հայացքով, և նրա թևերը դժվարությամբ էին բարձրանում, ասես ինչ-որ բան կաշկանդում էր կամքից անկախ։

— Որևէ անուն, նույնիսկ ամենաանբարեհնչուն անունն ինձ կհասցնի Բիշոֆսբերգ։ Ես ուրիշ ոչինչ չեմ ուզում. Բիշոֆսբերգ, Լաուշե, Շենաու— սա է իմ վերջին ցանկությունն այս աշխարհում։

Անդրեյն ուժասպառ նստում է մահճակալին։

— Բիշոֆսբերգ՝ վերջին ցանկությունն աշխարհում։

Լռությունը կաշկանդում է սենյակի կիսախավարը, մոմն առաջվա պես վառվում է երկչոտ և դանդաղ, թանձրանում է հալված մոմի թունդ մեղրահամ բուրմունքը։

Անդրեյը լուռ վեր է կենում ու մոտենում օբեր-լեյտենանտին։ Կանգնում է կողքին, կուրծքը դիպցնելով նրա ուսին, ձեռքով գրկում է մեջքն ու դեմքը մոտեցնում նրա ականջին։ Անդրեյն ամբողջ մարմնով դողում է։ Ծանր, հաճախացած շնչառությամբ նա օրորում է կրծքին սեղմած օբեր-լեյտենանտին, ու նրա շշնջոցը աղմկոտ է ու ծանր.

— Եթե հասնեք Բիշոֆսբերգ, իմ մի հանձնարարությունը կկատարե՞ք։

— Դա իմ կյանքի նպատակը կլինի։

— Լսեցեք, ես այնտեղ... ես այնտեղ հարսնացու ունեմ, միակ կինը, որին... իմ հարսնացուն...

— Այո՛, այո՛, հասկանում եմ, իհարկե,— շշնջում է օբեր-լեյտենանտը, և մի մանկական բան է երևում նրա կիսաբաց շուրթերին։

Այն ժամանակ, այդ երեկոյի ընթացքում առաջին անգամ, Անդրեյի դեմքով ջերմորեն տարածվում է մուգ կարմրությունը, և մոմի դեղին բոցը մեծանում ու լայնանում է նրա աչքին։

— Դուք նրան կգտնեք, կպատմեք, թե ես... որ դուք տեսել եք ինձ, որ ես խոսում էի նրա մասին... ես ձեզ հետո կասեմ... նրան նամակ կհանձնեք... առաջին նամակը.. ես նրանից մի տարի առաջ եմ բաժանվել, և նա սպասում է... Ինձ

համար սարսափելի է մտածել. ամբողջ մի տարի։ Եվ առջևում... Սակայն ես ամեն ինչ կգրեմ նամակում... Դուք կհանձնե՞ք։ Նրան դժվար չէ գտնել։ Նրա անունն է Մարի Ուրբախ, ֆրոյլյան Մարի Ուրբախ։ Նա ապրում է...

Անդրեյը երերաց։ Նրա թևերի մեջ ծալվեց ու պարկի նման կախ ընկավ օբեր-լեյտենանտի ծանրացած մարմինը։ Գլուխը ետ ընկավ, և ձգված պարանոցով սահեց մաքոքի պես դուրս ցցված սուր ադամախնձորը։

Անդրեյը օբեր-լեյտենանտին հենեց պատին։

— Ի՞նչ պատահեց։ Ձեզ վա՞տ եք զգում։

Օբեր-լեյտենանտը ցնցվեց ու իրեն շտկեց։

— Ես... տեսնում եք,— խուլ շշնջաց նա, ցույց տալով գլուխը։

Աջ ականջից դեպի ծոծրակն էր ձգվում լայն, փոքրիկ սպիներով պատած մեծ մի սպի։

— Շամպանում եղավ, տասնհինգ թվականին, դրանից հետո այսպես պատահում է։ Ուշադրություն մի դարձրեք... ասում եք ֆրոյլյան Մարի Ուրբա՞խ— Մա-րի Ուր-բա՞խ։

Օբեր-լեյտենանտը աչքերը կկոցեց Անդրեյի վրա։

Սակայն Անդրեյը նրան չէր նայում։ Նա պարանոցը երկարացրել ականջ էր դնում պատուհանի տակ լսվող խշխշոցին։ Ապակուն խփված երեք հատու հարված կամացուկ զընգացին ու կտրվեցին սենյակի լռությամբ։

— Ինձ մոտ է,— շշնջաց Անդրեյը։

Նա զգուշորեն դուրս եկավ սենյակից, փոքրիկ խցիկից անաղմուկ սահեց նախասենյակ և կպավ դրսի դռանը։

Օբեր-լեյտենանտը մի անկյուն թռավ, մեջքը սեղմեց պատին և գրպանից հանեց սպայական նագանը։ Ձախ ձեռքով նա բռնեց աջ դաստակը և ատրճանակն ուղղեց դռանը։ Այդպես նա կանգնել էր անձայն, անտեսանելի լարված սենյակի տաք կիսախավարում։

Անդրեյն ականջ դրեց բակում լսվող փափուկ, անհաստատ քայլերին։ Դրանք կանգ առան առուտքին, և կիսափտած սանդուղքը խղճուկ ճռճռաց, կարծես քիչ էր մնում ջարդվեր։ Մեկը բռնեց երկաթե օղը։

Անդրեյը շունչը պահեց։ Հետո աղմուկով, ազատ շունչ քաշեց, կեռիկը հանեց և դուռը բացեց։ Մութ գիշերին իր

առջև շողացող սև աչքերի փայլից նա հասկացավ, որ չի սխալվել և արագ ասաց.

— Ռիտա, սիրելիս, հիմա չեմ կարող քեզ ընդունել, գործ ունեմ... ինձ մոտ մի ընկեր կա... Մի քառորդ ժամից կազատվեմ։ Ես կգամ քեզ մոտ, անպայման կգամ։

Ռիտան թևերը բարձրացրեց, լայն, սև գլխաշորը ուսերից ցած սահեց, և նա լուռ ձգվեց դեպի Անդրեյը։ Անդրեյը քընքշորեն գրկեց նրան, ասես ուրախացած այդ լռությամբ և ամուր համբուրեց նրա փափուկ, թաց, սառնավուն շուրթերը։

— Անդրեյ։

— Այո՛, այո՛։ Մի քառորդ ժամից։

— Դու արդեն գիտե՞ս։

— Ի՞նչ։

Նա անկապ շշնջաց։

— Ռազմաճակատ... քեզ վճռել են ռազմաճակատ ուղարկել... Դա Գոլոսովն է արել, Գոլոսովը, ես գիտեմ... Նա ինձ ներել չի կարող, որ քեզ հետ եմ... Դա վճռված է... ես գիտեմ... այս օրերին, գուցե վաղը... մոբիլիզացնում են։ Անդրեյ... բաժանվել հիմա...

Անդրեյը կրկին քնքշորեն գրկեց նրան։

— Մոբիլիզացիա՞ են անում։ Էհ, ինչ անենք։ Այդ լավ է։ Դա շատ լավ է։ Ես մի քառորդ ժամից քեզ մոտ կլինեմ։ Գնա։

Նա հատակից բարձրացրեց գլխաշորն ու փաթաթեց Ռիտային, նրա մեջքը շրջեց իր կողմն ու թեթևակի բռնեց աղջկա ուսերից, մինչ վերջինս իջնում էր ճոճռան սանդուղքով։

Հետո կեռիկն ամրացրեց և սենյակ վերադարձավ։ Նա անմիջապես չտեսավ իր հյուրին։ Օբեր-լեյտենանտը կանգնել էր պատին հենված, դեմքը դեպի դուռը դարձրած։ Նրա ձեռքերը գրպաններում էին։ Նա լուռ էր։ Անդրեյը մոտեցավ օբեր-լեյտենանտին ու բռնեց նրա շինելի դարձածալից։

Օբեր-լեյտենանտը կամացուկ հարցրեց.

— Ինչպե՞ս եք ասում։ Ֆրոյլայն Մարի Ուրբա՞խ։

— Սպասեցեք,— ասաց Անդրեյը։— Դուք կարող էիք ճանաչել նրան, Մարիին։ Շենաուի կողքին է Ուրբախ վիլլան, հիշո՞ւմ եք։

— Չեմ հիշում,— ծամծմեց օբեր-լեյտենանտը և մտախոհ ցույց տվեց գլուխը։

— Ես... տեսնո՞ւմ եք...

Այն ժամանակ Անդրեյը շտապեց.

— Դուք պետք է գնաք։ Կաշխատեմ ձեզ համար մի բան անել։ Սպասեցեք։ Վաղը ժամը տասնմեկին այն նույն տեղում, որտեղ հանդիպեցինք։ Ես կգամ։ Նամակ կպատրաստեմ։ Դուք կհանձնե՞ք։ Սակայն հիշեցեք անունն ու հասցեն, եթե, բան է, չհաջողվի նամակը պահպանել. Am Markt, 18/II, Մարի Ուրբախ... Հիմա...

Նա նետվեց դեպի դարակը, մի կտոր հաց վերցրեց ու տվեց օբեր-լեյտենանտին, շարունակ շշնջալով.

— Am Markt, 18/II... Am Markt...

Օբեր-լեյտենանտը փորձեց հացը ծոցում թաքցնել, մեծ և անկյունավոր կտոր էր, նա այն երկու մասի բաժանեց ու մի մասը մտցրեց շինելի ձախ գրպանը։ Հետո Անդրեյը նրան թեթևակի բռթելով դուրս բերեց խցիկից, նախասենյակից. նա դրսի դռանը մոտեցավ անձայն և երերաքայլ, ինչպես ստվեր։

Սակայն այստեղ հանկարծ վճռական դարձավ, բռնեց Անդրեյի ձեռքը, սեղմեց և պարզորոշ արտասանեց.

— Ես կհիշեմ. Am Markt, 18/II, ֆրոյլայն Մարի Ուրբախ։ Ես անսահման երախտապարտ եմ ձեզ։ Մինչև վաղը։

Նա սուզվեց մթության մեջ, վստահ վազեց անցավ բակը, կիսաբացեց դռնակն ու անցքից դուրս եկավ։

Սև, դաժան գիշերը պարուրել էր օտար մահացած Սեմիդոլը։ Սարալանջերը, իրենց վրա ծվարած խրճիթներով, հազիվ նկատելի սապատների նման բարձրանում էին դեպի կույր երկինքը։ Քաղաքի ամայի խորքում կաղկանձում էր թախծող մի շուն։

Օբեր-լեյտենանտը նագանը. հանեց և պահեց ափում, ասես նրա կշիռն էր ուզում որոշել։ Հետո այն կրկին մտցրեց գրպանը և հաստատաքայլ շարժվեց գիշերվա մթության մեջ, ձախ ձեռքի երկու մատով պահելով ազդրի վրա թռչկոտող հացի կտորը, ինչպես մի ժամանակ սուրն էր պահում...

Այդ պահին Անդրեյը սեղանի վրա կռացած, մոմի երկչոտ թրթռոցի տակ, անհարթ ծայրով, քիչ պատռված, ծալծրլված թղթի կտորի վրա գրում էր կրկնվող հուսահատական, անիմաստ խոսքերը.

Իմ սիրելի, իմ թանկագին, իմ փոքրիկ Մարի։ Ամեն շունչս, սրտիս ամեն մի զարկը, ամենուր, միշտ... միայն դու... Տե՜ր աստված...

Ուշ երեկոյան միայն, երբ Կուրտն արդեն վերջացնում էր աշխատանքը, եկավ Անդրեյը։ Նա արտասովոր աշխույժ էր, զրուցասեր, նույնիսկ շատախոս։ Պատմեց, որ հաջորդ օրը նշանակված է զորահավաքի ենթարկվածների ճանապարհումը, որ ինքը զբաղված է ջոկի հավաքով, որ Գոլոսովը հազար անգամ իրավացի է, երբ պնդում է, թե նրա՝ Անդրեյ Ստարցովի համար շատ օգտակար կլինի ռազմաճակատում թմրազերծվել։

— Սանշինոյից հետո ես կարծես վերածնվեցի,— բղավում էր նա, ձեռքերը շփելով ինչպես կայտառացնող, բուրավետ սառնամանիքին։— Եվ հասկացա, թե ինչու էի մինչև հիմա ինձ մշտապես ճնշված զգում։ Անհասկանալի մի խավար պարուրել էր ինձ, ես խեղդվում էի, շունչ քաշելու հնարավորություն չունեի։ Գիտե՞ս դա ինչ էր։ Դա այն կեղծ գիտակցությունն էր, թե իբր ես պատասխանատու չեմ աշխարհում կատարվող այս դարհուրանքի համար։ Իբր ես հանցանք չունեմ այդ սարսափի մեջ։ Սակայն, խիղճս հանգիստ չէր տալիս։ Խիղճը սարսափելի բան է, Կուրտ։ Խիղճը... այո...

Անդրեյը մի պահ հապաղեց, հետո ավելի ոգևորված շարունակեց.

— Սուտ... հասկանո՞ւմ ես՝ սուտ։ Ես մեղավոր եմ այն բանում, որ մարդիկ մահվան էին գնում, իսկ ես նրանց հետ չէի։ Այնպես չէ՞։ Բոլորը, ովքեր չէին գնում պատերազմելու, ովքեր չեն գնում պատերազմելու՝ բոլորը մեղավոր են պատերազմի համար։ Եթե մահը պետք է, եթե այն անխուսափելի է, պետք է ինքդ... հասկանո՞ւմ ես, պետք է ինքդ մահանաս, ոչ թե նայես՝ ինչպես են ուրիշները մահանում։ Սանշինոյի մոտ, երբ բոլորի հետ պիտի վազեի մահվան ետևից, ես հասկացա, թե ինչ բան է խիղճը... Ես հասկացա, որ պետք է ուսերիդ առնես սարսափի ողջ ծանրությունը, ոչ թե փախչես նրանից, համարելով, որ այդ բանում մեղավոր է աշխարհը, սակայն ոչ դու...

Անդրեյը տեղից վեր էր թռչում, սկսում էր սենյակում

վազվզել, նստում էր, դրկին վեր թռչում և գրեթե շնչահեղձ լինելով, չէր դադարում խոսելուց։ Նրա դեմքը ճմրթված էր, ինչպես անքուն անցկացրած գիշերվանից հետո, սակայն պղտոր աչքերը մի արտակարգ սուր փայլով էին վառվում։

— Օ՜, ես հիմա ուրիշ, բոլորովին ուրիշ մարդ եմ։ Ես հաճույքով եմ ռազմաճակատ գնում։ Ես այլևս չէի կարող ապրել այնպես, ինչպես առաջ։ Պարզապես կմեռնեի թախծից։ Շունչս բռնվում է, երբ հիշում եմ, թե ինչ եմ ապրել Սանշինոյի մոտերքը։ Գիտե՞ս ինչ, Կուրտ։ Ամբողջ կյանքիս ընթացքում միակ անգամն էր, երբ մի քանի բոպե դադարեցի ինքս ինձ տեսնել։ Առաջ երբեք, նույնիսկ պատանի հասակում, երբ առաջին անգամ կին ճանաչեցի...

Նա հանկարծ կանգ առավ, կարծես ապշած անսպասելի մտքից, սկսվեց և հայացքը սևեռեց մի անտեսանելի կետի, ինչ-որ տեղ աչքերի բարձրության վրա։ Հետո գլուխը թափահարեց և պատասխանեց իր մտքին.

— Ոչ։ Նույնիսկ Մարիի հետ, երբ ամեն ինչ լողում ու երերվում էր նրա հայացքում, նույնիսկ այն ժամանակ, Կուրտ, ես այդ զգացումը չեմ ունեցել։ Ես ինձ տեսել եմ կողմնակի հայացքով։ Սանշինոյի մոտերքը դադարեցի ոչ միայն տեսնել ինձ, այլև զգալ։ Եթե մահը դա է, ուրեմն՝ այն հիանալի է...

Կուրտը հետևում էր Անդրեյին այն սաստկացող և թաքցրված տագնապով, ինչպես նայում են մի մարդու, որը չափազանց եռանդագին է ապացուցում, թե միանգամայն առողջ է։ Եվ երբ Անդրեյն ասելիքը վերջացրեց, ու նրա ձայնը թուլացավ, ինչպես վանդակի մեջ թպրտացող ջարդված թռչունը, նա ասաց.

— Անդրեյ, դու շատ հոգնած տեսք ունես։

— Ինձ թվում է՝ քեզնից ոչ ավելի,— պատասխանեց Անդրեյը։

Կուրտը ցույց տվեց լամպի տակ դրված թղթերի կույտը։

— Առավոտից սրանցով եմ զբաղված։ Մի հսկայական խումբ ենք ուղարկում։ Դրանք բոլոր այն գերիներն են, որ կռվել են մարկգրաֆի դեմ... Գուցե թե՞յ կուզեիր։ Ասեմ թող պատրաստեն։

— Այո, այո, թեյ կխմեմ։ Ասա։

Կուրտը դուրս եկավ։ Նրա կրունկների թխկոցը լսվեց հաբևան սենյակում և լռեց միջանցքում։ Հեռավոր դուռը հազիվ լսելի շրխկաց։

Անդրեյը վեր կացավ բազկաթոռից, քայլեց դեպի սեղանը։

Կապույտ թղթապանակները դարսված էին հավասար կույտով։ Վերևի թղթապանակի շապկին սևին էին տալիս խոշոր լիտերները.

P — S

REICHSDEUTSCHE

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐ

Անդրեյը բացեց թղթապանակի մեջտեղը։ Մոխրավուն հաստ թղթի թերթիկը հաստ գծով բաժանված էր երկու կեսի։ Թերթի աջ կողմը լցված էր ռուսական տպագրական տառերով և գրագրի մաքուր ձեռագրով։ Պարզորոշ գրված բառերի մի կույտ ընկավ Անդրեյի աչքին.

Զինվորական կոչումը՝ Սֆրեյտոր
Անունը՝ ԿՈՆՐԱԴ
Ազգանունը՝ ՇՏԵՅՆ
Երբվանից է գերի՝ 1917 թ. փետրվարից։

Անդրեյը թերթիկը դուրս քաշեց թղթապանակի միջից և հայացքը սահեցրեց նրա հակառակ կողմով։ Թերթիկի ցածում դրված էր մանուշակագույն կնիքը և թեք, խոշորատառ ստորագրություն՝

Կ. Վան։

Անդրեյը թղթապանակը փակեց, թերթիկը երկտակ ծալեց ու շտապով դրպանը խոթեց, ապա մեջքը դարձրեց սեղանին։ Շնչառության հետ դուրս ժայթքող հեծկլտոցը զսպելու համար նա բոլոր մկաններն այնպես լարեց, որ կարծես զսպանակով ետ թռավ այն սեղանից, որի ծայրին նստել էր։ Եվ այդ շարժման հետ նրա փորն էլ խոր ներս ընկավ, ու նա բարձր զկռտաց։ Երբ հեռվից քայլեր լսվեցին, Անդրեյը նետվեց դեպի հարևան սենյակի կիսախավարը ու բղավեց մի քանի անգամ իրար ետևից, ամեն անգամ ավելի ու ավելի շփոթ.

— Պետք չէ, պետք չէ...

Մթության մեջ նա դիպավ Կուրտին և բռնեց սրա ձեռքերը։

— Պետք չէ։ Չեմ ուզում, միտքս փոխեցի...

— Ի՞նչ...

— Թեյ չեմ ուզում, չեմ կարող, չեմ հասցնի։ Հիշեցի, որ դեռ պետք է գնամ... պետք է տեղ գնամ մի կարևոր գործով... ինձ հանձնարարել են...

— Քեզ ի՞նչ է պատահել։

Կուրտն Անդրեյի ձեռքն ամուր սեղմեց ու քաշեց դեպի լույսը։ Սակայն վերջինս չէր հանդարտվում, պնդում էր, թե անհետաձգելի գործ ունի, զկռտում, շնչահեղձ էր լինում՝ մերթ բղավելով, մերթ շշնջալով և շտապով մի կերպ քաշում անճոռնի շինելը։

— Ինչպե՞ս էի մոռացել։ Մնաս բարով, Կուրտ, ես ոչ մի կերպ չեմ կարող...

Կուրտը խստորեն բռնեց նրա ուսերից.

— Բարեկամս, քեզ բոլորովին չես տիրապետում։ Դու տենդի մեջ ես։

— Այո՛, այո՛։ Սակայն դա լավ տենդ է, լավ։ Ես այնքան երջանիկ եմ։ Մնաս բարով։

Կուրտը նրան սեղմեց կրծքին, գրկեց և՝ բարձրահասակ, ուղիղ, առանց մեջքը թեքելու, կանգնեց այդպես անշարժ։

— Եթե դու մեռնես, Անդրեյ, ես մի մխիթարություն կունենամ՝ դու լավ գործի համար կմեռնես։ Դեհ...

Նա շրթունքները դիպցրեց Անդրեյի այտին, հետո նրան թողեց։ Այն ժամանակ Անդրեյին մի սարսափելի դող համակեց, ասես հանկարծակի դիպավ սառը երկաթին։ Նա, զկռտոցը զսպելով, մի կերպ արտասանեց.

— Մնաս բարով,— և դուրս վազեց։

Փողոցները սև էին, քամին անկյուններից փչում էր հանկարծահաս պոռթկումներով, կատաղորեն ձաղկում ծառերի տերևաթափ ճյուղերը։

Անդրեյը վազում էր առանց շունչ առնելու, շարունակ իրար բերելով շինելի փեշերը, կարծես գլխի չէր ընկնում կոճկել։ Զկռտոցը տանջում էր նրան, նա գրեթե շնչահեղձ էր լինում, և քամին մթության մեջ տարածում էր նրա ընդհատուն, թնդաձայն հեծկլտոցը։ Սակայն Անդրեյը կանգ չէր առնում։

Նա վազեց մինչև ծայրամասի սարալանջերը, շրջանցեց իր տունը և նետվեց դեպի սարը այն փողոցով, որը դաշտ էր տանում։ Այստեղ քայլերը դանդաղեցրեց և սկսեց նայել շինություններին։ Սակայն խրճիթները թաղված էին գիշերվա անթափանց խավարի մեջ, ինչպես թանաքի մեջ ընկած ճանճեր, և մեկը մյուսից հնարավոր չէր տարբերել։

Անդրեյը կանգ առավ։

Եվ նույն պահին մեկը վստահորեն բռնեց նրա արմունկը։ Անդրեյը ետ թռավ և արագ շրջվեց, զկռտոցի նոպան սեղմեց որովայնն ու կոկորդը, նա ցավից երերաց.

— Ես եմ,— լսեց նա քամու ոռնոցի միջից։

Անդրեյը գրպանից հանեց ծռմռված թերթիկը և մեկնեց մթության մեջ։ Սառը մատները դիպան նրա ձեռքին։ Նա արտասանեց ընդհատուն և խուլ ձայնով.

— Մի կերպ մենակ գնացեք... էշելոնի հետ չի կարելի... մինչև Մոսկվա...

Նա նետվեց սարի տակ, սակայն ետևից հասավ մի բղավոց.

— Մարիի նամա՛կը։

Անդրեյը քաշեց վերնաշապկի օձիքը, ծոցից հանեց նամակն ու դրեց սառը, չոված մատների մեջ։

Քամին փչում էր համընթաց, ճամփան ցած էր գլորվում, և Անդրեյի վազքը նման էր անդունդ նետած քարի թռիչքի։

Նա վազեց մինչև իր տան դարբասը, բակ ներս ընկավ, ելավ առմուտքին և նոր միայն շունչ քաշեց։ Դուռը նրա համար բացեցին, նախասենյակով անցավ խոհանոց, շոշափեց նստարանին դրված ջրով դույլը, պպզեց և, դույլը թեքելով, սկսեց եզրից ջուր խմել։ Ջուրը նրան թվաց տաք, եռման։ Նա քաշվեց, հանգստացավ և կրկին սկսեց խմել մեծ-մեծ կուներով։ Հետո շերեփը գտավ, ջուր վերցրեց, պատուհանը բացեց, գլուխը դուրս հանեց և շերեփի ջուրը լցրեց գլխին։ Հետո ընկավ նստարանին։

Իր սենյակ մտնելով, Անդրեյը լույսը չվառեց։ Նա շոշափելով պատրաստեց անկողինը, դանդաղ հանվեց և պառկեց՝ վերմակով պինդ ծածկված։

Քունը անսպասելիորեն շուտ վրա հասավ, այնպես որ

Անդրեյը ոչ մի անգամ չշարժվեց, և լռությունը ավելի ու ավելի սակավ էր ցնցվում զկռտոցից։

Եվ կարծես նույնքան արագ, ինչպես քունը, վրա հասավ տեսիլքը.

> Անսահման մի լայնարձակություն լցված է շողշողուն կապտությամբ։ Կապտությունն ամենուր է՝ վերևում և ներքևում, ամեն կողմից միայն այն է՝ անհատակ, հորդող կապտություն։ Եվ այդ կապտության մեջ, նրա խորքում՝ և միաժամանակ կարծես շատ մոտ Անդրեյի առջև դրված է մի անշարժ դատարկ աթոռ։ Աթոռը բարձր, ուղիղ թիկնակ ունի, ուղիղ ոտքեր և հարթ նստոց։ Այն բոլորովին անշարժ է, վրան ոչ ոք նստած չի։ Աթոռը դատարկ է։ Աթոռի վրա ոչ ոք նստած չի։ Սակայն այն կարծես սպասում է, թե մեկին պետք է նստեցնեն...

Անդրեյը սթափվեց։ Նա պառկել էր ամբողջ մարմնով և դեմքով պատին կիպ կպած։ Վերմակը, բարձը, սպիտակեղենը թաց էին քրտինքից։ Նա վեր թռավ, ոտքերը դրեց հատակին և շունչը պահեց։ Աղոտ, թույլ այգաբացը նշմարվում էր պատուհանից դուրս։ Սակայն Անդրեյի առջև, անսահման, դողդոջ կապտության մեջ, դեռևս երևում էր անշարժ դատարկ աթոռը։ Աթոռին ոչ ոք նստած չէր։ Սակայն այն սպասում էր ինչ-որ մեկին։ Դա պարզ երևում էր...

Անդրեյը լսեց իր ատամների չխկչխկոցը, և ասես արձագանքելով այդ չխկչխկոցին, նրա մերկ կրունկներն սկսեցին արագ-արագ թխկթխկացնել հատակին։

Դա Անդրեյ Ստարցովի Սեմիդոլում անցկացրած վերջին օրն էր։

Այն ամենը, ինչ անում էր այդ օրը, մի կծիկ էր դառնում։ Անդրեյը հազիվ էր հիշում բաղմությանը ծածկող աղջամուղջը, բաղմություն, որ ուղեկցում էր զորահավաքվածներին։ Անկանոն ձայներ, պլակատներ և դրոշներ, որ ծալել էին հարմարության համար, հրհրոց կայարանի նեղ կառամատույցում։ Ուղեկցողների քաղաք վերադառնալուց առաջ Անդրեյը

ինչ-որ բան էր ասում, և բղավոցներից նրա ոտքերի տակ երերում էր ճոճոան արկղը։ Հետո նա հրաժեշտ տվեց ընկերներին, և նրանց դեմքերը թվացին ամոթխած, իսկ համբույները՝ գործնական։ Ընկեր Գոլոսովը խորամանկորեն ափի մեջ թաքցրեց ծիծաղը և ամուր սեղմեց նրա ձեռքը։ Ռազմական օդաչու Շչեպովը Անդրեյին մի կողմ տարավ և նամակ տվեց հորը՝ Սերգեյ Լվովիչին հանձնելու համար։

— Դուք գուցե ստիպված լինեք որոշ ժամանակ մնալ Պետերբուրգում, ահա ուրեմն... Կարող եք հորս մոտ իջնել։ Ես նրան գրում եմ... Հետո, ի միջի այլոց գրել եմ նրան, որ ամուսնացել եմ, սակայն մոռացել եմ կնոջս անունը հայտնել... Ասացեք։ Ի դեպ դուք գիտե՞ք։ Ես ամուսնացել եմ Կլավդիա Վասիլևնայի հետ...

Հետո վագվզոցը, սև, խճճված ճանապարհներով, կույր վագոնների միջև, հետո ճանապարհը դեպի քաղաք, որտեղ պետք էր ինչ-որ բան անել՝ միայնակ և երկար ճանապարհ։ Այդ ամենը մշուշվեց այն անդադրում պահանջով, որ ևս մեկ անգամ ապրի լիակատար ազատության զգացումը, այն զգացումը, որ ունեցավ Սանշինոյի մոտերքը, դաշտերում՝ մարմին չունենալու զգացումը։

Գուցե Անդրեյը վախենում էր երա՞զը հիշել։ Գուցե նա շտապում էր իր մե՞ղքը քավել։ Սակայն կյանքում ապրած իր լավագույն զգացողությանը անձնատուր լինելու նրա կամքը համառ էր և ետ էր մղում մնացած ամեն բան։

Եվ միայն ահա թե ինչը պատռեց այդ անընդմիջությունը, ծանր սրի նման մի կողմ նետեց այդ ամբողջ օրն ու դարձրեց այն հրաժեշտի օր։

Գիշերը ցուրտ էր։ Երկինքը արտասովոր բարձր էր թվում, և աստղերը մեռած էին։ Կայարանի առջևի հրապարակը ոչ թե ինչպես միշտ նմանվում էր պարապուտի, այլ կարծես տարածվել էր անապատի նման։ Ձին շարժում էր ոտքերը. կառապանի թեթև երկանիվ սայլը աջ ու ձախ էր թեքվում, սակայն մեկնելու, շարժվելու զգացողություն չկար։ Հանկարծ գիշերվա մեջ անտանելի մի կերպարանք թռավ կառքի ոտնակին։ Ձին կանգ առավ։

— Ռի՛տա,— բղավեց Անդրեյը։

— Ես ուզում էի, որ ոչ ոք չտեսնի, որպեսզի Գոլոսովը չտեսնի,— շնչահեղձ լինելով ասաց նա։ Հետո ընկավ Անդրեյի գիրկը, սառցե շուրթերով սեղմեց նրա բերանը, սառը թափթփված մազերով դիպավ նրա դեմքին, պարանոցին, ձեռքերին և այդ աշնանային գիշերվա, շուրթերի ու մազերի սառնության մեջ անսպասելի ջերմությամբ ասաց.

— Գնա՛ս բարով։

Անդրեյը պետք է մի բան բղավեր, որովհետև ճիչը խցկվել էր կոկորդը, որովհետև Ռիտան հանկարծ պոկվեց կառքից և փախավ գիշերվա մթության մեջ, որովհետև հանկարծ այնպես ստացվեց, կարծես նա հեռանում էր մորից, հեռանում ընդմիշտ. պետք է, պետք է բղավեր, սակայն բղավելու փոխարեն նա բոթեց կառապանի մեջքն ու մի կերպ արտաբերեց.

— Քշի՛ր։

Եվ կրկին ամեն ինչ մշուշվեց մի պարզորոշ ցանկությամբ՝ կրկին անգամ, շուտով զգալ, ապրել այն, ինչ եղել էր Սանշինոյի մոտերքը, դաշտերում։

— Քշի՛ր, քշի՛ր, քշի՛ր։

Հետո Անդրեյը խցկվել էր տաքացվող ապրանքատար վագոնի մի անկյունում և, օձիքը բարձրացրած, փակել աչքերը։

Մի ժամ անց գնացքը նրան քարշ էր տալիս Պետերբուրգի ճամփով։

Այդ պահին Կուրտը Գերմանական զինվորների Սեմիդոլի խորհրդի աշխատանքի մասին զեկույց էր կազմում Մոսկվա ուղարկելու համար, և գրեց իր զեկույցի վերջին կետը.

Հայտնում եմ, որ Սեմիդոլի խորհրդի գրասենյակից անհետացել է սաքսոնական ծառայության եֆրեյտոր Կոնրադ Շտեյնի անունով գրված անձնական վկայականը։ Այդ փաստաթուղթը ներկայացնողին պետք է բռնել։ Իսկական Կոնրադ Շտեյնին, բացի անձնական վկայականից, իմ կողմից կտրվի նաև հատուկ փաստաթուղթ։ Այս մասին միաժամանակ հայտնում եմ Գերիների տեղափոխման կենտրոնական խորհրդին։

ԳԼՈՒԽ
ԻՆԸ ՀԱՐՅՈՒՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Ծածկոցները հանված են

Պատուհաններից դուրս դանդաղ տեղում էր թեթև, փաթիլավոր ձյունը։ Սարերն իրար էին սեղմվել սպիտակ, գրեթե թափանցիկ, և նրանցից անդրադարձվող լույսը սենյակը լցնում էր խաղաղությամբ։ Սեղանին, լայնահատակ սրճամանի տակ, երերում էր սպիրտայրոցի կապտավուն բոցը։

Օբեր-լեյտենանտ Ֆոն ցուր Մյուլեն-Շենաուն նկարների վրայից զգուշորեն հանում էր քաթանե ծածկոցները։ Նա ծածկոցը շպրտում էր հատակին, անշտապ իջնում սանդուղքից և նայում էր նկարը։ Հետո կրկին բարձրանում էր սանդուղքին, բացում հաջորդ նկարը և կրկին նայում հեռվից։ Երբեմն շրջվում էր դեպի պատուհանը, նայում, թե ինչպես է ձյունը հանդարտ տեղում, ուղղում էր ճմրթված վերնաշապկի վեր ծալված թևքերը և կրկին գործի անցնում։ Նրան օգնում էր լուռումունջ ծառան, որը ծածկոցները դարսում էր մի անկյունում և սանդուղքը տեղափոխում։

Օբեր-լեյտենանտը իրար ետևից երկու գավաթ սուրճ խմեց, ծխամորճը ծխեց և հրամայեց.

— Լվացվելու ջուր պատրաստիր և գնա ձին թամբիր։

Ծառան դուրս եկավ, սակայն մի րոպեից վերադարձավ և զեկուցեց.

— Ֆրոյլայն Ուրբախ։

Օբեր-լեյտենանտը սեղմեց բազկաթոռի կողերը, մարմինն առաջ նետեց, որպեսզի տեղից վեր թռչի, սակայն իսկույն ևեթ իրեն տիրապետեց, հանգիստ ելավ տեղից ու հանգիստ էլ պատասխանեց.

— Ներս հրավիրիր։

Մարին արագ ներս մտավ ու կանգնեց սենյակի մեջտեղում։ Նա դեռևս պարուրված էր թեթև սառնամանիքի թարմությամբ, և ուսերին փայլփլում էին հալված ձյունափաթիլների հետքերը։

Օբեր-լեյտենանտը գլուխ տվեց։ Մարին կանգնած էր անշարժ։ Օբեր-լեյտենանտը քայլեց դեպի աղջիկը, և նրա աջ ձեռքը հազիվ նկատելիորեն ցնցվեց։ Նա ասաց.

— Դուք եկաք...

Ինչ-որ բան խանգարում էր նրան խոսել, հայացքը պտտեցրեց շուրջը, կարծես հանկարծ անծանոթ սենյակ էր բնակել, քայլեց դեպի դուռն ու ստուգեց արդյոք լա՞վ է փակված։ Սեղանի մոտ վերադառնալով, նա իր վրա ջանք գործադրեց, որ Մարիի կողքից անցնի, նրա քայլերը դանդաղեցին, և նա պետք է կռանար, որպեսզի քայլերը կանգ չառնեին։

— Նստեցեք,— ասաց նա։

Սակայն Մարին շարունակում էր կանգնած մնալ, հայացքը մի կողմ թեքած։ Օբեր-լեյտենանտը նայում էր Մարիին, և նրա կախ գցած ձեռքերի մատները ջղաձգվում էին, ասես շարունակ ուզում էր մի բան բռնել կամ որևէ շարժում անել, սակայն վարանում էր։ Նրա մշտապես կիսաբաց շուրթերը մերկացրել էին շատ սպիտակ ատամները, և դեմքը միանգամից վախեցած ու գիշատիչ արտահայտություն էր ստացել։

— Գրեթե չորս տարի...— կրկին խոսեց նա։— Երբեք չէի կարծում, որ այս սենյակում ձեզ կտեսնեմ այսպիսին... օտար։ Այս սենյակում, Մարի...

Մարին հանկարծ ընդհատեց նրան.

— Դուք ինձ խաբե՞լ եք։

— Ե՞ս,— բացականչեց օբեր-լեյտենանտը։

Նրանց հայացքները մի պահ հանդիպեցին, հետո Մարին կրկին աչքերը փախցրեց, և օբեր-լեյտենանտը շրջվեց դեպի սեղանը։ Նա դարակը բացեց, հանեց թղթապանակը, միջից վերցրեց կեղտոտված, ճմրթված ծրարը, մոտեցավ Մարիին և լուռ մեկնեց։ Մարին ծրարը պատռեց, նայեց նամակի սկզբին, հետո վերջը, և օբեր-լեյտենանտը տեսավ, թե ինչպես նրա այտերի վրա տարածվեց մուգ, դանդաղահոս արյունը։ Մարին նամակը սեղմեց և ձեռքը թաքցրեց վերարկուի գրպանում։

Օբեր-լեյտենանտը հեռացավ, կանգնեց պատուհանի մոտ, և, աչքերը կկոցած նայելով ձյան վետվետանքին, մի կերպ, դժվարությամբ արտասանեց.

— Ես ձեզ երբեք, ոչ մի բանում չեմ խաբել։ Դուք եք ինձ խաբել։

Մարին կամացուկ պատասխանեց.

— Ես ձեզ չեմ սիրում։

Օբեր-լեյտենանտը չպատասխանեց։ Մարին մի քիչ հապաղեց, հետո հանկարծ բարձրաձայն, շտապով ասաց.

— Ես ձեր նամակի ոչ մի խոսքին չեմ հավատում։ Ձեր գրածը ամբողջապես սուտ է...

Այն ժամանակ օբեր-լեյտենանտը կտրուկ շրջվեց նրա կողմը, ձեռքերը դրեց մեջքին և հոհոաց։ Նա հոհոում էր ետ ու առաջ օրորվելով, առանց հայացքը Մարիից կտրելու, սապոգների քիթը գորգին դոփելով։ Միծաղը թույլ չէր տալիս նրան ոչ մի բառ արտասանել։ Վերջապես նա հանդարտվեց, մի հոնքը վեր տնկեց և, ուսերն անփութորեն շարժելով, խորհուրդ տվեց.

— Հարգելի ֆրոյլայն, իմ կարծիքով, ամենից լավն այն կլիներ, որ դուք մի զբոսանք կատարիք դեպի Պետերբուրգ և ինքներդ համոզվեք, թե իրականությանն ինչ չափով է համապատասխանում այն ամենը, ինչ հաճեցիք սուտ անվանել...

Նա աչքերը կկոցեց Մարիի վրա, կրկին ոտքը դոփեց գորգին, վերցրեց ծխամորճը, սակայն չծխեց ու կրկին նետեց սեղանին։ Տառապանքն ու զոհողությունը միախառնվել էին այդ մարդու շուրթերին, և նա հարցրեց.

— Դուք ինձ ատո՞ւմ եք... Ինչ արած։ Ես սոսկ ճշմարտություն եմ ձեզ գրել...

Նա հանկարծ նկատեց, որ Մարին դունատ է և տարօրինակ կերպով օրորվում է, առանց ոտքերը տեղից շարժելու։ Նա քայլեց դեպի աղջիկը, սակայն վերջինս արագ շրջվեց ու դուրս եկավ սենյակից։

Օբեր-լեյտենանտը ականջ դրեց, թե ինչպես մարեցին նրա քայլերը, նետվեց դեպի դուռը, սակայն կես ճամփին հայհոյանքի նման անմիտ ու դաժան մի բան բղավեց և կանգ առավ։

Անկյունում դաբսված էին խնամքով ծալված ծածկոցները։ Դրանց ետևը դրված էր պատից իջեցված «Նյուրնբերգի գերմանական թանգարանի բակը» նկարը։ Օբեր-լեյտենանտը գրպանից հանեց ծալովի դանակը, բացեց, ոտքը դրեց ծածկոցների վրա, դանակը թափով մտցրեց նկարի մեջ և կտավը ծայրից-ծայր պատռեց։

Եվ դա այնպիսի մի ձայն արձակեց, կարծես թիթեղյա տանիքին մի բուռ սիսեռ նետեցին, և այն թեքությամբ գլորվեց ու լցվեց ջրհորդանները։

Նոր երկիր

— Հայրիկ, ձեզ խնդրում ենք պատիվ անել մի քիչ նեղվել...— ասում է Շչեպով-որդին։

— Իսկ դու երբևէ պատիվ ունեցե՞լ ես,— բղավում է հայր-Շչեպովը։

— Դա ձեր անձնական կարծիքն է։

— Տե՜ր աստված։ Մի որդիս մինչև վերջ թալանեց, ծերուկիս անտեր թողեց։ Հիմա մյուսն է եկել՝ հորը փողոց է շպրտում։ Գնա ու պատի տակին հոգիդ տուր։

— Ձեզ ոչ թե դուրս են շպրտում, այլ խնդրում են՝ մի քիչ ավելի փոքր սենյակ զբաղեցնել։

— Նզովում եմ քեզ հայրական անեծքով հավիտյանս։

— Հայրիկ, դուք սրիկա եք...

— Նզովո՜ւմ եմ, նզովո՜ւմ։ Հրե՛շ։

Անդրեյի ականջին են հասնում ծերունական կատաղի ողբ ու կոծը, քաշքշվող աթոռների աղմուկը, դռների շրխկոցը։ Հետո ամեն ինչ լռում է, և պատի ետևից լսվում է որդի Շչեպովի ձայնը։

— Կլավդիա, Ստարցովին չի կարելի դուրս անել, նրա կինը շուտով պետք է ծննդաբերի...

Կի՞նը։

Անդրեյը շտկվում է, վեր կենում, մոտենում է անկողնուն, որի վրա նստած է Ռիտան։ Նա ձեռքը դնում է Ռիտայի գլխին, շոյում նրա փափուկ, հարթ մազերը, խոսում այնպես, որ միայն Ռիտային է լսելի։

— Իմ կինը։

Ռիտան նրա ձեռքը սեղմում է այտին։ Անդրեյը նայում է Ռիտայի ժպիտին՝ խղճուկ ժպիտ, որը տարօրինակ կերպով լուսավորում էր նրա ուռած, այտուցված դեմքը։ Այն տգեղ էր, ոհաճ՝ ժամանակից վաղ առաջացած, կարծես օտար թորշո-

մությամբ, և Անդրեյը քնքշորեն համբուրում է այդ դեմքը։

— Ես գնում եմ,— ասում է նա։

— Ո՞ւր։

— Ինձ այստեղ... մոտ մի տեղ... խոստացել են մի բաժակ կաթ... Հետո մի շիշ կվերցնեմ...

— Արդեն քիչ մնաց,— ասում է Ռիտան։

— Այո, իհարկե։ Ամենասարսափելին արդեն անցկացրինք. ձմեռը... Այսօր հաց են տալիս, ես կմտնեմ...

Նա ժպտում է Ռիտային ու գնում։

Մինչ նա միջանցքում գլխարկն է որոնում, մուտքի դռան բարավորին անձայն ցնցվում է զանգակը։ Անդրեյը դուռը բացում է այն պահին, երբ նախասենյակում լսվում է մի փոքր ավելի վստահ զանգ։

Անդրեյի դիմաց, սանդուղքի բաղրիքին հենված կանգնել է մի աղջիկ։ Նրա մազերը, սպիտակ շրջազգեստն ու բլուզը թրթռում են սանդղահարթակից բաց բնակարան խուժող տաք միջանցիկ քամուց։ Նա շտապով Անդրեյին է մեկնում մինչև արմունկները մերկ, նիհար թևերը և ձգվում է դեպի նա։ Անդրեյը նրան ճանաչում է ոչ թե ձեռքերից և ոչ էլ փայլուն կլոր աչքերի հայացքից, այլ մարմնի մի կորություն, որ հանկարծ նկատելի էր դարձել քամուց ոտքերին սեղմված հագուստի տակից։ Եվ, ասես պաշտպանվելով, Անդրեյը ձեռքերը քաշում է դեպի կուրծքը, ափերը դուրս պահած, նահանջում է դեպի նախասենյակ, կիսախավարը, դեպի պատից կախված զգեստը։ Բարակ, ուղիղ ձեռքերը նրա կողմն են ձգվում դռան միջով, ավելի ու ավելի են մոտենում, և ահա հանկարծ նրան թվում է, թե լսում է մի շշունջ.

— Անդրեյ, չե՞ս հավատում, Անդրե՛յ։

Այն ժամանակ Անդրեյը խեղդվում է երջանիկ ու վայրի խոսքից.

— Դո՛ւ... դո՛ւ, դո՛ւ։

— Մարի՜,— բղավում է նա ու ձեռքերն առաջ նետում։

Սակայն նույն պահին տեսնում է, որ Մարին հայացքը մի կողմ է դարձրել նրանից ու աչքերը իջեցրել մինչև կես մարդահասակ բարձրության։ Անդրեյը գլուխն այն կողմ է շրջում։

Նրա կողքին կանգնել է Ռիտան։ Անդրեյը իսկույն նկատում է սրա ցցված փորը, արդեն կախ ընկած և այլանդակ կերպով մեծ փորը, որ առջևից վեր էր տնկել շրջազգեստի փեշը։

Մարին հենվում է դռանը, նրա թևերը կախ են ընկնում, նա կարծես ամբողջապես կախ է ընկնում օդում։ Հետո հայացքը Ռիտայի փորից դարձնում է դեպի դեմքը, նրա կոպերը հանկարծ մահանում են, աչքերն անշարժանում։

Անդրեյն ուզում է առաջ շարժվել, նրան խանգարում են պատից կախված շինելները, վերարկուները, հովանոցները, նա ինքն էլ դառնում է այդ շինելների նման փալաս, անողնաշար։ Նա վերջին ուժերը լարած պոկվում է պատից, քայլում դեպի Մարին, և նրան չհասած, մեկնում է ձեռքը։

— Մարի...

Սակայն հենց որ նրա մատները կպչում են Մարիի արմունկին, աղջիկը սուր ճչում է.

— Ա՜-ա՜-ա՜։

Անդրեյը ձեռքը ետ է քաշում և, թեքվելով նրա դեմքի վրա, կրկնում է հազիվ լսելի.

— Մարի...

Եվ Մարին կրկին ճչում է սուր, միևնույն սուր ճիչով, առանց ձայնն իջեցնելու կամ բարձրացնելու.

— Ա՜-ա՜-ա՜։

Այն ժամանակ նրա ճիչին արձագանքում է Ռիտայի երկարաձիգ ու բութ հառաչը։ Անդրեյը շրջվում է ու տեսնում, ինչպես Ռիտան կռացել է հատակին, ասես մի բան է դցել ու փնտրում է մութ անկյունում, ինչպես հետո շտկվում է և կրկին անսպասելիորեն ու անշնորհք կռանում։ Անդրեյը շարժվում է Ռիտայի կողմը, սակայն այդ պահին Մարին դռնից դուրս է թռչում, և քարե սանդուղքին հատու թխկթխկում են նրա կրունկները։

Անդրեյը դուրս է թռչում սանդղահարթակ, կախվում բաղրիքից և առանց շունչ առնելու մի քանի անգամ իրար ետևից բղավում խոր, դատարկ սանդուղքների վրայով.

— Մարի՜, Մարի՜, Մարի-ի՜...

Նա տեսնում է, ինչպես մեկ, երկու, երեք անգամ երևում ու անհետանում է աղջկա սպիտակ զգեստը, ինչպես մի պատուհանի մոտ ծփում են նրա մազերը, լսում է, ինչպես դղրդաց մուտքի դուռը, որ թափով շրխկացրին և ինչպես սան-

գուղքների վրա ոռնաց պոռթկուն միջանցիկ քամին։ Հետո նա գլուխը կախում է բազրիքին։

Բաց բնակարանից նրա ականջին է հասնում Շչեպովի զնգուն ձայնը.

— Կլավդիա... պետք է վազել մանկաբարձուհու ետևից։

Անկյունից գլորվում է երեխաների աղմկոտ բազմությունը՝ եռում, փրփրում, արևի տակ խայտում գույնզգույն շիթերով, լցվում պողոտայով լողացող մարդկային մարմինների հոծ, ծանրաշարժ հոսանքի մեջ։ Այդ հոսանքի մեջ երեխաները տրորվում են ինչպես տոպրակի մեջ լցված հատապտուղներ, սակայն նրանց բազմությունը դառնում է ավելի փոքրիկոտ, և շիթերի վերևում, որ նման էին դյուղական մահճակալների վարագույրների, ավելի հաճախ են փայլփլում ատամների սպիտակ կետերը։

Եվ ահա անկյունից գլորվող երեխաների բազմության մեջ չգիտես որտեղից մի աղջիկ է ընկնում։ Նա շվարած նայում է շուրջը, ուզում է փողոցը կտրել, որպեսզի ճամփան շարունակի, նա անպայման պետք է շարունակի գնալ, իր ճամփով՝ բազմաթիվ շենքերի բարձր, անվերջանալի շարքի առջևով։ Սակայն նրան բռթում են, քաշքշում, պտտեցնում այդ վազվզող երեխաները, և նա, ջրվեժի մեջ ընկած տաշեղի նման, անզոր պտտվում է գույնզգույն շիթերի փրփուրի խորքում։ Նրան անկյունից մի կողմ են տանում։ Երեխաները նրան կիպ սեղմում են իրենց անդաղրում — արագաշարժ մարմնիկներով, որ սեղմվել, քիչ է մնացել տրորվեն մարդկային հոծ հոսանքի մեջ։ Աղջկան են դառնում մի քանի ծիծաղելի, զնոող հայացքներ, նրան ինչ-որ բան են բղավում անհասկանալի լեղվով, նրա առջև բացվել են սուր-սուր, փայլփլուն ատամներ և փոքրիկ, ճարպիկ ձեռքեր քաշքշում են նրա բլուզը։ Աղջիկը մի բան է ասում, ի պատասխան երեխաների գլխավերևը ծիծաղ է պայթում, նա տեսնում է, ինչպես արևից և ծիծաղից ոչ խոր կնճիռներով ուրախ ակոսվում են պստլիկ դեմքերը, և կրկին ինչ-որ բան է ասում։ Այն ժամանակ երեխաներն սկսում են բղավել, շարունակ կրկնելով միևնույն բառը և ձեռքերը թափահարում են բազմության մեջ դեպի մի կետ։ Դժվարությամբ, հրմշտելով, աղջկան է մոտենում դողդոջ

գլխով մի ծեր կին, խունացած հովանոցը մեջքին գցած։ Երեխաները ձգվում են դեպի կինը, մատներով ցույց են տալիս աղջկան, իրար հերթ չտալով ինչ-որ բան են բղավում։

Պառավը ֆշշացնում է երեխաների վրա, աշխատում է վախեցնել դեմքի խիստ արտահայտությամբ, սակայն երեխաներն ավելի ուրախ, ավելի անզուսպ են սկսում ծիծաղել։ Պառավը ժպտալով խնդրում է ներել անզուսպ երեխաներին, և ճերմակ մազերը ցնցելով, ասում է աղջկա ականջին.

— Probablement, vous n'etes pas d'ici, mademoiselle?

— Oui, madame,— պատասխանում է աղջիկը սոսկ շուրթերով, անսպասելիորեն կռանալով, կարծես պատրաստվում էր կնիկսեն անել,— je ne suis pas d'ici...

— Je vois bien, que ce pays vous parait nouveau. Allez-vous quelque part?

— Non... en ce moment je ne vais nulle part...

— Voulez-vous, alors, nous faire compagnie ?

Աղջիկը նայում է շուրջը։ Անթիվ-անհամար մանկական դեմքեր այս ու այն կողմ երերալով և դեպի վեր ձգվելով, առանց կանգ առնելու լողում են նրա ետևից։ Նա ասում է ցրված.

— Oui, si vous voulez...

Հետո բարձրաձայն հարցնում է.

— Mais ou est-ce-que vous allez avec ce tas d'enfants ?

— Nulle part, tout droit[1]— և պառավը գողդոջ ձեռքով ցույց է տալիս հեռուն՝ ուղիղ, երկնքին դեմ առնող պողոտայի ծայրը։

Մարին նայում է այնտեղ, ու նրան թվում է, թե ինքը Լաուշեի գագաթին է, և նրա ոտքերի տակից դեպի թեք եր-

[1] — Դուք, հավանաբար, տեղացի չե՞ք, օրիորդ։
— Այո, տիկին... Ես տեղացի չեմ։
— Տեսնում եմ, ձեզ համար այս երկիրը նորություն է։ Դուք որևէ տե՞ղ եք գնում։
— Ոչ... հիմա այլևս ոչ մի տեղ չեմ գնում...
— Կուզեի՞ք մեզ ընկերակցել։
— Այո, եթե ձեզ հաճելի է...
— Սակայն, դուք ո՞ւր եք գնում այսքան երեխաների հետ։
— Ոչ մի տեղ, ահա հենց այսպես, ուղիղ (Ֆրանս.)։

կինքն է վազում հավերժ նոր և հավերժ կանչող լայնարձակությունը։ Գլխավերևում սլանում են սպիտակ ամպաշղթաները, քամին վրա է տալիս պոռթկումներով՝ տներին ծեփելով ամբոխի բվվոցն ու դոփյունը, ինչպես Լաուշեի վրա անտառների աղմուկն էր ծեփվում լեռների զառիկողերին։ Եվ ինչպես Լաուշեի վրա, երբ բարձրանում ես կատարին ու շունչ առնում, կուրծքդ լայնանում է, և ուզում ես, որ լեռն անընդհատ վեր բարձրանա ու այդ վերելքին վերջ չլինի։

Մարին մի հայացք է նետում պառավի կողմը։ Վերջինս գլուխն այնքան ուժեղ է ցնցում, որ ուսերն էլ են ցնցվում։ Երբեմն-երբեմն նա կարծես շշնջում է.

— Tout droit, tout droit...

Ուղիղ, ուղիղ... Մի աղջիկ Մարիին է մեկնում բարդուց պոկած փոքրիկ ճյուղիկ։ Մարին վերցնում է, ժպտում, սեղմում աղջկա նիհար, սուր ուսիկը, նայում նրա աչքերի մեջ։ Այդ աչքերը խորն են և ուրախ, ինչպես ջրափոսիկներ, որոնց մեջ խայտում է ամպոտ օրը։ Բազմությունը հանկարծ նոսրանում է, տեղն ընդարձակվում է, երեխաները նետվում են առաջ գնացածների ետևից, երկու, երեք, չորս, գուցեև ավելի աղջիկներ բռնում են Մարիի ձեռքերից և ծիծաղելի քարշ են տալիս իրենց ետևից։ Մարին ծիծաղում է ու վազում... Ահա թե ուր բերեց նրան Անդրեյը։

— Tout droit, tout droit!

Այդ ժամանակ Անդրեյը նստել էր անկողնու մոտ, որի վրա Ռիտան էր փռվել։ Նա բռնել էր Ռիտայի ձեռքն ու նայում էր նրա դեմքին։ Այն գորշ էր, և աչքերի տակ գոյացած պարկերին արտասուքներ էին փայլփլում։ Հենց որ կծկումներն սկսվում էին, Ռիտան կծում էր ստորին շրթունքն ու գլուխը շրջում պատի կողմը։ Անդրեյը քրտնած ափերով շփում էր նրա ձեռքն ու ասես վախենալով, թե նա կտնքա, խոսում քթի տակ.

— Դեհ լավ, սպասիր... համբերիր...

Երբ ցավն արդեն անտանելի դարձավ, Ռիտայի ականջների ետևը թափվեցին արագահոս արտասուքներ, և նա ճիչը խեղդելու համար մի կերպ արտասանեց.

— Ճիշտն ասա... դու նրան... դեռևս սիրո՞ւմ ես...

Մենք քվիտ ենք, ընկեր Ստարցով

Ահա մենք ավարտում ենք մեր պատմությունն այն մարդու մասին, որը կարոտով սպասում էր, թե կյանքը երբ պետք է նրան ընդունի։ Մենք հայացք ենք նետում այն ճանապարհին, որով քայլում էր նա դաժանության ու սիրո ետևից, արյունով ու ծաղիկներով ծածկված ճանապարհին։ Նա անցավ այդ ճանապարհը, և նրա վրա արյան ոչ մի բիծ չմնաց, նա ոչ մի ծաղիկ չարորեց։

Օ՜, եթե նա գեթ մի բիծ իր վրա առներ, եթե գոնե մի ծաղիկ տրորեր։ Թերևս այն ժամանակ նրա նկատմամբ ունեցած մեր խղճահարությունը վերածվեր սիրո, և մենք նրան թույլ չտայինք, որ այդքան տառապալից, այդքան ողորմելիորեն կործանվի։

Սակայն մինչև վերջին րոպեն էլ նա ոչ մի քայլ չարեց, այլ միայն սպասում էր, թե քամին նրան կքշի այն ափը, որին ուզում էր հասնել։

Ապակին երկաթի հետ չի զոդվում։ Այդ մասին խոսելու հարկ չէր լինի, եթե ճանապարհների վախճանին վրա չհասներ այն գիտակցությունը, թե գթությունն ավելի կարիք ունի ներողամտության, քան դաժանությունը։ Արդյոք այդ չէ՞ պատճառը, որ մենք դաժանությունն արդարացնում ենք միայն այն ժամանակ, երբ վերջինս սրբագործված է կարեկցանքով։

Սակայն ապակին երկաթի հետ չի զոդվում, և մենք ի վիճակի չենք որևէ բան փոխելու Անդրեյի ճակատագրում։

Անդրեյը նամակ ստացավ։ Տասնյակ փոստատների և հարյուրավոր ուղեսնդուկների միջով այն անցել էր սահմանապահ ուղեկալներից, և նրա վրա մնացել էին այդ բոլորի հետքերը՝ գունավոր մատիտներ, դրոշմակի ներկ, նկատելի մատնահետքեր։ Տարօրինակ էր, սակայն, նամակը խուսափել էր միայն այն կորդոնից, որը չէր կարող անտարբեր մնալ նրա հանդեպ։

Անդրեյը փակվեց սենյակում, նստեց մեջքը դռանը դարձրած։ Նա բերանը լայն բացեց, որպեսզի սուլոցով ժայթքող շնչառությունը չլսվի, ձեռքերը ցնցվում էին, և նա ընկավ ձեռքերի վրա, արմունկները հենելով ծնկներին։ Երբ ծրարը

բացեց, նրա դեմքը հանկարծ սպիտակեց, ասես վրան գալ չփեցին։

«Հարգելի պարոն Ստարցով.

Ի դեպ, չգիտեմ նույնիսկ, թե ինչպես պետք է ձեզ դիմել։ Գուցե «ընկե՞ր» Ստարցով։ Չեմ կարող զրկել ինձ բավականությունից ու ձեզ չհայտնել որոշ հանգամանքներ, որոնք ամենայն հավանականությամբ հետաքրքրություն են ներկայացնում ձեզ համար։ Պետերբուրգում կայացած մեր վերջին տեսակցության ժամանակ, երբ հաճեցիք ձեզ հայտնի ծառայությունը մատուցել ինձ, դուք կամեցաք պարզել նաև, թե, ընդունելով ձեր հիշյալ ծառայությունը, ես համարո՞ւմ եմ արդյոք, որ մենք քվիտ ենք։ Եթե հիշում եք, ես այն ժամանակ ասացի, որ ինձ ձեր հանդեպ պարտավորված եմ զգալու այնքան ժամանակ, մինչև կատարեմ Սեմիդոլում ինձ տրված ձեր հանձնարարությունը։ Ես երջանիկ եմ, որ ներկա պահին հնարավորություն ունեմ ձեզ հայտնելու, որ այդ հանձնարարությունը ճշտորեն կատարել եմ, և այդպիսով ձեզ հետ հիմա լիովին քվիտ ենք։ Այո, մենք քվիտ ենք, ընկեր Ստարցով։ Բիշոֆսբերգում հեշտությամբ գտա ձեր հարսնացուին, և նա ձեր նամակն ստանալու համար ինձ մոտ ժամանեց այնպիսի աճապարանքով, որը վկայում է ընկեր Ստարցովի նկատմամբ նրա տածած անդավաճան զգացմունքի մասին։ Սակայն թույլ տվեք հեռվից սկսել։ Չի կարելի ասել, թե դուք զուրկ եք բնազդից։ Համենայն դեպս, ես շփոթվեցի, երբ դուք Պետերբուրգում հարցրեցիք ինձ, թե արդյոք ճանաչո՞ւմ եմ Ֆրոյլայն Մարի Ուրբախին։ Դուք, իհարկե, լավ եք հասկանում, որ եթե ես այն ժամանակ այդ բանը խոստովանեի, գա կնշանակեր՝ չկատարել Սեմիդոլում ձեզ տրված խոստումը։ Մինչդեռ ես ինձ այնքան պարտավորված էի զգում ձեր հանդեպ, որ գերադասեցի ճշմարտությունը թաքցնել, որպեսզի ինձ համար այդքան անսովոր գնով կարողանամ երախտահատույց լինել ձեզ ըստ արժանվույն։ Չեմ թաքցնում, ես ցնցված էի Ֆրոյլայն Ուրբախի հանդեպ ձեր տածած մեծ զգացմունքից։ Ես շատ լավ հասկացա, որ հենց այդ զգացմունքին եմ պարտական և դրան պետք է վերագրեմ ձեր այն որոշ անհոգությունը, որով դուք արհամարհեցիք տվյալ պահին ինձ համար վճռական նշանակություն ունեցող հայտնի հանգամանքները։ Ձեզ համար կարևոր էր միայն մի բան. նամակը որևէ կերպ հասցնել Ֆրոյլայն Ուրբախին։ Ես դա ձեզնից լավ էի հասկանում։ Եվ պահում էի ձեր նամակն այնպես, ինչպես կարելի է պահել կյանքում ամենաթանկ բանը։ Չէ՞ որ ես ձեզ այնքան պարտական էի, ընկեր Ստարցով։ Երբ ձեզնից լսեցի, որ Ֆրոյլայն Մարին ձեզ հետ երջանիկ է եղել այն ժամանակ, երբ ես կռվում էի Շամպանում և Արևելքում, գիշերով դուրս գալով ձեր մոտից, բակի դռնակի մոտ կանգնած, մտածում էի, թե ում հետ պետք է հաշիվ տեսնեմ։ Ես տատանվում էի, որովհետև դուք կողքիս էիք, իսկ մինչ Ֆրոյլայն Մարիին հասնելը պետք է երկար ու վտանգավոր ճանապարհ կտրեի։ Սակայն ձեր նկատմամբ տածած երախտագիտության զգացումը հաղթեց, և վճռեցի Մարիի հետ հաշիվ տեսնել։ Երբ հետագայում Պետերբուրգում կրկին հանդիպեցի ձեզ, ինչպես հարկն է ձեզ հատուցելու միտքը դարձյալ գլուխս եկավ, և ստիպված էի ինձ վրա մեծ ջանք գործադրել, որպեսզի ձեր գանգը չփշրեի, երբ քայլում էի ձեր ետևից։ Սակայն ճակատագիրը բարենպաստ էր իմ նկատմամբ։ Ինձ բախտ վիճակվեց մեկ անգամ ևս համոզվելու, թե որպիսի զգացմունքներ եք տածում Ֆրոյլայն Մարիի նկատմամբ և միաժամանակ պարզելու, որ այդ բուռն զգացմունքները ձեզ չեն խանգարում ձեր հարսնացուին դավաճանելու նոր սիրուհու հետ։ Այն ժամանակ արդեն վերջնականապես վճռեցի, թե ինչ պետք է անեմ։ Նկատի առեք, որ ես ոչ մի բոպե չէի մոռանում խոստումս՝ կարոտով ու սիրո տառապանքով լի ձեր նամակը ձեր հարսնացուին հանձնելու մասին։ Ինչպես կարող էի այդքան ստոր գտնվել։ Չէ՞ որ կյանքով պարտական եմ ձեզ, ընկեր Ստարցով, իսկ իմ կյանքը դուք գնահատել էիք Սեմիդոլից Բիշոֆսբերգ ուղարկվող տարանցիկ նամակի արժեքի... Հիմա ես կրկին իմ սենյակում եմ, շրջապատված ինձ համար սիրելի նկարներով։ Ես ինձ միանգամայն հանգիստ կզգայի, եթե չլիներ զայրույթի այն զգացումը, թե ինչպես մի անգամ անզգուշություն ունեցա ձեզ կենդանի դուրս թողնելու այս սենյակից։ Ի դեպ, նկարների մասին։ Եթե դուք դեռևս հնարավորություն ունեք կապվելու ընկեր (կարծեմ ճի՞շտ է) Կուրտ Վանի հետ, ապա հաղորդեցեք նրան, որ իմ հավաքածուում

պահվող նրա բոլոր նկարները այրել եմ։ Սակայն քիչ հավանական է, թե այդ նրան կարող է հետաքրքրել, քանի որ քաղաքագետները արվեստով զբաղվում են հալվադեպ և ոչ ինչպես հարկն է։ Մի՞թե ընկեր Վանը մինչև հիմա գլխի չի ընկել, թե ով է գրասենյակից հանգուցյալ Կոնրադ Շտեյնի փաստաթղթերի անհետանալու պատճառը։ Ես երբեք չէի կարծում, որ նա այդքան բթամիտ է... Այսպես, ուրեմն, վերադառնալով Շենաու, ես ձեր հարսնացուին հայտնեցի այն ամենը, ինչ գիտեի ձեր ասածից, ինչպես նաև այն, ինչ ինձ հաջողվեց իմանալ Ֆրոյլայն Մարիի նկատմամբ ձեր տածած զգացմունքների, ձեր նոր ընկերուհու և այլնի վերաբերյալ։ Ինքնին հասկանալի է, որ ձեր հարսնացուին մանրամասն զրեցի այն ծառայությունների մասին, որ մատուցեցիք ինձ և, հուսով եմ, սոցիալիստական հայրենիքին՝ Ռուսաստանին։ Այդ բանը ես ավելի քան մեծ հաճույքով արեցի, քանի որ ինձ հայտնի դարձան ձեր հարսնացուի սխրագործությունները դեռևս խեղդամահ չարված սոցիալիստական հայրենիքի՝ Գերմանիայի բնագավառում։ Ձեր հարսնացուին դիմելիս անապացույց հանդես չգալու համար խոստացա նրան ներկայացնել ձեր ձեռքով գրված նամակը։ Արդեն գրել եմ, որ ձեր հարսնացուն չստիպեց իրեն երկար սպասել և եկավ ինձ մոտ։ Ես նրա հետ տեսակցություն ունեցա այն սենյակում, որ դուք գիտեք և որտեղ մի ժամանակ... Ի դեպ այդ մասին կասենք ստորև։ Ձեր հարսնացուն ինձ չհավատաց, ինչպես և սպասում էի։ Ես նրան խորհուրդ տվեցի գալ ձեզ մոտ, որպեսզի համոզվի իմ ասածի բացարձակ ճշմարտությանը։ Նրա նկատմամբ հսկողություն սահմանեցի։ Հիրավի, սրտիս շատ մոտ էի ընդունել ձեր հարսնացուի ձեր նկատմամբ տածած քնքուշ զգացմունքները, ընկեր Ստարցով։ Ձեզ մոտ գալու համար նա հանդգնեց այնպիսի մի քայլ անել, որն այնքան հերոսական չէ, որքան անաղնիվ է. նա ամուսնացավ ռուս գերի շարքային զինվորի հետ, որպեսզի ռուսական քաղաքացիության և Ռուսաստան մեկնելու թույլտվություն ստանա։ Նրա այդ արարքից ես համոզվեցի, որ աղջիկը ջերմորեն սիրում է ձեզ, և ինձ համար հաճելի էր մտածել, թե նա ինչպես է ստորացել, որպեսզի հետո ավելի ևս մեծ ստորացում զգա՝ ձեր խաբեությունն ու ձեր ոչնչությունը տեսնելով։ Պատկերացնում եմ, թե դուք ինչպես պետք է տառապեք այդ ստորացման համար, ընկեր Ստարցով, և այլևս այնքան էլ չեմ ափսոսում, որ ատրճանակս չպարպեցի ձեր ճակատին, երբ լսեցի, որ Ֆրոյլայն Մարի Ուրբախին ձեր հայտնացուն եք համարում։ Ձեր հարսնացո՞ւն։ Ես արտակարգ վիրավորված չեմ այն բանից, որ Մարին ինձ դավաճանում էր ձեզ հետ, քանի որ կանայք առաջին սիրեկանին առավել զգուշությամբ պետք է թաքցնեն երկրորդից, քան ընդհակառակն։ Եթե ես հանձին ձեզ չէի կասկածում իմ փոխարինողին, ապա դուք էլ ոչ մի բոպե չէիք կարող մտածել, որ ես ձեր նախորդն եմ։ Ձեզ հետ հաշիվ տեսնելու պահանջը ես հավասարակշռում էի ոչ միայն այն բանով, որ լռությամբ իմ կյանքն էի փրկում, այլև Վայմարի գիշերօթիկ դպրոցի սանուհի Մարիի մասին հիշողություններով, որը միսս Ռոնիի պանսիոնից փախավ եկավ ինձ մոտ Շենաու, հենց այն սենյակը, ուր տեղի ունեցավ իմ և ձեր առաջին ծանոթությունը։ Մենք քվիտ ենք, ընկեր Ստարցով։

Ձեզ երախտապարտ՝

Ֆոն ցուր Մյուլեն-Շենաու։

Հուսով եմ իմ անունը չի վնասի ձեր անվտանգությանը։ Իսկ եթե վնասի, ապա, թերևս, ձեր հարսնացուի, իմ սիրուհու և անհայտ ռուս զինվորի կնոջ՝ Ֆրոյլայն Մարի Ուրբախի հետ ունեցած տեսակցությունից հետո։ Համենայն դեպս, ես դիտավորյալ մի քիչ կուշացնեմ նամակս, որպեսզի այդ հանդիպումը չկանխեմ, հանդիպում, որի մասին մտածելիս արդեն հոյակապ տրամադրության մեջ եմ ընկնում։ Servus[1]».

Անդրեյը նամակը ճմրթեց ու դուրս նետվեց սենյակից։ Նրա ետևից հասավ երեխայի հանկարծակի, բարակիկ լացը։ Նա կանգ չառավ։ Կանացի ձայնը տագնապալի կանչեց նրան սանդղահարթակից, մեկը նրա անունը տվեց դարբասի մոտ, ինչ-որ մեկը վախեցած ետ ցատկեց նրանից փողոցում։ Նա վազում էր, կարծես փախչում հետապնդումից։

Գզգզված, ճմրթված՝ նա իր հուսահատական վազքը դանդաղեցրեց միայն քաղաքի ծայրամասում։ Շուրջն ամայի

[1] Ձեր խոնարհ ծառա (բառացի՝ ստրուկ), (լատ.)։

տարածություններ էին, աղբով ու աղյուսով ծածկված։ Մանր անձրև էր տեղում, խտացնելով և սառեցնելով իրիկնային կիսամութը։ Ավերված շինության քարե կմախքի մեջ քամին թափահարվում էր վանդակն ընկած գաղանի նման։

Անդրեյը շրջվեց, ետ դարձավ քաղաք, անցավ ֆաբրիկաների ցածրիկ շենքերով պատած ինչ-որ փողոցներով, ընկավ Նևայի ափը, կրկին դուրս եկավ ֆաբրիկայի փողոցները և կրկին հայտնվեց ամայի տարածության մեջ։

Խավարը թանձրանում էր, գիշերը վրա էր հասնում ամառանը ոչ հատուկ արագությամբ։

Անդրեյը նայեց շուրջը, անձրևի խիտ մաղի միջով տեսավ հեռվում սեղմված շինությունների սև զանգվածները, և կրկին շարժվեց դեպի քաղաք։

Նրան կլանեցին շտեմարանների, էլևատորների, վերնատների և աշտարակների վիթխարի լուռ զանգվածները։ Նա թաղվում էր փայտացող, մեռած երկնաքերների քաղաքում։

Հանկարծ մի գորշ բան կտրեց նրա ճանապարհը և գետնի մեջ խրվեց։ Անդրեյի ոտքերը չդողացին։ Նա քայլում էր ինչպես մի կենդանի տիկնիկ՝ առաջ, առաջ։ Մեկը մյուսի ետևից ճանապարհը կտրելով, սահեցին գորշ գնդիկները։ Անդրեյը շարունակում էր առաջանալ։ Ահա մի բան դիպավ նրա սապոգներին ու մի կողմ թռավ։ Ահա նա ոտքը դրեց ինչ-որ փափուկ, լաթի նման փափուկ բանի վրա և կարճ մի ճիչ ծակեց նրա ականջը։ Նա քայլերը դանդաղեցրեց, որովհետև սկսեց դիպչել ինչ-որ փափուկ արգելքների, որ ցրված էին ամբողջ ճանապարհով մեկ։ Նա կանգ առավ, որովհետև ամեն քայլի հետ լսվող սուր ճիչերն արդեն վերածվեցին սուլոցի։

Անդրեյը կանգնել էր փողոցի մեջտեղում, որի երկու կողմերում մինչև սև երկինք խոյացող շտեմարաններն էին։ Կանգնել էր մինչև կոճերը խրված ինչ-որ խյուսի մեջ, որը թանձր, անշտապ ալիքներով գլորվում էր ճանապարհով ու ծանրորեն ողողում նրա ոտքերը։ Նա նայում էր այդ ալիքների պղտոր-գորշավուն կատարներին, և դրանք նրա աչքին երևում էին որպես անթիվ-անհամար զզվելի գազանիկների կոր մեջքեր։

Եվ հանկարծ նա լսեց քիչ խեղդված մի ձայն.

— Անդրե՛յ, դրանք առնետներ են, առնետներ։ Թռի՛ր դրանց վրայով։

Նա կույրի նման ձեռքերն առաջ մեկնեց ու կանչեց.

— Կո՛ւրտ, Կո՛ւրտ։

Նրան պատասխանեց հնազանդ արձագանքը։

Անդրեյը դեմքը ծածկեց ու փայտացավ, ինչպես իրեն շրջապատող սև շտեմարանները։ Պղտոր-գորշավուն ալիքները դանդաղ գլորվում էին ճանապարհով, և առնետներն իրար ետևից սողում էին Անդրեյի սապոգների վրայով։

Երբ նա ձեռքերը կախ գցեց, դեմքը սպիտակ բծի նման դրոշմվեց մթության մեջ։ Սալարկն անշարժ էր, և գոյացած ջրափոսերի վրա անձրևը մանր կտկտացնում էր։

Անդրեյը տեղից պոկվեց ու նետվեց դեպի քաղաք։ Սակայն փողոցները նորից նրան դուրս բերին ամայի տարածություն։ Նա գայթեց, ընկավ մի խոր խանդակ, սկսեց դուրս մագլցել և նորից ետ գլորվել փոսը։ Ու մինչ նրա ոտքերը, ձեռքերը, ամբողջ մարմինը ցեխի վրայով ետ էին սողում խանդակի մեջ, նրա ականջներում հնչում էր խուլ, հեռավոր ձայնը.

— Անդրե՛յ, դու սարսափում ես վախից։ Թռի՛ր, անցի՛ր գրա վրայով, անցիր...

Անդրեյը ճչալով դուրս թռավ փոսից և նետվեց գիշերվա խավարի մեջ բղավելով.

— Օգնեցե՛ք, օգ-նե-ցե՛ք...

Եվ գիշերով, խճաքարերի, խանդակների վրայով, անվերջանալի պարապուտներում այս ու այն կողմ էր նետվում նա խելագարի նման— գուցեև խելագար— որոնելով ճամփաներ։ Սակայն նրա շուրջը փռված էին ամայի տարածություններ, նրա գլխին կախված էր սև երկինքը, և չկար մարդկային կացարան, չկային ճամփաներ։

Այդպես պարապուտները շրջապատել էին Անդրեյին մինչև այն տարին, որին վիճակված էր ավարտել մեր վեպը։ Իսկ երբ այդ տարին եկավ, Կուրտն Անդրեյի համար արեց այն, ինչ պարտավոր է անել ընկերը, բարեկամը, արվեստագետը։

1922 մայիս—1924 սեպտեմբեր։

«Քաղաքներ և տարիներ» վեպի առթիվ[1]

«Քաղաքներ և տարիներ» վեպի առաջին հատվածները մամուլում երևան եկան 1922 թվականին։

1924 թվականին վեպն ավարտվեց և լույս տեսավ առանձին գրքով։

Համաշխարհային առաջին պատերազմից հետո անցած տասնամյակը խթան հանդիսացավ բազմաթիվ երկերի ստեղծման համար, որոնք ծնունդ առան այդ ողբերգության մասնակիցների և ժամանակակիցների կենսափորձից։ Հաստիվ թե կարելի լինի Եվրոպայում որևէ նշանակալի երկիր հիշատակել, որտեղ քսանական թվականների երկրորդ կեսին պատերազմական իրադարձություններին նվիրված մի քանի վեպ գրված չլինի։

Արևմտաեվրոպական գրողները, շատ հաճախ պատերազմը ներկայացնելով որպես մարդու կամքին չենթարկվող աղետ, իրենց հերոսներին դատապարտում էին կործանման։ Վեպերի այդ հերոսների, ինչպես նաև նրանց նախատիպերի՝ համաշխարհային առաջին պատերազմի զոհերի համար ամենուրեք տարածում էր գտել ընդհանուր մի անուն՝ «կործանված սերունդ»։ Պատերազմը կոչվում էր սպանդ, մսաղաց։ Այն, իրոք էլ, կոտորած էր, որ կազմակերպել էին համաշխարհային մրցակցող տերությունների կառավարող շրջանները։ Ժողովրդի շահերին խորթ այդ իմպերիալիստական պատերազմը, երիտասարդ սերնդի համար, որի արյամբ էր հատուցվում, կոտորածից բացի ուրիշ ոչինչ չէր։

Իմ վեպի հերոս Անդրեյ Ստարցովը որոշ իմաստով պատկանում է այդ «կործանված սերնդին»։ Ցարական Ռուսաստանը, մասնակցելով իմպերիալիստական պետությունների այդ կռվին, երիտասարդների ամբողջ բանակներ դատապարտեց անխնա ոչնչացման։ Անդրեյն իրեն համարում էր դատապարտվածներից մեկը, և նրանց մեծամասնության նման, ատեց պատերազմը։ Ինչպես պատերազմն ատող մեծամասնության, այնպես էլ նրա համար այդ վիճակից դուրս գալու ելք էր բացել Ռուսաստանում հաղթանակած Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Սակայն այդ ճանապարհին նրա համար արգելք դարձան այն նախապաշարմունքները, որոնց մեջ նա մեծացել էր, որպես նախահեղափոխական ռուսական բուրժուական մտավորականության հետևորդն ու ժառանգը։ Պատերազմի ներշնչած նողկանքն ու սարսափը խանգարեցին նրան համաշխարհային կոտորածի գարշելի էությունը զանազանելու Ռուսաստանում ծագած քաղաքացիական պատերազմի նոր և բոլորովին այլ բովանդակությունից։ Նա պատերազմի մեջ սոսկ պատերազմ էր տեսնում այն ժամանակ, երբ Սովետական Ռուսաստանը, վերջ տալով իմպերիալիստական պատերազմին, արդեն պայքարում էր բանվորների և գյուղացիների սոցիալիստական նպատակների համար և պաշտպանում իր հայրենիքը ցարական Ռուսաստանի ոչ վաղեմի դաշնակիցների ներխուժումից, որոնք ջանում էին ամեն կերպ նրան ենթարկել իրեն ու վերականգնել նախկին իրավակարգը։ Իր մեջ ուժ չգտնելով ընդունելու հեղափոխության պատմականորեն խելամիտ պայքարը, որովհետև այդ պայքարը պատերազմ էր, Անդրեյ Ստարցովը, բնականաբար, կարծես իրմով մեծացնում էր «կործանված սերնդի» զոհերի թիվը։

Այն, որ Ստարցովը անկարող եղավ գնալու հեղափոխության ուղիով, բխում էր սոսկ հիշյալ նախապաշարմունքներից և նրա բնավորության արատներից։ Նա չկարողացավ անձնական կյանքը ենթարկել ժամանակի խիստ, սակայն և մեծ խնդիրներին, և դրա համար ստիպված էր հատուցել։ Թուլությունը նրան հասցրեց հանցագործության։ Ստարցովի կործանումը դատաստան էր նրա նկատմամբ։ Սրանով արդեն նա տարբերվում էր «կործանված սերնդից». նրա ճակատագիրը կանխորոշվում է ոչ թե պատերազմի ողբերգությամբ, այլ նա ինքն է իրեն դատապարտել արդարացի հատուցման։ Նրա ճակատագիրը դառնում է բացառություն, իհարկե, բավական տարածված բացառություն մտավորականության այն շրջանում, որին նա պատկանում էր։

Վերջին դիտողությունը ավելի շուտ վերաբերում է վեպի ֆաբուլային, քան պարտադրում հեղինակային բացատրություններ տալու բուն էության։

[1] Վեպի առթիվ գրված հեղինակային վերջաբանը առաջին անգամ տպագրվել է Կ. Ֆեդինի Երկերի ժողովածուի 1-ին հատորում, Гослитиздат, М., 1952:

Սակայն ահա թե ինչը ինձ դրդեց հիմա, համաշխարհային առաջին պատերազմի սկզբից շորս տասնամյակ անց, խոսելու Անդրեյ Ստարցովի՝ որպես վեպի հերոսի, և բացի այդ իմ՝ որպես վեպի հեղինակի մասին։

Պատերազմն սկսվեց, երբ Անդրեյը Գերմանիայում էր։ Նա տեսել էր Գերմանիայի կյանքը մինչ պատերազմը և պատերազմից հետո։ Նա գործող անձ դարձավ այնպիսի հանգամանքներում, որոնք հետևանք էին գերմանացիների մեջ գտնվելու փաստի։ Նա միշտ չէ, որ խելամտորեն, իսկ հաճախ էլ սխալ կամ չափազանց սուբյեկտիվորեն էր գնահատում տեսածը։ Սակայն նա լավ էր տեսնում։ Եվ այն, ինչ նա տեսավ համաշխարհային առաջին պատերազմի ժամանակաշրջանի Գերմանիայում, մեզ համար նշանակություն ունի նաև հիմա՝ 1939—45 թվականների համաշխարհային երկրորդ պատերազմում Գերմանիայի նկատմամբ տարված հաղթանակից հետո։

«Քաղաքներ և տարիներ» վեպի «ինքնակենսագրայնության» հարցը, որ ուղղակի կամ կողմնակիորեն շոշափվել է քննադատության կողմից, ճիշտ կարող է հասկացվել սոսկ մի վերապահությամբ, այն, որ բառիս լայն իմաստով, շատ քիչ վեպեր միայն կարող են ինքնակենսագրային չլինել։ Սխալ կլիներ վիպասանի սյուժետներում անպայման փնտրել կյանքում նրա ապրածի կրկնությունը։ Սակայն հերոսների բնութագրման հիմքը միշտ կլինի նրա կյանքի ճանաչողությունը։ Նա եզրահանգումներով լրացված իր կենսափորձը բաժանում է վեպի հերոսներին, ինչպես կոմպոզիտորն է ձայները բաշխում նվագախմբի գործիքների միջև։

«Քաղաքներ և տարիներ» վեպը մասամբ կառուցված է մինչ համաշխարհային առաջին պատերազմը և պատերազմի ընթացքում Գերմանիայում իմ կատարած դիտումների հիման վրա։ Այդ դիտումներն, իհարկե, ամեն ինչում չէ, որ համընկնում են Անդրեյ Ստարցովի ապրումների հետ։ Դրանք դուրս են գալիս Ստարցովի կերպարի սահմաններից, քանի որ չեն սպառվում այդ կերպարով, դուրս են գալիս և վեպի շրջանակներից, որովհետև ես շարունակում էի իմ դիտումները ստուգել նաև վեպի գործողության ժամանակային սահմաններից դուրս՝ վեպը գրելու ընթացքում։ Այդ դիտումները ես առիթ ունեցա բաղդիցս ստուգելու համաշխարհային առաջին պատերազմից հետո անցած տասնամյակների ընթացքում, առիթ ունեցա այդ բանն անելու նաև ոչ վաղ անցյալում նացիստական Գերմանիայի ջախջախումից հետո։ Եվ քանի որ Գերմանիայի նկարագրությունը, իսկ վերջինս որոշ իմաստով վեպում հանդես է գալիս իբրև գլխավոր գործող անձանցից մեկը, հիմնվել է անձնական դիտումների վրա, ուստի ուզում եմ այդ մասին խոսել ինքնակենսագրայնության պլանով, որը խորթ չէ նաև վեպին։

1914 թվականին ես որպես մոսկովյան ուսանող մեկնեցի Գերմանիա։ Բնակություն հաստատեցի Նյուրնբերգում՝ մի քաղաք, որ գրավում էր հրաշքով պահպանված իր միջնադարյան ճարտարապետությամբ։ Ծերուկ բուրգի աշտարակներին և խրամներին նայելիս, որոնք ցանցապատված էին նեղլիկ փողոցների, խաղալիքային հրապարակների և անչափ մեծ ձեղնահարկերով տիկնիկային տնակների խիտ ոստայնով, միջնադարը թվում էր սոսկ մեռյալ հուշարձան։ Նույնիսկ «Երկաթյա կույսը»,— այն աշտարակը, որտեղ պահվում էր տանջանքի գործիքների հավաքածուն,— անմեղորեն ննջում էր թանգարան-քաղաքի ռոմանտիկական շրջանակի մեջ։ Զարմացնում էր միայն, թե որպիսի ակնառու ակադեմիական մանրախնդրությամբ էին հավաքված, դասակարգված և ապակու տակ տեղավորված մարդու խոշտանգման այդ գործիքները։

1914 թվականի պատերազմին նախորդող ամռան իրադարձությունները տենդայնորեն մերկացրին վաղուց ի վեր Գերմանիայում ռազմամոլությամբ դաստիարակված և արմատավորված գծերը։ Քաղքենիական, բուրժուական և հատկապես յունկերների շրջանում այդ դրսևորվում է որպես ազգային մեծամասնություն և ռազմատենչ անհանդուրժողություն բոլոր ոչ գերմանացի ժողովուրդների նկատմամբ։ Գրեթե ամեն ֆիլիստեր, մեծից մինչև փոքրը, իրեն իրավասու էր համարում դատելու յուրաքանչյուր ազգության և ձգտում էր «պատժելու» սլավոններին, «պատժելու» ֆրանսիացիներին սոսկ այն բանի համար, որ նրանք կարող էին մտածել ոչ այնպես, ինչպես գերմանացի ռազմամոլները։

Պրուսական ռազմամոլությունը կայզերական Գերմա-

նիայի չարիքն էր։ Պրուսական դաստիարակությունը, որ հեղեղել էր ամբողջ Գերմանիան, հենվում էր երկու գլխավոր պայմանի՝ հրամանի և հպատակվելու վրա։ Հաճախ այդ բանն ընդունում էին և իրենք՝ ֆիլիստերները։ Գերմանական ռեակցիոն վիպասան Շպիլհագենը, օրինակ, այսպես էր ասում. «Հրամայելու մոլեգնությունը, հրամաններին ենթարկվելու ստրկական փափագը՝ ահա այն օձը, որ խեղդում է գերմանական Հերկուլեսին, դարձնում նրան գաճաճ»։ Հայտնի է սակայն, որ գաճաճները հաճախ հերկուլեսներից վըտանգավոր են։ Եվ շուտով նրանք իրենց դրսևորեցին։

Բուրժուազիայի «հրամաններին ենթարկվելու փափագը» Գերմանիայի՝ ըստ մեծության Եվրոպայում առաջին և մի ժամանակ մեծավաստակ սոցիալ-դեմոկրատիային վերածեցին ռազմամոլների ձեռքի տակ գործող լավ զինվորների։ «Քաղաքներ և տարիներ»-ի վարպետ Մայերը սովորական երևույթ չէր։ Կայզերի սոցիոլոգները օրինապահ էին։ Խորտակվում էր փոքրաթիվ մարդկանց վերջին հույսը, թե ողջախոհությունը Գերմանիային ետ կպահի անդունդ գլորվելու եզրից։ Շովինիզմի խելահեղությունը տիրապետում և զարմանալի հեշտությամբ իր ետևից տանում է ֆելդֆեբելների ձեռքի տակ խստավարժված ժողովրդին։ Պարզվեց, որ բուրգը սոսկ հուշարձան չէ։ Նրա ներսում միջնադարը դեռ չէր քայքայվել, Նյուրնբերգի թանգարաններում ասպետական զենք ու զրահը զուր չէին պահպանում ժանգոտումից։

Ես Նյուրնբերգից մեկնեցի պատերազմ հայտարարելու օրը, երբ կայարանում փակցնում էին բավարական թագավորի հրամանը՝ զորահավաքի մասին, և երկաթուղիներն անցնում էին ռազմական իշխանության ձեռքը։ Ըստ էության, դա արդեն փախուստ էր։ Ես թե՛ երիտասարդ էի և թե՛ միամիտ՝ մինչև վերջին պահը չէի հավատում աղետի իրողությանը։ Հույս ունեի «ծլկել» սահմանից։ Դրեզդենում ինձ բռնեցին, և այլևս ստիպված էի հրաժարվել ազատվելու հույսից. ինձ մոտ խուզարկություն կատարեցին, ես դարձա ոստիկանության հսկողության ներքո գտնվող «քաղաքացիական գերի»։

Շուտով ինձ արտաքսեցին Ցիտտաու։ Չեխոսլովակիայի սահմանի մոտ գտնվող սաքսոնական այդ քաղաքին վիճակված էր դառնալ գերմանական քաղքենու ուսումնասիրության

իմ երկարատև դպրոցը։ Ես տեսել եմ մի բանի տասնյակ հանդիսավոր, ջահերով երթեր քաղաքի փողոցներում։ Դա հայտնագործություն էր. գերմանական «քաղաքակրթությունը» սիրով պահպանում էր կրակի հեթանոսական պաշտամունքը։ Ես տեսնում էի հյուծված ռուս գերիներին՝ ոռոդման դաշտերում կամ անասնանոցներում աշխատելիս։ Գերմանացի կալվածատերերը և կուլակները իսկական ստրկատերեր էին. նրանք հյուծում, ուժասպառ էին անում ստրուկներին, նրանց գերեզման դնում և գնում էին մոտակա ճամբարը նոր գերիների ետևից։ Ես քարոզներ էի լսում գերմանական արդարադատ սրտի մասին, որ կարդում էր քահանան ռազմագերիների եղբայրական գերեզմանոցում՝ ճամբարային հերթական անձնասպանին թաղելիս։ Ես գերմանական հարյուրավոր թերթեր կարդացի, որոնք ծաղրում էին հումանիզմը՝ որպես թուլակամության արտահայտություն։

Սակայն գերմանական ժողովուրդը չէր կարող ինքն իրենից թաքցնել գնալով մեծացող սեփական տառապանքները, որի պատճառը, ինչպես բացատրում էին նրան, օտար ազգերի չար կամքն էր։ Տառապանքը ստիպում է մտածել։ Վերդենի մոտերքում բանակի անմիտ ջախջախումից հետո, Ֆլանդրական մարտում նավատորմիղի մի մասի ապարդյուն կործանումից հետո, 1918 թվականի ամռան պարտություններից հետո գերմանական ժողովրդի լայն զանգվածներում արդեն սկսեցին սթափվելու ակնառու նշաններ երևալ։ Այդ տարի, երբ Բեռլին գնացի, հանդիպեցի գերմանացի սպարտակյաններին, և նրանք ինձ ցույց տվեցին այնպիսի երիտասարդների, որոնք պատերազմի ընթացքում փոխել էին իրենց հայացքները և պատրաստ էին հեղափոխություն անելու։ Այդ փաստը հիմք դարձավ հետագայում «Քաղաքներ և տարիներ»-ում Կուրտ Վանի կենսագրության համար։

Կայզերական Գերմանիայի կործանումից քիչ առաջ ես հայրենիք վերադառնալու իրավունք ստացա։ Ինձ մտցրին գերիների փոխանակման մի խմբի մեջ, եկա Մոսկվա։ Գերությունը դարձավ հուշ։ Չորս տարուց ավելի գերմանացիների թիկունքում ապրած ժամանակ կատարածս դրառումները և թերթերի մի ամբողջ կապոց դրված էին իմ ճամպրուկում։

Հետո վրա հասավ նոյեմբերի ինը։ Թվում էր, թե գերմանական ժողովրդի կյանքում անցյալը խորտակվեց անվերադարձ, ինչպես ցարական անցյալը Ռուսաստանի ժողովուրդների կյանքում։ Վիլհելմը փախավ, Եվրոպային ահ ու սարսափ ազդող գերմանական բանակը քայքայվում էր, ռազմաճակատն ապստամբեց, Բեռլինում ստեղծվեց նոր կառավարություն՝ սոցիալ-դեմոկրատների գլխավորությամբ։

Սակայն պատերազմ հարուցած ուժերը սոսկ ճգնաժամ էին ապրում, նրանք շարունակում էին իրենց գոյությունը։ Այդ ուժերը ոտքի ելան պատմականորեն շատ կարճ ժամանակամիջոցում։ Վերսալի պայմանագիրը մինչև վերջ չդինաթափեց Գերմանիային։ Ռեակցիոն ուժերն սկսեցին համոզել ժողովրդին, որ ռազմական պարտություն չի եղել, որ գերմանական գլխավոր շտաբի ստրատեգիան անթերի էր, որ «հաղթանակող» Գերմանիան ներքին հեղափոխության զոհը դարձավ։

Սոցիալ-դեմոկրատիան զարմանալի հետևողականությամբ շարունակում էր իր դավաճանությունը, որ սկսել էր դեռևս Վիլհելմի օրոք ռայխստագում քվեարկելով հօգուտ ռազմական վարկի։ Այն ճնշեց հեղափոխական զանգվածների բոլոր փորձերը, թույլ չտվեց, որ նրանք պետության ճակատագիրն իրենց ձեռքն առնեն։ Սոցիալ-դեմոկրատիայի կողմից ջախջախվեցին Համբուրգում և Քիլում ապստամբած նավաստիները, Բեռլինի սպարտակյանները, Սաքսոնիայի հեղափոխական շարժումը, Բավարիայում ստեղծված խորհրդային հանրապետությունը։ Այն իր ոչ հաստատուն իշխանությունը ամրապնդում էր Պրուսիայի յունկերների և Ռուրի արդյունաբերողների աջակցությամբ, օգնելով Թնդանոթի արքաներին, որպեսզի վերջիններս զենք արտադրեն անգլո-ֆրանսիական դաշնակիցների ներողամիտ հսկողությունից թաքուն և ամերիկյան կապիտալիզմի շռայլ օգնությամբ, որը ագրեսիվ կերպով ներթափանցում էր Եվրոպա։

Համաշխարհային առաջին պատերազմից տասը տարի անց ես կրկին Գերմանիա մեկնեցի։ Դաշնակիցները Քյոլնն արդեն վերադարձրել էին գերմանացիներին։ Սակայն ես Քոբլենցում դեռ տեսա անգլիացիների, իսկ ֆրանսիացիներին հանդիպեցի խաղողաշատ Հռենոսի հարավային ոլորբ-

ներում. դաշնակիցները ջանում էին որքան կարելի է մեծ դին պոկել իրենց զորքերը Արևմտյան Գերմանիայից դուրս բերելու համար։ Հաղթողների զինվորները դեռևս պահպանում էին իրենց վերջին հերթափոխը։

Գերմանացիները արտակարգ համառությամբ էին պայքարում իրենց պարտության հետևանքների դեմ։ Ռևանշի տրամադրությունը ջանադրաբար նախապատրաստվում էր բուրժուական մամուլի կողմից։ Սոցիալ-դեմոկրատական կառավարությունը առանց հատուկ քողարկման ընթանում էր ռազմամոլներին համաքայլ, որոնք ապահովված էին ֆելդմարշալ Հինդենբուրգի հովանավորությամբ, այն Հինդենբուրգի, որը նացիոնալիզմի խորհրդանիշ էր Վիլհելմի դրոշի ներքո բռնված պատերազմի ժամանակ, և դարձավ Վայմարի հանրապետության պրեզիդենտը։

Ես առիթ ունեցա այնուհետև երկու անգամ ևս այցելելու Գերմանիա՝ 1931 և 1932 թվականներին։ Այն, ինչ տեսա այդ տարիներին, կարելի է միանգամայն նոր ժամանակաշրջան անվանել։ Անցած երեք տարվա ընթացքում գերմանական կյանքի առաջին պլանը գրավել էին նացիոնալ-սոցիալիզմի մյունխենյան շարժման պարագլուխները։ Նրանք բորբոքում էին ռևանշի պահանջները, արգելակում Վերսալի պայմանների կատարմանը, գրգռում, զայրույթ հարուցում հեղափոխական վերափոխությունների մնացորդների դեմ, արագորեն գրոհայինների ռազմականացված ջոկատներ էին կազմում և տեռորի ենթարկում դեմոկրատիայի կողմնակիցներին։

Ֆրանսիական սահմանին մոտ գտնվող Բադեն փոքրիկ քաղաքում, որտեղ կես տարի ապրեցի, ինձ վիճակվեց ականատես լինել ռայխստագի վերջին ընտրություններին։ Ընտրություններն անցկացվեցին ընտրողներին գրոհայինների մահակներով վախեցնելու միջոցով։ Ընտրության ամենաեռուն պահին սվաստիկան վեր խոյացավ ընտրական տեղամասի շենքի վրա, իր տակ կոխոտելով պետական դրոշը։

Այդ ժամանակ արդեն ռազմական նախապատրաստությունները Գերմանիայում գրեթե բացահայտ էին տարվում։ Ուսանելի էր տեսնել, թե ինչպես հարևան Ֆրանսիայի աչքի առջև փոստատան անվան տակ վիթխարի ավտոմոբիլային կայան-բազաներ էին ստեղծվում, և ինչպես նույն անմեղ

փոստի համար անթերի ճանապարհների խիտ ցանց էր ստեղծվում, թեև Շվարցվալդի այս խուլ վայրերը օրական հազիվ մի բարալիկ պարկ նամակ էր բերվում։ Սոցիալ-դեմոկրատներն իրենց գործն արել էին, և արդեն նրանց սլան էին մղվել աջ կուսակցությունների կողմից, որոնց մեջքին էր կանգնած հզոր Ռուրը նացիոնալ-սոցիալիստների իր սվաստիկայով։ Ավստրիացի ֆելդֆեբել Հիտլերին գերմանական հպատակություն հրամցրին, և նա դարձավ «կայսերական գերմանացի», ստացավ հարկավոր աստիճանը, մտավ ռայխստագ և անցավ մահակներով ծեծված մեծամասնության գլուխը։ Ռեակցիոն Եվրոպան գերմանական ֆաշիստներին ոչ միայն շողոքորթում էր, այլև ստորաքարշություն էր անում նրանց առջև։

1933 թվականի հունվարին Հիտլերն իշխանությունը գրավեց, ինքն իրեն նշանակեց ռայխսկանցլեր, և այն ժամանակ Գերմանիայում նացիստների ձեռքն անցան ներքաղաքական ճակատի բոլոր բանալիները։ Պատմում էին շատ դիպուկ մի անեկդոտ. Հիտլերը մեկնել էր ծերուկ Հինդենբուրգի նստավայրն ու նրա հետ զբոսնում էր այգում. հանկարծ պրեզիդենտի ձեռքից թաշկինակն ընկնում է, և երբ Հիտլերն այն բարձրացնում ու տալիս է ծերուկին, Հինդենբուրգն այնքան քաղաքավարի և այնքան ընդգծված կերպով է շնորհակալություն հայտնում իր նորելուկ վարչապետին, որ վերջինս ասում է. «Ձերդ գերազանցություն, մի՞թե արժե շնորհակալություն հայտնել, սա այնքան չնչին բան է», և Հինդենբուրգը ի պատասխան, խորամուխ նայելով սեփական թաշկինակին, ասում է. «Ի՞նչ եք ասում, ինչպե՞ս թե չնչին բան է։ Չէ՞ որ պետության մեջ սա միակ տեղն է, ուր կարող եմ քիթս խոթել...»։

Հինդենբուրգի պրեզիդենտությունը Վայմարի կանոնադրության միակ արտաքին մնացուկն էր, որ նացիստները հանդուրժում էին, ի դեպ, մինչև իր ծառայությունը վերջացրած ֆելդմարշալի մոտալուտ մահը։ Նա նրանց չէր կարող խանգարել։ Ռայխստագը հրդեհելով, նրանք աշխարհին ցույց տվեցին, թե նացիոնալ-սոցիալիստները ինչպիսի միջոցներով պետք է վերադաստիարակեն Գերմանիան։ Վերադաստիարակությունը կատաղի թափով կատարվեց։ Նացիոնալիզմը հասցվեց այլատյացության ամենաբարձր աստիճանին և ավարտվեց ռասիզմի մարդակործանարար տեսությամբ. գերմանացիք հայտարարեցին, որ կոչված են իշխելու բոլոր ժողովուրդներին, որպես «արիական ռասայի» ամենազտարյուն ներկայացուցիչներ։ Հակահրեական ջարդերը փոթորկի նման տարածվեցին ամբողջ Գերմանիայում։

Նյուրնբերգը դարձավ կրկեսի արենա, որ սարսափ էր ազդում իր ֆաշիստական զորահանդեսներով, դարձավ նացիզմի մայրաքաղաքը, արյունարբու քարոզների, հավատաքննչական օրենքների ամբիոնը։ Միջնադարյան խոշտանգումները կուսակցվում էին հեթանոսական դիցաբանության տարածմանը։ Խարույկների վրա այրում էին հիտլերականների համար ոչ ցանկալի գրքերը։ Աննկարագրելի չափով շատանում էր վերածնված գերմանական զենքը։ Ի վերջո բանակը, որ պահպանում էր կայզերական ժամանակի պրուսացիների ավանդները և սկզբում խուսափում էր նացիստներից, նվաճվեց վերջիններիս կողմից, և այն ժամանակ նացիզմը լիովին միաձուլվեց գերմանական ավանդական միլիտարիզմին։ Գերմանիայի ներսում այլևս ոչինչ չէր արգելակում, որպեսզի վերջինս ընթանա ռազմական ուանշի ուղիով։ Արտաքին քաղաքականության մեջ հիտլերականները շանտաժի, սպառնալիքի, «մյունխենցիների» հետ գործարքների մեջ մտնելու միջոցով և պլանաչափորեն գրավելով լեհական, չեխական, լիտվական, ավստրիական հողերը, իրենց համար ելման դիրքեր էին նախապատրաստում աշխարհի վրա հարձակվելու համար։

Համաշխարհային առաջին պատերազմը սկսվելուց ուղիղ մի քառորդ դար հետո նացիստների Գերմանիան հարձակվեց Լեհաստանի վրա, և դա արդեն համաշխարհային երկրորդ պատերազմի սկիզբն էր, որն աննախադեպ էր իր մասշտաբով և դաժանությամբ։

1941 թվականի ամռանը Հիտլերը, իրագործելով իր վաղուց նախապատրաստված պլանը, առանց պատերազմ հայտարարելու, լկտիաբար հարձակվեց Սովետական Միության վրա։

Այն ամենը, ինչ տեղի ունեցավ դրանից հետո, դեռևս թարմ է մեր հիշողության մեջ։ Մեր հիշողությանը խոր վերք

է հասցվել պատմության մեջ չտեսնված այն բռնությունից, որ հիտլերականների միլիոնանոց հորդաները կիրառեցին մեր երկրի վրա, և այդ սարսափելի ակտը երբեք չի մոռացվի։ Հայրենական մեծ պատերազմում զավթիչներին մենք հակադրեցինք սովետական ժողովուրդների փառապանծ միասնությունը, և պատերազմն ավարտվեց մեր հաղթանակով ու նացիստական Գերմանիայի լիակատար ջախջախմամբ։

Հիշում եմ, թե որպիսի անբացատրելի զգացումով էի կարդում կարմիր բանակի հաղորդագրությունների մեջ ինձ լավ ծանոթ սաքսոնական գետերի և փոքրիկ քաղաքների անունները՝ Նայսե, Ցիտտաու, երբ մեր բանակն արդեն հարձակվում էր գերմանական տիրակալության խորքում։ Համաշխարհային առաջին պատերազմի օրերին ապրելով այդ Նայսեի ափին, ես երազում միայն կարող էի ռուս զինվոր տեսնել։ Եվ տեսնում էի երազում, քանի որ հարթմնի չէր կարելի երազել ռուս զինվորի մասին, որպեսզի մտքերդ չմատնեիր։ Հիմա արդեն սովետական բանակը հատուցում էր բերում միլիտարիստական Գերմանիայի մեղքով մեր երկրի կրած անմարելի տառապանքների դիմաց։ Կրակից խանձված մեր հաղթող զինվորը ոտքերի տակ տվեց իր ձեռքով ջախջախված նացիստների վերջին շտանդարտները Սաքսոնիայում, Սիլեզիայում, Բրանդենբուրգում, և Սովետական Միության դրոշը պարզեց Բեռլինում՝ ռայխստագի վրա։

Ես այս ամենի մասին խոսում եմ ոչ այն պատճառով, որ «Քաղաքներ և տարիներ» վեպից բխում է համաշխարհային առաջին պատերազմին հաջորդող իրադարձությունների կանխատեսումը։ Ես, իհարկե, չէի կարող դրանք կանխատեսել։ Սակայն այն կոբստաբեր ուժերը, որ մասնակցում էին ոչ վաղ անցյալում աշխարհը ցնցած իրադարձություններին, մանուկ կամ սաղմնային վիճակում գոյություն ունեին դեռևս համաշխարհային առաջին պատերազմին,— իհարկե, գոյություն ունեին և դրանից առաջ,— և դրանք իմ ժամանակագրության մեջ առավել կամ պակաս չափով իրենց արտացոլումն են գտել գերմանացիներին նվիրված գլուխներում և գործող անձանց մեջ։

Հիտլերյան Գերմանիայի հետ այդ բախումից ձեռք բերած ոգբերգական փորձը մեզ ակնառու կերպով ցույց տվեց,

որ գերմանական նացիստները ժխտում են այն ամենը, ինչ մարդկային է։ Հենց նացիստներն էին, որ իրենց համբարնեբում ոչնչացրին միլիոնավոր տղամարդկանց և կանանց։ Նրանք էին, որ խանդակների եզրին գնդակահարում էին ծծկեր երեխաներին գրկած մայրերին։ Նրանք էին, որ այրում էին ամբողջ երկրներ։ Նրանք երկրի երեսից ջնջեցին հարյուրավոր քաղաքներ։ Նրանք գերիներին խարանում էին, ինչպես տաժանապարտների։ Նրանք ստրկության էին քշում սովետական երիտասարդներին։ Ո՞վ կարող է թվարկել նրանց կատարած բոլոր գաղանությունները։

Իմ վեպում ուրիշ դարաշրջան է ցույց տրված։ Իմ նկարագրած գերմանացիները դեռ չէին ենթարկվել այն երկաթյա տոփանմանը, որին ենթարկվեց Գերմանիան հիտլերյան ռեժիմով։ Եթե կարելի է այսպես ասել, այն ժամանակ ամեն ինչ ավելի մեղմ էր։ Սակայն «Քաղաքներ և տարիներ»-ի օբեր-լեյտենանտ ֆոն ցուր Մյուլեն-Շենաուն արդեն պառակտություն էր սերմանում Սովետական Ռուսաստանի ժողովուրդների միջև, ծառից կախում էր ռուս գյուղացիներին, հակահեղափոխության գաճաճ ֆյուրերի դեր էր կատարում։ Վերադառնալով իր հայրենի տունը, նա դանակով խաչաձև պատռեց «Նյուրնբերգի գերմանական թանգարանի բակը» նկարը, որ կատարված էր հովվերգական տրամադրությամբ։ Նա այդ բանն արեց անձնական նկատառումներով, նկարչի՝ իր հայրենակցի հանդեպ տածած ատելությունից, քանի որ վերջինս պատերազմից հետո դարձել էր հեղափոխական։ Սակայն օբեր-լեյտենանտի այդ արարքն, այնուամենայնիվ, այլ իմաստ է ստանում։

Նյուրնբերգը դադարեց անցյալի հովվերգական հուշարձան լինելուց, այն դարձավ նացիստական մոլեռանդության խորհրդանիշ, և դժվար է ենթադրել, թե ֆոն ցուր Մյուլեն-Շենաուի խառնվածքի տեր մարդը ժամանակի ընթացքում հանդես չգար հիտլերյան կուսակցության ոսկե նշանի տակ։ Դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող էր գերմանական սոցիալ-դեմոկրատիան սկզբում այնքան եռանդով ճանապարհ բացել հիտլերականների համար, իսկ հետո էլ այնքան ամոթալի և ստորաքարշորեն իր տեղը զիջել նրանց, եթե Վիլհելմի ժամանակից արդեն նրա շարքերում պակաս

լինեին Պաուլ Գեննիգի նման միապետին հլու-հնազանդ քաղաքացիները։ Ու թերևս, գերմանական բժշկության մեջ հավիվ թե հանդես գային հիտլերական փորձարարները, որոնք գերիների վրա փորձարկում էին թույների և խեղդող գազերի ազդեցությունը, եթե նախկինում, կայզերական Գերմանիայում, գոյություն չունենային այնպիսի բժիշկներ, որոնք ճամբարներից վերցրած մարդկանց վրա փորձում էին նոր անզգայացնող միջոցները, ինչպես «Քաղաքներ և տարիներ» վեպում այդ անում է հիվանդանոցի ավագ բժիշկը՝ կտրելով Ֆյոդոր Լեպենդինի ոտքերի մնացորդները։

Իմ վեպում շատ զուգահեռներ և նմանություններ կարելի է գտնել գերմանական ռազմամոլների մեր ներկայիս ճանաչողության և այն բանի միջև, թե նրանք ինչպիսին էին դեռևս կայզեր ժամանակ։ Եթե խոսենք սոսկ Գերմանիային նվիրված գլուխների մասին, ապա, իմ կարծիքով, վերջիններիս բովանդակությունն այն է, որ նրանք շոշափում են հետագայում աշխարհի գլխին նացիզմի բերած աղետի ակունքները։ Գերմանական ռազմամոլները մարդկային սկզբունքները ամենաէական խնդրում ժխտում էին և այն ժամանակ՝ համաշխարհային առաջին պատերազմում։ Այդ սկզբունքները լիովին ժխտեցին հիմա՝ Հիտլերի տիրապետության օրոք։

«Քաղաքներ և տարիներ» վեպի գերմաներեն թարգմանությունը թշնամաբար ընդունվեց քսանական թվականների Գերմանիայի պահպանողական մամուլի կողմից։ Երեսնական թվականներին նացիստները վեպն այրեցին խարույկների վրա։

Ահա թե ինչպիսին է այս գրքի կենսագրությունը, որի շատ էջերը նվիրված են պրուսական ռազմամոլության նկարագրությանը։

Ես առիթ ունեցա Գերմանիան կրկին տեսնելու 1945 և 1946 թվականներին։ Բեռլինի և Բրանդենբուրգի, Սաքսոնիայի, Թյուրինգիայի, Բավարիայի ավերված քաղաքների միջով ես մեկնեցի Նյուրնբերգ։ Աշտարակների և բուրգի պատերի միջև աղբի հսկայական մի կույտ էր վեր խոյանում։ Արձանացած միջնադարի ողջ ռոմանտիկական երազը, որ մի ժամանակ հրապուրում էր զբոսաշրջիկներին, ցնդել էր մշուշի նման։ Եռաքարից գոյացած սարերի վրայով տեղ-տեղ մարդու ոտնահետքի լայնությամբ կածաններ էին անցնում։ Փողոցների

հետքն էլ չէր մնացել։ Միայն առաջվա նման կատակով ժպտում էր ռումբերի բեկորներից ծակծկված բրոնզյա մայստերզինգեր Հանս Սաքսը։ Եվ եթե նախկին այդ Նյուրնբերգը հիմա էլ գրավում էր մարդկային նոր բազմությունների, ապա վերջիններիս հետաքրքրությունն արդեն հնության հուշարձանների վրա չէր սևեռված։

Այստեղ հանդիսավոր կերպով կատարվում էր այն, ինչի մարդիկ սպասում էին հյուսիսում և հարավում, արևելքում և արևմուտքում, երբ նրանցից լավագույնները կենաց-մահու պայքար էին մղում իրենց հայրենիքներն ազատելով ստրկացնողների կրնկի տակից։ Այստեղ դատում էին պատերազմի գլխավոր հանցագործներին՝ գերմանական նացիզմի պարագլուխներին։ Այստեղ դատում էին այն Նյուրնբերգին, որը դարձել էր ինկվիզիցիայի խորհրդանիշը, մարդկային ազատության և արժանապատվության դեմ արյունարբու արարքների քարոզիչը։

Նրանք, ովքեր 20-րդ դարում հարություն էին տվել «Երկաթյա կույսի» միջնադարյան խոշտանգումների գործիքներին, կատարելագործել էին դրանք հնարագետ դահիճների ձեռքով և կիրառել բոլոր ժողովուրդների նահատակների վրա, հիմա Միջազգային ռազմական տրիբունալի առջև դատապարտյալների աթոռին նստած սպասում էին իրենց դատաստանին։

Այն ժամանակ, 1945 թվականի հաղթանակից անմիջապես հետո, թվում էր, թե գոյություն ունի անխախտ վճռականություն՝ մեկընդմիշտ վերացնելու գերմանական ռազմամոլության վերածննդի վտանգը։ Թվում էր, թե ջախջախված հիտլերականների մնացորդներին այլևս երբեք թույլ չի տրվի ոտքի կանգնել։ Ինչպես գիտենք, այդպես չեղավ։

Ամերիկյան այն նույն պահակները, որ Նյուրնբերգում բանտի խցիկներից Միջազգային տրիբունալի սրահն էին բերում գերմանացի ֆաշիստներին՝ գլխավոր ռազմական հանցագործներին, նրանց նկատմամբ սահմանված դատավճռից հիրավի շատ քիչ ժամանակ անց, բանտերից ազատեցին Հիտլերի գեներալներին, ոչնչացված բանակների այդ կենդանի մնացած գաղաններին։ Ֆաշիզմի երեկվա «դատավորները» դարձան նրա պաշտպանները, խանդավառ կողմնակիցնե-

ը, և երեկվա թշնամիները միասին նստեցին սեղանի առջև՝ նոր պատերազմի ծրագրեր մշակելու համար։

Դարձյալ թխկթխկացին էսէսականների պայտերը Արևմտյան Գերմանիայի դիաբազային սալարկներին։ Դարձյալ գերմանական սոցիալ-դեմոկրատները պառլամենտական թմբուկներ թմբկահարեցին ի փառս իրենց նոր տիրոջ՝ համաշխարհային տիրապետության ամերիկյան նոր հավակնորդի։ Դարձյալ ծխացին Ռուրի ծխնելույզները, և անդրօվկիանոսային ֆինանսական մագնատները, որ օգնում էին Կրուպպին ոտքի կանգնելու Վերսալից հետո, կրկին նրան ոտքի հանեցին Պոտսդամից մնացած հող ու մոխրից։

Կարող է թվալ, թե համաշխարհային երկրորդ պատերազմից հետո Գերմանիայում կրկնվում է այն ամենը, ինչ տեղի էր ունեցել առաջինից հետո։ Սակայն դա այդպես չէ։

1950 թվականին Գերմանիա կատարած վերջին ուղևորությունը հնարավորություն տվեց ինձ տեսնելու մի բոլորովին այլ աշխարհ, որը բնավ նման չէ նրան, ինչ այդ երկրի արևմուտքում ստեղծում են ամերիկյան ժամանակավոր տնօրենները։

Գերմանական ժողովրդի կյանքում չէր կարող հետք չթողնել այն բանը, որ նա հիտլերականությունից ազատվեց հերոսական սովետական բանակի շնորհիվ։ Գերմանական դեմոկրատական հանրապետության հռչակումը պատմական վերածննդի պոռթկումով համակված ժողովրդական զանգվածներում տեղի ունեցող խոր հեղափոխական պրոցեսների արդյունքն է։ Գերմանական նոր պետության սոցիալական կյանքում, քաղաքականության, մշակույթի մեջ՝ ամենուրեք ծընվում է նոր մարդը՝ ազատ ֆաշիստական ինքնակալության կապանքներից, վստահ, որ խաղաղասեր և իրավահավասար այլ ժողովուրդների հետ միասին կանգնել է իր ազգի բարգավաճման ճիշտ ուղու վրա։

Ես այս անգամ հուզիչ և նշանակալից հանդիպումներ ունեցա։ Այն նույն Սաքսոնիայում և նույն Թյուրինգիայում, որոնց տերիտորիայով Նյուրնբերգ էի գնացել ընդամենը մի հինգ տարի առաջ, հիմա ինձ համար ամեն ինչ անճանաչելի էր դարձել։

Լայպցիգում, ժողովի ժամանակ, մի սրահում, ուր երկու

հազար հինգ հարյուր մարդ էր տեղավորվում, ես լսեցի այնպիսի երգեր, որոնց նմանը երբեք չէր հնչել Գերմանիայում. այդ երգերի մեջ ամեն ինչ ազնվացած էր նոր սկիզբ առած մարդասիրական զգացումով՝ և՛ երաժշտության ներդաշնակությունը, ռիթմը, և՛ բանաստեղծի խոսքերը։ Այստեղ կանայք և տղամարդիկ արդեն չէին նմանվում ոչ վաղ անցյալի ողբերգությունից ընկճված մարդկանց, մարդկանց, որոնք իրենց ուսերին կրում են այն հանցագործությունների ծանրությունը, որոնց մղեց երկիրը նացիստների ամոթալի ռեժիմը, պատանիներն ու աղջիկները այնպիսի հատկություններ էին ձեռք բերել, որ խորապես թշնամական էին աճող սերնդի վրա հիտլերական խստավարժության թողած շաբլոնին։ Ցվիկաուում՝ ածխի և տրակտորների քաղաքում, բանվոր երիտասարդությունը լցվում է դպրոցները, կուրսեր, ակումբներ, աշխատանքից ազատ ամբողջ ժամանակը տրամադրում ուսման։ Իենայի հայտնի համալսարանում, որտեղի գրադարանում պահված են 425000 մոռացված դիսերտացիաներ, հնագույն ֆակուլտետների կողքին բացվել է նաև բանֆակ։ Բանվորների երեխաները մտան Լայբնիցի, Հեգելի, Մարքսի և 1848 թվականի հերոսներին նվիրված հուշատախտակներով այդ հին «աուլան»։ Վայմարում գերմանական մշակույթի հռչակավոր հուշարձանների՝ Գյոթեի և Շիլլերի տուն-թանգարանների կողքին, նախկին դուքսական պալատում տեղավորված է Գյոթեի դարաշրջանին նվիրված ժողովրդական թանգարանը։ Վայմարը դադարել է սոսկ գիտական աշխարհի գրական հիշատակ լինելուց և դարձել գերմանական պատմության ազգային կենտրոն, ուր ժողովուրդը կգնա ազատ գիտելիքներ ձեռք բերելու։

Ոչ, համաշխարհային երկրորդ պատերազմից հետո Գերմանիայում կատարված իրադարձությունները չեն կրկնում այն, ինչ տեղի ունեցավ համաշխարհային առաջին պատերազմից հետո։ Ժամանակակիցը տեսնում է ոչ թե արագ իրար հաջորդող տասնամյակների միապաղաղությունը, այլ իրականության բուռն շարժման մեջ տեղի ունեցած խիստ փոփոխությունները։ Ավելի խստորեն և ավելի անդրդվելի են իրար դեմ կանգնել երկու աշխարհ՝ հետադիմությունն ու

առաջադիմությունը։ Եվ Գերմանիան առայժմ դեռ բաժանված է այդ երկու աշխարհների միջև։

Սակայն գերմանական ժողովուրդը մահացու հիվանդությունից հետո կյանքի է կոչվում, ինչպես ավերակներից բարձրացվող պատերն ու տանիքները։ Նա պայքարում է իր միասնության համար։ Եվ ապրելու ու միասնության նրա կամքն ամենից ավելի արտահայտվեց պատերազմի վտանգի դեմ խաղաղությունը պաշտպանելու նրա պայքարի մեջ։ Այդ պայքարը ներկայումս ամրացնում է զոնալ սահմաններով արհեստականորեն մասնատված գերմանական ժողովրդի ներքին կապերը։ Դեմոկրատական Գերմանիան պատերազմի դեմ իր պայքարի շնորհիվ օրեցօր մեծացնում է Արևմտյան Գերմանիայում ապրող իր հայրենակիցների համակրանքը։ Արևմուտքի գերմանացիները գնալով ավելի լավ են հասկանում, որ խաղաղությունն է Գերմանիայի միակ փրկությունը։ Նրանք անխուսափելիորեն պետք է ձեռք մեկնեն Արևելքի գերմանացիներին։

Այլ կերպ չի կարող լինել։ Այլապես համաշխարհային առաջին պատերազմում առատորեն ճաշակած և երկրորդ պատերազմում այնքան դաժանորեն վերապրված տառապանքները դարձյալ կդառնան մարդկության ճակատագիրը՝ անասելի չափերով մեծանալով և խորանալով։

Երբ հիմա նայում էի գերմանական ազատ երիտասարդության աչքերին, հաճախ էի տեսնում այն փայլը, որ զարմանքով և ուրախությամբ նկատել էի առաջին անգամ երիտասարդ սպարտակյանների հայացքներում՝ 1918 թվականին Բեռլինում ունեցած հանդիպումներիս ժամանակ։ Այդ փայլը երբեք անհետ չէր մարում։ Այն պահպանեցին գերմանական կոմունիստները «արյունարբու շուն» Նոսկեից մինչև «երկաթյա» Հինդենբուրգն ընկած ամբողջ ժամանակաընթացքում, այն պահպանեցին ու տարան Հիտլերի ու Հիմլերի համակենտրոնացման ճամբարների միջով, պահպանեցին երկար տարիների էմիգրացիայում և ներկայումս վառեցին նոր Գերմանիայի միլիոնավոր պատանիների ու աղջիկների աչքերում։ Այդ աչքերի փայլը նշանակում է խաղաղությունը պաշտպանելու պատրաստակամություն, նվիրվածություն՝ աշխատավոր ժողովրդին, ինտերնացիոնալիզմին։ Այդ փայլը՝ ատելություն է պատերազմների հանդեպ, բուրժուական իրավակարգի անարդարության և ստի հանդեպ։

Ահա այն ճանապարհը, որ ես բախտ ունեցա անցնելու՝ դիտելով Գերմանիայի կյանքում տեղի ունեցող մերթ ծանր և սարսափելի, մերթ հուսադրիչ, ուրախալի փոփոխությունները։

«Քաղաքներ և տարիներ»-ը այդ ճանապարհի միայն մի մասն են արտացոլել։ Ես լավ տեսնում եմ, որ վեպի հերոսներն էլ շատ փոքր մասն են կազմում այն կերպարների, որոնցից կազմված էր այն դարաշրջանի երկու աշխարհների պատկերը։ Անդրեյ Ստարցովը անզոր սարսափ էր զգում պատերազմի հանդեպ։ Իր կյանքի երջանիկ պահը նա համարում էր մի անգամ բախտի կողմից իրեն պարգևված վճռականությունը, երբ նա պատրաստ էր մեռնել մարտի դաշտում։ Սակայն նրա կողքին ապրում և գործում էին մարդիկ, որոնք պատերազմն ատում էին նրանից ոչ պակաս, այլ ավելի։ Վերջիններիս վճռականությունը մարտի դաշտում այլ բնույթի էր։ Նրանք մարտում ոչ թե մահ էին փնտրում, այլ ուզում էին մարդուն աղատել նորանոր պատերազմների վտանգից։ Այդ մարդիկ խաղաղության ներկայիս կողմնակիցների նախորդներն են, հայրերը, որոնց որդիներն արդեն գիտեն, որ խաղաղություն կամենալը միայն քիչ է, որ այն պետք է պայքարով պահպանել։ Վեպում այդ մարդիկ քիչ են, դրանց տեղը չեն կարող լրացնել, անշուշտ, դրանց մոտ և հարազատ այլ հերոսների առանձին գծերը։ Ես հասկանում եմ այդ ոչ լիարժեքությունը և դրանից բխող թերությունները, որ կան «Քաղաքներ և տարիներ»-ում։

Իմ ձգձգված ակնարկը հետևանք է ունեցածս ապրումների, որ դուրս են գալիս վեպում ընդգծված իրադարձությունների շրջանակից։ Այդ ապրումներն ինձ միացնում են ժամանակակից ընթերցողի հետ։

Ընթերցողների մեծ մասին համաշխարհային առաջին պատերազմի իրադարձությունը հայտնի է գրքերից և պատմություններից։ Ինձ համար՝ դա նույնիսկ անձնական փորձ է, ինչպես մեծամասնության համար՝ Հայրենական մեծ պատերազմի փորձը։ Շատ բան, որ ես տեսել էի 1914—1918 թվականներին, կարելի էր միայն այն ժամանակ տեսնել։ Այն

ժամանակ իմ կողմից ոչ պարզ կամ սխալ հասկացվածը անցյալի գիրկն է անցել՝ գրքում նկարագրված պատմական իրականության հետ։

Եթե ես վեպը գրեի ոչ թե երեսուն տարի առաջ, այլ հիմա, շատ բան այլ կերպ կտեսնեի, ու, թերևս, Անդրեյ Ստարցովի հոգեկան խռովքը, որ արտացոլվել է վեպի «խռովահուզդ» կառուցվածքի վրա, իմ թեմաներից մեկը մնալով հանդերձ, չխանգարեր ինձ նրա կողքին դնելու այլ թեմաներ, որոնք ծնվել էին հետագա իրադարձություններից։ Սակայն ինչպես երեսուն տարի առաջ, այնպես էլ հիմա ես կպահպանեի իմ մտահղացման կորիզը, ու հավանաբար միայն ավելի սաստկացնեի «Քաղաքներ և տարիներ»-ի որոշ լեյտմոտիվները, ինչպիսին է, օրինակ, Նյուրնբերգում գլխատված մարդասպանի գլխի պատմությունը։ Իսկ այն, ինչ երեսուն տարի առաջ գրվել է այլ կերպ, քան ես կուզեի գրել հիմա, դա այլևս չեմ կարող փոխել։ Եվ այդ բանը պետք էլ չի անել, եթե հիշենք Չերնիշևսկու խորհուրդը, որն ասել է, թե «ծեր հասակում պետք չէ փոխել այն, ինչ գրել ես երիտասարդ ժամանակ»։

1947—1951 թթ.

ՀԱՄԱՌՈՏ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՐՈԿԿՈ—XVII—XVIII դարերում հատուկ մի ուղղություն էր ճարտարապետության և կերպարվեստի մեջ, որ զարգացնում էր հաճախ ճոռոմության հասնող, պաճուճազարդ, ճոխ ձևեր։

ԲՐԻՍՈԼՅԱՆ ԹՈՒՂԹ— Նկարչության և լուսանկարներ փակցնելու համար հատ թուղթ։

ԲՈՒՐԳ (գերմ.) — *ամրոց (միջին դարերում)։*

ՀՈՖՐԱՏ (գերմ.) — *արքունի խորհրդական, ընդհանրապես՝ պատվավոր տիտղոս։*

ԴՈՐՏՈՒԱՐ (ֆրանս.) — *պանսիոնի կամ ուսումնական հաստատության սանների ընդհանուր ննջարան։*

ԿԱՄԱՄԲԵՐ (ֆրանս.) — *կովի անքաշ կաթից պատրաստված պանիր։*

ԿԱՊՏԵՆԱՐՄՈՒՍ (լատ.) — *ենթասպա, որի ենթակայության տակ է վաշտի գինապահեստը, հանդերձանքը։*

ԿԵԳԵԼԲԱՆ (գերմ.) — *տախտակամած կեգլի խաղալու համար։*

ԿԵՐԺԱԿ— աղանդավոր, նաև պառակտիչ։

ԿՏԻՏՈՐ (ֆրանս.) — *եկեղեցական ավագ (երեցփոխ). այն անձնավորությունը, որի միջոցներով կառուցված է տաճարը։*

ԿՈՒԽԵՆ (գերմ.) — *պիրոժնի, տորթ, թխվածք։*

ՀԱՄՊԻՈՆՆԵՐ (ֆրանս.) — *գույնզգույն ապակյա կամ թղթե լապտերներ՝ հրավառության համար։*

ՀԱՆԴՏԱԳ (գերմ.) — *տեղական ինքնավարության օրգան Գերմանիայում և Ավստրիայում։*

ՀԱՆԴՇՏՈՒՐՄ (գերմ.) — *Գերմանիայում և Ավստրիայում պետական աշխարհազոր, որ կազմված է զենքը կրելու ի վիճակի մարդկանցից և զորակոչվում է արտակարգ վտանգի դեպքում։*

ՀՈԿԱԼ (գերմ.) — *ռեստորան, պանդոկ։*

ՄԱԳԻՍՏՐԱՏ (լատ.) — բուրժուական երկրներում քաղաքային վարչություն. մունիցիպալիտետ (տես.)։

ՄԱՐԿԳՐԱՖ (գերմ.) — կոմս, որ կառավարում է ուժեղ պահպանության տակ գտնվող սահմանային շրջան։

ՄԵՏՐԱՆՊԱԺ (ֆրանս.) — էշկապ։

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ (լատ.) — տեղական ինքնավարության օրգան։

ՆԻՐՎԱՆԱ (սանսկր.) — բառացի՝ մարում, անհետացում։ Անէության հասկացություն, երբ մարդն աստիճանաբար ինքնահրաժարում է ապրում, միաձուլվում է բնությանը. արտահայտվում է լիակատար հոգեկան հանգստությամբ, կրքերի, ցանկությունների բացակայությամբ, քանի որ ըստ Բուդդայի ուսմունքի՝ կյանքը չարիք է, գոյություն ունեցող ամեն ինչ չնչին է և վաղանցիկ, մարդը պետք է ձգտի հոգու մաքուր, անվրդով վիճակի։

ՕՐԿԵՍՏՐԻՈՆ (ճուն.) — մեխանիկական երաժշտական գործիք, որի մեջ համատեղված են նվագախմբային զանազան գործիքներ. հնարավորություն է տալիս կատարելու ամենաբարդ ստեղծագործությունները, փոխարինելով ամբողջ նվագախմբի։

ՊԱՆՕՊՏԻԿՈՒՄ (ճուն.) — մոմից սարքված արձանիկների և զանազան այլ առարկաների ցուցահանդես, որ հետաքրքրություն է առաջացնում իր արտակարգությամբ։

ՊՐԵՖԵԿՏՈՒՐԱ — կապիտալիստական երկրներում վարչա-տերիտորիալ շրջանի կառավարման օրգան։

ՊՐՈՄՆԱԴ (ֆրանս.) — դրոսավայր, զրոսանք։

ՊՈՒՄՊԵՐՆԻԿԵԼ (գերմ.) — վեստֆալյան մեղրաբլիթ։

ՌԱՏՈՒՇԱ (գերմ.) — գերմանական երկրներում քաղաքային վարչություն. քաղաքային ինքնավարության շենքը։

ՏՈՒՐՆԳԱՎԼԵ (գերմ.) — մարմնամարզական սրահ։

ՖՈՐՇՏԱՆԴ (գերմ.) — վարչություն, վարչության նախագահ։ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ՝ կենտրոնական կոմիտե։

ՑԻՏԱԴԵԼ (գերմ.) — ամրոցի ամենից ավելի ամրացված կենտրոնական մասը, որ հարմարեցված է ինքնուրույն պաշտպանության. հին քաղաքներում ամրոցատիպ կառույց։

ՑԻՏՐԱ — մատենանվագ՝ կամիթնահար լարային երաժշտական գործիք։

ՋԱՊԱՆ — գեղջկական բաճկոն։

ՇՏԱԳՏՐԱՏ (գերմ.) — մունիցիպալ խորհրդական։

ՇՏԱՆԴԱՐՏ (գերմ.) — կայսրական (թագավորական) դրոշ, ինչպես նաև պետության գլխավոր դրոշը, որ բարձրացվում է կայսեր (թագավորի) քաղաքում, նավի վրա, պալատում եղած ժամանակ։

ՇՏՐԵՅԶԵԼ-ԿՈՒԽՆ (գերմ.) — կարկանդակ։

ՇՈՒՅՄԱՆ (գերմ.) — ոստիկան։

ՇՎԵՅԵՐԵՆ (շվեյերեն) — ժայռեր և փոքրիկ ժայռոտ կղզիներ ծովերում և լճերում։

ԷՐՑՀԵՐՑՈԳ (գերմ. erz — նախածանց է, որ տիտղոսներին ավելացնելիս նշանակում է բարձրագույն աստիճան)։ Ավստրիայում, իսկ այնուհետև Ավստրո-Հունգարիայում Հաբսբուրգների արքայական տան արքայազնների տիտղոսը, որ պաշտոնապես սահմանվել էր 1453 թվականին։

ԷՍՊԱԴՐՈՆ (իտալ.) — ուսումնական զենք՝ մի քիչ կեռ կամ ուղիղ ծայրով, որ կիրառվում է սուսերամարտում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ նվիրված այն տարուն, որով ավարտվում է վեպը

Ճառ 5
Նամակ 7
Անցման բանաձևը 11

Գլուխ առաջին
Ինը հարյուր տասնինը թվականի մասին

Պետերբուրգ 13
Խրամատի պրոֆեսորը 21
Կոնրադ Շտեյն 33
Թշնամին դարբասի մոտ է 36
Կծիկ 54

Գլուխ
Ինը հարյուր տասնչորս թվականի մասին

Սիրո ցենտրիֆուգա 73
Երբ փաստորեն սկսվեց համաշխարհային պատերազմը . . . 82
Dichtung und Wahrheit 92
Ծաղիկներ 110

Գլուխ շեղումների

Լեգենդներ-ասեկոսներ-եղելություն 121
Քարե մարկգրաֆուհին 128
Քայլերը հաստատուն են դառնում 141
Միսս Ռոնիի պանսիոնը 148

Գլուխ
Ինը հարյուր տասնվեց թվականի մասին

Լանդշտուրմ 155
Յոթ լճակների պուրակը 169
Ծաղիկներ, դեռևս ծաղիկներ 184
Փախուստ 208

Գլուխ
Ինը հարյուր տասնյոթ թվականի մասին

Ում նկատի ուներ կներալ-ֆելդմարշալ ֆոն Հինդենբուրգը . . 231
Մարդու ինչին են պետք այս խղճուկ օրերն ու ժամերը . . . 241
Ֆյոդոր Լեպենդին 253
Անքաղաքավարի ֆելիետոն 266

Գլուխ
Ինը հարյուր տասնութ թվականի մասին

Ճանապարհ 272
Առանց սև ու սպիտակի 296
Հատապտուղներ 310
Ֆիննական ցեղի ժողովուրդ 336

Գլուխ երկրորդ
Ինը հարյուր տասնիններ թվականի մասին, որը նախորդում է առաջին գլխին

Շաբաթ օր Սեմիդոլում 344
Լեպենդինի վախճանը 369
Կյանքում առաջին անգամ 387
Հանդիպում 409
Երազ 416

Գլուխ
Ինը հարյուր քսան թվականի մասին

Ծածկոցները հանված են 432
Նոր երկիր 435
Մենք քվիտ ենք, ընկեր Ստարցով 441
«*Քաղաքներ և տարիներ*» *վեպի առթիվ* 448
Համառոտ ծանոթագրություններ 467

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ՖԵԴԻՆ
Քաղաքներ և տարիներ
Վեպ

КОНСТАНТИН АЛЕКСАНДРОВИЧ ФЕДИН
Города и годы
Роман
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван — 1981

Խմբագիր՝ Է. Բ. Թոռունյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջուլֆակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Յ. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բալաբյան

ИБ № 3452

Հանձնված է շարվածքի 26. 12. 80։ Ստորագրված է տպագրության 22. 06. 81։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագրական № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 21,6 հրատ. մամ., 24,78 պայմ. տպ. մամ.։

Պատվեր՝ 408։ Տպաքանակ՝ 50.000։ Գինը՝ 1 ռ. 60 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.